

· · / ·

I . . . / .. 1910.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

- La réutilisation non commerciale de ces contenus ou dans le cadre d'une publication académique ou scientifique est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source des contenus telle que précisée ci-après : « Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France » ou « Source gallica.bnf.fr / BnF ».

- La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service ou toute autre réutilisation des contenus générant directement des revenus : publication vendue (à l'exception des ouvrages académiques ou scientifiques), une exposition, une production audiovisuelle, un service ou un produit payant, un support à vocation promotionnelle etc.

[CLIQUER ICI POUR ACCÉDER AUX TARIFS ET À LA LICENCE](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

- des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.


- des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.



4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.





5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.


7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter utilisation.commerciale@bnf.fr.







2008-129508



63945

Ճ Ա Շ Ա Կ

Ա Ր Դ Ի

Հ Ա Յ Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Ք Ա Ր Լ Ե Չ Ո Ւ Է

Բազմաթիւ Գրական կենսագրութիւններով
և ծանօթութիւններով

Զ Ո Ր Ր Ո Ր Դ Տ Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ Ա Ր Ե Փ Ո Խ Ո Ւ Ա Ծ Ո Ւ Հ Ո Խ Ա Ց Ա Ծ


Ա Շ Խ Ա Տ Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ե Ա Ս Բ

Ա. Պ Ի Պ Է Ռ Ճ Ե Ա Ն Ի

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Հ. Ա. Տ. Լ. Բ.



Handwritten signature




Handwritten signature

Կ. Պ Օ Լ Ի Ս

Տ Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Ր Շ Ա Կ Կ Ա Ր Օ Ե Ա Ն

1910



1848

1848

1848

1848

Յ Ս Ռ Ս Ղ Ս Բ Ա Ն

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոյն ծաղկաքաղ հաւաքածոյին առաջին տպագրութեան սուղ ժամանակի մէջ սպառիլը համարձակութիւն կուտայ մեզ կարծելու թէ, աշխարհիկ լեզուն աղգային վարժարանաց մէջ դասական լեզուաց կարգն կ'անցնի տակաւ առ տակաւ թէ, մեր յարգոյ դասաւարտը ոսկեղէն դարու բարբառոյն ուսումէն յառաջ սկսած են աւանդել աշակերտին՝ ներկայ դարու բարբառը զոր կը խօսի ալգն համօրէն՝ Գանգէսէն մինչև Գանուբ, աւելի կամ նուազ մաքրութեամբ :

Իրօք կար ժամանակ մը երբ աղգային դաստիարակութեան հիմը դրարար լեզուն կը համարուէր, մեր սակաւաթիւ վարժարանաց մէջ առ հասարակ ամէն դասադրեանք, Այբեհարանէն մինչև Քերականութիւն, դրարար էին. հեղինակը՝ իւր երկերը, բանաստեղծը՝ իւր տաղերը, վարդապետը՝ իւր քարոզը դրարար կը յօրինէր, մինչև իսկ կրնայինք յայնժամ ցոյց տալ աշխարհի, դրարար լեզուաւ լրագիր մը — Արեալոյս արարեսեան — որ աղգին անդրանիկ թերթն եղած է. սակայն այսօր ամեայն ինչ փոխուած է, դրարար դասադրեանց յաջորդեցին հետզհետէ աշխարհիկ լեզուաւ գրեանք, այսպէս, Նարեկի տեղ՝ այսօր աշակերտն ունի Մայրենի լեզուի հատորները. Պաղտասար Դպրին Գործնական բառագիտութեան տեղ՝ Սաֆրէի Իրագիտութեան դասերը. Հեգարանին տեղ՝ Մամուրեանի Բանալի հայերէն շարագրութեանը. ինչպէս կը տեսնուի, տղոց կարողութենէն բարձր և անյարմարագոյն գրեանք տեղի տուած են այնպիսի

դասագրեանց, որք ոչ թէ միայն հասկանալի են անոնց այլ և ունին մանկավարժական դրութեան ամէն առաւելութիւնները: Եւ մինչև իսկ կը մտածուի աշխարհիկ լեզուն ներմուծել Եկեղեցիները՝ թօթափելով հախապաշարու մը և թարգմանելով Աստուածաշունչ Ս. Գիրքը: Արդէն մօտերս, հայ կղերական դասուն պատկառելի անդամ մը՝ Տ. Յ. Մկրեան, աշխարհարար-գրաբար աղօթադիրք մը հրատարակեց ի դիւրութիւն ժողովրդեան, և շատ տարիներ յառաջ Վենետիոյ և Վիէննայի Հարք հմանօրինակ աղօթագրեանք հրատարակած են որ երթալով ընդհանրութիւն կը գտնեն:

Այս փոփոխութիւնը հայերէն լեզուի յատուկ երևոյթ մը պէտք չէ նկատել. ամէնէն հին լեզուները, որպէս հելլենակաճը եւ լատիներէնը մի և նոյն վախճանը ունեցած են. վասնզի լեզուներն այ ունին ծնունդ և մահ. գրաբար լեզուն ծնած է անյիշատակ ժամանակաց մէջ հայ ազգին հետ և որոյ քաղաքական կենացը հետ աստիճանաբար զարգանալով ունեցած է իւր Ոսկեղէն Գարբ յորում մեծահանճար մտակենսադիրներ երևաացած են, ինչպէս Սահակներ, Մեսրոպներ, Եղնիկներ, Եղիշէներ, Սորենացիներ, որք հայկական լեզուն մշակելով կատարելութեան հասուցած են՝ թողլով աշխարհի վրայ այնպիսի հեղինակութիւններ ու թարգմանութիւններ որ հայ լեզուն իսկական դրոշմը կը կրեն. սակայն այսօր գրաբար լեզուն դադրած է գործածութենէ, այն լեզուն որ բազում դարեր Հայոց քաղաքական, դիւանագիտական, վիտական և հա մանաւանդ կրօնական լեզուն եղած էր, այսօր ոչ ևս կենդանութիւն ունի հայ ժողովրդեան մէջ, միայն Եկեղեցւոյ մէջ դոյութիւն ունի. լոկ կրօնական լեզու մ'է, վասն զի հին սերունդի մը լեզուն հոր սերունդի մը բերանը կարելի չէր կենդանի մնալ. լեզուի այս փոփո-

խութիւնը անհատական ջանից արդիւնք չէ, այլ արդիւնք է բնական օրինաց, այլ արդիւնք է հայ ազգին՝ դարերու հոլովման տակ՝ կրած վիճակի փոփոխութեան, զի Մովսիսի ժամանակակից հայը ամէն կերպով կը տարբերէր Քրիստոսի ժամանակակից հայէն՝ որ այնչափ կերպարանափոխ եղած է բաղդատելով 19րդ դարու մէջ ապրող հայուն հետ. փոփոխութիւն՝ սովորութեամբ, քաղաքակրթութեամբ, աւանին կենօք, կրօնքով ու բարքով:

Այս վիճակի մէջ հայ լեզուն եւս կրած է, ազգին տարբեր կացութեանը համաձայն, ժամանակին ազդեցութիւնը, որոյ կատարեալ վերահասու կ'ըլլայ մէկը եթէ բաղդատէ ոսկեղարու լեզուն վերջին դարերու հեղինակաց լեզուին հետ, այսինքն բաղդատել ոսկեղաւր՝ արծաթի, պղնձի և երկաթի դարուչ հետ, քննելով լեզուին յաջորդաբար ստացած կերպարանքը այս չորս մեծ ժամանակամիջոցներուն մէջ: Այս քննութեանէն որոշ կը տեսնուի որ լեզուն հետզհետէ կորանցունելով իւր բարձրութիւնն ու ճոխութիւնը կը համի մինչ 19րդ դարուն սկիզբը բոլորովին անկերպարան, անչօք և անբնդունակ բացատրելու դարուս յուսաւոր և զարգացեալ գաղափարները, վիճակ մը որ յար և նման էր ազգին կացութեան. խառնակոյտ մ'էր դարձած յայնժամ լեզուն յորում աւելի շատ էին օտարազգի քան ազգի բառերն ու ոճեր:

Սակայն դրարարը այս անկեալ վիճակէն կրցաւ բարձրանալ շնորհիւ իր անցեալէն մնացած հարուստ նշխարաց զոր Մեծ Աշխատաւորներ, որպէս Բագրատունիք, Հիւրմիւզք, Գարրեմեանք, Գարագաւեանք, Թոռնեանք և այլք, այս դարուս վերջի կիսուն մէջ երևան հանեցին՝ փնտրուելով նախնեաց լեզուին սրբազան հետքերը, վերակենդանացունցին (բառին բովանդակ իմաստովը) հայ լեզուն

որոյ կորուստ մօտալուտ էր, կորուստ մը որ ա՛յնչափ սղբալի պիտի լինէր հայ ազգին համար, իւր գոյութեանը համար • կորուստ մը որ իրեն հետ կը տանէր գրաբարի կենդանութեան ժամանակէն մնացած ամենայն մեծութիւն և փառք, առանց թողելու իր յաջորդին այն ամէն տարերքն որոնցմով օր մը պիտի կենդանանար նա և պիտի լինէր իւր արժանաւոր յաջորդը : Սակայն այս մեծ ու հոյակապ Մատենադրաց շնորհիւ հայ լեզուն սղատեցաւ կորուստէն, պահ մը ապրեցաւ ծաղկելով ու զարգանալով և յիշեցնելով նոր սերունդին իւր փառաւոր անցեալը • լայց այս նոր ոսկեդարը շատ քիչ պիտի տեսէր վաճառի դարուց ոգին չէր ներէր այս, նորը կը յաջորդէր հինին և հինը կը մեռնէր թողլով յաջորդին՝ իւր բոլոր հարստութիւնը ու բոլոր դանձերը :

Հայ լեզուն մի մեծ յեղաշրջում կ'սկսէր այն ատեն • գրաբարը կը մեռնէր խապաւ և աշխարհաբարը կ'ըլլար գրաւոր բարբառ, և այսպէս լեզուի մի նոր դարապլուխ կ'սկսէր : Սակայն այս նոր բարբառը, որ է աշխարհիկ լեզուն, պէտք չէ նկատել իրրե նորածին լեզու մը և կամ ինչպէս ոմանք կը կարծեն • խառնուրդ մը՝ հայ և օտար լեզուաց բաւերու և ոճերու : Ամէն քննութիւն ցոյց կուտայ թէ աշխարհիկ լեզուն ծագուածը շատ հին է, թէ միշտ բնկերայած է գրաբարի հետ, իբր գեղջուկ բարբառ մը՝ կենդանի անոնց քով որ անտեսեակ էին գրական լեզուն • թէ և աշխարհաբարը որչափ ալ ունեցած ըլլայ հնութիւն • բնա՛ւ գրաւոր բարբառ եղած չերեւար • և յիրաւի ի՞նչպէս կարելի էր գրաւոր ըլլալ քանի որ մի և նոյն ժամանակ կ'ապրէր գրաբարը՝ իւր բոլոր կենդանութեամբը և բոլոր ճոխութեամբը և այսքան ճոխ և վայելուչ բարբառին քով միթէ կարելի էր որ ժողովրդին լեզուն կամ գեղջուկ բարբառը գրաւոր լեզու ըլլար,

այն լեզուն, որ աղքատ էր և զուրկ գրական լեզու ըլ-
լալու ամէն հանգամանքներէ : Հ. Ա. Այսնեան խիստ լաւ
կրտէ այս կէտին վրայ Քննական Բեականութիւն արդի
հայերէն լեզուի անուն անզուգական հեղինակութեանը
մէջ . «Իսկ թէ մի և նոյն երկրին, մի և նոյն գաւառին
մէջ ալ մի և նոյն ժամանակը կա՛ր գրաւոր լեզուէն զա-
նազանեալ խոնարհագոյն-ընտանեկան կամ ռամկական
հայերէն բարբառ մ՛ալ, այնչափ ստոյգ է՝ որչափ ստոյգ
է որ այն երկիրն իւր ազնուականաց դիմաց՝ միջին և
ստորին կարգի մարդիկն ալ ունէր այլ և այլ դրից ու
կրթութեան աստիճանաւ, որոնց կենցաղական յարաբե-
րութիւնները դիւանական յարաբերութիւններէն շատ
տարբեր ու բոլորովին ուրիշ աստիճանի պէտք էին ըլլալ :
Ո՛վ կրնայ հաստատել թէ ճոխ ազնուականաց պալատնե-
րուն մէջ նոյն ոճն ու նոյն լեզուն կը հնչէր՝ ինչ որ հան-
դարափկ խաղաղասէր ընտանեաց խոնարհ երգերուն տակ» :

Եւ հին դարերու այս ընտանեկան կամ ռամկական
լեզուն, ներկայ դարու մէջ հայ ժողովրդեան բարբառն
եղաւ, որ ի սկզբան թերի ու տկար, սկսաւ աստիճա-
նաբար ծաղկիլ՝ կոկուելով ու հարթուելով և ազգին
մտաւորական զարգացման հետ բարձրանալով, մէկ կող-
մէն քաղեց այն ամէն նիւթերն որոնցմով պիտի կերպա-
րանար, պիտի ձեւակերպուէր, և միւս կողմէն դարուս
պահանջմանց համեմատ տաշուեցաւ ու նոր ոյժ ու զօ-
րութիւն ստացաւ :

Այս նորաբողբոջ լեզուին գրեթէ մէկ դարու մէջ
ստացած զարգացումը քննելու համար պէտք է ի նկատի
առնուլ այն խոչընդոտներն որ ամենուրեք կը հանդիպին
նորա դողդոջ քայլերուն, վասնզի հայ ժողովրդեան մէկ մասը
անտարբեր է իր մայրենի լեզուին և այդ մասը քաղաքա-
ցիներն, այսինքն Ազգին ներկայացուցիչները կը կազմեն .

պէտք է հաշուի առնուլ այն անհոգութիւնը ու անտարբերութիւնը որ կը տիրեն մեր մէջ ազգային դաստիարակութեան մասին, վասնզի ազգային դաստիարակութիւնը մայրենի լեզուն տարածելու և հետեւաբար զարգացնելու ամէնէն ազդու միջոցն է. պէտք է թուել այն հալածանքները որոց ենթարկուեցաւ խեղճ լեզուն իւր ամենաբնական ընթացքին մէջ, Գրագէտէն, Ուսուցչէն և Վանականէն, Գիտունէն և Բանգէտէն, վասնզի դեռ երէկ մի մեծ գրաբարեան, — որ անշուշտ կրնար առաւել լապէս նպաստել արդի լեզուին, ինչպէս որ օգտակարագոյն կերպով աշխատեցաւ հին լեզուն տարածելու և մշակելու իւր Ֆրանսահայ մեծ բառգիրքովը, ախող կ'անուանէր արդի հայերէնը, և սակայն այդ ախողի լեզուաւն էր որ դրեց Ալիշան՝ իւր Յուսիկները՝ Պէշիկ-թաշլեան և Դուրեան՝ իրենց Բերքուածները ու ողբերգութիւնները. իմ. Նար-Պէյ՝ իւր Արշակ Բ.ը, Կ. Իւթիւճեան թարգմանեց՝ նոյն լեզուաւ Թափառական Հրեայն. Գ. Չիլինկիրեան՝ Հիւկոյի Թշուառները և քիչ ատենէն ազգն պիտի վայելէ — միևնոյն լեզուաւ — Մ. Նուպարեանի Ֆրանսերէն-հայ-աշխարհիկ բառարանը, անդուգական երկեր որ մեր աղքատ մատենադարանները կը ճոխացունեն :

Այս վիճակէն որոշ կը տեսնուի թէ աշխարհաբարը յորմէ հետէ գրաւոր լեզու եղած է, չի գտաւ ոչ ձեռնհաս անձանց մեծագոյն օգնութիւնը, և ո՛չ ալ միջոց տարածուելու, ընդհանրանալու և տիրող լեզու ըլլալու՝ ոչնչացնելով դաւառաբարբառները և տիրապետելով այն ամէն տեղ ուր որ հայք, տեղւոյն համեմատ ընտրած են իրենց լեզուն. և դարձեալ ազգին մտաւորական վիճակը չի ներեց մեզ ունենալ Մեծ Բանաստեղծ մը. բանաստեղծը՝ որոյ պաշտօն երկնային է; որ պահ մը տէր

կ'ըլլայ լեզուին, ժողովրդին բերնէն կառնու զայն՝ անկերպարան, կը ձեւէ, կը կոկէ և որոշ սահման մը կը դնէ լեզուին ինչպէս ըրաւ Շեքսպիր՝ անգղիական լեզուն, Մալիերպ, Ռոնսառ և այ.ք՝ ֆրանսերէնը, Լուսեր՝ գերմանականը, Տանթե՝ իտալականը :

Բայց դարուս վերջին կիսուն երեւեցաւ Հայրն Ալիշան որ Վիպական Քերթուածներովը և հոգեւունց սաղերովը աշխարհարարը նուիրադործեց, դարձեալ Նալբանսեանց, Պասկանեանք՝ հայր և որդի, Ս. Նազարեանց որք իրենց անմահ գործերովը սուսահայ բարբառը աղնուացուցին, Մամուրեան, Ռաֆֆի, Չիլինկիրեան, Պրօշեանց, Ծերեկնց, որք ազգային վիպական լեզուն ստեղծեցին :

Խ. Նաւ-Պէյ, Թերզեան, Հեգխանեան՝ ողբերգականը և դիւցազներգականը հիւսնեցին :

Պեշիկբաշեան, Գուրեան՝ քերթողական լեզուն բարձրացուցին :

Պարոնեան, Ավանեան՝ երգիծականը պատրաստեցին :

Քուլենեան, Մինասեան աւակախօս հայրերն՝ որ դրականութեան դժուարին մէկ ճիւղը մշակեցին :

Հ. Գ. Հիւրմիւզ և Հ. Գար. Աբէ. Այվազովսի որ օտար աւակախօսներու հրաշակերանները թարգմանեցին :

Այսպիսեայ և այլոց հեղինակութեամբը ձեացաւ արդի Մատենադրութիւնը որ թէև տակաւին աղքատ բազմատելով մեծ ազգայ հարուստ Մատենադրութեանց հետ, այլ սակայն ունի կատարելութեան բնդունակութիւն օգտուելու համար այն կենդանարար անունդէն զոր կը բաշխէ, առատօրէն և աննախանձ՝ յուսաւորեալ Եւրոպան :

Աշխարհիկ լեզուի զարգացմանը ոչինչ նուազ նպաստած են նաև Թերթերը և Պար. Հանդեսները :

Եւ անա 19րդ դարու աւաջին կիսուն վերջերը (1843) Վենեսկոյ Հարբ կսկսին հրատարակել Բազմավեպ՝ հնգե-

տասանօրեայ ութածալ հանդէսը, որոյ իւրաքանչիւր ծալքը կը պարունակէ ընտրելագոյն յօդուածներ՝ գրական՝ ազգային՝ բանասիրական՝ գիտական և տնտեսական, որ հայ ժողովրդեան մտաւորական և աշխարհաբարի զարգացման մեծապէս օժանդակած են այն պահուն մանաւանդ յորում ազգը տգիտութեան մէջ թաղուած կ'ապրէր. և տակաւին կը շարունակէ Բազմավէպ ընթանալ մի և նոյն ուղղութեամբ և ա՛լ աւելի զարգացած, պարունակելով միշտ քնատիպ գրուածներ որ լեզուն հետ կը տարածեն նաև ազգային, գրական և պատմական նիւթոց վրայ հասուն և ողջմիտ գաղափարներ :

Սոյն հանդէսէն յետոյ կ'սկսին ի լոյս գալ, հայ ազգին մէկ քանի մեծ ու փոքր կեդրոններուն մէջ, այլ և այլ հանդէսներ և լրագրեր, որպէս Վիէննայւոյ՝ Եւրոպան (1847-1858) Գ. Ա. յվազովսքիի և Խ. Նար-Պէյի՝ Մասեաց աղաւնին (ի Փարիզ և ապա ի Թէոդոսիա, 1855). Հիւսարեանի՝ Բանասեր (1851, ի Կ. Պոլիս). Ս. Ռսկանեանի՝ Արեւել և Արեւմուտք (ի Փարիզ, 1856). Գ. Զիւլինկիրեանի՝ Ծաղիկը (ի Զմիւռնիա, 1862), Մ. Ազաբեկեանի՝ Կռունկը (ի Տիդիս), և Ծիլն աւարայրին (ի Կ. Պոլիս, 1866), էջմիածնայ միաբանից՝ Արարատ ամսագիրը (էջմիածին, 1868). Շահնազարեան վարդապետի՝ Երկրագունք (ի Մանչէսթէր, 1864 և յետոյ ի Կ. Պոլիս), և այլն :

Մի և նոյն ժամանակները Կ. Իւթիւճեան կ'սկսի հրատարակել իւր Մասիսը (1852) հայութեան ամէնէն մեծ կեդրոնին մէջ (ի Կ. Պոլիս) :

Իւթիւճեանէն յառաջ ոչ թէ միայն լրագրական լեզուն այլ աշխարհիկ բարրաւոր թերի էր, դեռ յաճախ կը գործածուէին ռամկական և օտարոտի ոճերը ու բառեր. տակաւին աչ. լեզուն հաստատ հիմն մը չունէր.

բացատրութիւնք տկար և ճապաղ էին : Իւթիւճեան , իբրև լեզուի վերանորոգիչ մը , կատարեց իւր պարտքը , որչափ որ միջոցները ներկային , լրագրական լեզուն ստեղծեց , ձեւեց զայն , զօրութիւն տուաւ լեզուին՝ քերականական ուղիղ շարադասութեամբ և բառերու ճիշտ դործածութեամբ , այս ամէնքը ըրաւ առանց հասնեաց լեզուին օրինաց դէմ մեղանշելու - Մասիսի 32 տարուան իւրաքանչիւր թիւերը և բաղմաթիւ օտարազգի վէպերու թարգմանութիւնները վկայ են այն ծառայութեանց զոր մատուցց Կ . Իւթիւճեան՝ աշխարհիկ լեզուին :

Վերջապէս եկաւ Մ . Մամուրեան՝ հոյ դրաղխոաց պեար որ աշխարհիկ լեզուի վերանորոգութիւնը բրաւ , իւր սուր դիչին սակ լեզուն նոր զօրութիւն ստացաւ , նոր ասպարէզ դտաւ , բացատրութիւնները բաղմացան , կակուեցան , ամենէն դժուար իմաստները բացատրուեցան . Մամուրեան և իրեն հետ Գ . Չիլինկիրեան և այլք վիպական լեզուն զարգացուցին և աշխարհարար լեզուի գլխաւոր կեդրաններէն մին ըրին Չմիւռնիա ուր որ լոյս տեսան այնպիսի հեղինակութիւններ ու թարգմանութիւնք որ իրենց յատուկ կնիքը ունին :

Երբ այսպէս մէկ կողմէն արդի լեզուն յառաջադիմութեան ճամբուն մէջը կը մտնէր , միւս կողմէն Մեծ Քերական մը՝ Հ . Ա . Այսնեան , աշ . լեզուին պատմութիւնը գրեց , ծագումն ու վիճակը ներկայեց ներհուն խորհրդածութեամբ , իւր Ֆենական Քերականութիւն արդի հայերէն լեզուի և Քերականութիւն արդի հայերէն լեզուի հոյակապ դործերովը , և դարձեալ ի Կ . Պոլիս և ի Տիգրիս հրատարակուեցան մի քանի Քերականութիւններ , ինչպէս Մ . Քիրէճճեանի՝ Հայերէն Քերականութիւն աշխարհաբար լեզուի . Ս . Պալասանեանի՝ Քերականութիւն նոր հայերէն լեզուի և ուրիշ նմանօրինակ ձեւ-

հարկներ որ արդի հայերէն լեզուն քերականական օրինաց տակ կը դնէին . այս գովելի ջանքերը ապարդիւն չի մնացին , ունեցան և կուսնեան հետեւողներ որք կաշխատին աշխարհաբար քերականական կանոններով ուսուցանել հայ մանկաւոյն , որ ապագայ սերունդը կը ներկայացնէ :

Այս ընդհանուր յառաջդիմութեան հակառակ , աշխարհաբար լեզուն տակաւին մեծապէս դարմաններու կը կարօտի , դարմանք որ անհրաժեշտ են լեզուին՝ քերականական օրինաց համաձայն ընթանալու . դաւառարարքառները ջնջելու և ուղղութիւն մ'առնելու համար . և այս ամէնքն միայն Ժ.Ա.Մ.Ա.Ն.Ա.Կ.Ն ԵՒ Մ.Ի.Ջ.Ն.Ն.Ե.Ր.Ը ԿԸՐ.Ն.Ա.Ն ԸՆՆԵԼ :

Սակայն երեւցան ժամանակ ժամանակ բանասէրներ որ ջանացին արդի լեզուին բաղձացեալ վիճակը ձեռք բերել զանազան դրութիւններ յոյց ապով , այս տեսակ հեղինակութեանց առաջին բրաւ Տօք . Ն . Ռուսինեան՝ իւր ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուի (1853) անուամբ քերականութեամբ , որ քերականական , ուղղագրական և բառադիտական այնպիսի օրինաց վրայ կը հաստատուէր որք լեզուին հիմունքը կը խախտէին . ստոր համար իրօք լաւ ըսած է հայագէտ ամերիկացի քարտղի՝ Պ . Ռիկզ , իր արդի հայ լեզուի համառօտ քերականութեան յառաջարանին մէջ , «Աւելի այն դիտած է աւանդել Տօք . Ռուսինեան՝ ուղղախօսութեամբ՝ ինչ որ (իւր ըմբռմամբ) ըլլալու էր նոր հայերէնը՝ քան թէ ինչ որ է իրօք» :

Եւ դարձեալ մօտ ատեններս (1874) Մ . Չերազ փորձեր ըրաւ ընտրողական լեզուի դրութեամբ աշխարհաբար կանոնաւորել . բայց այս նոր դրութիւնը այնպիսի օրէնքներ կը հաստատէր որ լեզուին ոգւոյն թշուրտովին

հակառակ էին և զարմանալի չէր որ այս դրութիւնն ալ
ապարդիւն մնար :

Հ. Ա. Այսնեան շատ լաւ կը սահմանէ Քերականի
մը պարտքն ու պաշտօնը :

«Քերականութիւնը թէև իրօք օրինաց մատեան մը
ըլլայ, քերականութեան հեղինակն այն օրինաց ալ հե-
ղինակը չէ, իւր պաշտօնն է դիտել քննել, այն օրէնք-
ներն որ բնութիւնը իւրովի կազմեր է, ժողովել քովէ
քով բերել, համեմատել, ընդհանուրն ու մասնաւորը
զատել, բացառութիւնն որոշել և այլն, ճշդիւ այնպէս՝
ինչպէս բնական զիտութեանց որեւէ ճիւղին զքաղոզ
մատենադիր մը ուրիշ պաշտօն կամ պարտաւորութիւն
չի ճանչնար իւր վրայ՝ եթէ ոչ բնութեան երեւոյթնե-
րուն և «նոնց օրինացը գումարութիւնն ընծայեցրնել
պարզապէս, և որչափ հաւատարիմ է այս մասին՝ այն-
չափ ի մերձուտա և ապահով ճամբով հասած է վախճա-
նին, և նոյնչափ վատահ է իւր պաշտօնն անվրէպ կա-
տարած ըլլալուն : Լեզուներն ալ բնութեան հորիզոնին
վրայ բնական երեւոյթներ են, եթէ քերական մ'այս
տեսութեան մէջ սխալած է, հարկ է ըսել թէ իւր պաշ-
տօնը չէ ճանչցած» :

Ազգին ամէնէն մեծ գրողէտներէն մին՝ Գ. Օտեան
Տօք. Ն. Ռուսինեանի կենսագրութեանը մէջ այսպէս կը
գրէ. «Սիզախ ձեռնարկութիւնն մ'է լեզու նորոգելու
ձեռնարկութիւնը, լեզուն ժողովուրդին բերնին մէջ կը
շինուի : Բնակարանին դէմ յանձնապատանութիւն է
եղնել ինքնիրեն օրէնք շինել լեզուին և կարծել թէ ազգ
մ'ամբողջ այն օրէնքով պիտի վարուի : Այնպիսի ձեռ-
նարկութիւն մը, ինչպէս ամէն նոր բան, իր նետուող-
ները կրնայ ունենայ և ոչինչ այնքան բուռն է որքան
նոր աղանդաւորի մը եռանդը : Այլ աղանդաւորք՝ ինչ-

պէս իրենց եռանդն, վաղ թէ անագան, կ'անոյնին, և լեզուին ոգին որ ազգային հանճարին ցոլացունմն է, կը յաղթանակէ ամէնուն: Անտարակոյս կարգէ դուրս հանճար մը կուգայ զաշխարհ դղրդել, կրնայ նոր շարժում ու նոր կեանք տալ լեզուին ալ, Տանթէի պէս անմահ գործքի մը մէջ կուել կոփել իր նորածեւութիւնքը: Ռոնսառ, Ռէնիէ, Մալէրայ որ գաղղիական դպրութիւնն ու լեզուն նորոգել ձեռնարկեցին և որ պատրաստեցին այն լեզուն որով Գօնէյլ գրեց ետքէն, քերականութիւն չը շինեցին այլ գիրք գրեցին»:

Արդի լեզուն կանոնաւորելու համար եղած ամէն ջանք պէտք չէ ըլլալ հակառակ լեզուի օրինաց, այն ամէն աշխատութիւն, որ կը տարուի լեզուն վերանորոգելու համար, պէտք է համաձայն ըլլալ լեզուի ոգւոյն որ կը բարձրանայ մի միայն ազգին ճշմարիտ յառաջադիմութեամբը, յառաջադիմութիւն, զոր կարող է Ազգն ունենալ, երբ՝

Ա. — Ժողովրդին ամէն կարգերուն մէջ տարածուի դաստիարակութիւնը:

Բ. Կեդրոններու մէջ ունենանք վարժապետանոցներ և բարձրագոյն վարժարաններ և դիւզերու մէջ նախակրթարաններ, ուր նոր սերունդը ուսանի իւր մայրենի լեզուն՝ ամէնէն աւելի խնամօք, ամէն օտար լեզուաց ուսումէն յառաջ:

Գ. Տարածուի ընթերցասիրութիւնը՝ քաջալերելով ազգային թերթերն և քաջալերելով հեղինակը:

Դ. Ունենանք աշխարհիկ լեզուի ինչպէս նաև ուսման ու գիտութեան ամէն ճիւղերու վերաբերեալ դասագրեանք. դի լալ դասագիրք մը դպրոց մը կ'արժե ինչպէս ըսաւ Օտեան:

Ե. Ունենանք ժողովրդական բանաստեղծներ որ ի-

րենց երգերովը ու խանդալից տաղերովը տարածեն լեզուն ժողովուրդին մէջ . ունենանք մատենագիրներ ու գրագէտներ որ գրեն ու հարստացնեն լեզուն իրենց երկերովը , և գիտուններ որ իրենց ճիւղը մշակեն այդ լեզուաւ :

Զ . Ունենանք գրական կեդրոններու մէջ այնպիսի զօրութիւններ որոնցմով լեզուն՝ ինչ որ ստանայ նոր , ինչ որ ստեղծէ գեղեցիկ ու բարի , ճառագայթէ ամէն կողմ :

Ահա այս բնական միջոցներով միայն ազգը մտաւորապէս կը յառաջանայ և իրեն հետ ալ լեզուն , ալ անկէ անդին ամենայն ինչ դիւրին է , լեզուի ուղղութիւն , կանոնաւորութիւն , միօրինակութիւն , մաքրութիւն , ճոխութիւն , քանի որ կան ամենամեծ միջոցներ որք լեզուն կը կուեն ու կը կոխեն :

Գոհացուցիչ է տեսնել որ ազգը զգալի կերպով մշտաւորապէս կը յառաջանայ , որչափ որ պարագաները կը ներեն , հեղինակները կը շատնան , լրագիրները ու պարբերական հանդէսները կը բազմապատկուին , հետզհետէ կերելին մեր գրական թափուր հրապարակին վրայ բանաստեղծներ , վիպասաններ , մանկավարժներ , գիտուններ , որ իրենց գործերովը կը նպաստեն ազգային լուսաւորութեան :

Ամէնէն մեծ կեդրոնները որպէս կ . Պոլիս , Տիպիս , Զմիւռնիա , Կարին , Վան , կան մասնաւոր և ազգային վարժարաններ ուր նոր սերունդը կը պատրաստուի ընկերութեան լաւ անդամ մ'ըլլալու ամէն պայմաններով :

Եւ մենք որ սոյն աշխարհաբար հաւաքածոն պատրաստուցինք հեղինակութիւն մ'ըրած ըլլալու յաւակնութիւնը չունինք , այլ մերովսանն մասնակցելու այն ընդհանուր ջանից որ կը թափուին ի կրթութիւն և ի դաստիարակութիւն հայ պատանւոյն :

Ինչպէս կը տեսնէ ընթերցողը , սոյն ծաղկաքաղը ե-

դած է միմիայն աշխարհաբար գրուածներով և բաժնուած է վեց մասերու որք են՝

Ա. Առակք-Մանրավէպք .

Բ. Նկարագրականք և կենսադրականք :

Գ. Քնարերգականք և եղերգք :

Դ. Բարոյականք և իմաստասիրականք :

Ե. Դամբանականք և բեմականք ,

Զ. Կրօնականք ,

Նիւթոյ դասակարգութիւնը ըստ իմաստի եղած է և ոչ թէ անձնիւր հեղինակի դործերով :

Աշխարհիկ լեզուի այսպիսի ծաղկաքաղ մը կրնայ օգտակար կերպով դործածուիլ ամէն վարժարանաց մէջ ուր աշխարհիկ լեզուի ուսուցման հոգ կը տարուի մասնաւորապէս . դասատուն տղայոց աստիճանին համեմատ կրնայ ընտրել նիւթերը և սերտել տալ աշակերտին՝ ցուցնելով իւրաքանչիւր հատուածին մէջ դանուած բոլոր գրական ու քերականական կանոններն ու հարկաւ որ դիտելիքները , այս դրութեամբ աշակերտին ճաշակը կ'արթննայ և կը կրթուի և մայրենի լեզուին մէջ կը հրահանուի :

Օգտակար համարեցինք ազգային հեղինակաց սմանց վրայ կենսադրական ծանօթութիւններ դնել զբքին մէջ , և պիտանի տեղեկութիւններ յաւելուլ հատուածներուն ներքե :

Մեր կամքէն բոլորովին անկախ պատճառներով սոյն հաւաքածոյին ներկայ տպագրութիւնը խիստ մեծ փոփոխութիւններ կրած է :

Ընթերցողաց ներողամտութիւնը խնդրելով սոյն գրքին թերութեանցը վրայ , կը յուսամ թէ քաջալերութիւն պիտի գտնէ :

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Սրտի կատարեալ գոհունակութեամբ է որ բախտ կ'ունենանք այսօր վերստին լոյս ընծայելու չորրորդ տպագրութիւնը մեր հաւաքածոյին, որ քսանւհինգ տարի արգելքի տակ առնուած էր Հասարակաց կրթութեան ջնջեալ գրաքննիչ ժողովի կողմէն, ապահովապէս ընթերցողն ալ պիտի մասնակցի մեր խնդումին տեսնելով վերածնունդը հայ հրատարակչութեան զոր Բռնապետութիւնը արմատախիլ ըրած էր. Գրաքննութեան ճիւղացին քմահաճոյքները աներեւակայելի ու անբացատրելի օրէնքներով կաշկանդած էին, առ հասարակ, գրական ամէն տեսակ երկասիրութիւններ, մանրակրկիտ քննութեան կ'ենթարկուէր զրքի մը ձեռագիրը զոր հեղինակը պարտաւոր էր ներկայացնել գրաքննիչ ժողովին, ուրկէ, ամիսներ վերջը, դուրս կ'ելլար վաւերացուած օրինակը, շատ անգամ անճանաչելի կմախք մը դարձած, որչափ ալ ներկայացուած ձեռագիրը արդէն իսկ զուրկ եղած ըլլար տոհմային կամ քաղաքական որ և է երանգներէ :

Ժամանակակից պատմութիւնը անջնջելի պիտի պահէ նախորդ ամենավատթար իշխանութեան օրով երկրին վիճակին ճշգրիտ պատկերը, որուն մէջ ապագայ սերունդներ սոսկմամբ պիտի տեսնեն անցեալ սև օրերուն արհաւրալից տեսարանները, Ազգին քաշած չարչարանքները, որոց թախծալից յիշատակը յաւելտ դրօշմուած պիտի մնայ Հայ արիւն կրող ամէն սրտի խորը. ապագայ սերունդներ պիտի կարդան հոն, Հայ պատմութեան արիւնոտ էջերուն մէջ, թէ ինչպէ՛ս

Ազգը կեանքի պայքար մղեց այդ արհաւիրքի երկարաշար տարիներուն մէջ, ինչպէ՛ս կուրծք տուաւ այն դժոխային մեքենայութեանց դէժ, իր գոյութիւնը պահպանելու համար, և թէ այդ անհաւասար կռուին մէջ, խեղճ Ազգը ի՛նչ նիւթական անհաշուելի կորուստներ ունեցաւ որոց վիճակագրութիւնը հատորներու նիւթ կը կազմէ միւսնոյն ժամանակ պատմութիւնը պիտի ցուցնէ թէ Ազգին բարոյական ու մտաւորական բոլոր ազդակները, լրագրութիւնը ու գրականութիւնը մասնաւորապէս, նախորդ յոռի վարչութեան տակ այդչափ երկար ատեն անոր մահառիթ ազդեցութիւնը կրելով ինչպէ՛ս խաթարուեցան, և այս եղաւ պատճառը որ բռնապետութեան ամբողջ տեղութեան միջոցին, թրքահայ մամուլը ամուլ շրջան մը բոլորեց, վասն զի թոյլ չի տրուեցաւ հրատարակելու գրական, պատմական և առ հասարակ ազգային դրոշմ կրող որ և է հրատարակութիւն կամ ուսումնասիրութիւն. թէև արտասահմանի զանազան Հայ կեդրոններուն մէջ հայ իմացականութեան ջահը միշտ անշէջ մնաց, ուր գրական ամէն սեռերու վրայ ընտրելագոյն հրատարակութիւններ երեւցան, բայց դժբախտաբար թրքահայք չի կրցան օգտուիլ իսկ արտասահմանի պայծառ կլիմային տակ աճած ու ծաղկած գրական արտադրութիւններէն, քանի որ մասնաւոր օրէնքներ անոնց մուտքը ու ընթերցումը երկրին մէջ կ'արգիլէին :

Եւ հիմա որ երկրին մամուլը ազատեցաւ իր կապանքներէն. Ազատութեան հրացայտ արեւուն ճառագայթները եկան հալեցնել գերութեան ամբակուռ շղթաները, հայ գրականութիւնը և առ հասարակ երկրին մամուլը ահա կը վերածնի իր աւերակոյտերէն : Բայց թրքահայ գրականութեան պատմութեանը դժբաղդաբար շատ բան չի պիտի գտնէ արձանագրելու, իբր գրական վաստակ

վերջին քառորդ դարու հայ մտաւորական գործունէութեան, որովհետեւ հալածանաց ու ճնշման տակ հայ գրականութիւնը մեծապէս վնասուեցաւ ու խամրեցաւ, նորարարող պարտիզի մը ծաղիկներուն պէս, որ երկարատե փչող խորշակներէն կ'աւերի տարածամ: Սակայն դարձեալ պէտք է գոհ ըլլալ որ այսօր կարող կ'ըլլանք հաշուել, այնչափ վնասներէ ետքը, գրական շատ ցայտուն դէմքեր ու արժանաւոր ներկայացուցիչներ, որոնք յոռեգոյն տարիներու ամէնէն աննպաստ պայմաններուն մէջ իսկ, կրցած են իրենց մտքէն ու գրչէն բան մը ընծայել ազգին: ազգատիկ մատենաշարին, ահա այդ հոյլ մը դրագէտները եղան որ հայ գրականութեան մթնշաղ հարիզոնին վրայ փայլեցան, լուսաշող աստղերուն պէս, որոց լոյսը, փոթորկալից զիշերուան մը մէջ, խաւար երկինքին թխագոյն ամպերու պատուածքներէ դուրս կը ժայթքէ աւելի փայլուն ու յստակ երանդներով:

Մեծագոյն սիտիանք մը կը պատճառէ նմանապէս երբ դիտենք որ թրքահայ գրականութեան այս կաշկանդեալ վիճակին հակառակ, արտասահմանի հայ մտաւորական կեդրոնները իրենց եռանդուն գործունէութիւնը շարունակեցին անդուլ անդադար, մասնաւորապէս Վենետիկի Մխիթարեանք, վերջին քառորդ դարու մէջ, թէև այս նոր գրական շարժումին նուազ շափով հետեւեցան, բայց լոյս ընծայեցին այնպիսի տոհմային-պատմական, բանասիրական շքեղ ու հոյակապ գործեր որոնք ցուցուցին անդամ մ'եւ որ միշտ անվհատ գործիչներ կը մնան ազգին լուսաւորութեան: Վիէնայի Մխիթարեանք, թէև զուտ գրական շարժումէն միշտ հեռու կը մնան, բայց ամենամեծ մղում տուին ազգային բանասիրութեան, մասնաւոր իրենց ամսօրեայ հանդեսով ուր ճարտար ու հմուտ գրիչներ հայ լեզուի բաղդատական ուսումնասիր-

բուժիւնը ըրին ու խորագննին հայեցողութեամբ հայ պատմութեան միջին կէտերուն վրայ լոյս սփռեցին :

Կովկաս, արևելեան հայ գրականութեան մեծ միջավայրը, ունեցաւ իր մասնակցութիւնը, մեծապոյն բաժինով, հայ մտաւորական ընդհանուր շարժումին, գրական այնպիսի պաշտելի դէմքերով որ նոր ոյժ ու կենդանութիւն տուին ռուսահայ գրականութեան :

Իսկ արեւմտեան Եւրոպոյ քաղաքակրթութեան ամէնէն մեծ կեդրոնները, ուր գացին հաստատուիլ, այն տաղնապալից տարիներուն մէջ, հայ գրողներէ շատեր, գրական փոքրիկ գաղութներ դարձան, մասնաւորապէս Փարիզ, ուր Ա. Զօպանեան՝ ժամանակակից մեր ամէնէն մեծ գրադէաներէն մին, հրատարակեց մատենագրական, գրական ու լամատարական շատ լուրջ երկասիրութիւններ որոնք Եւրոպացի հեղինակաց ուշադրութեան առարկայ եղան :

Այդ տխուր շրջանին մէկ ուրիշ մխիթարական ուշադրաւ երևոյթը եղաւ, ապահովապէս, մեր գրականութեան մէջ երևումը կին գրողներուն, որոնք հայ գրական կեանքի ամէնէն զօրեղ ներկայացուցիչներ եղան, պարզ ակնարկ մը բաւական կ'ըլլայ վեր հանելու անոնց գնահատելի արժանիքը՝ նուիրագործուած իրենց ընտրելագոյն երկերովը, որոնցմէ այնքան գեղեցիկ կտորներ կը զարդարեն սոյն հատորին շատ մը էջերը :

Եւ ահա գրական այս բոլոր մեծ դէմքերուն ընտրելագոյն գրուածքներէն է որ կազմուեցաւ ներկայ ընդարձակ հաւաքածոն, նախորդ տպագրութիւններէ անհամեմատ ընդարձակ ծրագրի մը վրայ ձևուած, որ իր մէջ կ'ամփոփէ մեր հին ու նոր գրողներէ քաղուած զանազան հատուածներ, որոց առատութիւնը ստիպեց զմեզ երկու հատորի վերածել, պահելով նախորդներու դասակարգութիւնը :

Ինչպէս կը տեսնուի, առաջին հատորը կը պարունակէ առակներ, մանրավեպեր, նկարագրական ու քնարերգական հատուածներ, ինքնագիր ու թարգմանութիւն: Իսկ երկրորդ հատորը որ քիչ ատենէ լոյս կը տեսնէ, պիտի պարունակէ դիւցազներգական, եղերգական, իմաստասիրական, բանասիրական, կենսագրական, կրօնական, բարոյական, բեմական նիւթեր:

Ներկայ տպագրութեան մէջ թարգմանութիւններ ալ աւելցուցինք ինչ որ նախորդին մէջ զանց առնուած էին, այն մտածումով որ լաւ թարգմանուած գրական օտար էջ մը հեղինակութեան մը չափ արժէք ունի. գրական հաճոյք մը պատճառած ըլլալու համար է որ ջանացինք ձեռք ձգել և հաւաքածոյի մէջ առնել մի և նոյն նիւթին վրայ գրուած տարբեր հեղինակներու հատուածները, որոնք ցոյց պիտի տան թէ հեղինակները ինչպէ՞ս ներշնչուած և թէ ի՞նչ գեղեցկագիտական ճաշակով կարող եղած են իրենց տպաւորութիւնները արտայայտել. դարձեալ, միևնոյն մտածումով, հոն աւելցուցինք նաև օտարազգի գրական միևնոյն հատուածներուն, արձակ կամ ռոմանսաւոր, տարբեր գրագէտներէ թարգմանութիւններ, որոնք ապահովապէս բաղդատութեան եզր պիտի ծառայեն իւրաքանչիւրին արժէքը վեր հանելու:

Լաւագոյն կերպով ներկայացնելու համար մեր հին ու նոր հեղինակները, բաւական չէր զանոնք ծանօթացնել իրենց ընտրելագոյն գրուած քներովը միայն, այլ հարկ էր նաև անոնց գրական կենսագրութիւնն ալ ներկայացնել. այսպէս՝ եթէ ոչ աւելի՝ գէթ 120ի մօտ կենսագրութիւններ պիտի պարունակեն երկու հատորները, որոց 69ը ներկայ հատորին մէջ կը գտնուին:

Սոյն երկասիրութիւնը ընթերցասէր Ազգայնոց ընծայելով յաւակնութիւն չունինք կատարեալ գործ մը:

ներկայացուցած ըլլալու, այլ այն համոզումը ունինք որ այս տեսակ աշխատասիրութիւններ պիտի կրնան օգտակար ըլլալ անոնց որ կը փափաքին ճանչնալ ու գնահատել արդի հայ գրականութեան ամէնէն մեծ դէմքերը, միւլենոյն ժամանակ ճաշակելով գրական մեր լաւագոյն արտադրութիւնները :


Երախտագիտութիւնը պարտք կը դնէ մեր վրայ այս առթիւ շնորհակալութիւն յայտնել Ազն. Մկրտիչ Էֆ. Մանուկեանի որ նիւթապէս օժանդակեց այս գործին յաջողութեան համար :

1909, Նոյեմբեր 10

Ա. ՊԻՊԷՌՆԱՆ

Օրթագիւղ





Ճ Ա Յ Ա Կ

Ա Ր Գ Ի Ի

Հ Ա Յ Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Ր Ո Ւ Թ Ե Ա Ն



Մ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

Ա Շ Խ Ա Ր Շ Ի Կ Լ Ե Ջ Ո Ւ Է



Մ Ա Մ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն



Մ Ա Ն Ր Ա Վ Է Պ Ք — Ա Ռ Ա Կ Ք

Ա Ռ Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ո Ւ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու ,
Ո՛վ հեշտ բարբառ մայրական ,
Փափկահնչիւն բառերուդ ,
Նման արդեօք այլ տեղ կա՞ն :

Դու որ նախ ինձ հնչեցիր ,
Նախ սիրոյ , ո՛հ , հեշտ խօսքեր .
Այն նախ ըզքեզ թոթովելս ,
Դեռ իմ մըտքէն չէ ելեր :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
Կեա՛ց անատան , կեա՛ց յաւէտ .
Կեա՛ց միշտ լեզուդ Հայհասկան
Կեա՛ց ծաղկալից ծաղկաւէտ :

Սրգարան

Ե. ՆԵՐՍԷՍ ՄԷՋՊՈՒՐԵԱՆ

Sof. Ներսէս Մեղպուրեան (1842—1880). Ուսուցիչ և
յեսոյ բժիշկ՝ վկայեալ Փարիզի Բժշկական Համալսարանէն :

Շ Ո Ւ Շ Ա Ն Ի Ն Բ Ո Յ Ր Ը

- Ո՛վ կապուտակ շուշանդ հովտաց,
Խոնարհ բաժակէդ կիտաբաց
Կը բուրէ հոտ մը անուշակ,
Սիրուն ծաղիկ, դայն ո՞ւտտի առիւր դուն:»
- «Փունջ մը կապելու համար, այս առտու,
Կոյս մը քաղեց զիս, և մեխակ,
Յասմիկ ու վարդ եւ մանիշակ
Ընկերքս եղան հոն շարունակ:
- Բայրս—որուն պատճառը հասկըցար արդէն—
Առի մեխակէն, յասմիկէն, վարդէն:»
Չի մունաք բընաւ,—մարդ կ'օգտի ամէն անգամ
Նրբ կը ջանայ ընտրել իրեն լաւ բարեկամ:

Բուրաստան

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Մայրիկն հակած էր խընամուտ,
Օրօրոցին վըրայ պըզտիկ.
Իր սիրոյ վարդը խընկահոտ
Կը գոցէր աչքն իր հանգարտիկ:

Յոգնած եկաւ հայրիկը տուն,
Բայց նայելով մէյ մը զաւկին,
Մէյ մ'ալ երգող հարսին ժպտուն
Լոյսով լեցան սիրտն ու հոգին:

Մուցաւ ամէն հոյս ու ցաւեր,
Ծունըր դըրաւ օրը նին քով,
Միակ համբոյր մը կը բաւէր
Անոնց ճակատէն՝ սիրագորով:

Մէկն իր բոյնին խօսող թրուշուն ,
Միւսն ալ ձագուկն անուշաբոյր ,
Արցունքներով աչքը լեցուն՝
Համբոյրն առաւ , տըւաւ համբոյր :

Մասիս

Կ. ՈՍԿԵԱՆ

ԾԱՂԿԵՎԱՃԱՌ ԱՂՋԻԿԸ

Ազնի՛ւ անցորդք , ծաղիկ աղուոր
Ծախէ աղջիկն հէք չըքաւոր :

Հազիւ ծագած նըշոյլք այգուն՝
Թողում ընդոտա դիմ անոյշ քուն .
Քաղեմ խնամով Մայիսի վարդ ,
Կապեմ փունջ փունջ կրծոց ի զարդ ,
Իմ այս ծաղկունք Եդեմաբոյր
Կարծես թէ են թիթեռանց քոյր :

Ազնի՛ւ անցորդք , ծաղիկ աղուոր
Ծախէ աղջիկն հէք չըքաւոր :

Վարդեր ունիմ որ կը ժպտին ,
Եւ շահաքրամ , շուք գեղեցկին .
Յաամիկ ալ կայ , քան զձիւն ճերմակ ,
Կաղովս անոյշ բուրէ համակ .
Դու ալ գընէ , կուսի՛կ գըւարթ .
Ո՞վ չը սիրէ ծաղկեայ մի զարդ :

Կարապետ Ոսկեան (1872—1901), Աղաամեռիկ բանաստեղծ, զոր Պէշիքթաշեանի նմանող մը կարելի է անուանել. անոր զգայուն սիրտն և կիրթ ճաշակն ունէր: Թողած է բաւական թուով քերթուածներ, որոնք տառապած հոգւոյ մը ներշնչութիւնն են:

Ազնի՛ւ անցորդք , ծաղիկ աղուոր
Ծախէ աղջիկն հէք չըքաւոր :

Ահա դատեմ նարկիա , շուշան ,
Ինձ համատի բարի՛ կուսան .
Թէ շքնորհէք երկու լումայ ,
Հէքս ալ , աիկին , փունջ մը ձեզ տայ .
Աւէ՛ք , պարոն , ձեզ անուշակ
Ընտրեմ յակինթ և մանուշակ :

Ազնի՛ւ անցորդք , ծաղիկ աղուոր
Ծախէ աղջիկն հէք չըքաւոր :

Երբ այս գիշեր նստինք սեղան ,
Մեր ջերմ մաղթանք պիտի տեղան .
Օրհնեա՛ւ լինիք , ազնիւ ոգիք ,
Պիտի ըսինք . բիւրապատիկ
Աստուած տա՛յ ձեզ , որ կերակրէք
Երկու որբ քոյր եւ մայր մը հէք :

Ազնի՛ւ անցորդք , ծաղիկ աղուոր
Ծախէ աղջիկն հէք չըքաւոր :

ՆԱԼԱԳԲ ՆԵՄԵՐԱՅԵԱՅ

ԵԻՏԵՐՊԷ



Տիկին Զարուհի Գալեմեարեան [Ե-րեբղէ] . Երիտասարդ
գրագիտուհին բանասիրական ու աղգային ընկերական կեանքի
վրայ բազմաթիւ լուրջ յօդուածներովը ծանօթ դէմք մ'է գրու-
կան հրապարակի վրայ . ունի նաեւ քերթուածներու շարք մը ,
Նստե՛ք Ե-րեբղէ-յ անուամբ :

ՀՈՂԱԳՈՐԾՆ ԵՒ ԻՒՐ ՈՐՓԻՔ

Հարուստ հողագործ մ'իր մահուան մահճին
Մօտ կանչեց իր մանչ զաւակներն արի,
Եւ ըսաւ անոնց. «Միակ և վերջին
Պատուէրս է որ՝ մի՛ երբեք օտարի
Ի վաճառ հանել, յանձնել հաւանիք
Հողն այն զոր թողած են մեզ մեր նախնիք.
Ձի անար ներքե մի գանձ կայ թաքուն:
Ո՛ր կողմ գլտնուիլն աղէկ չեմ գիտեր,
Բայց քիչ մ'աշխատանք և կամք աննրկուն
Կրրնան այն գանձին ընել ըզձեզ տէր:
Ուստի այս տարի՛ երբ գայ Օգոստոս՝
Առէ՛ք ձեր գործիքն—արօր, բրիչ ու բահ—
Բացէ՛ք, փորեցէ՛ք ամէն տեղ ահօս,
Ձի տըրտրուած խո՛րչ մ'անգամ չի մնայ...»
Մեռաւ հողագործն, իր սրդիքն ուժեղ,
Ջրլապինդ բազկօք գետինն հերկեցին,
Տակն ու վրայ ըրին հողերն ամէն տեղ...:
Եւ՛ թէպէտ հեռքն իսկ չը գտան գանձին՝
Սակայն ա՛յնքան լաւ հերկուած հողերէն
—Երբ սերմանեցին— խիտ առատօրէն
Քաղեցին ցորեն, հաճար ու գարի,
Եւ լաւ հասկըցան թէ՛ իրենց բարի
Հայրն ուզած էր նախ —մեռնելէ առաջ—
Իր զաւակներուն ուսուցանել քաջ
Թէ՛ Աշխատութիւնն՝ գանձ մ'է յաշխարհի:

Գ Ո Ն Ա Ր Ի Կ

Ո՞վ է պղտիկն այն աղջիկ ,
Սիրուն , աղուօր ու փափկիկ ,
Սև մազերով , սև աչքով ,
Ինքը բոլոր խատուտիկ :
—Ո՛հ այն աղջիկ
է Գոհարիկ :

Երբոր իջնէ պարտէզիկ
Քաղեւ վարդեր կամ յաամիկ
Դուն չես կըրնար որոշել
Ո՞վ է վարդ , ո՞վ Գոհարիկ :
—Ո՛հ , այն աղջիկ
է Գոհարիկ :

Երբոր թռչուն ճըւճըւայ ,
Երբոր վառեակ կըտկըտայ ,
Դուն չես գիտեր թռչունն է ,
Թէ չէ Գոհար որ ձայն տայ :
—Ո՛հ այն աղջիկ
է Գոհարիկ ,

Ո՞վ է պղտիկն այն աղջիկ ,
Անհընազանդ չարածըճիկ ,
Որ շատ անգամ տունին մէջ
Յարուցանէ փոթորիկ :
—Ո՛հ , այն աղջիկ
Չէ՛ Գոհարիկ :

Մատենագրութիւնք

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻՔԹԱՇԼԵԱՆ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Լ Ե Ի Ո Ն Ի

Աչքն է սեւուկ , դէմքը սիրուն՝
Դեռափըթիթ իմ Լեւոնիս ,
Փափկիկ ու վարդ իր այտերուն
Չես գիմանար թէ սիրտ ունիս :

Շուշան մարմինն ամբողջ ճապուկ
Բայն է անոյշ համբոյրներու ,
Ծիծաղներուն ձայնը փափուկ
Կը ցրուէ ցաւն հոգւոյդ հեռու :

Ճերմակ թեւերն երբ կը բացուին ,
Կարծես հրեշտակ մ'է մարմնացեալ ,
Մազերն ոսկի թոյլ թոյլ հովին ,
Որ կ'ուզէ վեր թռչիլ դարձեալ :

Թարմ ու ժպտուն ինչպէս Մայիս ,
Հասն անուշիկ , գոյնը կաթի ,
Երբ աչքերուն մէջ կը նայիս
Հոգին հոգւոյդ մէջ կը կաթի :

Արցունքներու մարգրիտ հատեր
Երբ թարթիչներն իր կ'ողողեն ,
Դուն կը կարծես վարդի թերթեր
Թրջած այգուն ոսկի ցօղէն :

Այն ի՛նչ շքնորհ , այն ի՛նչ հրապոյր .
Կը լեցուի աչքդ արցունքներով
Երբ իր բոյնին մէջ քաղցրաբոյր
Կը դիտես քունն իր անխրոով :

Ա՛լ մի՛ նայիր դուն վարդերուն .
Ամբողջ հրեշտակ , ամբողջ հոգի ,
Ամենասքանչ վարդը սիրուն ,
Հոն , օրրանին մէջ կը պառկի :

Ս Ա Ք Ե Ն Ի Կ

Առաւօտուն

Կանուխ կանուխ,
Կաղմ ու ժպտուն
Եւ մենագլուխ,
Հագուած մաքուր
Սաթենիկ, ո՞ւր
Կ'երթաս այդպէս
Զըւարթերես :

Կ'երթաս անտա՞ռ,
Հոն ուր կայտառ
Քաղցրիկ պլպուլ
Կ'երդէ անդուլ.
Մինչ ստէ սատ
Սարեակն ըմբոստ
Այլ փափկաթե
Թռչտի թեթե :

Կ'երթաս շիտակ
Դէպ այն վրտա՞կ
Հեղամբսունջ,
Որ խնկաշունջ
Քարնան հովուն
Հարցին փոխան՝
Կարձես սիրուն
Տայ պատասխան :

Առաւօտուն

Դուն ո՞ւր կ'երթաս,
— Ես վարժարան

Կ'երթամ ուր դաս

Ինձ կ'աւանդէ

Իմ դասատուն .

—«Հաճայքն հո՛ն է

Հո՛ն՝ գիտութիւն :»

Բուրաստան

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

ԱՄՊԵՐԸ ԻՆՉ ՕԳՈՒՏ ՌԻՆԻՆ

Ձրմեռ օր մ'էր պայծառ ու զով
Երկինքն արփին կ'օժէր լոյսով ,
Եւ մէկ քանի ծաղիկ տերեւ
Կը փթթէին հողին վերեւ :
Սակայն յանկարծ անձրեւաբեր
Մըռայլամած դաժան ամպեր
Պայծառ երկինքն այն կապուտակ
Ծածկեցին ու քողի մը տակ :
—«Հայրի՛կ , գոչեց փոքրիկն Արամ ,
Ինչո՞ւ ամպերն այս խուռներամ ,
Գողցան մեզմէ արփին աղուար .
Լաւ չըլլա՞ր որ տարին բոլոր
Աշուն , գարուն , ձմեռ , ամառ ,
Երկինք մընայ կապոյտ պայծառ :
Հայրն արտին մէջ , իր բահին յեց՝
Չաւկին սապէս պատասխանեց .
—«Չէ՛ , իմ սրդի՛ս , արդարն Աստուած
Մեզ անօգուտ բան չէ տուած :
Այն ջեռուցիչ երկինք սիրուն
Կենսաբեր է մեր արտերուն .
Բայց սեւ ամպերն ալ անհամար
Օգտակար են մեզի համար :

Քանզի անոնք են որ վերէն
Առատ անձրև մեզ կը բերեն :
Առանց անոնց , որդեա՛կ , գիտե՞ս
Ի՞նչ կ'ըլլային դաշտ ու սլարտէզ :
Կը թառամէր համայն երկիր .
Եւ մեր ողբին անկարեկիր
Մեզ ամէն բերք կը զլացուէր
Կը ցամքէին մեր աղբիւրներ ,
Եւ մահաբեր ժանտ երեսով
Ամենուրեք կը տիրէր սով :

Մասիս

Կ. ՈՍԿԵԱՆ

Պ Ա Ի Պ Ր Ի Կ Ի Ն

Ծափիկ ծափիկ ծիրանի
Կարմիր խնձոր կը նմանի ,
Ոսկի դեղձան մազերն ալ
Հովը թեւ թեւ կը տանի :

Լոյս լոյս աղուոր աղաւնի
Պայծառ արև կը նմանի ,
Ծովէն կապոյտ աչուկն ալ
Վեր վեր երկինք կը հայի :

Ծաղիկ ծաղիկ ծիրանի
Վառ վառ վարդի կը նմանի ,
Զիւնէն ճերմակ թաթիկն ալ
Կ'ուզէ մարդրիտ մատանի :

Ժողովրդ. Բանաստեղծութիւն

ՁՈՒԱՐԹ ՆԱԻԱՍՏԻՆ

Ձըւարթ նաւաստին
Ծովերուն վըրայ,
Հովին հասանքին
Դիմագրաւ կ'երթայ :
 Ձերդ ծովու թըռչուն
Միշտ ծայրը կայմին ,
Իր երգը հընչուն
Կը յանձնէ հովին :
 Կ'անցնի վըտանգէն
Աշխոյժ և ուրախ ,
Ու չազդեր իրեն
Մըրրիկն անգամ վախ :
 Սեւ ամպն ալ վերէն
Երբ իջնէ գըլխուն ,
Կը կըրկնէ նորէն
Իր երգը հնչուն :

Քերակ. Արդի Աշխրհ.

ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

ՓՈՔՐԻԿ ՎԱՐՁԱԿԱԼԸ

Վանդակիկ մը դըրի աղուոր
Իմ պարտէզիս մէջ սիրուն ,
Որ թըռչուն մը գայ ուղեւոր
Առտու մը հոն շինել բոյն :
Ո՛վ քողցրախօս շիկահաւիկ ,
Իմ տունս ընտրէ՛ քեզ բընակ ,
Միայն երգ մը կ'ուզեմ փոքրիկ
Տունիս վարձքին փոխանակ :

Քերակ. Արդի Աշխրհ.

ՏԻՊԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

ՄԱՅՐԸ ԵՒ ԵՐԿՈՒ ԶԱՒԱԿՆ ԵՐԸ

Մեր թաղին մէջ խեղճ աղքատ
Մայր մը կար շատ երջանիկ .
Ունէր զաւակ երկու հատ ,
Մէկը մեծ՝ միւսն էր փոքրիկ :

Ասոնք մէկտեղ կ'ապրէին
Փայփայելով զիրար միշտ .
Կապուած սիրով կաթոսին՝
Զէին ճանչցած երբէք վիշտ :

Օր մը մեծը մօրն ըսաւ .
«—Գիտեմ զիս շատ կը սիրես ,
Բայց չես կըրնար դուն բընաւ
Սիրել , որքան ես ըզքեզ :»

Մայրը հարցուց իր տըղուն .
«—Ինչո՞ւ կ'ըսես ատանկ բան :
—Երկու զաւակ ունիս դուն ,
Գոչեց , ես՝ մայր մը միայն :»

Քերակ. Արդի Աշխրհ.

ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

ՄԱՆԿԻԿԻՆ ՔՈՒՆԸ

Նիրհէ՛ , մանկիկս իմ սիրուն ,
Անուշ քունով նիրհէ՛ դուն :
Օրրանիդ քով եկան հիւր
Արեւն , արծիւն ու գեփիւռ ,
Թողած ծովերն , ամպն ու սար ,
Համբոյր բերել քեզ հազար :

Բացաւ արծիւն իր թեւեր
Գլխուդ վերեւ սսկեհեր ,
Շըրթունքներուդ վըրայ նուռ
Սըրսկեց արփին վարդ և հուր ,
Ու փայփայեց քամին զով
Այտերդ իր նուրբ բեհեզով :

Նիրհէ՛ , մանկիկս իմ սիրուն ,
Անուշ քունով նիրհէ՛ դուն :
Բոյնը դարձաւ դուռ արծուին .
Մարը մտաւ լոյս արփին .
Թըռաւ զնաց իր մօր քով
Զեփիւուն անհո՛ւն նազանքով :

Սիւզին դարձին անձկալիր
Մայրիկն հարցուց . «Ո՞ւր էիր ,
Դեւերու հե՞տ կըռուեցար .
Յուզեցիր ծո՞վ ու մացառ :»
Իսկ համբոյրով մը ջերմին
Պատասխանեց խօլ քասին .

«Ես ծառ ու ծով չեմ յուզեր ,
Եւ դեւի հետ չեմ կռուեր .
Մանկիկին քով ամէն օր
Ըսի երգեր ու օրօր .
Նիրհէ՛ մանկիկս իմ սիրուն ,
Անուշ քունով նիրհէ՛ դուն :»

Բերակ. Արդի Աշխր. ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

ԿՐԻԱՆ ՈՒ ԲԱԳԵՐԸ

Թեթեւօղիկ կրիայ մը կար ,
Որ իր ծակէն ձանձրացած ,
Ուզեց երթալ տեսնել աշխարհ ,
Անցնիլ լեռներ բարձր ու ցած :
Այս մեծ խորհուրդն յայտնեց երկու բաղերու ,
Որոնք զինքը մինչեւ Փարիզ տանելու
Սիրով եղան յանձնառու :
Ըսին . «Ըզքեզ կը տանինք Սէն գետին մերձ
Մինչեւ էյֆէլ երկնաբերձ .
Երթաս տեսնես նոր նոր ազգեր , նոր բարքեր
Կեանքի պերճանքն ու փառքեր :
Ու ճոխանայ միտքըդ , ըլլաս մեծ հանճար
Ուսանելով ի՛նչ է դըդումն ու բանճար
Այսպէս եղան Պիւֆօն , Լիննէ մեծ գիտուն
Այսպէս եղաւ քաջն Ոդիսեա՝ գիւցազուն :»
Հաւանեցաւ իսկոյն կրիան ,
Եւ թըռչուններն ալ՝ արագ
Այդ լուրջ գործին գըլուխն անցան ,
Դարբնեցին ձող մը բարակ ,
Չոր իր բերնին մէջ դընելով մեղմարար ,
«Աղէկ մը խա՛ծ , ըսին իրեն .
«Չըլլայ բերնէդ ձըգես վար :»
Յետոյ ձողին երկու ծայրէն
Երկու բաղեր բռնեցին ,
Եւ օդին մէջ բարձրանալով անդադար ,
Փոքրիկ հաւերն առանձին
Անցան ծովերն ու անտառ :
Ամէն կողմէ ով որ զանոնք կը տեսնէր ,

Մեծ զարմանքով կը պոռար .
«Կրիաներու դըշխան երկինք է ելեր :»
— «Այո՛ , դըշխայ եմ , ի՞նչ գիտցաք ,
Գոչեց կրիան մեծափառ
Ամպերուն մէջ անհոգ , արծակ
Կը ճամբորդեմ օդապար :»

Աղէկ կ'ըլլար , եթէ հանդարտ ու անբան ,
Անցնէր երթար իր ճամբան ,
Զի անխորհուրդ հէք կրիան՝
Երբոր թուլցուց իր ակռան ,
Զողը փախաւ բերնէն , և ինք ինկաւ վար ,
Փշրըւեցաւ գլտորելով քարէ քար :

Արծաթ կ'ըսեն թէ եւ խօսքին ,
Լըռութիւնն է սակայն ոսկին :
Ով որ կ'ըլլայ անհամբեր ,
Ով որ լեզուն չի կապեր ,
Գլխուն կուգայ շատ փորձանք .
Այս առակէն հասկցանք :

Առակներ

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱԳՌԱԻ

Աղուէսներ՝ երբեմն իբր թէ սատկած ,
Լեզու դուրս ձրգած ու բերանաբաց՝
Մէջ դաշտին
Կը պառկին .

Որպէս զի գէթ բերնով միայն
Այն թռչուններն՝ դիւրաւ որսան ,
Որք կարծելով թէ մեռած սատկած են ,
Իսկոյն վար կ'իջնեն որ կտցեն ուտեն :

Աղուէսին մէկն այսպէս յաջողեցաւ ,
Ոտներէն օր մը բռնել մէկ Ագռաւ ,
Պիտի ուտէր , հիծէ Ագռաւին
Չայնն ողորմուկ՝ հեծեծագին իրեն չըտէր ,
«Ո՛վ Աղուէս , զիս քեզ պարգեւ չը տըւա՞ւ Տէր .

Արդ նախ նըմա փառք տալ պարտիս ,
Ապա բարով վայելել զիս :»

Աղուէս խաբուած՝ բերան բացաւ ,
«Փա՛ռք քեզ , Աստուած» հազիւ ըսաւ .
Թռչնիկ թըռաւ . ծառին վրայ թառած՝
Աղուէսին վրայ խնդաց ու ճըւաց .

«Բեռի՛ս , նախ և առաջ կ'ուտին ,
Յետոյ կը փառաբանեն :»

Յիսակ Առակներ

Վ. ՎՐԴ. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

ՊԱՀՈՒԱԾ ՔԱՆՁԸ

Երկրագործ մը հիւանդոտ
Կը զգայ թէ մահն է շատ մօտ
Ու կը ժողվէ մահճին շուրջ
Իր զաւակներն աչալուրջ :

«Տըղա՛ք , չըլլայ որ երբէք
Կ'ըտէ , չըլլայ որ ծախէք ,
Հօրենական մեր կալուած ,
Զի գանձ մըն է հոն պահուած :

Չեմ գիտեր տեղն այդ գանձին ,
Բայց փորեցէ՛ք առանձին .
Մարդ չիմանայ ձեզմէ զատ ,
Պեղեցէ՛ք հողն անվըհատ :»

Երբոր մեռաւ ծերունին ,
Միշտ փորեցին արտերնին ,
Եւ օրերով տըքնեցան
Յետոյ ըրին վարուցան :

Ու չը գըտան դանձ բընաւ ,
Բայց շատ աւատ հունձք կղաւ .
Տըղաքն ըսին . « Հասկըցանք
Այդ ճոխ գանձն էր աշխատանք : »

Քերակ . Արդի Աշխրհ .

ՏԻԿԻՆ Զ . Հ . ԱՍԱՏՈՒՐ

ԱԳՌԱԻՆ ՈՒ ԱՂՈՒԷՍ

Ոստի մը ծայր
Պարոն Ագռաւն էր թառեր .
Բերանն աւար
Գողցած պանրի կտոր մ'ունէր :
Հոտը կ'առնու
Աղուէսը վեր վեր կ'իյնայ .
Անուշ լեզու
Կուգայ վարէն ձայն կուտայ .
« Բարի՛ւ , բարի՛ւ ,
Պարոն Ագռաւ ,
Քեզ շատ արեւ .
Ո՛հ , ի՛նչ աղուոր
Ի՛նչ գեղեցիկ
Ես իրաւ որ :
Սուտ չը կարծես
Թէ ձայնդ ալ է

Սա տեսքիդ պէս ,
Գոռն մէկ հատիկ
Անտառիս մէջ հիւր հաւերուն ես փիւնիկ :»
Աս լըսելով խընտումէն
Կ'ելլէ Ագուան ինքիրմէն .
Կըտուց մը լայն կը բանայ
Որ անուշ ձայնը ձըգէ .
Որսը բերնէն վար կ'իյնայ .
Աղուէսն իսկոյն կը խըլլէ ,
Զայս ըսելով իրեն հոն ,
« Միամի'տ Պարոն ,
Գընա խեղք սովրէ .

Ամէն շողօքորթ կ'ապրի անոնցմէն
Որոնք կը խաբուին իր անուշ լեզուէն ,
Աս դասն որ հիմա դու ինձմէ առիր ,
Կ'արժէ , խօսք չը կայ , կըտոր մը պանիր :»
Ագուան ամօթով
Սըրտին էրուքով ,
Երգում կ'ընէ հոն , թէպէտ քիչ մը ուշ ,
Մէյ մ'ալ չաւտալու լեզուաց փաղաքուշ :

Լամոնիքն
(Թարգմանութիւն)

Հ. Գ. ՀԻՒՐՄԻՒԶ

ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐ

Թաղոս աղբարն ու Մարկոս
Կը կտրէին դար ու փոս .
Ղուրպէթ ելեր , ճամբայ կ'երթան ,
Սիրոյ վրայ ճառ կը կարդան :
« Ի՛նչ լու բան է մէկ սիրտ լինիլ ,

Հողւով մարմնով ի սէր ապրիւ , »
Կ'ըսէր Թորոս , աջը բռնէր
Մարկոսին , և համբուրէր .
Մարկոսն ալ նորա ճակտէն
Պագ կ'առնէր մարմըրելէն :

Հագիւ թէ մէկ քայլ կ'առնէին ,
Կը փարէին , կը խօսէին .
Իրարմէ պաշիկ յաճախ անդադար
Առնուլ տալէ չէին կշտանար :

Իրիկուն եղաւ , Բիւրա Իպօին
Տունը եղան հիւր երկոքին :

Գաղտուկ Իպօն հարցուց . « Թա'դոս ,
Ի՞նչպէս մէկն է ընկերդ Մարկոս : »

— Մի' հարցըներ , իշուն մէկն է : »

Յետոյ Իպօն ծածուկ կրկին
Կը հարցընէ եւ Մարկոսին .

« Թագոս ընկերդ ո՞րպիսի ոք ,

Ըզորդ ըսէ , կարծես արդեօք : »

— Մի' հարցըներ , շանը մէկն է : »

Յետոյ Իպօն սեղան շտկեց ,

Այլ սակայն անդ , ո՞վ զարմանք մեծ ,

Մէկուն առջեւ դըրաւ խոտեր ,

Միւսին առջև չոր սակորներ .

Հիւրերն իսկոյն միաբերան

Արձակեցին առ Իպօ ձայն .

« Էջ կամ շո՞ւն ենք որ խատ , սակոր

Կը հրամցընես դու մեզ այսօր .

Իպօ , ըսէ' ,

Այո կը վայլէ : »

— Մի' զարմանաք , այլ զատ զատ

Վըկայուլթեանն համեմատ

Չոր ես ձեռնէ գաղտուկ ասի,
 Այժմ ձեր առջեւ ընթրիք դրրի:
 Հաւատացէք, չէ՛ ձեզ բարով,
 Այդ ծուռ սրտով ու այդ խելքով
 Ղուրպէթ երթալ. դարձի՛ք, դարձի՛ք
 Ի ձեր երկիր, իմ աղբրտիք»:

Երբ լեզուդ է չար
 Ընկերիդ համար,
 Ոչ ոք բարերար
 Քեզ կարծէ, ե՛ղբայր:

Յիսնակ Առակներ

Վ. ՎՐԴ. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

Վահան վրդ. Տեր-Մինասեան, Պարտիզակցի. Ազգային
 շրջանակներու մէջ ծանօթ դէմք մ'է որչափ իր գրական եր-
 կասիրութիւններով այնչափ ալ իւր հանրային գործերովը:

Թուրք եւ Ռուսական պատերազմէն (1878) քիչ վերջը, Վա-
 հան վարդապետ Ազգային Վարչութեան կողմէն իբրև Պատուի-
 րակ Հայաստան խրկուեցաւ երկրին վիճակը ուսումնասիրելու,
 Հայոց Գաղթականութիւնը արգելելու և միանգամայն վիճակա-
 գրութիւն շինելու դժուարին պաշտօններով, զոր գոհացուցիչ
 կերպով կատարեց:

Ահա այս երկարատեւ ճամբարդութեան միջոցին էր որ հա-
 ւաքեց ժողովրդեան բերանը կենդանի մնացած առասպելները,
 զրոյցները, երգերը, առակները ու տաղերը, զորոնք յետոյ դա-
 սաւորելով ի լոյս ընծայեց Յիսնայ Առակ և Անգիւր Գոհարներն և
 Առակ անուամբ չորս հատորներով, որոնք Հայ ժողովրդական
 բանաստեղծութեան յիշատակարաններ պիտի մնան յաւէտ. սոյն
 հատորներուն մէջ կ'երեւին նաև Հայոց հին Առակախօսներէն՝
 Վարդապետ, Միւր-ը Գոյի և այլոց առակները արդի աշխարհաբարի
 վերածուած առակախօս հեղինակին կողմէ: Վահան Վարդապե-
 տին աշխարհաբարը չունի յարդարում և ոչ ալ խնամեալ ոճ.
 սակայն հեղնամիտ հեղինակ մ'է:

Մ Ա Ղ Կ Ո Ւ Ն Ք

Մէկ պարտիզի մը մէջ ծաղկունք զանազան
կը ծաղկէին հոտով տեսքով աննրման .
Ոմանք ծառոց փաթթըւելով կ'եղնէին ,
ինչպէս բաղեղն ու պատատուկ (1) .

Եւ այլք ցածուկ կը բացուէին ի գետնին
ինչպէս վէպէնն (2) ու հըրանուկ (3) :

Հոն գլանըւէր ամէն տեսակ ,
Բարդ բարդ մեխակ , կարմիր՝ ճերմակ .
Իսկ շուշաններ՝ վայրի՝ ջրի՝ և հովտաց
կը բացուէին ամէն օր նոր ի նորանց :
Բուրատանին մէկ շուք տեղ՝
Կ'ապրէր քաշուած և մանուշակն աչազեղ :

Օր մի օրանց առարւանց ,
Գլուխն ի վեր , շիւփ-շիտակ ,
Կայնած Շուշանն ըսպիտակ՝
Յոխորտարար՝ Մանուշակին զայս ասաց .
« Բա Մանուշակ , ս'ըր մըտեր ես .
« Հատըդ կ'առնու՞մ , դուն չըկաս ,
« Ափսոս չէ՞ քեզ , դուն մեզք չե՞ս ,
« Այդպէս ինչո՞ւ խեղճ մընաս . . .
« Թէպէտ հասակդ է փաքրիկ ,
« Այլ աչերդ են խորտաիկ .
« Դու մէկէ մ'ալ ամբշնալու բան չունիս ,
« Կարճ հասակէդ քաշուիլ պէտք չէ քեզ , հոգիս : »

Այն Շուշանին սընապարծ
Յոխորտանքին փոխադարձ՝

(1) Պարսպուկ , բաղեղ :

(2) Վեպէն : Ֆրանսերէն բառ որ կը նշանակէ աղանաբօր ,
կապոյտ գոյնով ծաղիկ մը :

(3) Հրանուկ , տեսակ մը ծաղիկ :

Մեր Մանուշակն հեզ ու խոնարհ
Դարձաւ ասաց հանդարտաբար,
« Ազնիւ սըրտիդ, պերճ Շուշան,
« Շնորհակալ եմ բիւր անգամ,
« Այլ կը խնդրեմ, ինձ համար
« Դու մի՛ մաշուիր ու հոգար .
« Իմ վիճակէս ես գոհ եմ,
« Այս տերեւոց շուքին տակ՝
« Ազատ կ'ապրիմ հովէն մըրըկէն : »

Այսպէս անցաւ այն առաւօտ,
Բայց ահա տե՛ս, կէս օրուան մօտ
Մէկ տաք քամի մը փըշեց,
Մեր ծաղկանց տեսք շնորհք խամրեց,
Յետոյ կարկուտ և յորդ անձրեւ
Հոյս ծաղկանց մութ բերին արեւ,
Ոմանց տեղերն ալ չը մնաց,
Շատերն ընկան թուամաժ դեղնած .
Եւ այլք կախուած գըլխիվայր
Կ'երերային խեղճաբար :

Իսկ մեր Շուշանն՝ որ առաւօտ
Մեծ մեծ խօսէր յոխորտաբար :
Ջարդ բուրդ եղած, ազտատ-կեղտատ
Ցեխերուն մէջ քաշ կուգար :
Այն ժամանակ Մանուշակ,
Իր ցօղազարդ աչերով,
Նայեցաւ մէկ մը չորս քով,
Եւ Ստեղծողին տալով փառք՝
Սըրբեց աչքին ցօղ-արտասուք
Հառաչելով խորունկ խորունկ :

Ծաղկաբաղ Առակաց

Հ. Բ. Վ. ԲՈՒՇՆԵՐԵԱՆ

Հ. Բերովբէ վրդ. Բուշներեան, Վենետիոյ Մխիթարեան
ուխանն որ Եսովպոսի, Փեդրոսի, Քուլիովի, Լաֆոնթէնի և Ֆլօրիա-

Ա Ր Մ Ի Ն Է

Հինդ տարեկան
Մի աղջրկան
Մեքենայ մի կտրեց տարաւ
Աջ թեւն (ի՛նչ աղէտ սրտագրաւ)
— Մանկիկն այնքան հեծեց լացաւ
Թափեց այնքան արցունք և ցաւ
Որ հայրաբար
Աստուածն արդար
Գթութեան շող մ'ուղղեց վրան,
— Ամենաբոյժ սպեղանի
Որ փոյթ գոցեց վէրքին բերան
Եւ միաթեւ այլ կենդանի
Հատուց իւր մօր
Մանկիկն անզօր :
— Անցան օրեր, և Արմինէ
(Արմինէ էր անունն, ըսի՞),
Ալ զերծ վէրքէ, դառնութենէ
Ամէն առտու կ'երթար դասի
Եւ անդադար
Գիրք կը կարդար
Եւ իւր պարտուց խիտ սւշադիր
Զախովն ա՛յնքան լաւ գրէր գիր

նու առականերէն շատերը աշխարհիկ լեզուի վերածած է ազատ
թարգմանութեամբ. ունի նաեւ քանի մը ինքնագիր առականեր
ալ որոնք ամէնքը միասին հրատարակուած են Ծագկոտազ Առաւ
կոյ երկու հատորներով. վերջերս ալ Սոգոսը յանդաւոր աշխարհ
հարարի վերածեց: Առականիս Վարդապետին լեզուն շատ պարզ
է, զուրկ՝ գրական որ և է ճոխութենէ:

Որ վարժատան յարկին ներքեւ
Ինքն առնելով նիշ ու պարգեւ՝
Միւս աղջկանց
Առթէր նախանձ :

— Յանկարծ մի օր մեծ և բարի
Կին մ' (ամուսին թագաւորի)
Գիւղին մէջէն անցած ատեն
Կանգ առաւ և գիւղապետէն
Խնդրեց իսկոյն
Որ փոքրագոյն՝

Այլ խելացի յառաջագէմ
Մի աշակերտ բերեն իւր դէմ :
— Մարդ զրկեցին և Արմինէն
Առին բերին վարժատունէն :

Աղջիկն անվախ
Կազմ և ուրախ

Այլ թեւադուրի, երբ երեւցաւ
Ազնիւ տիկնոջ աչքը լեցաւ,
Եւ գգուանօք ու քաղցրածայն,
Իւր գրկաց մէջ առնելով զայն՝
Տուաւ պաշիկ,

Եւ՝ «փոքր աղջիկ»

Ըսաւ «Գոհ եմ որ դու այդպէս
«Աշխատասէր և խոհեմ ես .

«Լաւ կը գրես», լաւ կը կարդաս .

«Եւ կ'ուսնիս ինչ որ տան քեզ դաս .

«Արդ, փոխարէն

«Առատօրէն

«Քեզ վարձատրել կ'ուզեմ այսօր

«Ըսէ՛, ի՞նչ տամ, գրքո՞յկ մ'աղուոր,

« Հագո՞ւստ , պատկե՞ր թէ խաղալիք
« Կուզե՞ս շաքար կամ ուտելիք ,
« Կուզե՞ս օղեր ,
« Մի , մի՛ վախեր
« Ըսէ շխտակ » , իսկ Արմինէ ,
Հոգին լցուած ցնծութենէ ,
Բացաւ շրթունքն և խնդազին
Գոչեց — « Թե՛ւ մի տուէք , տիկին . . . »

Շողեր ու Յօղեր

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

Ա Ր Փ Ի Ն Է

Արդե՛օք շուշան գարնանային
Թէ պատկերն է լուսնկային ,
Հո՞վ թէ մետաքս է մազին թել՝
Ես չեմ կրնար գանազանել :

Աղեքսանյր Գ. Փանոսեան [1814-1872] . Արդի հայ գրականութեան այս անխանջ մշակը քառորդ դարէ ի վեր անդուլ անդադար կը հիւսէ, արուեստին բոլոր նրբութեամբը, քերթուածներ, տաղեր, առակներ ու մանրավէպեր որոնց թիւը ցարդ հարիւրներով կը հաշուի. բայց ինչ որ դինքը անզուգահան ըրած է մեր հեղինակներուն մէջ, յանդերուն հիանալի ճոխութիւնն ու գիւտերն են: Իր բոլոր հեղինակութիւնները կը փայլին լեզուի այնպիսի մաքրութեամբ ու ներդաշնակութեամբ զոր կարելի է դատական աշխարհաբարի իւր օրինակ ցուցնել :

Հեղինակին բոլոր երկասիրութիւնները սկսած են հրատարակուել առանձինն, չորս հատորներու մէջ ամփոփուած՝ Այգեկանի անուամբ:

Իր քնքուշիկ բերան կըլոր
Ծաղկի բաժակ մ'է գոգաւոր,
Երբ ձգելով ձայն մը սիրուն
Կըսկսի շարքն իր երգերուն:

Ու նուրբ խարտեաչ յօնքերուն տակ՝
Աչքերը խայտ ու կապուտակ
Բացուին գոցուին համեստօրէն,
Մինչ գովեստով զինքն օրօրին:

Երբ պարտէզին մէջ կուգայ ման՝
Ճիչեր լսուին սքանչացման.
Սիրահարներ ձեր թէ տըհաս
Շուրջը շարուած կ'ընեն դարպաս:

Իր գիրգ ձեռքին եղայ գերի
Որ պատառիկ մ'է համբուրի.
Բայց այն ձեռքով չարածըճի
Ձիս կ'ապտակէ առանց խըղճի:

Մերկ սրունքներ ցոյց տայ լկտի,
Ես կը սաստեմ՝ նէ կը ժպտի.
Բայց ի՛նչ, կ'ուզէ՞ք որ ամաչէ,
Արփինէն դեռ տասն ամսու չէ:

Թրբուն Յանգեր

ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

ԷՇ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Անտառին մէջ ձոր մը կար,
Ուսկից անդին անցնելու
Չքկար շէնքով ճանապարհ :
Ասոր մէկ ճար տեսնելու
Ժողովեցան կենդանիք
Ի խորհուրդ՝ մեծ պըզտիկ :
— Արդեօ՞ք կամուրջ շինեն նոր
Թէ լեցընեն դար ու փոր : —
Եւ զի Առիւծն է ճանչցուած
Թագաւոր մէջ կենդանեաց
Առաջարկեց Աղուխուն
Որ տայ խորհուրդ բանիբուն ,
Ճարտարամիտ Աղուէսն իսկոյն
Տուաւ խորհուրդ հաճոյագոյն :
Ասաց , — «Տէր արքայ ,
« Որպէս զի ըլլայ ,
« Մեր ճամբան շիտակ
« Ամէն ժամանակ ,
« Կամուրջ մը պէտք է մեզի ,
« Թէ տէրութիւն ձեր հաճի ,
« Հրաման տուէք որ շինեմ ,
« Չորիս վրայ զայն կախեմ : »
Առիւծն ասաց , — « Ինչպէս գիտես ,
« Ա՛յնպէս արա , վարպետ Աղուէս : »
Աղուէսն իսկոյն իշխանաբար՝
Տուաւ ամէնուն պաշտօն յարմար :
Ջրըչունք եղան որմնադիր ,
Յաղթանդամ փիղը՝ ջրբկիր :

Իշուեն ասաց, — « Իսկ քու գործդ՝ էշ — աղբար ,

« Ըլլայ՝ կըրել շաղախ , տաղախ կիր ու քար : »

Այն ատեն էջն իբր Խտտիկեան ոմն զգօն

Կամ թէ զուրցեմ ի կենդանիս նոր Պղատոն

« Մենք ալ , ասաց , թէև չըլլանք շատ գիտուն ,

« Սակայն գէշ չէր այս գործիս մէջ . . . »

Վրայ բերաւ Աղուէսն , « Կսենք խօսքիդ վերջ : »

— « Սակայն գէշ չէր գիտնալ բանին էութիւն : »

« Կամուրջ Չորիս երկայնքի՞ն

« Պիտի ճըգուի թէ լայնքին :

« Թէ երկայնքին ասէք շինուի ,

« Շատ նիւթ , շատ ծախք պիտի լինի : »

Իշուեն աս նոր խելքին վրան՝

Բոլոր ժողովքը միաբերան՝

Հա՛ , հա՛ , խնդալ ըսկրաան .

Աղուէսն խեղոյն խոհեմաբար՝

« Շէնքին դիրքին , ծախքին վրայ

« Մտածել , ասաց մեզ կ'իյնայ .

« Իսկ դու նայէ էշ — աղբար ,

« Ինչ հրաման որ լըսես

« Տեղն ի տեղօք կառարես ,

« Առանց քովէդ խելք խառնելու : » —

Խորհրդական մարդ ըլլալու

Պէտք է կրտսուկ բարակ հանճար .

Բայց այդ դանձն ալ զքժբաղձարար

Շատ մարդկանց քով չ'ես գըանար .

Թէ այդ բնական տուրք չ'ունիս ,

Կռէ՛ , չափէդ դուրս չ'ընկնիս .

Խըրատ քեզ՝ էջն առակիս :

Ծաղկաբաղ Առակաց

Հ. Բ. Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

— Ո՞վ լուսափայլ արեգին,
Ճառագայթներ է տըւած,
Եւ անթափանց գիշերին
Լուսին, աստղեր թանկագին :
— Մեր արարիչ հայրն Աստուած

— Անհուն երկնի՝ կապոյտ գոյն
Եւ խոտին ո՞վ է տըւած
Այն կանանչն՝ ուր փալփըլուն
Ցօղերն հանգչիլ գան այգուն :
— Մեր արարիչ հայրն Աստուած :

— Ո՞վ հոտաւէտ պուրակին
Շուք, եւ թըռչնոյն է տըւած
Այն փետուրներ փափկագին
Որով սլանայ նա երկին :
— Մեր արարիչ հայրն Աստուած :

— Ո՞վ աշխարհիս մինչեւ ցարդ
Ամէն պիտոյք է տըւած,
Մերկ դաշտին խկ իբրեւ զարդ՝
Տալով շուշան, յաամիկ վարդ :
— Մեր արարիչ հայրն Աստուած :

— Ո՞վ քեզ գըգուող բարի մօր
Այն վեհ գորովն է տըւած,
Որով վըրադ, ամէն օր
Կը գուրգուրայ սիրով նոր :
— Մեր արարիչ հայրն Աստուած :

— Ո՞վ քաղցրահամ գեղունակ
Քեզ պատուհներ է տըւած ,
Եւ այն ճաշն որ շարունակ
Լեցնէ փոքրիկ քու պընակ :
— Մեր արարիչ հայրն Աստուած :

Շողեր ու Տողեր

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ Ն Ո Ւ Բ Ա Ջ Է Ն

Բազէն , մէկ օր
Ժանիքներովն իր սուր ու կոր՝
Բռնած էր փոքր , անմեղուկ
Մի ճնճղուկ ,
Որ սարափէն ուշակորոյս՝
Կորսընցուցեր էր ամէն յոյս ,
Եւ խաւարած աչքին լոյսեր՝
Մահուան կը սպասէր .
Երբ անդիէն հեւ ի հեւ
Հասաւ թռչնիկ մը թեթեւ ,
Փոքրիկ ձագը ճնճղուկին
Որ պաղատագին
Հայցեց . « Մայրիկս է անիկայ .
« Եթէ ան միւսնի , ո՞վ պիտի հոգայ
« Եղբայրներս , որոնք մեր բոյնին մէջէն
« Անոր ակընդէտ՝ ճըւան ու ճըչեն :
« Ձեր մեծութիւնն , ո՞վ տէր բազէ
« Ճնճղուկ եթէ ուտել կ'ուզէ՝
« Իմ միտս աւելի թարմ է , զի՞ս կերէք ,
« Եւ ապրին մայրս ու եղբայրներս երեք . . .

«Թող մօրկանս համար անուշիկ
«Ես զսհուլիմ յուշիկ . . . : »

Մօրն անձնըւէր ձագուկին
Երբ տեսաւ այս վիշտն ու ցաւ ,
Բազէն յուզուած սաստկագին
Գըլթաց , սիրտը կակղացաւ ,
« Բարի զուակ հարազատ ,
Ըսաւ , ապրէ՛ մօրկանդ հետ . . . : »
Թողուց երկու քն ալ ազատ
Թըռաւ , եղաւ ինքն անհետ :

Շողեր ու Յօղեր

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

Մ Ե Ր Կ Ա Տ Ո Ւ Ն

Չարմանք կը շարժեն իր ճոխ ու սահուն
Մաղերը երկայն , նայուածքը խտհուն
Ինչպէս իր հպարտ կերպարանքը լուրջ ,
Ու հխացողներ բարբին իր շուրջ
Փափուկ ձեռքերով շայեն ու գզուեն
Սիրուն կենդանին որ այս պատիւէն
Շըփացած կ'ուռի , ու իր մետաքսէ ,
Թուշը՝ փայփայող ձեռքին կը քսէ .
Երբեմն ալ պառկի՝ ցոյց տալով ճերմակ
Փորիկ մը կակուղ , փորիկ մը բամպակ :

Երբ կուշտ է ու գոհ՝ բազմոցին վրայ
Փռուած օրն ամբողջ ծոյլ ծոյլ կը քընանայ .
Թէ անունը տաս՝ մարմըրած ու կէս
Աչքերը բանայ , ճօճանակի պէս
Պոչը խաղցընէ իրրեւ պատասխան ,

Բայց երբ ըսեն թէ պատրաստ է սեղան ,
Իրարանցումով ցատկուտէ ուրախ ,
Կանչ ու մշաւներ ուղղէ աջ ու ձախ :
Նուրբ ճաշակի տէր՝ պատառը զատէ ,
Լափելէ առաջ ստէպ հոտուտէ :

Յետոյ կշտացած՝ ամէնուն դիմաց
Սւրունքը տնկէ ու կամաց կամաց
Կարմըրուկ լեզուին ծայրով անդադար
Մազերն յարդարէ՝ սանարէ վերէն վար :

Յանդիմանութիւն , գովեստ կամ կատակ
Խորապէս կ'ըզգայ՝ կ'ըմբռնէ յատակ .
Աչքին մէջ կարդաս ամէն զգացում ,
Քէն , սրտմութիւն և կամ գոհացում :

Բայց երբ մօտենայ գարուն , ան ալ իր
Կեանքը կ'ըսկսի արկածախնդիր ,
Աշխոյժ պատէ պատ , ճարպիկ ծառէ ծառ
Նետի պէս սուրայ՝ վազվուտէ կայտառ ,
Կամ սիրուհւոյն հետ նստած քիթ քիթի
Կը սիրարանէ ծարաւ ու նօթի :

Սակայն գգուանքի կամ ճաշի համար
Ստեղծուած միայն՝ մեղկ ու խղճահար
Մեր կատուն չունի համբաւ որսորդի ,
Թէ մուկ մը տեսնայ՝ լեղին կը փրթի :

Ք Ա Ռ Ն Ո Ւ Կ Ը

Փարախին մէջ որ պաշտպանուած էր ցանկով՝
Հէք գառնուկներ կ'արածէին քովէ քով,
Գայլ մը եկաւ՝ էն աղուորին աչք տնկեց .
« Գառնո՛ւկ, ըսաւ, ես քու եղբայրն եմ երէց,
Ու եկեր եմ, գիտե՞ս զքեզ ազատել
Այդ գարշահատ փարախէդ, դուրս ե՛լ դուրս ե՛լ
Ու նայէ սա կանաչ մարգեր ու հովիտ,
Սա թարմ խոտեր, առուակներուն ջուր վըճիտ,
Կե՛ր ու խըմէ՛ ցատկուտելով համարձակ : »
Գառնուկն ապշած պատասխանեց . « Ես մինակ՝
Առանց հովուի դաշտը երթալ կը վախնամ .
Դուրսը կ'ըսեն թէ գայլեր կան անզգամ : »
Գայլը կրկնեց . « Եղբայր դուն մի՛ վստահիր
Անգութ մարդոց խօսքերուն կեղծ ու պատիր ,
Գայլին անունն է ելեր, բայց նենգաւոր
Մարդիկ զձեզ գրգուեն շոյեն մինչեւ որ
Ստակ շահին ձեր ճոխ կաթէն ու բուրդէն ,
Հանդարտ սրտով օր մ'ալ զձեզ ճաշակեն : »
Սակայն վրայ գալով շուն մը պահապան
Խանգարեց այս խօսակցութիւն շահեկան .
Գայլը մէկէն հոն կծկեցաւ իբրեւ գող ,
Իսկ խեղճ գառնուկն էր շուարած՝ սիրտը դող :

Իրիկուան մօտ եկան երկու հովիւներ ,
Ու զոհեցին գառնուկներէն հատ մը գէր .
Լեղապատառ լի սարսափով ու ահով
Ա՛լ իր մահուան դատակնիքին ապահով
Փախուստի ճար մը փնտռեց մեր գառնուկ ,
Ծակ մը գտաւ ու դուրս ելաւ կամացուկ .

Գայլը որ հոն դարանակալ կ'սպասէր՝
 Յափշտակեց տարաւ զանի լեռն ի վեր,
 Ու լափեց ողջ ողջ՝ ըսելով. «էյ ապուշ,
 Շատ կը սիրեմ կակուղիկ քու միան անուշ.
 Գայլ ու մարդիկ իրար կ'արժեն, ի՛նչ կարծես.
 Դուն ուտուելու համար միայն ծնած ես:»

Ափսո՛ս, գառնո՛ւկ, ճակատագիրդ է դաժան,
 Որ կողմ փախչիս՝ քեզ կ'ըսպասէ վատ դարան:
Թրքուռն Յանգեր **Մ. ԱՃԻՄԵԱՆ**

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
 Հոգւով դեռ արի, գլխով ալեւոր,
 Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
 Ոսկի ասացին գիտունք այն դարը:
 Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
 Մինը խիստ տրգեղ, միւսը՝ գեղեցիկ,
 Մի օր Տըգեղը ասաց միւսին.
 «Երթա՛նք ծովի ափ, քուրի՛կ, միասին:»
 Սիրունը գընաց առաջից տրտում,
 Տըգեղը ետնից սխ պահած սրտում,
 Հազիւ թէ ծովի ափին էր հասած՝

Մկրտիչ Աճեմեան. Փարիզի Մուրատեան վարժարանի նախկին աշակերտը քնարերգակ բանաստեղծ մ'է և մեր գրական ամէնէն սիրուած դէմքերէն մին, որ գողտրիկ ու զգայուն քերթուածներու չորս հատորիկներ ընծայեց մեզ, որք են Ժպիտի «Արտաստ», Լոյս և Սրտեր, Գարնան Հափե և վերջերս ալ Թրքուռն Յանգեր:

Իր սիրուն քրրոջ գլխորեց նա ցած :
Կանչեց կիսամեռ Սիրունը ջրից ,
« Քուրի՛կ իմ , քուրի՛կ , փրկէ՛ ինձ մահից ,
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ ,
Ա՛ռ , էն քե՛զ լինի , պարգեւէ՛ ինձ կեանք : »
— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսար : »
« Քուրի՛կ , թէ այդ էլ քեզ չէ՛ բաւական ,
Կուտամ քեզ ոսկի պըսակ պատուական : »
— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ : »
« Քուրի՛կ , մի՛ թողնիր դու ինձ անտէրունջ ,
Քեզ սիրուն փեսաս կուտամ անտրտունջ : »
Տըգեղի սիրտը դարձել էր ժէռ քար ,
Քրրոջ խնդիրքը թողեց անկատար :
Չկնորսը ծովը ձրգեց մեծ ուռկան ,
Բըռնեց մարմինը սիրուն աղջրկան
Ջրիցը հանեց , դըրեց ափի մօտ ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ :
Մի աշուղ անցաւ , տեսաւ աղջրկան ,
Հացեց ու առաւ , դըրեց ուսի վրան .
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը ,
Չորացուց նորա մարմնու դիփ(1) հիւթը :
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից ,
Երբոր ամէն բան պատրաստեց կարգին ,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին .
Երբ մըտաւ դահլիճ շքեղ զարդարած ,
Տեսաւ տըգեղին փեսի մօտ կայնած .
Բացեց բերանը , լարերին խըփեց ,
Հիւրերի առջեւ քաղցրաձայն երգեց .

(1) Դէ՛՛ , բուր , ամբողջ . Ռուսահայք կը գործածեն :

« Հընչէ՛ , իմ տաւիղ , հնչէ՛ համարձակ ,
« Հարազատ քոյրս խըլեց իմ պըսակ .
« Լըսէ՛ իմ ծընող , լըսէ՛ սիրական ,
« Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան .
« Լըսէ՛ ժողովուրդ , լըսէ՛ անխռով ,
« Հարազատ քոյրըս գըլորեց ինձ ծով : »
Միւս օր դահիճքը խարոյկ շինեցին ,
Մահապարտ քըրոջ մէջը գըլորեցին :
Հուրը պըլպըլաց , աղջիկը կանչեց .
« Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց : »

Քնար Հայկական

Ռ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ս Ի Ր Ո Յ Զ Ո Հ Ե Ր

Լըճի մէջ նաւակը
Մեղմ հողմիկ կը տանի
Նորա մէջ նըստած է
Սիրահար պատանի :
Պատանին ձեռքն ունի
Կիթարա ու կ'երգէ ,
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եզերքէ :
Լըճակի մէջը կայ
Քարաշէն մի ամրոց ,
Սիրուհւոյ բնակարան՝
Հանապազ փակ ու գոց :
Պատանւոյ նաւակը
Դէպ ամրոց կը վազէր ,
Ուր նորա անձկալին
Սըրտատրոփ կը սպասէր :

Մեղմ հովը աւելի՝
Աւելի սաստկացաւ,
Երկինքը թուխալ (1) պատեց,
Փոթորիկ բարձրացաւ :
Ալիքի լեռները
Գոռալով կը ծըփան,
Պատանին աներկիւղ
կը նուազէ կիթարան :
Հուսինը ամպերի
Տակերէն երեւցաւ,
Սոսկալի աղէտի
Պատկերը բացուեցաւ :
Կէս ճամբան ալիքը
Նաւակին խրփուեցան,
Նաւակը փրշրեցին,
Յոյս չիկայ փրկութեան :
Պատանին աչքերը
Հուսնեակին բարձրացուց
Կիթարի լարերը
Նա ուժգին հընչեցուց
« Տա՛ր վերջին խօսքերըս
Անձկալուոյս, ո՛վ լուսին,
Թէ՛ քաղցրիկ անուներդ
Յիշելով կը մեռնիմ : »
Դադրեցաւ փոթորիկ,
Ու ալիք պառկեցան,
Ջրի վրայ կըտորտանք
Նաւակի երեւցան :
Սիրուհին սըրտատրոփ՝
Նայեցաւ լըճակին,

(1) Թուխալ, մուլթ, մուսլ :

Հասկացաւ դառնաւթիւն՝
Իւր անբաղդ վիճակին :
« Իրարմէ բաժնեցին
Մեզ աշխարհ և այս կեանք ,
Գէթ մահով այսուհետ
Ջըրի տակ միանանք : »
Ասաց՝ և աղաղակ
Բարձրացուց նա ուժգին ,
Գըլորվեց , զո՛հ եղաւ
Անկուշտում ծովակին :

Քնար Հայկական

Ի. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Թումաս աղբար և Թորոս սերտ բարեկամ
Օր մը մօտի քաղաքն երթալ ըսկսան .
Թումաս տեսաւ մէջտեղ ճամբուն
Ոսկւոյ քրտակ մը լեփ-լեցուն .
Վար ծըռեցաւ առաւ զայն ,
Արտորնօք դրաւ ի գրպան :
Թորոս ասաց ուրախ սրտով .
« Բաղդերնիս լա՛ւ յաջողեցաւ » :
— Չէ , կըրկնեց Թումաս պաղուկ նայուածքով ,
« Բաղդերնիս՝ այստեղ՝ չի յարմարեցաւ .
« Թէ կ'ուզես , զրուցէ , բաղդըդ բանեցաւ : »
Շատ տըրտամեցաւ սիրտ Թորոսին՝
Պաղ խօսքերով բարեկամին ,
Թէեւ լըսեց իւր անտարբեր ,
Սակայն արիւնը զարկաւ վեր :
Յետոյ դաշտէն անտառ մըտած ժամանակ ,
Վաղեցին յանկարծ

Թուճառի դիմաց
Արիւնկըզակ երկու կըտրիճ աւազակ :
Խեղճը վախէն լեղապատառ
« Կորա՛նք, կանչեց, Թորո՛ս աղբար : »
Աղբար Թորոս անտարբեր՝
« Կորանք, ասաց, մի՛ գրուցեր,
Այդ տեղ, կորայ, կուգայ յարմար : »
Խոտորելով իր ճամբան՝
Գրնաց մըտաւ ծառաստան :
Թուճառ մինակ ի՞նչ ընէր,
Սիրտը մեռնիլ չէր ուզեր .
Ուստի շուտով քսակն հանեց
Աւազակաց ձեռքը յանձնեց :
Թէ դու յաջող ու լաւ օրիդ
Քու բարեկամ չը յիշես,
Քու բարեկամդ ալ նեղ օրիդ
Չի նայիր բնաւ քու երես :

Ճլօրիան
(Թարգմանութիւն)

Հ. Ք. ՎՐԴ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Ա Ռ Մ Ա Ն Ո Ւ Կ Ն

Ուրախու՛թ իւն քեզ անպակա՛ս,
Ո՛վ դու մանուկ սիրելի .
Ծլիս, ծաղկիս և ծերանա՛ս,
Տալով պտուղ արժանի
Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,
Եւ շնորհագեղ որպէս օր :
Մա՛նուկ, Մանուկ, ինձ չ՛խաբեո ,
Մի՛շտ կաց այդպէս լուսաւոր :

Նայիր վերեւ , տե՛ս , ի՛նչ սիրուն
Այն տեղ փայլում են աստղեր ,
Եւ անթիւ են , և շողշողո՛ւն ,
Որպէս երկու քո աչեր :

Այնտեղ , հոգեակ , բնակվում է
Մեր սուրբ Հայրը երկնքի ,
Նա՛ է , որ մեզ ուղարկում է ,
Եւ կեանք , և Սէր , և Հոգի :

Նա ծագում է իւր արեգակ
Ամենայն օր քո վերայ ,
Որ զուարճանաս որպէս թռչնակ ,—
Օրհնէ՛ Անուն սուրբ Նորա :

Ունի Որդի մի Միածին ,
Նա՛ է Փրկիչ աշխարհի .
Նա խաչ ելաւ , տուեց հոգին . . .
Որ դու լինիս մա՛րդ բարի :

Նա սիրելով իւր թշնամիք ,
Օրհնեց խաչին և ներեց ,
Եւ մեզ գրեց իւրեան որդիք ,
Սիրել միմիանց պատուիրեց :

Նա հեղութեամբ յաղթեց Չարին ,
Եւ մեզ ասաց , որ և մեք
Հետեւինք այդ օրինակին ,—
Չհպարտանանք մեք երբեք :

Մա՛նուկ սիրուն , աղօթք արա՛ ,
Երբ դու գլուխդ խոնարհած ,

Համբուրում ես պատկերդ ահա՛ ,
Ոսկենկար զարդարած ,

Եւ ժպտում է որպէս շուշան
Անհոգ մանուկն մօր գրկին .
Այսպէս թռչնակը ճիւղի վերան ,
Օրհնում է իւր հրեշտակին :

Եկէ՛ք Հայոց եկեղեցի ,
Այնտեղ կը տեսնէք զմայլուած
Պայծառ դէմքը այդ երկնացի ,
Գարնան վարդը կիտարաց :

Բանաստեղծութիւնք

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

Գ Ե Ղ Ա Յ Ի Ե Ի Օ Չ

Գեղացի մը ձրմեռ ստեն՝
Տուն դառնալով իրիկուան դէմ
Իրեն գեղին մօտ անտառէն ,
Ճամբուն վըրայ տեսաւ յանկարծ
Երկայն երկայն Օձ մը պառկած .
« Սառած է խեղճն ,—ասաց մըտքէն ,—
« Տանիմ ի տուն , ի՞նչ կ'ըլլայ ,
« Գուցէ նորէն ողջանայ : »—
Ժանտ վիրագին⁽¹⁾ ողորմեցաւ ,
Պոչէն բռնած առաւ տարաւ ,
Եւ կրակին քով ըզգայչ դրաւ :
Եւ ինքն անդէն յոգնած դադրած՝
Քիչ մը ես ալ հանգչիմ , ասաց :
Անցաւ վըրան քիչ ժամանակ ,
Օձն անիրաւ տաքնալուն պէս՝
Վերցուց գըլուխը նայեցաւ ,

(1) Վերտէ, անգուլթ հակառակորդ :

Ու Ֆրչալով օղակ օղակ ,
Առ Գեղացին բարերար
Սողոսկեցաւ թըշնամարար :
Մարդն արթընցաւ , ի՞նչ տեսնայ . —
Իր մահուանէ փըրկած գազանն
Պիտի մատնէ զինքը մահուան՝
Եթէ քըչիկ մ'ալ ուշանայ :
Աճապարեց առաւ կացին
Զախեց գըլուխ չար գազանին :

Ծաղկաբաղ Առակաց Հ. Գ. Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Ա Ղ Ո Ւ Է Ս Ե Ի Ա Յ Մ

Պարոն Աղուէսն և Այծ աղբար
Մէկտեղ ելան ի ճանապարհ ,
Աղուէսին ինչ վարպետորդի
Ըլլալն՝ աշխարհք լաւ գիտէ .
Իսկ մէկալին ի՞նչ ըղեղի
Տէր ըլլալն՝ ո՞վ չըգիտէ :
Ճամբան երկար քալելէն
Տանջըւեցան ծարաւէն .
Երբոր ջըրհոր մը հասան՝
Առանց չորսդին նայելու՝
Մէկէն ի մէկ մէջ մըտան
Անուշ անուշ խըմելու :
Մէկ մ'որ աղէկ կըշտացան՝
Նոր սիրտ , նոր ուժ ըստացան ,
Կարծես երկու օր ու գիշեր
Թէ ճամբանին դեռ երկարէր ,

Ասոնք ջուրին նոր ուժով
Պիտ' երթային ապահով :
Բայց դու եկ տես ի՞նչ արգելք
Կը խափանէ իրենց ելք .
Խոր ի գուրն են ջրհորին՝
Շատ վեր մընայ ճամբանին :
Դարձաւ Աղուէսըն դէպի Այծ ,
Որ բանը դեռ չէր հասկըցած .
« Իմ բարեկամս , ըսաւ , ի՞նչպէս
Պիտի ելնենք այս ջրհորէս .
Միայն խմելով չի լըմըննար .
Պէտք է տեսնել մեր ճամբուն ճար »
Եւ քիչ մը լուռ կենալով ,
Որպէս զի լաւ մ'Այծը խարէ ,
Վըրայ բերաւ խընտալով ,
Իբրեւ թէ նոր կերպ գըտեր է .
« Միտքըս աղէկ հընարք մ'եկաւ ,
Եթէ մըտիկ ինձ որ ընես՝
Բաներնիս խիստ յաջողի լաւ ,
Շուտով կ'ելնենք մենք ջրհորէս :
Սա առջեւի սաքերդ վերցուր ,
Ու դէպի պատը կըռթընցուր .
Գըլուխդ քիչ մ'առջեւ ծըռէ ,
Իսկ կոտոշներդ ալ վեր տընկէ :
Ես կըռնըկէդ ճանկըռթելով
Կոտոշներուդ վըրայ կ'ելնեմ ,
Ու հոնկէ մէկ վեր ցատքելով ,
Մէկ մ'որ ինքզինքս դուրս նեաեմ ,
Ա՛լ անկէ վերջ կ'ըլլայ քու բանդ ապահով ,
Վեր քաշեմ զքեզ , որեւիցէ նոր կերպով »

Բայց եթէ ի՞նչպէս ,
Չայն չըսաւ Աղուէս :
« Ահա մօրուքըս քեզ վըկայ ,
Այծը պօռաց արմըննալով ,
Բուն խելքին գանձն է քուկին քով ,
Ճարտարութեանը չափ չըկայ :
Քեզի շխտակ խօսք մը զրուցե՞մ .
Ճըշմարտութիւնն ինչո՞ւ ծածկեմ .
Թէ քեզի հետ չըլլայի
Անշուշտ ես հոս մընայի : »
Ի՞նչ և իցէ շատ չըքըչեց
Աղուէսն հորէն զինք դուրս նետեց :
Այլ տես թէ ի՞նչ անգութ սըրտով ,
Մահու բերան զԱյծը թողլով ,
Կըծու կըծու խօսքեր զրուցեց ,
Ու իր ճամբան առաւ քալեց ,
« Երկինքն , ըսաւ , թէ քեզի՝
Փոխան բըրդեղ կըգակի
Կըտոր մը խելք տուած ըլլար ,
Մէկէն չէիր հոտ իջնար .
Յուսանք՝ ասով խելք կը սովրիս ,
Միայն թէ ողջ հորէն պըրծիս : »
Առակս ըլլայ օղ ազընջիդ
Չըրած՝ ըզվերջ մտածէ գործիդ :

Լաճոնրէն

(Թարգմանութիւն)

Հ. Գ. ՀԻՒՄԻՒԶ

Հ. Գեորգ Հիւրմիւզ (1797—1876) . Նախկին Աբբասայր վենետիկոյ Մխիթարեան Ուխտին, որուն ամէնէն վաստակաւոր ու հմուտ միաբաններէն մին եղած է իւր գործունէութեամբը և գրական երկերովը, ինքը՝ աշակերտ Հայր Արսէն Բագրատունիի, քաջ հայագետ էր որ ներհուն ու ներդաշնակ ոճով գրա-

ՀՈՎԻՐՆ ՈՒ ՊՈՒԷՏ

Ինչո՞ւ իմ հէք գառներ ,
Ինչո՞ւ ինձ չէք անասր •
Լալով ի խնդիր ձեր
Կերթամ սարէ ի սար :

Իմ սեւ աչուի գառնուկ
Անպուծ գայլեր կերան ,
Իմ ամիկներ մանուկ
Ընդ մացառուտս կորան :

Այսպէս սգամ մինակ ,
Գամբռն իմ խորդայ քնհատ
Բընաւ ալ չիք շըշուկ ,
Լեռ ձոր լուռ են վըհատ :

Ինչ դառն է հովուին կեանք
Լեռան մը ծայր ճգնել ,
Հսկել ըզխաշինա ջանգ ,
Գիշերն ի բուն տքնել :

բարի վերածեց Ռօլէնի Հնօթօս-իւն բաղմահատոր գործը (ընկերակցութեամբ իր մեծանուն եղբոր Հ. Եդ. Հիւրմիւղի), Ռօսիի Գոգոպիան, Կեօբոս-Յիւրա-Կարնոյ (մասամբ Հայր Արսէն Բագրատունիի ձեռօք), Պարտաւտէ Առնշնոս-իւն հսկեալ :

Տաղանդաւոր թարգմանիչը որչափ քաջասմուտ էր գրարարի նոյնչափ ալ կոկիկ ու մաքուր աշխարհարար կը գրէր (ինչ որ շատ սովորական է Միխիթարեանց քով), վկայ են Լաֆոն-Թէնի առակաց շատերուն իր աշխարհարար թարգմանութիւնները :

Յերեկն արեւակէզ,
Գիշերն ալ ցրտահար,
Մահիճս է յարդի դէզ
Ամպն՝ ինձ յարկ հողմավար :

Սփոփանք Ռամկին

Մ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՅՈՊՈՊ ԹՌՉՈՒՆԸ

Չքնաղ առտու մը գարնան
Յօղատ, կիսալոյս,
Աղուսը աղջիկ մ'աննըման,
Հարսնցու մի կոյս,

Հոգարանին մէջ մինակ,
Անփոյթ պչրանքով,
Կը լուացուի ու ճերմակ
Շուշան մ'է տեսքով :

Մազերն ըսփիւռ սակեզօժ՝
Կը սանտրէ անի,
Եւ կը սարսուան լանջքը հոժ
Ու պորտն հոլանի :

Միերան Յովհաննէսեան. Ուսուցիչ հայերէն ու ֆրանսերէն լեզուաց, մեր ամէնէն շատ կարդացուած ժողովրդական բանաստեղծ գրողէաներէ մին է որ պարզ աշխարհաբարով գրուած իսկատիպ քերթուածներու հատորներ ունի, ինչպէս՝ Սփոփանք Ռամկին, Իրական կեանքի նոսրեր, Քնարի, ինչպէս նաև քննադատական լուրջ յօդուածներ ու բանասիրական երկասիրութիւններ, որոցմէ նշանաւոր է իր Քննական պարսափեան լիմ քարտէ Հայ դպրութեան հմտալից գործը :

Ու վարսերը կը ցրուին ,
Վիժակ սունապան՝
Ծըփալով շուրջն իր մարմնին ,
— Խորան մաքրութեան :

Այլ բաղնիքին կիսարաց
Դունէն աղջրկան
Եղբօր աչքն է հանդիպած՝
Քրրօջ մերկութեան . . . :

Օհ , ինչ ամօթ , Աստուած իմ ,
Փըրկէ՛ , փրկէ՛ զինք .
« Թռչուն մ'ըլլամ ու թռչիմ՝
Երկինքէ երկինք . . . : »

Եւ աղուորը սարսուազին ,
Յանկարծ կ'առնէ թեւ ,
Մուցած սանտրը դեռ գլխին ,
Մազերուն վերեւ :

*
* * *

Յոպոպ թռչունն է այսօր
Սիրուն աղջիկն այն ,
Բըբուկն ալ՝ սանտրը անոր ,
Հատ՞աւանդութեան :

Մասիս

Ա.Ր. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Փ Շ Ո Տ Ք Ո Ւ Փ Ը

Փոքրիկ տղեկ մը, զոր փուշն էր խայթեր,
իր ցաւն արցունքով հօրը կը պատմէր.

« Ինչո՞ւ գեղեցիկ արտին մէջ մեր տան
Բուսեր է արդեօք այս թուփն անպիտան : »

— Որպէս զի փորձով սորվիս դուն, տըղա՛ս,
Թէ պէտք է չարէն միշտ հեռու կենաս : »

Գեորգի. Արդի. Աշխարհ.

ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒԲ

Ձ Ի Ն Ե Ի Յ Ո Ւ Լ Ը

Առոյգ ձի մը մանուկ մ'առած իր վըրան,

Դաշտերուն մէջ, ասդիս անդին կուգար ման.

Մերթ կը վազէր, կը վազվըզէր սատաստուն,

Եւ մերթ հազիւ կը դըպչէր թարմ խոտերուն :

« Ի՛նչ, մըռընչեց ցունն անդիէն զայրացած,

Ըզքեզ վարել՝ պըզտիկ տըղո՞ւն այդ մնաց :

Շուտ պատժէ՛ զայն, և վըրայէդ նետէ վար,

Երթայ սորվի թէ ձիուն հետ չեն խաղար : »

« Ի՛նչ յաղթանակ, ի՛նչ փառք և ի՛նչ մեծ պատիւ,

Ըսաւ անոր ծիծաղելով ձին ազնիւ,

Ամօթ չէ՞ ինձ, և չե՞ն խընդար իմ վըրաս,

Երբ վար նետեմ սա խեղճ մանուկն անվընաս : »

Ն.Յ.

Ն.Յ.

Օ Ր Օ Ր

Օ՛րօր , աղւոր մանչս , Օ՛րօր ,
 Քեզ մեծցընում օրէ օր ,
 Հօրըդ նրման մարդ եղիք ,
 Տուերդ քեզմայ տեսնէ օր :

Ծոցիկրս տաքուկ օրրան ,
 Մաղերըս ծածկոց վըրան ,
 Մըշի՛կ , մըշի՛կ մըրտաիէ ,
 Պառկինք բերան առ բերան :

Գիշերն եմ քովիկդ արթուն ,
 Ջիս կը դանկտ քովդ առտուն ,
 Քեզի մէկս՛ւն չեմ հաւտար ,
 Սրտիս սէրն ես , կեանքն ես դուն :

Ո՛վ որ տեսնէ , թող դատէ ,
 Մանչուկըս հարազատ է .
 Կունտ ու կըլոր նոնուշիկ ,
 Հազարին մէջ մէկ հատ է :

Իրական Կեանքի Նուագներ

Մ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

Քաղցած աղուէտուկն ինչ ըրաւ շըրաւ ,
 Այգի մը մըտաւ
 Տեսնէ որ խաղողները
 Կուզ կախուած կը վառին .
 Սանամարին ո՛չ թէ միայն աչքերը ,

Ակռաներն ալ կըրակ առին .
Կուզերն որ ըսես՝ իրարմէ հասուն .
Մէկ մէկ յակընթի նըման պըսպըղուն :
Ի՛նչ էր՝ գիտե՞ս՝ ցաւալին ,
Կուզերը խիստ բարձր էին :
Մեր ազուէսուկը շատ աշխատեցաւ .
Ցատքեց ցատքրտեց , չորս դին ման եկաւ ,
Ճար մը չը գտաւ ,
Մէկ կուզ մըն ալ փըրցընել չը կրցաւ .
Ամբողջ ժամէն աւելի
Պարապ տեղը կը յոգնի .
Կ'եղնէ կ'երթայ բանն ու կ'ըսէ .
«Է՛հ , ի՞նչ կայ ,
Տեսքին նայիս նէ գէշ չէ ,
Բայց կա՛փ-կանանչ է ահա .
Չե՛ս գտներ մէջը և ոչ մէկ հատիկ
Հասուն խաղողիկ :
Գիտեմ , բերանդ որ դըրուին ,
Իսկոյն ակռաներըդ չարաչար պիտի հարուին :»

Քռիլով ԳԱԲ. ԱՐՔ. ԱՅՎ. ԱԶՈՎ. ՍՔԻ
(Թարգմանաւորներն)

Գաբրիէլ Արք. Այվազովսքի (1812—1882). Տիեզերահըռ-
չակ ծովանկարիչ Յովհ. Այվազովսքիի երէց եղբայրն էր , նախ-
կին Միսրան Վենետկոյ Մխիթարեան Ուխտին , ուրկէ բաժնուե-
լով 1856ին նախ փարիզ և յետոյ Թէոդոսիա հաստատուեցաւ .
Այվազովսքի Արքեպիսկոպոսը քաջահմուտ էր եւրոպական
բազում լեզուաց , ինչպէս նաև քաջ հայագէտ և պատմագէտ .
գրական բեղմնաւոր շրջան մը բոլորած է . ինքը եղած է հիմնա-
դիր (1843) Բարձրագոյ կիսադարեան հանդէսին ի Վենետիկ , ինքը
հիմնած է նաև ի փարիզ (1855) Մատեոյ Ազաւնի ամսագիր պատ-

ԱՊԱՀՆ ԵՒ ՀԱԻ

Տղայութեանըս ժամանակ
 Ազահութեան գէշութեանը օրինակ
 Տեղ մը ա՛յս եմ կարգացեր,
 Թէ ատենով Ազահ մարդ մը կայ եղեր՝
 Որ ոչ արհեստ ունէր ձեռքը՝ ոչ պաշտօն,
 Եւ սակայն սընտուկն էր լիփ-լեցուն:
 Այս մարդը հաւ մը ունէր ընդասուն.
 Հաւն ալ բա՞ն է, ըսէ դուն. —

Այն հաւը հաւկիթ կ'ածէր.
 Ոչ թէ հասարակ հաւկիթ, որ է ձու,
 Հապա սակիէ՛ կարծես թէ թափծու:
 Բայց ի՞նչ կ'ըսես որ Ազահին համար այն շահը քիչ եկաւ,
 Տե՛ս թէ միտքը ի՞նչ ինկաւ.
 «Արի ըսաւ՝ սա հաւուն փորը բանամ.
 Անշուշտ մէջը սակեհանք մը կը գտնամ:
 Խեղճ Հաւը մորթեց ու փորը ճըղքեց,
 Բայց ի՞նչ գըտաւ հոն, և ի՞նչ ձեռք ձըգեց.» —

Սովորական քարածիկ
 Ու հասարակ փորոտիք:

Քռիլով
 (Թարգմանա-ի-ն)

ԳԱԲ. ԱՐՔ. ԱՅՎ. ԱԶՈՎ. ՍԻԻ.

կերպարդ շքեղ հանդէսը, ընկերակցութեամբ Նար Պէյի: Թու-
 ղած է կարեւոր երկասիրութիւններ, որոնցմէ յիշատակելի են՝
 Պարսա-ի-ն Օսմանեան Պեդու-ի-ն, Պարսա-ի-ն Ռուսաց, գրաբար
 ընդարձակ գործերը, ինչպէս նաև ուրիշ զանազան հեղինակու-
 թիւններ: Իր աշխարհաբար գլուխ-գործոցը կը համարուի Քռիլի
 Ար-ի-ն տաղաչափեալ թարգմանութիւնը զոր կատարեց Ռուս
 բնագրէն մաքուր և յստակ ոճով:

357

ՓԱՓՈՒԿ ՕՐԻՈՐԳ

Սորվէ՛ ու սորվէ՛ , ուսմանքն ի՞նչ ընեմ ,
 Ըզգեստ չէ հագնիմ , անուշ չէ ուտեմ :
 Քիչ մը գաղղիերէն և դաշնակ ու պար . . .
 Լա՛ւ . ի՞նչուս պէտք է այդ խորունկ գրարար :
 Քարտէզի վրայ աշխարհ մը տեսնել ,
 Քսակը պարսպ՝ տակտնեւր հաշուել ,
 Կէս կուշտ կէս նօթի , գխանալ թէ մ՛ւտի
 Կուգայ լաւ ցորեան , կարագ կամ գինի ,
 Չափել կեղծ ձեւով մօտա ըզգեստներ ,
 Երբ սընտուկինքս կըսնակս եմ առեր :
 Ես աշխարհի մէջ քանի՞ օր ունիմ ,
 Եւ ի՞նչ հարկ է որ այսչափ շարձարուիմ :
 Այսպէս կը խօսէր օրիորդ փափուկ
 Եւ դպրոցն իրեն բանտ կուգար անձուկ :
 Նա գնաց եկաւ , և ոչինչ ուսաւ ,
 Դաշնակն իսկ իրեն շատ դժուար եկաւ .
 Մերթ գիրքը բացաւ , աչքերը գոցեց ,
 Դասարանին մէջ յաճախ մըրափեց .
 Միշտ խաղաց խնդաց , կերաւ ու խըմեց ,
 Եւ յետոյ աղւոր քունիկ մը քաշեց :

« Տանձ էր նէ հասաւ , խնձոր՝ կարմրեցաւ »
 Մեր փափուկին ալ տարիքը լեցաւ :
 Վերջի քննութեանց՝ դարձեալ բացակայ .
 Մըրցանակաց օր՝ սուտ հիւանդ կ'ըլլայ :
 Ի՞նչ ցաւ ծնողաց , վա՛յ շար անպիտան . . .
 Յետոյ զղջաց շատ , բայց օրերն անցան :

Անտիպ գործեր Յ. ՈՍԿԱՆ

ՄԻՐԱՄԱՐԳԸ ԵՒ ՍՈՆԱԿԸ

Սիրամարգը պոչին վերայ կը պարծէր ,
Եւ սոխակն ալ ձայնին գովեալ կը կարգար :
Տըխմար թան է անձը գովել անդադար .
Բայց ո՞ր մարդը , ըլլայ տըղայ , կին թէ ծեր ,
Այս սըխալը իր կեանքին մէջ չէ՛ գործեր :

Թաւչափեալ թըռչունն անմիտ ու հպարտ
«Գեղն է , կ'ըսէր , միայն պատուոյ արժանի :»
Տաղանդ , ձիւքեր թըռչուններու խելանի
Կ'արհամարհէր , և պըչրանքով մը հանդարտ
Կը ցուցադրէր իր պերճ ազին փետրազարդ :

Իսկ սոխակն ալ իր ապրանքը կը քըչէր ,
Սուր ծիծաղ մը թըռցընելով կոկորդէն ,
Ուրկէ դիւթիչ մեղեդիներ կը յորդեն :
Երբ վերջապէս վըրայ հասաւ մութ գիշեր
Սեւ քողի մէջ փաթթելով վարդն ու փուշեր :

Փայլուն լոյսերն ըստուերին մէջ մարեցան ,
Սիրամարգը անհետացաւ մութին տակ ,
Մինչ սոխակին գեղգեղն անայչ և յըստակ
Եթերին մէջ ծաւալելով ցիր ու ցան ,
Դիւթեց երկինքն իր վանկերով քաղցրաձայն :

Գեղեցկութեան կը յողթէ խելքն ու տաղանդ .
Աչքին լոյսը տարիքին հետ կը մարի .
Մըտքին լոյսը՝ քանի կեանքը երկարի ,
Կը բողբոջէ և կ'ուռճանայ մանաւանդ ,
Ինչպէս տունիկ մը հողի վրայ արգաւանդ :

Ֆլորիան

ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

(Թարգմանաւթիւն)

Ա Ղ Ա Ի Ն Ի Ի Ն

Երգէ՛ , երգէ՛ , աղաւնի ,
Տըխուր թռչուն ընտանի ,
Հանէ՛ ձայնըդ , վո՛ւ վո՛ւ վո՛ւ ,
Մեկամաղձիկ ողբերգու :
 Ինչո՞ւ ուրիշ թռչնոց պէս ,
 Չես ճռուողեր դու պէս պէս ,
 Երգդ է տըխուր , միօրինակ ,
 Խուլ վո՛ւ վո՛ւ մը շարունակ :
Քեզի կ'ըսեն միամիտ ,
Դո՞ւ ալ ունիս վիշտ , ա՛նմիտ
Ի՛նչ անգութ ցաւ կը քաշես
Որ միշտ վո՛ւ վո՛ւ հառաչես :
 Ինչո՞ւ մութ , գորշ ամպերու
 Գոյնը ունիս , կամ ծովու
 Պղտոր ալեաց՝ ոյց նման
 Խորէդ վո՛ւ վո՛ւ դուրս կուգան :
Ինչո՞ւ ազատ օդին մէջ
Չես սըլանար ու անվերջ
Հառաչանքըդ՝ այդ վո՛ւ վո՛ւն՝
Չես ցանցըներ հովերուն :
 Է՞ր բընակիս մարդոց մօտ ,
 Փողոցներու մէջ ցեխոտ ,
 Յարկերու տակ կ'առնուս կանգ
 Ուր վո՛ւ վո՛ւդ տայ արձագանգ :
Դո՞ւ ես արդեօք թռչուն Սուգ
Որ հէք մարդոցս մէջ անշուք
Սիրես մընալ՝ քու վո՛ւ վո՛ւն
Խառնել անոնց ախերուն ,

Տարտամ վո՛ւվո՛ւղ , աղա՛ւնի ,
Հոգւոյս խորը կը բանի ,
Հոն կը յուզէ , չըզխտեմ
Ի՛նչ զգացում հեշտ , նըսեմ :
Այն մեղմ յուզում՝ զոր բուխն
Կ'առթէ մեզ սղբն ցայգային ,
Կամ խուլ սոյլը խօլ հովուն ,
Նո՛յնն ինք կազդէ՝ քու վո՛ւ վո՛ւն :
Երգէ՛ խուլ խուլ աղա՛ւնի ,
Տըխուր թռչուն ընտանի ,
Սիրեմ ձայնըդ , վո՛ւ վո՛ւ վո՛ւ
Մեղամաղձիկ սղբերգու :

Մասիս

ՅՈՎ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ա Ղ Ք Ա Տ Ի Ն Շ Ո Ի Ն Ը

Թըշուառ մըն էր , հիւանդ , մինակ ու աղքատ ,
Շընիկ մ'ուներ , ընկեր կեանքին յուսահատ :
« Բեռ մ'է քեզ շունդ , ըսին անախրտ հարուստներ ,
Երբ անոնցմէ պատառ մը հաց կը խնդրէր ,
Մէկդի նետէ ո՞ր անօթի չը մեռնիս : »
Խեղճը գոչեց , թափելով լուռ արցունքներ .
« Ո՛հ , եթէ զայն չունենամ , ո՞վ սիրէ զիս : »

Գերակ. Արդի Աշխարհ.

ՏԻԿ. Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

ՏՂՈՒ ՀԱՐՑՈՒՄ

— Հայրի՛կ ս՛վ կ'անցնի ամէնէն արագ ,
Հովե՛րը արդեօք , գե՛տը սըրընթաց ,
Արդեօք սաս՛ւպն որ կ'իյնայ վայրահակ
Առկայծ տիօտով բոցի պէս վառուած :

Արդեօք ամայե՛րը , ծուխն եթերային ,
Եւ կամ օդապար ճիւղե՛ան ուղեւոր ,
Բոցածաւալ փո՛ւնջն արդեօք հըրթիռին ,
Երկինքին շա՞նթը թէ փայլակն անոր :

Աւա՞ղը խըլուած կզերքէն ծովուն ,
Ճերմակ օճառին պըղպըջա՞կն ստին ,
Օդապարի՞կը , աերե՛ւն ազազուն ,
Երա՞զը , արդեօք սատա՞յնը սարդին :

— Իցի՛ւ թէ անգէտ մընաս միշտ . որդեա՛կ ,
Անոյշ եւ տըխուր սա փորձառութեան ,
Թէ ինչ որ կ'անցնի ամէնէն արագ ,
Մեր երջանկութեան օրերն են միայն :

Բերակ. Արդի Աշխարհ. ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ԾՈՎԸ

Անհուն ծովուն մէջ շիթ առ շիթ
Կը կաթէր ջուր մ'ականակիտ ,
Երբ շառաչեց ծովն ալեոսատ
Ահեղագոյ . « Ի՞նչ կ'ընես սատ .
Ես ամպրոզն եմ , շանթն ու մըրրիկ .
Անսահման եմ , ինչպէս երկինք .
Պէտք ունի՞մ քեզ , խեղճ աղբերակ ,
Մինչ փոքր ես դուն . ես՝ անյատակ : »

Եւ աղբիւրն ալ ըսաւ ծովուն ,
«Ես անշուք եմ , դուն ամենի .
Բայց կը բերեմ քեզ , ծով անհուն ,
Կաթիլ մը ջուր , որ կը խմուի :»

Քերակ . Արդի Աշխարհ .

Տիկին Զ . Հ . ԱՍԱՏՈՒՐ

Կ Ա Ղ Ն Ի Ն Ե Ի Ե Ղ Է Գ Ն

Օր մը Կաղնին ատանկ կ'ըսէ Եղէգին .
« Ո՛րչափ դըժբաղդ զըանուեր ես դուն քան զիս ,
Թեթեւ փետուրն է քեզի բեռ մ'անագին ,
Բարակ հովէ մը մէկէն վար կը ծըռիս :
Իսկ ես կարծես թէ լեռ մըն եմ շիփ շխտակ .
Հով փոթորիկ՝ ի՞նչ ալ ըլլայ հակառակ ,
Բան չեմ սեպեր , ամենեւին հոգս ալ չէ .
Քեզի մըրրիկն՝ ինձ զով քամի կը փըչէ :
Խեղճ Եղէգնիկ , գոնէ սա ցած ծառերուն
Որ իմ շքիս տակն են այսչափ բազմութիւն ,
Գոնէ ասանց տակն ըլլայիր կ'ըսէի ,
Որ հովերէն ըզքեզ սիրով պահէի :
Բայց դուն , ամա՛ն . լըճերու քով կը ծընիս ,
Հովի բերան՝ ցած տեղ կ'ապրիս կը մեռնիս .
Ալ ի՞նչ ըսեմ , բայց քեզ ալ չեմ մեղադրեր ,
Քու ճակատիդ գիրն ալ ատանկ է եղեր :»

Յատուկ մտադրութեամբ , վերագրեալ առակին երբեակ հայ
Թարգմանութիւնները , երեք տարրեր դրագէտներէ կատար-
ուած , կը գնենք յաջորդաբար , իւրաքանչիւրին միջեւ բաղդա-
տութեան եղրեր ընծայելու համար հետաքրքիր ընթերցողին :

« Ատ քու սըրտիդ աղէկութիւնն է, պարոն .
Որ ցաւակից կ'ըլլաւ ինծի պէս խեղճուն .
Բայց հոգ մ'ընէր, ես հովէն շատ վախ չունիմ,
Ո՛րչափ սաստիկ փըչէ՝ ծըռիմ կ'ազատիմ .
Իսկ դուն ինչուան հիմա իրաւ դէմ դըրիր,
Բայց նայինք վերջդ ի՛նչպէս կ'ըլլայ, լա՛ւ ուշ դիր : »
Խօսքը բերանն էր՝ մէյ մ'ալ ի՞նչ կը տեսնես .
Երկընքին մէկ ծայրէն փըրթաւ կրակի պէս
Մէկ փոթորիկ մը որ նըմանն եղած չէր :
Ծառն ը՛հ չընէր, եղէգը վար կը պառկէր :
Քանի՛ գընաց՝ հովն ու քամին կատղեցաւ .
Ելաւ կաղնին, ու արմատով վար ընկաւ,
Ան կաղնին որ գլուխն ամպերուն կը դըպչէր,
Ու ոտուըներն ինչուան դըժոխք էր հասեր :

Լաճմբէն

Հ. Գ. ՀԻԻՐՄԻԻՉ

(Թարգմանութիւն)

ԵՂԷԳՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղէգն ըսաւ, օր մը, հըսկայ կաղնիին .
« Մաղրելի է գուռդ կեցուածքդ օդին մէջ .
« Տե՛ս, իմ սատերս ի՛նչպէս հոգին կը նային ,
« Ինչպէս կ'ընեմ հովերուն հետ ելեւէջ :
« Մինչ դուն տեղէդ չես շարժիր, չես նայիր վար ,
« Տերեւներդ ալ չեն թըրթըռար զեփիւռէն :
« Շուրջըդ նայէ՛ ինչպէս ծառեր անհամար
« Անտառին մէջ, վէս գըլլուխնին կ'օրօրեն : »

Բայց պատասխան տուաւ կաղնիին անտառն .
« Ես այնպէս եմ. բարձրը կենալ միշտ կ'ուզեմ .
« Թո՛ղ որտան շուրջըս հողմեր զանազան .

« Անսնց ձայնը ես հեզուսթեամբ կը լրսեմ :
« Դուն անձնատուր՝ զեփիւռներուն քումայքին ,
« Միշտ կը շոյես զանոնք , ու միշտ կը քրծնիս ,
« Իսկ Դրբ գոռայ մըրրիկն անեղ և ուժգին ,
« Հոգի կու տաս , կարծես , նորէն կը ծընիս :
« Թաթառին հետ ասդին անդին կը դառնաս ,
« Մէյ մը հիւսիս , մէյ մը հարաւ , հոլի պէս .
« Ճընճողուկն անզամ կըրնայ քեզի տալ վընաս .
« Իր խեղճ բոյնը ծանրը բեռ մը կը սեպես :
« Մինչ ես անվախ և անյողդողդ իբրեւ սար ,
« Ուրականին հետ , դէմ առ դէմ կ'սգսրիմ ,
« Եւ երկինքի ամպերուն հետ հաւասար՝
« Կ'արհամարհեմ անարկու շանթն ոխերիմ :
« Ու կը սիրեմ կենալ ամուր և անաստ ,
« Ճակատըս վեր՝ ամպրոպին դէմ բարեբաստ :

ԼաՓոնթէն
(Թարգմանութիւն)

ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

Կ Ա Ղ Ն Ի Ո Ւ Ե Ղ Է Պ Ն

Օր մ'եղէգին

Կ'ըսէ կաղնին

« Բընութենէ

Որքան զանգտիս՝ իրաւունք է .

Ասենամանր

Թըռչուն մը քեզ է բեռ մի ծանր

Տըկար մէկ հով , որ հազիւ թէ

Փոթ-փոթ կընէ

Ջըրի երես՝

Գըլուխ ծըռել կըստիպէ քեզ .

Մինչդեռ գագաթն իմ վեհապանծ

Նրման, անեղ կովկաս լեռանց՝

Չէ թէ միայն արեգական

Ճաճանչներու կըլլայ խափան՝

Այլ և մըրըկին

Վանէ ճիգերըն մոլեգին :

Ամէն հովեր՝ քեզ փոթորիկ ,

Իսկ ինձ համար՝ զեփիւռ քաղցրիկ :

Տերեւներու տակով գունէ

Դուն բուննէիր , ո՛ր քրիստոնէ ,

Որոնցմով ես վեհանձնօրէն

Կը պահպանեմ մօտ գըտընուող բոյսեր ասէն .

Այնքան երկիւղ չէիր կըրեր

Քեզ կըլլայի պաշտպան և տէր :

Սակայն կերթաս դուն կը բուննիս , ո՛ր խեղճ թըփուկ ,

Խոնարհ ամանց վրայ հովթըփուկ :

Իրաւ , բնութիւն խիտ անարդար

Է գըտընուած քեզի համար : »

— « Կարեկցութիւնդ , — Եղէգ ըսաւ ,

Է հեռեանք ըզգացման լաւ ,

Այլ ինձ համար հոգեր նանիր

Դուն մի՛ տանիր .

Ինձսէ աւել

Վըտանդներէ պէտք ես վախել :

Ես կը ծըռիմ այլ չեմ կոտորիր :

Դու մըրըկի ցարդ քաջապէս դիմադրեցիր ,

Այլ վերջ տեսնենք . ամէն բանի ,

Կ'ըսեն վախճանն է գովելի : »

Մինչդեռ Եղէգ զայս կը խօսէր՝ հով կատաղի

Հորիզոնին ծայրէն փըրթի ,

Ահեղագոյն սրգին՝ զորն սր
 Հիւսիսի ծոցն կըրած ըլլար մինչեւ այն օր :
 Կուրծք տայ կաղնին խիղախ ու սէգ,
 Փոր տայ խոնարհ, ճըկուն եղէգ
 Այնքան ոյծով
 Իրեն ճիգերն սաստկացուց հով
 Որ վերջապէս փռեց գետին
 Այն սէգ կաղնին,
 Որու զըլուխ կը բարձրանար մինչեւ երկին,
 Եւ ոյր ստքեր զըծսխքի խոր կը հասնէին :

Լամ Վրէն

Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

(Թարգմանութիւն)

Մեսրոպ Նուպարեան. — Զմիւռնիական հին դպրոցին ամենէն փայլուն ներկայացուցիչներէն մին, որ քառորդ դարէ ի վեր գրական եւ անգուն գործունէութիւն մը ցոյց կուտայ թարգմանելով ընդարձակ երկասիրութիւններ, որոնք արդի հայ ազգատիկ գրականութիւնը եկան ճոխացնել :

Անխոնջ թարգմանիչը հետզհետէ հրատարակեց Վ. Հիւկոյի Նօթք Տճ ԳԵ ԲՊՊ տիեզերահաշակ վէպին թարգմանութիւնը. Բաբարան Ֆրանսէի — Հայ Աւետիսի Լեւոնի, խնամեալ աշխատութիւն մը որ շատ օգտակար եղաւ հայ սերունդին. Մայիլեւի Կոպտեբեգ-Քեանց Կոնստանտին Կոնստանտին արձակ թարգմանութիւնը. (Թէեւ լուսագոյն կ'ըլլար ֆրանսերէն բնագրին արժանի գեղեցկագիտական գործ մը վայելել տալու համար տաղաչափեալ թարգմանութիւն մը այն թատերախաղերուն որք բնագրին մէջ տաղաչափեալ են), Լաֆոնտի Առաջ տաղաչափեալ ամբողջական թարգմանութիւնը, որ ստուար հաստոր մը կազմէ Ռասինի Դոպտերտ կատակերգութիւնը. Սենեպոյի Պոմպոսի Բոգոտարեան Տամբուս գասագիրքը և վերջերս Նուպարեանի Գեղի Բեւե Տամբուգ-Քեանցի հակա կ'երեւի սոյն երկասիրութիւններէն, Պ. Նուպարեան, խղճամիտ թարգմանիչ մ'է, արձակ թարգմանութիւնները ընդհանրապէս ընթերցման արժանի յաջող գործեր են. բայց Լաֆոնտի Առաջ յանգաւոր թարգմանութիւնը նպատակայարմար գործ մը չի կրնար

ՄԻՐԱՄԱՐԳԸ ԿԸ ԳԱՆԳԱՏԻ ՀԵՐԱՅԻ

Միրամարգ օր մը Հերայի
 Կը գանգատի .
 « Ո՛ր դիցուհի, կ'ըսէ անոր ,
 Ըրած տըրտունջս է հիմնաւոր ,
 Ինձ տըւած ձայնդ երկրի վըրայ
 Հաւնող չըկայ :
 Մինչդեռ Սոխակ , մանրուկ , ճըռգած
 Այն արարած՝
 Անոյշ-անոյշ կը դայլայլէ
 Ու ինք գարնան զարգուփառքն է : »
 Սըրտմտելով ըսաւ Հերայ .
 « Նախանձ սըրտիդ զոյգը չըկայ :
 Անիրա՛ւ դու ,
 Որ պէտք էիր կարկել լեզու ,
 Ինչե՞ր կ'ըսես .
 Կը վայլէ՞ քեզ
 Սոխակէ մը յայտնել նախանձ ,
 Դու որ սիգաս գեղեցկապանձ ,
 Դու որ վըզիդ վըրայ կըրես
 Շըքեղապէս

նկատուիլ վասն զի թէև թարգմանիչը փափաքեր է հայ գրա-
 կանութիւնը օժտել Ֆրանսայի մեծագոյն հանճարներէն միոյն
 գլուխ-գործոցին թարգմանութեամբ մը և բաւական ալ յաջողեր
 է իր այս դժուարին ձեռնարկին մէջ, բայց Ֆրանսերէն հրաշալի
 բնագրին հաւատարիմ մնալու հետեւը անուպաստ ազդեցութիւն
 ըրեր է իր հայերէն թարգմանութեան վրայ, ուր շատ տեղեր ոչ-
 գրական աշխարհարարի մը հետքերը ակներեւ կ'երեւին և այս
 մանաւանդ այն պատճառաւ որ թարգմանիչը քերթողական
 գրչի մը յատկութիւններէ զուրկ է :

Պերճ ծիածան՝ մետաքսներով երփնած պէս-պէս
Գու որ ունիս անանկ մէկ պոչ ըսքանչելի

Որ գոհարի

Վաճառատան կը նըմանի :

Կա՞յ մէկ թըռչուն երկրի վըրայ ,

Որ քեզ նըման չըքնաղ ըլլայ :

Ամէն ընտիր յատկութիւններ

Մէկուն շնորհել իրաւունք չէր :

Տեսակ-տեսակ ձիրքեր տըրուած է ամէնուն .

Ոմանք ունին սյժ , մեծութիւն ,

Արծիւ անվախ է ու կըտրիճ ,

Մինչդեռ Բազէն՝ սըրաթըռիչ ,

Գուչակութեանց Ագռաւ յարմար .

Որին՝ չարեաց է ազդարար :

Իրենց ձայնէն

Առհասարակ թըռչունք գոհ են :

Մի՛ մըրմըռար ուրեմն . լըռէ՛ ,

Եթէ ոչ փետուրդ կ'առնում քեզմէ :»

Լաճոնթէն

(Թարգմանութիւն)

Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

Ճ Պ Ո Ւ Ռ Ն ՈՒ Մ Ր Ջ Ի Ի Ն

Ամառն ի բուն

Երգելու հետ էր ձըպուռն

Ձըմեռն հասաւ ,

Ուտելու բան չըգըտաւ .

Ոչ ճանճի կըտոր ,

Ոչ մանր որդերու

Մընացորդ բըտոր :

Ելաւ գընաց
Դըրացի Մըրջիւնին քով .
Կու լար սոված ,
Փոխ կ'ուզէր աղաչելով՝
Մէկ քանի հատիկ ,
Որոնցմով ապրի
Մինչեւ ցըՉատիկ .
«Կ'երգնում , կ'ըսէր ,
Խօսք կու տար , խօսք անբանի ,
Քեզ դարձընել
Մինչեւ նոր հունձքերն հասնի ,
Գըլուխը շահով
Հարիւրին տասնով :»
Մըրջիւնն ալ փոխ տալ չկտէ ,
Աս իրեն ցեղին
Մէկ պըզտի պակասութիւնն է :
«Ամառուան տաքին
Բանդ ու գործդ ի՞նչ էր ,»
Հարցուց փոխառուին :
«Ցորեկն ու գիշեր ,
Ինձ մի՛ սրգողիր ,
Եկող գացողին
Կ'երգէի ի ժիր :»
«Կ'երգէի՞ր ,
Աղէ՛կ ա .
Հո՛ւսիս ե՛լ գընա
Պար բըռնէ հիմա :»

ՉԱՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրի՛կ, ասաց դուստր հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,
Ասես համար, թիւ չկայ :

Ասում են որ՝ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում,
Ճշմարիտ է, ասա՛ հա՛յրիկ,
Իմը ո՞րտեղ է փայլում :»

— Այո՛, դստրի՛կ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար :
Եւ մեղանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար :

«Հայրիկ տե՛ս տե՛ս, աստղը թուաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւեց :»

— Ո՛հ, իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չըդիտէր :

Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածված •
Մի մարդ չկար նորան ծանօթ,
Որ չը վնէր վշտայած :

«Հայրի՛կ, տե՛ս տե՛ս միւս աստղ թուաւ
Եւ գիծ անգամ չը թողեց •
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւեց :»

—Ո՛հ, սիրական, խաղաղ մնա՛ ,
Բռնակալի դա աստղ էր ,
Որ աշխարհը իւրեանս դերի
Ծնած օրից կարծել էր :

Շատ հալածանք , շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում ,
Շատ տուն քանդեց , շատ մարդ զրկեց ,
Գութ չունեցաւ իւր սրտում :

«Ապա այն ի՞նչ աստղ է , հայրի՛կ ,
Որ այնպէս պարզ վառվում է ,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Չորս կողմը բակ բռնել է :»

—Ո՛հ , իմ դատր՛իկ , աղօթք արա՛ ,
Դա ծերունու մի աստղ է ,
Որ իւր կեանքում ոչ մի մարդու
Ոչինչ մնաս տուած չէ :

Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործերը .
Աղօթք արա՛ , որ երկարին
Նորա կեանքի թելերը :

Շատ օր չանցաւ . երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց .
Ովի՞ աստղիկն էր , որ ընկաւ ,
Բան հարցանող չերեւեց :

Մինչդեռ լուսինն արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին ,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լուութիւն .

Մի սրտաթափ , մաղերն արձակ
Վաղեց աղջիկ սգաւոր

Գէպի գեղի գերեզմանքը ,

Մուռնիկ չոքեց մի շիրմի մօտ :

«Հայրի՛կ , աստղիկդ չէ՛ փայլում ,
Դու յաւիտեան քնեցիր .

Առ ինձ քո մօտ , քո ծոց , քո գիրկ ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր :

«Իմ աստղիկին ասա՛ նոյնպէս ,
Որ չը փայլի՝ հերիք է .

Այս աշխարհը ինձ առանց քեզ ,
Մութն ու խաւար մի բանտ է :»

Մի մարդ չկար որ նկատէր
Որ հետեւեալ գիշերին

Պակասեցաւ երկնքիցը

Մի պայծառ աստղ խնդազին :

Երբորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման ,

Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին

Մարմինը խեղճ աղջկան :

«Հայրի՛կ , տե՛ս , տե՛ս , աստղը թռաւ ,
Յետքից պայծառ գիծը թողեց ,

Աստղիկն ընկաւ երկնքիցը ,

Միւս անգամ այլ չերևեց . . .»

Քնար Հայկական

ՄԻՒ. ՆԱԼԲԱՆԻԵԱՆՑ

ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ՄԱՆԿԻԿ

Հրեշտակ մի լոյս երեսով

Օրորոցի մ'խոնարհած քով ,

Կարծես՝ իրեն գէմք կը տեսնար ,

Իբր յառուակի ջինջ և պայծառ :

« Սիրուն մանկիկ , ինձ նման ես ,

Կ'ասէր, « Արի՛, ե՛կ ետեւէս .
« Չէ՛ արժանի երկիրս քեզ՛ ,
« Մէկտեղ լինիմք , երնէ՛կ մեղի :
« Հոս բերկրութիւն չի՛ք կատարեալ ,
« Հաճոյք՝ հոգւոյն կուտան մռայլ .
« Չուարթ ձայնին խառն ցաւոց վանկ ,
« Եւ հեշտութեան՝ դառն հառաչանք :
« Հանդէսք տօնից են անալի ,
« Պայծառ խաղաղ չըկայ օր մի ,
« Փոթորկախառն սե մրրկէ
« Վաղուան օրն ևս ազատ չէ :
« Մե՛ղք , պիտի գան վիշտք անարկու ,
« Չամբիժ ճակատըդ խռովելու .
« Դառնակըսկիժ աղի արցունք
« Պի՛ մթադնեն կապոյտ աչկունք :
« Ո՛չ , ո՛չ . աղատ անարգել տեղ .
« Թռչինք , երթանք մենք միատեղ .
« Քոյին վերայ Երկինք դըթաց ,
« Կանցնես օրերըդ անկասկած .
« Քեզի համար և ոչ մէկուն
« Չգեստք՝ սգոյ գոյն թող չառնուն .
« Քո ծընընդեանդ , մահուդ վայրկեան
« Թող անտարբեր լինին մարդկան :
« Քո սիրելիք՝ խոյ վըշտահար
« Թող չկանգնեն քեզ խաչաքար .
« Մաքուր , անմեղ են քո տարիք
« Եւ յետին օրդ շատ գեղեցիկ :»
Եւ թօթուելով ճերմակ թեւեր
Խօսքը կըտրեց , թրուաւ ի վեր ,
Իէպի յերկնից սուրբ կայարան .
Խե՛ղճ մայր , որդիդ , աւա՛ր մահուան :

Ռըպուլ
(Թարգմ.)

Հ. Ք. Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

Մայրիկ, հայէ՛, ի՛նչպէս սիրուն
Են այս ծաղիկներ :

Կարմիր, ճերմակ և ոսկեգոյն,
Գաշտն է լեփ լեցուն :

Ի՛նչ ալ անոյշ հոտ ունին, մա՛յր,
Սիրեմ ես զանոնք,

Մին է զմրուխտ, միւսը գոհար,
Գոյն ունին վառվառ :

Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ .
Ո՞վ ցանեց այսպէս :

— Աստուա՛ծ, տըղաս, հա՛ որ տըլաւ
Մեզ բարիք անբաւ :

Մայրիկ, հայէ՛, ի՛նչպէս աղունոր
Են այս թռչուններ,

Ունին փափուկ թեւ գունաւոր,
Հանդերձ փառաւոր :

Ճիւղէ ՚ի ճիւղ կը թռչրտին
Անտառն է բուներ

Իրենց ճիւղ ճիւղ, ու երբ կամին՝
Կը թեւեն յերկին :

Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ
Այսպէս գեղեցիկ :

— Աստուա՛ծ, տըղաս, հա՛ որ տըլաւ
Մեզ բարիք անբաւ :

Մայրի՛կ, հայէ՛, ի՛նչպէս պայծառ
Են այս աստղիկներ .

Կը փայլփլին յերկնից կամար,
Ու են անհամար :

Մին քան զմիւսն է լուսագեղ,

Եւ մթուժեան մէջ
Իբրեւ մէյմէկ վառին կանթեղ,
Քանի՛ եւ շքեղ :
Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք լրաւ .
Ռ՛վ վառեց այսպէս :
— Աստուած, տրդաս, նա որ տըւաւ
Մեզ բարիք անբաւ :

Առաջին Տերեւ

Թ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՂԲԻԻՐՆ ԵՒ ԾՈՎ

Կաթիլ կաթիլ ի ծովն անեղ
Կաթէր մի ջուր աղբերասա,
Երբ Ովկէանն՝ անդնդահեղ
Չայնիւ՝ գոչեց . « Ի՞նչ կ'ուզես հաս : »

« Մըրրիկն և շանթն եմ լոցակէզ ,
« Անեզր եմ ես երկնից նրման ,
« Է՛հ , կըրնամ պէտք ունենալ քեզ ,
« Մինչ փոքր ես դու , ես՝ անասնամն : »

Ովկէանին՝ աղբիւրն ըսաւ ,
« Անշուք , անձայն եմ , յիրաւի ,
« Այլ կը բերեմ քեզ , ծո՛վ անբաւ ,
« Մի կաթիլ ջուր՝ որ կը խմուի . . . : »

Վ. Հիւկօ

ԱՂ. ՓԱՆՈՍԵԱՆ

(Թարգմ.)

ՎԱՐՂՆ ՈՒ ԳԵՐԵՋՄԱՆ

Գերեզմանը հարցուց վարդին ,
« Ի՞նչ կընես դու երբ ծոցդ ընկնին
« Արշալուսոյ ջինջ արցունքներ : »
Վարդն ալ հարցուց . « Ի՞նչ կ'ընես
« Ա՛յն որ գլորի ի մահադէզ
« Ի՞նչ մշտաբաց վհիդ ի սոռեր : »

Ըսաւ վարդն . « Ո՛վ նըսեմ վիրապ ,
« Արցունքներէն այդ սիրատապ ,
« Հանեմ բուրում մեղրածորան : »
Շիրինն ըսաւ . « Ծաղի՛կ թշուառ ,
« Հոգիքն որ ինձ գան մահաւար
« Հրեշտակք շինեմ երկնից արժան : »

Վ. Հիւկո

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

(Թարգմ.)

ՄՐՋԻԼՆԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մրջիւն մը կար բարակիկ ,
Մէջքը թելիկ՝ ոտքը կարճիկ ,
Չիյտեմ խելքին ի՞նչ փրչեց ,
Խիստ բարձրէն վազել ուղեց .
Վազեց վազեց հեւալէն ,
Ելաւ ինչուան մինարէն .
Վերէն վար որ նայեցաւ ,
Ծօ ասոնք ի՞նչ են , ըսաւ .
Հա՛ , հա՛ , ան ձին չ'է՞ մի սա՛
Որ երէկ դաշտը տեսայ .

Չըսե՞ս, ես կո՛յր եմ եղեր
Որ մէկ պահ առաջ խաբուեր
Ու ասանկ խեղճ ճըճիներ
Մէկ մէկ հըսկայ եմ կարծեր :

Աս մըջիւնին կը նմանիք
Դուք ալ, անխե՛ղք պատանիք՝
Որ քիչ մը բան սովրեր էք,
Ցնորած մեծ մեծ կը ջարդէք .
Այդչափ բարձր մի՛ ելլէք
Որ դատումնիդ խանգարէք .
Շիտակ դիրքով նայեցէք,
Ինչ ըլլալնիդ կը տեսնէք :

Բազմավեպ

Հ. Գ. ՀԻԻՐՄԻԻՋ

Մ Ա Ն Ի Շ Ա Կ Ը

Սիրուն մանիչակ, արդեօք ինչո՞ւ դուն
Այդպէս հովտին մէջ կը ծաղկիս հեռուն,
Տերեւներու մէջ ինչո՞ւ պահուըտիս
Ու հըպարտ ծաղկանց կարդէն կը փախչիս :

Բայց չըքնա՛ղ ծաղիկ, երբ կը քաղնք քեզ :
Աւելի անոյշ բուրմունք կ'արձակես,
Քան շատ ծաղիկներ որոնք պըճնըւին
Ճոխ արդուզարդով փայլուն, թանկագին :

Եւ համեստութեան դու պատկերն իսկ ես
Անոր պէս մինակ ապրիլ կը սիրես,
Ու երբ արժանիքդ ի վեր կը հանես,
« Ծնորհակալ եմ » մընչես հեզօրէն :

Բ. Ֆ. Վայս

ԱՂ. ՓԱՆՈՍԵԱՆ

(Թարգմ.)

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ
Ա Շ Խ Ա Ր Շ Ի Կ Լ Ե Ջ Ո Ւ Է

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք — Ք Ն Ա Ր Ե Ր Գ Ա Կ Ա Ն Ք

Գ Ա Ր Ա Ի Ն

Ո՛հ ի՛նչ անուշ և ի՛նչպէս զով
Առաւօտուց փչեա՛ հովի՛կ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մաղերուն կուսին փափկիկ,
Բայց չեա հովիկ իմ Հայրենեաց
Գրնա՛, անցի՛ր սրբտէս ի բաց :

Ո՛հ ի՛նչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն արգեա՛ թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քո ձայնիկ .
Բայց չեա թռչնիկ իմ Հայրենեաց
Գրնա՛, երգէ՛ սրբտէս ի բաց :

Ո՛հ ինչ մրմունջ հանեա վրտակ
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ .
Բայց չեա վրտակ իմ Հայրենեաց
Գրնա՛ . հոսէ՛ սրբտէս ի բաց :

Գ Ա Ր Ո Ւ Ն

Երէկ, կարծես, առաջին օրն էր գարնան,
Ո՛հ, դաշտն ելի ողջոյն տալու բնութեան.
Բա՛ւ չորս պատի մէջ զիս բանտեց ձմեռ տխուր,
Բա՛ւ քաղաքի օդ ծըծեցի մահարոյր,
Երկնի, լուսոյ, ծաղկի կարօտն ունէի
Եւ մի թռչնոյ ձայնը լրսել կամէի:
Քաղաքն հողիս ի՛նչ էր ըրել չը գիտեմ.
Բայց նեղ, պղտիկ կղզայի զիս, այս գիտեմ.
Պէտքն ունէի լայն եթերաց լուսազարդ,
Ձի պիրկ թևերս արձակէին, ո՛հ, ազատ:
Ձի սառուցիկ մարդոց շունչը թունել էր,
Սըրահից մէջ կեղծ էին լոյսն ու դէմքեր.
Եւ գիրքերըս՝ յորս տքնեցայ ի նանիր
Չըսին զՍտոյգն ոյր միտքս էին ի խնդիր:
Առ քեզ դիմեմ, ո՛վ բընութիւն, քո մատեան
Ահա սրտիս առջև պարզի բիւրթերթեան.
Գոհ եմ ի ծոցդ որպէս յիւր մօր գիրկ մանուկ.
Չարթնու հողիս, շնչէ արբշխու ըզկնդրուկ:
Չոր ծառք բուրնն, կը փարատի սրտիս մէզ
Երբ երկնից մէջ այնպէս պայծառ է արեգ.
Թրհնե՛ալ լինիս, Աստուած անհուն, որ ձմրան
Տաս յաջորդել տխաակն ու հո՛վըր գարնան
՛Ի ու միշտ մեծ ես սև մրրկին մէջ, հիւսիսւոյն
Բայց քո սիրոյն անոյշ պարզեն է դարուն.
Մեծ ես, ո՛վ Տէր, այլ մեծազոյն ես սիրով.
Քեզ մահացուն լաւ ճանչէ այդ տխաղոսով:

Քաղցր է մարդոյն—էակ դողդոջ և տկար
Նստած յարև պշնուլ յերկնից պերճ կամար

Ուստ ջերմութիւն հոսէ հեշտին այսր յերկրի
Երակս ուր նոր առոյգ մի կեանք կը զարթչի .
Տեանել միջատն ի'նչպէս խոտին տակ տաքցած
Եռայ բզբայ , զի'արդ կայտուէ հոյլ դառանց
Ընդ մարդ դալար , զի'արդ ծառոյ մերկ թւերն'
Որ ի ցուրտ բուք դողդըղային ըզճրմեան'
Պճնին սիրովդ գեղահանդերձ և թռչնոց
Այլ օթեվան կը հուրիենն զիւրեանց ծոց :

Ի'նչպէս երէկ երգէր ամէն ինչ զուարթ ,
Ի'նչպէս երկին փայլէր ժպտէր շողազարդ .
Երիցուկներ դեզին ճերմակ զերդ գոհար
Զարդարէին զայն պատմութեան պերճափառ
Զոր հազել էր երկիր յայն օր տօնական
Որպէս պճնի կոյս մի հանդէս հիմէնեան :

Կանդ Մօտային առի ի սար ժամերով .
Ոյր ստորոտ ծայրածաւալ պարզի ծով ,
Ծո'վ , սիրտ անհուն , որոյ ծուփքն են և վըհեր
Բայց որ հանդարտ , զերդ խոհալից կը լըռէր ,
Միայն հեռուն , ի հորիզոնն , ընդ երկնի
Կը փախաւ դողցես խորհուրդ մի գաղտնի .
Խաղայր զ'իւրա կուրծքին վերայ լայնալանջ
Գգուէր մազերն արծաթ որ մերթ հողմատանջ
Գալարեցան յորժամ ծեծէր զայնս մրրիկ
Եւ սիրան ուռնոյր , զայրանային իւր ալիք ,
Թուէր հոգի մի որ վշտակոծ տանջուելէ
Ետք՝ հանդարտի մի սիրանոյշ հայուածէ :

Զի' խաղաղ օդք , զի' քաղցրահոտ , խնկարոյր ,
Երանութեան երգ մի լսուէր յընդհանուր .
Գոգցես երկիր նոր կը ծընէր , մանկային

Դէմք մի ունէր բնութիւն ի յոյս ժամագին :
Ինչպէս իմ սիրտ ըզժանդն ի բաց մերկանայր ,
Ինչպէս մեծնայր , և ամէն բան հասկանայր :
Ալեաց լեզուն և զեփիւռին և ծաղկին ,
Եւ զայն զոր լուռ ըզմեօք խօսի վեհ երկին .
Հոգի՛ ի բնաւս , շնչէր զգայր ամենայն ,
Եւ զԱստուծոյ ինձ խօսէին ձայնք համայն :
Քարուն խնջոյք մի է անհուն ուր ամէն
էք կոչուած են , և մի անհուն է Հիմէն
Յոր գիրկ ընդ գիրկ խառնի սիրով կաթոգի
Ամէն ինչ որ շնչէ , զգայ և շարժի ,
Եւ թրուհոյն ձայն , ծովու շոգին , ծաղկին շունչ ,
Թինդ զանգակին , միջատին ճիչ , ջուրոյ մրմունջ
Կը բարձրանան , խունկ՝ երգ սիրոյ՝ երախտեաց
Առ այն յորմէ կեանք , գեղ և սէր են իջած ,
Եւ մարդն , աւ՛աղ , կո վարանի յայս խմբերդ
Սառնել զիւր ձայն և զէն ի յիւր սլաշտել երկ . . . :

Անտիպ Գերբուածք

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հեղինակին սոյն քերթուածը ինչպէս նաև ուրիշ ոտանաւոր կամ արձակ գրութիւնք որ կ'երևան յետագայ երեսներուն մէջ , լեզուի տեսակէտով շահեկանութիւն մը ունին , անոր համար որ ցոյց կուտան թէ հեղինակը ինչպէս կ'ըմբռնէր աշխարհաբար լեզուն և բառորդ դար առաջ ի՞նչ ոճով կը գրէր : Աշխարհաբարի սկզբնական շրջանին մէջ գրաբարեաններու յարգելի խումբ մը , իրան զլուխ ունենալով Մատթիա Քարազաշ , կը յուսար ձեռք բերել աշխարհաբարի կանոնաւորումը ու զարգացումը լոկ գրաբարի օժանդակութեամբ և սյս նպատակին հասնելու համար գրաբարի շատ մը ձևերը , նախդիրներն ու հոլովումները անխտիր կը գործածէր , թէև շատ մը հետևողներ ալ բնեցաւ , թեր ու դէմ շատ բան գրուեցաւ , բայց վերջնական յաղթութիւնը աշխարհաբարեաններու մնաց , որոնք այս լեզուապայքարին մէջէն յաղթապանծ դուրս կ'ելլէին , և սպասահեցաւ ինչ որ անխուտախելի էր . . . գրաբարեանք հետզհետէ եղ ն կատարեալ աշխարհաբարեաններ :

Ա Շ Ո Ւ Ն

Ո՞ւր էք ծաղկունք դուք փայլփրլունք
 Ո՞ւր ձեր այտեր անուշ հուտով .
 Ուր ձեր պչրանք ու փափկութիւն
 Եւ ծոց լըցեալ շաղ մարգարտով :

Ինչո՞ւ հովիկ , անգո՛ւթ հովիկ
 Ցուրտ համրոյրներ կուտայ ձեզի ,
 Մուցա՞ւ արդեօք իւր սէր դողարիկ
 Եւ իւր դգուանք փայփայելի :

Ո՞ւր թիթեռնիկ հոլաթեւան
 Ձեր բաժակին հիւթոց կարօտ ,
 Որ դայր թերթից ձերոց դունեան
 Տանիլ ըզբոյր հեւու և մօտ :

Ա՛հ , ո՞ւր սոխակն իմ սիրակէզ
 Որ տերևոց հատած ի շուք
 Հալէր կարմրիկ վարդին ի տես
 Եւ կողկողէր սրտամաշուք :

Մասեճագուրբիւնք

Մ. ՊԵՇԻՔԹԱՇԼԵԱՆ

Մկրտիչ Պեթկրաւելեան (1829—1868) Մուրաանեան վարժա-
 րանի նախկին աշակերտը , Թրքահայոց մեծագոյն բանաստեղծն էրաւ .
 վենետիկի Միփթարեանոց ամէնէն փայլուն շրջանին մէջ աշակերտեցաւ
 Հ. Ղ. Ալիշանի և Հ. Ե. Հիւրմիւզի , որոնք հզօրապէս ազդեցին իր մա-
 տօղ մտքին վրայ և պատրաստեցին իր մէջ սպասգայ հայ բանաստեղծը .
 ինքն ալ , Թէրզեանի պէս , դասատուութիւն ըրած է երկար ատեն և
 կարող աշակերտներ ու աշակերտուհիներ ընծայած է Ազգին , որոցմէ
 յիշատակելի կը մնայ Տիկի՝ Սրբուհի Տիւսօր՝ մեծ գրագիտուհին ,
 Վաղամետիկ քերթօ՛ւը զգայուն սիրտ ու մելամաղձոտ հոգի կը կրէր ,

ՀԻՆԱԽՈՒՐՅ ԼՈՐԵՆԻՆ

Հովանայի՛ր գլխուս վերև վարսադիտանկ լորենի ,
 Ոյր տերեւոց մէջէն ցօղեն փայլ փայլ ճաճանչք արփունի
 Հառաչաճայն ծովերուն դէմ որ թաւալին կապուտակ ,
 Ռ՛վ երգահանդ միայնութեանց՝ խառնէ զտրտում քօ
նուադ ,
 Ռ՞ գիտէ յո՛ր անյայտ կղզեաց փոթորկին թեւք սեւա-
ըստուեր
 Օդաթըռոյց ըզքեզ վարեալ այս ափանց վրայ են ձրգեր :
 Կործանանար տարրերն եղան քեզի դայեակ — ուսուցին
 Երգի փոխել ըզսաստ ծովուն մեծի ու անեզր Հիւսիսին ,
 Կամ ի ձմերան տերեւաթափ թեւերդ ի վեր կարկառած
 Ուրուածե շուքդ ի ձեան դծել ի դողդոջ շող աստեղաց
 Այս անդնդոց վրայ ծըռած՝ որ մերթ պարզեալ կաթնա-
թոյր

խանդավառ երևակայութեամբ տոգոյուած աս ինքնարոյս հանճարը
 ներդաշնակ ու վճիտ լեզուաւ , հրաշալի տողերու մէջ , ցոլացուց իր
 երկնազդեցիկ ներշնչումները : Բայց Պէշիքթաշլեանի պաշտելի անունը
 անմահացնող քերթուածները եղած են իր հայրենասիրական երգերը որ
 խորապէս ազդած են ամէն հայ սրտերու և ամէն հայ շրթանց վրայ
 կենդանի պիտի մնան յաւերս . ո՛վ չի յիշեր Զէյթունցի Պասանին ,
 Բաջուրդույն Մանը , Ի իւր Զայնիցը , Գարունը կայլն , հոգեցունց
 երգերը :

Երիտասարդ բանաստեղծին անունը կրկնապէս անմահացած է անոր
 համար , որ ինքն եղաւ առաջին անգամ հեղինակը ազգային պատմական
 նիւթերէ քաղուած սրտառուչ ողբերգութեանց , որոնք հայկական Թատր-
 րոնին հիմը դրին . իր գլխաւոր Թատերական հեղինակութիւններն են
 Կոռնակ , Արեակ Բ. , Վահան , Վահէ , յաճախ ներկայացուած և ջերմ
 ընդունելութիւն գտած առհասարակ ամէն անգամ :

Հեղինակին բոլոր քերթուածներն ինչպէս նաև Թատերախաղերն
 առանձին հատուով մը հրատարակուած են Մասեմագրութիւնի Մ. Պէ-
 շիքաւելեանի անուամբ :

Կը նկարեն ըզքո պատկեր անամպ երկնի՛ւք շրջաափիււ
 Եւ մերթ մրրկէ հալածականք հսկայաբար կը դիմեն
 Հանել փրփուր կոճղիդ ի վեր և ըզհիմունարդ քանդեն
 Մինչ քո սաղարթք ցցուեալ սարսին իբր յեռոտան քըր-
 մանոյշ

Խորհրդաւոր տարփողելով պատգամս ընդ օդ չարագոյժ
 Արմատներովդ երկայն ու խոր երկրիս հիմունք զըրկելով
 Ռհ ի՛նչ ահեղ տեսեանց եղար հանդիսատես անվրդով :
 Չը լսեցիր թանձր ստուերաց մէջ վնաւաստեաց վայնա-
 սուն

Կոհակներու դէմ մրցելով հայցել ի վուր օդնութիւն ,
 Մինչ ծնրադիր կոճղիդ առջև կլին մը ծածկեալ ցընցոտեօք
 Շանթից ցոլմամբք լուսաւորուած ծովերու մէջ խնդրէր
 զոք :

Եւ երբ դարնան ծիծաղին դէմ կծկծելով խոյս տայր
 ճրմեռ

Եւ դարւոր ճակատդ անդրէն ծաղիկներով կը պճնէր ,
 Երբ զիւր բունիկն ոստերուդ մէջ կուզար հիւսել ծո-
 վորոր

Բակ ծովերու կենդանարար շնչով ծրփեալ լուսաւոր .
 Կամ երբ լուսնակ հորիզոնին մութ լեռներէն վերամբարձ ,
 Փրփրափետուր սաղաւարտներ շընորհէր մէն մի ալեաց ,
 Եւ զարծաթեայ հոսանս ուրեք ուրեք ցելոյր ի հեռուսա
 Ճերմակ պաստառ մ'ալեծածան՝ անդէն ի ստուեր հետա-
 սոյղ :

Անճիպ ֆերուածք

Թ. ԹԷՐՉԵԱՆ

Թովմաս Թերզեան (1838—1909). վէնեաիկի Մխիթարեանց համբաւաւոր աշակերտը, Թրքահայոց ամէնէն մեծ քնարերգակ բանաստեղծներէն մին եղաւ : Եւրոպական հին ու նոր լեզուաց քաջահմուտ, երկարատեն ազգային բարձրագոյն վարժարանաց մէջ հայերէն ու ֆրանսերէն ինչպէս նաև հայ դպրութեան դասեր աւանդեց արդիւնաւորապէս, հնոյն Հելլադայի գրականութեամբ սնած և անոր հմայիչ գեղեցկութիւն-

Լ ՈՒ Ս Ի Ն

Ողջոյն կուտամ անհուն ոիրով քեզի, լուսնա՛կ,
 Ո՛վ մըտերիմ արխուր հողւոյս իմ միայնակ,
 Թէ չըլլայիր դուն, և շողերդ այդ փայփայուն
 Չըջոյէին սըլայքն հողւոյս երազներուն,
 Փոս մը կ'ըլլար կեանքս թախուր և ամայի,
 Փոս մ'որ մըռայլ դամբաններու լոկ կը նայի,
 Որուն եղերքն ա՛լ չի փըթթիր ծաղիկ և բոյս,
 Ուր կը մուսայ ցօղել արեւն իր արշալոյս :
 Ու կ'անոյնէի ըստուերի պէս կեանքին մէջէն
 Քրչուելով հոն ուր կը հեծեն, կը հառաչեն,

ներէն յափշտակուած՝ կիսադարեան ուսուցիչը գիտէր դիւթել իր սշակերտները ու գեղեցկին ճաշակը անոնց ներշնչելու գաղտնիքը ունէր և իրօք հայ գրագէտներու քա՛ի մը սերունդներ շատ բան կը պարտին իրենց գեղեցկագէտ վարպետին : Խանդավառ երևակայ լմկաբ սփռուած դասական մեծ բանաստեղծը երկարատեն լսելի ըրաւ իր քնարին հոգեզմայլ թրթռումները, արտադրելով բազմաթիւ քերթուածներ ու տաղեր որոնք զգայուն սրտին ցոլքերն եղան, ինչպէս Հիւժեալ աղջիկը, Լորենին, Տանաս, Վաղամեռիկ օրիորդը, Ժայռերը, Ի ման Յակոբ պէյ Պալեանի, Քրիստոնեայ նահասակն ի Հռովմ, Չրադանի պալասը և այլն, հրատարակուած ցիրուցան պարբերակն համդէսներուն մէջ :

Թատերական նիւղ՝ ալ մշակեց և մեր մէջ, Պէշիկթաշլեանէն վերջը, հայկական բեմին զարգացման ամէնէն ուելի աշխատողներէն մին եղաւ իր գլխաւոր Թատերական երկասիրութիւններն են :

Արեակ Բ. Թատերանուագն որոյ քերթուածը ինք իսկ եղանակը անմահ Չուխ՝ ճեան յօրինեց :

Սանդուխտ ողորդութիւնը, Յովսէփ Գեղեցիկ, Մահն Աբելի, Մովսէս և Խոսրով Բ. գեղեցկահիւս Թատերգութիւններ, որո՞ք շատ անգամներ ներկայացուած և ջերմ ընդունելութիւն գտած են հայ բեմերուն վրայ :

Տալի Անակրէոնի, հելլէն քնարերգակ մեծ բանաստեղծին գողարիկ քերթուած էրը զոր շատ ճարտարօրէն գրաբարի վերածելով ձօնեց Գր. Պտեանի :

Կամ նըւաղած կանթեղի պէս շիջելափառ
Կը կըքէի ամէն հովի ես անբարբառ :
Բայց դուն , լուսնա՛կ , քանի վերէն ինծի ժրպտիս
Մըտքիս թըռիչք , աւիւն և հուրք կուտաս սըրտիս .
Քանի թողած շողերու հոյլն եթերածեմ
Պատուհանիս առջին կուգաս երբ կ'աղաչեմ ,
Քու ըզգայուն , սիրող անոյշ սըրտիդ վըրայ
Տաք արցունքով լեցուած՝ հողիս կը գուրգուրայ :
Ո՛հ ո՛րքան բարձր ես , որքան սուրբ և ի՛նչ վսեմ
Նըշոյլներուդ ներքև Աստուածն ես կ'երազեմ :
Տիեզերքի ոգի՛ն ես դուն , թէ ոչ հայլին
Որուն մէջէն սրբութիւններ կ'արտափայլին :
Գըթութի՛ւնն ես կամ դիցուհի՛ն դուն Աթենաս ,
Որ խըրճիթին ու դամբանին կը մօտենաս ,
Եւ երբեմն ալ հոճիներուն մըշտագիշեր ,
Որոնք տրտում են , ինչպէս մահն ու իր յուշեր :
Դուն չես սիրեր ոսկեպաճոյճ ճոխ ապարանք ,
Ոչ թաւիչէ սըրահակներ , ամո՛ւլ պատրանք .
Քու քըմայքդ են անտառն ու դաշտ , սարերն արձակ
Ուր կը թողուն վանկ մը հովը , թըռչունն ու ձագ :
Վիշտը հրապոյր մ'է քեզ համար , և փոսն ու փուլ
Շողերուդ տակ կը փալփըլին ինչպէս սըմբուլ :
Սիրտ մըն ես դուն , ո՛հ , դայն կը շգամ , սիրտ քերթողի
Երազներով , հըմայքներով ու խանդով լի ,
Կամ մայրիկիդ դիրկէն խըլուած աղջիկ մը կոյս ,
Որ քողի տակ կը պարուրես սարսուռդ ու յոյզ ,
Դուն չես խօսիր բը՛նու լուսնա՛կ , բայց կը դիտեմ
Թէ շատ լալէդ կը տըժգունիս առտըւան դէմ ,
Տըխուր հայուածքդ ինձ կը պատմէ առատապէս
Թէ լոկ լոյս մը չես դուն ուրիշ գունտերու պէս :
Քեզի նըմանն ես ալ ցաւեր ունիմ , լուսի՛ն ,

Չեն հրմայեր զիս ալ կեանքի փառքերն ոսին .
Հոգիս թե մը միայն կ'ուզէ , կապոյտ փետուր .
Ճառագայթ մը քեզմէ , բեկբեկ նըշոյլ մը տո՛ւր ,
Որուն կառչած վերաթեւեմ իբրեւ պարիկ
Մինչև բիւրեղ քու ապարանքդ օղապարիկ :
Ես քեզի ձօն տամ իմ հոգիս անոր փոխան ,
Պատմէ՛ իրեն խորհրդաւոր իղձերդ համայն .
Թո՛ղ գունտէ գունտ սաւառնելով մինչև հեռուն ,
Արցունքդ ամբողջ տանի ցլրուէ հովուն , ծովուն ,
Եւ դարերուն վըրայ կեցած միշտ անխափան՝
Ըլլայ յաւէտ անմահ սիրոյդ քու երգարան :

Յսլֆեր

ՏԻԿԻՆ. Զ. Հ. ԱՍԱՏՈՒԹ

Եթէ ոչ շատերուն՝ գոնէ նոր սերունդին կարելի է անծանօթ ըլլայ որ քառորդ դար առաջ տաղանդաւոր գրագիտուհին՝ աշխարհաբարի հակաակորդ մ'եղած է . Թերեւս անհաւատալի երեւայ այս հակապատկերը , սակայն իրողութիւն մ'է և բնականաբար օր մը մեր արդի գրականութեան ապագայ պատմագիրը մատնանիշ պիտի ընէ Թէ հանճարեղ տիկինը՝ աշխարհիկ գրականութեան ամէնէն փայլուն ներկայացուցիչներէն մին , գրաբարի ու աշխարհաբարի լեզուապայքարի միջոցին , արիարար կռուած է ի պաշտպանութիւն..... գրաբարի , և քառորդ դար վերջը , դարձեալ միեւնոյն գրագիտուհին ահա կը ներկայանայ Հայ գրականութեան առջեւ արդի լեզուին զարգացման ու կանոնաւորման իբր ամէնէն մեծ օժանդակներէն մին , իր աշխարհաբար լեզուի եռահատոր քերականութեան դասագրքերովը , որ խնամեալ ու մեծոտիկ ոճով աշխարհիկ լեզուն կարգի ու կանոնի տակ դրին :

Գրական հազուադէպ երեւոյթ մը՝ ուրկէ մեծապէս օգտուած է արդի Հայ գրականութիւնը :

Լ Ա Ռ Ս Ի Ն

Լո՛ւսին, դու ասող խորհրդալոյս,
Նիւմիւն՝ յդ երկնից ամօթլեամ,
Մեղամաղձիկ ճակատորդ կոյս
Ամպեայ շղարչիւ սքօղամ :

Սիրող ստուերց՝ ժամուց լրուիկ,
Ոսկի մազերդ ցիր և ցան
Երկնից դաշտայ մէջ շերք մեռիկ
Մոլորաքայլ կուգաս ման :

Եւ քո աչայ մի հեզիկ բոց
Կ'իյնայ յանկարծ ի խաւար
Ուր դիմ յուշոց և երազոց
Դիտեմ տըխուր զհեռանկար :

Առ քեզ ի վեր զարտասուազին
Հանեմ զաչկունս իմ խոհուն,
Եւ տրտմանոյշ յերես քոյին
Պիշ՝ հարցանեմ, ո՞վ ես դուն :

Արդեօք իրա՞ւ Սնահիտն ես,
Համեստութեան դիցունի,
Որ դողանալ լոյսէն կուգես
Չքնաղ հրապոյրքդ տարիելի :

Եթերց դժխո՞յ մ'ես դու այրի,
Որ՝ ի գիշեր սևասքօղ՝
Յերկնից ի ծագ ինչ ամայի
Խնդրես շիրիմ մի ի դող :

Կամ արևու դժուարն ես բամբիշ
Հրագէս ասողի մ'սիրահար ,
Եւ ամբար ի խոյզ հաղիս շրջիս
Սրտատրոփ ի թափառ :

Կամ մի ոգի ես դու գրթած
Յայդ կերպարան լուսանիւթ .
Որ յայց կ'ելնես լքեալ շիրմաց
Եւ հիւղեկին ցած ու մութ :

Մի ցօղ կաթել ի սեաւ անդր հող
Ջոր մահացուաց աչք մոռնան :
Եւ սպրդել մի քաղցրիկ շող
Հիքին յանժպիտն օթելան :

Թէ խանդից ջահ ելոյց ըզքեզ
Աստուծոյ մատն անդ յեթեր ,
Ձի քերթողին ըզհուր վառես ,
Հանես զոգին իւր ի վեր :

Կամ թէ կացոյց քեզ մըտերի՞մ
Սիրող ոգեաց մենասէր ,
Ձի քեզ յաւանդ տան ըզսրտին
Իւրեանց երդմունս և զիղձեր :

Թէ յեզր երկնից մի մշտավառ
Յուսոյ փարոս , զի մըթոյն
Ի դաշտս յորժամ ծըփայ աշխարհ ,
Ձը կորուսէ զդէմս ուղւոյն :

Թէ մի աչքն ես անհուն սիրոյն
Որ զանհունիւ կը գրգայ ,

Հսկես անքուն, 'ւի քո ծոցոյն
Յոյս՝ լոյս յերկիր յայս տեղայ :

Ո՛հ, ո՛ր և ո՞ք, զի՛նչ և իցես,
Լուսնա՛կ, աստղի՛կ սիրադէմ,
Դու Արարչին մի մտ գործն ես,
Խորհրդաւոր և վրասմ :

Խցկիս խորէն, սրտիս խորէն
Կ'օրհնեմ ըզքեզ, ո՛վ լուսնակ,
Առ քեզ ի վեր ձօն կը հանեմ
Հոգւոյս արցունքն՝ հառաչանք :

Թէ դու չէիր, քանի՛ տխուր
Լինէր աշխարհ, ո՞ւր գիշեր
Զիւր հրապոյրս, զիւր խորհուրդս ո՞ւր
Պուրակն, երա՛զ գտնէր Սէր :

Ծոհից լապտեր՝ միտք թափառկոտ
Անյուսութիւն՝ զիւր բեւեռ,
Յօղ սիրտիչ՝ աչքն արցունքոտ,
Մանուկն՝ Աստուած ո՞ւր գտնէր :

Եւ զուրկ շողէդ թէ մնայր շիրիմ,
Մեռելոց ո՞ր արեակ,
Զի տիւ ցուրտ է ոգեաց նոցին,
Քեզ կը սիրեն, ո՛վ լուսնակ :

Յանհունութեան ի դաշտս անբաւ
Խորին խորհուրդ մ'Արարչին
Ըզքեզ երկրի ընկեր տուաւ .
Փայլէ, լըցո՛ գրաշխ քոյին :

Վ Ո Ս Փ Ո Ր

Ալեաց մէջէն կանգնած վեր՝
Չոյգ հրաշալի աշխարհներ,
Ապշած դիտէք միշտ զիրար
Իբրեւ երկու սիրահար,
Եւ Տէր ժպտի ձեր վերայ
Սիրուն ափունք Վոսփորայ :

Սարտեաչ վարսիւք՝ աչք նուաղ,
Դու Եւրոպա հարս չքնաղ,
Եւ թաւ մօրուօք՝ յօնք նսեմ,
Ասիան՝ քո նստի դէմ .
Ո՛վ հեշտ ափունք Վոսփորայ,
Տէրն իսկ ժպտի ձեր վերայ :

Բնդ երկնքով ձեր պայծառ
Չկայ ձմեռ ոչ ամառ,
Այլ առաւօտն է դարուն,
Երեկոյին ալ աշուն .
Չուարթ ափունք Վոսփորայ
Տէրն իսկ ժպտի ձեր վերայ :

Դարէ ի դար դուք երկու
Իշխէք հզօր ծովերու
Որ աշխարհիս ծայրերէն
Երկրպագուս ձեզ բերեն,
Եւ Տէր ժպտի ձեր վերայ .
Կապոյտ ծովեր Վոսփորայ :

Երբոր հովեր մեղմաշունչ
Ծաղիկներու շարժեն փունջ,
Անպէս անոյշ հոտ բուրեն

Որ հրեշտակներ հրապուրեն ,
Եւ Տէր ժպտի ձեր վերայ
Ծաղկեալ ափուռք Վոսփորայ :

Մածկեն թփեր թռչունք բիւր
Եւ հովիտներ զով աղբիւր
Սոխակին հետ վարդենիք
Տօնեն ամէն օր հարսնիք ,
Եւ Տէր ժպտի ձեր վերայ
Չքնաղ ափուռք Վոսփորայ :

Երբոր յայգուն վարդամատ
Շարուին բլրոց ձեր ճակատ
Շող՝ մարգարիտ իբր աւազ ,
Հիացեալ ընդ այս երազ՝
Տէրն իսկ ժպտի ձեր վերայ
Օրհնեալ ափուռք Վոսփորայ :

Իսկ երբ լուսին ծագելով
Ցոլայ պատկերն յալիս զով ,
Չես գիտեր ո՞րն է չքնաղ ,
Եւ հաճելով ընդ իւր խաղ՝
Տէրն իսկ ժպտի ձեր վերայ
Պայծառ ալիք Վոսփորայ :

Կէս գիշերին՝ սիրահար
Կուսանք երբոր թիավար
Սահին ի ջուրս կապուտակ
Եւ նուազեն անուշակ ,
Տէրն իսկ՝ ափուռք Վոսփորայ ,
Ժպտի իրենց ալ վերայ :

Ոչ Հելուէտիա, Նարոլի
Ոչ են քան ձեզ սխրալի •
Թագաւորներ են անբախտ
Որ տեսած չեն զայս դրախտ •
Եւ տէր ժպտի ձեր վերայ
Անմահ ափունք Վոսփորայ :

Թռչունք որ բոյն անվրդով
Կամիք շինել վարդերով •
Աղջկունք՝ եթէ սիրոյ թել
Կամիք երկար ոլորել ,
Եկէք յափունս Վոսփորայ
Եւ Տէր հակէ ձեր վերայ :

Տրտում հողիք նաեւ դուք
Որ փնտուէք ծառոց շուք ,
Կամ ուրանաք դուք՝ յամա՛ռք ,
Արարչութեան հրաշքն ու փառք ,
Եկէք յափունս Վոսփորայ
Եւ Տէր գթայ ձեր վերայ :

Կոյս եւ Սոսերբ

Մ. ԱՃԷՄԵԱՆ

Գ Ի Շ Ե Ր

Սիրո՛ւնս պատկեր , պարզ գիշեր էր ,
Եւ օդեղէն ուկիսմնում
Փայլում էին անթիւ աստղեր ,
Եւ ուրա՛խ էր սիրտըս զարկում :

Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշու՛թիւն էին բուրում ,

Եւ երկնքի ցօղ կենարար
Բնութիւնն էր զովացնում :

Ես անխռով երգում էի,
Իմ երգըս սուրբ և մաքուր էր .
Ազատութիւնն էի երգում,
Հայրենիքի պարծանք ու սէր :

Զանազան բանաստեղծութիւնք

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԱՌ ԶԵՓԻՒՌՆ ԱԼԷՄՏԱՂԻԻ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրրայէն լուսակարկաջ՝
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ
Իհնչպէս թռչիս ինձ ընդ առաջ .
Ու խունկ և զով ընծայելով , ,
Զիս ողջունես հեղիկ շընչով :

Սմբատ Շահազիզ (1841-1907). Նախկին համբոււաւոր աշակերտ Մոսկուայի Լազարեան ճեմարանի, ուր Հայ լեզուի ու գրականութեան ուսուցչի պաշտօնն վարած է երկար տարիներ: Ռուսահայ աշխարհաբարին գլխաւոր հիմնադիրներէն մինն եղաւ . իր գրական գործունէութիւնը կ'սկսի Հիւսիսափայլ հանդէսին մէջ հրատարակած քերթուածներովը. գլուխ-գործոցն է Լեւոնի վիճեր, ժամանակակից բանաստեղծական վէպ մը, որ Հայաստանի իսկական կեանքի պատկերն է զունագեղ ոճով մը ներկայացուած:

Այս վէպը, որ 1865ին լոյս տեսաւ Մոսկուա, ինքնուրոյն տեղ մը գրաւած է ռուսահայ գրականութեան մէջ, ոչ թէ միայն անոր համար որ մաքուր աշխարհաբարով գրուած առաջին գիրքն էր որ կը հրատարակուէր, այլ միանգամայն իբր բանաստեղծական վէպ մը՝ որ կենդանի նկարագիրը կ'ընէր Հայուն դարաւոր վշտին :

Մհ, կը սիրեմ ըզքեզ, հո՛ղմիկ,
Երբ դու փութաս ինձի դայու •
Ի պար ի թռիչ ի սոյլ մեղմիկ,
Այրած ճակտիս իմ այցելու •
Ծաղիկ հողւոյս քեւ զովացած,
Բացուի ի լոյս ախորժ կենաց :

Սլացի՛ր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տար հովտին ու ծործորին •
Ու անտառաց բարձրադիտակ
Ուր երամով սոխակք թառին,
Թէ մտերինն իւրեանց եկաւ
Բիւր ըզմայլմանց յիշատակաւ :

Մհ, կորսըւած իմ հաճոյքներ,
Հոս վերատին գլանեմ ըզձեզ •
Ծառոց շքով էք ծածկըւեր,
Ու վրրիւրով առուակին հեզ •
Ահա կայտուէք ի յայս ծրմակ,
Ի յայս թըրիուտ հովանոցակ :

Հոս դառն հողեր մէկիկ մէկիկ
Ճակտէս ի բաց հեռանային •
Ու փունջք ժամուց գեղասպարիկ
Սիրտըս թեթեւ օրօրէին •
Եւ բընութիւն, մայր որդեսէր,
Քընքուշ գրկաց մէջ գիս գըգուէր :

Հոս ճեմէին երեկոյեան
Ի զով ըստուեր պար մի կուսից •
Մազերն հովուն բազմաբուրեան,

Սիրտք ընծայուած հեշտ վայելից •
Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ,
Զիրար շոյեն սիրատարիիկ :

Մտերմութիւն, սէր կրակութոց,
Ի՞նչ անուշ էք յայս տեսարան,
Ուր բիւր դալարք ձեզ հանգըստոց,
Ու՛ անհուն դաշտեր ըզբօսարան •
Մտերմութիւն, ինձ երանի՛,
Թէ հո՛ւ ծոցէս հոգիս թռանի :

Դու փափկաթև մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաջ •
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Թռի՛ր, թռի՛ր ինձ ընդ առաջ,
Ու խունկ և զով ընծայելով,
Պարէ չորս դիս հեղիկ շնչով :

Մասնագրութիւն

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՄԱՅԻՍՆ Ի ԽԱՍԳԻԻՂ

Նոր կիւրակէէն յետոյ, Հասգիւղ կը կատարէ մի ուրիշ տօն, որ աւելի բանաստեղծական է : Մայիսի առաջին օրուան հանդէսն է այդ : — Զբօսավայրը դիւղէն դուրս է, և բաւական հեռի : Մինչև Քեաղըտ-Պանէ պէտք է կրթալ : Բայց հող չէ, Հասգիւղցին չուզեր լքել իւր զուարճութեան սահմանափակ օրերը : Մայիսի մի՛ն է, Աստու՛ած իմ, կարելի՞ է մնալ տան մէջ :

Թուրքիացիներն աւելի բնութեան մարդ են քան ընկերութեան, այդպէս են Հասգիւղցիներն ալ, այն վաղեմի Բիքրի՛ տնիօնին զաւակները : Մայիսի հանդէսը բնու-

Թեան տօնն է, մի ողջոյն առ դարուն, նոքա, որք կուզեն վայելել դարունը, պարտաւոր են ուղղուիլ դէպ Քեաղըտ-Սանէի դետակը, հինն է այն Քի'տհարիս : Աճապարեմք :

Աւաւատ է, Արևը ձորերու մշուշին վրայ վարդ ճաճանչներ կը սահեցնէ . կաթնաթոյր ամպերու ետեւէ Մայիս կը ժպտի և հեղուկ մարդարիտներ կը թօթափին իւր թեթև թարթիչներէն : Թռչնիկներն, իւրեանց վըլխիկը վեր հանելով քնքուշ թևի տակէ, աւաւտեան անհատնում շարականները կը սկսին և Մայիսի հրապոյրը կ'երգեն : Մարդին մէջ դաւը կը մայէ և իւր մօրը կտին կ'ոստոսաէ : Հեռին, մի աւուակ կ'անցնի մի ջինջ և վայլուն քարավաղի վրայէ դըդրչելով, փրփուրներ ցայտելով աջ և ձախ՝ իրր սպիտակ ծաղիկներ : Մերթ ընդ մերթ մի ճաճանչ կ'անցնի նորա դողը, և մանրադիտական ծիրանի դօտիներ կը փուէ նորա ման ի ման պղպղակներուն վրայ :

Օգուտ քաղենք օդէն, մի նաւակ մանենք և դբօսավայրը դիմենք :

Գետակը հարիւրաւոր նաւակներու տակ աներեւոյթ եղած է արդէն . թիավարը կը քաշէ թին իւր պղինձէ բազուկներովն և հրամաններ կարձակէ իւր շուրջը : Կըզդեակներու, կնիւներու առջևէ քերելով անցանք, և դէպ կամուրջ կ'ընթանամք : Տես սա նաւակը : Թրքուհիներ են հոն, կարմիր թաւիշէ ծածկոյթ տարածած են խելքին վերայ, և նորա ոսկեթել ծոպերը, վտակին բիւրեղը խառնելով, կը գծեն կապոյտ շրջանակներ, որք հետզհետէ կ'ըզլայնին և մինչև գետեզր կը հասնին, ուր կը նուազին դարնային սէզերու տակ իրր սիրոյ մի հաւաչ . . . : Տես սա մակոյկը, Մայիսի ձօնուած է դա . հելլէն նաւաղներ դարդարած են դայն շաղանակի բրգածև ծաղիկ-

հերով և դալար ոստերով, լերան կարմիր դեղին փունջերով • շեփորուկի կապոյտ ողկոյզներ կը ծածանին վրահասկին շուրջը և ալեակին վրայ թոյր և բոյր կը սրփուեն : Առաջեմք :

Չախ եղերքին վրայ մի կայսերական հովանոց կառուցուած է որոյ դիմաց մի հսկայ կաղնի կայ • բնութիւնը մի դուռ բացած է նորա բունին վրայ • ծառին խուռոյին մէջ մի պահապան կըննջէ, մի աղքատ արեւելցի : Մտնենք հանրային պարտէզին մէջ •

Հոն, արհեստը կ'իշխէ բնութեան վրայ : Ամէնէն նկարագրական առարկայն է դետակը, որ իբր ճախարակէ ձեակերպուած՝ կը խայտայ կանաչ ստուերներ օրրելով : Երեք կարգ մարմարէ աւազաններ ջուրը կ'ընդունին, և իւրեանց արուեստական ծերպերէն վիժելով դայն կը դլորեն ծոցէ ծոց • կիճէ փեթակներ, որք ամէն կողմէ արծաթալառ հեղուկ կը ծորեն : Սոցա շուրջը Մորֆէի հասփշանէ՞ր կը սաւառնին արդեօք՝ ախտնի պսակներ ի ճակատ • մահկանայուն ննջել կ'ուզէ այն յաւխտեմական խոխոջներուն մօտ • այլ բազմութեան մէջ եմք • տօն է այսօր :

Գետակին ճախ եղերքին վրայ մի անտառակ կայ, որոյ մուտը փակուած է կառքերով : Փարթամներուն սիրելի վայրն է դա :

Գրական Փորձեր

Մ. ՉԵՐԱԶ

Միևսա Չերազ.— Շահնազարեան վարժարանի նախկին համբաւաւոր աշակերտը ծանօթ դէմք մ'է ազգային բոլոր շրջանակներուն մէջ • Իր գրական ու քաղաքական կեանքը յարատեւ գործունէութեանց երկար շարք մը եղած է, բեղուն կեանք մը, որ կ'սկսի Հայ լեզուին ու գրականութեան ուսուցչութեամբ, յետոյ խմբագրապետութեամբ Կրկրագունց գրական հանդէսին, տնօրէն Հայոց Միացեալ Բնկերութեան, տեսուչ Ազգ. կեդրոնական վարժարանի Ղալաթիոյ :

Միեւնոյ՛ արդիւ՛ աւոր գործունէութեան շարունակութիւնն է՞՛Երո-

Ի Մ Ս Ո Ւ Ս Ա Կ Ի Ն

Սոխակ՝ ինչո՞ւ դադրեցար քու անուշ երգն երգելից,
 Որ քամու՛մ էր արտասուէք շատ իմ էրված աչերից .
 Միտքըդ է երբ ծաղու՛մ էր արշալոյսը գարնային,
 Քանի՞ դու միտս բերիր իմ առարկան ցանկալին . . .
 Այն յիշատակն անոյշ էր, ինչպէս երազ վաղանցիկ,
 Որ գէ՛թ վաղրկեան թշուառին դարձնում էր նա երջանիկ,
 Համակ աշխարհ մոռացած, ունկս քու ձէնին յառած,
 Մըտքով թռչում էի ես իմ հայրենին կարօտած . . .
 Գիտե՛մ, դու էլ ես կարօտ մշտադարուն այն դրախտին,
 Որից հեռու մեզ չի կայ քաղցր ժրպիտ մեր բաղդին .
 Ռ՛վ կուտայ ինձ թեք թռչնի, որ խոյանան սըլանան,
 Օդն ու ամպերը ճեղքեն ու տանին ինձ Հայաստան,
 Թէ նորա օդը շնչե՛մ այն կենսատու սուրբ օդից—
 Գիտե՛մ, փրկուելու եմ անբուժելի իմ ցաւից . . .

պաի մէջ անցուցած երկարատեւ կեանքը, որ աւելի կը շեշտուի երբ կը մասնակցի յանախ Արեւելագէտներու զանազան համաժողովներուն՝ իբր ներկայացուցիչ Հայ լեզուի, մանաւանդ Շիրակոյի կրօնից հսկայ համաժողովին (1893) ուր արժանաւորապէս ներկայացուց Հայաստանեայց Ս. Եկեղեցին և անոր ուղղափառ վարդապետութիւնը պարզեց այն յոգնախուճն պատգամաւորներուն առջեւ, որ կը բաղկանար աշխարհի ամէն դաւանութեանց ներկայացուցիչներէ. նոյնպէս մասնակցեցաւ 1900ի Փարիզի Տիեզերական Արուեստահանդէսին, ուր ընդհանուր կրօնից պատմութեան և ժողովրդական աւանդութեանց վրայ յիշատակարաններ ներկայացուց. մեծ հռչակ հանեց Եւրոպոյի և Ամերիկայի շատ մը մեծ քաղաքներու մէջ ըրած հրապարակային ներհուն բանախօսութիւններովը, ազգային ու բանասիրական նիւթերու վրայ առ հասարակ. իսկ իբր ազգային գործիչ՝ անուանի եղաւ մանաւանդ անխոնջ աշխատող մը, բոնորդ դարէ աւելի ժամանակամիջոցի մը մէջ, եւրոպական դիւանագիտութեանց հետ ըրած ձեռնարկներովը և այդ նպատակաւ էր որ հրատարակեց l'Arménie անուանով քաղաքական ու գրական թերթը .

Բազմալստակ հեղինակին զլիաւոր երկասիրութիւններն են.

Գրական փորձեր, որ 1874ին լոյս տեսաւ, կը պարունակէ գեղեցիկ յառաջաբանով մը, ընտրողական լեզուի համառօտ բերականու-

Գարունն անցաւ անստիակ, խօսուն լեզուիդ կապ դրրաւ,
 Ու խեղճ վարդի թերթիկի հետ շարականդ էլ տարաւ :
 Կ'բանամ դուռը վանդակիդ, ազատութիւն քեզ կուտամ,
 Բայց աղաչում եմ քեզի, թռի՛ր դէպի Հայաստան .
 Վարդ ես ուզում այն տեղ է, անամպ երկինք մեզմ հովեր,
 Ճաճանչափայլ արեգակ, կարկաճասան առուներ :
 Ես էլ քեզ պէս կարօտ եմ բնութեան պայծառ օրերին,
 Մէզ, մառախուղ, հեղձուկ օդն հալեց մաշեց իմ հոգին .
 Փրչեց հողմը Հիւսիսին, փոշին երկինք բարձրացուց,
 Կտրի վրայից ազուաւը խուստ դաղան հնչեցուց .
 Ահա՛ Հիւսիսի ստիակն, ահա՛ Հիւսիսի՛ այեր . . .
 Ի՞նչ էք կորցրել Հիւսիսունն, ա՛յ խելացնոր խեղճ Հայեր . . .
 Ա՛խ, ես ատել եմ հորա կեանք ու վայելքը պատիր,
 Տուէ՛ք օդը իմ երկրին, դալար դաշտն ու վարդ կարմիր :

Բանասերդուքիւնի

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Թիւնը, արձակ ու ոտանաւոր քերթուածներ, ճառեր, քննադատականներ և այլն: Այս գիրքը, որ մեծ ազմուկ հանեց գրական հրապարակի վրայ, ընտրողական լեզուաւ գրուած էր, որով կուգար հեղինակը օրինակմը ընծայել իր առաջադրած աշխարհիկ լեզուի դրուծեան, թէև իր ներկայացուցած դրուծիւնը զերծ էր արդի լեզուին քերականական կարգմը սխալներէն ու անկանոնութիւններէն, բայց այնպիսի հիմնական փոփոխութիւններ կը պարունակէր որ արդի աշխարհիկ լեզուն կը յեղաշրջէին, ինչ որ պատճառ եղաւ մեծամեծ վէճերու, ահագին լեզուապայքար մը բացուեցաւ, թեր ու դէմ գրողներ հրապարակ իջան, թէև ընտրողական լեզուին, անվհատ հեղինակը ամէնուն ալ պատասխանեց Գրիչ և Սուր ստորագրութեամբ յօդուածներովը, բայց այս ներկայացուած դրուծիւնը ընդունելութիւն չի գտաւ և քիչ ատենէն մոռացութեան դատապարտուեցաւ: Իրական Փորձերը, ի բաց առեալ ընտրողական լեզուի մասն, Մ. Չերազի հոյակապ երկն է:

Վարժապետական ժողովոյ մէջ (1874) որ Ազգային ամէն կարգի դաստիարակներէ ու ուսուցիչներէ կը բաղկանար, հայ վարժարանացկանոնաւորութեան ու դասատուաց վիճակին բարւոքման վրայ խորհրդակցելու համար, յարգելի մանկավարժը ընդարձակ ճառեր խօսեցաւ որ յետոյ առանձին հատոր մը կազմեցին Ազգային դաստիարակութիւն անուամբ, ոչ նուազ նշանաւոր են նաեւ Կրթական դասեր մակագրով լուրջ յօդուածները, որ Անգղիական դաստիարակութեան նկարագիրը կը ներկայացնեն հասուն խորհրդածութեամբ:

Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ապշած են, լըճա՛կ
Ու չեն խայտար քու ալեակք,
Միթէ հայլուոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը հայեցաւ :

Եւ կամ միթէ կըզմայլի՞ն
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ՝
Որք նըմանին փրփուրիդ :

Մեղամաղձոտ լըճա՛կ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Աիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ, լըռել ու խոկալ :

Որքան ունիս դու ալի՞
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ դողդ այլ թափին,
Բոյլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չես կրնար դուն
Հողուոյս՝ որ բոց է անհո՛ւն :

Հոտ աստղերը չ'են մեռնիր,
Ծաղիկները հոտ չ'են թռամիր,
Ամպերը չ'են թրջեր հոտ,
Երբ խաղաղ էք դու և օդ :

Լըճա՛կ, դու ես թագուհիս,
 Զի թ՛հովէ մ՛ալ խորշումիս,
 Դարձեալ խորքիդ մէջ խըռով
 Զիս կը պահես դողդղալով :

Շատերը զիս մերժեցին,
 «Քընար մ՛ուհի սոսկ — ըսին,
 Մին՝ « դողդոջ է, գոյն չուհի—
 Միւսն ալ ըսաւ.— կը մեռնի՛ »

Ոչ ոք ըսաւ— հէ՛ք տըղայ,
 Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
 Թերևս ըլլայ գեղանի
 Թէ որ սիրեմ, չը մեռնի : »

Ոչ ոք ըսաւ — սա տըղին
 Պատուե՛նք սիրտը տրամադին,
 Նայինք ի՛նչեր դրուած կանն . . . »
 — Հոն հրդեհ կայ, ո՛չ մասեանն :

Հոն կայ մոխի՛ր . . . յիշատակ . . .
 Ալեակքդ յուզուի՛ն թող, լճա՛կ,
 Զի քու խորքիդ մէջ անձկաւ
 Յուսահատ մը նայեցաւ . . . :

Տաղի եւ Թարերգութիւնի

Պ. ԳՈՒՐԵԱՆ

Պետրոս Դուրեան (1854-1872). վաղամեռիկ բանաստեղծը զոր իսկիւնսարի Սոխակ կոչեցին, արդի Պատրիարք՝ Տ. Եղիշէ Արք. Դուրեան Սրբազանի երէց եղբայրն էր . շատ կանուխէն ցուցուց բանաստեղծական զգայուն սիրտ մը սոչորեալ, այն նուիրական հուբով, որ ի վերջոյ պիտի լափէր գինքը այն քան շուտով :

Դուրեանը իրաւամբ արդի Հայ գրականութեան մէջ բարձր տեղ մը զբաւած է իր մեղամաղձիկ ու Թախծալից քերթուածներովը . այս վաղա-

Վ Ե Ր Ջ Ա Ն Ո Յ Ս

Դուքս նայեցայ պատուհանէն : Նոքա միայն , որք բընակած են Հասգիւղի մէջ , կրնան ըմբռնել ինչ որ պարզուեցաւ յայնժամ աչացս առջև : Ամէն տեղէ միւսոյն կերպով չը տեսնուիր վերջապէս , զանազան կէտերէ դիտուելով , զանազան երևոյթներ կը ստանայ , բնութիւնը միութեան մէջ իսկ անհուն փոփոխութիւններունի և անեզր ձևաշատութիւններ : Եւ այս է որ այնքան տարբեր և այնքան ճոխ ներշնչումներ կ'ազդէ Պիւֆօններու , Պէննաուտէն ար Սէն-Բիէսներու , Շաղօսրիաններու :

Արևը էյուլայի քուրներուն վրայ խոնարհած էր , մօտ Բամիլ-Ջիֆուլիին . . . : Իւր շրայուցիչ ճաճանչներն ամփոփելով իւր շուրջը , իբր արծիւ որ թևերը կը ծրարէ երբ պատրաստուի հանգչիլ , բլուրին ետև կ'իջնէր տակաւ տակաւ : Լոյսի գոյնազոյն երակներ այդ լեռնակներուն վրայ կ'երկարէին ծայրէ ծայր , բայ ներկերէ մութերու անոյնելով , առաջին խաւերը մեղմ , վերջինները խիստ երանդներով : Երկնի կապոյտ յատակին վրայ , կաթնաթոյր ամպերու և այն բարձրութիւններուն մէջ շրջանակուած որք դեռ կանաչ էին , այդ վսեմ սլաակերը զոր մի Աստուած կը նկարէր վարդ լոյսերով և այն փափուկ գոյներովն որով անմեղ կոյսը կը շիկնի , մի դիւթութիւն էր աչքի համար և հոգւոյ համար : Հեռուն ,

հաս ու փողագրու համ ծարին քերթուածներէն՝ լնակը , իմ մահը ու սրտուցիք իր տառապած ու վշտահար հոգիին հառաչանքներն են խտացած այս երեք սրտայոյզ տաղերուն մէջ , որոնք յաւիտեան անմահ պիտի ընեն իր սիրելի յիշատակը :

Թողած է նաեւ քանի մը ողբերգութիւններ որոնք իր քերթուածներուն հետ միասին լոյս տեսած են Տաղ եւ քաղերգութիւն անունով :

Երկուսը հոգիներու երկար շարերուն մէջ, ուր ամբողջ
 սերունդներ կը հնջնն և ուր մի խորհրդաւոր միջոցներ
 կը տիրէ միշտ, տկար ճառագայթներ սպրդած կը հուա-
 ղէին, մութն աւելի յանկուցիչ քան լոյսն իսկ: Ու-
 կեղծիւրի ալեակները կարմրած էին թեթեւ և մի ծիրանի
 շղարչի տակ կը խաղային ծաւալուն, երկու հաւակ ջու-
 րի վրայէ կը թռչէին: Հոս հոն, մղկիթներու գորշա-
 խայտ գմբէթներուն և ճերմակ մինարէներուն վրայ, սու-
 ներու ապակիներու վրայ, հեռաւոր լոյսեր կը հշուէին:
 Լուսթիւնը կը սկսէր ծանրանալ աշխարհի վրայ, ըստ-
 ուերները կ'աճէին, և հետուն, մինչ յետին ճաճանչը կը-
 սրբուէր հորիզոնին վրայ և ծովային բազը իւր վերջին
 թռիչք կառնուր, միւլեզգիւնին լուրջ ձայնը կսկսէր աղօթ-
 քի հրաւիրել բարեպաշտ մահմէտականները: Մնկարելի
 էր չը յուզուիլ այս մեծավայելուչ հանդէսին առջև:

Գրական Փորձեր

Մ. ՉԵՐԱԶ

Ա Ր Ե Ա Ն Ա Յ Ս

Վարդեր ու վարդեր
 Թերթ ի թերթ փլթթեր,
 Ի կապոյտ եթեր
 Ձիւնափայլ ամպեր՝
 Քայլերուդ առջև
 Սրբուելով թեթեւ,
 Քեզ բնութեան հետ՝
 Յայս ժամ հեղաւէտ՝
 Մընան մեծայոյս,
 Ի՛վ քաղցր Արշալոյս:—

Ահա շող ի շող
Շուշանաց ի քող,
Զիւր ոսկենըշոյլ
Վարսեր հոյլ ի հոյլ
Ծուփ ի ծուփ իսփիւռ՝
Թողլով ի զեփիւռ,
Եւ մարդըրտայեռ
Պարզելով թեւեր՝
Նաղի Արշալոյս,
Երկընքի այն կոյս :

Ահա վառ ի վառ
Ճակատուն գոհար
Եւ բրբերն անուշ
Քըթթելով քընքուշ,
Զերկին և զերկիր
Գրբկէ սիրալիր •
Շըրթներուն իւր վարդ
Ի ժըմիտ զըւարթ՝
Ծաղկանց թոյր ի թոյր
Հեշտից ցօղէ բոյր :

Ահա սոյլ ի սոյլ
Թըռչնեկացըն բոյլ՝
Ճըռուողեն ընդ բոյս,
Ողջո՞յն Արշալոյս,
Ռղջոյն որ զմըռայլ
Փոխարկես ի փայլ,
Ու զտըխուր երկիր
Գործես ցընծալիր,

Ռ՛ն, յէից ողջո՛յն :
Արշալոյս, ողջո՛յն :

Քեզ ամէն ոք տայ
Ձիւր ձօն նախընծայ .
Քեզ՝ ըղսըրբաւոյն .
Քեզ՝ ըղփափկագոյն ,
Քեզ՝ ամոյ, սիւք, վրտակ ,
Ծաղկունք և սոխակ ,
Ամէնք տան քեզ գով՝
Հային քո սիրով ,
Ը՛վ երկնային կոյս
Սիրո՛ւն Արշալոյս :

Ռ՛ն, դու որ այսպէս
Մեր սիրտն ըզմայլես ,
Մեր բրբերն աղօտ
Մի՛ թողուր կարօտ ,
Երբ գերեզմանին
Յաղջամուղջ փակվին
Այլ զանուշ քո լոյս
Եւ աչաց ոգւոյս
Շողջողա՛ ի յոյս ,
Կաւա՛ն Արշալոյս :

ՍՏԱԵՐԲ Հայկական

ԽՈՐԷՆ ԱՐՔ. ՆԱՐ-ՊԵՅ

ԽՈՐԷՆ ԱՐՔ. ՆԱՐ-ՊԵՅ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ (1831—1892). Նախկին միաբան վենետիկի Միսիթարեան ուխտին, ուրկէ բաժնուելով 1858ին, Փարիզ, Թէոդոսիա և ի վերջոյ Պոլիս հաստատուեցաւ. լեզուագէտ եկեղեցականը հայ կղերական դասուն փայլուն ներկայացուցիչներէն մին եղաւ

Լ ՈՒ Ս Ի Ն

Լուսին՝ անոյշ իբրև ըզլոյս պաղպաղուն
Մաղիկդ երկնից դաշտերէն,
Լար հողելուր քնարին ոյր երգք՝ անրջովք
Ըզսիրտս օրօրեն,

Մինչ սաւառնիս ոսկեփետուր յանասմանն
Յանցայտ կեդրոն տարադէմ՝
Առ վայր մի զբեռն հոչոց թողլով՝ ի՛նչ անձկաւ
Աչքս առ քեզ կ'ուղղեմ,

Քե՛զ որ քան զաչս յանկուցանեա ըզմիտս իմ
Խորհրդաւոր մի սիրով՝
Զերդ քոյր մի զքոյրն՝ անջատ մնայեալ ընդ երկար՝
Նորէն տեսնելով :

սրբազան պերճախօսութեամբը ու քերթողական երկասիրութիւններովը որոց զլիաւորներն են՝

ՍՏՈՒԵՐԲ Հայկական, որ կը բովանդակէ դիւցազներգական և եղբերգական քերթուածներ, դասական մաքուր աշխարհաբար լեզուաւ :

ՔԱՐ Պանդխտին, վարդենիք. հեղինակին գրաբար քերթուածներուն ամբողջութիւնը կը կազմէ :

ԱՐԵԱԿ Բ. սրաայոյզ ողբերգութիւնը, որ չափական աշխարհաբարով յօրինուած առաջին թատերախաղն է մեր մէջ, նոյն ինքն հեղինակին զլուխ-գործոցը կը համարուի արուեստի և լեզուի տեսակէտներով :

ՆԱՐ-ՊԷՅ Փարիզ և Թէոդոսիա անցուց կեանքին ամէնէն գործունեայ տարիները որ հայ գրականութեան արդիւնաւոր եղան, վասն զի այս միջոցներուն լոյս ընծայեց իր ամէնէն զլիաւոր երկերը և միևնոյն ժամանակ ծանօթացաւ Ֆրանսայի մեծագոյն քերթողին՝ Ալֆոնս Լ. մարդինի հետ որոյ բարեկամութիւնը վայելեց մինչև վերջը, և այս ստժիւ էր որ տիեզերահռչակ քերթողին դաւճակաց գրաբար տաղաչափեալ յանգաւոր սքանչելի թարգմանութիւնը ընելով հեղինակին անուանը ձօնեց, թէև այս ամենագիտաբին գործը սրբազան հեղինակին գրական անժխտելի ար-

Ես այն պանդուխտն եմ աղքատիկ՝ մայրեաց մէջ
Գիշերազնաց մուրեալ,
Եւ դու այն լոյս՝ զոր ի հեռուստ կը տեսնէ
Հիւղէ մը պլպլալ :

Ես այն ծաղիկն եմ զոր ի կողս անդ ժայռի
Այրեց հրատապ արեւակ,
Քո շողդ՝ կաթիլն է այն ցօղոյ որ պահ մ'ալ
Շնորհէ նմա կեանք :

Ինչո՞ւ՝ հրեշտակդ անամպ ճակտով՝ քո թեւիկ
Կ'իջնէ շիրմացս այցելու,
Ըստուերանիստ հիգացս արդեօք առ վայր մի
Զերկի՞նս բանալու :

Մի սուրբ ու անոյշ հաղորդութիւնք հողեկանք . . .
Ակնս խրտի՛ղ խորք վըսեմ,
Յորս գլխիկոր յեզերց՝ և սիրտս ի թնդոջ՝
Զաչս իմ սեւեռեմ :

ժանիքը ի վեր հանեց. բայց միևնոյն ժամանակ սոյն Թարգմանութեան մէջ
դժբաղդարար հայ լեզուին բնիկ յատկութիւնները յաճախ զոհ եղած են
տաղաչափական կենսիւններուն և ֆրանսերէն զեղեցկագիտական բնագրին
փափկութիւններն հայացնելու դժուարութեանց :

Նար-Պէյի բերթուածները առ հասարակ կը փայլին լեզուի հմտու-
թեամբ, յանգերու ճոխութեամբ և օժտուած են հարուստ և փարթամ գրչի
մը բոլոր առաւելութեամբ. բայց ներշնչումի, զգացումի և գիւտերու պա-
կասը շատ անգամ զգալի է իր բերթուածոց մէջ. արդէն իր հեղինակած
Յանգարան կամ Յանգերսը բառարանը, որ բանաստեղծի ոգւոյն բոլոր-
քովին անհաշտ մեքենական աշխատութիւն մ'է, ցոյց կուտայ թէ տաղա-
չափական արհեստը հզօրապէս ազդեր է իր բերթուածներու վրայ և
կասկածիլ կուտայ միանգամայն թէ սրբազան հեղինակը արհեստական
յանգերու կարեւորութիւն ընծայողներէն էր :

Եւ գըթութիւն մի մեծ լընու զհողին իմ
Երբ ըսթափիւմ ի ցնորիցս,
Խաղաղ եւ բնաւք շուրջ, եւ պատկեր քո լողաց
Յանապակ ալիս :

Իհնչ ցնորական անջրպետներ կարելով
Նըշոյլդ երկնից խորերէն՝
Մերթ նորահրատ բաղխեալ աստուղց՝ մերթ փշրած
Գնտերու մէջէն

Կը հասնի հոս զերդ մըտերմի գընացելոյ
Քաղցրիկ ողջոյն սիրատենչ,
Անասանմանին յերկուց եզերց իբրեւ զօդ
Երկու եզբարց մէջ .

Սակայն նըշոյլդ այդ յիշատակ մ'է միայն,
Հոն զիս ուր քեզ կը տեսնեմ,
Թերեւս փշրած՝ կամ թերեւս յայլ տիեզերս
Սլանաա ուղիաճեմ :

Բ.

Գիշեր, գիշերն ահա թեօք լայնասփիւռ
Ընդգրկելով ըզզուհա մեր .
Լըւեցին լոյսք և ձայնք, քրքիչք և լալօնք
Յանապարիակ ըստուեր :

Ինչպէս մըրկաց հետ կուուելէն ետքն յողնած
Փլուզեալ մըմուայ Ուկէանն,
Ննչէ յողնած մարդկութիւնն ալ՝ յետ դժնեայ
Յուզմանց տըւընջեան :

Խորհրդաւոր ժամ, յոր կենաց իսկ օրէնք
Յեղաշրջած են համբուն,
Ի մահատիպ քուն կը մանեն կենսաւորք,
Եւ մեռեալք զարթնուն,

Ժամն է յորում հրացայտ աչօք յածին շուրջ
Իրժոխարձակ ուրուականք,
Կը հեծեծէ հողմն ընդ խրամատ պարսպաց
Չոր թանայ լուսնակ . . . :

Ժամն է յորում նժգեհեղոցս ի ստուերս այս
Ոգիք կ'իջնեն այցելու,
Եթերային գուրգուրանօքն ըզբեկեալ
Սիրտս բուժելու :

Եւ եթերաց մէջէն սանին ըզհոգեակ
Վերսլաց աստղ յաստեղէ՝
Մինչև ոսկի ուր սափորոյդ լոյս հոսանքն
Յանհունն հեղեղէ :

Տիեզերաց ի նուիրական լուութեան՝
Ճերմակ ծաղկունք քո նշուլից
Կ'անձրեւեն շուրջ, թեւաբախք յունկն իմ դռնչեն
Եւ երգք խնդալից :

Եւ կանգնին յաչս իմ լուսանիւթ սիւներով
Աստուածաշէն քո տաճարք
Յորս երփներանդ շողից նրման թեւածեն
Ըզմայլեալ հրեշտակք :

Եւ հեռուն անդր ի մայրեաստանս երկնատունկ
Նկարեալս անդորր ի լրճակ՝
Նուրբ վարդագոյն գոլորշեաց պէս յեւս այգուն
Ճեմ առնուն ունակք :

Նոքա յաղթողքն են որ շիրմին դռնէն անդր
Ճշմարտութեան են հասած ,
Չունի ներկան հոգեր , անցեալն՝ կակիծ ,
Ապագայն՝ կասկած :

Կուսից ժրպիան անբիծ է հոն .— պատանեակք
Իրդեալք ի խօյ ճիւղէ
Չեն արշաւեր ըսպառաղէն .— հոն դափնին
Ստուերոտած չէ :

Այլ գեղեցիկն է նորա իղձ և օրէնք ,
Ճշմարտութիւն՝ ճանապարհն .
Սէր՝ է լապտերն ևւ ուղեցոյց որ տանի
Բասաից ի տաճարն :

Հոն կը սնանին կրգովք գունաց ևւ լուսոյ ,
Հոն կը ջանիկք կը բնակին
Որ սիրելեացն կրք կարօտնան վշտահարք
Չեն նայիր հողին . . . :

Չայդ երկնապառոյտ ոլորս ոսկի քս շաւղին
Չանցայտ կեդրոնս տարադէմ՝
Թողլով առ վայր մի դբեան հոգւոցս՝ ի՛նչ անձկաւ
Աչքս առ քեզ կ'ուղղեմ . . . :

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՅՑ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու դարնան սիրուն թռչնակ,
 Դէպի ո՞ւր, ինձ սառ, թռչում ես այդպէս արագ :
 Ախ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ,
 Անդ շինիր քո բոցնը, հայրենի կառուրի տակ :
 Անդ հեռու ալևոր, հայր ունիմ սգաւոր,
 Որ մինակ իր որդուն սպասում է օրէ օր :
 Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ բարև ար՛ա,
 Ասա՛ թո՛ղ նստի լայ, իւր անբաշղ որդու վրայ :
 Դու պատմէ՛ թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
 Միշտ լալով, ողբալով, կեանքս մաշել, ելել է կէս :
 Ինձ համար ցերեկը՝ մութ է շրջում արեգը,
 Դիչերը թայ աչքիս, քունը մօտ չի գալիս :
 Ասի՛ր, որ չի բացւած՝ թառամեցայ մենայամ,
 Ես ծաղիկ դեղեցիկ՝ հայրենի հողից զրկւած :
 Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թռիր արագ,
 Դէպի Հայոց երկիրը, ծնած տեղս-Աշտարակ :

Բնար Հայկական

ԳԵՈՐԳ ԴՈՒՈՆԵԱՆՅ

Գեորգ Դուդախեանց (1830 – 1908)։ Փայլուն շրջանաւարտ Դորպատու գերմանական անուանի համալսարանին, ուրիշ դուրս եկած են ուստահայ սմէնէն մեծ գրագէտները, ինչպէս Ռ. Պատկանեան, Խաչ. Աբովեան, Ստ. Կազարեանց եւ այլն ։

Ռուսահայ բանաստեղծը անմահացած է Հայ գրականութեան մէջ հեղինակը ըլլալով «Ծիծեռնակ» գողտրիկ քերթուածին որ սրտայոյզ եղանակաւ երգ մ'է միանգամայն, մեծ Դողովրդականութիւն ստեղծ ։

Բայց ինչ որ հազուագիւտ կ'ընէ բանաստեղծին անունը, այն է որ իր կեանքին մէջ, միայն այս քերթուածը յօրինած է, Գրանասցի Առվէն բանաստեղծին պէս, որ միակ քերթուածով մը անմահացաւ ։

Վ Ա Ձ Ո Ղ Ջ Ր Ի

Իստակ ջուր վաղուկ, արդեօք ի՛նչ կը վնէր,
Որ քո ալիքներ տանէր իմ ցաւեր,
Կամ ի՛նչ կը վնէր, թէ իմ վիշտ ու լաց
Ինչպէս ծուխ՝ օդում ցրէին յանկարծ :
Կամ ինչո՞ւ համար ուրախութիւնը
Թուում է շուտով, մնում է ցաւը .
Թո՛ղ քո ալիքներ ցնդեն իմ վշտեր,
Լանան սիրտս թ՛ող քո մասնիկներ :
Սիրտս խոցւած է զանազան կողմից,
Արիւն ու շարաւ կը թափի երակից .
Լւա՛, մաքուր ջուր, սրբէ ինչպէս հուր,
Թո՛ղ փայլի սիրտս, չբննայ մի մաւր :
Դու սրբեցիր ինձ՝ երբ որ ես ծեայ,
Ես քո մէջ իստակ ձեռքով թաղեցայ .
Դու լացող ես հողու ու մարմնի,
Լւա՛ իմ սիրտս, թո՛ղ քեզ պէս փայլի :
Թո՛ղ մաքուր վնիմ, ինչպէս դու սուրբ ես,
Թո՛ղ ողջ աշխարհին երեւիմ քեզ պէս :

Բանասեղծութիւն

Մ. Բ. ՆԱԼԲԱՆՏԵԱՆՑ

ՋՐԱՂԱՆԻ ԱՎԱՐԱՆՔԸ

Տեսա՛ր լընաւ դայն հրաշակերտ
Որ ըսպիտակ կ'անդրադառնայ
Ծովուն յալիս կապուտաներկ
Որ կը փշրին ախանց վըրայ :

Հոն Քարրարա և Մարմարիս
Եւ ծովապեղ Պրոպոնդիտեանք

Յրդենն նաւօք կրճեայ լերինս
Ուր կը յենուն այն ապարանք :

Հարիւրաւոր դարուց շիրմէն
Արթննալով Ոգիք ազդաց՝
Իրենց դանձերը թափեր են
Մէջ լուսարձակ այն սրբահաց :

Նաւք պաստառալի՝ մինչ ի կայմ
Անոր շուքին տակ ընկղմեալ ,
Այն տեսիլէն յակճիւրս կան
Արեւելեան անուրջ կարծեալ :

Քան զՅոնիական և Դորացի՝
Քան ըզԳոթաց ձևս նորանչան՝
Պարան Արարին հոն կը կըցի
Հայ հանճարոյ(*) մը ի հրաման :

Ոլորահիւս լուսանցից քով
Ի վեր թռչին սիւնք Մարմարոյ :
Կը մոլորի լոյս արևուն
Բիւք զարդերուն մէջ մանուածոյ :

Կապոյտ ծովուն ալեաց մէջտեղ ,
Անմահական ժրպիտ մ'է այն
Եւ ամօթով է երկնազեղ
Կասդիլիացւոյն իսկ Ալհամայրան :

(*) Սոյն հոյակապ հրաշակերտ պալատին յատակագիծը շինած է մեծահանճար Յակոբ պէյ Պալեան՝ Հայ ճարտարապետներուն ողբացեալ պետը :

Եւ աստեղաց ի լոյս արօտ
Երբ ուրուագիծն իւր օգեղէն.
Կը նըկարուի երկնից յոլորտ
Շուրջ պարսիակեայ անտառներէն :

Կարծես այդ վէճք հոգիանան
Եւ ի լուսթեան գիշերային
Գաշնակաւոր երգ կը դառնան
Զոր երազոտ լըսէ հոգին :

Տեսա՞ր բընաւ դայն հրաշակերտ
Որ ըսպիտակ կ'անդրադառնայ
Ծովուն յայիս կապուտաներկ
Որ կը փշրին ավանց վըրայ :

Ո՛չ կիճ է նա, ոչ հող՝ ոչ վէճ
Այլ մեծազօր Հայ հանճարին
Մըսած ու թիւն մըն է վըսեմ
Հոն տարրեղէն հազած մարմին :

Անտիպ Գործեր

Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՅՎԱԶՈՎՍՔԻԻ ԵԿԱՐԻՆ ԱՌՋԵԻ

Ելած՝ ուկիանի անդուսպ ալիքներ
Ծանրը յորձանքով դարկելով դէպ վեր
Լեռնանում էին, գուռալով անեղ,
Եւ մըրրիկն ուժգին
 չընչում էր այնտեղ
Անեղը ու անվերջ
Տարած ու թեան մէջ :

«Կանգնեցէ՛ք», գոչեց
 վըրձինը ձեռքին
 Կախարդ ծերունին՝
 յուզուած տարերքին .
 Եւ լուռ, հընադանդ հանձարի ձայնին,
 Մութ աչիքները փոթորկի ժամին
 Կրտաւի վըրայ
 Կանգնած են ահա :

Քանասեղծուքիւնք

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ք Ո Ւ Ն Կ Ը

Խուռնկը կը ծըխի խորանին առջին
 Բուրվառին մեղմիկ ճօճումովն արծաթ
 Մութի վարանք մը պըլըլուած խաչին՝
 Մըշուշով կ'օժէ սուրբերուն ճակատ :

Պաղատանքներու սարսուռներ երկայն
 Կամարներուն սակ կը մարին տակաւ,
 Մամերու արժգոյն լոցերը լալկան
 Քըթթող աչքերով կը հեւան կարգաւ :

Սուրբ սիւներուն մօտ շրդարշ մը ձերմակ
 Գաղատակ հեծքերու դողով կ'երերայ,
 Սիրա մը փաթթըլուած ըստուերով համակ
 Խուռնկին պէս լըռին հըրայրքով կ'եռայ :

Յովհաննէս Թումանեան. Ռուսահայ Նորագոյն բանաստեղծ-
 ներուն մէջ շատ սիրուած դէմք մ'է իր գողտրիկ քերթուածներովը ու
 առակներովը : Յաջողապէս Թարգմանած է և Ռուս և Գերման գրակա-
 նութեան քանի մը հրատարակչաները :

Թունկը կը ցընդի բուրվառին ծոցէն
 Ու եթերն ի վեր կ'ելլէ խոյանքով,
 Նիւթ էր, բոյր կ'ըլլայ լափուկով բոցէն
 Իր կեանքը ցօղուած լոյսի երանգով :

Հէք կընոջ սիրան ալ, որ հոն կը մըխայ,
 Պիտի չազատի իր պատեանէն կուռ,
 Մինչև որ հալի, լուծուի, տարրանայ
 Լափուկով բոցէն տենչերուն մաքուր :

Յոյ՛բեր

ՏԻԿԻՆ. Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

Մ Ա Ս Ի Ս Ի Գ Ա Գ Ա Ք Ը

Անցան ժամեր . անցաւ և կէսօրը . . . Յաւիտենական
 ձիւների միջից եւ ձգում էի հայեացքս դէպի վայր,
 դէպի իմ առաջ բացված անկողն, անծայրածիր տարածու-
 թիւնը՝ ոլորված արեւի պայծառ ճառագայթներով, և
 թվում էր ինձ, թէ այդ կախարդական տեսարանը չէ՛
 կարող լինել մի շօշափելի իրականութիւն, թէ դա մի
 դիւթական երազ է, մի սոսկալի ցնորք, և ես՝ մի ան-
 մարմին էակ կապոյտ երկնքում, մաքուր, ձիւնափայլ
 ամպերի վրայ : Մի, եթէ ես դիտնայի որ մէկը կը կա-
 տարէ իմ վերջին կամքը, եւ կը կտակէի, որ իմ դիակս
 տանեն դէպի իմ հայրենի լեռան այդ ձիւնոտ բարձունքը,
 ուր, թիկն տուած որ և է ժայռի, եւ կարողանայի սա-
 ուած աչքերով միշտ նայել ու նայել այդ երազ-տեսա-
 րանին, այդ ցնորական երկնային պատկերին, մինչև որ
 անկուշտ աչքերս ծածկվէին յաւիտենական ձիւներով,
 թաղվէին մշտնջենաւոր սառոյցների տակ :

Իմ անսահման բարձրութիւնից եւ նայում էի դէպի

վայր և առաջին անգամ չէի կարողանում ըմբռնել, թէ ո՛ւր
 եմ և ինչ եմ տեսնում իմ առաջին Հեռու, հեռո՛ւ արևելքում
 Սիւնեաց կապուտակ լեռները չե՞ն արդեօք նրանք, որ
 ձգվում են, թեթև մշուշի շղարշով սքօղված, այնպէս
 երկար, այնպէս անվերջ դէպի հարաւ ու կորչում ան-
 հուն տարածութեան մէջ՝ միանալով երկնքի ու երկրի
 հետ, սպիտակ, թեթև, գեղեցիկ ամպեր, ո՛վ գիտէ,
 գուցէ, նա՛նք ձիւնեղէն ծածկոյթներ, տեղ-տեղ փայլում
 են նրանց կատարներին. տեղ-տեղ որ և է ըմբոստ լեռ-
 նագագաթ ձեղքել, դուրս է հանել իր գորշ-կապուտակ
 գլուխն այդ ամպերի միջից ու իր հեռու գիտարանից
 ակնապիշ նայում է ծերուկ նահապետին: Արաքսը չէ՛
 արդեօք այն երկայն կապուտակ գիծը, որ ոսկի փռչիով
 լցված լայնալիճ հովտում, անհամար պտոյտներով դնում,
 անյայտանում է հեռու, հազիւ նշմարելի հորիզոնում.
 քանհաճ գետը իր օձաձև գալարումների մէջ ամուր
 գրկել է կանաչագեղ սիրուն մարմանուհներ, գուցէ նա՛նք
 այգիներ ու պարտէզներ, ու իր յանկարծական ոլորում-
 ների տեղում երբեմն-երբեմն փայլում ու պայլում է.
 յղկված պողպատի նման, արևի պարզ շողերի տակ:
 Փոքր Մասիսը չէ՛ արդեօք այն կլորիկ, սիրուն սարը,
 որ կանգնած է Հարաւում ի՛մ դէմ յանդիման և ցոյց է
 տալիս ինձ ամբողջովին իր նազելի իրանը, իր բոլորակ
 գագաթի վրայ բազմած մանրիկ, գեղեցիկ բլուրները:
 Նա, կարծես դածրայել է. նա այնքան փոքր է երևում
 այստեղից, որ թվում է, թէ մի նորահաս պատանի է
 կանգնած հսկայ ծերունու առաջ: Իսկ նրանք, նարաւ-
 արեմուտքում տարածվող այն ընդարձակ հովիտը, այն
 լայնեղը, գեղեցիկ սարահարթերը, լեռների մէկը միւսի
 կտակից բարձրացած այն անվերջ շարքերը... Ի՞նչ աշ-
 խարհ է դա... Ա՛, ողջո՛յն քեզ, արիւնո՛ւտ երկիր, ող-
 ջոյն քեզ, հարիւր-հազարաւոր մարտիրոսների խորթ-
 մայր Հայրենիք, այդ դո՛ւն ես փռված իմ առաջ:

Ընօր Հասուածներ **Ա. ՄԻԻԹԱՐԵԱՆ**

Արեւալոյս Միսիբարեան. Ռուսահայ բանաստեղծ, որոյ նկարագրական գրուածքները շատ կենդանի ու գունագեղ ոճ մ'ունին:

Վ Ա Ն Ա Յ Մ Է Ջ Ա Ռ Ա Ի Օ Տ

Վանայ այգեստանք, որ տեղական բարբառով կըսուին հգեսար, բնութեան և բնակչաց ձեռքով վայելչագեղ դարդարած երանաւէտ վայրեր են, ուր իւրաքանչիւր տունը իրեն կից ունի ծառաստան, այգեստան, բուրաստան, և իր դրան առջեւի փողոցին երկու եզերքը՝ առուներ ջրալից, որոց ափերը կարգաւ տընկուած են սաղարթախիտ մանրատերեւ ուռիներ, տեղ տեղ ևս բարդին, կաղամախ, հացենին, թելին: Փողոցներու մէջտեղը՝ հասարակաց ընդարձակ ուղին, և ճրջաղարդ ծառոց թեւերն ու տերեւներն այս և այն կողմէն իրարու գրկուած խոնուած, սքանչելի հովանոց կը կազմեն անցորդաց, որոց մէջէն արեւու ճառագայթները մանր մանր հողմածրփիկ աստղերու նման կը ծաղին գետնին վրայ, անցնողին կամ նստողին գլխուն ու երեսաց վրայ ծածանելով, ինչպէս խաղաղ գիշերուան մը մէջ լուսնոյ հով ճաճանչները կը փայլեցնեն զեփիւռը ծովուն ափանց մօտ եղած նօսր ջրերուն ծոցիկ: Նոյն ծառերը՝ որոց կանանչ ու դալար վարսեր կ'օժանին օդին ցօղով և արեւուն ջերմով, իրենց արմատները ի գնացս ջուրց կ'ուռճանան, ջուրք խոխոջելով, գըլգըլալով կանցնին, լղելով այն ծառոց ոտները, ոռոգելով իւրաքանչիւրին սահմանեալ այգին, պարտէզն ու բուրաստանը, մատակարարելով առ հասարակ տանց ի լուացումն, ի յըմպելիս և առ ամենայն պէտս:

Այն տեղի առաւօտը՝ ոչ արեւածագումն է, և ոչ քաղաքակրթեալ տեղերու պէս՝ արեւածագումէն քանի մը ժամ ետքը, այլ՝ երբ լուսոյ աստղը իւր գլուխը կը բարձրացնէ վարազայ Գալիլիայէն, վայրիկ մի եւս, և

ահա կը հորիզոնանայ Շուշանից գագաթան Ձիաթունու-
կին վրայ, ու կարմրւորայ վանից գմբէթի խաչն առա-
ջին անդամ բարի լոյս կուտայ կ'առնու, և միջնանշմար
կը վեկտայ. այս վայրկենիս Այգեստանեայց եկեղեցեաց
ժամահարները տանիքն ելած՝ երեսնին երկուս կը խա-
չակնքեն. «Գողու ժամ» կը զարնեն — գողերը կ'անհե-
տանան —, դուերը կը հալածուին, և դազաններն որ-
ջերը կը քաշուին: Ժամհարը եկեղեցիին դուռը բանա-
լով՝ երեք բերան «Օրհնեալ ես Աստուած» կ'ըսէ, ու
կ'սկսին ձեռաց կոչնակները գլլ գլլ հնչեցնելով թաղէ
թաղ շուրջ գալ, ամէն Հայ Բրիտանի դրան ճկիկը
զարնել և «Ողորմի՛ Աստուած» կանչել. երբ իրենց շր-
ջանը լինցնելով ետք դառնան, իրենց ետեւը ձգելով կը
բերեն խուռներամ մանկտիները, անոնք որ հայր կամ
մեծ եղբայր շունին տան մէջ, իսկ որք ունին, կը ստի-
պեն կը յարուցանեն ծնողք կամ եղբարք, ձեռքերէն
բռնելով կերթան դէպ եկեղեցին «Զարթիք» կարդալու:

Մանանայ

ԳԱՐ. ԵՊԻՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Ի Մ Ա Շ Խ Ա Ր Հ Ք Ը

Ո՛րքան էլ ուզեմ ձգտել դէպի ձեզ,
Վեհապա՛նծ սարեր,
Ու փարուել մաքուր ձեր ձիւնեայ կրծքին,
Ո՛րքան ուզեմ ես
Սլանալ վե՛ր-վե՛ր,
Ելի՛ չեմ կարող, կուսակա՛ն լեռներ,
Երկիրը թողնել,
Որ խարխափում է կեղտ ու մուրի մէջ,
Տառապում անվերջ.

Եւ ես կարիքի աշխարհքն եմ ընտրում —
Ճնշուած ու լքուած ,
Ուր վիշտ ու զրկանքն իրար հետ գրկուած՝
Մի ե'լք են փնտռում :

Եւ դո'ւք , վա'ռ աստղեր ,
Ռ'րքան էլ դիւթող ,
Սիրտը պարուրող լինի ձեր հմայք ,
Ռ'րքան էլ գերէք հողիս երազող
Ու ինձ երկնային տանէք ձեր աշխարհք ,
Բարձեալ չեմ կարող .
Կապուած եմ կա'մայ իմ մայր հողի հետ :
Յար ու յարատե ամբոխի լացը ,
Ցաւ ու կսկիծը ,
Ինձ կոչ են անում , թէ արի' , պօ'էտ ,
Մեր վի'շտը լացիր ,
Մեզ ընկե'ր դարձիր :

Օ' , ինչպէ'ս քաղցր է երկինք վերանալ ,
Վիշտ , հողս մոռանալ ,
Հուանոյ փայլի մէջ լողալ , սաւառնել ,
Աստղերին գրկել ,
Բայց և անողոք իրականութեան
Ուրուականը սե ,
Որպէս մի ժանտ դե ,
Մարմնացած ըմբոստ բողոքի նման —
Տալիս է հրաման .

— Իջի՛ր երազոս երկնային գահից
Կեանքին մօտնալու,
Նրան պարտք ունիս, հարկ ունիս տալու :

—
Ու պիտի իջնեմ . . . ամբոխից փախ տալ,
Գժուար է, դժուար .

Հոգիս ձուլուած է նրա հոգու մէջ,

Ջղերս կապուած նրա ջղերին,

Մի այլ ճանապարհ

Գոյութիւն չունի երբեք ինձ համար .

Եւ որքան դիւթող լինի ձեր հմայք,

Երկինք ու աստղեր,

Կա՛յ մի քրանալի կարիքի աշխարհք

Ճնշուած ու լքուած՝

Նրան եմ ընտրում :

Այնտեղ վիշտ, զրկանք իրար հետ գրկուած՝

Մի ելք են փնտրում :

Հայ Գրողներ

ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԵԱՆ

Յակոբ Յակոբեան. Ժամանակակից ուստահայ բանաստեղծներուն մէջ սիրուած դէմք մ'է, ներշնչուած ու վառ երեակայութեամբ օժտուած գրիչ մը, որ բաւական թուով քերթուածներ ունի, յաջողապէս թարգմանած է իտալերէնէ ի հայ Ադա Նեգրիի գործերը, որ ջերմ ընդունելութիւն գտան Ռուսահայոց մէջ :

Ի Ժ Ա Յ Ռ Յ Ը Յ Ե Ա Լ

(Մ Ե Ր Ձ Ի Ք Ե Ա Ղ Ը Դ Խ Ա Ն Է)

Հոս կանգուն կամ ես բիւր դարերէ,
Եւ հրեղէն արեգակը ամառան
Բոցաթուիչ սլաքներով զիս կ'երէ :
Հոս կամ ես անժրպիտ՝ անսասան,
Հարուածեալ ի հողմոց տխրանուագ.
Գիշերացն խոյացեալք յանսահմանն :
Մերթ երկնից կ'ողողեն զիս սահանք,
Մերթ ասրափք օդապտոյտ ձիւներու
Սառուցէ կը հիւսնն ինձ պատանք :
Երգ ունին անտառներ, և ծովու
Մութ անդունդ՝ հառաչներ, և անոյշ
Ժրպիտներ հոյք աստեղց, և աղու
Բոյրերով կը սփոփուի վարդ քնքոյշ .
Իսկ ես հոս կաշկանդեալ անլեզու
Համբ ըստրուկ իմ բաղդին չարագոյժ :
Եւ լռութիւն զիս պատէ, և՛ ահարկու
Վեհն երկնից աստղերովն հեռաւոր՝
Երջանի՛կ եղբայրներս օդաչու :
Ոչ ծաղկի մը բաժակ լուսաւոր
Ծրլեցաւ քովս երբեք՝ ոչ թուփ մի
Ցանցառ շուքն ինձ շնորհեց գէթ մի օր .
Ոչ, եղո՛ւկ՝ յիմ ճաղատ լերկ գլխի
Բոյն կապեց մէկ թռչնիկ, կամ յոգնած
Ուղեւորն հանգչեցաւ առ վայր մի :
Եւ իմ շուրջս ահա կեանք պարայած
— Յար կանգնող և փլչող ովկէան —
Կը սրսկէ շուրջ փրփուրս աստեղաց :
Ի՛նչ կաղնիք երկնաբերձ կանգնեցան
Հոս իմ մօտ՝ բարերար հովանին

Սփռելով լեռներէն ի ձորն այն . . .
Քանի՛ բոյնք ոստոց մէջ՝ ւ՛ ի հովտին
Քանի՛ հոյլք երազող աղջկանց՝
Խեղճ ծաղիկք ծըլեալք յեզր շիրմին :
Այլ կաղնին օր մ'ի հողն էր փռուած
Իբր յոգնած կռուելէ մրրկին դէմ,
Եւ աղջկունք երազոց հետ ցնդած .
Ի՞նչ . լոկ ես պիտի բնաւ չը ճանչեմ
Մեռնելու հեշտութիւնն, այլ շորս դիս
Կեանքը նո՛ր նոր պիտի միշտ տեսնեմ :
Եւ սակայն հըրոյ կայծն իմ ծոցիս
Իմ լանջաց մէջ ալ վառ՝ կը սպասէ
Մէկ հարման որ սլանայ դէպ յերկինս :
Ես ալ նոյնն եմ իջած աստղերէ,
Մասն եմ նոյն եթերին համասփիւռ՝
Որ աստղեր և վարդեր յերիւրէ :
Երբ շիջաւ բորբոքեալն ի յիս հուր՝
Զիս պատող ծովերէն ցցուեցայ
Ողջունել զարեգակն կենսատուր,
Այլ ինձ հոն վճռեցաւ առնուլ կայ՝
Կանդաղեալ լայնանիստ վըհից տակ
Իբրու կմախք որ ըզդունդս այս բառնայ :
Ծովասոյզ մօտ հիմանցս անյատակ
Աշխարհներ շինելու պարապող
Կը լսէի ես որդանց ըզվաստակ .
Նոր կղզեակք ցցուէին լուսաշող
Զոր դիւթիչ մահակաւ կեանքն իսկոյն
Կը փոխէր ի մի դրախտ զօշոտող :
Իսկ ես հոս կամ պրկեալ — Մարդկութիւն
Զարթնցած դեռ . — գուցէ ալեաց պէս
Իւր գլորիլն ալ տեսնեմ յունջս անհուն ,

Ու սպասեմ որ յեղծեալ տիեզերս
 Կոյր աստեղք իրարու ընդհարեալք
 Քայքայեն զիս նորէն յիմ տարերս :
 Եւ սակայն գուցէ նիւթքն իմ ցրուեալք
 Դառնային ցօղ որ կեանք կայլակէ
 Տօթահար մէկ ծաղկի մ'ի բաժակ
 Գուցէ թուփ մ'ըլլայի մայա : է
 Որոյ տակ գալարի կասկածոս
 Օճն հիւծեալ աղեկէզ ծարաւէ .
 Կամ ի նշոյլ փոխուէին որ ընդ օդ
 Թուուցեալ նախ քան զարև՝ թշուառին
 Որ հսկէ՝ աւետէր զառաւօս :
 Կամ թերևս մտնէի՝ խուն բաժին՝
 Յերկնաշէն այն տաճար ըղեղի՝
 Օրորոց մրտածմանց քերթողին :
 Ռհ, քրք մատ քան զիս կարծր բաղդի
 Ի դանդաղ ժամահարն Յաւիտեանց
 Փրկութեան ժամս հնչէ ինձ պիտի . . . :
 Է՛ջ, հրաթեւ դու կայծակդ ի բարձանց,
 Է՛ջ՝ փշրէ՛ կապն որ զիս կաշկանդեն .
 Է՛ջ՝ փշրէ՛ զիս, ցրուէ նիւթքս ի բաց,
 Զի մահուամբ միայն կեանք կաս աստէն :

Արեւելք, օրաթերթ

Թ. ԹԷՐԶԵԱՆ

Վ Ի Ս Պ Ա Տ

Վիսպատ ենք, վայրն է գեղեցիկ ու հանդարտիկ —
 Հոս ջուրը ծիծաղ մ'ունի, երկինք ծիծաղ մ'ունի, որ
 անմեղ աղջկան ծիծաղին կը պատասխանէ : Անտառն իր
 դօս տերևոց խօշիւնն ունի, իր մամռապատ ծառերն ու
 ծառի կոճերը, իր քարանձաւը, իր սահանքը, իր բա-

յաւաւայրն և իր հովուաց հովիտը : Կը մխիւ անտառին մէջ, կը խորասուզիս, և նա ի խորոց անհուն մթութեան կերկերածայն թռչնոց վայելեններովն և անագնագոչ ծառերուն սօսափիւնովը կը պատասխանէ սրտիդ անհուն աղաղակներուն : Քիչ մ'անդին կը տեսնես որ անագին ապառաժ մը երկնից դէմ կը ցցուի ու կարծես շանթը կ'արհամարհէ, իր լուռու կողերուն վայրի կանաչին վերայէն կաթիլ կաթիլ ջուր մը կը մղի վճիտ, փայլփլուն, զովագին, և այն կաթիլը հեղեղ կ'ըլլայ, որ զմայրիս կը խորտակէ ու անհուն հովիտ մը կը փորէ իր ճամբուն վրայ, հոս՝ ջրվէժ, հոն՝ ջրի առուակ, հոս՝ կը դըդչէ, հոն՝ կը կարկաչէ, հոն՝ ամպերուն հետ թխագոյն կ'որտտայ, հոս՝ դալարագեղ ծաղկաափիւռ խոտերուն եղերքը՝ մանուածապատ ման կուգայ, հոն՝ կը փրփրայ, հոս կը փայլփլայ, և արեւուն նախածագ փայլուններուն առջև կը կարմրի իբրև կոյս մը իւր սիրականին առաջին տեսութեանը :

Հո՛ն է հերդաշնակութիւնը, կարգը այս անկարգութեան մէջ է, և զի մարդուն ձեռքը ոչ ժպիրհ այլ համասօրէն խառնուած է բնութեան դործոցը, անոր կամացն ու քմացը հնազանդելով, և զի բնութիւնն է որ կը տիրապետէ :

Մշուշ չունի երկինքն՝ որ այս մշուշը պատէ նաեւ զսիրտը . կապոյտ կը տեսնես ցերեկը, աստղունք կը տեսնես դիշերը, ամպերն ալ, երբ ամպեր պատեն, զովագին են և թափանցիկ արեւին լուսովը, լոյս քողարկելով այնչափ՝ սրչափ բարակ շղարշ մը՝ ձգուած նազելի կուսին վառ ի վառ այտերուն վրայ և մաքրափայլ խանդավառ կուրծքին չոր և բարակ հովիկ մը վեր կը վերցնէ :

Ա Ղ Ք Ա Տ Կ Ի Ն

Տուրաք փշեց, ձմեռ սաստիկ,
Զիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարվիլ ցրտիցը,
Ժամի դռնում դողդղալով
Կանգնած էր մի աղքատ կին.
Նորա հանդերձ պատառ պատառ,
Զունի շապիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը,
Պարզում է անցկացողին —
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին» :
Զեզ սիրելիք, ասում ո՛վ էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը ոտաբոքիկ
Կանգնած, ժամի դռնումը .
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով .
Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին —
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին» :
Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր .
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի
Նւագարան ու տաղեր .

Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նորան բարեկամ,
Ամենայն ժամ նորան բաց էր,
Շուայլ քսակը մեծատան .
Այժմ զրկուած ամէն բանից,
Չունի անգամ հացի գին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին :»
Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ծուռ
Նորա նախկին բարեկամքը
Չե՛ն ասում նորան, «խղճո՛ւկ,
Ե՛կ դու մեր մօտ, կամօքե՛նք
Քո վիճակի դառնութիւն
Կը թուլացնենք ճակատագրից
Խիստ հարուածի սաստկութիւն» :
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն .
Անտուն, անտէր աղքատին» :

Հիւսիսապայ Հանդէս

ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

Միքայէլ Նալբանդեանց (1830—1866) . Ռուսահայ գրագէտ , բանաստեղծ և հրապարակագիր, վկայեալ Ս Փեթրբուրգի կայսերական համալսարանէն , յետոյ ուսուցիչ հայ լեզուի և դպրութեան Մոսկուայի Արևելեան կենդանի լեզուաց ձեմարանին . գրական որչափ ազգային գործունեայ ու փաստակաւոր, թէև վաղանցիկ, կեանք ունեցած է . ինքը ինչպէս նաև իրեն պէս ուրիշ ռուսահայ մտաւորականներ՝ Ստ. Նազարեանց, Ռ. Պատկանեան և Ս. Շ . հազիզեանց՝ Դորպատու այս երեք համալսարանականները, կէս դար առաջ , հիւսիսի ռուսահայ աշխարհիկ գրականութիւնը հիմնեցին որոյ կեդրոնը եղաւ Մոսկուա . այդ ռուս մտաւորական միջավայրին մէջն էր որ Ստ. Նազարեանց սկսաւ հրատարակել Հիւսիսա-

Ք Ն Ո Ւ Ք Ե Ա Ն Ծ Ո Յ Ո Ւ Մ

Ես սիրում էի մենաւոր ու այլանդակ ժայռերը, որոնք կարծես գաղտնիքների վրայ թուխս են նստել և նոթերը կիտել պառաւած հսկաների պէս. սիրում էի և՛ մենաւոր ծառերը, որոնք չզխտես, ի՛նչ մի անհասկալի քմահաճոյքով, անտառներից խոյս տալով, անմատչելի լեռնակատարներն են ընտրում իրանց լուռ խոհերի համար, փոթորիկների տակ տնքում են ու հեծեծում, բայց սիրում են երկնքին մօտիկ լինել: Եւ այնպէս հաճելի էր ահաւոր բարձրութիւններից գլխի պտոյաներով ցած նայել անդունդները, կամ մի հայեացքով ընդգրկել լայնարձակ հորիզոնները ու վայրենի բնութեան լուռ սարսափը ճաշակել: Մանուկ օրերից ես սիրում էի երեւակայել կենդանութիւնը մեռած ողջ աիեղերքում, ուր ես եմ միայն կենդանի, ամայութեան ու անհունութեան մէջ տարվելիս, համակրած սղաւոր բնութեան մեծ վրշտով: Այդ վիշտն էր, որ այժմ ես ճաշակում էի այս մենաւոր լեռներում, ուր ժայռերի կատարներից գահա-

փայլ հանդէսը, հիւսիսի այս շողշողուն աստղը, 1858—1864ի միջոցները. Նալբանդեանց ամէնէն եռանդուն աշխատակիցներէն մին էր այս գրական հանդէսին՝ որ ահագին ազդեցութիւն ըրած է, ժամանակին, ռուսահայ լեզուին և ժողովրդեան մտաւոր զարգացման վրայ, ոչ թէ միայն տարածած ազատամիտ ու լուսաւոր գաղափարներովը այլ անոր համար միանգամայն որ արդի ռուսահայ աշխարհաբարին կազմութեան մէջ մեծագոյն դերը ունեցած է: Այս երեք գրագէտները եղան որ Հիւսիսափայլի և ուրիշ հրատարակութեանց միջոցաւ ռուսահայ ռամիկ ու սղաւաղ լեզուն մաքրելով և զտելով օտար բառերէ ու ոճերէ, բերին մտեցուցին արեւմտեան աշխարհաբարին և այսպէսով արդի ռուսահայ լեզուին հիմը դրին:

Նալբանդեանց՝ Հիւսիսափայլին ամէնէն փայլուն աստղերէն մին, միևնոյն ժամանակ հայ գրականութեան մէջ անմոռանալի անուն մը թո-

վիժվող ջրվեժներն են հառաչում, և ուր պատառ-պատառ ամպերը յոգնած կարաւանների պէս հեռու տեղերից դալիս են հանդչելու : Այս հմայիչ բնութիւնը ասես անվերջ երազում էր վեհ լուսթեան մէջ, և նրա երազները գեղեցիկ էին, ինչպէս դիւթական հէքիաթներ : Ես կամենայի այդ երազներից մէկն ու մէկը աչքիս առաջ ունենալ կենդանի ու հասկանալի, շնչակտուր, բերանարաց հեալ նրա առաջ, գուրգուրել, փայփայել նրան, խնդալ ու լայ լինել նրա հետ : Տարօրինակ, անկարելի մի տեսչ, բնութեան երազն ի՛նչպէս բռնել, ո՞վ կտայ ինձ :

Երբեմն ինձ թվում էր, թէ իմ փնտռած երազը մարմնացած է մի գեղեցիկ թռչնի, մի թիթեռի, մի ծաղկի մէջ : Թռչունը բարձրունն էր, թիթեռը բռնել չէի կարողանում, միայն ծաղիկն էի քաղում, նայում, խաղայնում ձեռքիս մէջ և սպա փետում ու թերթիկները քամուն տալիս : Եւ նայում էի փախչող թերթիկներին, որոնք զնում էին մեռնելու ո՞վ գիտէ, ո՞ւր, և ողջ

զած է իր բերթուածներովը, որոնցմէ շատերը հայրենասիրական բոցաշունչ երգեր են, ինչպէս Ազատն Ասուածը՝ ազատութեան այս նուիրական օրհներգը, Խալաղի աղջկան երգը, Մեռ Հայրենիքը, որ ամէն հայ շրժանց վրայ էր թրծուան :

Ունի բանասիրական և այլ երկասիրութիւններ որոցմէ յիշատակի արժանի են՝

Երկրագործութիւն որպէս ուղիղ նանապարհ, Հայ ժողովրդին բարոյական ու նիւթական դժբաղդ կացութեան պատկերացումն է շատ կենդանի գոյներով նկարագրուած :

Հեղինակին անունը ոչ նուազ անմահացնող աշխատասիրութիւն մ'է նաև Ղազար փարպեցւոյն առ վահան Մամիկոնեան թղթին աշխարհաբար թարգմանութիւնը զոր հրատարակեց պատմական, քննական լուրջ ծանօթութիւններով լուսարանեալ :

բնութիւնը իր արտաքին գեղեցկութեան տակ դառնում էր իմ աչքին մի հսկայական գերեզման, ուր մի կոյր անգիտակից ոյժ յեղյեղվում էր վեհօրէն, ստեղծում էր ու փչրում, ծնում էր և ջնջում, չգիտեա՛ ինչի՛ համար : Բնութեան երազը բռնելու իմ անգօրութեան մէջ, ես վհատած ու մռայլ, ցած էի իջնում դէպի դաշտերը, ուր չարքաշ կեանքը եռում էր մի անխորհուրդ թափով, կարծես, դարձեալ անգիտակից ու անտարբեր դէպի անխուսափելի վախճանը : Ես էլ այդ կեանքի մի մասն էի, նրանից անբաժան և ձեռք էի առնում վրձինս, կտաւի վրա քարացնում փախչող իրականութիւնը, նրա ցաւոտ վայրկեանները, տառապող մարդու այնքան տանջանքները :

Ընթիւ Հասուածնիւ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ն Ո Ր Ա Ծ Ի Ն

Մայիսի ընծայ՝
Աղւոր լուսընկայ,
Ո՞ր աստղին ծոցէն
Եկար խեր ու շէն :

Մայիսի հոգեակ՝
Սիրուն աղաւնեակ,
Ո՞ր թռչնոյ բունէն
Ծնար խեր ու շէն :

Մայիսի նուէր՝
Վարդերու ընկեր :
Ո՞ր ծաղկի հոաէն
Շրթունք քս բուրեն :

Մայիսի ձօնած
Քնքուշ արարած ,
Ո՞ր վարդի ցօղէն
Աչուկք քո բղխեն :

Մայիսի ընծիւղ՝
Ծաղկալից զամբիւղ ,
Ո՞ր խնկի ծառէն
Բուսար խեր ու շէն :

Մայիսի ժպիտ՝
Փայլուն մարգարիտ ,
Ո՞ր անոյշ հովէն
Բերես խեր ու շէն :

Մայիսի սլարգև
Զուարթուն թեթև ,
Աստուծոյ քովէն
Բերիր խեր ու շէն :

Լոյս եւ Սօսերբ

Մ. ԱՃԷՄԵԱՆ

ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ԿՈՅՍԸ

Կէս գիշեր է . սենեակիս մէջ միայնակ՝
Կանթեղ չունիմ , ոչ ալ երկինքն ունի շող .
Իր լոյսն յետին մարեց դարպասն ու տընակ .
Եւ մընացի իմ խոհերուս հետ մաշող :

Կը թափառին շուրջս ըստուերներ թանձրահոծ
Մերձենալով հեռանալով յամբարար ,
Եւ կը լրանմ իրենց վայիւնն ողբակոծ
Երբ կանգ առնել կուգան յոգնած ու մոլոր :

Շրխուր մըտքիս ուրուականներն են համակ,
Ցընորք հողւոյս հազիւ հասած արբունքի,
Եւ մինչ կ'անցնին օրերսս ցուրտ ու ցամաք՝
Անոնք կուտան ինձ լախտիանքն արցունքի :

Ձի մինակ եմ հոս դէմքերու հետ արբատում,
Կոյսերու հետ, որոնք շունին իղձ ու խանդ,
Որոնց ճայնին վանկերն՝ աղօթք անպատում՝
Կը խորտակեն երազս ու յոյս մանաւանդ :

Ապրիլ կ'ուզեմ. անոնք երկինք ցոյց կուտան :
Սիրել կ'ըզամ. կը դոչեն. «Սէր է Աստուած :»
Եւ կը պատմեն Բաւթը, Յոբն ու Յուդան .
Կ'ըսեն. «Միայն մահուան համար ենք հաստուած :»

Չո՛ւր կը վառէ երկինք արեն ու լուսին,
Չօնելով կեանք ծաղկին, դաշտին ու մարդուն,
Ես կը դառնամ նորէն համեստ այն լոյսին
Որուն ներքե լուռ կը հսկէ աչք մ'արթուն :

Բոցեղ շունչ մը կը խնդրեմ ես, սիրտ մը տաք
Որ խառնուի տենդոտ հողւոյս յորձանքին,
Եւ Սաղմոս մը կը դընեն, ա՛հ, բարձիս տակ,
Խաչ մ'ալ փայտէ ընդդէմ սրբոյ փորձանքին :

Այդ փորձանքներն ես կ'երազեմ անդադար,
Կեանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մէջ չընչին բաժինս իմ արդար,
Եւ կը փութամ երկինքն իրեն սուրբերուն :

Տալեռ

ՏԿՆ. Ձ. Հ. ԱՍԱՏՈՒԲ

Կ Ա Ղ Ա Ն Գ Ի Ն Ո Ւ Է Ր Ը

Կանանց ծածկոյցով սեղանին առջև, որուն վրայ պղտիկ լամբայ մը կը վառէր, դլուխ դլխի կը հասնէին մայր ու տղայ ամէն գիշեր :

Տիկին Աննիկ կարի խոշոր ծրարը քովը՝ ասեղ ծեծելով շարունակ, մինչ Վահրամ յաջորդ օրունան դասերը կը պատրաստէր : Եւ մերթ ընդ մերթ կը ձգէին իրենց աշխատութիւնները՝ բառ մը բռնելու համար իրարու, յոգհուլթիւն առնելով վայրկեան մը իրարու հայուածքի մէջ : Յետոյ յանկարծ երկուքին ալ միաքլէ կարծես կեղրոնախոյս դօրութենէ մը մզուած հետու հետու կը վախճէր հերկայէն մին գէպի անցեալը, միւսը գէպի տպագան :

Վահրամ ապագային կը մտածէր շարունակ. կրկին ու կրկին կը հաշուէր մաքին մէջ այն հինգ երկար տարիները զորս պիտի անցնէր տակաւին վարժարանին մէջ, իր մօրը ձեռքին աշխատութեամբը սարկելով, անոր աչքին լոյսին, արիւն քրտինքին գինը ուտելով սպառելով իր ուսանողի տպիկար կեանքին մէջ : Եթէ մէյ մը դըպրոցէն ելլէր սակայն . ինչէ՞ր չպիտի ընէր անոր համար, իր խեղճ մօրը համար, որ իր երեսունընչինգ տարեկան հասակին մէջ՝ վաստակի բեռին տակ կը քած՝ ծեր կ'երեւար արդէն : Եւ աչքերը գաղտուկ դրքին վրայէն վեր առնելով կը հայէր անոր այն դարովազութ խանդաղատանքի անճառ արտայայտումովը, զոր զաւակ մը մօրը համար միայն կրնայ զգալ աշխարհի վրայ :

Կաղին տկար ցոլքերուն տակ՝ աւելի հիհար, աւելի հիւժեալ կ'երեւար ան իրեն . աչքերուն կոպերէն խորունկ դիժ մը սկսելով իր սև սև խոշոր արտեանունքներէն ինկած թելի մը պէս այտերն ի վար կ'երկննար . մազերուն մէջ անդ տեղ ճերմակներ ցանցնուած էին . մամի պէս

հալած մատներուն մէջ ասեղը կը դողար, և թեւը անցուցած ատեն լոյսին կը մօտենար, կը մօտենար իբր թէ իր աչքերուն լոյսը հատած սպառած ըլլար:

Խեղճ տղուն սիրտը ելած՝ երկու ձեռքերովը երեսը կը ծածկէր պահելու համար արցունքի կաթիլները, որոնք հոգիին խորունկէն բրթած, հալած կապարի հասերու պէս գրքին վրայ կ'իյնային անմուռնչ:

Մայրը այն պահուն անցեալին մէջ մոլորած իր երջանկութեան օրերը կը յիշէր, երբ ամուսինը ողջ էր սակաւին, երիտասարդութեան բոլոր հաճոյքները, բոլոր քաղցրութիւնները, զորս վայելած էր իր ամուսնական կեանքին մէջ, մեծ, անհասանում սիրոյ մը լուսեղէն միջնոլորտին մէջ ապրելով եօթը տարի շարունակ: Միտքը կուգար իր սիրած անձին հետ պատկուած օրը՝ եկեղեցին՝ լոյսերու, խունկերու և երգերու զգլխիչ արբեցութեան մէջ. յետոյ իր Վահրամիսն ծնած օրը, երբ իր էութենէն ծնած այդ հրեշտակը իր գիրկը սուեր էին. տարի մը ետքը անոր մկրտութիւնը. ժանեակներու, ժապաւէններու մէջ ծաղիկի մը պէս դեղածիծաղ այդ պէպէքը, որուն վարդի պէս այտերը գտակին նուրբ բնահզին տակէն կը խնդային իրեն. և կլորիկ գիրուկ բազուկները ձիւնաթոյր շրջազգեստին շղարշներուն մէջէն իրեն կը կարկառէր: Հիմակ կը դառնար կը նայէր նորէն անոր վտիտ դէմքին, որուն արեան պակասութենէն քաշուած տմոյն մորթը կզակներուն կը փակչէր, շրթները ցամքած, հիւանդոտ զգաստութիւն մը կ'արտայայտէին. աչքերը միայն, սուր սև աչքեր, կը կենդանացնէին այդ տասներեք տարեկան տղուն դէմքը, որ փթթկէ առաջ կը խանձէր անշուշտ սնունդի, պօսանքի և զուարթութեան պակասութենէն: Ճիշդ իր հօրը դէմքն էր, անոր խելացի և անուշ կերպարանքը, անոր

Թրթուուն, զգայուն շեշտն ունէր ձայնը, և իր զաւակին վրայ կը գտնէր դժբաղդ մայրը վերակենդանացումը այն ամէն հրապոյրներուն, զորս տարեր թաղեր էր ամուսինը գերեզմանին պաղ քարին տակ :

Խեղճ կին . իր սիրելիին մահուան վրայ ազատօրէն լալու տխուր սփոփանքն ալ չէր ունեցած : Պզտիկ սուգ մը կրցած էր պահել, աղքատի սուգ մը : Անոր հիւանդութիւնը աւեր տարեր էր իր խնայողութիւնները, և եօթը տարեկան զաւակին հետ միա մինակ մնալով աշխարհի վրայ, ստիպուած էր մէկ կողմէն ժպտիլ անոր երեսին, խաղալ անոր հետ, եւ միւս կողմէն ձեռք առնել այն միջոցները որով կարելի ըլլայ պէտք եղած դաստիարակութիւնը տալ անոր և պատուաւոր կերպով պահել իր տունը : Մէկուն չը դիմեց . իր սիրտը մէկուն չը բացաւ . բոլոր ոյժը ժողուեց ու կար կարող եղաւ :

Կար կը կարէր, նուրբ կարեր . առատւո՛րն է մինչև իրիկուն, դիշերներն ալ աշխատելով հաղիւ Տ զրշ . օրական կը շահէր :

Օրթագիւղ խեղճ թաղի մը մէջ կը բնակէին : Տղան կեդրոնական վարժարանը ընդունուած էր ձրի . 80 զրուշ շոշենաւի և ցորեկուան ուտելիքի ծախք կը վճարէր, մնացած դումարով կը հողացուէին իրենց ուտեստի, հագուստի բոլոր պէտքերը : Երբեմն ալ շաբաթներով գործ չէր գտնուէր . այն ատեն արանց շապիկներ կ'արդկէր, և այսպէս խեղճ ու կրակ կ'ապրէին եօթը տարիէ ի վեր :

Իր չքաւորութեան և տառապանքներուն գաղտնիքը մէկը չէր դիտեր սակայն . դպրոցին մէջ կոկիկ հագուած մաքուր սղայ մըն էր Վահրամ, միշտ փայլուն կօշիկներով, նոր գուլպաներով, ու աղքատ սղոց վաղահաս արթնութեամբը զգալով թէ ի՞նչ կ'արժէին անոնք իր մօրը, կը դողար որ մեղանի արատ մը, կամ ցեխի բսօր մը

չը ցատկէ վրան : Փոխադարձաբար մայրն ալ տեսնելով
տղուն իր վրային գլխուն համար ունեցած խնամքը , կը
մաշէր որ չէր կրնար ձեռք մը աղուոր դգեստ շինել տալ
անոր : Ու մէկուն չը կրնալով վատահիլ իր անձկութիւն-
ները , որոնք ա՛լ չը սղմելով սրտին մէջ դուրս կը պուծ-
կային , իր ասեղին հետ կը խօսէր , այդ պղտիկ դործուն-
եայ ասեղին , որուն կը պարտէր ամէն բան , զոր բարե-
կամի մը պէս կը սիրէր , և որ կը բղիտէր , կ'արիւնոտէր
իր մատները յուզմունքի վայրկեաններուն մէջ , կարծես
այդ Ֆիդիքական ցաւով մուցնել ուզելով անոր ներքին
ցաւը , կսկիծը իր անդործադրելի մնացած բաղձանքնե-
րուն :

Խեղճ կնոջ հաստատ մտածումն էր աւելի դրամ շա-
հիլ . ի՞նչ փախաքներ ունէր Վահրամին համար . բայց
որչափ ալ աշխատէր , բան մը չէր կրնար աւելցնել . ի՞նչ
ընէր , ի՞նչ ընէր . . . :

— Եթէ մաքինայ մը ունենայի . . . , զոչեց յանկարծ
բարձր ձայնով ինքն իր հարցման պատասխանելով :

Վահրամ աչքը վեր առաւ . մօրը նայեցաւ , յետոյ
նորէն դլուխը կախեց անխօսուկ : Եթէ մեքենայ մը ու-
նենար , անշուշտ այնքան չէր յողներ , աչքերը այնքան
չէին տկարանար և մատները չէին ծակծկեր : Ի՞նչ ընէր
մօրը մեքենայ մը գանելու համար . . . :

Երկար ասեմէ ի վեր բոլորովին փոխուած էր Վահ-
րամ . ա՛լ առջի մտքրատէր , խնամոտ տղան չէր : Առ-
տունները լուսցածին պէս փողոց կ'իյնար . և իրիկունները
մութի կոխածէն առաջ դռնէն ներս չէր մտնէր : Ամառը
փոշիներու մէջ թաթխուած , յողնած , քրտնած , ձմեռը
մինչև կէս մէջքը ցեխերու մէջ փաթթուած , ձեռքերը ,
ոտքերը ցուրտէն սառած , կօշիկները ջուրերու մէջ տուն
կուգար : Ա՛լ դիշերները կամանչ սեղանին առջև չէր նրս-

տէր իրեն հետ, ու կերակուրին տակ՝ քունը աչքէն կը վազէր : Շատ անգամ եկածին պէս անկողնին վրայ կ'իյնար առանց բերանը պատառ մը բան դնելու : Անդձ մօրը սիրտը փօրը կը հասնէր . ո՞ւր կ'երթար այնչափ կանուխ և ինչո՞ւ ուշ կը դառնար : Ի դուր կը ջանար աղան հարցուփորձ ընել, միշտ անորոշ պատասխաններ կ'ստանար . — Իպրոցին ժամանակացոյցը փոխուեցաւ . — Ի՞նչ ընեմ, մամա, շուքնաւին չեմ համիր կոր :

Տիկին Աննիկ կը հասկնար որ տխուր բան մը մտած էր աղուն կեանքին մէջ, զոր յամառաբար իրմէ կը ծածկէր : Առաջները յուսաց որ մանկական քմահաճոյք մըն է, կ'անցնի, բայց վեց ամիսէ ի վեր կը շարունակէր այս կեանքի անկանոն ընթացքը առանց իր աղաչանքներուն զիջում մը, իրեն համար մէկ օր մը բացառութիւն ընելու . և իր աղուն զգալապէս տկարանալը նշմարելով, սրտին կակիծէն յանդիմանութիւններ կ'ուզէր անոր : Յետոյ կը զղջար . Վասն զի միշտ առջի խանդակաթ, ըզգայուն դաւակն էր Վահրամ, միևնոյն հուածութիւնները, միևնոյն անուշ սիրտը ունէր իրեն համար, և զայն վիրաւորել չէր ուզեր ամենեւին . բայց կրնա՞ր անտարբեր մնալ անոր ապրելու կերպին :

Անգամ մը որ խտախ կը հարցաքննէր զայն նորէն, աղան սկսաւ լալ : Ուրիշ անգամ մը վերջապէս բերնէն փախցուց թէ կաղանդին ամէն բան պիտի իմանար :

Այն ատեն որոշեց որ սպասէ . զիտէր իր աղուն հաստատամիտ բնաւորութիւնը . ճիշդ հայրն էր : Տարեզլխուն քանի մը օր միայն մնացեր էր, և այդ օրերուն մէջ ամէնէն աւելի մտատանջութիւններ կրեց . իրա՞ւ, բա՞ն մը կար ուրեմն :

Սակայն եթէ օր մը անոր ետեւէն երթար Տիկին Աննիկ, պիտի տեսնէր որ փոխանակ Օրթաղիւղի շուքնաւը

մտնելու, ցամաքի ճամբան կը բռնէր Վահրամ, և ոտքով կ'երթար մինչև Կեդրոնական վարժարան, այդ աւելորդ ծախքը խնայելու համար: Ձիւնին, բուքին կը քալէր ու կը քալէր ձեռքերը վերարկուն դրպաններուն խորը՝ դէմքը կիսովի օձիքին մէջ պահած՝ մերթ ընդ մերթ կանդ առնելով ճամբուն եզերքը՝ շունչ առնելու համար, ու հորէն կը շարունակէր իր տաժանելի ուղևորութիւնը սաւոյցի կտորուանքէն վար սահելով ինչպիսի շաա անդամ, երբ իր ոտքերը ա՛յլ չէին բռներ:

Երբեմն բուքը այնքան թանձր ու ստատիկ կ'ըլլար որ կոխած տեղը չէր տեսներ. այն պահուն կը փորձուէր անկէ անցնող թրանսլայի մը մէջ նետուիլ, բայց հզօր խորհուրդ մը այդ տկար աղան կը կեցնէր: Ի՞նչ էր այդ դաւանիքը, մարդ չը գիտէր. բայց գերազանց բան մը ըլլալու էր. վասն զի անոր ոյժովը այդ պղտիկ աղան մեծ բնութեան հետ կը մաքառէր:

Միւնտյն բանն էր ցերեկուան ճաշի տառն. ա՛յլ ոչ մրդաւաճառին, ոչ նպարավաճառին խանութէն ներս կը մտնէր իր տասը փարանոց հացին հետ թիչ մը բնկայզ կամ պանիր գնելու համար: Կը հայէր կարմրուկ փայլուն խնձորներուն, խոշոր հարինջներուն, կլորիկ սերկելններուն, լեփ լեցուն հոլուերուն, և իր մանկական աւտոջ ախորժակին մէջ՝ բերնին թուքերը կուլ տալով կը հեռանար մինակ անկիւն մը իր ցամաք հացի կտորը կրծելու:

Կաղանդին առտուն կանուխ երբ Տիկին Աննիկ անկողինէն ելաւ, Վահրամ կը քնանար տակաւին (սուտքուն եղած ապահովապէս): Գորովալից մայրը ոտքին մասներուն վրայ կոխելով՝ կամաց կամաց քովի սենեակը անցաւ իր սովորական ժողվրտութիւնը ընելու, ուր կահանչ ծածկոցով սեղանին վրայ կը կենային առջի իրիկ-

ուրնէ մնացած պտուղներուն աւելցուքները պղտիկ պըղտիկ պնակներու մէջ : Յանկարծ բան մը դարկաւ աչքին . սեղանին մէջտեղը դրուած կարի մեքենայ մըն էր նոր նոր , փայլուն ընկուզենիէ կափարիչով . վրան ալ թուղթ մը փակցուցեր էին : Մօտէն նայեցաւ , իր տղուն գիրն էր , ու կարդաց .

Նուէր կաղանդի մամայիս համար

Միւսոյն վայրկեանին կամացուկ մը սենեակին դուռը բացուեցաւ , ու եկաւ իր թևերուն մէջ ինկաւ Վահրամ . «Մի՛ սրդողիր , մամա , կ'ըսէր , շոգենաւի համար տուած դրամովդ առի . անոր համար իրիկունները ուշ կը մնայի . . . : » Ու համբոյրներով կը ծածկէր իր մայրը սրբելով անոր արցունքները , որք այտերն ի վար կը վաղէին :

Մասիս

ՏԿՆ. Զ. Է. ԱՍԱՏՈՒՐ

Տիկին Զապէլ Հր. Ասատուր (Սիպիլ) . Ժամանակակից գրագիտու հին արդի հայ մտտենագրութեան ամէնէն փայլուն ներկայացուցիչներէն մին է և մեր իգական սեռին ամէնէն մեծ բանաստեղծը , որ միւսոյն ժամանակ հայ գրականութեան մէջ հեղինակաւոր դիրք մը կը զբաւէ իր անժխտելի տաղանդովը :

Բանաստեղծ-կինը ունի գողտրիկ քերթուածներ փափուկ ու հմայիչ լեզուաւ մ'արտայայտուած , զգայուն ու ներշնչուած տաղեր , զորս ունի զաղտնիքը ա՛յնքան ներդաշնակօրէն հիւսելու . միւսոյն շնորհը ու հմայքը դրած է նաև օտար բազմամիւ բանաստեղծական էջերու թարգմանութեանց մէջ , որոնք գեղեցկագիտօրէն հայերէնի վերածած է պահելով բնագրին իսկատիպ յատկութիւնները :

Իրազէտ-կինը արժանաւորապէս կը ներկայանայ , իբր գրչի անխոնջ վաստակաւոր մը , հայ գրականութեան առջև իր վիպական երկերովը ինչպէս նաև ազգային ու ընկերական նիւթերու վրայ գրած հմտալից յօդուածներովը :

Հեղինակ-կինը աշխարհաբար լեզուի զարգացման ամէնէն մեծ օժան-

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Գուցէ իմ հեծեծանք,
հառաչք և մրրմունջ
Շատերի համար կը հնչուին ունայն .
Տրգեղ դաշնակիներ
և կամ սառն, անշունչ
Արբախի խուչ թոթուանք,
կեղծ հրնչիւն միայն .
Ա՛խ, անպին մա՛յրիկ, մա՛յր իմ հաղելի,
Սոցուած, յօշատուած հողիս վիրաւոր
Քեզ համար, մա՛յր իմ,
վաղուց է յայտնի—
Անյոյս, տառապած հողիս մենաւոր :
Ու քեզ են յայտնի տանջանքը որդուդ,
Սրիւն-անցունքըս ծածուկ ու դաղանի .
Քո ջերմ, կաթողին
սիրած խեղճ որդուդ,
Կեանքի մրրըրիով զարնուած քո արծուի :

դակներէն մին կը համարուի իր պատրաստած դասագրքերովը, ուրկէ միշտ պիտի օգտուի նորահաս ամէն հայ սերունդ :

Մանկավարժական սկզբունքներով պատրաստուած դասագրքերու շարք կը կազմեն՝

Թանգարան . երկու հատոր, կը պարունակէ ընտրելագոյն հեղինակաց գործերէ քաղուած հատուածներ որք բացատրուած ու լեզուի և գրականութեան օրէնքներով վերլուծուած են :

Քերականութիւն արդի աշխարհաբարի . երեք հատորներու բաժնուած, ուր արդի լեզուին քերականական բոլոր կանոնները ձեռընհասօրէն կ'աւանդուին կոկիկ ու դիւրահասկնալի ոճով ու բազմաթիւ հրահանգներով :

Հեղինակուհին սոյն դասագրքերը յօրինած է աշխատակցութեամբ իւր ամուսնոյն՝ Հրանտ է.Ք. Ասատուրի :

Դո՛ւ ես միշտ վէրքիս ցաւը ամօքել ,
Դո՛ւ ես միշտ լայել

Չարդըւած կեանքս :

Քո ջերմ , հարադաս

դըրկունն եմ թաղել

Իմ դարդոտ , անբախտ , իմ չոր գլուխըս :

Հիմա՛ խեղճ սիրտս բերում եմ քեզ մօտ ,

Սուրբ ոտներիդ տակ ,

ու խոր վէրքերիս

Վառ մըրմուռները—երգերըս արիւնտա ,

Քեզ , որպէս հըւէր ,

մայր իմ , հաղելի՛ս ,

Նայիր դու մէկ-մէ՛կ—

իմ սրտից բղխած

Այս պրտուղներին , հոգի մըտերիմ .—

Քո վե՛ն արցունքով ,

արիւնով աւուզւած .—

Քեզ հարադաս են ,

քեզ խորթ չեն , մա՛յր իմ :

Ձէ՞ որ իմ մաքու՛ր , իմ քընքուչ հոգին

Քո սուրբ , քո վըսեմ հոգուցն է ծորել .

Ձէ՞ որ դու դըրիր իմ մէջ քո հոգին

եւ բարին սիրել ու ազնիւ լինել .

Դո՛ւ վառիր իմ մէջ հուրը երկնային—

Գեղեցկի ծարաւ , անհունի ձրգտում .

Կըռիւ շարի դէմ ու ընդդէմ սուտին ,

Ապրել ու տանջուել ուրիշի սիրուն :

Դու լըցրիր իմ մէջ

ծովի չափ մեծ սէր—

Այրւել ու լոյս տալ ամբոխի համար ,

Ընկնել փոթորկի , հըրաբուխի մէջ

Ամբոխի համար , աշխարհի համար . . .

ԾԱՂԻԿՆԵՐ, ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿՆԵՐ

(Լ Է Ք Ե Ա Յ)


Սա անաղին բարձրութենէն վար՝ ուրկէ անցնող մարդը կրիայի մը շարժող խեղիին կը նմանի ու պարապ անդունդ մը իր լայն երախը բացած կարծես կը յօրանջէ՝ այս հսկայ ապաւաճներուն տակէն Եփրատն է որ վար կուգայ . ալիքները տափակ , մաշած քարերուն կը զարնեն խուշ շառաչմամբ , փրփուրներ , ճերմակ պղպղջակներ ցատքեցնելով , անբնակ խոպան լնութիւնը իր աւանդական հոգով ու քարովը նոյնը մնացեր է . ասղին անդին օձի շապիկներ թափթփած են ու սարդի երկայն թելեր կ'երերան մեծ պարսպէն դարվար . վա՛րը , գետը տմոյն , մառախլապատ , իր տիտան օձի հասակովը պառկած կ'երթայ երկայն , գլուխը կուտայ հոնիզոնին վրայ ու կը ծռի կը կորսուի . բարձրէն անձնող թռչունները փետուրներ վար կը ձգեն ու դարձդարձիկ , ոլործուն պտոյտներով վար կ'իջնեն , կամ քարի կտոր մը յանկարծ մողէզի մը վազքէն փրթելով վար կը վազէ դէպի գետը , վարերը , խորունկը թնդացնելով : Դէմը , հորիզոնին վրայ լեռներ կան խիտ անտառներով ծածկուած որոնց թաւ կանամը հոծ ստուերներու հետ կը խառնուի ու կիսատ մթութիւն մը կուտայ , և այդ ծառերուն մէջ պահուլաւած հիւղակները ճիւղակ երդիկներնին կը ցուցնեն ասղին անդին կիսով թաւուտի մէջ թաթխուած : Այս պակուցիչ բարձրութենէն վար ուր մահուան անդունդը կոյր աչքով մը երկինքն ի վեր կը նայի և ուր արեւին լոյսը բեկբեկելով ճիրանիի բարակ շառուեղները կը ցանցնէ , ուր Եփրատն իր անյատակ կանակին վրայէն ալիքներ կը ձգէ . . . այս ապաւաճներու բարձրութենէն՝ մարդ մը ինքզինք վար նետած է :

Բ.

Երեք որ էր որ կորսուեր էր . զաւակներն ու կինը յուսահատ փնտրուտուքով ամէն տեղ , ամէնէն անսպասելի ու ամէնէն ծածուկ տեղերը փնտուեցին ու չգտան . զիչերը իր անկողնին մէջէն ա՛յնչափ կամայուկ , ոտքերուն ծայրը կոխելով , դայած էր ո՛չ զաւակները և ո՛չ իսկ կինը կրցած էին դիտնալ , խենդեցե՞ր էր արդեօք : Տարօրինակ , անհասկնելի հով մը առած տարած էր անի : Չգտան :

Վերջին ապաւենի մը յայտով , յուսահատի համակերպութեամբ ուզեցին ապաւաճներուն մէջ փնտուել որոնց վրայ աշխանիին ոտքը հաղիւ կը կայնի և մարդը գործ չունի արդէն . մայրը սպասեց ու երկու պզտիկները փրնուելու եղան : Սոսկո՛ւմ , ցից քարի մը ծայրը , ոտքերը դատարկութենէն կախ , ուռած աչքերով մարդ մը նշատած անդունդն ի վար կը դիտէ . քստմնելի վտանդին դիտակյութիւնը զինքը չի խռովեր : Վայրի բաղերուն թախքը կը դիտէ որոնք կը թռին , հաղիւ երեւցող սպիտակ գնդակներ կ'ըլլան ու կ'աներեւութանան . գետին երկայնքը , հաս հոն կանանչ մարդահասակ եղէգները կը տատանին լսին ու ահարկու հրաւերի մը պէս . զի՞նքը կը կանչեն արդեօք . կը նայի , միշտ անթարթ վարը կը նայի , ու կարծես չի լսեր աղերսող ձայները իր դաւիլահերուն , որ հեռուն կեցած , զարհուրած դիմադծերով , ձեռքով զինքը կը կանչեն : Անդունդն արդեօք իր թո՛ւլքն ունեցաւ , թէ իր գրկին մէջ քնացող ահարկու հանդարտութիւնը ցուցուց որաւ գլուխը դնողը յաւիտեան կը քնանայ անհունութեան քունը քաշելով , ուր ա՛յ մարդ պիտի չի դայ արթնցնելու իր պառկած տեղէն և ուր ա՛յ աշխարհի հովերը պիտի չփնչեն իր սրտէն դարովար աշնան

տխուր կակիծներ գալարիլ տալով . դետը մեզմ' օրօրներ
պիտի ըսէ իր ալեակներուն բերնովը ու կանանչ գորտն-
բուրդերը հանդարտ ստատանու մներով ներդաշնակութիւն
մըն ալ անոնք պիտի ըլլան ու երգեր պիտի ըսեն , մահ-
ուան անո՛ւշ երգեր : Յաւերն ալ իր հետ մէկտեղ աչք
պիտի խփեն :



Ի՞նչ թնդիւն է տա որ վարէն կուգայ խո՛ւլ ու խո-
րունկ՝ քարայրէ մը եկող , ջաղայքի ջուրերուն հանած
աղմուկին նման զոր ժայռերը հանդիսաւոր ու վսեմ
ձայնով մը կ'եղանակաւորեն . ահա լայն ու սազածուն
ստատանում մը տեղի կ'ունենայ ջուրերուն մէջ . դեռին
ճողփիւնը կը թնդայ դինովի դանդաշիւնով ու քարե-
րուն , ժայռերուն կը դարնուի , սրիներ , վայրի բազեր
արդեօք ինչո՞ւ վարը ահարեկ , արագ արագ ճախրանքով
ելեւէջ կ'ընեն ու խռոված վեր կը թռին ճշկով . բայց
դետը նորէն իր հանդարտ վէտվէտու մներուն կծիկը կը
քակէ ու դիմացի կանանչ կաղնիներու մէջէն կը սողայ ,
քնանալ կ'երթայ անտառն ի վար , լեռներն ի վար : Հե-
ռուն ծառերը նորէն լռին էրենց տեղը անշարժ կ'օգտակեն
ու հողէ խրճիթներն այդ ստուերներուն տակ մինաւոր ,
անխռով երազանքի մը երանութեան մէջ կը կենան կը
կենան , ու արեւը անոնց ճերմակ հողէ պատերն ու
տանիքը կը փայլեցնէ , մինչդեռ դամբա մը՝ իրրե թափա-
ռական մենակեաց՝ այդ վայրերուն մէջ կը հաջէ խուզոտ
հաջիւնով իր ձայնը սաղարթախիտ ծառերէն ներս հըն-
չեցնելով :

Ո՛ւր դնաց յանդուգն մարդը որ քիչ մը առաջ քարին
վրայ նստած , ոտքերը անհունութենէ մը դարվար կը
կախէր՝ հսկայական սլարապը ծաղրելով . խե՛նդ մըն էր

արդեօք թէ քարերուն մէջ ապրող ճին մը . չէ՛ , ահա զոյգ մը որբեր կաքաւի ձագերու պէս որ մինակ են մնացեր քարերուն վրայ :

Ճը՛ռ , ճը՛ռ , ծղրիթները իրենց երգը կ'երգեն , օղին մէջ վայրի թռչուններն ալ սո՛ւր սո՛ւր ճիչեր կը հանեն : Հուտա երկու պղտիկներ կուլան , դառնապէս կուլան , ու անցնող բազէին , փչող թեթև հովին հարցումներ կ'ընեն , վար դացողը ալ չի՞ դառնար :

— Ըսէ՛ք , ո՞վ քարեր , հայրերնիս ո՞ւր գնաց , հո՛ս , քիչ մը առաջ քարին վրայ նստեր էր , զինքը կը տեսնայինք որ վար կը նայէր , ո՞վ կանչեց վարէն զինքը , դուք չի՞ տեսաք , պղտի՛կ ծղօտներ , որ իրեն քով կամաց մը կը շարժէիք , ձեզի բան մը չըսած մեզի ըսելու , բան մը չապասպրե՞ց :

Թառող թռչունը թուելու պահուն փետուրները կը հաւքէ , դուխը քիչ մը առաջ կը ծռէ , թեւերը կիսատ մը վար կը կախէ ու վերջին թափով մը թեւ կուտայ ու կը սլանայ :

Կաղնայի դօսացած ցօղունները շարժեցան իրենց տեղը՝ ծռելով ու շտկելով անդադար , ու պղտիկները իրենց հարցումին դադանի պատասխանը հասկցան դուցէ այդ թեթև դողդղացումները . իրարու պլլուեցան վարը հայրիկը փնտռել կ'երթային :

Արեւը այդ քարերը նորէն կը լուսաւորէ մաքուր , աղուոր ճառագայթներով , իր վճիտ ոլայծառութիւնը նորէն կ'ողողէ առատ լոյսի հեղեղով այդ վայրերը՝ որոնք դժբաղդ հօր մը ու մանուկներու կառափնատը եղան . ու վայրի թթուկիչներու , քարէ-բանջարներու քով հիմայ կարմիր ծաղիկներ կը բուսնին , կարմի՛ր՝ արիւնի՛ գոյն , որոնք սիւքի մը թեթև շունչովը կը դողդղան և շուքերու մէջ , քարերու տակ կ'աճին , վախկո՛տ , գլխիկո՛ր՝ որբերու պէս :

Այդ վիճը հիմայ մահուան անդուզն է որ սարսուռ
կը պատցնէ ճամբորդին երակներէն ներս, ուր նոյն իսկ
ուլերը կը վախնան կճղակ դնել ու արածիլ անոնց վրայ •
մինակ երկայն շարոց հարսնետու մըջիւններ՝ սե կամ
կարմիր դիծեր կ'երկնցնեն՝ հեւքոտ ելեւ էջով իջնելով ու
ելլելով անդադար՝ որոնք վարը ո՞վ գիտէ ո՛ւր բոյն
ծակած են : Ոչ ոք կը մտանայ այդ տեղերուն : Գիշեր-
ներուն լուսնկան կ'ելլէ միայնակ՝ լա՛ին ու ախուր, կու-
գայ իր խուզարկու նայուածքով կ'անցնի այդ տեղերէն,
լուսաւորելով հիւանդ լոյսով մը նոյն վայրի քարերը
որոնք ա՛լ աւելի խռովալի կը դառնան կէս լոյս թեւա-
տարած ստուերներու տակ • վարէն գետը կ'անցնի խշր-
տալով՝ մէկ քանի արծաթի շողերէ փալիլո՛ւն, օձի լեզ-
ուովը կը խածնէ իր ալիքներովը վար եկած քարերն ու
ախուռքը ծլած ջրի մամուռները, և ականջ կուտայ գոր-
անրուն բիւրաւոր կրկուքներուն որ կը պոռան՝ կը պոռա՛ն
մութին մէջ, գե՛տը, մուցած թէ իր աւաղները խաւ-
շարեցին դժբաղդ հօր ու գաւակներու դիակներուն վրայ
և հեռուները քշեցին : Ու անդունդը բեւիար խափշիկ
կնոջ մը սե ուրուականովը՝ անդիտակ թէ մարդիկ մուռ-
րեցուց ու կուլ աուաւ, իր պչրոտ շրթունքներով կար-
ծես կը ժպտի դեռ լուսնկային, որ վերը մաքուր կապոյ-
տին մէջէն իրեն կը նայի :

Ծաղիկ, հանդէս

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՄԻՆԱՐ, ԲԼԲՈՒԼ...

Մի՛ լար, բըլբո՛ւլ, քեզ մի՛ տանջիր,
Որ փաթորիկն անիրաւ

Վարդըդ սիրուն, վարդըդ կարմիր
Թփից պոկե՛ց ու տարա՛ւ...

Կանցնեն օրեր... Կըգայ կրկին
Մի նո՛ր դարուն վարդաբեր.

Եւ մուացած քո վիշտը հին,
Նորից կ'երգես վարդին սէր:

Բայց վա՛յ կեանքի այն երգչին,
Որ վաղածամ սրբացած,

Իր սիրելի, խօսուն վարդին
Ցուրտ հողին է նա յանձնած...

Երգչի համար դարուն չի՛ գայ,
Ո՛չ նա նոր վարդ կը սիրէ.

Նա պէտք է լայ, պէտք է սըգայ,
Մինչ յաւիտեան կը լռէ...

Հայ Գրողներ

Ա.Ղ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Աղեփաանդ Ծառուբան. Ռուսահայ քնարերգակ բանաստեղծ, ունի բազմաթիւ գողտրիկ քերթուածներ որոնք իսկատիպ դրոշմ կը կրեն, ներդաշնակ ու գունազեղ ոճով մ'արտայայտուած: Տաղանդաւոր բանաստեղծը յաջողապէս Թարգմանած է հայերէնի ուրա հեղինակներէն Տուրգենևի և Պուշկինի ընտրագոյն գործերը և փոխադարձաբար ուսերէնի վերածած է Գ. Սունդուկեանի «Պէպօ» հռչակաւոր կատակերգութիւնը:

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

1898 Հոկտ. 26ին՝ պիտի այցելէի Օշականի Եկեղեցին՝ Ս. Մեսրոպի դամբարանովը կրկնակի նուիրականացած այդ սրբավայրը : Երկու օր առաջ սիրաստ արովման մէջ էր միամիտ ու անպայման երկիւղածութենէ մի բռնուած գերադոյն վարժապետին սաքը պիտի երթայի :— Ճամբուն վրայ յանդդատից փոխադրուած հեռաւոր թուականի մը այն սրտաձմիկ ժամուն՝ ուր խաչանիչ շողիւնով արտափայլող դադաղ մը կը տարուէր՝ աշակերանուրու սգաւոր խումբի մը ու աշխարհական ամբոխի մը երգերովն ու հեծկատուքներովը, երեակայութիւնս արխուր վայրերուն ամայութիւնը սգադարձեց մեռելական հանդէսի մը դիւթական պատկերովը՝ որ պարիկներու հողմաձայն թևերուն վրայ կը հեռուէր սուրացող կառքիս : Բայց այդ անուշ պատրանքը լուծուած էր, երբ կառքէն իջած՝ Օշականի քարաբլուրէն վեր կ'ելլէի մտախոն ու սրտաթունդ :

Գիւղի եկեղեցին հասած՝ ներս մտայ ստորերկեայ փոքրիկ մատուռէն՝ որուն աջակողմը կը տեսնուէր զած ու անշուք դամբարանը, անդիմադրելի այլայլում մը խառնեց զիս, չէի ուզեր հաւատալ թէ անոր ներքե փոշի դարձած ոսկորներ կենային. ինծի համար Մեսրոպն՝ ապրող ու դրապէս ներշնչող հոգի մըն էր. սի մը հողի տակ ինչպէս կրնային թաղել կենդանի դիրը : Անթարդմանելի հակասութեամբ մը ընդվզած բոլոր էութիւնս՝ խուլ քրթմնջիւն մը կը հանէր իր խորերէն. անմահներու ճակատադիրը ծաղրելու համար սարքուած կատակ մը կը թուէր ինծի այդ մարմարիտնէ կախարիչը :

— Հարկ էր սակայն մօտենալ անոր, ծնրադրել ձոյլ հիացումի մը մէջ, ու համբոյրի տաք շրթունքներով

քարի մը սլաղ երակներուն մէջէն ծծել հողեկան կայծեր՝ երկայն դարերով իրենց կրակին անշէջ պահող հուրահան հշխարներէն :

Յետոյ սեւեռուած անյնքան մեղմ մտամխտումով որ ուշակորոյս հուազումի մը կրնար տանիլ զիս՝ ցնորակոծ դեղեւումի մը հեշտ վայրկեանները զգացի : Մինչև այն աստէն, հողիներու հետ ապրիլ սիրեցի, հիմա ողի մը տեսնելու գաղտնարը կը ժպատէր ինձի . չեմ դիտեր թէ ի՞նչ տեսակ անատոր ունայնացումի թաշուկ մը՝ կապոյտ շրացումով մը կը պատէր հողիս, ու ես երջանիկ պիտի ըլլայի թէ ամէն բան լուէր իմ մէջ ու շուրջս, անմիտ հպարտութեանս հետ՝ որ արդէն կծկուած ու խորտակուած՝ խոնարհագոյն դեանի մը վրայ դամած էր զիս : Ա՛հ, այդ ցնորքը՝ դիտակցութեանս բոլոր տարիներուն հետ պիտի չուզէի փոխանակել : Պէտք չէր որ՝ երազի մը չսփի՝ բանդադուշանքն ալ մեր մտաւոր կեանքի մէկ պայմանն ըլլար : Ի զո՛ւր սպասեցի սակայն տղայ մարդկութեան թաքուն կողերուն մէջ սաղմնող ջրախափ մը հրաշալիքին . անողոք իրականութիւնը պատերու թանձրութեան ու քարին կարծրութեան վրայ կրթնած՝ հո՛ն կը մնար միշտ աչքիս առջև : — Զգայնական այդ վրդովումիս մէջ ու ակնզծ ու բոսիկ մանկութեանս դեղնած ու վեհերոս վայրկեանները ետ դարձած էին . Այրուրենի առաջին դասիս վիշտը կակիծի մը խայթովն արթնցած՝ անհուն տենչանքի մը փոխուած էր կուրծքիս տակ . ու եթէ Մեծ Վարդապետին ստուերապիծ ձեռքը տեսնէի գէթ՝ ոսկի տաւերով մազազաթի մը վրայ, կամ աննման Բանանայապետին զոհար գիրերով դարդարուած լանջապանակ տախտակը գէթ տեսնէի, առաջին ու անդիտակից շարժումս պիտի ըլլար անգամ մըն ալ ծնրադրել ու թախանձագին խնդրել իրմէ, — Աղուոր Ա. Բ. Գ. էդ դաս մը տուր ինձի :

Մասիս

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԻՆ ԱՌՋԵՒ

Գացի՞ք տեսնել Վ. Մախոխեան նկարահանողէսը :

Ի՞նչ հոգեսուեն համադամ անոնց համար՝ որոնց սիրաբար կը բարախէ վսեմին ու գեղեցկին ի տեսիլ : Եւ անոնց համար որ, երկրագունտիս այս կամ այն կէտին վրայ ծնած ու հոն մնալու դատապարտուած, կը բաղձան սակայն, իրենց հողւոյն բոլոր թափուլը, նոր երկինքներու կապոյտը կամ կապարը ողջունել, անձանօթ ափունքներու քովէն քերել անցնիլ, հիւսիսին մեռուս բնութեան մէջ, հարաւին լայնածիր ու գաղջ ունջերը թափառիլ, տեսնել, մեր առժամանակեայ բնակարանէն յաւիտեանս մեկնելէ առաջ, անոր բիւրազան բնավայրերը, դաշտ, լեռ, ձոր, ծով կամ աւազ, անոնց համար ի՞նչ անդուգական վայելք :

Երեկոները, աւաւօտաները, ցերեկները պէսպէս կլիմաներու . Տանդէի, Վիրգիլիոսի հայրենիքին ծովափունքները, իրիկնամուտին, կամ լուսնալուսին, հանդարտ, մեղմ, քնացող նշոյլներով, որ կը մրափեն մկանուէրներուն վրայ հեղ ծովուն, որուն հեռաստանը կը դուշակես որ կը խուսափի կը հալի անսահմանութեան ծոցին մէջ : Գետերը հիւսիսի գաւառներուն, ու անձայրածիր հորիզոնները՝ կարծես հսկայական պատապաղի մը արիւնտլը բոսորալառ : Անարդիլ ժայռերը՝ ուղիտէ ո՛րչափ դարերէ ի վեր կանդուն անդունդին մէջ կամ անոր եզերքը, անդադար խարազանուած փրփրերախ կոհակներէն՝ քրէիքուր մութ տխրաններու նման զոր դահիճին քնութը կը ձաղկէ : Լոյծ աղամանդներու շտապ փախուստը (sauve-qui-peut) լուսափաղփ երկինքի մը կրակ տարափին տակ : Ու Քանութին, ու կարողութիւն, ու Համլէդին բնագաւառներուն տխուր, տխուր

կղզիները, և մենաւոր խարակները մութ ու ցուրտ ծովե-
զերքներուն մօտ, ուրկէ անծայրափակ գորշ կանաչ
անդունդը իր բոլոր աղաղակները կը պուռայ, թխպա-
յորդ ալիքները գալարելով, անսահման սպառնալիքի մը
պէս որ խորերէն, վիհերէն, անեզրութենէն, չես գիտեր
ո՛ւրկէ՝ վրադ կը յարձակի, կը պաշարէ քեզի, կը մտնէ
քու մէջդ, դու նոր ոմն ժիլիադ, ու կը զգաս խորու-
թիւններուն գերեզմանի սարսուռ, ու կը կլլես ցուրտը
զոր անոնք կ'ապրին, ու կը մտնի, ու կը զոփաս անոնց
սառնեղէն դողովը: Եւ ինքզինքէդ դուրս ելած, մերթ
կը լսես սանձարձակ այդ կոհայներուն խորունկ, խո-
րունկ շառաչիւնը՝ սրամտած գանդառի մը կամ դու ող-
բի մը նման՝ որ կը բողբէ կամ կուլայ մարդկային ճա-
կատագրին վրայ, ու մերթ դռչիւնը կ'իմանաս ծովա-
ժայռերուն ստքը լղուրտով մկանունքներուն, այն կոյս
ժայռերուն՝ իրենց խորհրդաւոր արհաւիրքովը և մուսլ
վտանդներովն անմատչելի: Եւ նայուածքդ կը խորա-
սուզի այդ ապտտածներուն մէկ քանի պատառուած ք-
ներէն կապոյտ լոյծ գաշտին վրայ, որուն լեզակը ու
զովը կը զգաս որ հողիդ կը փայփայեն, ու կը յիշես
ասունօք, չես գիտեր ուր, ժամերով նստած ըլլալ նման-
օրինակ ախունքի մը վրայ՝ աչքդ յառած այդօրինակ
ծովու մը, սպասելով բանի մը, կամ մտցող մը յիշելով:
Իհ համայնապարփակ ձմեռները դանխական ունջե-
րուն կամ կովկասեան մարդերուն, որոնց մէջ մութիկը,
իր ձիւնածածուկ հիւզակին տակ թաղուած, երեկոյին,
ձանձրոյթի ու տառապանքի իր գոյութիւնը կը թան-
գուզէ, լռին, անմուռնչ, անասելի կերպով թախճագին,
ու ձեզի կը թուի թէ նախանձելով անոնց վրայ որ մըշ-
տնջենական քունը կը քնանան գիւղին ծայրի գետնին
տակ՝ զոր այժմ կը ծածկէ սառ սպիտակութիւնը, այդ
կրկին կափարիչը գոցուած մեռելներուն վրայ:

Ու կը տեսնես որ մարդը տարամերժօրէն բացակայ է այդ բոլոր կտաւներուն վրայ : Արուեստագէտին դեղ-դիրը չի թուիր շատ զբաղիլ անով : Բնութեան լայնածաւալ սէրն է որ տեղ չի թողուր ուրիշ բանի .

I love not man the less, but nature more.

Մախոխեան, անհերքելի կերպով, բաբախուն ու թրթռացող սիրտ մըն է . ու մենք շնորհակալ ենք երկտասարդ արուեստագէտին կրկին վայելքներուն համար զոր մեզի կ'ընծայէ, իր արուեստին արտադրութեանց և ցեղային պարծանքի մը վայելքը :

ԱՆՏԻՍ ԳՈՐԾԵՐ

Յ. ՍԵԹԵԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼԱՐԵԿԱՅԻ

Ժամու մը չափ հեռի Նոր դիւղէն, աջ կողմն շեղելով կը բարձրանանք բլրադաշտիկի մը գոգը, և ահա սխրալի տեսարանով մը կը բացուի Նարեկ դիւղը մեր աչաց առջև, որոյ մէկ կուշտը բարձիկի նման դիրքի վրայ շքեղ վսեմութեամբ իրեն կը կապէ նայողին բիրեբն ու սիրտը երկնաման տաճարն Նարեկայ վանից : Ոչ ևս կրնայ մարդ նայիլ դիւղին, գեղացւոյն, դեղեցկութեանց բնութեան, և բնակչաց աշխատութեամբ զեղեայ բարութեան : Աստեղատանց կամարէն հիանալի կ'երևի գրմբէթն Նարեկայ ու զանդակատունն . և ձայն զանդակա-

Յովհաննէս Սեբեան. Բանաստեղծ ու վիպագիր, ունի ներշնչուած տաղեր ու քերթուածներ, որոնք լոյս տեսած են Գրական զբօսանք, Յուզման ժամեր, երկու հատորներով :

Զանազան պարբերական թերթերու մէջ հրատարակած է վէպեր ու վիպակներ, որոնք կենդանի ու նկարագեղ ոճով մը լաւ սերտուած տիպարներ կը ներկայացնեն :

հար կոչնակին անլսելի կ'ընէ գեղի հօտաղներուն և մա-
ցառաց բիւլբիւլին ձայները, որ քաղցրախառն ներդաշ-
նակութեամբ կը լնուն այդ դրախտին բլուրը, և արծա-
գանդը կ'ուտան կ'առնուն շրջակայ լեռանց և երկնից
կամարաց հետ :

— Հո՛ղը սուրբ, ջուրը սուրբ, քարը սուրբ, խոտը սուրբ,
ծառը սուրբ, օդը սուրբ, արևը սուրբ, ամենայն ինչ
սուրբ է տեղւոյս, ամէնուն դպեր սուրբ Նարեկացւոյն
ձեռքը, ոտքը, շունչը, ձայնը, հառաչանքն, օրհնէնքը... :
Ափսո՛ս, սակայն, մարդն՝ որ կը բնակի այս տեղը՝ ինչո՞ւ
չե՞մ կրնար ըսել սուրբ... :

Այս հօյակապ տաճարին մէջ կը պահուին իբրև ան-
դին գանձ ոսկերք սրբազանից, Անանիայ Նարեկացին՝
քեռին և վարժապետ Ս. Գրիգորին, Յօհաննէս՝ «Նարե-
կաց մեծախոռ և բարձրապատիւ ուխտի վանական...
հարազատ, միաշունչ, միակրօն, համապատիւ, զուգա-
հաւան») եղբայր Ս. Գրիգորին, և ինքն Սուրբ Գրիգոր
ի դարանի յօրինեալ որմի, յետկոյս խորանի Սանդխատոյ
սրբուհւոյ՝ կուսի, Սանդուխտ և Գրիգոր, կո՛յս, կուսին
հովանի, Շաւ լշանայ Շուշանին գեղոյն շքադիր՝ գոհար
ծովային, վարդ բոսորային, ծաղկեալ Ռչտունին, Եր-
կուքն՝ երկու պատու խունի Աստուածարոյր՝ վէր մէկ
կրակի Քրիստոսի սիրոյն— . մէջ մէկ բուրվառի Հայաս-
տանեացց Եկեղեցւոյն— , վէր մէկ սեզանի . մէջ մէկ խո-
րանի . . .

Կը համբուրեմ քոյդ փոշին, կը համբուրեմ շիրիմդ .
կը համբուրեմ դամբարանդ, գերեզմանդ, քնարանդ, ուր
կը ննջես արթուն, ուր կը հսկես անլսելի, ուր քնարդ
Աստուածախօս կը նուազէ միշտ ի բարբառ կենդանի,
ուստի կը լսուի «Չայնդ հառաչանաց, հեծութեամբ սրբ-
ախդ, ողբ աղաղակիդ» . կը բուրէ՛ «ի Բուրվառէ կամացդ

պատու ըղձիցդ ճենճերոյ, եղեալ ի հուր թախտ ու թեան, անձինդ տոչորման» :

Ի՞նչ, երկիրը լցիր Աստուածախօսութեամբ. Ի՞նչ մեզ ուսուցիր Աստուծոյ հետ խօսելու լեզուն և հաճելի եղանակը. Ի՞նչ կը դանուխ ինչպէս առ Աստուած, նոյնպէս առ ամենայն դաս մարդկան. Ի՞նչ վշտացելոց մօտն ես, յուսաբեկելոց յոյս կը ցուցնես, մալորելոց՝ ճանապարհ. խաւարելոց՝ լոյս. կապելոց՝ արձակումն, տառապելոց՝ հանգիստ. խառովելոց՝ խաղաղութիւն, աղքատաց՝ աւետարան, հիւանդաց՝ աղաքինութիւն, ի ստուերս գիշերոյ նստողաց՝ ճառագայթ, թախտելոց՝ փոփանք . . . և այսպէս ամենայն չարեաց և կարեաց մարդկան կայրեկից, սպեղանի ու բալասան կ'ընծայես հրեղէն լեզուաւ Աղօթամատենիդ. Գերեզման չ'կայ քեզ համար : Ի՞նչ հոգիներու մէջ կը հանդէս, անմահ ի մահկանացուս Քո մեղադիրդ և դեղադիրդ ամէն հարուստնը, ամէն Աստուածապաշտի ծոցը կը դանուխ : Առանց Քո և ոչ հայուն սուրբ պատարազն ի բեմին մատչի. Ի՞նչ պիտի բանաս դունն Սրբութեան սրբութեանց. Ի՞նչ պիտի կարդաս նախապէս «Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից . . .» Ի՞նչ պիտի համարձակեցուցանես քահանային բերանը բանալու «Աղաչել և աղերսել արտասուայից հաւաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւն անեղծ և անստեղծ անժամանակ Հոգւոյն զթամի . . . :» (*)

Նարեկաց հիւսիսակողմն երթանք, ընթերցող, ահա պրակ մը ծառոց, վա՛յր երանաւէտ. ահա աղբիւր մը կը հոսի ապաւածն ի վար մշտահոս, պաղորակ, այլ քար կը դառնայ, այս ջուրն է սակայն յորմէ կը խմէր Ս. Նարեկացին, որոյ սիրտն երբեք քար չէր այլ կակուղ դալարի, ուռճացեալ սիրով Աստուածային և մարդկային : Կը տեսնե՞ս Աղօթատեղին սրբոյն, փորուած քարասենեակներ

(*) Ասկէ աւելի ազդու բացատրութիւն մը կարելի չէ գտնել Ս. Գր. Նարեկացւոյն հոգեզնայլ մատենին վսեմութիւնը շեշտելու համար :

ինն թուով և երկնայարկ . դժուարին է ելք այլ սիրո-
ղաց յոյժ դիւրին . սեղաններ , խաչեր , և լուսամուտ
միայն ունի : Այս տե՞ղ արդեօք ի ծունկս ինկած կը պաղա-
տէր առ «Արեգակն արդար , ճառագայթ օրհեալ . լուսոյ
կերպարան» . բայց հաւաստեալ աստ է աղօթած . . . «Կեն-
արարին յիշատակաւ միշտ ճենճերիմ . . . աներկմիտ յուսով
հաւատամ զնոյն ինքն տեսանել (զՔրիստոս) .» և կը տես-
նէ երջանիկ աչօք զէմմանուէլն ի գիրկս Տիրամօրն ի
ծո՞ւն Աղթամարայ , դիմացի չոր կղզւոյն վերայ . և լոյս
և ձայն Մօրն Աստուծոյ կը կոչէ , «Գրիգորիէ , ա՛ռ անձ-
կալիւղ , ա՛ռ Տէր» : — «Ա՛ռ Տէ՛ր» կրկնելով կը համբառ-
նայ մեր ի մարմնի հրեշտակն այս քարերէն , կ'անցնի
ծովու երեսէն , երգելով մեղրահամն մեղեդին «աչքն
ծով . . . ի ծով . . . ծիծաղախիտ . . . ծաւալանայր . . . յա-
ռաւօտուն . . .» կը համբուրէ զՏէր , և կը դառնայ Աստ-
ուածաշունչ հողւով իւր աղօթամատենին մէջ կը գրէ . . .
«Այն՝ զոր տեսի աչօք իսկ իմովք :»

—Սո՛ւրբ կղզի , սուրբ ծով , երգ , ամենասուրբ տե-
ղիք , համով հոտով լիք :

Համով-հոտով

Գ. ԵՊ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Պարեգին Եպիս. Սրուանձեսեանց (1840—1892) . Նախկին
Միաբան Վարագայ Վանուց ուր որ աշակերտեցաւ Խրիմեան Հայրիկին .
Հայ կղերական դասուն ամէնէն արժանաւոր ներկայացուցիչներէն մին
եղաւ . արձակագիր բանաստեղծ մը՝ հայրենի հողին վրայ սնած
ու անոր սուրբ յիշատակներէն ներշնչուած , հայրենասէր հոգի մը , ան-
վհատ աշխատող մը , խուզարկու ու հետաքրքիր միտք մը որ վարդա-
պետութեան ամբողջ շրջանը բոլորեց անդադար ճամբորդելով հայրենի
քնազաւառները , հաւաքելու համար ինչ որ կը վերաբերէր երկրին , ժո-
ղովրդեան բարուց ու վարուց , սովորութեանց պատմութեան , աւանդու-
թեանց , հնութեանց ու նորութեանց տեղագրութեան , անդիր դպրու-

Ն Ա Ճ Ի Ն

Տեսայ նոճի մը սրգաւոր

Կապոյտ ծովուն դէմ կանգնած
Թուխ տերեւներն՝ հողմոց շունչին,
Երգ մ'ունէին տըխրամած :

Եւ քաղցուենակ մ'ուրբելով
Իւր ոստերէն վեր կ'ելլէր՝
Կայլակելով իւր մըթին վըրայ
Անուշահոտ ժրպիաներ :

Իմ կեանքըս չե՞ս դուն, սե նոճի՛
Երկնաւայիկ և արտում,
Դու՛ քաղցուենակ՝ չե՞ս իմ հրեշտակն
Ոյր գիրկք կ'օրրեն վիշտս 'ի քուն :

Մասիս

Թ. ԹԵՐԶԵԱՆ

Թեան. տարիներով Թափառած է Հայաստանի ամէն խորշերը, գտնելու համար ազգային յիշատակարաններուն ամէնէն նուիրակները և անոնց սուրբ նշխարները, բեռագիր արձանագրութիւնները, սրբազան վայրերը, դամբարանները, աւերակները, կիսակործան եկեղեցիներն ու հին վանքերու բեկորները, ձևագիր մատեանները և անոնց յիշատակարանները որք անապառելի աղբիւրներ են Հայոց հին ու նոր Պատմութեան համար: Այս ամէնքը նկարագրած է իր զգայուն ու անսեթևեթ գրչովը և գանազան հատորներու մէջ ամփոփելով ի լոյս ընծայած է, որք են՝ Գրոց — Բրոց, Հնոց — Նորոց, Մանանայ, Թորոս Աղբար՝ երկու հատոր և Համով — Հոսով, որոնք առատ նիւթ կը մատակարարեն անոնց որք կ'ուզեն ճանչնալ և ուսումնասիրել այդ անդրջրհեղեղեան երկիրն ու ժողովուրդը :

Սրբազան հեղինակին երկասիրութիւնները ջերմ ընդունելութիւն գտան հայ բանասէրներէն և իզմիրլեան Գրական Մասնախումբը փութաց վարձատրել, առաջին կարգի մրցանակով, իր գլուխ գործոցը՝ Համով-

ՆՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆՔԵՂԸ

Անցաւ, եղբայր, մեր պարզամիտ մանկութիւն,
 է՛լ հրաշքների չենք հաւատում մենք վաղուց
 Եւ մեր աչքում չունին այլևս թովչութիւն,
 Աւանդ հասած աւասակներն հինաւուրց . . .

Բայց մի դրոյց, որ սրբութեան դրոշմով
 Գարէ ի դար հասել է մեզ պապերից
 Եւ իբրև գանձ հուիրական՝ խնամով
 Պահպանուել է մուայութեան աւերից,
 Միշտ սրբազան ակնածութեան մի զգացում
 Եւ վեհ խոհերը յարուցել է իմ հոգում:

Ամէն անգամ, երբ վերջալոյս ծիրանի
 Հանդչում է մեզմ՝ Արազածի կատարին
 Եւ, դերդ մանկան պայծառ աչեր դեղանի,
 Աստղերն երկնից փայլ են տալիս կամարին,

Հոսով երկր, Արտասահմանի մէջ ալ միեւնոյն ընդունելութիւնը գտաւ
 բոլոր հայերէնագէտ եւրոպացի բանասէրներէն. նոյն իսկ Տօտերս Ամե-
 րիկացի հայագէտ Տիկին մը՝ Միսիս Վընկէթ անգղիերէնի Թարգմանեց
 իր Մանանայ և Համով—Հոսով երկերը:

Թէև Սրուանձտեանց գրագէտ մը չէր բառին գեղեցկագիտական
 իմաստով, փան գի իր սպրած միջավայրը չէր կրցած մշակել այս ինք-
 նաբոյս հանճարին գրական ձիրքերը. արդէն ինքն իսկ կը խոստովանի
 զայս երբ կը գրէ Մանանայի յառաջարանին մէջ. «Ես գրականութեան
 այն շինական մշակը եմ որ ի վայրիս և ի մայրիս կը Թարթափի, լեռ-
 նային, դաշտային տուններ, ծաղիկներ և բոյսեր կը ժողվէ և կողովով
 կ'ածէ զոյն ի վաճառ ի հրապարակս քաղաքին, յորմէ առեալ քաղա-
 քացին արհեստիւ կը վերասնկէ զայն և կը դարմանէ ի պարտէզս և
 ի բուլաստանս ապարանից մեծատանց. իսկապէս այս է իմ երկը. բա-
 նասիրոց և գրասիրաց համար պատրաստուած նախնական նիւթ»:

Եւ սակայն Հայաստանի այդ մաքրակրօն եկեղեցականը եղաւ Հայ
 ժողովրդական գրականութեան ամէնէն մեծ մշակը:

Նայում եմ ես և սպասում, որ վառուի
 Մի այլ ճրագ ծերուկ լերան ճակատին :
 Ո՛չ բնութեան ստեղծուած է այն հրաշալի
 Եւ ոչ կերտուած ճարտարարուեստ մարդկային ,
 Այլ մի ուրիշ չնաշխարհիկ դօրութեան ,
 Արարչութեան խորհրդաւոր մի գաղտնիք .
 Այն մեր հոգու լուսի ջահն է նուիրական .
 Ողջոյն ազգի կենդանութեան երաշխիք . . .
 Եւ այդ ճրագն , ե՛ղբայր , անշէ՛ջ կը լինի .
 Քանի վառող Աջն է մեզ միշտ հովանի :

Ընթիւ Հասուածներ

Յ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԱՐԱՔՍԻ ԱՓԱՆՅ ՎՐԱՅ

Զինելով այսպէս երբեմն փարթամ, հարուստ, բազմամարդ և բազդազուրկ գիւղաքաղաքի (Զուղայ) տեղը, ես կանդնեցի Արաքսի ափումը և հայեցի մի կողմից ժայռապատ ձորակի ընդհանուր վայրենի տեսքին, միւս կողմից սիլաճեմ գետի այիքների վերայ՝ շրթունքները սակամայ թռան հանճարաւոր հեղինակի աննման ոտանաւորի տողերը՝

Մայր Արաքսի ափերով ,
 Քայլամուրս դնում եմ ,
 Հին հին դարուց յիշատակ
 Ալեայ մէջը ստորում եմ :

Կարո՞ղ է պատահիլ արդեօք, որ մի որ և է Հայ անհատ տեսնելով Արաքսը, խակոյն չմտարերէ այդ ազդու

Յովհաննէս Յովհաննէսեան . Լազարեան ձեմարանէն, քնարերգակ բանաստեղծ, որ զլիաւորաբար սիրային քերթուածներովը յայտնի համբաւ շահած է ռուսահայ գրականութեան մէջ . օտար հեղինակաց բանաստեղծական էջերէ շատ յաջող թարգմանութիւններ ալ ունի :

բանաստեղծութիւնը, եթէ կարգացել է դորան գոնէ մի անգամ :

Մի բուպէում շարուեցին յիշողութեանս մէջ պատմական ամբողջ շրջաններ, սկսուած Զուղայի փարթամ դրութիւնից, անցած նորա թշուառ աքսորանքին զէպի Սպանան ու վերջացնելով ներկայ քարակոյտ տերակների տխուր կերպարանքով : Ես երևակայեցի Զուղայեցւոյ միանամուռ լնդունելութեան հանդէսը Պարսից առաջին Շահ-Աբասի գալբասեանի, 1604 թուականին : Եւ անա իշխանները, ձերերը և երխտասարդները զարդարուած ոսկեհուռ զէնքերով և սիրատեսիլ հանդերձներով, ընթանում են խրոխտ թագաւորի առաջ : Նորաբողբոջ՝ դեռահաս մանուկները՝ ոսկէ բաժակներով անուշահամ և աղնիւ դինի են հատուցանում : Վառած մոմերով, խնկով և կնդրուկով քահանայք և մարմնաւոր երգիչները առաջը գնալով՝ յարմարաձայն նուագում են : Եւ անա գետափից մինչև խոշոյ Սաչիկի ապարանները, ճանապարհի վրայ ախաւած է կարմիր գործուած, որի վրայ թագաւորը լնթածում է գէպի Սաչիկի պալատը : Սոջայ Սաչիկը անա իւր որդւոյ ձեռքով ոսկու կոյտը ոսկէ սկուտեղի վերայ պարդե է մատուցանում թագակիր հիւրին : Նորան հետևում են Զուղայոս և միւս մեծամեծները : Շահ-Աբասը երևք որ հիւր մնայ Զուղայեցւոյ մօտ, որոնք պատուեցին նորան համապամ կերակուրներով և ծաղկահամ գինիով :

Թշուա՛ն Զուղայեցիք, Դուք պատուեցիք, թագաւորավայել կերպով ընդունեցիք, չը խնայեցիք ձեր սիրտը, կարողութիւնը ու համակրութիւնը ձեր բարձրաստիճան հիւրի համար, որ մտածում էր լոկ ձեր կորստեան վերայ : Ձեր բարձր հիւրը, ձեր հիւրասիրութեան փոխարէն, մի տարից յետոյ այրեց ու քանդեց ձեր հայրենիքը .

տեղը ու տունը : Գլխատեց շատերին ձեզանից , շատերին էլ ջրահեղձ անելով Արաքսի յորձանքում , մնացածներին դերեց դէպի Սպահան : Ձեր պատուած հիւրի լիրք զօրականներն և զինուորներն անպատուեցին ձեր կոյս աղջկանց և ձեր փափկասուն հարսերին : Ձեր մատաղահաս մանուկները զոհեցին նոքա իւրեանց սրին : «Ընդունում եմ Դանայեցւոց պարգևը , բայց վախենում եմ նորանից» : Սոյն այս Հատինական խօսքերի յարմար էր ձեզ կրկնել . «Ընդունում եմք մեր թագակիր հիւրին , բայց վախենում եմք նորանից» :

Փարձ, հանդէս

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ

Յ Ի Խ Ն Ը

Հատիկները ձերմակ ձիւնին որ ծիււ ծիււ կը թափ-
 թփին հիմա թխպոտ ամպերն ի վար . դուցէ ոմանց հաւ-
 մար շուշան ծաղիկներու թերթիկներն եւ կաթնաթոյր ,
 զոր երկինքի կոյս դաշտերու լանջքերէն փունջ փունջ քա-
 ղելով՝ դէպի վար՝ մեղի կը նետեն մատուրները անտես
 հողիներու : Ա՛հ , սակայն , փերթ փերթ փետատուող թեր-
 թերը այդ անբիծ երկինքի շուշաններուն , զորս կը մաղմղէ
 մոլուցքը ցրտագին հովերուն , ցայտուն կերպով ջնճ ուսու-
 կերացներ մեր աչուրներուն՝ ալիքը կեանքին ու պա-
 տանքը մահուան :

Փարձ հանդէսը Ռուսահայոց ամէնէն մեծ ու լուրջ պարբերական հրատարակութիւնը եղած է՝ խմբագրութեամբ Պ. Աբգար Յովհաննէսեանի , 1876—1881 թուականներուն :

Այս գրակոն հանդէսը Քաջբերունի կեղծ անուամբ Հայաստանի ուղեորութեանց վրայ նկարագրական շարք մը յօդուածներ հրատարակեց որ լի են տեղագրական , հնագիտական ճշգրիտ տեղեկութիւններով . կենդանի ու նկարուն ոճով մը պատկերացած :

Ու հիմա, դուրսը, խեւ բուքը կճող հիւսիսին՝ հոգեասարսուռ վայնասոււններ հանել կուտայ ո՛չ միայն սա դիմացի տերեւաղուերկ դօս ծառերու անատակէն, այլ խարխլած անաղատասպար տնակէն անկրակ աղքատին :

Անտառներն ու այգեստանները, վաղուց ձմրան դաշտունին են հաղեր, ուր այլևս չեն երգուիր ո՛չ թռչնակին երգն աղու և ո՛չ հօտաղին սրինգին ձայնը մելանուշ :

Ի՞նչ ալ տխուր երևոյթ մըն են առեր սա ճաղատ լերան ծործորները ծաղկածին, ուր դարնան երբեմն քաղցրակարկաչ վտակը . հիմա պղտոր ալիքներով կարծես ողբերգեր կը հիւսէ իր ամայի ափերուն վրայ : Հոն կանաչաբեր թուփեր չոր խախուներ են դարձեր դօշ մօրտ քներու հման, որոնց թաքստոցներէն շատոնց խոյս տուած են քաղցրաղբուցիկ թռչունները ոստոստուն :

Ձմրան գիշերները աւելի տխուր են քան ցորեկները՝ ո՛չ լոյս կայ, ո՛չ լուսնակ . երկինք սև կապարի դոյն մը ունի : Ո՛ւր են այն պայծառ գիշերները ու ծիծղուն դէմքով հազելի լուսընկան, որուն ցոլքերը արծթէ՛ կը ցոլցան բեկբեկուն թէ՛ ծոցը պսպղուն ալիքներուն, թէ՛ ժպտող աչքերու անմեղ ծիծաղներուն և թէ՛ տամուկ աչքի մը արցունքի կաթիլն ըուն մէջ : Հիմա, սակայն, ան ալ չ'երևար . ամպերէն թուխ քօղ մըն է ծածկեր իր կաթնածոր դէմքին վրայ : Ամայի են սիրուն ափունքներն ալ այն ծովակին իւր ամրան տապ օրին անուշ ու զով հովեր կարծես ճերմակ ծաղիկներ կը բանային անոր կապույտ լոյծ կուրծքին վրայ : Այն սև սև ցցուն ժայւերն ալ՝ հման սիրաի վէրքերուն՝ հիմա մոլեգին ալիքներու ձեռքը խաղալիք դարձած են, որոնք աւելի նոր ու խո՛ր վէրքեր կը պեղեն անոնց սիրտին վրայ : Ամէն ինչ տխուր է, ու բնութիւնը սուգի տուն մըն է դարձեր, ուրկից կը լսուին միայն մերկ ծառերու ու հովերու կոծանքը և մունչիւնը կատաղած պախրցիին :

Բուն ձմեռը կը տիրէ աղքատին երդիքին տակ, անոր կեանքին ու սիրտին մէջ : Ան չքաւորութիւնը յաւիտենական ձմեռ մը չէ՞ միթէ բաղդի անժառանգներու համար :

Ձմրան խստաշունչ օդերուն մանաւանդ յիշենք զանոնք, երբ՝ վաւարանին շուրջը նստած, ծոցը ջերմիկ սենեակի՝ կը դիտենք հատիկները ճերմակ ձիւնին որ կը թափիթփին ծիւ, ծիւ թխպոտ ամպերուն ծուէններէն :

Մասիս

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Ա Ր Ո Ւ Ր Ե Ա Ն Գ Ե Տ Ը

... Վար ենք իջնում Անիի Միջնաբերդից և դանդաղ ու մոլար քայլերով, դիմում ենք դէպի ծովափը, նստում ենք քարերի վրայ՝ աւելի մօտիկից տեսնելու Ախուրեանն իր ձորում : Մի լռութիւն է իջնում մեզ վրայ, ոչ ոքի շրթունք չի շարժվում անդամ թեթև բաղադանչութեան համար . ստեղծվում է հոգեկան այն կայութիւններից մէկը, երբ մարդ առանց խօսքի կարդում է ընկերոջ ներքին աշխարհը, երբ կեղծիքը դառնում է անկարելի և բոլորի յոյզերը բղխում են մի նատիկ աղբիւրից : Չէ որ մենք Ախուրեանի ափին ենք նստած :

Ներսէս վրդ. Դանիէլեան (Սասկան վարդապետ). Երիտասարդ վարդապետը հայ կղերական դասուն մէջ ուշագրաւ դէմք մ'է իր գրական արժանիքովը. ունի ազգային, ընկերական, բանասիրական ու տեղագրական նիւթերու վրայ պարզ ու զգայուն ոճով գրուած յօդուածներ որոնք լուրջ ու հասուն մտածութեանց արդիւնք են : Իր գլխաւոր գործը կը համարուի Ժողովրդական Քարոզները, որ կը պարունակէ կրօնական լուրջ ու բարոյայից քարոզներ ու խրատականներ :

«Ի գետս Բարեւազուոց անդ հատէաք և լայաք» :

Ես իմ բոլոր թախառուների ժամանակ ոչինչ չեմ յիշում, բնութեան և ո՛չ մի տեսարան, որի գեղեցկութիւնը այնքան անյոյս թախիծ ունենար, լացի, վշտի այն աստիճան հզօր հաճոյք յարուցանէր մարդու հոգում, որքան Ախուրեանի ձորը, Անիի մօտ՝ աշնանային պայծառ երեկոյին : Բնութեան իւրաքանչիւր գեղեցկութիւն, որքան և կենսապից ու սրտապարար, որքան և անմասն լինի տխուր յուշերից, ինքն ըստ ինքեան միշտ անուշ, դուրեկան վշտի աղբիւր է : Բայց Ախուրեանը իր ժայռոտ ձորի մէջ աւերակներով՝ սաքի տակ, երեկոյեան մշուշով սքօղված՝ ամբողջապէս ցաւ է ու արցունք : Այդպէս է լինում մատաղ ու գեղեցիկ կոյսը սև դադաղի մէջ, մահուան դալկութիւնը դէմքին, որին հայում եւ անթարթ ու յափշտակված՝ մոռանալով, որ այս դունստ գեղեցկութիւնը վերջալոյսի վաղանցուկ փայլն է միայն և որը շուտով լուծվելու է անյայտի ծոցում : Ուրիշ ինչ է յիշեցնում Ախուրեանը, դուցէ ստոր կլին, ջահիլ ու գեղեցիկ, որ մինամենակ լալիս է անապատի ամայութեան մէջ կորած մի շիրմի վրայ և հրա հեծկտանքը լոկ քամիներն են լսում :

Ո՛ւհ այս վշտոտ Ախուրեանը . . .

Մշտականաչ ափերի մէջ, խո՛րը, խո՛րը, համարեա անդունդներում, բարձրաբերձ ու խոժոռ ժայռերի տակ՝ հոսում է հա հնազանդ ու յողնած՝ անվերջ ծանր պայքարից՝ հոսում է, դալարվում է ցաւաղինօրէն, այնպէս որ մարդ ապրում է հրա դաժան կեանքի ճիզը : Եւ հրա ձայնը ո՛չ վիրաւոր գաղանի մռնչիւն է, այլ մեղմ, թախածոտ վշվշոց, ինչպէս սուլերը մոլորված հովերի, ինչպէս սօսափիւնը լալկան ուռիների : Նա հեծկտում է այն սգաւորի պէս, որ կորստի անդառնալիութեան առաջ

հնազանդ է, չի ճշուամ, չի աղմկվում, վայնասուն չի բարձրացնում, քանի որ գիտէ, թէ այդ բոլորն անօգուտ է :

Դժբախտութեան մէջ դուռնի Ախուրեան :

Բարձրից նրա վրայ սաւառնում են գիշակերները և սիրտ չեն անում ասելին իջնել, ամպերն են սուրալով անցնում, խոյս տալով նրա ահագին վշտից, գիշերները աստղերն են թարթում և ո՛չ մէկը նրա յատակին չի հասնում : Արցունքի պղտորութիւն ունի նա, չի ուզում, որ իր մէջ երևան աշխարհի իրերը, որ աստղերը ժպտան, կամ թռչունները զուարճանան իր փայլով : Աւերակների և ժայռերի այլանդակ ստուերներով գոհ է, մնացածի համար անէծք ու արցունք միայն ունի . . .

Ախուրեանն իր ձորում . . . Դա մի անյոյս վշտի ըսքանչելի մարմնացումն է, անհուն ցաւի դեղարուեատական հրաշակերտ, որի վարդեալ, ինքը լնութիւնն է :

Գնացէ՛ք տեսնելու Ախուրեանն իր ձորում :

Եւ, երբ որ դնաք, անպատճառ բարձրացէք Աղջըկարերդի (Ղըղ-դալա) կատարը : Մի նեղ ու վտանգաւոր արանեա է առաջնորդում այնտեղ . զգո՛յշ, որ չտայթաքէք . դէպի աջ, անդունդը ահաւոր է, սեղ-սեղ բռնեցէք ժայռերից, յենվեցէ՛ք քարերին, սողացէ՛ք թէկուզ, բայց բարձրացէ՛ք : Այնտեղ՝ կատարին գեղեցիկ, քանդակուած մի դէղ է, աւերակ եկեղեցու և սալարանքի բեկորներն են՝ դրանք . կանդուն է մի եկեղեցու պատը : Անցէ՛ք նրա ետեր, մի փոքրիկ տեսարան կայ, մշտականաչ ու հարթ, կանդնեցէ՛ք այնտեղ, բայց վար հնայէք, ներքևի անդունդը ահաւելի է, դուրս է պատվում, շունչ է բռնվում : Եւ այն անդունդի մէջ դարձեալ Ախուրեանն է, որ գալիս է, կորչում ոտքերիդ տակ : Այստեղից բացուող տեսարանի վրայ լնութիւնը գործել է կան-

խամտածած կերպով, գեղեցկութիւնը խառնել է խորհրդաւոր սարսափին, և ո՛վ կամենում է ճաշակել մէկը, ստիպուած է նա՛նք դողալ մի մութ ուժից, որ թագաւորում է այս անդունդների, այս ժայռերի վրայ: Ապրելու դօրեղ բնադղը դարձնում է թափով, բռնում է ամբողջ էութիւնդ, և ակամայ յետ-յետ ես քաշվում անդունդի շուրթից, թիկունքդ դէմ տալիս պատին, պինդ քարին ծեփվելու, նրա հետ լուծվելու համար:

Եւ հեռո՛ւն... է՛ն, դնացէ՛ք տեսնելու Ախուրեանն իր ձորում, բայց անպատճառ Աղջկաբերդի անաւոր, հրաշալի բարձունքից...

Մուրն, հանդէս

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԿՈՐՄՈՒՄԸ ԱՐԴԱՐՈՒՓԻՒՆ

Մի անգամ արդարութիւնը անհետացաւ յանկարծ:
Ասենք, նա յաճախ էր կորսւում:

Սուսափելով իրեն ծիւրող, պատն ի պատ խփող, լլկող անձերից, յաճախ նա փախչում էր լեռները, պահւում աշխարհիս հեռաւոր անկիւններում: Բայց ամէն անգամ, այսպէս կամ այնպէս, յաջողւում էր նրան գրասել, բռնել, վանդակի կամ սնտուկի մէջ դնել, ուղածին պէս դորձածել... չարչարել:

Այս անգամ սակայն, չրդիտեմ ի՞նչ հնարքով, Արդարութեանը յաջողեց լաւ անհետանալ. այնպէ՛ս լաւ թաքնեց, որ մարդիկ աղօթքով, եղութաութեամբ, ոյժով կամ ոսկով իսկ անկարող եղան նրան գտնելու:

Սկսեց մեծ իրարանցում: Առանց արդարութեան դժուար էր ապրել. մանաւանդ որ նրա անհետանալով, բաղմանում էին մարդկութեան «օգտակար» շա՛տ հաս-

տատութիւններ և շատ աղտոտութիւններ, որպիսիք են, կեղծաւորութիւն, անիրաւութիւն, խաբէութիւն, արիւն-հեղութիւն և այդպիսի շատ այլ թոյներ, որոնց այնքան լաւ դիմակաւորում էր Արդարութիւնը :

Եւ ահա Արդարութեանը վնասելու ելաւ նախ մի պատերազմիկ—ազնուական : Շատ զօրք ժողովեց, վաշտ ու գունդ կազմեց և երդւեց, որ Արդարութիւնը ո՛ր ծակը մտած լինէր, պիտի հանէր, ձեռքն ու ոտը կապած՝ պիտի մէջ տեղ բերէր :

Այդ պատճառով իսկ, սանակոխ տալով նա գիւղ ու քաղաք, արիւն սիւնելով դաշտ ու ձոր, ջարդեց, սրամաշ արաւ ամէն ինչ, տակն ու վրայ դարձրեց ամէն բնակութիւն, և այդպէս առաջ էր գնում, յուսալով բռնել Արդարութիւնը :

Նրանից յետոյ ճանապարհ ինկաւ Արդարութիւնը որոնելու մի շատ հարուստ մեծատուն : Ոսկի ու արծաթ, զարդ ու զարդարանք բարձեց ուղտերի և վստան իր ոսկու վրայ, տնից դուրս եկաւ : Ատում են, որ մի քանի հատ էլ սիրուն կանայք վերցրեց, որ ոսկու փայլի վրայ դեղեցկութեան հրապոյրն էլ աւելացնէր :

—Կը տեսնէք, պնդում էր նա, Արդարութիւնը ոսկովս պիտի դնեմ, կանանցով պիտի գրաւեմ և սնտուկիս մէջ գրած՝ պիտի մէջտեղ բերեմ :

Այդպէս էր ահա, որ բռունցքն ու ոսկին գնացին Արդարութիւնը որոնելու . . . Եւ դեռ գնում են :

Թո՛ղ դնան :

Տեսնենք այժմ, թէ ո՞վ էր այն երրորդ անձը, որ խեղճ ու կրակ, ցնցոտիք հագին, ճակատը վշտերով խոր-խոր աչօսած, մտածեց ելնել Արդարութիւնը որոնելու :

Ասեմք ազնուականը սուր ունէր, հարուստը՝ ոսկի-
խակ սա ի՞նչ ունէր, ինչո՞վ պիտի գանէր Արդարութիւնը:

Թշուառն էր դա: Բոլոր ընծաների փոխարէն էլ տա-
րածն էր մի չնչին սրուակ, որ ամուր կերպով սեղմել էր
կրծքին և յամառութեամբ ճանապարհ ընկել: Բանն այն է,
որ սրուակը լցրել էր մի չըլուած հեղուկով: Որքեց մի
արցունք, ընկածից մի հառաչ, գործաւորից մի դառը
քրտինք... Մի խօսքով, վշտերի արցունքներից մի-մի
կաթիլ ժողոված, լցրել էր շիշը, պինդ փակել և կար-
գում էր թէ տարածը անշուշտ պիտի գրաւէր Արդար-
ութիւնը:

Ու քայլում էր: Անցնելով մեծ-մեծ քաղաքներից,
խուլ հեռաւոր գիւղերից քայլում էր անխոնջ, ձորեր
ցած իջնում, լեռն ի վեր կննում, ամէն քայլափոխին էլ
կանգ առնելով՝ կանչում. — Ո՛ւր ես, Ա՛րդարութիւն:

Արդարութիւնը չըկար: Ո՛չ երեւում էր, ո՛չ էլ ձայն
տալիս:

Անօթի, ծարաւ, յոգնած, վշտալից, երկար թափա-
ռեց թշուառը ամէն ուղղութեամբ, սրալի վրայ սեղմած
ունեկնալով սրուակը, որի հեղուկը սկսել էր եռալ ու
տաքանալ: Արդարութիւնը սակայն չը խղճաց, նրան էլ
ո՛չ երեւաց, ո՛չ էլ գոյութիւնը յայտնեց:

Վերջապէս, երբ յուսարեկ, ուժասպառ հասել էր
լեռան կատարին, հասեց մի ժայռի վրայ և սկսեց մտա-
ծել, թէ ի գուր էր Արդարութիւն որոնելը, քանի որ
խուսափում էր նա թշուառից անգամ:

Եւ երբ այդպէս մտածեց, բարկացած հանեց ծոցից
սրուակն ու խփեց ժայռին:

— Գնա՛՛ ոչնչացի՛ր, գոչեց նա. իզուր են բոլոր վըշ-

տերն ու արցունքները . Արդարութիւնը թշուառին չի սիրում . . .

Բայց հագիւ թէ սրուակը փշրուել էր , լաւեց մի անեղ որոտում , հոսած արցունքներից թանձր ծուխ բարձրացաւ , փրփրած , ոլորեց և նրա միջից , ահաբեկ թշուառի առաջ , դուրս ցցուեց մի անեղ հսկայ :

Սարսափած թշուառը ընկաւ երեսի վրայ :

— Ելի՛ր կանչեց հսկան մեծաձայն . ելի՛ր և մի վախենալ :

— Ո՛վ ես դու , անե՛ղ ոգի , հարցրեց թշուառը :

— Ե՞ս , գոչեց հսկան , — ես բողոքն եմ , որ ծնայ այդ թափած արցունքներից և որ պիտի աշխարհ բերեմ անհետացած Արդարութիւնը . . . նայի՛ր . . .

Ապա արշալոյսի կարմրորակ լոյսի մէջ ցցուեց հսկայի վեհ հասակը , դարձած դէպի բարձրութիւնները , ուր սկսել էր մի փոթորիկ և ուր դետիննու ամբողջ դողում էր դղրդիւնով :

Եւ հեռուն . հսկայի սլարզած ձեռքի կողմը , մի կոյտ մաքուր ամպերի բացուածքից երևան եկաւ թաքնուած Արդարութիւնը , խորունկ , ախուր հայեացքով , առանց կշիռքի , առանց մեծ սրի .

— Ե՛կ , Ա՛րդարութիւն , կանչեց Բողոքը , ես ծնուել եմ և իմ ձայնը թո՛ղ քեզ համար կշիռք ու սուր դատնայ . ե՛կ , Արդարութիւն . . .

Բայց Արդարութիւնը անշարժ ու տխուր՝ նայեց նրան , նայեց թշուառին և սասայ .

— Ի՛նչ ո՛չ . . . դեռ դու փոքր ես . գնա՛ քայլի՛ր . կուտակի՛ր արցունք , կուտակի՛ր վշտեր , մեծացի՛ր որպէս ովկէան , կատաղի՛ր որպէս հեղեղատ , և այն ժամանակ միայն ես կը զգամ իմ սրով և իմ կշիռով . . .

Ապա ամպը սահեց և Արդարութիւնը հոռից անհետացաւ իր անմատչելի բարձրութեան մէջ...



Այդ օրւանից ա՛հա՛ պատերազմիկ զօրեզը արիւնի մէջն է որոնում Արդարութիւնը, հարուստը ոսկու, և թշւառը, նստած իր վշտերի մօտ, արյունքներովը մեծացնում է Բողոքին որ նա՛ վերակոչէ աշխարհում կորսուած Արդարութիւնը...

Հայ Գրողներ

Վ. ՓԼՓԼՁԵԱՆ

ՆՈՒՍՆԻ ԾԱԳՈՒԹՅՆ

(ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՐԵՐԷՆ)

Դիտած էք երբեք այն հողեզմայլ պահը՝ ուր արևը իր մեծաշուք կայքէն յուշիկ վար իջնելով՝ կ'ամփոփէ իր ոսկեճամուկ ծիրան սկաւառակը, դաշտերու, անտառներու և ախտան սարկոլու ուսերէն: Դիտած էք նաև միւսնոյն պահուն՝ լիալուսինին ծագումն ալ, իր կուսական պայծառ ու բիւր ծիծաղներովը: Ո՛վ գիտէ տիեզերական հզօր մ. քննաչին լարուած առաջին օրէն՝ այս երկու մեծ լուսաւորները, քանի՛ անգամ դիտած են զիրար ակնապինջ, որոնց ձգողական սիրովը արբշիռ մարդկութիւնը՝ երբեմն բազիններ ու տաճարներ է կանգներ, երկր-

Վերանէս Փափագեան, բնիկ Վասպուրականցի բայց կովկաս հաստատուած ու հոն, ռուսահայ մտաւորական շրջանակներուն մէջ, նշանակելի դիրք մ'ունի իրր հրապարակագիր ու վիպասան. գրած է բազմաթիւ վէպեր ու վիպակներ, որոց նիւթերն մեծաւ մասամբ Թրքահայոց կեանքէն քաղուած են, նկարագեղ ու կուռ ոճով մը պատկերացած. շատ յարգի են նաև հեղինակին ճանապարհորդական նկարագրութիւնները ու արտասահմաններէ գրած նամակները որոնք զանազան երկիրներու ու ժողովուրդներու վարուց ու բարուց վրայ շատ լուրջ ուսումնասիրութիւններ կ'ընեն:

պագելու համար մէկին կենսատու ճառագայթներուն, իբր կենդանութեան ակը և աղբիւրը. և միւսին՝ դեղեցկութեան իբր դիցունիին՝ լուսագարդ գիշերներու: Այս պահուն ես ալ կը դիտեմ զանոնք Լիբանանի ցցուն ու մայրաւէտ սարերէն, որ դէմ դիմաց կանգնած՝ կը հայլին իրարու, ի՞նչ ալ անոյշ ու շեշտակի հայուածքով մը խորաթափանց: Լուսինը հոս՝ պահ մը կը ժպտի իր մշտնջենի մաքուր ժպիտներովը, որոնց տակաւին գուցէ հայած չեն արցունքոտ բիբեր: Ու անդին, արևը իր վերջին բոց բոսոր ճառագայթներովը՝ սիրազեղ գիրկնդխառնում մը կ'ունենայ անոր կաթնաթոյր շողերուն հետ: Մայրամուտքի հորիզոնին վերև, արևը հրաշէկ դունտ մը՝ կը թաւալի հրդեհելով իր շուրջը, ուր ամպերու գուլաներ ծըլէն ծըլէն, հուննի ծաղիկներու գոյնը կ'զլենուն. իսկ վարը՝ ծովը, օ՛հ, համակ ոսկերիւրեզ մըն է, պսպղո՛ւն ու վէտվէտուն, որուն կապուտազեղ լանջքին վրայ՝ արևը մէկ ակնթարթի մէջ՝ մարդրտայնու մանուակներ կը հլւսէ: Այս սրտագրաւ տեսարանը սակայն, հազիւ քանի մը վայրկեան միայն կը տևէ, վաղախոյս գիշերային երազանքի մը հման: Ու արևը արդէն՝ իր մարմնուն ճաճանչներովը թաւալեր լնկուղեր է Միջերկրականի խաւալ ալիքներուն ծոցը: Լուսինը հետզհետէ կը բարձրանայ հորիզոնն ի վեր, իր արծաթաթել վարսերուն խուրձերը տարտղնած մշտադալար մայրիներու և խնկաւէտ եղևիններու վրայ: Երկու ժամ ամբողջ կը դիտեմ զմայլելի տեսարանը՝ իմ հիւր դտնուած Սալիմա գիւղակին անտառէն: Լուսինին տխրանուշ հայուածքէն չեմ ուզեր բաժնել իմ հայուածքս, և անոր սիրովը արբշիւ, կը մրմնջեմ հոգիս խորէն իրեն ձօնուած բանաստեղծութիւնը մեծ քերթողի մը: Դեռ անտառէն չբաժնուած, յետագարձ հայուածքով ակնարկ մըն ալ կը նետեմ աստուածավառ ան-

չէջ լապտերին, որուն ո՞վ գիտէ այս պահուս կը նային որքան սեւեռուն բիբեր, որքան երազուն ու յափշտակուած աչքեր, մայրիկներու որքան տամուկ աչքեր : Բնակարանս կը վերադառնամ, անտառին ստուերոտ մայրիկներուն մէջէն, որոնք գիշերային մեղմասոյլ հովին շունչին տակ, կարծես գլուխ գլխի տուած՝ բաներ կը փափսան իրարու, ու անդին՝ հսկայ ժայռեր, լուսնի արծաթափայլ շողերուն տակ, լռին ու խորհրդաւոր քուն մը քնանալ կը թուին : Գիշերուան լռութիւնը այս պահուն, մենաստանի մը լռութեան պէս վեհազգեցիկ է, քայց հոս Լիրանանի սարերում, գիշերներն ալ երգ ու ձայն ունին : Ժայռերու սիրտերէն ցայտող խոխոճանքը զուլալ աղբերակներու, ծործորներու ծոցէն դիլ դիլ հոսող քաղցրակարկաչ առուակները, անդին ճանչող ճրպուռներու ձայները՝ տեսակ մը գիշերային համերգութիւն կազմած օրրերգեր կը հիւսնն ընտելեան ամէնէն խաղաղ քունը քնացող գիւղակին համար : Հանդիպակաց լեռնահովիտէն աւաչի մը զօրեղ ու հնչեղ ձայնը կ'առնեմ և պահ մըն ալ զայն մտիկ կ'ընեմ : Չայնը հովիւի մը ձայնն է, որ առողջ ու պողպատէ կուրծքէ մը դուրս կը պոսթկայ, մօտակայ սարերուն յորդառատ հեղեղներուն պէս : Ան իր սրինգը մէկ կողմ է նեւեր և սիրտին սիրոյ սրինգն է որ կը հնչեցնէ, որուն երգը՝ աւաչէ մը աւելի անմեղ սիրով մը տառապող հոգիի մը հառաչքն է, որ գիշերային լռութեան մէջ կ'արձագանգէ լեռնէ լեռ, սարէ սար : Անոր ձայնը մերթ մեղմ է սրինգի մը պէս, մերթ դու ու որոտ շեփօրի մը պէս գաղարուն, և որուն շեշտերը արարական եղանակներու անուշ մեյամաղձութիւնը ունին իրենց մէջ : Լիրանանի գեղանի սարերէն լուսինի ծագումը և գիշերուան տպաւորիչ յիշատակը, անմուտց էջերը պիտի ըլլան ձամբորդի կեանքիս :

Մասիս

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Ա Ղ Ջ Ն Ա Կ Ի Ս

Դուն քերթուած մըն ես շողէ յանգերով ,
 Ուրկից կը բղխին սէր՝ եռանդ՝ գորով ,
 Ամէն մէկ վանկըդ երգ մ'է , օրոր
 Ամէն մէկ տառըդ եղանակ մ'աղւոր :

Բընութեան դիւթիչ մէկ ժպիտն ես դուն
 էութիւնդ համակ համբոյր մը թրթռուն ,
 Զգըլխիչ բոյրն ես ծաղկի մը վարդի ,
 Պապղուն բոցը աստղի մ'որ կ'այրի :

Կեանքիս սև ճամբուն ճրրագն ես անշէջ ,
 Ծիծաղ մ'անոյշակ դալուկ սրտիս մէջ ,
 Մինչ իմ շորս կողմըս ամէն բան մութ է
 Դէմքիդ շուրջը լոյս կը ճառագայթէ :

Երկնից աղբիւրին դուն կաթիլն ես ջինջ ,
 Կեանքի մեծ գրքին մէկ էջը անջինջ .
 Խնկաւէտ սիւզն ես , մեղմ շունչը դարնան ,
 Սառած շրթունքներս քեզմով կը տաքնան :

Համակ ոսկեհիւս հեշտին քրնար մ'ես ,
 Քնքոյշ հրեշտակներ լարած են ըզքեզ
 Գդուող մասներով , հողւոյդ մէջ անհուն
 Դթութեան դանձեր պահելով թաքուն :

Անտիպ Դործեր

ՏԿՆ. ԵԻՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Տիկին Աւփիմէ Աեօխաննի (Անայիս) . Շատ սիրուած ու փնտռուած անուն մ'է մեր կին բանաստեղծ—գրագիտուհիներու ցանցառ թուոյն մէջ իր զգայուն ու ներշնչուած արձակ ու ոտանաւոր քերթուածներովը . ունի նաև վիպակներ ու նորավէպներ որ սերտուած կեանքի պատկերալից էջեր կը կազմեն :

Լ Ե Ր Ա Ն Ն Ա Ղ Ի Կ

(ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Ա.

Հոն ուր ամէն բնականութիւն կը դադրի,
Հոն ուր մարդուն կը վախնայ ոտքն առնել քայլ,
Անմատչելի այն բարձրութեանց վրայ վայրի,
Ուր արեւուն կ'իյնայ ճաճանչ հաստափայլ,
Ծնած էր Արուս :

Իր մայրն, աղջիկ լեռներու,
Հողին, քարին մացառին հետ միշտ ապրած,
Անվախ՝ ժայռէն, դահավէժէն ահարկու,
Ընկեր արծուին և անդղերուն օղաալաց,
Ամուր անոնց պէս և անոնց պէս մըթին,
Լերան մը սեպ կողին վրայ ապաղեր,
Բայուածքին մօտ ապառաժուտ անդունդին,
Այժեամներուն քով, գայն աշխարհ բերած էր :

Եւ հոն, այդ չոր ամայութեան մէջ մաքուր,
Մեծցած էր ան, կեանքով մը կարծր ու չարքաչ,
Կեանք մը զրւարթ, առողջ, խաղաղ, անիրփուր,
Ինչպէս կ'ապրին վայրի վարդերը մատղաչ,
Լեռներուն վրայ իր մանկութիւնն անցած էր •
Իր առաջին հայուածքն երկինքն էր տեսած,
Երկինքն ազատ և թևաւոր իր ամպեր,
Փայտէ խղզուկ ձեղուններու փոխան ցած :
Միշտ օդին մէջ, հողին վրայ, ժայռին քով,
Աղուոր մանրիկ անասունի մը նրման,
Կեանք մը վարած էր լի վազքով, խոնջէնքով :

Ոչ խանձարուր էր ունեցած, ոչ օրրան .
Հովերն անեղ, մրուրնչելով կատաղի,
Օրրած էին իր նիրհումներն առաջին,
Միշտ կիսամերկ, անհոգ՝ տաքի կամ պաղի .
Իր մարմինը չէր ճանչցած բանտն հագուստին,
Կենդանիի մորթով մ'հաղիւ ըսքօղուած :
Իր ոտքերը, բոպիկ, հողին, քարին վրայ,
Խոտին, ցօղին մէջ էին միշտ թաթխըւած .
Ու միշտ արձակ, թափած՝ մազերը ոսկեայ :

Եւ լեռներէն բան մը իր մէջ մըտած էր .
Հողի համ մը կար իր մըսին մէջ ամուր .
Անգղի հայուածք մը կը վառէր իր բոցեր
Աչքերուն մէջ . խոտի հոտ մը հեշտաբոյր
Իր մազերէն կ'արտաշնչուէր յորդառատ .
Այտին, բերնին վրայ և լանջքին մէջ ճերմակ՝
Վայրի պտուղի ու ծաղկի հիւթն անարատ .
Եւ իր հոգւոյն մէջ՝ հովերուն խենդ, վայրագ
Անկախութիւնն անպարագիծ, մոլեղին :

Կը ճանչնային զինքը ժայռերն ու ծառեր,
Այդ ընկերներն իր մանկական հասակին .
Իրենց քոյրն էր, իրենց պզտիկ աղջիկն էր .
Եւ ամէնքը կը սիրէին զանիկայ .
Ծառերն, կրբ ան անցնէր, մրմունջ մը հեշտին
Կ'արձակէին . և առուակներն արծաթեայ
Կ'երգէին քաղցր կրբ զանիկա տեսնէին .
Խոտերն անոր ստքին ներքև դգուանքի
Կը փոխուէին . և ծաղիկները փափուկ
Կ'ուղղէին միշտ անոր ժրպիտ մը ոսկի :

Շատ հեղ կ'երթար, գլուխն առած, մինակուկ,
Թեք կողով մ'ու ձեռքը ցուպ մը խոշոր .

Կ'երթար, կ'երթար ուր որ ելլէր իր դիմաց,
Չը վախնալով դադաններէն ահաւոր:
Մերթ անձաւներ կը մտնէր խոր, մըթամած,
Որոնց խոնաւ ալքերուն մէջ, անվեհեր,
Կը մըխըրճէր, թնդացնելով երգ մը խորխառ.
Եւ եթէ օձ մ'այնտեղ իրեն դէմ ելլէր,
Չէր դողդըլար իր քաջութիւնն անյողդողդ.
Ցուպի հարուած մը, և կ'անցնէր ու կ'երթար:

Երբեմին մօտն անուշ մաքուր մէկ առուի
Կանգ կ'առնէր ու նստած եզերքը, երկար,
Ոտքերն անոր մէջ կը լըւար: Վիթխարի
Ծառերու վրայ մերթ ալ կ'ելլէր մեծ ճիգով,
Մինչև կատարն, հոն ուր երկինքն է մօտիկ,
Ու այնտեղ, լայն ճիւղի մը վրայ, անվրդով,
Պառկած անվախ, տերեւներուն խաղաղիկ
Փափրսուքին մէջ հեշտօրոր, կը քնանար:

Գիշերները, շատ անդամ ժայռ մը կ'ընտրէր
Իրեն բազմոյ, և աստղերուն դալկահար
Յառած իր բունն ու սայրասուր նայուածքներ,
Երկար ասեն կը խորհէր, լուռ, մութին մէջ:
Իրեն համար անոնք ոսկի աղամանդ
Լոյս ծաղիկներ էին միշտ թարմ ու անշէջ.
Եւ իր փափաքն էր անոնցմէ դէթ մէկ հատ
Փրցնել խօթել իր մազերուն մէջ ծրփին.
Ու գիշեր մը ելաւ սարը բարձրագոյն
Կարծելով որ աստղերն անոր կը հրպին,
Աստղերն ուր բան մը կը ժպտէր իր հոգւոյն:

Իր հայրենիքն, իր տիկերքը համբուն

Այդ ամայի լեռն էր, որմէ դուրս ելած
Չունէր երբեք :

Վարն, իր դիմացը հեռուն,
Կը նշմարուէր, մըշուշի մէջ, ըսքողուած,
Հայն դաշտերէն ու մարգերէն ալ անդին,
Շատ, շատ հեռուն, եռուղեռում մը շփոթ,
Դիզուած, խռնած բաներու կոյտ մը մըթին :

Եւ անհանգիստ, հետաքրքրուած, վարանոտ,
Կ'ուզէր գիտնալ ինչեր, ինչեր կան այնտեղ,
Ի՞նչ գաղտնիքներ, ի՞նչ էակներ, ի՞նչ տեղեր :
Ու, գլուխն առած իր ձեռքերուն մէջ կարչնեղ,
Լերան աղջիկն երկայն ատեն կ'երազէր . . . :

Բ.

Օր մը, Տոհմիկ մը նորատի և աղուոր,
Այդ լերան վրայ, որսի ելած ըլլալով,
Հանդիպեցաւ Արուսին, ա՛յն պահուն որ
Ծաղիկ ժողոված կուգար անհագ, անխորտով,
Ոտքը բոսիկ, ուսերն ու լանջքն ամբողջ բաց,
Մազերուն մէջ վարդեր կարմիր ու ձերմակ :

Երկուքն ալ պահ մը կանգ առին, դարմացած :
Արուս ապշած կը դիտէր այն գարգամանակ
Որ կ'երերար անոր փայլուն ոսկեզօծ
Գլխարկին վրայ, ու զգեստները դունազեղ,
Ուր բիւր գարդեր կը դիզուէին պերճ ու հոծ,
Եւ ամէն ինչ որ անոր վրայ կար շըքեղ,
Մէջքին վրայ ոսկի գօտին, շողշողուն,
Ոչոր պեխերն ու մօրուքը սրբածայր :

Եւ իր սրտին մէջ, անորոշ ու անհուն
Յանկարծ յուզում մը պայթեցաւ մըրըկազայր :

Պարմանին, նուրբ դէմքով, ազնիւ արիւնով,
Հարրատուժեան մէջ միշտ ապրած սէզ զարմիկ,
Կը դիտէր զայն, հողին խռոված ու վրդով,
Այդ վայրենի աղջիկն, առոյգ, գեղեցիկ :
Իր երկրին մէջ այդպիսի բան տեսած չէր,
Ուր նիհարուկ տժգոյն կոյսեր էր սիրած :
Թարմ ու կարմիր հիւթազեղուն այդ այտեր,
Եւ այդ մազերն որք կիյնային յորդ, անսանձ,
Ուսերուն վրայ կըլոր, ճերմակ, մըսաւէտ,
Եւ մութ կապոյտ աչքերը մեծ ու խորին,
Եւ կիսամերկ մարմնոյն գիծերը վէտովէտ,
Այդ ամէնն իր մատաղ սիրտը ցանցեցին :

Եւ Արուս, իր միամտութեան մէջ անմեղ,
Զայն կարծեց նոր տեսակ էակ մ'անսանթթ,
Կենդանի մը աւելի վեհ ու շքեղ
Քան ինչ որ ինք տեսած էր. և իր շիկնոտ
Այտերուն վրայ ժրպիտ մ'անուշ փթթեցաւ :

Իսկ Տոհմիկը, զմայլած, յուզուած, կը խորհէր
Որ այդ աղջիկն հողէն ելած չէր հարկաւ,
Թերևս ողի մ'որ կը պահէր այդ լեռներ,
Կամ հրբեշտակ մ'այնտեղ իջած ման դալու :

Եւ այնպիսի տարփանքով մը անսահման.
Պաշարուեցաւ, որ ուղեց այդ կոյսն հուժկու
Տանիլ իր տուն և իրեն կին առնել զայն :

Գ.

Թաւիշէ լայն բազմոցներու վրայ փափուկ,
Ոսկեճամուկ հարդերձներով պաճուճուած,
Արուս հիմայ դշխոյ մըն էր փառաշուք:

Իր լերկ ժայռերն և իր կեանքը լեռնայած,
Իր պայքարներն, իր արշաւներն ու խաղեր,
Անասունի մորթն ու խոշոր ցուպը բիրտ
Ատոնք ամբողջ թողեր էր և հետևեր
Այդ կտրիճին որ կախարդեր էր իր սիրտ:

Եւ երջանիկ եղաւ Արուս, հետզհետէ
Վարժըւեցաւ այդ նոր կեանքին զոր սիրեց.
Չըւարճացաւ դիտելով իր արծաթէ
Մանեակն ու իր դիխուն գոհար զարդը մած.
Բոլոր այդ թանկ իրերը վառ, նըկարէն
Կը դիւթէին իր աչքերը՝ վարժ լերան:
Ու երբ մինակ մընար, յաճախ ինքնիրեն
Կը պայթեցնէր վայրի քրքիջ մը երկայն:

Հիմա կտրիճն էր իր խըրոխտ սրտին տէր,
Ու ինքն անոր կրակէ սիրոյն անձնատուր,
Եւ ոսկիէ հայլթի մէջ կը դիտէր.
Իր այտերուն վարդն ու բերնին բացուած նուռ
Եւ երբ ըլլար որ ձանձնոյթ մը դար վըրան,
Իսկոյն ճարտար երաժիշտներ կուգային
Իր ոտքին տակ հնչեցընել նուագարան,
Անուշ երգով վանել թախիճն իր սրտին:

Եւ ազնուազարմ օրիորդներ ոստանիկ
Կը կրծուէին իրենց սաստիկ նախանձէն

Երբ տեսնէին զայն, իր էրկանը քովիկ,
Ճոխ կառքին մէջ ընկողմանած պերճօրէն,
Անցնելով խրոխտ իր հրապոյրովն յաղթական :

Այ իր լեռները մոռցած էր ու վայրի
Այդ արարածը հիմայ մեղկ փափկութեան
Մէջ թաթախուած, կը թուլանար օր օրի :

Պ.

Ապարանքին մէկ հտեի սենեակէն,
Հեռուն, հեռուն, հորիզոնին վրայ գորշ,
Լեռներու շարք մը կ'երևէր մշշօրէն,
Երկայն շարք մը որ կը գծուէր անորոշ,
Մուխի, խուռկի, ամպի գոյն ու երազի :

Իրիկուն մը Արուս մրտաւ դիպուածով
Այդ սենեակն, ա՛յն պահուն ուր կը տատամսի
Կոյսը՝ կեանքի և մահուան մէջ : Կրակէ ծով
Մը կը վառէր հեռուն երկինքը կարմիր,
Ուր արևը կը տատանէր ոգևար :
Եւ արիւնի հետ յորդութեան վրայ հրալիր,
Սե ու յատակ շրջագծերով, շարքն երկար
Կը նըկարուէր, երկար շարքը լեռներուն :

Սրտէն Արուս զարնըւեցաւ կարեւիւր . . .
Հո՛ն իր լեռներն, հո՛ն իր ամբողջ մանկութիւն,
Հո՛ն իր բնավայրն, հո՛ն իր վիհերն ու ժայռեր,
Հո՛ն քարայրներն ու կատարները ձիւնոտ,
Հո՛ն իր վազքերը վայրենի և յիմար
Արհաւիրքին, վրտանգին մէջ անծանօթ,
Հո՛ն իր խոշոր ծաղիկները զուռնավառ,

Հո՞ն ճախրաալաց թռչունները մեծ ու սև,
Հո՞ն իր բոպիկ ոտքերն ու մորթն անաանի,
Հո՞ն իր կեանքը չարքաչ, անհոգ ու թեթև . . .

Ու զգաց յանկարծ զարթումն ըմբոստ վայրենի
Իր մանկութեան կրրակներուն, խանդերուն,
Էզգաց որ հոյն ու ժայռն ու վիհն ու արծուին
Կը բախէին իր մէջ իրենց թևն անհուն :

Եւ երբ իր շուրջ դարձուց աչքն, ու ծանրագին
Տեսաւ իրերն, առարկայները փաղփուն,
Կակուղ թաւիչն ու բեհեղներն ակնաչլաց,
Լացաւ Արուս, լաց մը խորէն իր հոգւոյն .

Ն.

Տոհմիկն, հիմայ կը զարմանար թէ յանկարծ
Ինչո՞ւ Արուս բալորովին փոխուած էր .
Ալ վինքը չէր սիրեր դուստրը լեռներուն,
Եւ թէ ինչո՞ւ անոր լեցուն երևաներ
Կը հալէին, օրըստօրէ վախա, անգոյն :

Քիչ ատենէն, հիւանդ, ինկաւ անկողին,
Լուս, անխօսուկ, հատնելով միշտ յամբօրէն,
Եւ հակառակ խնդրանքներուն, արցունքին
Չըհանելով խօսք մը, բառ մը իր բերնէն :

Միայն խնդրեց որ իր մահիճը տանին
Այն սենեակը ուրկից լեռը կ'երևէր :
Եւ հոն, դադարնի ամէնէն, երբ առանձին

Մընար, կ'ելլէր ու կը յառէր իր աչքեր
Հեռուն, այդ մեղմ, անըջային գիծերուն :

Եւ այդպէս, միշտ անձայն, իր մէջ թաղելով
Այդ սև գաղտնիքն որ կ'ընէր զինքը տժգոյն,
Պահելով միշտ դէմք մը հանդարտ, անվրդով,
Արիւնոտած հոգիի մը կեղծ դիմակ,
Առանց լալու, առանց իր քաղցր ամուսնին
Իսկ յայտնելու իր ցաւն, անդունդ անյատակ,
Միշտ ինք իր մէջ այրելով, մութ ու լըռին,
Մեռաւ առտու մ'աչքերն անթարթ սևեռած
Այն ըստուերոտ տարտամ կապոյտ լեռներուն
Որք աւօտին կարմրութեան մէջ լուսամած
Կը ժպտէին իրեն ժպտով մը անհուն :

Մասիս

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

Ե Ղ Ե Ի Ի Ն

Օ, մի' նայիր այդպէս տրխուր մազերիս,
Որ օրէցօր ճերմակում են, ճերմակում.
Նայի՛ր ներսըս, նայի՛ր սիրտըս ու հոգիս—
Այնտեղ, հոգեա՛կ, դեռ նոր դարուն է քացւում :
Տեսե՛լ ես դու ցուրտ հիւսիսում մեծացած
Անտառի մէջ ըսքանչելի եղևնին .
Ամբողջ ձրմեռ ճերմակ ձիւնով է ծածկուած,
Բայց ձիւնի տակ նա կանանչ է տակաւին :

Հայ Փրօղնիք

Լ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Լեւոն Մանուէլեան. Ռուսահայ տաղանդաւոր բանաստեղծ, վիպասան ու թատերագիր, շատ յարգուած գրական դէմք մ'է իր արձակ ու ոտամաւոր գողտրիկ քերթուածներովը ի՛նչպէս նաև թատերգութիւններովը :

Լ Ա Ե Յ Ս Ո Ւ Ա Կ Ը...

Լուեց սոխակը... նորա հետ լուեց
Վերջին հառաչի տխուր արձագանք,
Թոշնեցին կարծես ծաղկունք այգում,
Ջրի մբմունքը մարեց պուրակում,
Եւ այգուն պատեց սուգ ու հեկեկանք:
Այն սէրը անզուսպ, որ բռնկել էր
Հազար լեզուանի հրդեհի նման,
Այն ազատ մտքում, ուր և ծաղկել էր
Ազնիւ խոհերի եղեմը գարնան,
Ծնդուեցին, հանգան մոխիրի նման...
Եւ այժմ նոցա փոշին հալածուած
Ուր որ ընկնում է՝ տարածում է լաց—
Կարծես մի բողոք ցաւի, կսկիծի
Հանգիստը խլում բախտաւոր մարդկանց,
Լսում է ողբը մանուկ անտառը,
Աչնան օրի պէս դալկանում ծառը,
Ջրին խառնուելով լացի ամէն շիթ՝
Թոյնի է փոխում աղբիւրը վճիտ...

Լուեց սոխակը... լուեց նորա հետ
Վերջին հառաչի արձագանքը թոյլ.
Քնարը ջարդեց յուսահատ պօէտ
Եւ ձիգ լարերի հեծեծանքը խուլ՝
Ծանր տնքոցով խլացան անհետ...

Հայ Գրողներ

ՅԱԿՈՒ ԾԱԿՈՒԵԱՆ



Յ Ո Յ Ս

Սի՛րտ իմ, սպասի՛ր,
գուցէ արշալոյս
Ողջունէ երկինք, գուցէ մանուշակ
Շա՛ղ տայ բիւրեղներ,
գուցէ մի նոր լոյս
Հալածէ մութը, գուցէ յաղթանակ
Տանիս կռուի մէջ.—մի՛ յուսահատւի՛ր
Ապրի՛ր մինչ կայ կեանք,
մինչ նորոգ յոյսի
Կախարդ հոլիզոն...
Սիրտ իմ վշտակի՛ր,
Ինչո՞ւ ես հեծում, մի՞թէ ամենի
Օճն է ճնշում քեզ—կասկածը անյոյս,
Չանձրոյթը դաժան...
մի՞թէ խորտակեց
Սէրը սրբազան—երկինը հողուս...
—Տանջուի՛ր, յուսա՛...

Հայ Գրողներ

ԱԻԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ա.ԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ. Ռուսահայ բանաստեղծներուն ամէնէն երիտասարդը և միևնոյն ժամանակ ամէնէն մելամաղձոտ ու թախծալից երգիչը. իր քերթուածները համակ վիշտ կը բուրեն, հայրենիքի և մօր կարօտը, ազգային աղէտները, խաբուսիկ սէրն է զոր կ'երգէ անդադար. բոլոր քերթուածները լոյս տեսած են Բանաստեղծութիւններ վերնագրով հատորի մը մէջ:

Հ Է Ք Ե Ա Ք

Սա ժայռերը որոնց վրայէն բազէները կը ճախրեն և օձերը կը սողան սուլելով, ուր մամուռներ փաթթուելով անոնց կողերուն վրայ դորշ կանանչ մը կ'երանդեն, ատենօք, աւանդութիւն մը կ'ըսէ, այդ հակայ ժայռերը մարդիկ էին մեզի պէս .

Անյիշատակ ժամանակի մը մէջ՝ այդ խոպան տեղէն հպարտ ամբոխ մը կ'անցնէր, հեռու երկիրներէ եկող հարսնեւորներու խուժան մը . ու թմբուկին, դափին ձայնը, երգողներու, ծնծղաներու հնչիւնը, զգեստներուն շողիւնները՝ հեռուն, դաշտերուն մէջ կ'երկննային . ու հարսը քողին մէջ ծածկուած՝ իր դեղեցկութիւնը կը պահէր : Յանկարծ անդուստ փափաք մը կ'ուռւեցնէ հարսին սիրտը՝ որ դէմքը բանայ ու վայրի սիրով մը իր դեղեցկութիւնը անծանօթ տեղերուն ցոյց տայ . կը նետէ քօզը ու իր անմամն դէմքը արւին կը ցուցնէ : Այն ատեն, անոր գեղէն ու հպարտութենէն զայրացած, բնութիւնը անէծքով կը շանթահարէ բոլորը հո՛տ, այդ տեղը . և անփափօխելի այլակերպութեամբ, մարդիկը քար կը դառնան՝ անշարժ, ու համր :

Հիմա, մշտական սպասումով՝ անոնք կ'սպասեն հոն . անոնց մէջ կը նշմարուին խանդարուած աւրուած դիմադժեր մանուկի, պառաւի և պարմաններու . վայրենի աչքեր կան ահուելի սեւեռումներով՝ մոլեգին արտայայտութեամբ մը բաց մնացած . կծկուած, խորշոմած երևոյթներ կ'երևան որ կարծես լալու կը պատրաստուին, ու չեն լար . եւ ցաւ մը կը յայտնուի, ցաւ մը որ դիրենք տանջած է . իրարու վրայ խռնուած սեղմ կամ անջատ՝ անծանօթ էակներ որոնք սակայն՝ առասպելի զրոյցէն դուրս խուսափող նմանութեամբ դժուած իրական պատկերներ

ցոյց կուտան : Առտուան արեւին տակ և իրիկուան մարող
ցոլքերուն լոյսովք՝ անոնք յաւիտեան պիտի փայլին
հոտ :

Աւանդութիւնը այդ դժբաղդներու պատմութեան՝
քարերուն և ապառաժներու մէջ՝ յուսատու, մխիթարող
հաւատք մըն ալ դրած է . հոն ուխտատեղի մը եղած է
ուր հիւանդները, ցաւածները վերջին ապաւէնի մը յոյ-
սով, կիները մանաւանդ, այդ ցուրտ քարերուն կը տա-
նին իրենց տառապանքները, և միամիտի դիւրահաւա-
հութեամբ մտմ կը վառեն ու ետ կը դառնան : Եւ ժայ-
ռերը միշտ յոխորտ ու խիզա՛խ՝ իրենց գլուխները կ'եր-
կարեն երկնքին մէջ, ուր երբեմն դարնան ճերմակ ամպի
կտորներ կանդ կ'առնեն անոնց վրայ և մանր փրփուր-
ներով կը ժանեկազարդեն զանոնք . վայրի թուղեր և կա-
հանչ թփիկներ կը բաւանին վերերը անոնց ձերպերուն մէջ,
կայծակը կը դարնուի երբեմն ու կտորներ կը փրփնէ
անոնցմէ . և մուայլ օրերուն, անձրևներու ատեն, աղ-
ւառները սո՛ւր, սո՛ւր կը ճչեն, անձրևը սողալով վար
կ'իջնէ ու հովերն ալ շաչելով անոնց վրայէն կը վազեն :

Անցորդներու հայտւածքները վեր կը դառնան մերթ
աճարեկ՝ հսկայ բարձրութենէն . և վրդովուած յուզումով
կը հարցնեն անոնք ինքնին թէ իրա՞ւ այս քարերը մարդ
եղած են ատենով, կեանքը իրա՞ւ անոնց մէջէն ալ ան-
ցած է . սա քա՛րերը որոնց վրայ անհամար թռչուններու
հազարաւոր փետուրներ ցրուած են :

Ծաղիկ, հանդէս

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Ռուբէն Զարդարեան. Գրագէտ ու հրատարակագիր, ինքը ա-
ռաջինը եղաւ մեր մէջ որ գրականութեան մէկ նոր սեռը մշակեց, որ
մինչև այն ատեն անծանօթ կը մնար . բնիկ գաւառացի ըլլալով, հոն
ժողովրդին բերանը անյիշատակ ժամանակներէ ի վեր կենդանի մնացած

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

Յիշատակներ . . . փշրանք՝ անցեալ խնջոյքին ,
 Կրքով լեցուն կեանքին մրրկէն մուկին
 Բեկուած յուսոյ , թղկտուած սիրոյ ցան ու ցիր
 Մնացորդներ , կայծեր որ բնաւ չեն մարիր :

Յիշատակներ . . . անօտրր բոյր մը վարդի
 Որ առ տակաւ տուփի մը մէջ կը ցնդի ,
 Վերջալուսէն մնացած ցոյք նուազուն
 Որ կը մեռնին ծոցն անխափանց ամպերուն :

Մոռցուած յանկերդն երգի մը հին , մեղմօրօր ,
 Փետուր մ'ինկած քերովբէի մը թեւէն
 Պատկերն անդոյն սիրուած դէմքի մը ալւոր :

Յիշատակներ . . . ծաղկի թերթեր նուրբ քնքուշ
 Համբոյրներով արցունքներով շաղախուած
 Մահուան պէս դառն , մանկան ժպտին պէս անոյշ :

Անօխ Գործեր

ՏԿՆ. ԵԻՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ

աւանդավէպներէն ու հէքեամներէն քաղեց իր նիւթերը որոց անսպառելի զանձերը մատնանիշ ըրած էր արգէն Սրուանձտեանց՝ հայ գրականութեան այն շինական մշակը :

Ահա այդ խաւ նիւթերն էին որ գաւառացի ինքնաբոյս գրագէտին ճարտար գրչին տակ մէյ մէկ գոհարներ դարձան :

Իբր հրատարակագիր , լայն բաժին մը ունեցած է նաև ազգային քաղաքութեան մէջ իր հրատարակած զանազան թերթերովը . և այժմ ալ կը վարէ Ազատամարտ օրաթերթը :

Ա Ր Ե Պ Ն Ա Ձ Ա Ն

Շատ հին ժամանակ, երբ աշխարհքս լիքն էր հրաշքներով և երբ բարի ու չար ոգիները անընդհատ պատերազմ էին մղում իրարու դէմ, ահա այդ ժամանակ Մասիսի ստորոտում կենում էր մի ծերունի իշխան՝ Արման անունով :

Արմանն ունէր երեք զաւակ, մօրից որք մնացած . նրանցից երկուսն աղջիկ էին՝ մինը քան զմիւսը զեղեցիկ . իսկ երրորդը աւելի ևս չքնաղ և չաշխարհիկ, միայն բարի ոգիները նրա ինչ լինելը թաքցրել էին հողեղէններից : Այդպէս էին կամեցել բարի ոգիները իրանց համար յայտնի նպատակով և մի որոշ ժամանակով, երբ որ ժամանակը լրանար, այնուհետեւ նա կամ աղջիկ կամ տղայ պիտի դառնար : Բայց Արմանը նրան չէր որոշում աղջիկներից, և երեքին էլ միաձև աղջկայ հագուստով էր պահում :— «Թո՛ղ սա էլ աղջիկ համարուի, ասեց, մինչև բարի ոգիների կամքը կատարուի» . և անունն էլ դրաւ Արեգնազան՝ միատեսակութեան համար . որովհետև մեծի անունը դրել էր Չանազան, իսկ երկրորդինը՝ Չարմանազան :

Արեգնազանը մեծացաւ աղջկայ պէս . և թէպէտ հաւատացած էր, որ ինքն աղջիկ է և աղջիկներից էլ ամենագեղեցիկը, բայց ատելով ատում էր աղջկան վայել բաները : Նա չէր սիրում բուրդ գզել, թել մանել, կար ու գործ անել, և դրա հակառակ՝ երբ մի լաւ ձի կամ ղէնք էր տեսնում, խելքը գնում էր : Մայր չունէր, որ նրան ստիպէր, անարարութիւն սովորեցնէր, իսկ հայրը՝ կարծես գիտութեամբ՝ ոչ միայն այդ մասին ոչինչ հոգս չէր անում, այլ և նրան իր հետ որսի էր տանում և ձի հեծնել ու ղէնք գործածել էր սովորեցնում :

Այսպէս անցաւ մի ժամանակ . մի օր Արմանը կանչեց իր զաւակներին և ասեց .

— Ես ծառայում էի մեր բարի թագաւորին և նա ինձ շատ սիրում էր: Անա այս դաշտերն ու անտառները, այս սարերն ու ձորերը, որ հիմա մեր ձեռին է, բոլորը թագաւորն է ընծայել ինձ իմ հաւատարիմ ծառայութեան համար: Երբ որ ձեր մայրը վախճանւեց, սաստիկ տըխրութիւնս եկաւ վրաս: Վեր առայ ձեզ, քաջւեցի այս խաղաղ վայրերը, և տխրութիւնս փարատելու համար՝ դուխս որսորդութեանս տըւի: Դուք հիմա մեծացել էք, իսկ ես ծերացել: Դուք այստեղ մեծացել էք, ինչպէս վայրի եղջերուները: Ի՞նչ կը լինի ձեր վերջը, եթէ այստեղ մնաք, ի հարկէ, շատ վատ: Ապագայ թշուառութիւնից ձեզ ազատելու համար՝ ես մտածել եմ, որ ձեզանից մէկին, տղայի հագուստով, ուղարկեմ թագաւորի մօտ ծառայելու: Թագաւորը սիրով կ'ընդունի և իմ տեղը ժամանակով նրան կըտայ: Այդպէսով ձեզանից մէկը կարող է միւսներինդ էլ տանել իր մօտ: Հիմա ո՞րըդ կուզենաք գնալ:

— Ես կերթամ, հա՛յրիկ, ասեց մեծ աղջիկը:

— Ես էլ, հա՛յրիկ, ես էլ, ընկաւ միջնակը:

Արեգնազանը լուռ էր:

— Իսկ դու, Նա՛ղանիկ, դու չե՞ս կամենալ, հարցրեց հայրը Արեգնազանին. կարծես ուզում էր որ գնացողը նա լինէր անպատճառ:

— Ինչո՞ւ չէ, հա՛յրիկ, բայց երբ որ իմ մեծ քոյրն ուղում է, ես ինչո՞ւ արգելք լինիմ նրան:

— Այստեղ արգելքի բան չըկայ, հոգիս. ինձ համար դուք երեքդ էլ մէկ էք. միայն դեռ չըգիտեմ, թէ ձեզանից ո՞րը կը լինի աւելի յարմար:

— Ես ամենից յարմարն եմ, հա՛յրիկ, ասեց մեծը, որովհետեւ ես ամենից մեծն եմ:

— Ծնտ լաւ, բայց ես առանց պայմանի ո՛չ մէկինդ

չեմ ուղարկելու : Եթէ դու կամենում ես , կերթաս ուրե-
մն կը փոխես հագուստդ , կրնարես զէնք ու զբան և
աւաւօտը շատ վաղ քո ձին կը հեծնես , կերթաս որսոր-
դութեան . եթէ դատարկ չը վերադառնաս , քեզ կ'ու-
ղարկեմ թագաւորի մօտ :

Միւս աւաւօտը մեծ աղջիկը , ինչպէս պատուիրել էր
հայրը , ճանապարհ ընկաւ դէպի դաշտ՝ մի բան որսալու
համար : Երբ որ մտաւ մի խոր ձորի մէջ և ուզում էր
անցնել միւս կողմը , նրա աւաճը կտրեց մի դիմակաւոր-
ւած ձիաւոր՝ ոտից մինչև գլուխ զինաւորւած : Աղջիկը
նրան որ տեսաւ , այնպէս վախեցաւ , որ քիչ մնաց լե-
զուն կապուի : Սաստիկ երկիւղից մնաց կաշկանդուած ,
փախչիլ անգամ չը կարողացաւ : Ձիաւորը մօտեցաւ նրան
ու ասեց .

Ա՛յ , աղայ , սիրուն աղայ ,
Ո՛ւր ես գնում այդպէս մենակ .
Ի՞նչո՞ւ փախուկ անկողնիցդ
Գուրս ես եկել անժամանակ :

Աղջիկը պատասխանեց կմկմալով .

— Ես . . . ես . . . գնում եմ . . .
Ոչ . . . ոչ . . . չեմ գնում .
Հա . . . հա պիտի գնամ . . .
Ի՞նչ երեսով յետ դառնամ . . .

Ձիաւորն ասեց սպառնալով .

— Գու գն՞ում ես , ո՞ւր ես գնում .
Ո՛ւր ես փախչում դու ձեր գեղից ,
Յե՛տ դառ իսկոյն , թէ չես ուզում ,
Որ գլուխդ թռչի տեղից . . .

Այս ասելով՝ ձիաւորը հանեց թուրը և բարձրացրեց ,
որ զարկէ աղջկանը . բայց նա գոչեց .

— Վա՛յ , վա՛յ , մի՛ զարկիր , մի՛ զարկիր , ես աղջիկ
եմ , աղջիկ եմ , ահա՛ , յետ եմ դառնում :

— Որ աղջիկ ես, ուրեմն գնա՛ ձեր տուն, ձեր հաւ-
երին կո՛ւտ տուր: Տղամարդի հագուստ ունենալը բա-
ւական չէ, պէտք է տղամարդի սիրտ էլ ունենալ: Էլի
լաւ էր որ ինձ պատահեցիր և ոչ մի ուրիշին, — ասեց
ձիաւորը և անհետացաւ:

Աղջիկը դողդողալով վերադարձաւ տուն:

— Է՛ . . . ո՞ւր է մերած որսը, հարցրեց հայրը. ին-
չո՞ւ այդպէս շուտ վերադարձար:

— Ճանապարհին ջերմս բռնեց, հա՛յրիկ. գլուխս ցա-
ւում է, պատասխանեց աղջիկը:

Միւս օրը միջնակին ուղարկեց: Նա էլ մեծին պա-
տահած փորձանքին հանափապեց. նրա պէս վախեցած վե-
րադարձաւ տուն:

Երրորդ օրը Արեգնազանին ուղարկեց. նրան եւս
հանդիպեց միւսնոյն ձիաւորը և ասեց.

Ա՛յ տղայ, սի՛րուն տղայ,
Ո՞ւր ես գնում այդպէս մենակ.
Ի՞նչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ:

Արեգնազանը պատասխանեց բարկանալով.

Քեզ ի՞նչ, թէ ես ուր եմ գնում.
Ուր գնում եմ, այդ ես գիտեմ.
Ես չեմ գնում, որ քեզ նման՝
Սաղաղ մարդոց ճանրան կտրեմ:

— Ուրեմն ես աւագակ եմ.

Դո՞ւ ես ասում ինձ այդ բանը.

Այս բոպէիս դու կրատանաս

Քո այդ խօսքիդ պատասխանը:

— Այո՛, թէ դու աւագակ ես,

Տոյց է տալիս քո դիմակը,

Բայց թէ ի՞նչպէս տղամարդ ես,

Այդ թո՛ղ տեսնէ իմ նիզակը . . .

Այս ասելով՝ Արեգնազանը յարձակեց նրա վրայ,
ասելով.

— Ի՛է՛ն ձգիր դիմակդ, տեսնեմ դու ի՛նչ մարդ ես,
եթէ ոչ՝ այս բոպէիս կը թռցնեմ գլուխդ :

Ձիաւորն ընդդիմացաւ, վահանով պաշտպանուեց և
թրով յարձակեց Արեգնազանի վրայ : Արեգնազանը նոյն-
պէս պաշտպանուում էր վահանով և յարձակում թրով :
Մի ժամ շարունակ տեւեց նրանց կռիւը, և ոչ մէկը չկա-
րողացաւ զարկել միւսին . զարկերը վահաններին էին
դիպչում : Միայն Արեգնազանը հետդհեաէ զօրանում էր,
իսկ նրա հակառակորդը թուլանում : Վերջը Արեգնազանը
մի ճարպիկ ոտախնով թռաւ իր ձիուցը, հակառակորդի
փողպատից բռնելով վայր գլորեց ձիուց, և հէնց այն է-
ուզում էր, որ մի հարուածով գլուխը թռցնէր, նա իս-
կոյն վեր առաւ դիմակը . . .

— Ա՛խ, հա՛յրիկ, հա՛յրիկ, բացազանչեց Արեգնա-
զանը . այս ի՛նչ փորձանքի մէջ էիր ձգում դու ինձ . . .
Եթէ մի փոքր ուշ վեր առնէիր դիմակդ, ինձ հայրա-
պան պիտի շինէիր :

Հայրը մօտը նստեցրեց Արեգնազանին և նրա վրան
նայելուց չէր կշտանում : Մի փոքր շունչ առնելուց յե-
տոյ ասեց .

— Ապրի՛ս, ապրի՛ս, Արե՛գնազան,
Օլիս, ծաղկիս, զօրանաս .
Հիմա դիտեմ, որ իմ տեղը
Դու անպատճառ կրտանաս :

Ի գուր չեմ քեզ սովորեցրել
Ձէնք ու գրան գործածել .
Ինքըդ դիտես, որ ամենքից
Քեզ եմ սիրել առաւել :

Թո՛ղ սա լինի, ասեցի ես,
Արու զաւակ ինձ համար,
Սրա անվախ, անան սիրտը
Քաջ տղամարդի է յարմար :

Էլ աղջիկ չես այսուհետև,
 Չը մուսանաս այդ բնաւ .
 Դու աշխատի՛ր, որ ստանաս
 Բարի անուն, մեծ համբաւ :
 Արքայական ապարանքը
 Մի մեծ բոյն է փորձութեան .
 Եթէ սխալ մի քայլ անես,
 Դու կորած ես յաւիտեան :
 Այժմ գնա՛, իմ հո՛գեակ,
 Օրհնութիւնս քեզ հետ տա՛ր,
 Եղի՛ր բարի, մեծահոգի,
 Եղի՛ր անմեղ ու արդար . . .

Հայ Գրողներ

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

Ղազարոս Աղայեան. Բանաստեղծ, վիպասան, մանկավարժ—
 ուսուցիչ և հրապարակագիր, Ռուսահայոց գրական ամէնէն պատկառելի
 դէմքերէն մին. բազմակողմանի գրող մը որ գրականութեան ամէն սե-
 ռերը մշակած է, ունի բազմաթիւ երկասիրութիւններ՝ բանաստեղծական,
 վիպական, բանասիրական, մատենախօսական, մանկավարժական և
 մանկական, մանաւանդ մանկական որուն մէջ հաւատարող չի կայ իրեն .
 ինքը եղած է ամէնէն աւելի մանուկներու համար գրող մը և այս իսկ
 է պատճառը որ զինքը Մանուկներու բանաստեղծ կոչեցին : Ա՛տէր-
 սընի և կամ Տիկին Սէկիւրի պէս մանուկներու հոգեբանութիւնը լաւ
 սերտեց և անոնց հասկնալի լեզուաւ վիպակներ, հէքեածներ, զրոյցներ
 գրեց, մէկզմէկէ հետաքրքրաշարժ նիւթեր՝ որոնք սոգուն հոգեկան կա-
 րողութիւնները կը մշակեն և բարոյական մարդը կը կազմեն իր մէջ :

Աղայեան, իբր մանկավարժ, ամէնէն գործնական օրինակը տուած է
 հրատարակելով Մայրենի Լեզուի չորս հատոր դասագրքերու մէթոտիկ
 շարք մը՝ որ առ հասարակ ուստահայ վարժարանաց մէջ կը գործածուին :

Աղայեան, իբր հրապարակագիր, աշխատակցութեան մեծ բաժին մը
 հանած է Ռուսահայոց՝ Արքիւր, Արաբաս, Հանդէս գրական ու պատ-
 մական, Մշակ, Մուրհ, Տարագ և փոքր հանդէսներուն ու թերթերուն :

Գ Ա Ր Ն Ա Ն Ա Ն Ձ Ր Ե Ի

Ե՛կ, գարնա՛ն անձրև, թափու՛ի՛ր յորդառատ
Ցրտացած երկրի սառ կրթճքի վըրայ .
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նրրա կրթճքին ջերմ կեանքը եռայ :

Երկար նա տանջւեց դառնաշունչ ճմրան
Ցուրտ կապանքներում քեզ սպասելով .
Նա շա՛տ համբերեց . . . կենսատու գարնան
Քաղցր կարօտը ջերմ փայփայելով :

Թափու՛ի՛ր, ա՛յ անձրև, ինչպէս մարգարիտ
Ինչպէս երկնառաք ցօղը կենսարեր,
Ուռղի՛ր դաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով պատի՛ր լեռներ ու ձորեր :

Թո՛ղ յորդանալով աղբիւր ու գետակ
Սառցէ շղթաներ անահ խորտակին .
Դուրս գան ակերից, վազեն համարձակ,
Աղբա խոխոջան, ազատ կարկաջեն :

Թո՛ղ քեզ լոյս-արև ժպտի սիրավառ,
Եւ որպէս երկնից հաշտութեան նշան,
Քո կաթիլներում փայլուն ու պայծառ
Նա սիրով կապէ կարմիր ծիածան . . .

Ե՛կ, գարնա՛ն անձրև, թափու՛ի՛ր յորդառատ
Ցրտացած երկրի սառ կրթճքի վըրայ .
Թո՛ղ նորից երկիր շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նրրա կրթճքին ջերմ կեանքը եռայ :

ՔՈՒ ՍՏՈՒԵՐԴ

ՍԻՐԵԼԻՒ ՍԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Իրիկնամուտին երբ ծովափին մօտ
Մամուռին վրայ նստած ձեռն ի ծնօտ
Մրմունջներուն հետ մանր ալիքներուն
Թե կ'առնեն հոգւոյս երազներն համբուն .
Տարտղնած փունջեր դալուկ լոյսերու
Լուրթ երկրնքին վրայ երբ ցոլան ազու .
Երբ հանդիպակաց լերկ ժայռերուն վրայ
Նուրբ պարիկներու հոյլը կը խայտայ ,
Երբ մտացածին բոյրեր՝ անոյշ խունկ
Կուգան պարուրել իմ սրտիս խոկմունք
Հոն փրփուրին մէջ ամպերուն արծաթ
Պաշտելի ստուերդ կ'անցնի լուսածաթ :

Երբ գիշերուան խոր արհաւիրքին մէջ
Աղօտ ճրրագին նշոյլներն անշէջ
Սփռւին ճերմակ սրնարին վրայ
Ուր հէք մահամերձն իր կեանքը կ'ողբայ ,
Հոն դող սրտիս մէջ , հոգւոյս մէջ ալ ցաւ
Տեսնելով ախտին աւերներն անբաւ ,
Այն տառապողին վրայ գլխիկոր
Գթութեան ցօղեր , գգուանքներ բոլոր
Շիթ առ շիթ իրեն թորելու համար
Սոսկումն աչքիս մէջ երբ կը տքնիմ յար ,
Ցուրտ սենեակին մէջ մահուամբ միայն լեցուն
Կեցած կը տեսնեմ քու ստուերդ ժպտուն :

Երբ սին փառքերուն համար աշխարհիս
Գիշեր ու ցերեկ կը տանջեմ հոգիս ,

Երբ վայելքներու համար կեղծ ունայն
Մեր ցնորքներով կազմուած հանգրուան,
Հոծ փափաքներով սիրտըս առլցուած
Չի նետելով իսկ ակնարկ մը գթած
Կ'անցնիմ մարդկային վշտերու քովէն .
Երբ որբին կոծերն, ծերունւոյն աչքէն
Թափուած արտասուք չեն թրթռացրներ
Թոյլ ու մեղկացած ջիղերս անտարբեր,
Այն ատեն վառուած ցամամբ մը վըսեմ
Գոգո՛հ, քու ստուերդ առջևս կը տեսնեմ . . . :

Իսկ երբ պատրանքի սև վայրկեաններուս
Կորսուած կ'զգամ համայն սէր և յոյս,
Թախծութեան անբաւ թեւերուն վրայ,
Երբ հոգիս անհուն իր ցաւը կուլայ,
Երբ ամէն իղձերս, խօլ թիթեանիկներ
Թուած գացած են ցլիր ցան օդն ի վեր,
Երբ խարուած կ'զգամ ես զիս ու անոք,
Եւ կեանքիս բաժին միայն ցաւն ու հոգ,
Ստուերդ՝ որ կ'ապրի կեանքով մ'անձանօթ
Կուգայ կանգ կ'առնէ խոնջած գլխուս մօտ,
Գորով ցօղելով դալուկ ճակտիս վրայ
Անհուն լոյս երկինքն ինձի ցոյց կուտայ :

Անտիպ Գործեր

ՏԿՆ. ԼԻՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ



Ջ Ա Ր Ք Օ Ն Ք

Իբրև մանկուհի որ կ'ելնէ ծովէն
Շրղարչէ լօղիկն ըսպիտակարոյր
Հողմէն ծուփ ի ծուփ • և ձիւն սւսերէն՝
Մարգրտակայլակ կ'երկննան վարսք իւր :

Այգն ալիքներէն երկինքն է ելեր
Եւ իւր կաթնաբուղիս ճակատուն վերայ
Թարմ վարդի կոկոնք պըսակ են կապեր ,
Անող է թէ հրեշտակ որ հեռուն շողայ :—

Եւ համապարփակ մըշուշին ծոցէն
Ծովն ու հեռաւոր կղզեակք՝ և հաւն այն ,
Եւ մահիկն ի հալս և հուրք մինարէն
Երազի մէջէն կարծես կ'երևան :

Իբրև ուրուական ինչ գոլորչաձև
Յերկրէ ի յերկին թևերն ընդլայնած՝
Քունը կը փախչի , և ետին թեթև
Թռչրաին ցընորք ի բիր մահացուաց :—

Եւ յանկողնոյն եղկ գիրկ քուն ընդ արթուն՝
Մէջէմէջ անթիւ աշխարհներու ծոց
Տարուբերին միտք , մի դըլթած զուարթուն
Պարտցնէ զքեզ ի դունդ անըջոց •

Անոր ամպերէն շողեր կայլակեն •
Կը լսես ժրպիտս • անտես արձագանդք
Օղային երգեր կ'անդրադարձընեն •
Քովէդ կը սահին ծալ ծալ պատմուճանք :

Կը ճեմես երբեմն կաղնիներու
Հովասուն և մութ անտառներու ծոց,
Եւ քովը թեւէր կախուած է աղու
Աղջիկ մը մաղերն արձակած հողմոց :

Ծառի մը կոճղէն լըճին սուրբ ալեաց
Վըրան ծրուելով կը ժպտի նա քեզ,
Դու չես խօսիր.—բայց ընդ տերես ի սլաց
Թռչնիկք թարգմանեն զանձուկդ աղեկէդ :

Երբեմն անարկու գիշերոյ մ'ի ստուերս
Եբք շանթն՝ օձ հրեղէն՝ կը զեռայ յալիս՝
Թռչարանքն ի ծուէն նաւու մը յեզերս
Անտանման մրրկին՝ հետ ի մթան կռուիս :

Դալկահար մարին աղջկունք կուսագեղք,
Գահավիժի նաւն անդնդէ անդունդ .
Բայց դու՛ անվեհեր՝ ձեռն արկեալ ի դէկ
Հերք ի հով վարես ըննա յափն անքոյթ :

Կամ թէ զհանձարոյ թերս լայնելով
Սլանաս արծուէթուիչ ի խորս անդ գաղամեաց
Եւ լուսաւորես ըզլի՛ն քս լուսով,
Եւ ընդ քեզ յակճիւս կան աչք մահացուաց :

Քայլափոխ մի ևս մարդկութիւնն ամբողջ
Կ'առնու դէպի լոյս, դէպ յերջանկութիւն
Ատելութեան բոցք կը մարին յոգևոջ
Ցրուին եղերունք աւաջի լուսոյն :

Երբեմն ուղեւոր շրջիս — ոտքիդ տակ
Ովկիանն անհուն թաւալի.—հեռուն

Թռչնոյ մը թև կամ առագաստ ճերմակ
Ալեծփին — երկուքն ալ խնդրեն զիւրեանց բոյն :

Կամ Ասիոյ խորն յաւերակաց շուք
Ցանցառ նոճիներ չորս դին՝ նստեր է
Քարին յեց Տէրվիչ մը, գգուէ զմօրուք
Եւ թանձր հաշիշին մուխով երազէ :

Եւ այն մուխին հետ թեթև յօդ սլանան
Վարդի մէյմէկ թերթ թև ունենալով
Ճինք և հիւրիւներ ի սև արտևան
Եւ բերիք երկայն պատմութեանքն ի հով :

Կամ ժայռակարկառ քարայրի մը ներս
Մաղառներու տակ և ջահ մ'ի ձեռին՝
Առաջնորդուելով աստղէդ կը մտնես .
Անսպառ դանձեր առջիդ կը թափուին :

Դու՛ անհուն հարուստ՝ ծպտեալ և ըզգաստ՝
Թշուառ արնանկին կը զարնես դրրան .
Այլ ևս իրիկուան չը դառնար աղքատն
Տուն՝ մտմտալով և ձեռքերն ունայն :

Այսպէս ի զմայլանս երազք հոյլ ի հոյլ
Թափուելով Այգուն պատմութեաններէն
Իբրև գոյորչի հողմափիւռ և թոյլ
Կիսարթուն հողւոյն շուրջը կը ճախրեն :

Եւ մայրդ օտն ի մատ շունչը բռնելով,
Քեղի ձայն տալու վրրադ է ծրուեր,
Այլ հեշտ անուրջներդ ցրուելու վախով՝
Չեռնամած՝ անձայն յաղօթս է կայներ :

Մ Ի Ք Է Լ - Ա Ն Ճ Է Լ Օ Ի Մ Ո Վ Ս Է Ս Ը

Հռոմի Ս . Պիէր-օ-Լիէնը մի սուլորական եկեղեցի է .
բայց ամենայն օր լի է ուխտաւորներով , որովհետեւ այն-
տեղ է Միքէլ-Անճէլօի հուշակաւոր «Մովսէսը» :

Իմ այցելած օրը , մի անձրևոտ խոնաւ օր , եկեղե-
ցում բազմաթիւ օտարականներ կան : Ամէն մի նոր մրա-
նոյ աւանոց ուշք դարձնելու եկեղեցու ճոխ դարդերի վը-
րայ , ուղիւ գէպի մայր սեղանի աջ կողմն է դիմում ,
ուր նստել է Մովսէսը՝ անապատների իշխանը , այնպէս՝
ինչպէս նա ներկայացել է Միքէլ-Անճէլօի երևակայու-
թեանը : Այցելուները նստած կամ կանգնած՝ ակնապիշ
դիտում են արձանը , հազիւ լսելի փափառկով յայտնում
են փոխադարձ տպաւորութիւնները , կամ ժամերով մը-
նում են քարացած այս համօրէն պերճախօս մարմարէ
զանգուածի տաաջ : Արդարեւ Մովսէսը դարերու խաւարի
միջից դուրս է սողացել և զգուշ է այնտեղ իր իշխանա-
կան և մարդարէական բոլոր վեհութեամբ : Անապատների
թափառական ցեղերի ծեր ու վիթխարի նահապետը պատ-
րաստում է չեր կենալ նստած տեղից , արդէն ձախ ձեռ-
քով հաւաքել է իր վերարկուի լայն փեշերը և աջով բըռ-
նել է տանաքանեայ պատուիրանի տախտակները , կիսով
չափ յենուել է միտաքին , որ ծալուել է թեթև կերպով :
Դա մի իսկական հովիւ է , յաղթ իրանը ծածկուած է մի
երկար թիկնոցով , որ հարուստ ծալքերով իշխում է ծրնկ-
ների վրայ , բայց թողնելով աջ ոտքը ծնկից վար . սրուն-
քի վրայ երևում է զանկապանը : Բազուկների և ձեռքի
թաթերի վրայ անատոմիական ճշտութեամբ դժագրուում
են մանուածապատ երակները , իսկ ջղուտ կուռը ասես
ձուլուած է ենկաթից : Նայելով նրան , մարդ սպասում
է , թէ անա նա վեր կը կենայ . ոտքի կը կանգնի , որո-

տալով դուրս կը թափէ, ինչ կուտուած է սրտում, ինչպէս մութ ամպերից ճայթող փոթորիկ: Նրա զայրացած ու մռայլ դէմքը դարձած է դէպի ձախ և նա նայում է այնպիսի շեշտով, աչքերի մէջ այնքան զայրացկոտ կենդանութիւն և եռանդ կայ, որ մարդ ակամայ նայում է դէպի նոյն կողմը. ուր նրա շեշտակի հայեացքն է սեւեւում: Թւում է՝ թէ այնտեղ, դաշտավայրի հեռաւոր հորիզոնի վրայ պիտի երևան հրէաները, անհաւատ ու արծաթասէր, որոնք աստուածային օրէնքներն ու երկիւղը դրել են ոսկէ հորթի ոտների տակ և անկման, ամօթի և գարշութեան տօնն են կատարում: Եւ անկարելի է մի քանի անգամ չը նայել դէպի այն կողմը. ուր նայում է Մովսէսը: Պատրանքը զարմանալի է. փոյթ չէ, որ եկեղեցու կամարների տակ դաշտ ու հորիզոն չը կայ, բայց էլի նայում ես ճիշտ այնպէս, ինչպէս մարդ նայում է մի կողմ նայող բազմութեան հետ, կամ անդիտակցաբար վազում է փախչող ամբոխի հետ:

Հարուստ ու թաւ մօրուքը, որ թափուել է մինչև ձնկները, կախկիտուել է ոլոր-ոլոր, հաստ պատրոյզներով, իսկ դէմքն ասում է, թէ այդ ծեր սրտի մէջ այնքան զայրոյթ է կուտուած, որ բաւական է զսպելու ամենախելաղար ամբոխի ամենաանարգ գծութիւնները: Եւ այդ զայրոյթը դուհիկ. թեթեամբիտ բռնկուին չէ, որ յատուկ է երիտասարդ, անշրջահայեաց զլուխներին. դա գիտակցական է ու ահաւոր և ամբողջ դէմքը կարծես ուզում է ասել՝ «էլի՜ . . . ա՛հ թշուառականներ»:

Դա մի հովիւ է, միևնոյն ժամանակ մի մարդարէ, մի դատաւոր, մի արքայ: Ամբողջ հրէութիւնն է նա. աննկուն, անխորտակելի, որ քաշ է տալիս իր դոյութիւնը կեանքի անապատներում, ինչպէս Մովսէսն իր այս բազմածալ վերարկուն՝ երբեք չը յողնելու, երբեք չը

ճանճրանալու համար : Դա այն դէմքերից մէկն է , որոնք մի գերագոյն ներշնչութեամբ զարհուրելի ու սքանչելի պարտքն են յանձն առնում երկնքի առաջ՝ երջանիկ դարձնել մի ժողովուրդ , հակառակ այդ իսկ ժողովրդի կամքի :

Եթէ ճշմարիտ է , որ մի մարդ կարող է իր մէջ մտրմնացնել մի ամբողջ ժողովուրդ , նրա հողին , նրա բոլոր առաքինութիւններն ու թերութիւնները , պայքարող եռանդն ու անընկճելի կամքը գոյութեան կռուի մէջ , անսիրտ , երկաթէ խստութիւնը իր գոյութեան ուղին հարթելու համար , աւերածի անտարմ վճռականութիւնը , երբ պէտք է վերցնել մէջանդից արդելքներ՝ գերագոյն նպատակին հասնելու համար—ապա համարձակ կարելի է ասել , որ Միքէլ-Անճէլօն դրել է իր Մովսէսի մէջ ամբողջ հրէական ազգի էութիւնը , նրա հողին : Արդարեւ , ծեր նահապետի այս զարմանալի դէմքը կրում է իր վրայ հրեայ ժողովրդի եռանդը՝ յամառ , յարասեւ , անընկճելի զգում եւ , որ այդ վիթխարի ծերունին հարիւր անգամ կարող է զայրոյթից փշրել իր տախտակները , որ ձեռք է բերել այնքան նեղութիւններով եւ հարիւր անգամ Միսա կը բարձրանայ նորերը բեկելու . եւ նա կը տանէ , կը փրկէ իր ժողովուրդը . փայտ չէ եթէ էլի մի քանի կարմիր ծովեր բաշուեն իր առաջ : Միքոլ-Անճէլօի Մովսէսը հրէական ազգն է եւ իր անապասների խստասիրտ , վրէժխնդիր Եհովան միամտմանակ :

Հայ Գրողներ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Աւետիս Ահարոնեան, Լեզանի համալսարանէն , ժամանակակից ռուսահայ գրագէտ , վիպասան ու հրուպարակագիր . թէև տակուին երիտասարդ բայց հայ գրականութեան մէջ առաջնակարգ դիրք մը զրաւած է այսօր իր զանազան երկասիրութիւններովը , որոց մէջ մեծագոյն

ՔՆՈՒՔԵԱՆ ՄԷՋ ՎՍԵՄԸ

Որոտախառն փոթորիկն ալ՝ նուազ սովորական, բայց ոչ յաճախադէպ արտայայտութիւն մըն է վսեմին։ Աշխարհի մէջ քիչ վայրեր կան բնակելի, ուր անծանօթ ըլլայ ան, ու շատ չկան անանկ երկիրներ ուր հազուադէպ բներևոյթ մը ըլլայ։ Անոր ականատես եղողը ամպատճառ պիտի զգայ թէ բան մը կայ անոր մէջ վսեմ, շքեղափառ, ահաւոր։ Երբ երկար ատեն երկինք ջինջ ու անամպ մընալէ վերջ, երկիրը երաշտացած՝ տօթակէզ արևի մը ճառագայթներու տակ, ամպերը կը սկսին վերջապէս իրենց բանակներէ յառաջ խաղաղնել, և հակառակ հոսանքներ զանոնք կը քշեն յառաջ իբր երկու թշնամի բանակներ՝ որոնք իրարու բաղխելու վրայ են. և երկիրն ալ նաևմացած, ամբած կը սպասէ վարը ճակատամարտի ցնցումին, ու հովերը խաղաղած, լուսած անբնական հանդարտութեամբ մը, կը սպասեն ու ականջնին անկած մտիկ կ'ընեն այն հրամանին որ ազատ պիտի արձակէ զանոնք, մինչ տիրազին մթութիւն մը կը տիրապետէ և ելեքարականու-

մասը կը կազմեն վէպերը ու վիպակները՝ լի իրական կեանքի տխուր պատկերներով, որոնք ճշմարիտ մանրատիպարներ են կարծես Հայաստանի փոխտոտականներուն ամենավատեմար կացութեան որ յառաջ եկաւ 1895ի դէմքերուն ժամանակ։ Դարերէ ի վեր հալածուած ու բազմաչարչար ամբողջ ժողովրդի մը կրած տառապանքներուն ամենօրեայ տխուր տեսարանները, որոց ականատես եղած է հեղինակը, խորապէս ազդեցին երիտասարդ գրագէտին վրայ և տուն տուն իրեն այտայայտելու իր տպաւորութիւնները, այնքան յուզիչ շեշտերով ու ցնցող ոճով։ Հեղինակին գրեթէ բոլոր վէպերուն ու վիպակներուն նիւթերը քաղուած են իր աչքին առջև յարատեւ պարզուած այս տեսարաններէն, որոնք իր սեւեռուն գաղաբարը դարձան յաւէտ։

Ահարոնեան զուտ ազգային վիպասան մ'է, Տասղայէվսքիի բնապաշտ հակումները ունի, ինչպէս այս ուրս մեծ վիպասանը իր ազգակիցներուն

Թեամբ բեռնաւորուած միջնորդաւ մը ծանրութիւնը կը ճնշէ մարդուն հոգւոյն վրայ, պահ մը ահաւոր, կարի ահաւոր անակնկալութիւն մը կայ: Եւ ահա նշանը կը տրուի, շացուցիչ փայլակներ կ'ոստնուն ամպէ ամպ, որոտումը կը դռուայ, կը շաշէ, կը ճարճատէ, կ'արձագանգէ բովանդակ երկինքի վրայ. նախ հերզնետէ աւելի գոռալով և յետոյ տակաւ մեղմանալով ու փոխուելով միայն հեռաւոր մրմունջի մը. փայլակը փայլակին կը յաջորդէ, բոմբիւնը կը խառնուի բոմբիւնին հետ, հովերը կ'արձակուին ու տեղատարափը կ'իջնէ հոսանքի մը պէս: Այն ատեն սպիտակ ջրեղէն վարագոյր մը կը ծածկէ իր ներքեւ երկիրը և երկինքը, ու կարծես երկուքը իրար խառնուած են խառնաշփոթ զանգուած մը կազմելու: Ոմանոց միտքերու վրայ այսպիսի տեսարանի մը աղդեցութիւնը իրական վախ յառաջ կը բերէ, որ երբեմն այնքան սաստիկ է որ բոլոր ուրիշ զգացումները իր մէջ կը խորասուզուին, կ'անհետանան: Բայց երբ մարդ մը իրօք չը սարսափիր իր անճնական սպանովութեան համար, որոտոխառն փոթորիկի մը դորձած տպաւորութիւնը՝ վսեմութեան և ահաւորութեան տպաւորութիւն մըն է, տրպաւորութիւն մը՝ ուրկէ շատ դիւրաւ չենք կրնար թօ-

տառապանքը պատկերացուցած է ոռւս միահեծան միապետութեան ներքեւ, նոյն ոգւով և միևնոյն յոռետեսութեամբ Ահարոնեան սզգային տառապանաց վիպագիրը եղած է և այս իսկ է պատճառ որ ոռւսահայ մտաւորական շրջանակներուն մէջ զուլումի երգիչ կը կոչեն զինքը իրաւամբ:

Տաղանդաւոր հեղինակին բազմաթիւ երկասիրութիւններուն մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի են՝ Բաբօն, Ռաբիս, Զնդան, Աբաղալը, Խեղները, Մրկի Սուրբը, Կեանքի դասը, Ազատութեան ճանապարհին վրայ:

Թափել ինքզինքնիս և զոր ոչ ալ կրնանք շուտով մոռնալ :

Մինչև անգամ առանց շանթի և որոտումի ընկերակցութեան, հովի բուռն փոթորիկները երբեմն կը բարձրանան վսեմին մակարդակին : Երբ Եւոզոս, կը թուի բացած ըլլալ իր բանտի դռները, ու երկնից բոլոր հողմերը դուրս կը խուժեն, երբ ծառերը՝ կարծես շուարած հակառակ հովի հոսանքներու առջև, իրենց ճիւղերը մէջ մը մէկ կողմ, մէջ մը միւս կողմ կը շարժեն, և կամ թէ մէկ մէկու ետեւէ վար կ'իջեցնեն գլուխնին սոսկալի շառաչիւնով, երբ անոնք կը կենան փոթորիկին անցքին գլխաւոր ճամբուն վրայ, երբ ամպերը կ'աճապարեն կ'անցնին նսեմ երկինքին վրայէն, և փոթորիկին գոռում գոչումը կը փոխուի ճիչի, գրեթէ մարդկային ճիչի մը, հոն զօրութեան արտայայտութիւն մը կայ որ կ'ահաբեկէ ու կը վսեմացնէ մարդկային միտքը : Չտեսնուած զօրութեան մը ահագին ոյժը, ոյժ մը որ բոլորովին մեր իշխանութենէն դուրս է, և որուն մինչև իսկ «ուրկէ գալը և ուր երթալը» չենք կրնար ըսել, ունի իր մէջ վեհութիւն մը, տարօրինակութիւն մը և գաղտնիք մը՝ որ խորապէս կ'ազդէ մեր վրայ :

Վսեմութիւնը իր վերջին աստիճանին կը հասնի ինչ ինչ կարգէ դուրս բերելու ոյժներու մէջ, որոնք սակայն, մեծաւ մասամբ այնպէս մը կապուած են մարդկային կեանքի վտանգին հետ, որ տեսնողներուն միտքին մէջ ահաւորութեան գաղափար կ'ընկղմի անձնական վախի զգայումին մէջ : Այս կարգին կը վերաբերին երկրաշարժները, յաւկարծական յորդումները և հրաբուխի ժայթքումները : Ասոնցմէ առնենք միայն երկրաշարժը, աւելի ընտանի մեղ քան միւսները : Երբոր հաստատուն գետինը կը դողայ և կը սարսի մեր ոտքերուն ներքև, երբոր

խորունկ ճեղքուածներ աչքերնուս առջև կը բայուին և կը գոցուին կրկին, երբ քարի զանգուածներ կը բրդին մեր գլխուն վերևի ժայռերէն և թաւայելով վար կուգան բլուրին կողերէն մինչև վարի հովիտները, երբ ստորերկեայ ձայներ, իբր թէ երկրին հեծութեան ձայները ըլլային անոնք, կուգան կը հասնին ահանջնուս, երբ լիճեր յանկարծակի կը ցամքին առջևնիս, երբ ծովը ետ ետ կը քաշուի միայն կրկին ետ դառնալու՝ ալիքով մը որ քաղաքին կէսը իր ներքև կը թաղէ, եթէ ասոնք ամէնը դիտելու համար ապահով տեղ մը գտնելու կարող ըլլայինք. տարակոյս չկայ թէ մեր ահի զգացումը ամէնէն խորունկ և ամէնէն բուռն տեսակէն պիտի ըլլար: Բայց իրակահուստով շատ քիչ է որ դիտողը միայն վախի զգացումով կը համակուի այս տեսակ պարագաներու տակ: Երկրաշարժի նկարագրութիւններ կ'անաբեկնն դմեզ, բայց զանոնք տեսնելը սարսափ, սոսկում կ'ազդէ:

Հրաբխական ժայթքումները, սովորական պարագայից մէջ այնքան վտանգալից չեն, և ուստի լաւագոյն պատեհութիւն մը կ'ընծայեն հանդարտաբար դիտելու տեսարանը և ազդուելու անոր վսեմութենէն: Մերթ ընդմերթ, ինչպէս եղաւ Ճավայի մէջ, վտանգը երկրաշարժինին չտի մեծ է: Բայց սովորաբար այնպէս չէ: Տարերու տարափը, զոր սովորաբար հրաբուխ մը կը ժայթքեցնէ, կրնայ անսխառ ըլլալ դիտողին. թէ որ անիկա ինքզինքը ապահով դիրքի մը մէջ դրած է: Լավայի հոսանքը դանդաղաբար կը շարժի, և թէպէտ ոչինչ կարող է կասեցնել կամ խոտորել անոր ընթացքը, չի կրնար մնասել մարդու մը, ցորչափ ան իր ոտքերը և զգայարանքը գործածելու կարողութիւնը ունի և կրնայ ինքզինքը հեռացնել կամ փախչիլ անկէ, երբ վտանգ տեսնէ: Տեսարանը, ինչպէս կը նկարագրուի դիտողներէ, պէտք

է յետին աստիճան վսեմ ըլլայ : Հալած զանգուածը վար կը թափի հրաբուխի բերնին կամ խառնարան կոչուածին եզրէն, իր կարմիր փողփողումով և աստիճանաբար վար կը սողայ լեռան կողէն, կորսնցնելով ամէն ինչ որ ճամբուն վրայ դէմը կ'ելլէ . տեսակ մը անողոք հրէշի կը նրմանի զոր ոչինչ կրնայ ողոքել, և դիտողը կը սարսուայ երբ կը նայի անոր հեռուէն : Գիշեր ատեն տեսարանը վերջին աստիճան ազդու է : Բոցավառ հոսանքը նսեմ լոյս մը կը թափէ չորս կողմը, ու երբ մօտենայ նոճիի կամ վայրի շաղանակենիի անտառներուն, առաջին անգամ ցոյց կուտայ փառաշուք ծառերը իրենց լիակատար գեղեցկութեամբ և կորովով, յետոյ, մօտենալով անոնց, յանկարծ կը չորցնէ անոնց տերեւները և զանոնք լերկ կմախքներու կը փոխէ . քիչ վերջ զանոնք մէկէն բոցերու մէջ կը ձգէ սաստիկ տաքութեան ազդեցութեամբ, և անոնք հոն կը բոցավառին իրենց կեցած տեղը, մինչև որ սեցած կոճղի կտորներէ զատ բան մը չձգեր : Այն ծառերը որ ուղղակի հոսանքին առջև կ'ելլեն, կ'առնուին, կը տարուին անկէ և ահագին շառաչմամբ դետինը կը թաւալին . իսկ անոնք որ հոսանքին երկու կողմերն են, կ'այրին կը սենան կամ կը խամրին, և խիտ անտառին մթութեան մէջէն լայն պողոտայ մը կը բացուի որ կերկնայ մինչև հոն ու լավան կը դադրի, անոր հոսումը դադրած ըլլալով :

Քիւրակն

ԲՐՕՖ. Յ. ՃԷՃԻՉԵԱՆ

Լ Ե Ռ Ն Ե Ր Ը

Տեսէք ինչպէս ամառուան այս փառանեղ օրերուն մէջ բնութիւնը իր այլազան երեւոյթներով, կը շողայ մեր առջև, ու ամէն երեւոյթներուն մէջ ալ կայ մասնաւոր գեղեցկութիւն մը և փառք մը, բայց ամէնքդ ալ պիտի ընդունիք թէ լեռներու վիթխարի կոյտերը և փառաւորութիւնը, անոնց ահարկու մենութիւնը և ամենախորին լռութիւնը մասնաւոր կերպով մը յարմար կ'ընեն զանոնք ներշնչելու, հանդարտեցնելու և ափսիելու ամէն անոնք որոնք աշխարհի մաքառումներէն ու աղմուկներէն խոնջած ու շուարած՝ կը դիմեն տնոնց: Հոն անոնց մէջ է որ մարդկային պայքարներու գոչիւնները կը կորսուին բնութեան այն վսեմ խաղաղութեան մէջ, հոն այն լռութեան մէջ կը հանդարտին տենդոտ բաղձանքներն ու յուզումնալից վրդովումները: Ամպածրար լեռները՝ որոնց կատարները կտէ կտէ կը բարձրանան վսեմ շարքով մը՝ իրենց ապխտակափառ դլուխները կը թաթխեն երկնից վճիտ կապոյտին մէջ, մինչ վարր անոնց նսեմ թաքուն անցքերուն մէջէն միջին աւ զով վտակները կը հոսին, երգելով երգ մը որ մարդկային բառեր չունի, բայց անոյշ է և անբայատրելի կերպով անոյշ՝ վերին գաւառներու բոլոր մաքրութեամբը, և ունի թարմութիւն մը որ կը զտնուծի մի միայն այն բարձրութեանց մէջ ուր մարդկային ոտք կոխած չէ: Ու երբ կը քալես, բարեկամս, այն նեղ անցքերուն մէջէն, լռին խնդութեամբ մը կը համակուիս, քանզի նոր կերպով մը կ'զգան հիմա քու յարաբերութիւնդ աշխարհի փառաւոր, վսեմ կարգաւորութեան հետ. կ'զգաս նաեւ թարմ հաղորդակցութիւն մը այն մեծ, անհուն Հոգւոյն հետ որուն խորհրդանշաններն ու հանդերձն են բոլոր տեսանելի բաներն: Կայնէ այն վսեմ

բարձրութիւններուն վրայ և հոն նոր յայտնութիւններ ,
նոր տեսիլներ պիտի ունենաս : Կայնէ օրինակի համար ,
Չուիցերիոյ բարձր լեռանց կատարներէն մէկուն վրայ .
դարձուր աչքերդ հորիզոնին վրայ , և ահա կը կանգնին
քու առջևդ Եւրոպայի ամէնէն փառաշուք լեռներէն
տասը տասնըհինգ հատը , որոնց մէջ կան անանկներ որ
կը բարձրանան դէպի երկինք տաներեք , տաննեչորս
հազար ոտք բարձրութեամբ , կրանիթեայ ժայռեր որոնք
անհուն աշտարակի պէս կը բարձրանան օդին մէջ , ու
դուն կը տեսնես զանոնք՝ ստորտտէն մինչև զազաթը՝
ցցուած աչքիդ առջև իրենց ահեղ բարձրութեամբ : Եւ
ահա սառնարան մը , սառի մեծ դեռ մը , որ միշտ կը
շարժի , ու երբեք չերեիր որ կը շարժի : Ու այս լեռնե-
րուն կողերէն վար կ'իջնեն , սպիտակ , բիւրեղեայ , ճա-
ճանչաւէտ արևուն լոյսովը , նայէ անոնց ամէնուն վրայ
այդ շքեղ բարձրութիւններէն , որոնց կատարներուն վրայ
արևը կը լոցավառէ լոյսի բոլոր մեղեդիները ու ներ-
դաշնակութիւնները , կայնէ հոն մինակ , նայէ այս բոլոր
լռին ու անբաղաարելի փառաւորութեանց վրայ , ու այն
ատեն դուն ևս այդ մեծութեանց մէջ քուկինդ ալ կը
տեսնես նոր լոյսով մը : Կ'զգաս թէ Աստուծոյ որդի ես ,
քու Հօրդ փառահեղ կայսրութեան մէջ կանգնած , ան
ատեն բոլոր սին բաներու համար արհամարհանք մը մ'աչն
կ'ունենաս : Կ'զգաս յաւիտենականութիւնը , կ'զգաս
զԱստուած , և փառքը , Կեանքը սովորական կեանքը
հեռուն կը մնայ հիմակ , անոր մրմունջը կը նմանի ուլ-
կէանին այն մրմունջին զոր կը լսես երբ անոր ալիքները
կը բաղխուին եղերքներուն քսան մզոն հեռու քեզմէ :
Կեանքը հիմակ անհետացող երազի աղօտ յիշատակին պէս
է : Ի՞նչ են հիմա փառասիրութիւն , սնապարծութիւն ու
բոլոր ուրիշ երկրային կիրքեր : Անոնք կ'անհետանան

Նման այն անհամար միջատներուն որոնք ամառուան տաք ժամու մը մէջ շուրջդ կը բզզան՝ անվերջ բզզիւնով մը, եւ որոնք ամառնային տարափէ մը ետքը՝ վայրկենապէս աներեւոյթ կ'ըլլան :

Լեռներուն փառքը լռելեայն մեր սկեպտիկեանութիւնը կը ցուցնէ մարդկային ճակատագրի մեծութեան նկատմամբ : Աշխարհի մը մէջ ուր այսքան բարձրութիւններ կը վերամբառնան մենաւոր վեհափառութեամբ մը, հոգին, որուն կը խօսին այնքան բազմատեսակ ու այնքան պերճախօս ձայներով, վերստին կ'զգայ այն Աստուածային էակը որ կը ձեւակերպէ իր ճակատագիրը, ու նոր հաւատք մը կ'ստանայ այն իրերուն վրայ որոնք անտեսանելի եւ յաւիտենական են : Այսպիսի բարձրութեանց վրայ կայնած աստե՛նն էր որ հռչակաւոր բնազէտ թինառալ, սկեպտիկ մը կրօնի մէջ, հոգեւարսուս զգացումներով համակուած գոչեց իր քովը եղողներուն «Ո՛հ, կըզգամ, կ'զգամ զԱստուած եւ Անմահութիւնը, միայն թէ մի ըսէք ինձի որ ապացուցանեմ՝ զանոնք :»

Լերանց այս կատարներուն վրայ, արեւը մարը մանելէն երեք չորս ժամ ետքը, երբոր վարի կողերն ու հովիտները գիշերային մթութեամբ փաթթուած են, հոն վերը լոյս կայ : Ճանապարհորդք միշտ անպատում հիացում ու հրճուանք զգացած են այն կարմիր, կանաչ, դեղին շքեղ բոցերուն վրայ, որոնցով կը վառուին վերին կատարներն, երբ վարը ամէն տեղ մութ գիշերն է որ կը փրէ :

Այսպէս չե՞ն նաև հոգիի ու ներքին տեսութեան այն բարձր կատարներն ալ որոնք փառահեղ լոյսով ողողեալ են. մինչ վարը եղողները մթութենէ, տարակոյսէ զատ ուրիշ բան չեն տեսներ :

Բիւրակն

ԲՐՕՖ. Յ. ՃԷՃԻՋԵԱՆ

ԲՐՕՖ. Յակոբոս ՃԷՆԻՂԵԱՆ. Ռօպէրթ Գուէնի ուսուցչական մարմնոյն ամէնէն կարող ու բազմարդիւն անդամներէն մին, նախկին

ՅԱՓՈՒՆՍ ԼԷՄԱՆՈՒ

Կը բաժնուիս ժընէվէն, բայց աչքդ կրնա՞յ բաժնուիլ շրջակայ հմայիչ տեսարաններէն, այս դալարագեղ բլուրներէն՝ որ մեղմիւ կը բարձրանան լճին եզերքն ի վեր, այս վայելչագեղ վիլաններէն՝ ծառերու ետեւ պահուրտած, որոց գրեթէ իւրաքանչիւրն ունի սխրալի յիշատակ մը, ուշագրաւ պատմութիւն մը: Մէկ կողմ դղեակն ու դարաստանը մեծափարթամ Ռոշիլտայ, միւս կողմ ճարտարամիտ Նէքերին՝ հաւատարիմ պաշտօնեայ տարաբաղդ Լուի Ժ.Չ.ի: Թէև բնիկ զուկերիացի էր Նէքէր, ինչպէս նաև իւր տաղանդաւոր կինն, և սերունդ անշուք ընտանեաց, բայց Յեղափոխութեան ճգնաժամին միջոցին ամէնէն ժողովրդական ու ազդեցիկ անձն եղաւ պահ մը ի Ֆրանսա: Սոյն դղեակին մէջ բնակեցաւ մի քանի տարիներ նաև իւր հանձարեղ ու արիասիրտ դուստրն Տիկին տը Սթալ. հոն կը պահուին դեռ խնամով իր դրասեղանն ու կենդանագիրն, և անտի ոչ հեռի ցոյց կը տրուի իւր գերեզմանը վարսադեղ ծառոց անդորր ստուերին տակ:

Կը հասնիս ի Հուռն, ուր կը նշմարես վաղեմի դղեակ մը ստուար որմերով, յորում երբեմն բնակած է Պօնաթէ-

համբաւաւոր աշակերտը նոյն վարժարանին, ուր երկար տարիներէ ի վեր կը դասախօսէ հին և նոր հայերէն, անգղիերէն և հայ մատենագրութիւն:

Յարգելի Բրօֆէսէօրը ուսուցչական կեանքէն դուրս ալ շատ փընտռուած ու պաշտուած անուն մ'է ամէն հայ մտաւորական շրջանակներուն մէջ, իբր առաջին կարգի ճարտարախօս ատենարան մը:

Իբր հրապարակագիր մեծագոյն բաժինը ունեցած է Բիւրակն հանդէսին խմբագրութեան մէջ, իր կրօնական, բարոյական, իմաստասիրական և ընկերային նիւթերու վրայ գրած բազմաթիւ լուրջ յօդուածներովը որոնք առ հասարակ դասական մաքուր աշխարհաբարի, վսեմ ու գեղեցիկ ոճի օրինակներ կը մնան միշտ:

Թըն , զուելցերիացի այնքան համբաւաւոր հեղինակ մը : Ո՛չ շատ հեռի կը տեսնուին Ժէրօմ Նարոլէոնի ընդարձակ կալուածներն ու ընդարձակ դղեակը : Ապա կուգայ Ռօլ , հոս էր որ երկիցս Ժիւրայէն իջայ ի Լէման , մաքուր փողոցներով , կոկիկ ու գեղեցկադիր աւան մը , ծննդավայր Տը Լա Հարթ զօրապետին , Աղեքսանդր Ա . կայսեր դաստիարակն՝ որոյ ի յարդանա կոթող մը կանդնած է քաղաքն կղղեակի մը մէջ եզերաց մօտիկ : Մեծ դեր մ'է կատարած Տը Լա Հարթ ապահովելու համար անկախութիւնն Վօյի , իւր բնիկ քանթօնին : Երախտագէտ Չարն կ'ըսէր օր մը իւր վատտակաւոր դասատուին . « Ի՞նչ ըրիր ամէն ինչ ինձ համար , ի՞նչ կ'ուզես որ ես ընեմ քեզ համար » : « Իմ միակ փափաքս է , պատասխանեց զուելցերիացի հայրենասէրն , որ թոյլ տաք ինձ խօսիլ ձեզ իմ հայրենեացս վրայ , երբ և կամիմ : » Յոյժ փառաւոր տեսարաններ թէ՛ Ռօլի և թէ՛ հետեւեալ քաղաքին Մօլտի բարձունքէն :

Կը ցանկան անշուշտ աչքդ ու միտքդ յառիւ զմայլիլ ամենուրեք ընդ երկար ցյազուրդ , բայց կը սահի շուգենաւդ դէպ յառաջ խաղաղաւէտ գեղածուփ մկանանցն ի վերայ . և նոր տեսարաններ , նոր յիշատակներ կը յանկուցանեն ուշդ ու հայեացդ :

Ահա ի տես կուգայ արդէն Լօզան , պատկառելի ժամանակակից մը Հռովմայեցւոց , այժմ մայրաքաղաքն Վօյի , աւելի քան ՅՅ հազար բնակչօք , որ շքեղապէս կը տարածուի Ժօուա լերան աստիճանաւոր դալարադեղ կողերց վրայ , և այնքան հրապուրիչ երևոյթ մ'ունի ի մասնաւորի լճէն , իւր բարձրադիր Մայր Եկեղեցւոյն և մօտակայ վաղնջուց դղեակին վսեմաշուք հովանւոյն տակ : Լօզանի փողոցները թէպէտ լայն և մաքուր , այլ շատ զառիվեր են ու օձապտոյտ , այնպէս որ աստ անդ կը

տեսնես բազմաթիւ երկայն սանդուխներ հաղորդակցութիւնը դիւրացնելու համար : Քաղաքին երկու բլուրներն , հին ու նոր մասերն , միացեալ են «Մեծ կամրջով» որ 135 կանդուն երկայնութիւն ունի : Ի՞նչ ոլորուն ու երկայն շրջան մ'ընել ստիպուեցանք օր մը , քաղաքին փողոցներուն դեռ անձանօթ , հասնելու համար Մայր Եկեղեցին , որ մեր աչաց առջև կ'երևէր :

Մեծածաւալ ու մեծաշուք շէնք մ'է այդ Եկեղեցին , 352 ոտք երկայն 150 ոտք լայն , ակնահաճոյ համեմատութեամբ : Առաստաղին միջին մասն , 66 ոտք բարձր , կը հանդէի այլադան ոճերով քսան սեանց վրայ : Կը պարունակէ բազմաթիւ յիշատակարաններ ու մահարձաններ , անցելոյն լռիկ այլ աղղկցիկ պատմիչներ : Հոս էր որ յամին 1536 տեղի ունեցաւ հոշակաւոր վիճարանութիւնն որում մասնակցեցան Կալվին ու Պառէլ , և որոյ իբր հետեանօք վերցաւ քաղաքէն եպիսկոպոսական աթոռն , Վօբաժնուեցաւ ընդ միշտ Հռովմէական Եկեղեցիէն և մերժեց վերջնապէս Սալուայի դերիշխանութիւնը : Պաշտաման ժամուն էր որ մտանք այս Եկեղեցին և դարմայանք դանելով այս մեծայաղթ շէնքը լուռ ու դատարկ : Մասրան մը մէջ էր որ կը կատարուէր պաշտօնն : Չինուորականք իւրեանց փայլուն համազղկեաներով ժողովրդեան մէջ նստած յիրուցան , ուշադրութիւնս կը դրաւ են : Կոյր մ'է որ կ'ածէ երգէոնն : Լօղան ունի կուրաց յոյժ կահոնաւոր ապաստանարան մը : Եկեղեցւոյն դարտաափէն երկայնաձիգ ու հրապուրիչ տեսարան մը քաղաքին , լլճին , լերանց ու հովտաց :

Մետասաներորդ դարուն էր որ սկսաւ շինութիւնն սոյն Եկեղեցւոյն , շքեղադոյն յիշատակն ի Զուլիցեր գոթական ճարտարապետութեան , երիցս այրած և երիցս նորոգուած նախանձախնդիր բարեպաշտութեամբ , թէև

ցարդ չէ բողոքովին աւարտած . և վերջապէս օծուեցաւ ի 1275, ձեռամբ Գրիգոր Ժ. Պապին և ի ներկայութեան Հապսպուրկեան Ռոստօլֆ կայսեր, քաջանուն նախահայրն Աւստրիոյ այժմու վեհապետական գերդաստանին : Կրնայի՞ն Պապ ու կայսր որք այսպէս ջերմեռանդ հանդէսներով կը սրբէին, կը տօնէին իւրեանց մի նոր մեծաշէն եկեղեցին, — կրնայի՞ն արդեօք գուշակել յայնժամ, թէ հոն յընթացս դարուց պիտի հնչէին միայն քարոզներն ու երգերն նշովեալ աղանդաւորաց : Բայց այսպիսի անակալներ չեն պակսիր թէ՛ ի Զուխեր և թէ այլուր :

Կիւրակէ առաւօտ մը ի Լիւձերն, որ հռովմէադաւան քաղաք մ'է, ներկայ գտնուեցայ սկովտիական սլաշտաման կաթոլիկ եկեղեցւոյ մը մէջ, ուստի դեռ նոր կը մեկնէր պապական քահանայն, և որոյ խորանին առջև դեռ կը սլսլար պատարագի կոնթեզը, դեռ կը ծխար խնկոց բուրվառն :

Հանդէպ Լօզանի ֆրանսական ափանց վրայ, կը գրտնու էլիան քաղաքը իւր նշանաւոր ջերմուկներովն, ուր կատարուած հրախաղութիւնքը կը դիտէինք պայծառ գիշեր մը մեր սենեակէն ի Լօզան : Այս ջերմուկներն էր որ կ'երթար ծերունի փաստարան մը անգղիացի, որ ուղեկցած էր ինձ պատահամբ Փարիզէն ի Զուխեր և որ վարմացոյց զիս իւր ճշգրիտ ծանօթութիւններովն ու ջերմ համակրութեամբն Հայոց մասին :

Ի Լօզան բնակած է երկար տարիներ Կիպրն և հոն աւարտած յամին 1787 իւր աննման հետալից երկն, «Պատմութիւն անկման Հռովմէական Պետութեան», գործ մը՝ որոյ պատրաստութիւնը բաղմամբիւ վաստակալից ամաց, կրնայ ըսուիլ ամբողջ կեանքի մը յարատե ու անխոնջ աշխատութիւնն է եղած : «Յուլիսի 27ին կէս գիշերի մօտ էր, կ'ըսէ մեծահռչակ ճեղինակն իւր կենսագրութեան

մէջ, երբ գրեցի վերջին տողերն վերջին էջին պարտիզիս
ամարանոցին մէջ : Վար դրի գրիչս և սկսայ պտոյտ մ'ը-
նել ճեմելիքիս մէջ, աքասիաներ երկուստեք, ուստի կը
տեսնուին շրջակայ վայրերը, լինն ու լեռներն : Բարե-
խառն էր օդն, երկինք պարզ, լուսնի արծաթի գունտը
կ'անդրադառնար ջուրերէն, լուին էր բնութիւնն համայն :
Չպիտի ծածկեմ իմ առաջին յուզումս ուրախութեան, զի
այսպէս կ'ստանայի վերստին ազատութիւնս, և թերևս կը
հիմնէի համբաւս : Բայց շուտով խոնարհեցաւ հպարտու-
թիւնս և մեղամաղձոտութիւն մը տարածուեցաւ մտացս
վրայ, երբ յիշեցի թէ վերջին հրաժեշտս տուած էի այս
իմ հին ու հաճելի դրաղմանս, և թէ ինչ որ ալ լինի
պատմութեանս ապագայն, պատմիչի կեանքս կարճ ու
անատոյզ պարտի լինիլ :» Լօզանի առաջնակարգ օթէլն է
«Օթէլ Կիպրն», որոյ կից է այս պատմական պարտէզն :

Այս թուականիս, ի վերջ կոյս ութն և տասաներորդ
դարուն, Լօզան ժամադրաւայր մ'էր եղած թ' է բնիկ և
թէ օտարազի մատենագրաց, իմաստասիրաց ու քաղա-
քագիտաց : Այդ դերազոյն կաճառին մի դարդն էր չք-
նաղ Տիկին տը Մօնթօլիէօ, հեղինակ բազմահատոր վէ-
պերու, այրի մանկամարդ, յանկուցիչ իւր գեղովն, շնոր-
հովն ու հանճարովն : Տարէց ամուրի մ'էր Կիպրն, տղեղ,
վախտ սրունքներով և յոյր անհեթեթս : Բայց այս չէր
արդելոյր զինքն անշուշտ յափշտակուելէ սոյն տիկնոջ
հրապոյրներէն, և օր մը կը նկատուի յոսս նորա արտա-
յայտելու համար այսու ազդուապէս իւր սէրն ու հիա-
ցումն : Հակառակ սակայն դժգոհ տիկնոջ թախանձանաց
ու հրամանաց, դժբախտ Կիպրն շուարած, յուսախար և
իւր մեծազանգուած մարմնոյն ծանրութեամբը ճնշուած
անկարող է յոտին կանգնիլ վերստին, մինչև վերջապէս
կ'ստիպուի գեղանի վիպասանուհին զանգակին հնչմամբ

կոչել սպասաւորն և ըսել «վերցո՛ւր պարոնը» : Գիրու-
թիւնն չէր եղած երբեք աւելի դժպատեն : Ժամանակա-
կից գրագիտունի մ'է որ կը պատմէ սոյն դէպքն :

Գիտական ու գրական կեդրոն մ'է ցարդ Լօզան ,
երկրորդ միայն ժընէվի և Յիւրիխի :

Լօզանէն դէպ յարևելս լճէն ի վեր բարձրացող բըլ-
րոց վրայ կը նշմարուին գեղատեսիլ այգեստանք , խիտ
խիտ ցանկապատերով պաշտպանուած , այնքան ճաշա-
կաւ , այնքան հոգածութեամբ խնամուած : Լերանց ամ-
փիթատրը կ'ընդարձակի հետզհետէ և կը վսեմանայ , որ-
չափ շողենաւր կը յառաջանայ :

Արեւելք

ԲՐՕՑ. ԱԲՐ. Տ. ՅԱԿՈԲԵԱՆ



ԲՐՕՑ. Արախաւ Տ. Յակոբեան. Ռօպէրթ-Գոլէճի ուսուցչա-
կան մարմնէն , բազմամեայ ուսուցիչ հայերէն ու անգղիերէն լեզուաց ու
խմաստասիրութեան . իբր հրապարակագիր յարգուած գրիչ մ'է իր բա-
րոյական ու տեղագրական նիւթերու վրայ գրած լուրջ ու նկարագեղ
յօդուածներովը . յաջողապէս թարգմանած է անգղիերէնէ հայերէն Տօք .
Ուոշպըրնի Մանկավարժական Դասախօսութիւնները , ինչպէս նաև
նոյն հեղինակին՝ Դրամապատեցութիւն անուն բարոյալից ատենախօսու-
թիւնը :

Ե Ր Ա Ջ

Հեռաւոր ու ամայի
Ծովերու մէջտեղ,
Ես ունենալ կ'ուզէի
Պալատ մը բիւրեղ .

Եւ երթայինք միասին
Քեզ հետ, սի'րական,
Թաղել մեր սէրն այդ բոյնին
Մէջ առանձնութեան :

Մեր շուրջը, գիծ բաժանման
Երկնի եւ ծովուն,
Խաժ հորիզոն մ' հեշտական
Բողորէր անհուն :

Հոն պատմէինք իրարու,
Յառած աչք աչքի,
Մեր խօլ կրազն օդաչու,
Մեր կրազն ոսկի :

Ու մեզ միայն լըսէին
Հուռ ժայռերն անշարժ :
Մեզ միմիայն տեսնէին
Ամպերը շրղարշ :

Ծովուն շրշունչն իր խորին
Երգով վեհափառ
Օրորէր սէ'րը մերին,
Մինչեւ մահը գար . . .

ՄԱՅՐԱԿԱՆ ԳԻՐԿ

Դուն որ ցաւոց հազուեցուցիր ինձ մարմին ,
Մայր , սորվեցո՛ւր ինձ զայն կրթել անխռով
Արիացո՛ւր զիս անըսպառ քու սիրով ,
Մինչև խռոված հողւոյս իյնայ ոյժն յետին :

Ճակտիս վարդեր մէկիկ մէկիկ կը թռածին ,
Ժայռ մ'ոտքերուս սակ կը ցցուի առապար ,
Երկինքը մութ , ես կը աքնիմ վայրապար ,
Անյուսութեան վրչեց հողւոյս մէջ քամին :

Մայր իմ , ո՛վ մայր իմ , բարձ զլիսուս իմ խոնջեալ ,
Աւիւն ոսկերցս , ո՛վ սրտիս քաղցր ապաւէն ,
Միայն քեզմով կը զօրանամ ես դարձեալ :

Բա՛ց , մա՛յր իմ , բա՛ց թեւերդ , իյնամ զրկիդ մէջ ,
Մէկտեղ հրզօր անցնինք կեանքի այս ծովէն ,
Ո՛վ մայր , զիրար զրկած մէկտեղ գտնենք վերջ :

Մատիս

Կ. ՈՍԿԵԱՆ

ԱՆԱՏՕՎՈՒԻ ՀԻՍԱՐ

Հիսար օժտեալ է բնական գեղեցկութեամբ , կանաչազեղ բլուրներ թագ մի կը ձևացնեն իւր գլխին և տուներու զանազան գոյները ծովուն կապոյտին կը խառնուին գեղեցիկ մրցմամբ : Կարծես թէ վոսիորը դիտմամբ իւր ջուրերը նեղ սահմանի մէջ կ'ամփոփէ որպէս զի Ասիոյ Հիսարը մօտեցնէ իւր քրոջն՝ Եւրոպիոյ Հիսարին , որ այնչափ մեղամաղձոտ գեղեցկութեամբ լի է իւր

սգաւոր նոճիներովն, ասոնք անդուլ կը հսկեն այն շիր-
մաց վրայ ուր կարկաճահոս ջուրերը մահուան քունը
կ'որորեն իրենց մրմունջովն, և զորս այեւոր բերդեր
թուին պաշտպանել ընդդէմ բռնաբարութեանց յան-
դուզն ձեռաց: Ասիոյ Հիսարը զուրկ չէ նաև պատմա-
կան առաւելութենէ զի կը հաստատուի թէ այս վայրէն
անցուցած է իւր բանակը Գարեճ՝ շահը Պարսից, երբ
կ'արշաւէր Սկիւթացւոյ դէմ որք խմբեալ էին Դանուբեան
նահանգաց մէջ, և որք խոյս տալով և միշտ ընդ առաջ
քայլելով պարտաւորեցին դռուղ թագաւորը յետս ընկը-
կել, այդ նահանջին ամօթալից յիշատակը հետը տանելով:

Մայրս

ՏԻԿ. Ս. ՏԻԻՍԱԲ

Ա Ռ Ջ Ի Զ Ի Է Ն

Առջի ճերմակ, ասջի ձիւն,
Աւետաբե՛ր ճրմեռուան,
Ողջո՛յն քեզ, ո՛վ խընդո՛թիւն
Հոգիներուն կուսական:

Բա՛ղցըր տեսիլ, ըսպիտակ
Թիթեռնիկներ փափկաթեւ
Կը թըռչրտին պըտուտակ
Պարով մը յամբ ու թեթեւ.

Տուներուն վրայ ճերմակ շայ,
Գետինը գորգ ըսպիտակ.
Ճերմակ տերեւ դիւրահալ
Նուրբ ծառերուն վրայ կուտակ

Ամբրծութեան անուրջքին
Յաղթանակն է շնորհալի .
Անմեղութի՛ւն երկրնքին
Որ երկրի վրայ կը թափի :

Առջի ճերմա՛կ . առջի ձի՛ւն ,
Աւետարե՛ր ճրմեռուան ,
Ողջո՛յն քեզ , ս՛վ խընդութիւն
Հոգիներուն կուսական :

Թերթուածներ

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

Արեակ Զօպանեան. Ժամանակակից հայ գրագէտ-բանաստեղծ, հրատարակագիր ու բանասէր, որ արդի Հայ Մատենագրութեան բազմարդիւն մշակներէն մին եղաւ իր զանազան երկասիրութիւններովը. այս ինքնատիպ տաղանդը մեր գրական ամէնէն ցայտուն դէմքը կը ներկայանայ այսօր իր հմտալից գործերովը որոնք եկան ճոխ շարք մը աւելցրնել մեր աղքատիկ հայ մատենագարաններուն մէջ: Իր գրական գործունէութիւնը կ'սկսի շատ երիտասարդ տարիքէն, որ ատեն լոյս ընծայեց Արեալոյսի Զայներ, Թուղթի Փառք և Թերթուածներ բանաստեղծական արձակ ու ոտանաւոր գրուածները. ասոնց յաջորդեց Պետրոս Գուրեանի կենսագրութիւնը, պաշտելի բանաստեղծին գործերուն ու կեանքին գրական ուսումնասիրութիւնը որ շուտով վեր հանեց հեղինակին ամենաբարձր արժանիքը, Նոր փայլ մ'առաւ երբ սկսաւ հրատարակել Մաղիկ կիսամսեայ զուտ գրական-բանաստեղծական հանդէսը որ մեր ամէն կարգի պարբերականներուն մէջ պիտի մնայ միշտ տիպար հրատարակութիւն մը:

1896ի տխուր դէպքերէն ետքը, չի կարենալով այլ եւս ապրիլ մեր միջավայրին մէջ, Փարիզ գնաց ու հոն սկսաւ իր գրական նոր կեանքը որ զինքը քիչ ատենէն պիտի ընէր մեր արդի մատենագրութեան մէջ շատ կարկաստուն ու փնտռուած անուն մը: Բաղաքակրթութեան այն մեծ ուստանի մէջ առատ սնունդ գտաւ իր գրական հակումները մշակելու ու զարգացնելու և միեւնոյն ժամանակ ընդարձակ ասպարէզ՝ իր անվիատ գործունէութեան, որոյ առաջին արդիւնքը եղաւ Անահիտ հանդէսին հը-

Ա Ք Ա Ղ Ա Ղ Ը

Այն ժամանակ գունաս կարապր իր արցունքէ
բնի մէջ սկսեց մահու սխուր մեղեդին.

ՇԷՔՍԻՐ

Այն օրը զարհուրելի անցքեր անցան Հ... գիւղի
գլխով: Օրը ցերեկով քնեց այդ գիւղը, ընդմիջտ քնեց,
միանգամից քնեց. այնպիսի ժամանակ էր: Վրայ հասաւ
գիշերը. զարմանալի է, թէ ինչո՞ւ այնքան մռայլ են
լինում մեծ ոճիրներին յաջորդող գիշերները:

Այսօր առանձնապէս թանձր էր խաւարը: Հոգեմաշ
ամայութեան վրայ իշխում էր «մեծ լռութիւնը», որ
միջտ զարմանալի անցքերի պատմութիւն գիտէ և յայտնի
չէ, թէ ինչո՞ւ և ու՞մ համար է պահում. ժամանակի հետ
համբուստեան դաշն են կռում և գլորում դէպի յաւիտե-
հականութիւն: Քանի՛ քանի անցքեր մեր երկնքի տակ
այսպէս անցել են գնացել, Հ... գիւղի վրայ էլ այդ օրը
իջաւ «մեծ լռութիւնը», իր հետ ունենալով ամայու-

րատարակութիւնը, որ տաննակէ տարիներէ ի վեր կանոնաւորապէս լոյս
կը տեսնէ ընթերցողներուն մատուցանելով գրական, մատենախօսական
ու բանասիրական լուրջ յօդուածներու և ուսումնասիրութիւններու ճոխ
էջեր. միևնոյն ժամանակ հետզհետէ հրատարակեց իր ուսումնասիրու-
թիւններէն՝

Նահապետ Քուչակի դիւանը. ժողովրդական մեծ բանաստեղծին
երգերը ու քերթուածները զոր առաջին անգամ ինք հրատարակեց
քննական ուսումնասիրութեամբ:

Մկրտիչ Պէճիկբաւեանի բերթուածները ու նաւերը, որոյ առա-
ջին տպագրութիւնը սպառած ըլլալով վերստին հրատարակեց կարևոր
ժանօթագրութեամբ ու սրբագրութեամբ:

Բայց բազմավաստակ հեղինակին զլուխ-գործոցը պիտի մնայ իր
աշխատասիրած՝

Մկրտիչ Պէճիկբաւեանի կեանքն ու գործը, որ քննական ու-
սումնասիրութիւն մ'է ազգային մեծ բանաստեղծին գրական գործին ու

Թիւնն ու խաւարը • և սրանցից վեր, սև տարածութեան մէջ մեռելութեան շունչն անտեսանելի կերպով խաղում էր ցուրտ, սպանիչ խորհրդաւորութեամբ • և այս բոլորը մարդու դործ էր, նրա ձեռքով կատարուած • երկինքն ու երկիրը տխուր հանդիսատեսներ էին, ամաչում էին . . .

Ամայութիւնը սարսափի մայրն է, որովհետև մահուան շունչ է փչում ամայութիւնից • կենդանին ե՞րբ չէ վախեցեր մահից • դռնէ մի ձայն հնչէր, մի հատիկ ձայն • ինչո՞ւ, ի՞նչ արժէ մի ձայնը («մեծ լռութեան»), այս ըստ սպանիչ խաւարի մէջ • մի՞թէ մի ձայնը կարող է լցնել այս զարհուրելի դատարկութիւնը : Խուլ սարսափի ժամին ո՞վ է քննում, ո՞վ է դատում • Թող մի ձայն լինի, դա կենդանութեան նշան է • ի՞նչ փոյթ, թէ որտեղից է դալիս, բաւական է որ ձայն լինի • նա կարծես կը մեղմայնէ խաւարի մէջ իշխող մեռելութեան ցուրտը, էլ սիրտս չի ճաթի, էլ հոգի չի ցաւի, խաւար մթնոլորտն էլ այնպէս չի խեղդի, այնքան ծանր չի լինի :

Բայց ո՞վ պիտի համէ այդ ձայնը • գիւղում կենդանի շունչ կա՞յ • ո՞վ դիտէ, դուցէ և կայ • ի՞նչպէս սիրտ

կեանքի դրւագնեքուն մրոյ որոց մուծ մնացած կէտերը լուսաբանեց մանրագնին խուզարկութեամբ •

Գրական այն ուշագրու դէմքը իր արժանեաց վրայ նոր փայլ մ'ալ աւելցուց երբ հրատարակեց իր՝

Քերթուածները, որ շուտով յայտնեցին բանաստեղծական նրբին ճաշակը ու կարողութիւնը, ինքնատիպ գրչի մը բոլոր խանդերը ու ներշնչուած հոգիի մը բոլոր հմայքը, ինչ որ զիւրը դասեցին արդի հայ բանաստեղծներուն մէջ շատ բարձր տեղ մը • բայց երիտասարդ հեղինակը ոչ թէ միայն հայ մտաւորական շրջանակներուն մէջ իրեն համար յայտնի անուն մը շահեցաւ, սլլ երուպական համբաւ ալ սկսաւ փայելել երբ հայերէնէ ֆրանսերէն Թարգմանեց ու հրատարակեց հին ու նոր բնատոհմիկ մատենագիրներէն բաւական թուով հատընտիր կտորներ որոնք շատ լաւ ճաշակ մը եկան տսլ՝ օտարազգի գրագէտներուն, հայ

անի, ձայն հանի • միակ կենդանի շունչը ընդհանուր մեռելութեան մէջ նոյնպէս մեռնում է ահից • կենդանի էակը խաւար լռութեան մէջ իր նմանին գտնելու յոյսով է ձայն հանում, այլապէս նա չի համարձակուի ճշալ : Հե՞ շտ է, յանկարծ սարսափելի ամայութեան մէջ հնչուած ձայնը մեռնի մենակ, անպատասխան • դա սոսկալի է մահից :

Ձայն չըկայ, լուռ է գիւղը, շուն չի հաչում, կատու չի մլաւում, դուռ չի ճռում, մարդ չի հազում, երեխայ չի ճչում, ոտնաձայն չըկայ • քնած են ամենքն արդեօք • բայց մի՞թէ քնած գիւղն այսպէս մեռնում է • սա ի՞նչ քուն է . . . Սաւար է • դժուար է իմանալ, ոչինչ չի երևում, միայն լռութիւն և ամայութիւն : Կէս գիշերային հովն է միայն իր սովորական անհոգութեամբ փչում մեղմով, ինչ որ շշուկ, ինչ որ փսփսոց բարձրացնում, կամաց՝ ինչպէս դաւադրութիւն, խորհրդաւոր ինչպէս ոգիների գրոյց • նա էլ է գիտակից լռութեան սակ ծածկուած գաղտնիքին, նա նոյն իսկ պատմում է ինչ որ բաներ, բայց նրա լեզուն գուցէ միայն աստղերին է հասկանալի • դա գերմարդկային լեզու է :

Ահա վերջապէս մի ձայն • աքաղաղը կանչեց, մի հատ

հեղինակաց ու գրականութեան վրայ ընդհանրապէս, այս ֆրանսական թարգմանութիւնները երեք հատորներու մէջ ամփոփուած են, ինչպէս

Poèmes arméniens anciens et modernes, հին ու նոր հայ մեծագոյն բանաստեղծներուն ընտրելագոյն հատուածներուն ֆրանսական թարգմանութիւնն է շատ ճարտարութեամբ կատարուած, որ ցոյց կուտայ երկու լեզուաց մէջ ունեցած ամենաբարձր կարողութիւնը :

Chants populaires arméniens, որոյ յառաջաբանը Մ. Բօլ Ատամ գրեց. սոյն թարգմանութիւնը որ շատ գնահատուած է, ֆրանսական Ակադեմիայէն պսակուեցաւ :

Les Trouvères arméniens, հայ ժողովրդական բանաստեղծներուն երգերէն ընտրելագոյններուն ֆրանսերէն թարգմանութիւնն է :

աքաղաղ, բարձր, զիլ ձայնով: Ո՞վ չէր ճանաչում այդ
աքաղաղին. դա Մելիքենց աքաղաղն է. մեծ, փետուր-
ները մուխ-կարմիր, պոչը փառահեղ, կանաչ. ամենից
աւելի գեղեցիկ, ամենից աւելի կուռան, ամենից առաջ
կանչող. այսպէս էր այդ աքաղաղը: Այսօր էլ նա կանչեց
առաջինը բատ իր սովորականին: Խղճուկ թւաւորի մի
ճիչ էր այն, որ դուրս եկաւ Մելիքենց դռմից, լայնա-
տարած արձագանգներով կրկնուեց «քնած» գիւղի վրայ
և մեռաւ խաւար հեռաւորութեան մէջ: Կրկին լռութիւն,
որ այս անգամ է՛լ աւելի ահաւոր դարձաւ, որովհետեւ
այդ մի ձայնին ուրիշները չըյաջորդեցին. մի՞թէ այս գիւ-
ղում մի աքաղաղ կայ միայն, մի՞ հատ կենդանի շունչ,
այն էլ աքաղա՞ղ... սարսափելի է:

Ողորմելի թռչունն ինքն էլ վախեցաւ, ինչպէս կարող
էր վախենալ մի աքաղաղ: Նա մեծ յիշողութիւն չունէր,
բայց բնազդը նրան չարագուշակ բաներ էր ասում. նա
դղում էր, որ երէկ գիշեր այս ժամին իրերն այսպէս չէին
ընթանում աշխարհում: Նա գիտէր, որ իրանից անմիջա-

Ունի նաև ֆրանսերէն ուրիշ հրատարակութիւններ ուլ ինչպէս,
Les massacres d'Arménie, յառաջարանութեամբ Մ.Գլէմանսոյի
L'Arménie, son histoire, sa littérature, որոյ ներածութիւնը
Անաթոլ Ֆրանս գրած է:

Zeïtoun, histoire depuis les origines .

Եւ ուրիշ կարգ մը աշխատասիրութիւններ յաջորդաբար հրատա-
րակելի :

Բազմարդիւն հեղինակին բոլոր այս երկասիրութիւնները կը ցուցնեն
իր ամենաբարձր կարողութիւնը գրական ասպարէզին վրայ. իբր հրա-
պարակագիր, նմանապէս ամենամեծ արժանիքը յայտնի ըրաւ իր լուրջ
յօդուածներովը, որոնք, վերջին քսան տարուան ընթացքին մէջ, երեւ-
ցան գրեթէ բոլոր պարբերականներուն մէջ :

պէս յետոյ սովորարար հարեանենց աքաղաղը պիտի ձայնէր . մի բան , որ նրան սաստիկ կատաղեցնում էր և այդ պատճառով նա երկրորդ անգամ իր հակառակորդին դէմ է՛լ աւելի ուժգին , է՛լ աւելի բարձր էր կանչում : Բայց այսօր հակառակորդի ձայնը չըկար . աքաղաղն սպասում էր զարմացած : Լուսթիւնը չարագուշակ էր : Այդ էլ երկար չզբաղեցրեց մոռացկոտ թռչունին . նա նոյն իսկ անհոգ կերպով , ախորժ տրամադրութեամբ փորձեց գուրգուրել իր ամենից սիրելի ամուսնուն , այն սև հաւին , որ միշտ աջ կողքին էր տեղ բռնում թառի վրայ և սէգ ամուսնու վաղորդեան առաջին գուրգուրանքները վայելում հպարտութեամբ : Աքաղաղը մեկնեց իր աջ թևն ու կտուցը , բայց ապշած մնաց . կողքը դատարկ էր , ընկերուհին չըկար . նա վշտացած ու զայրացած՝ դարձաւ դէպի ձախ կողմի ընկերուհին . դարձեալ դատարկութիւն : Լուս ու դատարկ էր նրա շուրջը , լուս էր նաև իր հակառակորդը : Փամեր անցան . կենդանին մոռացաւ կարծես իր միայնութիւնը և պատրաստուեց երկրորդ անգամ կանչել : Նա թափահարեց իր թևերը և կանչեց ուժգին . ձայնը կրկին արձագանգներով կրկնուեց խաւար տարածութեան մէջ և մեռաւ հեռճւ , հեռճւ , միայնակ , անպատասխան :

Աքաղաղը սպասում էր : Նա գիտէր , որ իր երկրորդ կանչից յետոյ գոմի դուռը ճռուալով կը բացուի , ներակուգայ հօտաղը քթոցը շալակած , անասունները փնջացնելով սաքի կը կանգնեն . նրանց կեր տալու ժամն է այն : Նա լաւ կանչեց , ուժգին , լի կոկորդով , այնպէս որ կարող էր ամբողջ գիւղը զարթեցնել և սակայն դուռը չը ճռուաց , հօտաղը չեկաւ . անասունները չը շարժուեցին . գոմը զարմանալի լուս էր : Ի՞նչ էր պատահել . թռչնի ուղեղն այդ հասկնալ չէր կանողանում . սակայն նա սկը-

սուժ էր վախենալ, այդ ամայութիւնն ու լռութիւնը նրան վախ էին ազդում, բնազդը նրան ասում էր, որ ինչ վատ, շատ վատ բան է կատարուել, աշխարհի կարգը խանգարուել է. և թռչունը փոքրացաւ, կծկուեց, տխրեց...

Հասաւ երրորդ անգամ կանչելու ժամանակը, որից յետոյ գիւղը կամաց-կամաց պիտի ոտքի ելնէր: Անա աքաղաղը կրկին թափ ի թափ տուեց իր թևերը, բարձրացրեց, ձգեց պարանոցը և կանչեց քանի ոյժ ունէր, երկա՛ր, դի՛ւ: կանչեց և սպասեց: Նրանից յետոյ առաջին դարձնողը գիւղում քահանան պիտի լինէր. նա պէտք է դուրս գար դռնից աղօթք մրմնջալով վաղորդեան կիսախաւարի մէջ, Մեծ երկփեղկանի դռան բացուելու և փակուելու թխրկոցը հասնում էր նոյն իսկ մինչև Մելիքենց տունը. աքաղաղն էլ էր լսում այդ թխրկոցը, որ նրա համար այնպէս սովորական էր դարձել: Իրանից քիչ յետոյ լսում էր գիւղական եկեղեցու կոչնակների ձայնը, որ մեղմ, թրթռուն հնչիւններով առաւօտեան զով գեփիւռի թևերի վրայ տարածւում էր քնած գիւղի վրայ, որպէս երկնային օրհնարեր մեղեդի: Այդ ձայնից դարձնում էին ամենքը՝ աղօթաւորներն ու աշխատաւորները, ծեր բերանները յօրանջելով աղօթքներ էին մրմնջում, պառաւները խաչակնքում էին երեսները՝ զանգակների ամէն մի ղօղանջիւնի հետ և կիսախաւար փողոցների միջից, ինչպէս ուրուականներ, դիմում էին դէպի Աստուծոյ տունը: Տների մէջ էլ կեանք ու շարժում էր սկսւում:

Սակայն այսօր ո՛չ քահանայի դուռը թխրկաց, ո՛չ զանգակի ձայնը լսուեց: Ո՛ւր էր քահանան, ինչօ՛ւ էր լուռ կոչնակը, ի՞նչ էր պատահել, այդ էլ չկարողացաւ հասկանալ աքաղաղը. բայց կրկին երկիւղի բնազդը խօսեց նրա մէջ. այսպէս չէր երէկ գիշեր:

Այս անգամ նա սկսեց կանչել անընդհատ, իրարու վրայ: Այն ժամն էր, երբ հովիւը պիտի դուրս քշէր իր հօտը. նրա սրնգի մեղամաղձոտ ձայնը՝ մեղմիկ, լալկան ելևէջներով սովորաբար նախ հնչում էր գիւղին մօտիկ, ապա կամաց-կամաց իր հօտի հետ միասին հեռանում էր դէպի դաշտերն ու լեռները: Նրան հետևում էին հօտադատաւարածների խմբական երգերը, դուժմանների և սայլերի ճռինչը, անասունների բառաչը:

Գիշերային հանդսախոյ յետոյ, առաւօտեան կիսախաւարի մէջ գիւղն ամբողջ ասես ձգձգւում, յօրանջում էր, ամենօրեայ աշխատանքը վերսկսելու համար: Աքաղաղն այսօր կանչում էր և սպասում մէջ ընդ մէջ: Սրինգ չը կար, հովիւ չը կար, հօտ չը կար. հօտաղներն այսօր չէին երգում, դուժմաններ չէին շարժւում, սայլեր չէին ճռնչում, լուռ էր ամէն ինչ:

Աքաղաղն էլ լուց, խալառ յուսահատուած: Նա այժմ կուղէ՞ր ցած իջնել թառից, բայց վախենում էր: Ո՞ւր իջնել այդ լուռթեան մէջ, այդ սարսափելի ամայութեան մէջ. չէ՞ որ նա էլ կենդանի էր, կեանք էր վնդրում: Օ, գոնէ շուտով լոյսը բացուէր, գոնէ մի բան տեսնէր խեղճ թռչունը. բայց այսօր լոյսն էլ ծանր էր գալիս և խաւարը կարծես հեռանալու, չքանալու միտք չունէր:

Վատադատող թռչնի ուղեղն էլ էր աշխատում, աքաղաղը մտածում էր երևի, ինչպէս որ կարող էր մտածել մի թռչուն. բայց հարցերը ծանր էին նրա ողորմելի ուղեղի համար: Նա չը գիտէր, թէ ի՞նչ է պատահել գիւղին ո՞ւր են իր ընկերուհիները, ինչո՞ւ է ինքը մենակ, ինչո՞ւ չի դուրս գալիս քահանան, ինչո՞ւ է համբացել կոչնակը, ո՞ւր է հովիւը, ո՞ւր է նրա հօտը, ո՞վ տարաւ, ո՞վ թաւանեց, հօտաղներն ինչո՞ւ չեն երգում, ո՞վ նրանց պապանձեցրեց այդպէս անսիրտ կերպով. մի՞ գուցէ քնած

են ամենքը, այդ ի՞նչ երկար քուն է այսօրուայ քունը :
Ողորմելի թռչունը չէր յիշում իր աչքով տեսածները :

Սարսափելի բան էր . ո՞վ էր կենդանի թողել այդ մի-
շունչը . ընդհանուր մեռելութեան մէջ ինչի՞ պէտք էր այն :

Եւ աքաղաղը կանչում էր ու կանչում . ո՞ւմ պիտի
զարթեցէ՛ք, շրջապատի քունը ծանր էր, յաւիտենական,
և նրա ձայնն անդօր, թոյլ . բայց կանչում էր իր թառի
բարձրութիւնից բունն թափով, կանչում էր ուժգին քանի
կարող էր . դոնէ այդպէս էր թւում նրան . և իրօք թը-
ւում էր միայն, որովհետեւ նրա ձայնն այժմ կոկորդից
դուրս էր դալիս մի տեսակ ողբագին, նուաղած, լալա-
գին : Նա է՛լ թեւերը չէր թափահարում, էլ հպարտ չէր
իր հնչիւն ձայնով . միայնութիւնը և լռութիւնը խորտա-
կեց նրան . նա կանչում էր և կծկւում, գլուխը քաշ
գցում, ասեա թէ խորհում էր, տխուր էր :

Մէկ էլ յանկարծ մի ոտնաձայն լսուեց գոմում . վեր-
ջապէս նա էլ մինակ չէր . մէկը ներս մտաւ . աքաղաղն
ուժ առաւ, քաջակերուեց, այս անգամ նա թափ տուեց
թեւերը և իսկապէս կանչեց իր լաւ օրերի պէս, կանչեց
և ցած թռաւ թառից :

Երկու աչքեր էին փայլում գոմի կիսախաւարի մէջ,
պաղ, պսպղուն, սարսափելի աչքեր :

Աքաղաղը տեսաւ . հասկացա՞ւ արդեօք, թէ ի՞նչ էին
ասում այդ աչքերը . գուցէ, որովհետեւ նա նորից փորձ
փորձեց թառը բարձրանալ, սակայն ի գո՛ւր . երկու աչ-
քերը մօտեցան, տաք շունչը փչեց թռչնի վրայ և նա
հազիւ կարողացաւ վերջին անգամ մի տխուր ճիչ արձա-
կել գայլի բերանում :

Վերջացաւ . Հ . . . գիւղում էլ ոչինչ չը կար, էլ ոչ
ոք չը կար . . .

Հայ Գրողներ

Ա. Ա. ԱՆՈՒՆԵԱՆ

Ի՞նչ զարհուրելի տեսարան և ի՞նչ Թախծալից նկարագրութիւն...
մարդկային իմացականութիւնը ասկէ աւելի ուժով յղացում մը չի կրնար
ունենալ, ասանկ տխուր պատկեր մը, ա՛յսքան պարզ և ա՛յսքան ճշգրիտ
ներկայացնելու համար :

Ք Ա Ղ Յ Ր Ք Ո Ւ Ն

Ա՛խ, տուէ՛ք ինձ քաղցր մի քուն,
Կեանքից հեռո՛ւ սլանամ
Այն աշխարհը, ուր խնդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ:

Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բոյրը զուարթագին
Ծծեմ անվերջ ես անյագ:

Եւ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխոջէ,
Մի թարմութիւն եղեմային
Զորս բոլորքս տարածէ:

Եւ ինձ ժպտի արշալուսին
Քարնան մատաղ արեգակ,
Եւ գիշերով իմ ճակատին
Խաղայ գողտրիկ վառ լուսնակ:

Եւ աչագեղ կոյսն ականջիս
Իւր մեղեդին մեղմ հնչէ,
Եւ հերարձակ՝ սիրով վրդիս
Փարէ քնքուշ, փաղաքշէ...

Եւ յաւիտեան վայելչութիւն
Գրկէ հոգիս, չը յագենամ...
Ա՛խ, տուէ՛ք ինձ քաղցր մի քուն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ սլանամ:

Կ Ո Յ Ր Ը

(Գ Ի Ի Ղ Ա Կ Ա Ն Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր)

Խիտ կանանչներով պատուած բուներէն վեր բարձրացող ծառերուն հսկայ ճիւղերը կը տատանէին մութին մէջ՝ երերուն ստուերներ յօրինելով : Ամառնային ծաղիկներու կծու ու ծանր հոտ մը կը տարածուէր հանդարտ օդին մէջ՝ զինովցնող բուրումներով : Սեւ լռութեան մէջ մեքենաբար կը լսուէր միջատի մը բզզիւնը որ երբեմն կը մոռցուէր նոյն խակ իր միօրինակութեանը մէջ : Եւ հեռուէն շունի մը ձայնը կուգար, որ խեղձուկ, հիւանդ հաջիւնով մը կուլար :

Վայրկեանները կ'անցնէին ծանր ծանր, եւ տեսնել կը կարծէիր ամպերուն թաւալիլը որոնց գիծերը ջնջուած էին սեփ սեւ երկինքին վրայ : Յանկարծ երբ շանը հաջիւնը կը մարէր յուսահատ ճիչերու մէջ՝ երգի մը եղանակը թրթռաց, որ հետզհետէ կը մօտենար : Չայնը հիասալի էր . առանց ճիգի եղանակը կը հոսէր, դողդղալով, անուշ ելեւէջներով : Մէկէն կը բարձրանար, դիւթիչ, ուժեղ, և անա կ'իջնէր նորէն կը մարէր իբր թէ ճնշուած կուրծքէ մը ելլէր :

Կամաց կամաց, երգին և գիչերուան ազդեցութեանը տակ գինով՝ կը թուէր ինծի որ առերեւոյթ պարիկներ էին որ օդին մէջ կ'երգէին, մինչ ձայնին երազուն անուշութիւնը կարծես կը հաստատէր պատրանքս :

Քիչ մը ետքը ձայնը դադրեցաւ, եւ մօտակայ մարդերուն մէջէն դանդաղ խշրտուք մը լսուեցաւ :

Ամէնքս ալ, լուռ, անշարժ, ընկողմանած էինք խոտերուն վրայ, մտքերնիս տարբեր մտածումներու մէջ թափառուն :



Հիմա կը հասկնայի որ այն ծառերուն հերքեւ մարդկային կուրծք մը կ'ուռէր յուզումներով :

Մուժի ծալքերով ու անհամար ստուերներով շրջանակուած , անկարելի էր տեսնել քայլ մը անդին . բայց արդէն թեթեւ ոտնաձայն մը մեզի կը մօտենար :

Զվախցանք . տանը վարձւորներէն մէկը ըլլալու էր պարտէզին մէջ մնացած . բայց հոյն վայրկեանին իսկ երեսիս վրայ շունչ մը զգայի . և ծանօթ ձայն մը կ'ըսէր ինծի .

— Կ'աղաչեմ , ո՞ւր եմ :

Անմիջապէս հասկցայ . կոյրն էր :

Դեռատի աղջիկ մըն էր սիրուն , խարտեաչ , որ հօրը հետ մինակ կ'ապրէր մեր տանը մէկ սենեակը . կոյր էր . բայց գոց աչքերը պատճառ մը եղած չէին աւրելու դէմքին ամբողջ հրապոյրը , ցաւոտ հրապոյր մը : Քովս հատաւ եղեամէն թրջուած խոտերուն վրայ :

— Դո՞ւն էիր երգողը , ըսի կամայ ձայնով մը , իբր թէ վախնայի խանդարել շուրջս ծանրացող լուսթիւնը :

— Այո՛ , ըսաւ . և պահ մը ետքը աւելցուց . Օհ , խենթեցեր էի այս գիշեր . յիշատակներէս չարչարուած՝ պարտէզ փախայ , և մոռնալով ամէն բան , երգեցի , — հիմա չեմ գիտեր թէ ո՞ւր եմ , խարխափելով հասայ հաս :

Միշտ հետաքրքիր եղած էի գիտնալ խեղճ աղջկան անցեալը . առիթը շուզեցի փախցնել , և հարցուցի :

— Ի՞նչ յիշատակներէ յուզուած էիք

— Վաղը , ըսաւ ծանր ծանր , եղբօրս մահուան տարեդարձն է :

— Եղբօ՞րդ . . .

— Ախ , հիմա մի՛ հարցնէր , պատասխանեց . վաղն առտու կը պատմեմ քեզի :

Գեշերը բաւական յառաջացեր էր , տուն դարձանք : —

Անհանգիստ անոցուցի մնացած ժամերը, և դեռ բողորովին չէր լուացեր, երբ ելայ: Կողմնակի պատուհանէ մը կը տեսնուէր ընդարձակ դաշտ մը որ կը վերջանար լեռներու շարքով մը: Հեռուն, միայնակ շոճի մը իր հաստ ճիւղերը կը տարածէր: Դեռ գիւղը կը քնանար: Հեռուէն բոժոժներու հնչիւն ձայն մը կուգար. գիւղացիներ էին որոնք ճիւղերու վրայ ամաններով կաթ բեռցած կանուխէն մօտակայ տեղերը կը տանէին: Քիչ մը ետքը աքաղաղները խօսիլ սկսան. անոնց խառնուեցան ոչխարներուն մայիւնը և հորթերուն բառաչիւնը:

Վարը տանախրուհին արթնցած էր արդէն և կովու մը ետեւէն կերթար, խիժանով մը դայն դիմացի դաշտը քշելով: Վար իջայ, տասը վարկեանէն ամբողջ գիւղը արթնցած էր: Հոսկէ մարդ մը կ'երթար մշակի գործիքները ուսերուն վրայ առած, հոնկէ աղջիկ մը կ'երևար որ կաթ կը բերէր:

Լեռներու երկու ծայրերուն մէջտեղը խտացած գորշագոյն ամպերը հեռո՛հեռէ կը ճերմկնային կը վարդագունէին. հորիզոնին վրայ ցրուած բոլոր ամպի պատառները դէպի հոն կը վաղէին: Հինգ վայրկեան ետքը թեւ թեւ կը քալէինք թարմ խոտերուն վրայ:

Հօտերը արածելու կը հանէին, ոչխարներուն մէջէն կ'երթայինք ծծելու մաքուր օդը, որուն մէջ վայրի ծաղիկներուն հոտը խառնուած մեղրի համ ունէր:

Եղեամէն թրջուած խոտերը մեր ոտքերուն տակ ճնշուելով, իրենց ներքեւ պահուած մանուշակներուն հոտը օդին մէջ կը տարածուէր:

Եկեղեցիին դանդակը տարտամօրէն կը դօղանջէր. հեռուն, այծերը խենթի պէս կը ցատքրտէին թաւուտներուն մէջ:

Ծառի մը տակ նստանք, և մինչդեռ աչքս մեր առ

ջեւ փռուող Մարմարային կապոյտին մէջ կը մուտլէր , կոյրն ինծի իր պատմութիւնը պատմեց :

Այն ատեն իմացայ որ քանի մը տարի առաջ եղբօրը հետ երջանիկ կ'ապրի եղեր , երբ ծաղկախտի համաճարակի մը միջոցին՝ եղբայրը կը վարակուի : Ձինքը հեռու կը պահեն եղբօրմէն . և հայրը մինակ կը հակէր զաւելին վրայ : Մայրը մեռած էր արդէն :

Իրիկուն մը , չդիմանալով , հակառակ արգելքին , կամաց կամաց եղբօրը սենեակը կ'իջնէ , հազար վարանուններով ու վախերով , չէ թէ իր անձին համար , այլ այն ահուելի անակնկալին զոր պիտի ունենար սենեակին անկիւնը եղբայրը պառկած տեսնելով :

Կը յաջողի եղբօրը սենեակը սպրդիլ , մինչդեռ հայրը՝ յոգնած , քնանալու գացեր էր :

Այդ գիշերը , առտուան դէմ , հիւանդին վիճակը կը գէշնայ , հոգեվարքը կը սկսի . և ա՛լ չեն կրնար զինքն անկէ բաժնել :

Քոյր ու եղբայր , իրարու հետ կը խօսին , գլուխ գլխի , արցունքներով :

Մեռնելու մօտիկ , եղբայրը կը խնդրէ քրոջմէն որ երգէ : Աղջիկը աղուոր ձայն ունէր :

Արցունքներէն խղղուած , խեղճը իր եղանակներուն է՛ն անուշը , է՛ն տխուրը կ'երգէ :

Դեռ երգը չաւարտած , եղբայրը կը մեռնի :

Հետեւեալ օրը ինք ալ հիւանդ էր : Ծաղկախտն իրեն համար աւելի անգութ եղաւ . կեանքը չառաւ , բայց աչքին լոյսը յաւէտ ցամքեցուց :

Երբ այս պատմութիւնն աւարտեց , գլուխն ուսիս դրաւ թեթեօրէն և սկսաւ հեծկլտալ . ան ի՛նչ տխուր են առանց արցունքի հեծկլտանքները . . .

Յետոյ շտկուեցաւ ու հորէն սկսաւ երգել իր երգը , այն երգը որ առջի գիշերն ալ երգած էր :

Հիմա երգը աւելի տխուր կուգար ինծի, աւելի
ցաւոտ :

Ու երգին եղանակն ա՛յնքան անուշ, ա՛յնքան յու-
զիչ էր որ խօսուէն ցաւ մը, ներդաշնակուած հառաչ մը
կը թուէր ինծի :

Ծաղիկ, հանդէս

ԶԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ա Ռ Ա Մ Վ

Անցի՛ր, սե՛ւ ամպ, դու իմ սրտից .
Բացւի՛ր, երկի՛նք կապուտակ .
Տխուր, խաւար թուխալի միջից
Ցոլա՛, գարնա՛ն արեգակ :

Թո՛ղ պատասուի այս ցուրտ ձմրան
Սգոյ հանդերձ տաղտկալի,
Եւ շողշողայ մանուկ բնութեան
Ոսկէ ժպիտ ցանկալի :

Եւ բերկրութեան արտասուքներ
Այս լեռներից թո՛ղ հոսեն .
Թարմ կանանչին ջինջ առուակներ
Քաղցր աւետիք թող խօսեն ,

Թէ մայր երկիրն ազատուեցաւ
Իւր կուռ, ճնշող կապանքից .
Նոր ցնծութեան երգ լսուեցաւ
Հէք արտուտի բերանից . . .

Հայ Գրողներ

Յ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Տասնչորս տարիներ առաջ, Օր. Զապէլ Յովհաննէսեանի (Այժմ
Տիկին Զապէլ Եսայեան) այս գեղեցիկ հատուածը կարդացողը երբեք
սխալած չի պիտի ըլլար տեսնելու, այն վեշտասանամեայ աղջկան մէջ,
ապագայ Տիկին Զապէլ Եսայեանը, հայ գրականութեան ամէնէն պաշ-
տելի ու կարդացուած գրիչը :

Ե Ր Ա Ժ Շ Տ Ո Ի Ք Ի Ի Ն Ը

Տնորքով ապրող հոգիներն ամէն
Արբշուութիւններու կ'առաջնորդեմ ես,
Անոնց յոյզ կուտամ, սլացքներ պէս պէս,
Ու վերացումներ որոնք միշտ կ'օրրեն :

Արբշուութիւններու կ'առաջնորդեմ ես,
Շորէնի հոգին խնկելով վերէն .
Ու վերացումներ որոնք միշտ կ'օրրեն .
Սարսուռի ձիւնը կը տեղամ կարծես .

Շորէնի հոգին խնկելով վերէն,
Բնութեան տարրերն իսկ կը զգան անտես .
Սարսուռի ձիւնը կը տեղամ կարծես,
Երկինքի կապոյտ բարձրութիւններէն :

Բնութեան տարրերն իսկ կը զգան անտես
Ներդաշնակութեանս թրթռումներէն :
Երկինքի կապոյտ բարձրութիւններէն
Լոյս կը նշուլեմ վառ շողերուն պէս :

Ներդաշնակութեանս թրթռումներէն
Քերթողն իր երգը կը հիւսէ այսպէս,
Լոյս կը նշուլեմ վառ շողերուն պէս :
Ցաւի կեանքերուն վրայ յամբօրէն :

Քերթողն իր երգը կը հիւսէ այսպէս,
Հեծեծանքներուս բոլոր վանկերէն,
Ցաւի կեանքերուն վրայ յամբօրէն
Էլտօրատոյի շաւիղս կը տեսնես :

Հեծեծանքներուս բոլոր վանկերէն ,
Սամէնի ձայնը կ'երգէ սիրակէզ ,
Էլտօրատոյի շաւիղս կը տեանես ,
Մղձաւանջներու ամպին վրայէն :

Սամէնի ձայնը կ'երգէ սիրակէզ
Մեղեդիներով լեցուն տարօրէն ,
Մղձաւանջներու ամպին վրայէն
Անուրջ-ծաղիկներ կը թափթփեմ ես :

Մեղեդիներով լեցուն տարօրէն
Քու միտքդ , ընթերցո՛ղ , միսթիք , յուսակէզ ,—
Անուրջ-ծաղիկներ կը թափթփեմ ես ,—
Կը հեռայնեմ մութ տաղտուկներէն :

Քու միտքդ , ընթերցո՛ղ , միսթիք , յուսակէզ ,
Դաշնակութեանս միջոցով նորէն ,
Կը հեռայնեմ մութ տաղտուկներէն ,
Հմայելով զայն յաւիտենապէս :

Մասիս

ՕՐ. ՊԵՐՃՈՒՀԻ ԵԱԶԸՃԵԱՆ

Օր. Պերնուհի Եազընեան. Բոլորովին նոր դէմք մը մեր կին գրողներուն սակաւածիւ շարքին մէջ, ուր շուտով ունեցաւ անուն մը իր ինքնատիպ քերթուածներովը, որոնք զգայուն սրտի մը ներշնչումները կը ցոյացնեն:

Սոյն քերթուածը, որ տաղանդաւոր օրիորդին առաջին արտադրութիւններէն մին կը ներկայացնէ, Մասիս հանդէսին գրական մրցման մէջ առաջին մրցանակ շահեցաւ, 1907ին .

ՈՒՆՍՊՄԻՆՍՊԻՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Տեսնելու համար Շէքսպիրի ազգային ճշմարիտ մեծութիւնը, Լոմտոն այցելող ուղևորին չի բաւեր Պանքային առջև կանգ առնել, կամ վիթխարի մուսէոնները պտրտիլ, կամ նաւահանգիստին վրայ նայուածք մը նետել, կամ նոյն իսկ Փարոսին կատարէն քաղաքին հսկայական համայնապատկերը դիտել որուն սահմանները մշուշներու մէջ կը կորսուին. — Պէտք է Ուէսդմինսդրի եկեղեցին երթալ :

Ո՛չ անոր համար որ այդ ընդարձակ ու բազմամասն եկեղեցին՝ իր դրացի վեհապանծ Սորհրդարանին հետ՝ Լոմտոնի ամէնէն գեղեցիկ շէնքն է և մէկը գոթական ճարտարապետութեան ամէնէն ապշեցուցիչ նրաշակերտներէն : Շէնքին գեղարուեստական մեծութիւնը, որ դուրսէն կը սկսի արդէն իր սլացիկ բարձրութիւններովը և իր քանդակներուն ժանեկային ներդաշնակութեամբը տրտում ու նրբին գեղեցկի մը ազդեցութեամբը քեզ համակել, և որ ներսը, երվնանկար պատուհաններէն ինկող լոյսէն գունաւորուած ստուերին մէջ, հսկայական ու նուրբ սիւներուն, բարձր ու քանդակաւոր կամարներուն, իրար կտրող անթիւ ջլաններուն կոր խոյանքին, բոլոր այդ քարի մելամաղձիկ ու վսեմ բանաստեղծութեան հանդէպ՝ կը սաստկանայ ու կը խորնայ, այդ գեղարուեստական մեծութիւնը վայրկեան մը տեղի կուտայ այն բարոյական մեծութեան առջև որուն ընկճող տպաւորութիւնը քեզ կը թափանցէ՝ ի տես դամբարաններու շարքին որ եկեղեցիին մենութիւնը մուկներու ժողովուրդով մը կը բնակաւորէ :

Ոչ մէկ գիրք, ոչ մէկ տեսարան, ոչ մէկ յիշատակ ինծի տուեր էր երբեք այդ սքանչացման սարսուռը զոր

զգացի՝ երբ Փառքերու այդ գումարումին առջև գտայ
դիս : Ամբողջ Անդլիան հոն է, իր բոլոր մեծութիւննե-
րովը : Եւ ճիշդ անոր համար այդ շարքը մեծ է՝ որ ամ-
բողջ է ան : Կուսակցական ոգին, միակողմանի դատու-
ղութիւնը ընտրութիւնն չէ բրած մեռելներուն մէջէն, խը-
տիր չէ դրած ցեղին պարծանքներուն մէջ : Ամէն անոնք
բր մեծ են եղած, ինչ ճամբով ալ հասած ըլլան մեծու-
թեան, հոն են : Բարիզի Բանթէոնը, որ «Հայրենիքին մեծ
մարդերուն» հանդատարանն ըլլալ կոչուած է, շատ պրզ-
տիկ մաս մը ունի միայն ֆրանսական մեծ յիշատակնե-
րէն, և զանոնք ամբողջապէս տեսած ըլլալու համար,
պէտք է Բանթէոնէն յետոյ, Բէռ-Լաշէզ, Մոնմառզրի գե-
րեզմանատունը, Սէն-Տընիի եկեղեցին, Էնվայիտի տաճա-
րը պարտկիլ : Հոս, միակ հովանիի մը տակ, ամէնքն ալ
հաւաքուած են, կրօնքի մարդն ու պատերազմի մարդը,
մականի մարդը և քնարի մարդը, արուեստի մարդը ու
մտածման մարդը և արհեստի մարդն ալ : Ֆրանսական
քիչ մը պուստ ու մակերևութային ազատամտութեան
հետ բազդատմամբ՝ անդլիական ճշմարտապէս համոզուած
ազատամտութիւնը հոտ՝ ամէնէն աւելի ապացուցուած
կ'երևայ. — Աբմլբաէզի Սառա դքսուհին մօտ Սիտարնա
դերասանուհին, Շէքսպիրն ու Նիւդրնը, Եղիսարէթ թա-
ղուհին և Ճէյմս Ուսոյ մեքենագործը, Լորտ Բալմէրազըն
պետական մարդը և Կարրիք դերասանը, Հէնարլ Երա-
ժիշտը և Ուոլֆ զօրապետը, Բիդ ճարտասանը ու Բորըն-
վալ հաւապետը : Ասոնք ամէնքը աստիճանով, մտած-
մամբ ու կեանքով իրարմէ այնչափ տարբեր ու հոյն իսկ
իրարու հակընդդէմ, ամէնքն ալ Հայրենիքին երախտագէտ
փառաւորման մէջ միացած են՝ որովհետև ամէնքն ալ
իրենց ցեղը սիրած ու որովհետև մեծ են եղած ամէնքն
ալ : Ու ոչինչ այնչափ հզօր, գրեթէ նիւթական եղանակով

մը կը հաստատէ մարդկային մտքին զանազան ձևերուն՝ մեծութեան մէջ եղբայրութիւնը : Եկեղեցիէ աւելի բան մըն է աս, — Մարդկային մտքին տաճարն է :

Այդ լայնամիտ ոգին, այդ ընդարձակ և անխտիր հասկացողութիւնը, ճշմարիտ զարգացման կենսական պայմանն է աս, զոր պէտք էր մենք ալ ըմբռնէինք և իւրացնէինք : Ստիպուած ենք խոստովանելու որ մեր մէջ ճիշդ հակառակ ոգին տիրած է մինչև այսօր : Կեանքի անձուկ իմաստասիրութիւն մը, մտածման միակողմանի և պակասաւոր ուղղութիւն մը մեզ սահմանափակած են տեսակ մը կարծատես դատողութեան մէջ, ուր մտքին տարբեր երեսները իրար չեն հասկցած, նոյն իսկ իրար արհամարհած և ատած են :

Աններող և փակ ոգի մը, որով կրօնքի մարդը ծուռ նայած է գիտութեան մարդուն, գիտութեան մարդը արհամարհած է բանաստեղծութեան մարդը, և բանաստեղծութեան մարդը չէ հասկցած գիտութեան մարդը : Ատեն մը, ծիծաղելի վէճեր ելան մեր մամլոյն մէջ՝ որոշելու համար թէ մեր տղոյ կրթութեան մէջ գիտութիւնը պէտք է նախադասութիւն ունենայ թէ զբականութիւնը : Գիտութեան նուիրուածները մեր մէջ բանաստեղծութիւնը խաղալիկ մը նկատած են, ու բանաստեղծութիւն սիրողները գիտութիւնը անհամ հաշիւ մը կարծած են : Եւ կրօնքի մարդը չէ տեսած որ այդ երկուքին մէջ ալ կրօնք մը կայ :

Ասոր պատճառը ան է անշուշտ որ ոչ մէկը իր սիրել կարծած ճիւղը ճշմարտապէս հասկցած, իրապէս թափանցած է : Որովհետև, քանի խորը երթանք, պիտի տեսնենք որ լուրջ այդ մտածելու տարբերութիւնները պիտի հարթուին, պիտի հալին մեծ նոյնութեան մը մէջ, և ինչպէս մարմիններու բիւրաձև այլազանութեան մէջ գիտութիւնը հետզհետէ միակ նիւթի մը վիճակախօսութիւնները կը տեսնէ, պիտի գտնենք որ մտքին տարբեր

ձեւերն ալ, պարզ աչքին համար՝ իրարու զուգահեռա-
կան, կը միանան սակայն լոյսի ճառագայթներուն պէս՝
միակ հեռաւոր արևի մը մէջ, — ճշմարտութեան պէտքը :
Պիտի ըմբռնենք որ գիտութիւնը իր հաշիւովը, բանաս-
տեղծութիւնը իր երազանքովը, կրօնքը իր խոկումովը,
հոյն կէտին կը ձգտին, ճշմարտութիւնը գտնելու, կամ
աւելի ճիշտ՝ ճշմարտութիւն մը գտնելու, որովհետև ճշ-
մարտութիւնը, ա՛ն չի գտնուիր :

Ասիկա հրաւէր մը չէ կեանքի ուղեգիծ մը չունե-
նալու : Կեանքի բոլոր ճամբաները գիտնալը՝ մարդը աւելի
կարող կ'ընէ իրեն յարմարագոյնը ընտրելու, ու բոլոր
ճամբաներուն եղբայրութեան գաղափարը մարդերը հաշտ
կ'ընէ իրարու : Եւ այս լայն իմաստասիրութիւնը մտա-
ծումին ընդարձակ ու զեղեցիկ ներդաշնակութիւն մը
կուտայ, մեծագոյն արժանիքը՝ ազգի մը գրականութեան
մէջ, և դոր մերը չունի դեռ :

Կ'ուզէի որ այս սկզբունքները թափանցէին մեր նոր
սերունդին կրթութեան մէջ, անոր հիմը ըլլային : Մեր
դպրոցներուն մէջ, ուսուցիչները իրարու դործը կը քան-
դեն, կրօնքի ուսուցիչը գիտութեան ուսուցչին դէմ մըր-
մուալով, գիտութեան, բանաստեղծութեան ուսուցիչները
իրար քաշկուտելով : Պէտք էր ամէնքն ալ հասնէին մտած-
ման այն ընդարձակ ոյորտին՝ ուրկից իրար ըմբռնէին
իրր դործակից և ոչ իրր հակառակորդ : Պէտք է ամէն
ջանք ընել կապերը քակելու տղոցը մտքին շուրջ, զայն
տիեզերքին պէս լայն ընել, ու թողուլ որ իր բնական
մղումին համեմատ զարգանայ : Ու պէտք է ներշնչել
անոնց յարգանքը մարդկային մտքի ուժին համար, ամէն
անգամ որ յայտնուած է ան ազնիւ ու մեծ սահմանի մէջ,
որչափ ալ շրջանակը տարբեր ըլլայ • յարգել ուժը որով-
հետև ուժն է, կոչուի Նարեկացի, Պարոնեան կամ Աղամ-
եան :

Կ' ուզէի մեր դպրոցներուն ճակատը արձանագրել
Կէօթէին ոսկի խօսքը, «Լեցուցէք ձեր միտքն ու սիրտը,
որչափ ալ լայն ըլլան» : «Ու եթէ լայն չեն, պէտք է աւել-
ցնել, լայնցուցէք նախ զանոնք» :

Սա գեղեցիկ արդիւնքը պիտի ունենայինք որ եթէ
Ուէսդմինստրի եկեղեցի մը լեցնելու չափ իրարմէ տար-
բեր մեծութեանց այնքան հարուստ շարք մը ունենալէ
հեռու ենք, մեր մտքերը գոնէ մէկ մէկ Ուէսդմինստր
պիտի ըլլային :

Ծաղիկ, հանդէս

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

Մ Ա Հ Պ Ա Ն Գ Ք Տ Ի Ն

(Ն Մ Ա Ն Ո Ղ Ո Ի Յ Ի Ի Ն)

Մի լայք հայր իմ ու մայրիկ
Կոյս մի՛ լար . թէ երթամ
Յօտար երկիր պանդխտիկ
Այլ շուտով ետ դառնամ .
Դառնա՛մ առ քեզ Հայաստան
Եւ հովիտք ծաղկաբոյր .
Ո՛հ մէկ աւանդ սիրական
Տո՛ւր ինձ մա՛յր քու համբոյր :
Առաւ համբոյրն ու դընայ .
Այլ ի տար աշխարհին
Թըռաւ արևն իւր կենաց
Ի ծաղիկ հասակին .
Հացէ՛ք հայր իմ ու մայրիկ
Հաց ո՛ր կոյս զի երթամ
Յօտար երկիր պանդխտիկ
Մեռանիմ ես անժամ :

Մառնագրութիւն

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Հիւանդ պառկած եմ տենդահար ,
Լեցուն ճակատըս քրտինքով ,
Ցաւերու կրակ անկողնիս քով
Կը հսկէ դէմք մը չոր , նիհար :

Ձեռք մը ջրդուտ ատն ատեն
Կը սեղմէ ձեռքըս տոչորող ,
Մարմինս ամբողջ կը ցնցէ դող ,
Ու ցընորք միտքըս կը պատեն :

Ու կ'երազեմ խելակորոյս :
Ս.յն վշտահար դէմքը ցամաք՝
Որ կը ծռէր վրաս , հիմակ՝
Կը փոխուի վարդ դէմքի մը լոյս :

Ձեռքն որ սարսուռ կուտար ձեռքիս՝
Կակուղ , փափուկ ձեռքի փոխուած՝
Կը հովահրէ ճակատս այրած ,
Որ զով առնու ցամքած հոգիս :

Ու երազոտ կը խորհիմ ես ,
Ապահով ա՛ն է , սիրուհիս ,
Որ խընամել եկեր է զիս ,
Անոյշ , գըթած հրեշտակի պէս ,

Ցանկարծ պաղած ձեռքիս վրբան
Կաթեցաւ տաք բան մը հալած ,
Աչքըս բացի , դեռ շլմորած ,
Աստուած իմ , մօրս արցունքն էր ան :

Մա՛յր իմ , ո՛վ մայր իմ , պաշտելիս ,
Սո՛ւտ է եղեր սէրն աղջկան
Աչքը խարող , լեզուն դրուժան .
Իո՛ւն , միայն դուն կը սիրես զիս :

ԱՄԱՐԱՅՆԻ ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Ամարայնի վարդը վերջին
Կը ծաղկի լո՛ւռ, մենակեցի՛կ .
• Թառամեր են անվերադարձ՝
Բոլոր ընկերքն իր գեղեցիկ :
Իր շուրջ բնաւ չի կայ ծաղիկ,
Չի կայ վարդի կոկոն մ'ալ գէթ,
Որ կարմրի իրեն նրման,
Ու մերթ հծծիւն տայ իրեն հետ :

Չեմ ձգեր քե՛զ թօշնիլ այսպէս
Յօղունիդ վրայ հառաչանքով .
Ընկերքդ ամէն հանգչին հիմայ,
Գնա՛, ննջէ՛ դու անունց քով :
Ի դու՛թ քեզի պիտի սփռեմ
Տերեւերդ բոլոր գետին,
Ու անկենդան հանգչին արդէն
Քու պարտէզի ընկերքդ յետին :

Իցիւ այսպէս ես ալ դնայի
Մտերմութեան ցնորքին ընդ հետ,
Երբ Սիրոյ հուր շրջանակէն
Այս գոհարներն իյնան անհետ :
Երբ բարեկամ սրտերն թօշնին,
Գողտր հոգիներն ալ թռին ա՛լ,
Այս անապատ աշխարհի մէջ
Ո՛վ տականին կ'ուզէ՞ր մընա՛լ . . . :

Թումա Մուր (Թարգմ.)

ՀՐ. ՆԱԶԱՐԵԱՆ

Հրանս Նազարեան. Երիտասարդ բանաստեղծ որ շատ զգայուն
ու գողտրիկ տաղեր ու քերթուածներ ունի՝ զանազան պարբերական
հանդէսներու մէջ լոյս տեսած :

Անգղերէնէ և ֆրանսերէնէ բանաստեղծական յաջող Թարգմանու-
թիւններ ըրած է, որոնցմէ մին է ներկայ քերթուածը :

ԳՈՒՐԵԱՆԻՆ ԼՃԱԿԸ

Ինչո՞ւ ապա՞ծ են, լնակ
Ու չեն խայսար բու ալեակի,
Միթէ հայլուոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ:

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆ

Մէկ համարը միայն բաւական է, անոնց՝ որ սիրած են հէք բանաստեղծ պատանին, մտովի կրկնելու անգամ մըն ալ իր արցունքոտ տողերը ու յիշելու կեանքի տրամագին օրերէն մէկ քանին, երբ ապրիլը՝ տառապելու, մայիսն ալ միգապատ անորոշութեան մը հոմանիշ կը թուին:

Սակայն բանաստեղծը ըմբռնել, հասկնալ անոր հոգին բովանդակ հուրքն ու հրայրքը, անկարելի է չայրած, կամ գոնէ չի միացող սրտերու համար. քնարին թրթրուումներուն վրայ շատեր կրնան հիանալ, սակայն էտութեան խորերէն ճայնակցիլ անոր շեշտերուն, անոնք միայն կրնան որոնց կուրծքին տակ վիշտն ու յիշատակը լարած են իրենց քնարը, որ պատրաստ է ամէնէն թեթեւ ցնցումին, արդէն իսկ հեծկլտալու:

Հովին ընրած անորոշ մէջ աղմուկը, ալեակի մը հեքը, բազմութեան մէջ անհետացող նայուածք մը, շատ անգամ անտուփ տխրութիւն մը կը կազմեն մտածումներուդ մէջ:

Երազն ու յիշատակը տարի չե՛ն ճանչնար: Բոպէ մը կը մանկանա՛ս յանկարծ, աչքերդ փակելով՝ կը թողուս որ տեւէ պատրանքը, կը ցնցուիս, հայելիին մէջէն դու նատ դէմքով դուն քեզի կը նայիս: Ալեակներու տարտամ հեքը, հոս հոն թափառող անհանդարտ հովեր, ամբոխին մէջ անհետացող տրտո՛ւմ նայուածք մը անձանօթ,

խաղալիքի պէս հոս ու հոն կը տարուբերեն զքեզ, տարիներու մութին մէջ կը թափառիս նմանութիւններ փնտռելով :

Ամէն վայրկեան իրեն հետ վերջուշումի բեկոր մը ունի, անհետացած սիրելիներու ստուերներ կը դողդրղան ամէն զիշերներու մութին մէջ. արեւը տարիներուդ հետ պաղած կը թուի ու կը ստիպէ քեզ այն հին ուրի՛շը որոնելու, հրապառ ու բոցեղ շողերով լեցուն :

Դուրեանին Լճակը մանկութենէս սիրած եմ :

Լեռներու ու բարձունքներու այն կեանքէս՝ քանի մը սիրական յիշատակներ, մէկ երկու մանրամի դէմքեր, ու քանի մը հաստ ալ ժողովրդային երգի բեկարներ մնացած են սրտիս մէջ :

Լճակը առաջիններուն հետ կապուած է : Մտերիմները անմոռաց են, ըսի. երգերն ալ անկապ հառաչներ, զորս ես ինծի կը մրմռամ երբեմն, որ զիս չի ծաղրեն :

Ու կը խնդրեմ որ չի ծաղրէք, եթէ բան թէ պաշտելով հանդերձ, մինչև հիմա չէ՛ի հասկցած Լճակը : Հաւատալիքի մը պէս էր որուն նկատմամբ մարդ կրնայ սէր ու յարգանք զգալ, կրնայ պաշտել, առանց սակայն ըմբռնելու :

Դուրեանին Լճակին կեանքին մէջ ոչ մէկ տեղ հանդիպած էի :

Տեսած էի հիասքանչ ծովակը, երկու լլուրներու կուրծքին վրայ տարածուած, Մաստառի խրոխտ ու անարկու գազաթէն քիչ մը վար :

Կրակոտ, այլ այրած մանուկ մը, անոր ափերուն քով թափառիկ, կարդացի երբեմն Դուրեանին Լճակը : Սակայն մեղամաղձոտ չէր այն ծովակը, ու Լճակը հոն չունէ՛ր իր ընկերը : Դուրեանի Լճակը չէ՛ի հասկնար հոն, ուր զեփուր կը յիշէր տակաւին Շնորհալիին իրեն յանձնած մեղեդին .

Առաւօտ լուսոյ ,

Արեգակն արդար

Առ իս լոյս ծագեա . . . :

Արեւելեան բոցավառ արեւին տակ փողփողուն էր ծովակը : Բուրեանին լճակը ան չէ՛ր կրնար ըլլալ :

Թափառիկ պատանեկութիւնս անցաւ շատ ուրիշ լճակներու քովէն : Տեսայ Զուխերիական լճակներու պատկերներ , վրայէն առկախ սովորական ամպի ու ծուխի բեկորներ , ու դէպ ի երկինք զցուած խոժու ու անըջացին լեռներու կատարներ : Փնտուած լճակս անոնց մէջ ալ չկար : Բանաստեղծին մեղամաղձոտ լճակը կոհակներ չունի և պեակները գահաւանդներու ներքե չե՛ն փչրուիր . . . : Նոյն իսկ ձեր Վասիտը իր կապուտակ ալիքներով , Քեաղբաճանէի աղմուկ ծովը կամ Մօտային առջև փռուող կապոյտ Մարմարան , չեմ յիշեր որ մտքիս մէջ արձագանգած ըլլան Բուրեանին լճակը :

Բուրեան գուցէ ի՛նք ալ երազե՛ց , չի տեսա՛ւ իր լճակը :

Մեղամաղձոտ լճա՛կ իմ ,

Քեզ հետ ըլլանք մտերիմ ,

Սիրեմ քեզի պէս ևս ալ

Գրաւիլ , լուել ու խոկալ :

Մարմարային ոչ մէկ խորշը կը ճանչնամ այդչափ «լուռ ու խոկացող» :

*
* *

Իզմիրէն քիչ մը հեռու , բլրակի մը ստորոտը պահուրտած , լճակ մը կայ . կուրծքէն կապոյտ ժապաւէնի պէս առու մը կը բաժնուէ , կ'երթայ Յոնիականին կապուելու :

Տիանի լճակն է ,

Յուսուլարի վերջերը , աննպատակ պտոյտ մը հոն տարաւ զիս : Յաւելով բաժնուեցայ իրմէ :

Դիցուհին հող կը լողնայ եղեր , կ'ըսէ աւանդութիւնը : Ծովն ու լճակը իրար կապող առուին անունը Մէլիս է : «Մէլիսածինն Հոմերոսի մա'յրը եղած է այդ առուն : Ոոկիտ արձանը լճակին մէջ կորսուած է» , դարձեալ կ'ըսէ աւանդութիւնը :

Օ , Դուրեանի լճա'կն էր ան . . . :

Առաջին տեսքը այնչափ երջանիկ ըրաւ զիս , որ մոռցայ ինքզինքս , վազեցի ու տարիներով փնտռուած մտերմի մը պէս ողջունեցի' զայն :

Կապոյտ , կապոյտ , հիանալի կապոյտ մը , որով սովոր ենք ծածկել կեանքի խորտուբորտութիւնները , ճիշտ գարնան ցօղաթուրմ' աւտուան հեռաւոր կապոյտ լեռներուն պէս :

Վարդեր ծլած էին արդէն ու ծաղկած , նարինջները իրենց տակ ճիւղերը վար կը ծռէին : Օդին մէջ գարուն իրիկուններու վերջալոյսին յատուկ մելամաղձոտ ներդաշնակութիւն մը կը դողար :

Այնչափ փոքր կը թուի , որ մարդ պիտի փորձէ գրկել լճակը , որուն բոլորտիքը դափնիներ կը ծլէին , ու լացող քանի մը ուռիներ կը ծռէին վար ջուրերուն հպելով իրենց ճիւղերը , մոռացումը լալու համար կարծես . . . :

Այլացեղ ծառեր , հսկայ ճիւղերնին կը խառնէին իրարու , և աղուոր գաղտնիներու քով պառկած էին մարմարէ կոտրած սիւներ , նրբաքանդակ դրուագներ , հին տաճարի մը մնացորդները :

Սիրոյ ու երջանկութեան երգեր , դիցուհիին հանդէսները քանի մը բոպէ առաջ ատկէ անցեր , գացեր են , կարծեցի , — վայրը այնչափ լեցուն էր երկնային անուշութեամբ :

Լերան անաղին գաղաթներ չիկան, ոչ ալ Հոգւոց
Վանքի խորհրդաւոր սարսուռը կը դարնէ ճակտիդ :

Ամէն բան սե՛ր կը բուրէր, լացող, լացընող, այրող,
երջանկացընող, այլ ափսո՛ս, յաւիտենական մոռացումին
նախընթա՛ց սէրը . . . :

Վարդերը կը ծաղկէին ու կը խամրէին առանց կուրծք
մը զարդարելու, դափնիներ կը ծլէին՝ լճակին շուրջը ու
Հոմերոսի յիշատակին շուրջը անմահութեան պսակ մը
բոլորելով . . . :

*
* *

Եւ առնելով ճիւղ մը դափնիներէն, նկուն ու վայ-
րահակ ճակատդ յիշեցի, սիրոյ վաղամեռ քերթող :

Քու լճա՛կդ էր ան, ու կեցած քովիկը ընդ երկար,
մտիկ ըրի ձայնիդ որ հովին շունչին էր խառնուած .—

Հոն կայ մոխիր յիշատակ,
Ալեակքդ յուզուի՛ն թող, լճակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ,
Յուսահատ մը նայեցաւ . . .

Մասիս

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ



Ռուբէն Որբերեան. Գրագէտ ու բանաստեղծ, որ ամէնէն շատ
կարդացուած հեղինակներէն մին է, ունի քերթուածներ ու տաղեր,
մելամաղձոտ հոգւոյն յոյզերովը դրոշմուած . իր բոլոր քերթուածներն
հրատարակուած են Յիւստակաց Ծաղիկներ ու Ծփանք երկու հատոր-
ներով :

Ք Ն Ա Յ Ա Մ Ծ Ո Վ Ը

Անվէտովէտ ու անսարսուռ,
Ծովը կը նիրհէ,
Անծա՛լ զանգուած միակտուր
Կապոյտ բիւրեղէ .

Նաւերն այնտեղ կը թողուն
Երիզ մ'ըսպիտակ
Որ ընդ երկար, փողփողուն,
Կը մընայ յըստակ ,

Ինչպէս գիծ մը ասեղի՝
Թիթեղին վըրայ ,
Կամ կոխլանճին որ կ'սողի
Ակօսն արծաթեայ :

Կը փորձըւիս կոխել հոն
Եւ քայլով մ'անվախ
Երթալ մինչև հորիզոն ,
Անհող եւ խաղաղ :

Բայց մի՛ խարուիր . այդ քընած
Մարմնոյն խորն է որ
Լուռ կը սպասէ , դարանած ,
Մըրրիկն ահաւոր :

ԵՐԱԺՇՏՈՒՔԻ ԻՆ

Երաժշտութիւնն, աստուածայինն արուեստ, երկնաւտուր շնորհ առ մարդն, նուազն, ան, ինչ գեղեցիկ է. ներդաշնակութիւնն՝ ինչ խորհուրդ, սիրան խորին բաբախումներ ունի մէն մի ձայնի համար որ կը հնչէ մեղմ կամ ուժգին, տխուր կամ զուարթագին, և ինչ է այդ անձանօթ հմայութիւնն՝ որով մի լոկ ձայն կը բաւէ ցունց տալ հոգւոյն, և, տարտամ ու անորոշ, զարթուցանել սակայն ի նմա հոյլք խորհրդոյ և զգայմանց. երգել կամ լուել երգն մի անոչ ձայնի կամ մի գործւոյ՝ որոյ վերայ կը խաղան մատուցք ճարտարք. ինչ հեշտութիւն հոգեկան, զգալ հոգւոյդ օրրիլն դաշնակութեան կոնակացն յելեւէջ, երազել ի լուր մի քաղցրանուազ ձայնի որ կը թուի քեզ յերկնից անտի դալ, անձանօթ իտէական գաւառներու և լուսածպիտ երկիրներու պարզիլն տեսնել մոգեալ երևակայութեանդ առջև, և մտնալ թէ մի մահայու ես՝ նիւթէն շլթայեալ մի ոգի, և ճախրել ազատաթև միջոցին մէջ, բարձրանալ դանհունն ընդգըրկել, խանդաղափիլ, յուսալ, ախափիլ, արտասուել, և յետոյ երբ դուրս կ'ելնես այն դիւթեալ սրահէն զոր իտէականացոյց Երաժշտութիւն՝ ես դառնալ ճամբէդ որպէս զի երթառ ոչորմութիւն տաս մի աղքատի, որ մութին մէջ նստել է ճամբուն կզրն, աստեղաց ճառագայթում մի կողողէ հոգիդ և լուրմունք վարդից կ'օժեն սիրտդ, անա ինչ որ կ'ընէ երաժշտութիւն. չար մարդիկ երբ չունին. այս՝ ս'վ Շիլլեր, զի ինչպէս կարէ չար լինել այն որ երգն կը սիրէ, երգն, տարտամ անհունին պէս, անչութիւն ունի անհունին հետ, և յանհունն բարձրանալ յԱստուած թեւել է, և Աստուծոյ դալափարը անհաշտելի է չարին հետ. երգել՝ զգալ է, և

չարք սիրտ չունին : Երաժշտութիւն , մանաւանդ մեծ
 երաժշտութիւնն որպէս գրեց Հաէնտի՛ իւր Մեսիան ,
 Բէռլիուէզ՛ իւր Սրապաւս Մաթեոն , Հայան՛ իւր Արարչու-
 քիւնն , Մոյսարդ՛ իւր Տոնժուանն , Պէթոֆէն՛ իւր Սոնար-
 ճերն , Վէպեր՛ իւր Ֆրայշիւցն , Ռոսինի՛ իւր Կիյեօմթէլն ,
 Պէւլինի՛ իւր Նորմայն , Վէստի՛ իւր Թրովարորն , Մենույ-
 սոն՛ իւր Ամարային գիւտուան երազն , Կուսօ՛ իւր Ֆա-
 ուսզն . այդ երաժշտութիւն , կ'ըսեմ՝ մի աշխարհ է ան-
 նիւթ՝ իտէական՝ անճառ դեղեցկութեամբ լի , որոյ ան-
 դիմադրելիէ հրապոյր , և ամէն ոգի՛ զոր կը յափշտակէ
 իւր ձգողութեան սահմանին մէջ . կը որրի և կը մերկա-
 նայ իւր կեղեւներէն :

Գեղեցիկն ու Գեղարուեստ

Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Չ Ա Մ Լ Ը Ճ Ա

Ասիական եղերքին վրայ բարձրացող կոնաձև զոյգ
 մը բլրակներ են անոնք , վե՛ր վե՛ր ցցուն՝ կապոյտին
 լանջքն ընդգրկող :

Օրուան հե ի հե վազվզուքէն վաստակարեկ , ինք-
 դինքս կը նետեմ այդ քոյր բլրակներու թաւուտքն ի վեր ,
 ուր մոռնալ պիտի փորձեմ միտքս շարչրկող մտածումները :

Կ'անցնիմ արագ արագ ու հապճեպ այն լայն ուղիէն ,
 որ իր երկու թեւերուն մէջ կ'ընդգրկէ Սկիւտարցիներուն
 հանգստարանը վերջին : Կեանքի այս սահմանադիտին
 մօտիկ , ուր մամուապատ կնճնիներ տխրազղեցիկ երե-
 ւոյթով մեր սիրելեաց հոգակոյտները կը հովանաւորեն ,
 պահ մը կանդ կ'առնեմ , այս մահատուեր վայրը եղե-
 րող շրջապատին կից , աչքիս առջև կը ցցուի նուրբ ու
 ճերմակ սեպածև մահարձանը Սկիւտարցի վաղամեռիկ
 բանաստեղծին :

Յերեկուան լափլիզող տապն արեւին, արդէն տեղի տուած էր մեղմ անուշ զովութեան մը, ու արեւին բոց ճաճանչները վերջին, հրդեհելով արեւմուտքը կ'երփնե-
րանդէին հորիզոնին վրայ փթթող ամպի թերթիկները ձիւնաթոյր: Հասած էի պզտիկ Չամլըճայի ստորոտը, ասպնջականիս տնակին առջև, որ հինաւուրց հսկայ ըն-
կուզինի մը թեւերսն տակը պահուրտած կ'երեւար հեռուէն: Հոն, տանը շուրջը կը տեսնեմ կամսելու պատ-
րաստ դէզ դէզ շեղջերը մանգաղուած ցորենին, ու ամ-
բողջ գործիքները երկրագործին, սայլը, մաճը, արօրը, երկժանին, դրմուղը, կամար, նկուռն ու հեծանոցը, եւ, զոյգ մըն ալ խատուտիկ աշուկներով սիրուն եզներ, որոնք քով քովի կապուած, ցուկնին մուրին մէջ, կ'որոճան հանդարտօրէն: Բարի գեղացիին նիւթական հարստութեան հետ իր կեանքի հարստութիւնն ալ ուշադ-
րութիւնս կը գրաւէ. հինգ մանչ մէկ աղջիկ, ամէնքն ալ կայտուռն ու կայտառ: Նահապետական այս պարզ կեանքը պահ մը մտայնել կուտայ ինծի՝ քաղփենի բաղ-
մակնճիւ ու աղմկալից կեանքը:

Իրիկուան անպաճոյճ սեղանը կը սարքուի, որուն շուրջն ենք բոլորուած ամենքս ալ: Ճիշտ դիմացս նստած են տանտիրոջ երեք չափահաս կաշնքուռ ու քաջակազմ զաւկները, խանձած դէմքով, բոցալիր աչքերով, որոնք գաղտագողի ակնածանքի ձեւով մը. փոխն ի փոխ ակ-
նարկներ կը ձգեն վրաս, ինծի երկիւղ աղգելու չափ: Այս մարդիկ, կերակուրը ուտելէն աւելի, կը լափեն անստգիւտ ախորժակով մը, որ նախանձս կը շարժէ, մինչ ես կուտեմ կերած ըլլալու համար, պատառիկներս համ-
րելով:

Սեղանը վերջացած է, ու ճաշակիցներս մէկիկ մէկիկ կը քաշուին քովէս, օրուան տաժանքէն յետոյ անշուշտ

հանգստի պէտք ունին այս հարազատները բնութեան , որոնք արեւամուտին կը պառկին ու լուսնածագին կ'արթննան : Չեմ դիտեր թէ՛ մրջիւնները ասոնցմէ թէ ասոնք մրջիւններէն սորված են այս դասը :

Տան տիրոջ հետ քիչ մը խօսակցելէս յետոյ , ինձի ալ ցոյց կը արուի փոքրիկ սենեկիկ մը վանական խցիկի նմանող : Երկու լուսամուտ միայն ունի որ երկու աչքերու նման կը նային դէպի արեւիք : Տնեցիներուն ամէնքն ալ խաղաղ ու անուշիկ քուն մը կը քաշեն . հոս ալ կրկին անքուն հսկողը ես եմ միայն : Պատուհանէն դուրս կը նայիմ , լուռ է ամէն բան . բնութիւնն ալ կը քնանայ : Հողեպիշ կը դիտեմ կապոյտը երկնքին , ուր անտես հողիներու աչերուն նման կը պլպլան լոյսերը : Ու դանդաղ նազանքով մը կը տեսնեմ ծաթող լուսնակն ուռճալիք , մութ գիշերներու կեանքն ու հողին , որ ծառերու մէջէն բեկբեկելով իր վէտվէտուն շողերը՝ կը կաթկրթէ տիտիանքի ցողերը իմ հողիս վրան :

Յորհրդաւոր լուսնիւնը այս գիշերուան , որ կը տիրէր ասպնջականիս տան կեանքի փոքրիկ աշխարհին վրայ , դուրսը կը խղաւէր այն թռչնակին ընդհատ ու բեկբեկուն ձայնով արամաղին , որ իր միօրինակ սքերզը կը հիւսէր մօտակայ անտառակին ծոցը : Անոր ձայնը չէր ճռողիւն մը հողեղմայլ այլ խորհրդաւոր հեծկատւք մը , որ կարծես իր կորուսած ընկերը կը փնտռէր ձայնելով ու կրկնելով իր «կո՛ւ կո՛ւ կո՛ւ կո՛ւ» երգերը : Պահ մը մտիկ կ'ընեմ մտայոյզ գիշերն անքուն երգող այս անբոյն թռչնիկը դժբաղա : Հոս , ինչպէս ամէնէն ուշ քնադողը նոյնպէս ամէնէն կանուխ խարթնցողն ալ ես եմ , Ա՛հ ինչ գեղեցիկ է սա բնութեան դարձնումը . արեւելքը կը դիտեմ Չամլըճայի սարահարթէն : Ոսկեգանգուր Արուսեակն է որ յանկարծ դուրս կը ցայտէ ջինջ կապոյտին ծոցէն :

շիկնոտ աղջկան մը պէս իր փունջ խոպոպիկները տարտըղնած : Յետոյ կերեւայ Արշալոյսը, այլ ևս բայուած է աղօթարանը, ու հորիզոնն ալ ճերմկած, գիւղական աքաղաղներ, գիշերուան վերջին նպահը կերզեն, ծառերու մէջ քնացող թռչնիկներն ալ ճվլտալով ձայն կուտան իրարու. բնութեան հետ արթնցեր են ասուններն ալ անասուններն ալ :

Իսկուհի կը նետուիմ ու կը սկսիմ վերելքս առանձին դէպ ի Չամլըճայի բարձունքն ի վեր, ուր արեւին առաջին ճառագայթները վարդամասն, կարմիր նարօտներ կը կապէին կանանչագեղ այն սիրուն բլրակներու ճակտին : Չով գիտիւնին անուշակ շոյանքը կը զգամ քրտնածոր որ ճակտիս ու դէմքիս վրայ, և մեղմով կերգեմ մանկութեանս սիրելի երգերէն մէկը՝

Ո՛հ ինչ անուշ և ի՛նչպէս զով

Առաւօտուց փչես հողմիկ

Վերն եմ, ճիշտ Չամլըճայի ուսին վրայ, ուր տենդոտ հեւքէ մը յետոյ լայն լայն շունչ մը կառնեմ լիաթոք, ծծելով մայր բնութեան ստինքներէն կուշտ ու կուռ օդ մը անապակ կենսաառ :

Չամլըճայի սարահարթէն շատ սքանչելի ու հմայող է տեսարանը. Եւրոպական ու Ասիական եղերքները դիւթիչ պատկերներ կը դժեն աչքիդ առջև : Մարմարան կերեւայ լուրթ կապոյտ դաշտի մը նման, հանդարտ ու պսպղուն զոր կը բծաւորեն սեպ կղզեակները ժեռուտ : Բնութիւնը կարծես իր էն հրաշակերտ գլուխ-գործոցներէն մէկը կը ցուցադրէ հոս :

Ծովերն ու երկինքին անհուն կապոյտները. մտազմայլ խորհիլ կուտան ինձ. ու այս երկու անսահման կապոյտները, զիրար շաղկապող շրջագիծերուն հանդէպ անհունութեանց մեծ Անհունն է որ կուգայ լեցնել պարապը

հողիիս, և միտքս կը սաւառնի դէպ ի ստեղծողին հրաշալիքներն ու մեծագործութիւնները: Չամլըճայի բլրակներն ու Վոսֆորը, տիեզերական այս անգիր մեծ մասաւանին առաջին էջերն են՝ անեղծ:

Մատիո

Մ. ԱՃԷՄԵԱՆ

Ս Ր Ի Ն Ք

Ե՛կ, իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին,
 Նիհար շրթներդ, ո՛հ, երերուն
 Դի՛ր դալկահար իմ շրթներուն,
 Երգենք ու լանք, լանք ու երգենք տրտմագին:
 Լա՛ց, զի լոկ քեզ գըտի հատորն իմ սրտին .
 Դու բարունակ էիր կանաչ
 Երբ մի անգութ ձեռք անձանաչ
 Կտրեց ըզքեզ, անջատեց մայրն ու որդին .
 Եւ թոյլ տուիր որ լանջիդ վրայ դալարուտ
 Ծակեր բացին, վէրք երկաթի .
 Թո՛ղ այդ վէրքէն, ըսիր, կաթի
 Արիւն, բողոք՝ միակ սփոփ վշտերուդ:
 Ես ալ մանուկ էի անմեղ երբ վաղուց
 Մի անձանօթ պատճառ վզիս .
 Լուծ մը դրաւ, ո՛րք կոչեց զիս .
 Եւ հօր ու մօր սիրոյն կարօտ զիս թողուց:
 Իմ ալ կուրծքըս ծակծկեցին ժանտ վէրքեր,
 Եւ որպէս դու սիրես որմին
 Յենուլ, լռել, մինչև որ մին

Չը յուզէ քեզ, չե՛ս հառաչեր, չե՛ս կրգեր,
Լռիկ մնջիկ սիրեմ և ես հեռու կալ

Ընկերութեան ժիտ ժխորէն,
Եւ իմ սրտին, հոգւոյն խորէն

Զննել, ըզգալ լոկ, զարմանալ ու խոկալ :
Թող երգէ՞ն, դաշնակ, քնար գեղգեղեն,

Յեկեղեցւոյ, ի գինետան

Աղօթք ու սլար թռչին, խայտան՝

Թող ալք վալեն հաճոյք մարմնոյ, հոգեղէն .

Ախ, իմ Արինգ, աշխարհ յոյսով թող բերկրի,

Թող բաղդն անոր ժպտի յոյսին,

Ե՛կ, ես և դու ի միասին

Լանք ու կրգենք, մեր բաժինն այս է յերկրի . . . :

Մասիս

Գ. ՊԵՇԿԵՑԹԻԻՐԵԱՆ



Գարեգին Պեկեթօրիւրեան (1867—1891) . Երիտասարդ բանաստեղծ, որ իր վաղամեռիկ կեանքին մէջ միայն այս սիրուն քերթուածը գրած է, ինչ որ զինքը գրական ուշագրաւ դէմք մը կ'ընէ, ռուսահայ բանաստեղծ Գ. Դոդոխեանցի պէս որ Ծիծեռնակ միակ քերթուածովը անմահացաւ :

ԳԻՇԵՐՈՒՄՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԸ

Հոն ուր ներդոս հիրհէ խաղաղ՝
Արմաւենեաց շուքին տակ
Եւ ուր միայն հծծեն նլւաղ
Քաղցրաշունչ հովն ու ալեակ,
Գարնան գիշեր մ'էր գեղալճիւս,
— Ո՛հ, դեռ յիշեմ գիշերն այն, —
Երկին տեղար շող ու ժրպիտ
Ջրի, մարգի, ծաղկի վրան,
Եւ որպէս կոյսն ի հայելւոջ՝
Լուսին ծագած գեղալոյս
Ջինջ գեափն մէջ դիտէր դողդոջ
Իւր պատկերը տրամանոյշ . . .
Հոն ի գեաափն էինք նստած՝
Յափրչտակուած ու լըւին,
Ներա աչկունքն էին սուղած
Յանհունութիւնն այն խորին .
Մերթ դիտէր գեաը կապուտակ
Ի՛ անծայրածիր հորիզոն,
Մերթ երկին ջինջ և անյատակ .
Ջինչ որոնէր արդեօք հոն . . . :
Այլ իմ աչկունքն էին յառած
Դէպ յայն հրեշտակ սիրանուէր .
Դիտէի ևս ներա աչաց
Դիւթիչ նայուածքն ու կայծեր,
Այն լոյս ճակատ՝ զոր ծածկէին
Հոյլք հողմածուփ մաղերուն,
Եւ շրթունքներն ոյց ըղձազին
Երբեմն հպի խօլ մեղուն,
Եւ ներա գիրդ ձեռքն յիմ ի ձեռս՝

Մտախոհ և լըռօրէն՝
Միայն ըզնէ տեսնէի ես
Չքնաղագե՛ղ քան զամէն
Նէ ինձ ըսաւ . « Տե՛ս եթերին
Կապուտագեղ ու ջինջ գոյն ,
Տե՛ս ի՛նչ անոյշ շողայ լուսին՝
Գեղեցկութեամբ փողփողուն .
Լսե՛ս ի՛նչպէս հովն ու ալիք
Եւ զովափիւռ տերեւեր
Յանհունութիւնն այս խաղաղիկ՝
Սփռեն աղօտ մրմունջներ : »
— « Այո՛ , երկնի գոյնն այն կապոյտ
Գո՛ղտ : է , սաի շոթեայ ,
Այլ ո՛րչափ այն երեւի մութ՝
Աչերուդ քով մեծափայլ .
Եւ լուսինն է գեղաժրպիտ՝
Ձիւնաթորմի ամպոց մէջ .
Այլ հա չունի անրիժ ճակատիդ
Երազներն ու բոցն անչէ՛ջ .
Մրմունջքն ալեաց , տերեւերու՝
Մի նըլադ են սրտադրաւ ,
Այլ քու լեզուիդ մի խօսքն աղու՝
Դաշնակութիւն մ' է անբաւ » —
Եւ ի ծունր ի մարգագեալին՝
Ակնապիշ իւր աչքերուն՝
Ցամքած շրթերս քնքուշ ձեռքին ,
Ո՛հ , հպեցան դողդոջո՛ւն . . .
.
Հոն ուր Նեղոս նիրհէ խաղաղ
Սրմաւենեայ շուքին տակ

Եւ ուր միայն հծծեն նըւաղ
 Քաղցրաշունչ հովն ու ալեակ,
 Հոն այժմ աչերս արցունք յօղեն,
 Սիրտս ալ միայն սգազգեաց,
 Զի այն սիրոյ հեշտ ժամերէն
 Հոկ յիշատակ մ'ինձ մնաց . . . :

Մասիս

Կ. ԽՕՍՔԱՆՑ

Գ Ա Ի Ա Ռ Ա Յ Ի Պ Ա Ն Դ Ո Խ Խ Տ Ը

Հայ ազգը օր ըստ օրէ թողնում է իւր երկիրները
 և կեդրոնանում է քաղաքներում: Աղքատութիւնը ստի-
 պում է նորան թողուլ իւր տունը, իւր ընտանիքը, իւր
 ամուսինը, իւր դաւակները և գնալ Պօլիս կամ այլ քա-
 ղաք, աղքատութենից աղատվելու համար: Բայց այդ
 տեղերում ևս, նորան, հանդէպ է դուրս գալիս էապէս,
 նոյն աղքատութիւնը, գուցէ մի փոքր քաղաքային ամոք
 կերպարանքով: Դիցուք, գեղում ստանում էր նա, օրա-
 կան հինգ դուրուշ, իսկ քաղաքում ստանում է ութն
 կամ տասն. բայց ինչ օգուտ այն երեք կամ հինգ դու-
 րուշ յաւելուածից, մինչ չէ մնում նորա ձեռքում:
 Քաղաքի մէջ, համեմատութեամբ շինական կեանքին եթէ

Կարապետ Խօսքալից (1862—1890). Գեղարուեստագէտ-բա-
 նաստեղծ երիտասարդը, որ քաջ պատկերահան էր միանգամայն, Իտա-
 լիոյ մէջ արուեստը կատարելագործած ու Եգիպտոս հաստատուած. մաս-
 նաւորապէս ջրաներկի մէջ շատ յաջող էր և իր նկարները ընդհանրա-
 պէս գնահատուած ամէնէն խստապահանջներէ: Վաղամեռիկ տարաբաղդ
 բանաստեղծը թողած է բաւական թուով բերթուածներ, որոց մէջ մելա-
 մաղձոտ հոգիին յոյգերն կը ցոլանան. դժբաղդարար իր բանաստեղծա-
 կան արտադրութիւններէ միայն այս բերթուածը կրցած ենք գտնել, ինչ
 որ ցոյց կուտայ թէ, վրձինին չափ ալ, խանդավառ զրիչ մ'ունէր:

ոչ աւելի գէթ հարիւրին քառասուն առաւել է ծախքը :
Եթէ մարդը հինգ ստանալով աղքատ էր գեղում, աղքատ
կը լինի Պօլսի մէջ կամ այլ քաղաքներում, ութն կամ
տասն ստանալով :

Բաց ի սորանից, ընտանեկան կեանքից զրկւիլը,
դժոխային աշխատութիւնը՝ որով պիտի շահի նա այն մի
քանի յաւելեալ զուրուշները, անտուն, վարատական և
անմաքուր կեանքը որ պիտի անցուցանէ նա զանազան
իջևաններում : Երեկոյեան պիտի դայ վատակեալ, ուժա-
թափ, շատ անգամ և վնասուած անդամներով, իսկ
լուսաբացին, նոյն եղիպտական ծառայութիւնը որ սպա-
ռում է նորան : Չկայ այն ընտանեկան մխիթարութիւնը,
ամուսնու հայեացքը, որ առանց ձայնի, առանց խօսելու,
կարող են ամօքել ձակատազրի դառնութիւնը, և այս
բոլորը անխորհուրդ, առանց հիմնական հաշուի և չկա-
մելուց, արմատական կերպով դարման տանել իւր աղ-
քատութեան : Եւ այսպէս, իբրև դրաստ, իբրև մեքենայ
ծառայելով արտասուելի օտարութեան մէջ, տասն-քսան
տարի, կամ մեռանում է այն տեղ, թողնելով իւր ըն-
տանիքը ծայրացեալ թշուառութեան մէջ կամ վերադառ-
նում է դէպի իւր երկիրը : Վերադառնում է' . . . բայց
ոչ այնպէս առօրի և զուարթ ինչպէս դուրս էր եկել այն
տեղից, այլ, հասակն առած, ուժաթափ և թօշնած :
Վերադառնում է' իւր տունը, երբ կորուսել էր աշխա-
տելու ընդունակութիւնը և յարմարութիւնը : Ուրեմն,
վերադառնում է' նա միմիայն իւր ներկայութեամբ, իւր
աղքատ և կարօտ ընտանեաց թիւը յաւելցնելու համար :

Եւ անա նորա տասն և ութը կամ քսան տարեկան
որդին, որ աճել և զօրացել էր իբրև մի ծաղիկ իւր
սեպհական հողի վրայ, առնում է ձեռքը իւր հօր պան-
դխտական գաւազանը և գնում է

—Ո՛ւր բարով :

«Պօլիս , Տրապիզօն , Լայլն Լայլն :

—Ի՞նչի՞ համար :

«Աշխատելու և ընտանեաց օգնելու :

—Աշխատելու և ընտանեաց օգնելու — կրկնում է խօսակիցը անհնարին տխրութեամբ :

Անցնում է սորա վերայով մի քանի տարի , յանկարծ , այս նորեկը լուր է առնում , որ իւր ծերունի հայրը վախճանել է , մայրը հիւանդ է : Մի փոքր ժամանակից և մայրը մեռնում է :

Պանդխտակիցքը գալիս են նորան մխիթարելու : Մի երկու բաժակ գինի մի քահանայ . մի «հողոց» և պանդխտի սիրտը պաղում է այն աշխարհից ուր ծնել էր նա ի՞նչ բանի համար վերադառնայ : Նա գտնելու չէ իւր տունը , իւր ծնողքը , նորան աչքին պիտի հանդիպին երկու գերեզման և մի ամայի բնակարան , եթէ և այն չէ անցել օտարի ձեռք : Նա որոշում է մնալ պանդխտութեան մէջ , և այս որոշումով յօժարում է մինչև տակը խմել թշուառութեան բաժակը : Այո՛ , մնում է նա , բայց տունը մարեցաւ : Մի գերդաստան ընկաւ հասարակաց խումբից :

Արդեօք ո՞րքան գերդաստանք ընկնում են այսպէս :

ՄԻԿԱԳՈՐԾՈՒՅԻՆ

Մ. ՆԱԼԲԱՆԴԻԱՆՑ



Ք Ի Ք Ե Ռ Ն Ի Կ Ն Ե Ր

Նահանջ ուղեւորութիւն մըն էր մեր ըրածը ձմեռ ատեն, այս անձուկ կիրճերուն և այս տղմուտ դաշտերուն մէջէն, զոր ձմեռնամուտի անձրևները ճախճախուտներու կը վերածէին շարունակ: Եւ, զգուշեալ, կը ճամբորդէինք ողողուած, թրջած մինչև սկորնիս, շարունակ մեր ձիերուն քայլափոխները ճշտելու ու հաւանական անկումները արգիլելու ջանադրութեամբ:

Այսպէս անընդհատ ջուրի հեղեղներու մէջէն կ'երթայինք, լացող և խոնաւ երկինքի մը տակ, և կը մտածէինք ճամբուն երկայնքին, ուղեւորութիւններնու մնացած մասին որ ճշմարիտ տաժանքի կերպարանքը կ'աւնէր:

Իրիկուան դէմ գիշերեցինք մօտի գիւղին մէջ խոնջարեկ ու ցրտահար ամէնքնիս ալ: Հիմայ ցուրար կ'աւելնար ու ձիւնի հատիկներ կը սկսէին դալ վաղահաս ու փութկոտ ձմեռին հետ:

Արշալոյսին երբոր ճամբայ ինկանք, նորէն առատ կուգար ձիւնը:

Սպիտակ անհամար թիթեռնիկներ էին ասոնք որ ժանտ ու չոր երկինքի մը կապարէ ցանցէն կը մաղուէին. լուռ ու մունջ տեղացում մըն էր ասիկա. անթիւ առաքելութիւն մը կարծես որ երկիրը դրաւել ուղէր իր դիւրահալ ու անբիծ խուժիկներովը:

Ու մենք դո՛հ, աղատելնուս համար վերջապէս անձրևէ մարահուճներէն, մեր շուրջը կը դիտէինք անմեղ զմայլումով մը:

Ոմանք դանդաղ կ'իջնային վար, հազար նազանքով, կարծես թախանձանքներու սպասումով. ոմանք խուճապի մէջ, ոլորապտոյտ ծայրահաններ գծելով օդէն մէջ.

ուրիշներ արծիւի մը շքեղ ճախրանքովը . և այս խօսք արշաւին մէջ ամէնքը անվնաս կը հասնէին վար , իրենց դժուած բուրդէ հոլանի թեւերը անկասկան գործիքի մը պէս ծառայեցնելով վայրէջքին :

Ժամերով եկան այսպէս , մեր քովը , մեր շուրջը , մեր վրան տեղալով անընդհատ , ու հեռուն , դաշտը , ճամբան և հորիզոնը բոլոր :

Սորհրդաւոր ուղեւորներու կը նմանէին ասոնք՝ որոնք պաշտօն ունէին կարծես շակելու , կոկելու , հարթելու աշխարհին վրայ մակերևոյթը ամէն բաներուն , և յատկապէս , դիւրացնելու մեր ուղին . և իրօք , սարերը ու հովիտները կը տաշուէին իրարու հետ և այս միօրինակ ճերմակ փայլապանքներուն տակ քարերը ու լեռները կը կակուղնային : Եւ սակայն , ցորեկին երբոր արևը ծագեցաւ յանկարծ անդիկէ երկինքի մը չզարշին տակէն , մեր շուրջը տարածուող այս մաքուր հարթութեան ու շքեղութեան վրայ ուղեւորութիւնը վտանգաւոր և անստոյգ կը դառնար : Անդունդները ու գահավէժները պահուած էին մենէ ու հողին հերձոսիքը ծածկուած բոլոր . ճամբուն մատնութիւնները իր անբծութեամբը վարագուրուած էին :

Ո՛րքան նախընտրելի էր պարզ հողն ու քարը իր աղտոտ ախլմերովը , իր մերկապարանոց ելեւէջներովը ու ակներե խորտուբորդութեամբը , քան թէ սա պայծառ ու ցոլայիկ մակերևոյթը որ կը պարզուէր աչքերնու առջև իր անսահման տափարակի խաբէութեամբը :

*
* *

Վարանտա ու յամր գնացքով մը շարունակեցինք ճամբանիս , ու իրիկնամուտին դեռ ու է օթեանի նշանը չէինք տեսած :

Ձիւնը դադրեր էր ա՛լ . բայց դէմը , հեռուն , մարը մտնող արևին քով հիմակ ոսկի թիթեռնիկներու տեղա-

տարափ մը կար, ատրաշէկ հալոցէ մը թափուած հիւլէ-
ներ, որոնք բայ դեզինէն մինչև մութ կարմիր գացող
ծիրանի գօտի մը հազար երանգներով բոլոր եզերտքը
կը կիտուածէին: Եռուզեռում մըն էր գոյնզգոյն թիթեռ-
նիկներու որոնց փոքրիկ թևերը կը տփգունէին, կը շիկ-
նէին, կը վառէին, կը մարէին շարունակ հսկայ քուրայի
մը մէջէն: Որքա՛ն մօտը գացինք իրենց, նոյնքան հե-
ռացան անոնք մենէ, միշտ միևնոյն անջրպետը պահելով
մէջերնիս:

Այս թիթեռնիկները այլափոփիկ խոստումներն էին
կեանքին. անոնք զորս ձեռք երկնցնելուդ ասիդ մէջ կը
թռիս բռնեղ շարունակ. անոնք որ մտցնել կուտան
խոնջէնքը ճամբուն. միշտ մերձակայ և միշտ խաբուսիկ
հանգրուանը, երազուած ըզձայուած բեւեռ, որուն,
ահա՛ քայլ մը ևս, և պիտի եզերիս:

Եւ այսպէս, երբ ձերմակ թիթեռնիկները կը հար-
թէին ճամբանիս, ու պատիր ապահովութիւն մը կը ներ-
շնչէին մեզի, այս միւս կարմիր թիթեռնիկներն ալ մօ-
տաւոր հանգրուանի մը խոստումովը ու ձգողութեամբը
կը պատրէին զմեզ, որպէս զի մեր վերջին ոյժերը դէպի
իրենց հասնելու ջանքերովը սպառենք:

*
* *

Ու յանկարծ, գիշերը իջաւ վրանիս, երիթամած
մթութեամբ մը որ կարծես անհամար սև թիթեռնիկներու
խուժումովը ձեացած էր:

Մանր ու բիւրաւոր չղջիկներ ամէնքն ալ, իրենց սև
կազէ թևերը սարդի ոստայնի մը նման տարածելով մեր
շուրջը և մեր վրան: Ելեւէջ չունէին ասոնք, ո՛չ ճախ-
րանք, ո՛չ անկանոն պարոյթներ օդին մէջ. այլ լուռ ու
խոժոռ էջք մը, դանդաղ բայց միօրինակ, անխափան ու
անմաքառելի բան մը. հենդհետէ աւելի հոծ և աւելի

խիտ կը դառնար բանակը սև թիթեռնիկներուն որոնք, աննշմարելի ու տխրամեծան ձուէ մը վիթաժի նման՝ անընդհատ կը լեցուէին ու կը դիզուէին, արհաւիրքի թանձր սրակապան մը յօրինելով մեզի :

Այս սև թիթեռնիկները կարգապահ շարքով կուգային կը կենային քով քովի, ետէ ետե, անխախտ ու անկորուստ ամէնքն ալ . իրենց դրաւած տեղը ձեռքէ չհանելու հաստատ մտադրութեամբ : Հողերը ու մտմտուքները, ցաւերը ու կսկիծներն էին ասոնք, որոնք կը շրջապատէին զմեզ ամէն կողմէն զարհուրելի հաւատարմութեամբ մը : Եւ ի դուր թօթափել ուղեցինք զանոնք վրանուս . սև թիթեռնիկները ա՛լ աւելի ճնշեցին զմեզ, աւելի շատցան և ստուար քօղը ձեայուցին հիմայ, անաւոր վերարկուն, որուն մէջ օթեանեցանք :

*
* *

Ճերմակ թիթեռնիկները կեանքի առաւօտն էին հարկաւ, պահելով մենէ, ցոյց շտալով մեզի անոր թաքուն վտանգները : Ոսկի թիթեռնիկները ցորեկն էին կեանքին՝ յոյսով ու առաջադրութեամբ լեցնելով զմեզ : Սև թիթեռնիկները գիշերն էին կեանքին, աղջամուղջի բովը որուն մէջ ամէն բան կ'աներևութանայ :

Մասիս

Գ. ԶՕՀՐԱՊ

Գրիգոր Զօհրապ. Ժամանակակից գրագէտ ու վիպագիր որ միեւնոյն ժամանակ տաղնակարգ իրաւագէտ պերճասիտ փաստաբան մ'է :

Հայ մտաւորական միջավայրներուն մէջ ամէնէն շատ կարդացուած ու փնտռուած գրողներէն մին է իր ինքնատիպ վէպերովը ու վիպակներովը . որոնց մէջ կը ցոլանան մեր ընտանեկան կեանքին ճշգրիտ պատկերները :

Հայ գրահանութեան մէջ միշտ պիտի յիշուին իր Ծանօթ Գէմբերու

ԳԻՒՂԻՍ ՃԱՄԲԱՆ

Կեանքի նաւակն հետք չի թողուց իր ետին ,
Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան ,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին ,
Յիշատակն ալ կ'անոյնի երգի մը նման . . . :

*
* *

Հողիս սակայն կը յիշէ քեզ ,
Դո՛ւ , ծաղկաւէտ դիւղիս ճամբան ,
Ուր քալէի՛նք դառնուկս ու ես ,
Դէպի սրբաւն ու բուրաստան ,
Անմեղութեան երազին պէս :

Ու քովիկէդ դողդողազին
Սահէր աղուոր վճիտ առուն ,
Մերթ կամուրջին ու մերթ մարգին
Տակ պահուելով կ'երթար հեռուն ,
Ամայութեան իջրև ողին :

Բարակ , նինար , քանի մը ճիւղ ,
Կր դատուէին վախտ բունէդ ,
Մին՝ կր դիմէր դէպ՝ անշուք գիւղ
Կր տարածուէր , կ'ըլլար անհետ ,
Բոլորելով խրճիթն ու հիւղ :

շարքը որ բանի մը հանրածանօժ գրագէտներու ուրուագիծն է այնչափ հոգեբանօրէն ուսումնասիրուած :

Իբր հրապարակագիր՝ տնօրանդաւոր հեղինակը փայլուն տեղ մը կը գրաւէ իր ներհուն ու յանկուցիչ գրուածքներովը, գրական ու ազգային գանազան նիւթերու վրայ առ հասարակ՝ աշխայլ պարբերականներուն վէջ լոյս տեսած :

Դիխաւոր հրատարակութիւններն են՝ Անհետացած սերունդ մը ու Խղհմսանքի Չայներ որո՞ք ընթերցման արժանի վէպեր են :

Մին՝ մագլցէր բլուրն ի վեր ,
Միւսը կ'իջնէր ձորակէն վար ,
Ուր ուռենին կուտար ստուեր ,
Ու սրինգն իր ե'րգը կուլար ,
Զոր կրկնէին գարնան հովեր :

Զմբան ալ երբ ձիւնն սպիտակ
Կը գտնէր մեղ շուրջ թոնիրին ,
Անհետ կ'ընէր իր ծայքին տակ
Մեր հին գիւղին վտիտ ուղին ,
Ինչպէս մարգերն ու մանիշակ :

*
* *

Տաշուած քարէ , ուղիղ ճամբան ,
Կը տանի դիւ արդ ի ծովափ ,
Կը ճմլուի հոգիս սակայն
Մտածուամով մը հըրատապ ,
Ու կը թռչիմ' հին մանկութեան :

Հոն փակ թէւ , սակայն ազուոր
Ու երփնապեղ իր հունիզոն ,
Հմայքներով լի բիւրաւոր ,
Յամաղութի' ընդ խայտար հոն .
Ճամբուն վրայ ոլոր մոլոր :

Մին՝ մագլցէր բլուրն ի վեր ,
Միւսը կ'իջնէր ձորակէն վար ,
Ուր ուռենին կուտար ստուեր ,
Սրինգն ալ իր ե'րգը կուլար ,
Զոր կրկնէին գարնան հովեր . . . :

*
* *

Կեանքի նաւակն հետք չը թողուց իր ետին ,
Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան ,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին ,
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման . . . :

Մասիս

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

ԹԻԹԵՌՆԻԿԻ ՄԸ ՎԱՏՄՈՒԹԻԻՆԸ

Սիրուն թիթեռնիկ մըն էր կիտանկար , ոսկեդեղին թեւերով որոնք արեւին վառ շողերուն տակ կը շողային ոսկեշող :

Եւ կը թռչտէր , թեթեւ , թրթռուն , խուսափուկ ինչպէս երազ մը անոյշ , շահպրակներուն , շահոքրամներուն ու մեխակներուն երփներանգ իրերախառնութեան մէջ , ոստոտելով ծաղկէ ծաղիկ , շուարած կարծես թէ ո՛ւր թառի և ո՛րը վայելէ :

Հազիւ երբեմն ծաղկի մը վրայ կանգ կ'առնէր , կիտանկար , ոսկեդեղին թեւերը տարածելով հանդարտիկ , ու իսկոյն նորէն կը սկսէր իր զուարթ թեւածումը , քմահաճ , խօշ դիկ-զակներով պտուտքելով շուրջը երփներանգ ծաղիկներուն :

Զմայլեցայ անոր գեղեցկութեանը ու ձախորդ հետաքրքրութիւնը ունեցայ այդ խուսափուկ , ոսկեշող հմայքը մատուրներուս մէջ բռնելու և մօտէն դիտելու : Ու բռնեցի :

Թիթեռնիկը , ահաբեկ , շարժումներ կ'ընէր , փալփլուն թեւերը իրարու կը բաղխէր , մանարտիկ տոտիկները իրար կ'անցընէր ցնորագին , և իր պզտիկ էութեան բովանդակ ուժովը գերագոյն ճիգեր կը թափէր խոյս տալու համար մատներէս :

Զկրցայ երկար դիտել զինքը ու շուտով թող տուի :

Թաաւ զնաց ու... Թաւալզոր զետին ինկաւ : Նորէն
Թաաւ ու շեղակի Թեւածում մը ունենալէ յետոյ, նոյն
Թաւալզոր անկումը ունեցաւ : Ի՛նչ եղաւ արդեօք Թի-
Թեանիկին :

Թեւերը իբարտ կը զարնէր անընդհատ ու յամառ
յարատեւութեամբ մը կը կրկնէր ու կը կրկնէր Թռչելու
փորձը, բայց միշտ՝ հազիւ Թէ քիչ մը բարձրացած, նոյն
քովընտի գլորումով զետին կը դահավիժէր : Ու կը շար-
ժէր Թեւերը, տենդոտ անհանդարտութեամբ մը :

Մտակցայ իրեն, դիտել հասկնալու համար Թէ ի՛նչ
է պատճառը Թռչիլ չկրնալուն և ցաւով նշմարեցի Թէ
հէք ԹիԹեանիկին ձախ Թեւին ծայրէն պղտիկ մաս մը
փրթած էր, անշուշտ փսոսելով մասներուս մէջ երբ
բռնեցի զինքը :

Կարծելով Թէ այդ պղտիկ ծայրատումն էր պատճառ
ԹիԹեանիկին Թռչելու անկարողութեանը, դարման մը
տանելու համար այդ Թերութեան՝ նորէն բռնեցի զանի
ու միւս աջ Թեւին ծայրէն ալ նոյնքան կտոր մը փր-
ցուցի որպէս զի ասով երկու Թեւերն ալ հաւասարակչ-
ուուին :

Բայց, աւանդ, ԹիԹեանիկի նորէն չկրցաւ Թռչիլ :
Դարձեա՛լ նոյն առջի յուսահատ փորձերը Թռչելու,
դարձեա՛լ նոյն առջի անկումները, ու դարձեա՛լ Թեւերու
ն՝ոյն անընդհատ ու անդոտ Թափափուումները :

Երկար ատեն անհուն սրտացաւով դիտելէ յետոյ
ԹիԹեանիկին այս ցաւադին ճիղերը, ա՛լ ձգեցի վեր ելայ
ու փորձեցի բանով մը զբաղիլ, բայց ԹիԹեանիկիս ցաւը
մրաքէս չէր ելլեր :

Քանի մը ժամ ետքը նորէն ծաղկանոցը իջայ, միշտ
ԹիԹեանիկին մտածումովը պաշարուած ու շխտակ դացի
ծաղիկներուն մէջ նայելու Թէ կը կենա՞յ դեռ : Գեախնն

էր, ոտքերուս տակ, ու այս անգամ աջ թեւէն խոշոր կտոր մը փրթած ընկած էր քիչ մը անդին :

Հէ՛ք թիթեռնիկ որ զո՞ն կ'երթար իմ մէկ ճախող հետաքրքրութեամբ : Կ'երևայ թէ անզգոյշ մատուրներս շատ մնասած էին իր թեւերուն, և հիմա այն աշխոյժ, զուարթ, թրթուուն թիթեռնիկը թեւատ էր եղեր, թըռչելու անկարող :

Ա՛լ հիմա հանդարտեր էր, ա՛լ առջի պէս թռչելու ճիգեր չէր բներ, թեւերը ցնորագին չէր շարժեր : Հիմա յուշիկ յուշիկ հոգին վրայ կը քալէր. պզտիկ մազանման եղջիւրիկները երերցնելով տրամագին :

Ան անշուշտ ա՛լ բնաւ չպիտի կրնար թռչիլ : Արեւը միշտ պիտի շողար լուսաշող, ծագիկներն իրենց բաժակները հորէն ու հորէն պիտի բանային երփներանդ, ուրիշ թիթեռնիկներ՝ իր գլխուն վերև, պիտի թեւածէին, և ինք դատապարտուած պիտի ըլլար դեռինը փակած մնալու :

Ու ցաւով ու կարօտով պիտի դիտէր այն թռչաող երջանիկ թիթեռնիկները որոնք ուրախ զուարթ կը պարեն արեւին կայտաող շողերուն հետ որոնք շահաքրամներուն հետ կը պապտուին ու շահպրակներուն հետ կը սիրուրտին, մինչդեռ ինք այդ բոլոր վայելքներէն ալ զուրկ պիտի մնար յաւէտ :

Այս մտածումը անհուն կսկիծով մը համակեց զիս : Լաւագոյն էր թիթեռնիկին համար՝ մեռնիլ՝ քան թէ տանիլ այդ դեանաքարչ կեանքը : Պէ՛տք էր վերջ տալ անոր չարչարանքին : Ու տուի որոշումս :

Գնդասեղ մը առի և յուզումէս դողահար՝ մօտենալով թիթեռնիկին, իրանին ճիշտ մէջտեղէն մխեցի և յետոյ տարի պատին վրայ դամեցի : Թիթեռնիկը խելացնոր արագութեամբ սկսաւ թրթուացնել կիսատ թեւերը : Մար-

մինը ցաւագին ցնցումներով կը զգալարուէր : Ի հարկէ
ոգևարքի տագնապներով կը չարչարուէր խեղճը :

Քանի մը ճգնաժամային ճիւղեր , յետին թոթվուուք-
ներ ալ , ու լմնցաւ ամէն բան : Մեռաւ թիթեռնիկը ,
մեռաւ ու մահուան անզգայութեան մէջ գտաւ իր յաւի-
տենական հանգիստը :

Եւ ես անհուն դառնութեամբ լեցուն՝ տեսակ մը
ցաւագին գոհունակութեամբ դիտեցի մահը դժբախտ թի-
թեռնիկիս , դժբախտ թեւազուրկ թեթեռնիկիս : Ի՞նչ ,
միթէ տառապող հիւանդ կեանքի մը ամէնէն բաղձալի
հանգիստը չէ՞ դերեզմանը :

Թիթեռնիկիս դիակը դեռ պատիս վրայ դամուած կը
կենայ : Երբեք պիտի չմոռնամ զայն :

Հէ՛ք թիթեռնիկ :

Մասիս

ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԱՆՄԱՀ ՄԱՆՈՒԿԸ

Պատկեր մ'է նուրբ մանկիկն անմահ , դեռատի ,
Պատկեր մը նուրբ , արծաթեայ .

Իրանն ամբողջ , չըքնաղ կոկոն մը վարդի ,

Որքան կ'ուզես հոտուրտայ :

Ձի տըժգունիք , անեղծ , աննիւթ՝ դեղն անոր ,

Ու չի խամրիր , չ'այլայլիր ,

Շընորհքն անհուն՝ իր լոյս ճակատն ամէն օր՝

Շաղով կ'երփնէ շողալիր :

Շունչն ալ ըսես , գիրգ բուրումն է գարնայնի ,

Ձինջ՝ քան կապոյտն եթերին ,

Կ'ալեծրի՛ լանջքին վըրայ հոլանի՛

Սէ՛ր՝ սուրբ , անխօս ու լրուին :

Քուն թէ արթուն, կամ խոհերով մըտազբաղ,
Ան քեզ կ'առնէ, կը տանի.
Դէմքին զիծեր՝ սլայծառ կամ մութ ու ճապաղ՝
Մըտքիդ մէջ միշտ կենդանի:
Չես գիտեր ան՝ շո՞ղն է լուսնին գեղանի,
Որ կը ննջէ ջուրի վրայ.
Թէ սիւքն այդուն՝ բոյրութն օծուած շուշանի՝
Որ հովտին մէջ կը թրթռայ:
Խորին խորհուրդ, զոր կ'ըմբռնէ լոկ հոգին,
Փափուկ հանգոյն տերեւի,
Թէ դայն մոռնաս, յանկարծ ան օր մը կրկին՝
Երազիդ մէջ կ'երեւի:
Գողտրիկ մանուկ, անո՛ւրջ անձառ սիրազեղ,
Փթթուին անմահ ժրպիտի.
Մահն իսկ ըլլաս, քու սէրդ հրանուտ ու բոցեղ՝
Կանդաւառէ՛ զիս պիտի:

Քարակն, հահղէս

ՄԿՐՏԻՉ ԹՈՒՐԵԱՆ



Մկրտիչ Թուրեան. Ուսուցիչ ու բանաստեղծ, որուն ներշնչուած քերթուածները ինքնատիպ դրոշմ կը կրեն. իր Գրուագներ գալառի կեանքէն ընդարձակ աշխատասիրութիւնը քանի մը տարի առաջ վարձատրուեցաւ Իզմիրլեան զրական մրցանակով:

Հ Է Ք Յ Կ Ն Ո Ր Ս Ը

Ազամանդէ կայծերն արդէն երկնից մէջ
Կը շողային . գորշ ամպերու շարք մ'անպերջ՝
Դարանակալ մընար ետին լերանց վէս ,
Ու լալկան բուն կ'երգէր տըխուր աղէկէզ :

Զոյգ թիերու ճողփիւնն հընչէր յանգաւոր ,
Ու ճըկնորսի մ' ճեղքէր մակոյկն սըզաւոր
Ալիքներու կոյտերն ա՛նեղ . ինք կ'երգէր
Անսիոյթ , դարնան զեփիւնն , ծաղկունք ու մարգեր :

Կ'երազէր նա ճոխ որս մ'ընել այն գիշեր ,
Դառնալ իր բոյն՝ գրգուել իր կինն ու ձիժեր ,
Շարաթ մ'ամբողջ վայելել կեանքն անվրդով .
Ի՛ իր միամեայ մանկան լըսել ձայն թոթով :

Հեռո՛ւն , հեռո՛ւն , յանկարծ հընչէր թիւղեր գու ,
Ճայթէր կայծակն , տար արծազանդ երկա՛ր խոր ,
Հովուց ի թև սաւառնէին , հրրարոց
Ամպեր դէզդէզ , ըսքօզելով երկնից ծոց :

Ծօլ խոկերէն սթափած ձկնորսն հէք խկոյն՝
Դիտեց շորս դին , տեսաւ վըտանդն փոխեց գոյն ,
Ու ջիլապինդ հուժկու բողկաւ բախեց թին ,
Բայց ո՛ւր երթալ . . . հալածէր գինք հեռ բախտին :

Դարձուց աչերն , երկա՛ր երկա՛ր դիտեց խոր
Հոյսը դողդոջ իր հիւզակին սըզաւոր ,
Հե՛ծեց . . . յանկարծ վըրվըրաղէզ մի կոհակ
Թաղեց ծովուն մէջ խեղճ ձըկնորսն Լ'իւր նաւակ . . .

Իջան հողմուռնք, զայրոյթն իջաւ ալեաց գոռ .
 Ծագեց լուսին, զննեց աշխարհ լեռ ու ձոր .
 Եւ անկենդան հէք ձրկնորսին անդ ի տես՝
 Սոսկաց . . . հեծեց, փախաւ ետին լերանց վէս :

Հասրնօրհ

ԱԼ. ՎՐԴ. ՍԻՐՈՒՆԵԱՆ

ՀԱՅՐ Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ

Ուշադրութեան արժանի դէպք մ'է Հ. Ալիշանի Յոսելեանը: Նորա որ ի վաղուց և ի մօտոյ կը ճանչնան զինքն պիտի գրեն անշուշտ այս առիթիւ իւր կենաց մանրամասնութիւններն, և կարող գրիչնէր պիտի դան ի վեր հանել նորա անժխտելի արժանիքն իրր զրադէտ, իբր հնախօս, իրր պատմաբան: Իմ նպատակս է նշանակել աստ հասցնեպիւ յիշատակ մը՝ զոր ներկայ առիթն կը զարթուցանէ յիս այնքան ազդուապէս:

1887 տարւոյն յուլիս ամսոյն սկիզբն մի քանի օրեր անցուցի ի Վենետիկ, այդ եզակիան քաղաքն, որ Ադրիականի նաւելի թաղուհին կոչուած է իրաւամբ, նշանաւոր իւր պատմութեամբն, արուեստիւն, շէնքերովն, և երկիցս այցելեցի անպատում հաճութեամբ Ս. Ղազարու վանքն, ուր այնքան յարգելի անձինք, Մխիթար Աբրաայ, Հ. Արսէն, Հիւրմիւզեանք, շնչած են ու աշխա-

Ալիքան Վրդ. Սիրունեան. Ուսուցիչ հայերէն լեզուի ու մատենագրութեան, հրատարակած է Հասրնօրհ արդի տնտեսային գրականութեան աշխարհաբար հաւաքածոյ մը որ զրական ու կենսագրական բացատրութիւններով նոխացած է. խնամեալ աշխատասիրութիւն մը կը համարուի նաև Ս. Աւետարանաց աշխարհաբար Թարգմանութիւնը չորս հատոր, որ լուսարանուած են կարեւոր ծանօթութիւններով ըստ հնախօսական նորագոյն հետազօտութեանց Ս. Գրոց:

տած, ուր լոյս տեսած են այնքան գրական հմտալից գործեր, զորս մեր դպրոցական գրասեղանից վրայ արդէն սկսած էինք թղթատել ու գնահատել :

Առաջին օրն իսկ շնորհալի կոնտոլ մը ուղորուն, անվրդով, նեղ ու լայն ջրանցից վրայէն սահելով, սպըրդելով տարաւ զիս Ռափայէլեան վարժարանն որ քաղաքին մէջն է, հոյակապ շէնք մը. երբեմն տալատն ազնուական գերդաստանի մը, ընդարձակ սենեակներով ու սրահով, ոսկեզօծ ձեղունով ու փալփուէն յատակով : Տնօրէնն Հ. Գրիգոր, վայելչադէմ ու ազնուարարոյ անձ մը, հաճեցաւ ինքն անձամբ ցոյց տալ ամէն ինչ :

Յաջորդ առաւօտուն վանքին կոնտոլովն ծերունի Աշխատաւոր Եղբայր Օգոստինոսի ընկերակցութեամբ գնացի ի Ս. Ղազար, որ գրեթէ կէս ժամու չափ հեռի է քաղաքէն, մեկուսի անդորր հրապուրիչ վայր մը Ադրիականի արեգջեր ջուրովն շրջապատեալ :

Ինչո՞ւ ծածկեմ զգաղութներս. յուզուած էի ի խոր, գրեթէ զգլխած. գտնելով ինքզինքս այսպիսի հայկական շրջանակի մը մէջ օտար ափանց վրայ, այս վանուց շրջապատին մէջ, որ միշտ վիպական հզօր հրապոյր մը ունեցած էր ինձ համար :

Բայց ժամանակիս մեծադոյն մասն անցուցի Հ. Ալիշանի հետ, և չեմ կրնար այժմ առանց յուզման յիշել այն քաղցր, այն թանկագին ժամերն, այն ընդունելութիւնն, այն գրեթէ հայկական համակրութիւնը, զոր ցոյց տուաւ ինձ : Մանօթ էի արդէն իւր աշխատութեանց, իւր հանձարին, զմայլեցայ գտնելով զինքն այնքան հեզահամբոյր, այնքան խոնարհամիտ, գորովագին, երիտասարդ—ծերունի, երիտասարդական աւիւնով, երիտասարդական զուարթութեամբ :

Տարաւ զիս ձեռագրատունն, որոյ ինքն էր պահապան հոգին, կոկիկ շէնք մը կիսաբոլորակ, ամէն ինչ մեծ

խնամով ու հոգածութեամբ կարգաւորեալ : Եւ ի՞նչպէս
կը գուրգուրայ այդ ձեռագրաց վրայ, ի՞նչ հպարտու-
թեամբ, ի՞նչ հաճոյքով : Որդեգորով ծնողն կրնա՞ր աւելի
խանդավառ զգացմամբ զգուել ու ցոյց տալ իւր սիրա-
սուն զաւակունքն :

Վանքին մէջ ունին 1500ի չափ ձեռագրեր տասներորդ,
մետասաներորդ, երեքտասաներորդ դարուց գործեր,
Աւետարան, Մաշտոց, Սաղմոս, Մեկնութիւնք և այլն,
գեղեցիկ նկարներով ու զանազան ոճով գրերով :

Ցոյց կուտայ ինձ Հ. Ալիշան սոցա գլխաւորներն,
իւրաքանչիւրին կենսագրութիւնն ընելով մանրամասնօ-
րէն : Ահաւասիկ չորս Աւետարանք, Համբրանապետն հա-
մար և իւր եղբօր հրամանաւ պատրաստուած յամին ՌԻՄԲ
թուական Հայոց (1193), մանր երկաթագիր, նկարներով,
խորան կոչուած, զորս Շնորհալին մեկնարանած է : Մաս-
նաւոր ուշագրութեան արժանի են Մկրտութեան պատ-
կերն, Պաշխութեան պատկերն, այս պատկերները շինողն
էր Կոստանդին սին : Սաղմոսի Մեկնութիւն, գործ Համբ-
րոնապետն, իւր կենդանութեան ժամանակ ընդօրինակ-
ուած, նմանապէս իւր վարքն, թուական 1190, բոլոր
գիր, նկարիչը՝ Կոստանդին : Աւետարան, Արծրունի Գա-
գիկի Մլքէ թագուհոյն հրամանաւ պատրաստուած,
ամէնէն հինն վանքին մէջ, զոր, չեմ յիշեր այժմ ո՞ր իշ-
խան, կ'ըսէր թէ նուիրած է վանքին : Գեղեցիկ է
Համբարձումն ներկայացնող նկարն : Պատկերներէն զատ
զարդ չ'ունի, երկաթագիր : Այս առթիւ կը յիշեցնէր Հ.
Ալիշան նախանձով մը զոր շէր կրնար ծածկել, թէ Մոս-
քուայի մէջ կը դանուի հայերէն հնագոյն ձեռագիրը,
Աշոտ Ա.ոյ ժամանակ գրուած. որ իւր հազարամեակն
տեսաւ դեռ անցեալ տարի, Ճաշոց մը 1327 թուականէն :
Ոսկեբերանի ճառերն, թերևս ամէնէն հին ձեռագիրը,

Նուրիճան պատրիարքէն ընծայեալ : Վարդան պատմիչ , բոլոր նախնի պատմչաց ձեռագիրներէն հնագոյնը : Պօղոսի թղթերն և Եսայի մարգարէ , որոյ գեղեցկութենէն ու խնամքէն կ'եզրակացնէ թէ հաւանօրէն Ռուբինեան իշխանի մը համար պատրաստուած էր , և այդ իշխանին Հեթում Բ . կը կարծէ լինել : Մեկնութիւն Պօղոսի թղթոց 1000 թուականէն : Ճանիկ Ամիրային զրկած Աւետարանն , թուական 1007 , որ կը պարունակէ պատկերն յոյն իշխանի մը , որ թերեւս զրել տուողն էր : Մանր ուսումն կամ Կցուրդք , Կոստանդին Լամբրոնայի իշխանին համար պատրաստուած և այլն :

Ուրիշ ձեռագիր մ'ալ դուրս կը հանէ Հ . Ալիշան խնամով , կը սեղմէ զայն իւր կուրծքին վրայ դորովով , «Պաղնկու ես որ ցոյց տամ» կ'ըսէ ժպտելով : Հարկ չէ ըսել թէ ես որ առաջին անգամն ըլլայով կը տեսնէի մեր նախնեաց այսքան ձեռագիրներն ի մի հաւաքուած , և նոցա բացատրութիւններն կը լսէի շրթուքներէն նոյն իսկ այն անձին , որ անտարակոյս ամէնէն աւելի հմտութիւն ու ամէնէն աւելի դորով ունէր նոցա մասին , որչա՛փ յօժարութեամբ ու եռանդեամբ իսկ համակերպեցայ իւր առաջարկին : Աւետարանի մեկնութիւն մ'էր Ոսկերեքանէն և ուրիշներէն քաղուած , և նոյն իսկ Լամբրոնայացւոյն ձեռամբ դրուած : Հնդկաստանէն եկած էր այս : «Աւանդ , կ'ըսէր Հ . Ալիշան , որ միւս ընկերներն Ուկրանոսի կոկորդն սուղեցան» : Ուրիշ հաւաքածոյ մ'ալ կայ Ս . Աթանասի ճառերէն , որ խիստ հաւանականաբար գրուած է նոյնպէս Լամբրոնայացւոյն ձեռամբ :

Բաց աստի , Հ . Ալիշան ինձ հաղորդեց յոյժ կարեւոր ծանօթութիւններ այն ձեռագրաց վրայ , որք կը գրանուին ի Փարիզ և ի Լոնսոն , զորս ապա պատեհութիւն պիտի ունենայի տեսնել :

Կ'անցնինք անցքէ մը, ուր երկուստեք կը դիտենք պատկերներն այն միաբանից, որք երբեմն ապրած են հոս : Ի՞նչ ոսկեղէն տեղ մը կայ, կ'ըսեմ իւրովի, պահուած հոս այն անձին համար. որոյ ընկերութիւնը կը վայելեմ այժմ : Կը մտնենք իւր խուցն, որոյ առջև կը տարածուի վանուց ծաղկազուարճ պարտէզը, և ի բացուատ ծովն լայնաափիւռ ու մարգարտաշար կղզիներն : Ազգային պատմութեան խնդիրներ ունիմ, որոնք ընդ երկար ըզբաղեցուցած են միտքս և դեռ կը մնան հոն անլոյծ : Խորենացին մանաւանդ շատ մը հարցեր կը յարուցանէ : Հ. Ալիշանի պատասխանները ցոյց կուտան այնպիսի հմտութիւն մը, որոյ վրայ անկարելի է չ'սքանչանալ : Եւ եթէ կանխաւ թոյլտուութիւն ստացած լինէի հրապարակել իւր յայտնած կարծիքներն ու համոզումներն, նոր ու ազդեցիկ ապացոյց մը տուած պիտի լինէի այն կարևոր բայց յաճախ մոռցուած ճշմարտութեան թէ կատարեալ հմտութիւնը նուազ յանձնապաստան կ'ընէ միշտ զմարդ և առաւել ազատամիտ, առաւել ներողամիտ :

Ի՞նչ օտարազգի հեղինակներ կան որք գրած են մեր ազգային պատմութեան այս կամ այն շրջանին վրայ. —

Հ. Ալիշան գղրոցէն կը հանէ ծրար մը քարաէսներու, կարծեմ այբուբէնի կարգաւ շարուած, ուր այս հեղինակաց անուանքն ու գործերն են նշանակուած :

Երբ չեմ գիտեր թէ ի՞նչպէս կրնամ իմ երախտագիտութիւնն յայտնել իւր այսքան մարդասիրութեան համար, — «Եթէ երբեք ո՛ր և է հայկական հնութիւն, ձեռագիր կամ այլ ինչ, ձեռքդ անցնի, մի՛ մոռնար ինձ հաղորդել» : Այս է իւր ակնկալած փոխարինութիւնը : Կը տեսնես դիւրաւ թէ հայկական հնութեանց սէրն ի՞նչպէս կը տիրէ իւր հողւոյն մէջ : Այդ սէրն է անշուշտ որ կարողացուցած է զինքն ի գլուխ հանել իւր ստուար աշխատալից հատորներն :

Առիթ ունեցած եմ ճանչնալու Ալիշանի աշակերտներէն շատերն ամէն դասակարգէ, վարդապետ, վարժապետ : Ծանօթացայ ի վենետիկ միոյն, համբաւաւոր լուսանկար մը, միւսի մը ի Լոնտոն՝ որ պատուաւոր հայ տան մը ներկայացուցիչն էր հոն : Հաճելի է տեսնել թէ ի՞նչպէս ամէնքն ալ յարած են իւրեանց դասատուին որդիական սիրով :

Երբ այս տողերն կը գրեմ, աչացս առջև ունիմ Հ. Ալիշանի մի գեղեցիկ լուսանկարն, զոր ինքն նուիրեց ինձ իւր ձեռամբ նշանակելով իւր անունն ի ստորեւ. — Մեծ գլուխ մը որոյ գագաթն կը ծածկէ դտակ մը հաղիւ նշմարելի, լայն ու վսեմ ճակատ, խոշոր աղու աչքեր, երկայն մօրուք մը սպիտակափայլ. «Ի՞նչ հանձարեղ և միանգամայն ի՞նչ համակրական քաղցր դէմք մը», կ'ըսէ օտարազգի բարեկամ մը նայելով այդ պատկերին : Արդարեւ իւր մտաց ու սրտի չքնադադիւտ բարեմասնութիւնքն կը ցոլան իւր վայելչակազմ դիմաց վրայ և դիտողի ուշն ու համարումն կը դրաւեն արդէն :

«Արարատ աշխարհ, կը գրէի դեռ նոր առ Հ. Ալիշան երկտողի մը մէջ, զոր սերտած էք եռանդազին, զոր սիրած էք կաթողին և սիրելի ընծայած, զոր օժտած էք ճոխաբեր ձեր աննման անմահ երկերովն, երբ կը դարձունէ իւր շնորհապարտ հայեացն ձեր գրական արդիւնաչատ գործունէութեան երջանիկ Յուլիեանի առթիւ առ Ձեզ՝ իբր բաղմերախտ վաստակաւոր, կը փափաքիմ եւ ես մատուցանել Ձեզ խոնարհութեամբ իմ անկեղծ խնդակցութեան ու հիացման զգացումներս և մաղթել որ Հայ դպրութիւնն վայելէ դեռ ընդ երկար հովանաւորութիւնն իւր անզուգական պաշտպանին» :

Այս է անտարակոյս սրտազին մաղթանքն ամէն հայուն որ կը բաղձայ տեսնել իւր ազգային դպրութիւնն զարգացեալ, ճոխացեալ :

ԽՔՈՒՄԻՆ ԻՐԻԿՈՒՆԸ

Մեծ Պահքի խորհրդաւոր ու Աւագ շարժուան տրի-
բարոյր օրերէն վերջը, ինչ ցնծալիւ իրիկուն է սա՛ Չատկի
մեծ վաղորդայնին դուարթարեր երկունքովը ուռած :

Մաքուր՝ անբիծ հորիզոնին վրայէն, արեւը իր վեր-
ջին շաղերը կը կոխէ ու կը ցանցնէ սա դէմի բլրակի
դալարիքին վրայ, ուր երիցուկները՝ կանաչներու հետ
կը դորդեն կուշար լերան և օդը կը բուրումնաւետէ հոտը
եզրեւանիին որ երէկ Յիսուսի թաղումը պսակեց ու հէք
յուզայենիին՝ որ կարմիրներուն մէջ շղարշուած է, խոր-
հրդանշելով դարերն ի վեր գլջումը ապերախտ աշակեր-
տին՝ առանց յաւիտենական դատապարտութեան մը դա-
տակնիքը կարենալ սրբելու և կամ դարտուոր ապաշխա-
րանքով մը իր մեծ վարդապետին զթած սիրտը ցնցելու :

*
* *

Գեղջուկ հաւատասցեալը, ամբողջ կօթը շարաթ,
ժամուն փակ խորաններուն առջև, խաչելութեան վսեմ
տեսարանը պարզող պատկերին դէմ իր ապաշխարանքի,
զղջումի ալօթքներովը մխայ՛ անոր առջև վառուած
կանթեղին պէս : Մեղքի ռամիկ՝ այլ խորունկ դիտակ-
ցութեամբ, և հաւատքի տաք շունչովը խնկաւէտուած
զղջումի ինքնաբեր մարմաջով մը, մտիկ ըրաւ շա՛տ օրեր,
մինչ զիւղական աէրատէրը կ'երդէր Արեւադալը, ձայնի
արուեստակեալ սեթեւեթներէ ու սլորումներէ դուրկ
եղանակով մը, և իր համբիշխն իրարու ետեէ թափթփող
հատերուն նման՝ ներքին հաւատքէ մը լարուած մեքե-
նականութեամբ մրթմրթաց իր զղջման մաղթանքները
ու «Տէր Ամենակալ»ը :

Զրկումի ու ինքնաշարշարումի մասին իրեն ներշնչ-
ուած կամ իր ունեցած ըմբռնումով ապաշխարեց, աղօ-

Թեց ու պահեց . . . : Մերժեց ուտել ինչ որ պիտի կրնար
ապաշխարանքի արցունքներուն մէջէն անարատ վերածը-
նող հոգիին փետրաւորումները մեղքի աղտով ձիւթել-
կապտել : Վերջին շարժուն, հաւատացեալի մը համակ
տենդոտ յոյզերով ու ձգտուած հետաքրքրութեամբ հե-
տեւեցաւ իր Տէրոջը՝ Յիսուսի վսեմ վայրկեաններուն,
Բեթանիայի արմաւենիներով ցանոյնուած ճամբայէն մինչև
Գողգոթայի բարձունքը :

Կնիկ մարդիկ իրենց գերանուրբ զգայնոտութեամբ
և անսահման հաւատքին և պաշտելութեան մէջ, Լացի
Գիշերը, կտակի ժամուն, Աստուածամօր ու Մազդաղե-
նացիին հետ իրենց աչքին ամէնէն աղի արցունքը քամե-
ցին և այդ չցամքած արցունքով եկան համբուրելու
ծաղիկներով ու զմուռսով խնկուած Թաղումը Յիսուսին՝
որ իր կեանքին մէջ անուշ համակրանք մը, սուրբ ու
կղկաթ համակրանք մը ցոյց տուաւ միշտ Եւայի թոռ-
ներուն :

Ապաշաւանքի խորհրդաւոր քողով մը ծածկուած Մեծ
Պահքի, ու վսեմ՝ երկնային ողբերգութեան մը յիշատակ-
ներով անմահապած Աւագ Շարժուան օրերէն վերջը, ինչ
բերկրալիւր իրիկուն մըն է սա, Զատիկի մեծ վաղորդայ-
նին զուարթաբար կրկունքովը ուռած :

Մաքուր, անարատ հորիզոնին վրայ, արեւը իր յետին
նշոյլներով կ'ոսկեւետէ սա հանդիպակաց բլրակին մար-
մանդները, ուր մոյգ կանաչութեամբ մը, փնջուած կնձ-
նիին վրայ թիզկուկ թռչիւնը կ'արձակէ իր հեծեծազին
աւաչները և ուր եղբւանին իր վայրահակ ծաղկեփունջե-
րով ու յուգայենին իր կարմիր շղարչներուն մէջ կը ծաղ-
կանշեն ամբիծ Հաւատքն ու տարածամ, դատապարտ
Զղջումը, երիցուկներուն ու կանաչներուն միջև, որոնց
վրայ կը ճարակին գառնուկները, մերթ արձակելով

մայիւն մը, մայրական կարօտով առլի : Գիւղական մանկը-
տին անոնց մօտ, դաշարիքին վրայ հեշտօրէն կը փռուին,
երջանկութեան անհուն ճառագայթի մը մէջ թաթիուած,
ու անագին սրուչտուքներով չեթին կը հանեն իրենց
կարմրուկ հաւկիթները :

Իսկ գիւղին մէջ գեղջուկը իր ընտանեկան սեղանին
շուրջն է, իր հողին ալ անհուն ափովանքի ու անբծու-
թեան մը մէջ ծրարուած՝ փետուրէ մը թեթե կ'զգայ
զինքը, որովհետեւ հաղորդուած է ու աղատուած՝ զինքը
ճնշող մեղքի բեռէն :

Հիւժած՝ ներդեւած ստամոքսը տակաւ կ'սկսի յափ-
րանալ՝ երբ կը խթե աւանդական կարմիր հաւկիթն ու
կաթնապուրը, և կը պատրաստուի վաղուան խնջոյքնե-
րուն, մոռնալու համար՝ զինի թաժակներուն մօտ՝ եօթը
չարաթուան զղջումի օրերը, մեղքերու առատ մթերքով
մը հասնելու Մեծ Պահքի առջի օրուան ու սկսելու
ապաշխարանքի նոյն հեծեծանքն ու ծնրադրութիւնը :

Մասիս

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Գրիգոր Շահինեան (1876—1903) . Վաղամեռիկ երիտասարդ
գրագէտը Արմաշու Դպրեվանդաց ամէնէն փայլուն շրջանաւարտներէն
մին էր, որ ուսուցչական ապարէզին մէջ արդիւնաւոր եղաւ իր հմտու-
թեամբ ու գրական ձիրքերովը և միևնոյն ժամանակ հեղինակ գրական
ու բանասիրական լուրջ աշխատասիրութեանց, որոնցմէ նշանաւոր է
Պատմութիւն Եկեղեցական բազմահատոր գործը որ անտիպ կը մնայ :

Ծ Ա Վ Ա Փ Ի Ն Մ Օ Տ

Ծովափին չորցած աւազին վըրայ
Չէ՞ք լըսեր ծովուն երգին արձագանգ .
Յեղեղուկ հողին հոն չէ՞ առած կանգ ,
Անուրջն հերարձակ ջուրին , փախստեայ :

Իր թաւշամռայլ նիրհէն շա՛տ ասդին ,
Հոն ուր երէկ ծովն իր խանդը կուլար
Անհունին սիրոյն մէջ՝ բուռն ու մոլար ,
Չէ՞ք տեսներ գիծերն իր մեծ հառաչքին :

Ահ , կոչտ աւազին վըրայ լո՛ւռ անդոյն ,
Չէ՞ք տեսներ Սիրոյ մեռած երգն այսօր ,
Քանդակուած խորունկ , քանդակուած հզօր
Վէտվէտուն ինչպէս խանդն ալիքներուն :

Ու այդ աւաղէ կրկնալեանց մէջէն՝
Մի՛շտ հաւատարիմ մե՛ծ Մեղեդիին ,
Չէ՞ք շնչեր Սիրոյ անուրջ մը խորին ,
Չէ՞ք շնչեր հողին ալեաց որ ա՛լ չեն :

Ի՛նչպէս նրբացեր է աւաղն այսօր .
Ոսկեփոշի՞ է մեռած թիթեռնի . . .
Ի՛նչ ժանեկային գգուանքներ ունի
Աւաղն որ առաջ ժայռ մըն էր խոժոռ :

Ծովուն մենատրոփ սիրոյն շունչն երկար ,
Վայրի Անհունին վայելքը փնտուղ ,
Անէացման մէջ , իբր անմահ մէկ դող ,
Աւազին վըրայ դրոշմըներ է սա՛ռ :

Հո՛ն իր հասնուամի հեշտանքներն յետին ,
Խորաճիշտ պատկերն հուսկ ալիքներուն ,
Անշարժութեան մը մէջ վսևմ , մի՛շտ նո՛յն ,
Իտէացուցեր են իր մեղեդին :

Ու փրփուրն աղու , ու փրփուրն հեւուն ,
Ամէն գալարուն ալիքի կրագ ,
Մեռնելու ատեն , իբր անվե՛րջ օրհաս ,
Զիւնի դալուկ մ'է սրսկեր ժայռերուն :

Ծո՛վ , մինչ ամէն բան որ կայ նիրհիդ շուրջ ,
Ցից խարակներէդ մինչև անցորդն հէգ ,
Կը պատմէ սիրոյդ հառաչքն , ահաբեկ ,
Ակամայ կ'օրրէ քու մեռած անուրջ :

Մինչ ամէն բան հոտ , նիրհիդ շուքին տակ ,
Մի՛շտ կը մռնջէ հեշտանքըդ անցեալ ,
Ծո՛վ , երբ քեզ նման մեռնի քերթողն ալ ,
Ռ՛վ պիտի պատմէ իր սէրն անյատակ :

Ի՞նչ դրոշմ ունի բանաստեղծին սէր
Հորիզոններուն տակ՝ մի՛շտ անայլայլ .
Մինչ մէ՛կ հառաչքով վիհեր գծես մռայլ
Կամ սէրդ երանող զմրուխտ կղզիներ . . . :

Մի՛թէ հետք ունի՞ իր համբոյրը խոր ,
Խանդը նայուածքին կը տուէ՞ հեռուն .
Մինչ մէկ նայուածքով ամպեր դարբնես դուն ,
Ու մէկ համբոյրով հորիզոն մը նոր :

Միթէ արձագանգ ունի՞ իր նուագ ,
Եւ իր յանգերուն տխրութիւնն հնչուն
Կը քաղցրացնէ՞ սառ տարածութիւնն .
Մինչ քու մէկ շիթով կանանչնայ խարակ . . . :

Ծո՛վ , երբ կծկուի քերթողն ալ քեզ պէս ,
Սրտահալ , տժգոյն , հառաչքով մը լա՛յն ,
Իր մեծ Սէրն իր մէջ մարի պիտի միայն ,
Եւ շուրջն ամէն տարր պիտի լռէ վէս :

Ո՛չ մէկ բան ճանչնայ պիտի իր հուսկ հեծ .
Միա՛յն փոս աչերն ըսեն պիտի ցած ,
Անհունին հզօր տեսիլքէն ծծուած ,
Միա՛յն փոս աչերն , այս բառը , Սիրե՛ց :

Մասիս

ԵՒ. ԳՕԼԱՆՃԵԱՆ

Եղուարդ Գօլանեան. Երիտասարդ բանաստեղծը արդի հայ
գրականութեան մէջ յայտնի անուն մը շահած է իր շատ իսկատիպ և
երբեմն միտիք քերթուածներով, որոնք մասնաւոր հրապոյր մը ունին :

Ե Ղ Բ Ա Յ Ր Ե Մ Ք Մ Ե Ք

Ի բիւր ձայնից յնութեան շքեղ
Թէ կրգք թռչին սիրողաբար,
Մատուռք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քրնար •
Չունին ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, կղբա՛յր եմք մեք
Որ մրկաւ էինք զատուած
Բաղդին ամէն ոխ շարանենդ
Ի մի համբոյր ցրուին ի բաց •
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւոր Մայրն Հայաստան
Տեանէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքերն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով •
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մենք ի հրնում...
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսը և ըզխնդում
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան •
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր •
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Ծ Ա Վ Ը

Ծո՛վ դու ժպտուն, հրաշատեսիլ, կապոյտ ծով,
Աչքերս քեզի յառած մնամ ժամերով .
Երբ արեւուն հսկայ ամէն մէկ քայլին՝
Մշուշն ու ստուերք արշալուսին կը հալին,
Դու տարածուած լայնածաւալ ու խաղաղ
Կը յօրինես արդուզարդեր քո շքնաղ,
Երբ ալեակներդ օղակ օղակ թրթռան
Ոսկի թելէ հիւսուած ինչպէս մեծ ուռկան,
Նաւակներն ալ սուրան ճերմակ թեւերով,
Ու մանուկներ եզերքին մօտ՝ լոյծ ու դով
Բազուկներուդ մէջ նետուին ժիր ու անվախ,
Կեանք, լոյս, ծաղկունք փթթին ամէն կողմ ուրախ :
Ծո՛վ դու ծիծղուն որ ծփծփաւ ծուլաբար
Աչքերս յառած քեզի մնամ ընդ երկար . . .
Դու կանչեր ալ ունիս վսեմ՝ ամենի
Ու նաւաստին անփորձ որ քեզ վատահի
Չգիտեր թէ ինչպէս կնոջ սիրտ՝ յաճախ
Դու յողդողդ ես, դարանակալ ու խարդախ,
Պակուցիչ են քո վտանգներ ու անեղ .
Երբ զայրացած փոթորիկները՝ անմեղ
Կեանքեր թէպէտ լափեն անյագ ամէն օր՝
Բայց քո հմայք շատ աւելի են հզօր .
Քեղեցիկ ես ծո՛վ անծայր, ծո՛վ ծիրանի,
Թէ մռնչես իբրև առիւծ վայրենի
Թէ մրմնջես ծածանելով մեղկ ու հեզ,
Ամէն սիրտ՝ թարմ կամ մաշած, միշտ սիրէ Ղքեզ :

Ա Մ Ր Ա Ն Յ Ո Ւ Շ Ե Ր

Ե Ա Գ Ա Ճ Ը Գ

Անոյշ հովեր կը փչեն զով
Այազմային, սարերէն,
Հսկայ ծառեր՝ ցից, քովէ քով,
Հայն թւերնին կ'օրօրեն •
Գլխուս վերև կը ծածանի
Իրենց կամարը շարժուն,
Ու իրենց երգը վայրենի
Լըսեմ ամէն իրիկուն,
Այս հրաշալի բարձունքէն՝ մարդ
Կընդգրկէ մէկ նայուած քով
Իաչտ մ'ընդարձակ, կանաչազարդ,
Յետոյ հանդարտ կապոյտ ծով՝
Ու կը ցցուին կղզիներուն
Ուռուցիկ լանջն ու կանաչ •
Իսկ թաւիշէ լեռներ հեռուն
Այս պատկերին շրջանակ,
Իաչտին վրայ լայնածաւալ
Գորգի նման բանուած ճոխ,
Կը նշմարեմ անակնկալ
Տեսարաններ միշտ փոփոխ
Երբ արևուն կայծեր վերջին՝
Երկար սիւներ շողշողուն
Ամպոց ծոցէն դուրս կը թռչին,
Կը ծաւալին, կը զեղուն,
Արտը դեղին, կանանչ այգին,
Եղերք ծովուն, լերանց սար
Կը փայտիլին, կը բեկբեկին
Ինչպէս մէյ մէկ զուտ գոհար •

Սարէն ձորէն անդուլ փչեն
Հովերն առողջ ու կայտառ,
Ծառերն ալ միշտ շարժման մէջ են
Նուագներով անըսպառ .
Ու ես հանդէպ այս խորանին
Հոյսերու մէջ ողողուած՝
Հանդէպ այն մեծ տեսարանին
Կը ծնրադրեմ երկիւղած :

Թրբունն Յանգեր

Մ. ԱՃԷՄԼԻԱՆ

ԾՆՈՒՆԻՒ ՏՕՆԸ ՀԱՃԸՆԻ ՄԷՁ

Չեմ գիտեր թէ հոգիս ո՛ր անժանօթ ակերէն կը
բղխին կը յորդին այն զգացումները սրբենի, որ իմ եր-
ջանիկ կարծուած ստուեր կեանքիս յիշատակաց ոսկի
օղակները կը հիւսեն, ու չեմ կրնար մոռնայ զանոնք,
Մանկական յուշքեր ու անուշակ տպաւորութիւններ ալ
կան, որ չեն մոռցուիր ոչ ժամանակի և ոչ ալ տարիքի
փոփոխմամբ . մեր ճերմակ մազերն իսկ չեն կրնար այլա-
փոխել անոնց իսկութիւնն ու անբծութիւնը . մեր սրտե-
րուն էն թաքուն ալքերուն մէջ պահուած ու դրոշմուած
են անոնք, որոնց վերյիշումը երբեմն՝ կարծես ապրիլ
կուտայ քեզ մանկութեանդ այն կեանքը անմեղունակ,
որուն վճիտ վտակը գուցէ դեռ չէր պղտորուած անժա-
նօթ վշտի մը արցունքի կաթիլներովը :

1884 թուականին Սիսէն փոխադրուած էր մեր վար-
ժարանը Հաճընի Ս. Յակոբայ վանքը իբր ամալանոց .
բայց ըսեմ թէ ո՛ւր է Հաճինը, Ճիշդ Սսոյ հիւսիսակողմը
տարածուող լեռնալիքներուն ծոցիկը պահուըտած է ան .
զինքը գտնելու համար մազլցելու չափ վերելքի տա-

ժամքը յանձն առնելու ևս դէպի Քիրազ Տաղիի ցից ու դերբուկ բարձունքը, ու ապա անոր վայրէջքը, օ՛, անագին դարաւանդներ, գլխու պտոյտ ու սրտիդ սուկում ազդող զառիթափներ ցոյց կուտան, բայց ստիպուած ևս իջնել մինչև այն գետափունքը, որ օձապտոյտ դաւարումներով կալի ճիչեր կը հանէ նեղ ու ժեռուտ կիրճերէ անցած պահուն. հարկադրուած ևս քառասուն անգամ անցնիլ իր վրայէն, վասն զի ինքն ալ այդչափ անգամ կը դիմաւորէ քեզ՝ հոգիդ քաղելու աստիճան մառածապատ ու դարձդարձիկ շրջաններով. Հաճընցիք Գըրգ կէչիտ անունով մկրտած են զայն :

Բայց սակայն ճամբադ նոյնը չմնար, տեսարաններու պէսպիսութիւնները, տեղ տեղ հսկայ կաղնիներու անտառները, ու Լիբանանը յիշեցնող բարձրուղէշ մայրիները՝ շուտ մոռցնել կուտան Քիրազ Տաղիի և Գըրգ կէչիտի ելքն ու անցքը : Իսկ իւրաքանչիւր քայլափոխիդ դուրս ցայտող սառնորակ աղբիւրներ՝ կը զովայնեն կը յագեցնեն շրթներուդ պապակն ու սրտիդ փափաքը :

Տասնութը ժամէն արդէն հասած կըլլաս Աիլլի-Քօրին մօտիկը, որ սե ու սե՛պ ժայռ մըն է միակտուր, ուսկից Հաճըն քաղաքը ցոյց կուտայ ինքզինքը եռանկիւնաձև սարահարթի մը վրայ՝ սանդխաձև տուներով, որոնք կարծես իրարու կրթնած են և ոմանք ալ իյնալու աստիճան՝ ցցուն ժայռերու զառիթափներուն կառչած կը մնան :

Ս. Յակոբայ վանքը՝ քաղքին հանդիպակաց լեռան լանջքին վրայ կերևայ պարտէզներով ու այգիներով եզերուած . իսկ լեռան արեւմտեան կատարին վրայ խուճք խուճք մայրի ծառեր հորիզոնը կը շրջագծեն :

Մայիս ամսուն եկած էինք հոս, աշնան կրկին Սիս վերադառնալու, բայց Մկրտիչ կաթողիկոսը մինչև Ծնունդ յետաձգել տուաւ մեր դարձը :

Ծնունդի ճրագայոյցին իրիկունը՝ Հաճընէն ուխտաւորներ եկած էին վանքը . մեզի իբր դասարան և հնչասենեակ յատկացուած խուցերն ալ առին մեր ձեռքէն . չեմ յիշեր թէ ինչպէ՛ս անցուցինք այդ գիշերը, և արդէն ո՛վ կրնար քնանալ ուխտաւորներու հոգեզուարթ եռուզեռումին մէջ, որոնցմէ ոմանց սիրտը հաւատքով և ոմանց ալ գլուխը գինիով տաքցած՝ կ'երգէին Յիսուս մանկան Ծննդեան Աւիտիար . մինչև կէս գիշեր քաղքի փողոցներուն մէջն ալ կը լսուէր «Աւետիս» ճրվացող լաճերուն միօրինակ յանկերգը,՝ հակառակ բքոտ ձիւնին ու կճող ցուրտին :

Հաստարուն բարտի ծառէն կախուած վանքին դանգակը յանկարծ հնչեց, որուն առաջին բամբուլնին հետեւեցան Հաճընի երեք եկեղեցիներու երկաթէ ու տախտակէ կոչնակները, ո՛հ, ինչ ոգևորութիւն հաւատով լցուած ջերմիկ սրտերու և հոգիներու մէջ լեռներ կ'արձագանգեն խորհրդաւոր ձայնով մը՝ շեշտելով հոյն գիշերուան խորհուրդին մեծութիւնը անձառելի :

Պատարագիչ եպիսկոպոսը՝ վանքին պատկառելի ծերունազարդ վանահայրն էր, Պետրոս եպիսկոպոս Մելքոնեան : Քաղքին էն անուշ ձեն ունեցող ձայնաւորները հոն վազեր եկեր էին . եկեղեցին լիքն էր ուխտաւորներով, ուր հարսներն ու աղջնակներն ալ իրենց մամիկներուն հետ կ'երևնային դաւթին մէջ իրարու վրայ թըխմուած, ցուցադրելով միանդամայն իրենց տեղական գունազեղ տարազներու այլազանութիւնները :

Պատարագի արդէն սկսուած՝ թափօրի շարքը կը կաղմուէր . բայց անդին ուրիշ ուշադրաւ տեսարան մը կը պարզուի . պատարագիչ Սրբազանին առջեւէն կը շարուին զոյգ զոյգ տասերկու հովիւներ՝ շապիկներ հագած ու իրենց հովուական սրինգներ ձեռքերնին հրեշտակային

եղանակով մը կը սկսին երգել «Սորհուրդ մեծ և սքանչելի» երգը, դուրսը վանքին բակին մէջ բերուած ոչխարներն ալ իրենց անուշ մայանքը կը խառնէին սրինգներու սրտայոյզ ու հոգեզմայլ ձայնին. իր գեղջկական պարզութեան մէջ՝ վսեմ ու հիանալի էր այս տեսարանը. եպիսկոպոսը կուլար իր հոգևոր ուրախութեան յուզումէն, իսկ ինծի այնպէս կը թուէր թէ ճիշդ Յիսուս մանկան ծնած քարայրին մօտիկն էի, ուր հովիւներու հետ՝ երկնային անտես հոգիները մեծ խորհուրդը կ'երգէին Աստուածորդւոյն ծննդեան :

Ու ամէն տարի, երբ Ս. Ծննդեան տօնը կը տօնուի, յանկարծ աչքիս ու մտքիս առջև կուգան կը պատկերանան՝ Հաճընի Ս. Յակոբայ վանքը, ծերունի վանահայրը, ու հոգիիս խորքն ալ դեռ կարծես կ'արձանագրուի՝ «Սորհուրդ մեծ»ը երգող գեղջուկ հովիւներու սրինգներուն մելամուշ ձայնը՝ իրենց ոչխարներուն անուշակ մայանքին հետ :

Մասիս

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ.



Ի Ն Չ Ո՞ Խ

«Ինչո՞ւ կը գրեա») հարց կուտան ինձի .
 Ու ես զարմացած կը նայիմ իրենց :
 Ինչո՞ւ կը գոռայ թափուքն առիւծի
 Ալեկոծ ծովը խոժոռ ժայռին մերձ .
 Կամ հեղամբուենջ վտակը ինչո՞ւ
 Իր թարմ կարկաչը կ'ոյրրէ անուշ .
 Երբ անփոյթ , կայտառ ու ղուարթաչու
 Առաջ կը գայթի նաղանքով քնքուշ .
 Ո՞վ կը հարցընէ կռուն ջրվէժին ,
 Թէ ինչո՞ւ անդուլ կը հանէ շառայ ,
 Մինչ սեպ բարձունքէն անդունդ կը խուժին
 Փրփուր կոհակներ յորդ ու կաթնալանջ .
 Իսկ դո՞ւն . քու վրադ հարցեր թափեցի՞ն ,
 Երբ ուժգին թափը խինդ ու կրակիծի
 Երգի մը փարած սրտէդ դուրս յորդեց :
 Բայց կը հարցընեն այդ ինչուն ինձի .
 Ու ես զարմացած կը նայիմ իրենց :

Երգեր

Լ. ՍԵՂԱՌՍԵԱՆ

Լեւոն Սեղբասեան (Շանթ). Բանաստեղծ ու վիպասան, գրական նոր սերունդէն շատ յարգո ամ գրիչ մը որ հնարատ ու գողարիկ քերթուածներովը մեծ համբաւ կը վայելէ:

Հրատարակած է Երգեր և Լեւոն Աղջիկը երկու հատորիկ՝ եր, որոնք կը պարունակեն իր տաղերն ու քերթուածները . ունի նաև Դերասանուհի անունով ընդարձակ վէպ մը Մասիսի էջերով լոյս տեսած:

Ծ Ն Ն Գ Ե Ա Ն Ա Ռ Ք Ի Ի

«Ո՞ւր է ու ծնաւ . . .»

Աւետարանի մոգերը արեւելքի երկար ճամբորդութենէ մը յոգնած՝ անհատուժ ասպարէզներու փոշիներով թաթաղուն՝ հազիւ Հրէաստանի հողերուն վրայ կը դնեն իրենց ոտքերը, և ահա՛ կը կորսնցնեն երկնային անձանօթ լոյսին երեսը՝ որ առաջնորդ մը եղած էր հեռաւոր սահմաններէ բերելով զիրենք դէպ ի ուրիշ անձանօթ մը՝ զոր կը փնտռէին : «Ո՞ւր է . . .» կը հարցնեն հիմա իրենց հանդիպողներուն . «Սաւարի մէջ նստող ժողովուրդի մը» գիշերուան ճրագներուն կ'ուզուէր այդ սրտառուչ հարցը :

Հոյսին վայրկենական անհետացումէն շուարած՝ պահ մը մոգերը պէտք կը զգան անո՛նց օգնութեանը՝ որոնք հաւատք մը ունենալ կը կարծէին Գիրքերու գիտութեան քանալին իրենց ափին մէջ շփելով . «Գրուած է, կ'ըսէին, Մարգարէին ձեռքով . Բեթղեհեմի մէջ պիտի ծնի» : Սակայն դրքին ճշմարտութեանը վկայելու եւանդով՝ ո՛չ մէկ քահանայապետ կամ դպիր չչարժեցաւ իր անդէն՝ երթալ տեսնելու համար «Իսրայէլի ժողովուրդը հովուելու սահմանուած մանուկը .» ու մոգերն էին դարձեալ որ իրենց ճամբան շարունակեցին՝ վերստին հանդիպելով իրենց լոյսին : Ահ, որչափ աւելի կենդանի է ճառագայթի մը շինած հաւատքը քան մաղաղամի մը շինածը . առաջինն իր առկայծումին մէջ անգամ չմարիր, ու կրնայ Գրքին շնորհիւ նորէն դառնալ իր ուրախարար լոյսին . երկրորդն իր ամբարհաւած գիտութեամբը դալկացած՝ մութ վարանումներու մէջ կը թաղուի :

Թո՛ղ մտնեն ուրեմն երջանիկները՝ իրենց երկրպագութիւնը մատուցանելու, իրենց գանձերը քանալու . ու

անոնք որ ապաժաման հետեւողներն են նոյն ճամբուն՝
ու չունին իրենց գլխուն վերև նշուլող լոյսի մը տեւական
առաջնորդութիւնը՝ ստիպուած են հարցնելու «Մըր է նա» :

«Հո՛ւ է» պիտի պատասխանէ մեզի եկեղեցիին պաշ-
տօնեան՝ որ Գիրքերը կարգացած ըլլալու մեծ վստահու-
թիւնն ունի . ու ցոյց պիտի տայ մեզի՝ լռութենէն ու
մութէն անդին՝ տեղ մը , երկնքի նմանութեամբ գեղա-
զարդուած կամարի մը տակ , ուր լոյսեր կը պսպրան ու
նուագնելի կը հնչեն . — Չէ՞ք տեսներ . այս ջահերը չե՞ն
յիշեցներ ձեզի մոգերուն առաջնորդող լոյսը . չէ՞ք լսեր ,
հրեշտակային ձայներ կը թրթուան «բարձունքի վառքը»
գեղգեղելու համար . չէ՞ք զգար անուշակ հոտը այրող
կնդրուկներուն : — Միթէ ասոնք բաւական են մօտ տա-
նելու զմեզ Յիսուսին , պիտի մրմնջէին հաւատքի խորու-
թեանը մէջ յառող հոգիները . եթէ մեր ծխացող լոյսերուն
մէջ դիւրին ըլլար գտնել զինքը՝ ալ ինչո՞ւ նայէինք
երկնքի լոյսերուն . եթէ մեր կերկերացող ձայներուն մէջ
դիւրին ըլլար լսել զինքը՝ ալ ինչո՞ւ ականջ դնէինք
խղճին լռութիւնը ներդաշնակող զմայլումներուն . ու
եթէ մեր կնդրուկներով դիւրին ըլլար խնկել զինքը՝ ալ
ինչո՞ւ ցանկայինք երկնաւոր բուրումներու : «Մըր է
նա» : — Բայց ահաւասիկ , հո՛ւ , ձեր աչքին առջև կը
պատկերանայ մտերն ու խանձարուրը . չէ՞ք նշմարեր
անոր մէջ հանդչող հրաշալի Մանո՛ւկը , Կոյս Մա՛յրը . . .

Գիրքերը ու զրքին մարդը մինչև հոս կրնան տանիլ
զմեզ . . . աւելի՛ հեռուն . երթալու և այս տեսարանէն
անդին վայլատակող ճշմարտութիւնը ողջունելու համար՝
պէ՛տք ունինք Հաւատքի՛ն Մոգերէն ժառանգուած այն
լոյսին որ գիտէ թէ ո՛ւր վերջապէս պիտի արձակէ իր
մաքուր ճաճանչը :

Դիւրին է մտածել թէ ո՛րքան մեծ եղաւ պատրանքը

Մոգերուն՝ երբ կանգ առին աղտեղի իջեւանէ մը աւելի անշուք յարկի մը առջև, անշուշտ իրենց երեւակայածէն շատ տարբեր իրողութեան մը դիմաց գտնուելով: Իրենք աղնուականներ էին, ու կը մանէին տեղ մը՝ ուր ոչ մէկ նշան կար պերճանքի. անպատասպար ու ազքատ ընտանիքի մը մօտն էին և ո՛չ թէ «փափուկ հանդերձներ հազնողներու» շրջանակին մէջ: Բայց ի՛նչ փոյթ. հո՛ն կը տանէր յոյսը գիրենք. հա՛րկ էր ուրեմն երկրպագել այդ անլոյս յատակին վրայ. ու միթէ այս չէ՞ ճշմարիտ երկրպագութիւնը՝ երբ հողին վերէն շողացող լոյսին ու վարք սողացող մութին մէջտեղ կը շարժադրէ իր պաշտունքի խորհրդաւոր վայրկեանը: Մոգերու այդ պաշտումին մէջ էմմանուելի մերկութիւնը ամէնէն վեհաշուք ծածկոյթն ունէր իր վրայ, սրբութեան մերկութիւնն էր այն. մասշլ այն խորշը՝ որուն մէջ կը հանգչէր նա՛ խաւարին երկունքը շունէր, վասնզի մեծ խորհուրդին խորշն էր այն. ու կարկատուն այն խանձարուրը՝ որուն պլլուած էին իր անդամները՝ օրրանն էր նոր մարդկութեան մը որ պիտի վերածնէր: — Իսկ ի՛նչ պիտի խորհէր արդեօք Մարգարէներու **Յաւատարիմ** թարգման հանդիպացող դպիրը՝ եթէ իր Գիրքերուն հետ հոն եկած ըլլար այդ ամէնը դիտելու: Ապահովաբար պիտի զննէր նախ Մահուկ Յիսուսին երկու ուսերը՝ տեսնելու համար թէ կա՞ր անոնց վրայ երկնային իշխանութեան մը կնիքը, պիտի շօշափէր անոր աղածրի բաղուկները՝ Եսայիի նկարագրած դօրութեան բաղուկին հետ համեմատելու համար զանոնք, ու յետոյ ծաղրանքով մը պիտի մրթմրթար «Հզօ՛ր մահուկ, հա՛յր հանդերձելով աշխարհին»: Իրեն համար Յեսսէի արմատէն բողբոջած այդ սոժոյն ծաղիկը չէր կրնար զարդն ըլլալ Դաւիթի բնակարանին: — Մէկդի՛, հնար չէ՛, քեզի՛ միայն Գիրքովդ իմանալ՝ թէ Աստուծոյ

հողին օժած է զանի, իմաստութեան և զօրութեան հողին, հանճարի և գիտութեան հողին (Եսայի . ԺԱ . 4) : Ո՛չ մէկը՝ որ կը մօտենայ Յիսուսին և չունի իր Հաւատքին պայծառութեանը մէջ փայլող լոյս մը, պիտի չկրնայ հասկնալ «այն մեծ և սքանչելի խորհուրդը որ յայսմ աւուր յայսնեցաւ» : Եւ եթէ նոյն այն լոյսը՝ իր բացխրփիկ խաղերուն քմայքովը՝ այս անդամ ալ ցոյց տայ քեզի մուտքը ո՛չ թէ ջահաւորեալ տաճարի մը՝ այլ խարխուլ տնակի մը՝ որ դեռնի չափ ցած ըլլայ, ուր ճրագը մարած ըլլայ, ուր մանուկը մայր չունենայ, պիտի չխռովիս երբեք, վասն զի պիտի զգաս թէ ճշմարիտ երկրպագութեան մտերէն հեռու չես, թէ մօտն ես ընծաներու վեհ մատուցարանին, բարձրեայն Աստուծոյ փառքին ու ինկած մարդուն հաճութեան գրկախառնումին մէջ, ու ալ պիտի չհարցնես թէ «Ո՞ւր է նա» :

Մասիս

ԵՂ. ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

Խ Ե Ղ Ճ Ջ Կ Ն Ո Ր Ս Ը

Հանդարտ ու միապաղաղ ծով մը, տժգոյն, թափանցիկ գորշութեամբ մը, միաթոյր, և անծալ, մինչև հորիզոնը երկարելով, ցոլայնելով լոյս մը սր սառած արեւէ մը կը թուի գալ : Հեռուն, սղախիկ մութ հողի լեզու մը կ'երկնայ . աւելի անդին, երկայն մութի դոյն ցամաքի դիմ մը հորիզոնին վրայ կը պառկի : Ատղին, անկանոն եզրերով ափունք մը իր զանգուածը կ'երկնցնէ հողին վրայ, զայն կը կտրատէ իր բեկբեկ գծովը : Բարակ ցօղուններու վրայ մանր փափուկ ծաղիկներ, դեղին ու ճերմակ, առատ ու սիրուն խուրձերով բուսած հողէն, անոր մերկութիւնը երազի ուրախութեամբ մը կը հագ-

ոււնցրնեն : Պարմանուհի մը , ծուռնկի եկած , բուռ բուռ ծաղիկ կը ժողվէ գեանէն : Ծաղիկներուն մէջ պառկած , վարդ երախայ մը , կիսամերկ , կը քնանայ , բուսական մտի անդիտակից ընկաղմանուամով մը ուր քունին ու մանկութեան կրկին միամտութիւնները կան :

Սալունքին առջև , ցիցի մը կապուած , մակոյկ մը կը կենայ , պարզ ու մերկ մակոյկ մը , շեղակի երկնցնելով օդին մէջ իր միակ մեծ կայմը , որուն ծայրէն կը կախուի՝ չուանով մը՝ քառաձանկ կեռը որ ուռկանը ծովին մէջ կը բռնէ : Ու նկարը լեցնող լոյսին տակ որ ցուրտ է բայց ջինջ՝ մակոյկին սառերը ծովին մէջ յատակ կը նկարուի : Մակոյկին մէջտեղը , խեղճուկ ու նախնական զգեստներով՝ ինչպէս կ'երևակայենք Աւետարանին ձկնորաները , կեցած է խեղճ ձկնորսը : Կանակը ախունքին ու ծաղիկներուն դարձուցած է , և իր նայուածքը , պիշ , կը յառի ուռկանին որ ծովին մէջ կորսուած է : Թանձր ու բրդոտ մազերու տակ , ծխւած դէմք մըն է , փսսացած ու արժգոյն այտնով , աչքերը կիսափակ ու վայրահակ , լռիկ վհաատութեամբ մը ներկուած : Բայց մօրուքը որ դէմքը կը շրջանակէ՝ ճգնաւորի խիտ ու մաքուր արտայայտութիւն մը կուտայ անոր , և զլխուն հակուճը , դիմազճերուն հանդարտ ու արտում ամփոփումը , և իր կեցուածքին սրտաշարժ խոնարհութիւնը աղօթքի ձև մը կուտան իրեն : Ու անշարժ , թեւերը կուրծքին վրայ ծալլած , աչքը ուռկանին վրայ , ձկնորսը կը սպասէ :

Իրերն ու անձերը՝ իրականութենէն ունին այնչափ բան սրչափ պէտք է որպէս զի ցուրտ այլարանութիւն մը շղատնան : Այդ ախունքը բոլոր թարմութիւնն ունի ճշմարիտ ախունքի մը , և այդ մարդկային դէմքերը կեանք ունին : Բայց հոս բանաստեղծին մատը այնպէս շեշտած է իր գծերուն ու գոյներուն մէջ՝ դաղափարը

զոր կ'ուզէ ներկայայնել, որ սահմանափակ ու հասարակ կեանքի պատկեր մը ըլլալու տեղ, կեանքի պատկերացում մը կ'ըլլայ, իմաստասիրութեամբ ստորագծուած և բանաստեղծութեամբ լուսաւորուած: Անձերը էակներ են որոնք կ'ապրին, բայց այն ընդհանուր դժերուն մէջ ցուցուած, այն հեռաւորութենէն տեսնուած՝ ուր տիպարներ կը դառնան. ուր տեղը, բնութեան պատառ մը մնալով հանդերձ, բարոյական ընդարձակութիւն մը կը ստանայ:

Եւ յուզուած, խոհուն, կը հայինք այդ մտածման ու գեղարուեստի վսեմ էջին, ուր աղքատիկ դատարկ մակոյկին մէջ մեզի մարդը կ'երևայ՝ իր յոյսին ամփոփումին և տրամութեան մէջ, ծովերուն պարապին վրայ կենալով ակնդէտ, մինչդեռ իր ետին, երանութեան ափունքին վրայ, երազին ծաղիկներուն մէջ. Սէրը փունջ կը կապէ և Անմեղութիւնը կը հիրհէ:

Ծաղիկ, հանդէս

Ա. ԶՕՊԱՆՆԻԱՆ



Խեղճ Զկնորսը, զոր այնքան գեղեցկագիտօրէն նկարագրած է յարգելի բանաստեղծը, Բիւվիս տը Շավանի՝ Ֆրանսայի մեծ պատկերահանին մէկ հրաշալի նկարն է, Փարիզի Գեղարուեստից սրահին մէջ ի տես դրուած 1895ին:

Մ Ա Ն Ի Շ Ա Կ Ի Փ Ո Ի Ն Ձ

Ամէն տարի, ապրիլի մէջ, շատ անգամ,
Առանձնակի, երազներով տողորուն,
Բարեկելով դալար, ծաղիկ ու Գարուն,
Ես մեղկօրէն, քայլամուտք ման կուգամ:

Ու թաւուտքի մը շուքին տակ մըթընչաղ՝
Մանիշակի կը կապեմ փունջ մը գողտրիկ,
Որուն կապոյտ աչքերուն մէջ մինինիկ՝
Կը պրկարլան արշալոյսի շողն ու շաղ:

Մանիշակին՝ ցընցող ու նուրբ է հոգին •
Ամէն տարի՝ երբ հովերուն հետ գարնան •
Ծիծեռնակն ու թիթիռնիկը կը դառնան,
Անոր բոյրը ես կը փնտռեմ կաթողին:

Ու թէ մի օր տարարդնի փունջն իսկ, աւա դ,
Բոյրէն՝ հողւոյս մէջ կը մընայ բան մը դեռ,
— Գուցէ անոր վերջին հիւլէն կիսամու,
Առջի սիրոյս յիշատակին պէս չըքնաղ:

Մասիս

ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

Արտագէտ Յարութիւնեան (կարօ). Հրապարակագիր, քննադատ ու բանաստեղծ . ժամանակակից տաղանդաւոր գրագէտը մեր այն սակաւամիւ գրողներէն է որ օրուան հայ գրական կեանքը կը բեղմնաւորեն իրենց հմայիչ գրուածներովը :

Իբր հրապարակագիր, առաջին կարգի արձակագիր հեղինակ մ'է որ մշակուած ու հայացի աշխարհաբարով մը կ'ուսուննասիրէ օրուան գրական ամէն հարցերը այնքան ձեռնհասօրէն:

Իբր քննադատ, բոլորովին առանձին կը մնայ, այս ճիւղին մէջ, իր շատ կորովի գրախօսականներովը որոնք միշտ ամենամեծ կշիւ ունին:

Իբր բանաստեղծ, զգայուն շեշտերով գրած է բազմամիւ քերթուածներ որ լոյս տեսած են Լեւուծ քնար և Երկունք անուն հատորներով:

Ի Ք Ո Ւ Մ Ի Ն Գ Ի Շ Ե Ր Ը

Քաղաքը կը հեծէր ձիւնին տակ, որուն բաժիւնները բարակ կը մաշուէին՝ երկինքէն՝ անցորդներուն զլխուն. Առաջնորդարանի դուռնէն մինչև Մայր Եկեղեցիին որմը բռնած էին երկու շարք մուրացիկներու՝ ցնցոտիներով ու դողդոջուն, որոնք ազաչանքի հեծկլտանքով ձեռք կ'երկնցնէին անդադրում, առանց յուսահատելու իրենց ասիւրուն սլարապ ամիտիումէն: Յիսուսի Մուռնդին տարևոր նախատօնը նոր կռուզեռ մը ձգած էր ժողովուրդին մէջ, որ սօնական ցուցանքի պճնոտ զգեստաւորումով եկեղեցի կը վազէր, տեղ մը գրաւելու համար հոն: Խթումի իրիկուան դրակարգաց մանուկները, իրենց պլորած գրքերն հաղուաղիւտ մազաղաթի զլաններու պէս խղճմտօրէն անուխած, հրճուանքի բնազդական զեզումով տարիքոտ մարդերու լրջութիւնը քաշած իրենց երեսին՝ իրենց մայրերու քղանցքին կը կառչէին, չի կօխկուտուելու կանխամտածումով: Այդ շարժուն դուռնազեղութիւնը, որ Խթումի իրիկուան ոգևորութիւնը կը յատկանշէր, եւ որուն մէջ հետաքրքիր սրտերը դօտւերած էին հաւատաւորի թախով, նոր երևոյթ մըն էր ինծի համար, ինչպէս եւ իրենց համար նոր էի:

Տարեկան այն օրերուն, ուր կեանքի հատուածակողմը ծիածանին գեղեցկութիւնովը չ'արիաւետիր, նոր հանդիպումներն ամէնէն բարեբաաստիկ գուշակութիւնները կը սեպուին:

Տօնական այդ իրիկունը՝ նորէն կը զարդարուէր Բէթղէհէմի ու Նազարէթի խրնկաւետող նարրնջածաղիկներով: Ուրախութիւնը ժպիտի վարդեր կ'ուրուազէր ամէնուն դէմքին վրայ, բացի անոնցմէ, որոնք յաւիտենապէս ինքզինքնին դատապարտուած կը զգան վշտի

մշուշներուն : Ձիւնադնդակ խաղցող մանուկ—մարդերն անդամ, որոնք բան մը զգալու անտրամադիր մարմին մը ունին, ու տօնական օրերու գալուստը կը սիրեն, միմիայն կերուխումի հանդիսաւոր հուիրագործում մը տեսնելով անոնց մէջ, կը մղուէին այդ կրօնաւորական հոսանքէն, փողոցային խժտութի տարտամութենէն իրենք ալ հարկադրուած անդրադառնալու ժողովրդական այդ ծածանումի պատճառին :

Ձիւնը՝ անցորդներու ոտքին տակ, սկսած էր սպիանալ մութ ու դորշ պիսակներով :

*
* *

Մութ փողոցները՝ ա՛լ ամաչացած անցորդներէն՝ կը պատրային ձիւնի սաւած բլերեղներով : Ժողովուրդը արտօրնոք տուն մտած էր Ութումի սեղանը վայելելու համար : Պատուհանները՝ իրենց իւղոտած թուղթերէն դուրս հեղեղներու պէս լոյս կուտային : Նոյն իսկ մուրացիկները կրցած էին միսիթարութեան բարիքը տանիլ իրենց հետ, վաղուան սղորմութիւնները հաւաքելու ճակատագրական պատրաստակամութիւնով :

Տեսի մը միայն՝ պարտէղներու մէկ անկիւնը հետուած՝ չէր կրցած վայելել Ութումի օրհնութիւնը : Իր բնակիչները—կին մը, կոյր հայր մը, և աղեկ մը—դիպուածօվ մուցուած էին նոյն իրիկունը : Ութումի գիշերը մանաւանդ զգային անոնք՝ աղքատիկ կեանքի մը ներշնչած բոլոր դաւնութիւններէն վերջ՝ իրենց այտերուն վրայ տաք տաք արցունքներու սառիլը : Նուազումի և լքումի այդ վայրկեաններուն, կնոջ բեկբեկ ձայնը հագիւ թէ կրնար յուսադրել աղեկը, որ երբեմն կը սարսուար հքթումի իր վրայ թողած դալկութենէն :

Եթէ երբեք գիշերուան ցուրտին՝ մէկը յանդգնութիւն ունեցած ըլլար այդ մուցուած անակին շուրջը թա-

փառելու, պիտի տեսնէր բարեսիրտ, մատաղաբաշխ մարդ մը, հեռաւոր դրացին այդ մոռցուած հիւղակին, որ Բեթղէհէմի լեցուն զուարթութենէն մեկուսացած, Մսուրին անշուք տեսքն ունէր, որ դուրս կ'ելլէր իր տունէն՝ իր մեռելներուն յիշատակովը նախադրաւուած՝ մատաղի ծրարը բռնած ձեռքին միջ: Մատաղաբաշխը տնակը գնաց ուղղակի, առանց մեծ ճիգի հրեց անոր դռնակը, որ փականք չ'ունէր արդէն, մէկ կողմ դրաւ իր պատրաստած ծրարը, նշմարուիլ չուզողի մը զգուշութիւնով, ու հապճեպով մեկնեցաւ անկէ:

Կինը տեսաւ իր դուռնէն ստուերի մը մուտքը, և անօթի տլան՝ առանց յանկարծական շարժումի՝ ընազդի թելադրութիւնով դէպի դուռը նայեցաւ անգամ մը: Կինը՝ ուռած աչքերով քակեց ծրարը, և տղեկը՝ ուրախութենէն այլայլած, հիմա հազիւ թէ կը մտածէր քիչ մը առաջ դրան բացուածքին, մութին մէջ իր տեսած շարժուն ստուերին, և ա՛յն ձեռքին վրայ, որ անունդի այդ ճոխ ծրարը կը բերէր իրենց: Աչազուրկ հայրը, իր աղուն հարցումներուն պատասխանած ըլլալու համար ըսաւ անոր.

«Տղա՛ս, Յիսուս ծնաւ մսուրին մէջ. հրեշտակները աւետիս տուին դաշտի հովիւներուն, որոնք դէպի մսուրը վազեցին Յիսուսը տեսնելու, և իրենց հետ ոչխարներ իբր ընծայ տարին անոր: Յիսուս այդ ոչխարները մատաղ ընել տալով զրկեց մեզի պէս աղքատներուն, որպէսզի մենք ալ ուրախանանք իր Ծնունդին օրը:»

— Հա՛յրիկ, ամէն օր պիտի զրկէ՞ .

— Չէ՛, տղաս, ի՛ր ծնած օրը միայն:

*
* *

Ու Ծնունդի առտուն, երբ պզտիկը կուգար մուրալու՝ ժամուն դուռը, իրեն պէս մուրացիկներու կը

պատմէր դաշտի հովիւներուն հուէրը , և մանկական հե-
տաքրքրութիւնով կը հարցնէր անոնց .

— Այս գիշեր ձեզի ալ միս ու հաց ղրկե՞ց Յիսուս :

Իր բախտակից ընկերները չէին կրնար բան մը հաս-
կնալ այս հարցումէն , որուն մէջ խորունկ վշտի մը ան-
թեղումը խառնուած կար թունդ ուրախութեան , մանուկ-
ներու անամոյ ու պարզ հաւատքէն բղխած :

Մասիս

ՄՈՒՇԵՂ ԵՊ. ՍԵՐՈՒՅԱՆ

Գ Ն Ա Յ Ք Ը

Գնացքը շեշտ , անողուլ ճեպով
Սլացիկ ,

Երբ անձնատուր իր զոյգ գծին
Օձաձիգ ,

Կը դաշտի ճամբուս վրայ
Աչքիս դէմ ,

Ես կանգ առած , մութին մէջէն
Կը դիտեմ

Աչքե՛րն անթարթ , որ շեշտ հեռուն
Է գամեր

Ճապուկ մարմնին տենդոտ դողը
Անհամբեր

Ու խոնջ կրծքէն ժայթքող իր հեւքը
Վայրի .

Որ հասնելու անհաս տենչովը
Կ'այրի :

Երգեր

Լ. ՍԵՂՈՍԵԱՆ

Ս Ե Ի Ա Ն Ա Յ Լ Ի Ճ Ը

Սեանայ լիճը փուլած է առջևս : Աշնան երեկոյ է • մութը հոր է ընկել : Արեմտեան կողմը , հարիզոնի մօտ՝ երկնքի վրայ դեռ ևս երեւում են վերջալոյսի թոյլ , կարմրադոյն հետքերը : Շուրջս մռայլ է և անշարժ . Լիճը , ծովի կերպարանքով՝ փնջում է : Մութ-կապոյտ երկինքը , որի խակահան դոյնը կարելի չէ արտայայտել բառերով , ճշտութեամբ անդրադարձել է ջրի մէջ : Ծովակը այս րոպէին ներկայացնում է մի ահագին անձեռագործ հայելի , որի մէջ երկինքն իր միջանի հասիկ խոշոր աստղերով և մերկ , բուսարանութիւնից զուրկ բլուրներն ու ապառաժները տեսնում են իրանց դէմքերը : Կղզին , հայ հողերականութեան այս հինուտուրց ճգնառեղին իր խորհրդաւոր կերպարանքով դուրս է գլուխ ծովակի միջից և պառկել ջրի մակերեսի վրայ՝ իր ուսերի վրայ պահելով հսկայական հին ճարտարապետութեան յիշատակները : Երկրից անջատուած . բայց շրջապատուած մռայլ հսկան , մեծ ապաւորութիւն է գործում մարդու վրայ : Յամաքաբերդ հայ դիւղը իր գեանափոր տնակներով և եղիպտական բրգաձև աթաղների կոյտերով՝ բաղմած է ծովակի ափին և դիտում է կղզին : Ամէն տեղ ափում է անդորրութիւն . միայն երբեմն լսում է դիւղի կողմից պառաւ շան անախորժ հաչոցը և երբեմն էլ հասնում է ականջիս ամենախուլ կերպով զանգուլակների աններդաշնակ բութ ձայնը . երևի ուղտի կարաւան է դալիս :

Կանգնած եմ ծովափնեայ բարձրաւանդակի վրայ և անհամբերութեամբ սպասում եմ լուսնի ծաղկունն : Այո՛ . լուսնի ծաղկունն . բնութեան հրաշալիքներու մէջ իմ ամենաախրելի վարկեանիս , որ շատ անգամ է փարատել սրտիս թախիճը : Լիճը , երեք կողմից շրջապատուած քա-

բաժնեքով, պատուել է չորրորդ կողմը և փուլել աչքով
անհասանելի տարածութեան վրայ, ուր աղօտ կերպով
հշմարուում են լեռների փեշերը, որոնց շարունակութիւնը
կորչում է ջրի, երկնքի և երեկոյեան մշուշի մէջ . . .

Վերջապոյսի հետքը այլևս չըկայ: Երկինքն ու երկիրը
աստիճանաբար խաւարում են, իսկ աստղերը բազմանում
ու պայծառանում: Նրանցից շատերը ժպտում են, շարժ-
ւում և ֆոսֆօրի փայլ են արձակում իրանց միջից, իսկ
միւսները անշարժ համբարութեամբ նայում են դէպի ցած,
մեղքերով լի երկրի վրայ: Զանգուլակների միահնչիւն,
մելամաղձոս ձայնը փոքր առ փոքր մօտենում է. լսւում
է նոյնպէս ուղտապանի երգի ազդու ձայնը, արևելեան
զգայուն եղանակը: Գիւղի անակների մէջ, մէկը միւսի
հակեից յայտնւում են գիւղական անպաճօյճ ճրագները և
պարզ սրտելով փոքրիկ պատուհանների ձևերը, հազիւ
ճառագայթում են դուրս: Ահա՛ կղզու վրայ երևաց մի
ճրագ. նա տառանում է, հանդչում, նորից վառւում,
պայծառանում, նուազում է և վերջապէս բոլորովին ան-
յայտանում:

Տախարակ դադաթով բլուրի կտելը՝ երկինքը փոքր
ինչ շառագունւում է:

«Վերջապէս մօտեցնել է լուսնի ծագումը», ուրա-
խալի միտքն է անցնում գլխովս: Ամպի մի քանի կտորներ
ներկւում են կարմրախառն մութ-դեղին գոյներով, որոնք
անխափախ արտայայտւում են անշարժ ջրի մէջ: Երկիրն էլ,
որի երեսը շարունակ ծածկուած է սև քօղով, ինձ նման
սպասում է լուսնին, իր գիշերային պահապանին:

Շարունակ նայում եմ երկնքի շառագունւած մասին,
որ փոքր առ փոքր ընդարձակւում է երկնակամարի վը-
րայ և ամօթխած լուսնի մերձենալն է գուշակում աչ-
խարհին: Բլուրներից մինը այս միջոցին հրաբուլի է

Թըւում է ինձ . գագաթի վրայ կրակ է նշմարւում . նա-
մեծանում է , աճում , բարձրանում և իր հրաշէկ , բայց
համեստ դէմքն ամբողջապէս դարձնում է դէպի երկիր և
գիշերային ողջոյն ուղարկում : Նայում է իր շուրջը և
ամէն տեղ աղօս լոյս է սփռում , նայում է դէպի ցած
և իր պատկերն է տեսնում : Շարունակում է բարձրանալ ,
սակայն նկատելով որ աշխարհիս շնչաւոր թէ անշունչ
բոլոր էակները իր կողմն են ուղղել իրանց հայեացքը ,
մօտենում է երկնային քօղին և դեռահաս պարկեշտ կոյսի
նման ծածկւում նրա տակ մի բոպէ . բայց , դրդւած հե-
տաքրքրութիւնից , երբեմն-երբեմն բարձրայնում է իր
բոլորակ դէմքից քօղի մի անկիւնը , նայում է ցած ,
դարձեալ տեսնում անձուագործ հայելու մէջ իր երեսը
և արագութեամբ նորից մտնում քօղի տակ : Այս միջոցին
միտս է ընկնում վշտահար բանաստեղծի խօսքերը .

Թաքնուի՛ր , ո՛վ լուսին , մի՛տն սիրահար ,

Դէմքդ սև քօղով թո՛ղ ծածկեն ամպեր .

Մի՛ լուսաւորիր դու այսքան պայծառ

Այս դաշտն ու հովիտ , այս խորունկ ձորեր .

Մն , աչքէս հեռի . . .

Հայ Գրողներ

Գ. ԲԱՇԻՆՂԱՆԵԱՆ

Գեորգ Բաշինջաւնեան. Նկարիչ ու գրագէտ , շատ յայտնի
համբաւ ունի Ռուսահայոց մէջ իբր պատկերահան իր գիւղանկարներովը
որոնց մէջ նշանաւոր են Աւնան մէջ անտառ , Արարատ լեռը և
Սեւանայ լիճը :

Գրիչն ալ վրձինին չափ վարպետ է նկարագրելու համար բնութեան
տեսարանները՝ այնքան կենդանի ու յանկուցիչ երանգներով :

Ջ Ա Ր Ն Ո Ւ Ա Ծ Ո Ր Ս Ո Ր Գ Ը

(Լ Է Ք Ե Ա Յ)

Ա.

Անկոփ ուղիներէ, օձի ճամբաներէ՝ քարերուն վրայէն Այծեամ մը կը փախչի. անցած տեղերէն կարմիր արիւն կաթկթած է ու քարերը դեռ թաց են. կը վազէ՝ կը հեռանայ, կոտոշները քարեր կը գլտորեն դարվար : Ապառաժներուն վրայէն ցատքելով, կաքաւի ձագերը թռցունելով իրենց բոյնէն ու լեռներէն թաւալող ջուրերը պղտորելով՝ կը սլանայ Այծեամը, կը փախչի. սիրտը ուժգին խռոված է, վախը խիստ ըլլալու է :

Հեռո՛ւն, մարդ մը կ'երևի, կապարճը ուսին, աղեղը լարած՝ նետը կը քաշէ : Վարէ՛ն. այդքան վարէն նետն իր նշանին չի կրնար հասնիլ. լեռները ապառաժներ են ու ճամբայ մը չերևիր որ դադաթը տանի. այդ տեղերէն մինակ մողէպները կը վազեն ու Որսորդը օձի սաք ունեւնալու է :

Դիմացի սև, մթնշաղ լեռներուն, Մաստառի վրայէն Այծեամ մը կը վազէ ու Որսորդն ալ ետեւէն :

Բ.

Լեռներուն մէջ ուր փշոտ կաղնիներ ու վայրի թուփեր կը բուսնին, ուր հազարաւոր օտար ծաղիկներ իրենց գեղեցկութիւնը կը բանան ու կը գոցեն, լեռներուն մէջ մինակ վայրի անանուխներ չեն ծաղկիր, ո՛չ ալ ցանցիր, դաճած մայրաւներն են որ հողին կը կպին, մինակ առուի մը գլգլուքը չէ որ այդ տեղերուն լռութիւնը կը խանգարէ. ամայի, խորունկ ձորերուն մէջ, զով անձաւներուն ներսը, Այծեամները ձագեր կը բերեն, թարմ դալարիներու, ցցուած փաղաթներու վրայ՝ Այծեամն իր ձագերը կ'արածէ :

Ու այժեամբ լեռներուն զաւակն է, այդ հսկայ քարերը թխած են զինք ու անոնց վրայ բուսած մամուռները կերակրած են անիկա, Մաստաւը զանոնք ծնած է, անէ՛ծք Այժեամբն զնտակ նետողին զլխին :

Գ.

Փախաւ Այժեամբ ու Որսորդն անոր ետեւն :

Բայց ճամբայ չի կայ ու զեռունի սոք հարկաւոր է մագլցելու համար . ելաւ Որսորդը, Այժեամբն հետքերէն կաթկթած կարմիր ցայտքերուն ուղիով որսորդը զնայ՝ մոռցած թէ լեռը մահուան կը տանի ու իջնելու համար ա՛լ անդամ մ'ալ ճար չի կայ : Այժեամբն զնտակ նետողը անէ՛ծքով կը մեռնի :

Գաղաթն հասաւ տնա : Բայց Այժեամբ . . . չի կար, քարերն իրենց ճեղքերո՞ւն մէջ ապին թէ լեռներն իրենց անձաւներուն մէջ պահեցին զինքը, ս՛վ զխոյ, որսորդը շատ փնտուց, բայց չի կրցաւ զտնել զանի :

Կատաղի մոլեգնութեամբ խորատկեց քարին՝ կապարճը, նետը ու աղեղն ալ և անոնց կտորները հովերը տարին :

Հոս ու հոն արծիւներ կը ճչէին ու անաղին թևերնուն թափ կուտային . անոնց բոցներուն մօտ փատած ոսկորներ ու անդղի կտուցով ցեցքուած անձանաչ դիակներ ինկած էին . կամայ, կտոր կտոր ամպեր կուգային անցնելու պահպան ու թեթև շուքերով կ'երթային կը հեռանային : Հիմա կտրիճ որսորդը լեռներուն մէջ մինակ, կը վախնայ, ու անոնց մէջ արձազանդող իր անհաստատ ստքերուն թփուտուքը զինքը կը խռովէ :

Դ.

Զառիվերը դիւրին, բայց զառիվարը անարկու է . մոռցած է թէ ուրկէ վեր ելած է ու ճամբայ մը չի կայ

որ գինքը վար տանի, գէթ տեղեր գտնուէին որ ոտքը
դնել կարելի ըլլար. աւանդ, Այծեամբին որսը անիծուած
է ու հալածող որսորդը տանջանքով կը մեռնի. լեռն ի
վար, քարերն ի վար աչքը հանգիստ սեւեռում չի կրնար
ունենայ, ու վար դահավիժողը տանջանքներուն ամէնէն
սոսկալիովը, իր մահուան քսամնելի զարհուրանքը չափե-
լով պիտի մեռնի :

Որսորդը յուսահատի աչքերով հեռուն կը նայի ուր
հորիզոնը կը ցածնայ լեռներուն վրայ ու զանոնք կը գըր-
կէ. տարտամ ճառագայթում մը կը խաղայ հեռաւորու-
թեան մէջ. կը պռուայ, տարօրինակ ձայներով, կողկողիչ
աղերսանքով՝ օգնութիւն կը կանչէ, ու լեռներուն մէջ,
քարերուն մէջ դիւանան ծամուքով ձայնը կ'արձագան-
գէ, կ'երկայի : Իրիկուան զով սառերներուն հետ եղ-
նիկները կը բքան, ու մօտէն հեռուէն հովր երբեմն վայրի
կենդանիներու ձայնի կատրներ կը տարաշնէ ատշին ան-
դին :

Մինա՛կ, կայնած է լերան վրայ, հովերը մազերը
կ'ալեկոծեն ու ըտպիկ սաքերէն ալ արիւն կը մզի. յու-
սահատ է, ալ չի կրնար իջնել. կեցա՛ւ հոտ, սպասելով
մէկուն որ պիտի գար, մինչ առջեւէն մարտիներ կը ցատ-
քէին խումբով ու թեթեւ թեւերով վար կը խառժէին,
անոնց վար իջնելը տեսաւ տխուր աչքերով ու հետեւե-
ցաւ ակնարկով երբ թռթռայով կը կորսուէին. մերթ ընդ
մերթ ըզէզ մը միօրինակ բզզիւնով հանդարտ լռութիւնը
կ'աղմկէր ու կը թռէր կ'երթար :

Կեցաւ հոտ, լերան գլուխը, աչքը անսպառ յոյսով
ուղղուած վարը, լեռներէն դարվար, սպասելով մէկուն
որ պիտի գար : Մահը եկաւ ու աչքերը իրենց կոպիճնե-
րուն մէջ, բայց գլուխն ալ ուսին վրայ դամեց : Ու լեռը
հիմա իր երգն ունի : Վա՛յ անոր որ Այծեամբին նշան կը
բռնէ :

Ծաղիկ

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Ք Լ Ք Ո Ւ Լ Ի Ն

Արի՛ , բլբուլ , մէկտեղ նստենք .
Չէն-ձէնի տանք ու երգենք .

Էս օրուանից դառնանք ընկեր ,
Իրար խառնենք մեր ցաւեր :

Անցա՛ւ գարուն , աշուն կուգայ ,
Շատ հեռու չէ և ձմեռ ,

Լա՛ց , ընկե՛ր ջան , էլ վարդ չըկայ ,
Թո՛ւփը մնաց կիսամեռ :

Երգե՛նք , ընկե՛ր , ցա՛ւը երգենք՝—
Ի՛նչ քո մեռած ա՛լ վարդի ,

Երգե՛նք , ընկե՛ր , ցա՛ւը երգենք—
Ես՝ իմ աւեր վաթանի . . .

Անցա՛ւ գարուն , արնո՛տ գարուն .
Մօտ է աշուն , ցուրտ ձմեռ ,

Ա՛խ , ախպէրս մնաց անտուն ,
Քոյրս քաղցից կիսամեռ . . .

Արի՛ , բլբո՛ւլ , ցա՛ւը երգենք
Վարդի , աւեր վաթանի ,

Արի՛ , ընկե՛ր , իրար խառնենք
Մըմուռ ցաւը մեր սրտի . . . :

Հայ Գրողներ

ՏԻԿԻՆ Շ . ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

Տիկին Շուգանիկ Կուրղինեան. Ռուսահայ առաջին բանաստեղծուհին իր սեռին միակ ներկայացուցիչն է Արեւելեան հայ գրականութեան մէջ :

Թախծալից գրիչ մը որ ո՛չ սէրը կ'երգէ և ո՛չ բնութիւնը, ո՛չ սոխակը և ո՛չ վարդը , այլ իր տխրանուագ քնարը կ'ողբայ յարատեւ թշուառութիւնը, զրկանքը ու ժողովուրդին ցաւերը , որոնք գիտէ խտացնել ա՛յնքան ներշնչուած տաղերու մէջ :

Մ Ա Կ Ո Յ Կ Ը

Մակոյկն է խրած
Օրորուն ափին,
Անձնատուր եղած
Իր ամուր կասկին .

Առագաստը թոյլ
Կախուած մեղկօրէն
Կը դողայ անդուլ
Հովի սարսուռէն .

Թիւրն ալ յոգնած
Դադարէն երկար,
Բաց ծովուն դիմաց
Կը նային իրար .

Մինչ դժգոհ, խոհուն
Թեք կայծը ամուր
Կը դիտէ հեռուն
Կարօտով տըխուր :

Ու կ'ըմբռնուեմ ես .
Նաւն ալ կաղմ, անահ,
Անցկոտ սրտիս պէս,
Բաց ծովը կը ցանկայ .

Կ'ուզէ սաստկակոծ
Կեանք ու փոթորիկ,
Մինչ ափին անգործ
Կ'երերայ լռիկ :

Պ Ա Ն Դ Ո Ւ Խ Յ Ի Կ Ե Ա Ն Ք Է Ն

Եղանակաց մէջ մի միայն աշուհն է, յորում զարիպի կենացն ու տանը մէջ տրտմութեան հետ ուրախութիւն կը խառնուի ըստ մասին: Աշուհն անոր ըզձիցն ու ակրնկալութեանց եղանակն է: Հաղիւ թէ տերեւները դեղնած կը թափին, շոգեհաւը կը բառնայ մեր եղբայրներն և կը թափէ ասիական եղերք, Սամսոն, Կիրասոն և Տրապիզոն: Ո՛րչափ բերկրութեամբ աշնան վերջին օրերն ոտք կը դնէ զարիպն այն ցամաքին վրայ, որուն հրաժեշտ տուած էր, չգիտեմ քանի՛ տարիներ առաջ, ծաղկանց ամսուն մէջ՝ գուցէ անյոյս և վշտաբեկ: Ո՛վ կարող է սահմանել այն հոգեկան տպաւորութիւնը՝ զոր կը կրէ յանձին այն մարդն, մինչ աչքերը վերամբարձ՝ կը դառնայ ասիական ցամաքէն դէպի արեւմուտք, և կը տեսնէր որ արեգական յետին բոյերը կը մարմրին Բիւզանդիոնի վըրայ: Այն օրը, յիրաւի, նոր մարդ է նա:

Եւ սակայն ո՛րչափ օրեր պէտք են: Դանդաղ տարիներն անտրտունջ և անձանձրոյթ անցուցած է կ'. Պոլսոյ սալայատակներու և միջին խորշերու մէջ. խակ այժմ, տարիներու չափ ծանրութիւն ունին կարծուկ օրերը. տան սէր, ծնողաց սէր, կնոջ և որդւոյ սէր, սարի և ձորի սէր, ամէնքն ալ կը զարթնուն ցաւերով ընդարմացեալ կուրծքին տակ: Ի՞նչ, — զարիպի ալ սիրտ ունի եղեր:

Մէկ օր միայն հերիք է Սև ծովէն կրած տառապանքները մեղմելու: Ուստի երկրորդ օրը, տակաւին աղօթարանը չը բացուած, կարաւանը ճամբայ կ'ելնէ: Հոս ունի զարիպն մեր Պետրոս Կաթուղիկոսի գետակն՝ ընդ որ վերջին անգամ անցած էր, հոն ունի բլրակ մը՝ ուսկից առաջին անգամ ի մանկութեան նշմարած էր Սև ծովը, այդ կապոյտ երկինքն՝ կապոյտ երկնից տակ: Սակայն ի՞նչ ընեմ ասոնք. մէկն ունի երեսնօրեայ, և

միւսն՝ կիսամսեայ ճամբորդութիւն : Դու տեսե՞ր ես, Տէրսխմի և Բարձր Հայոց խորերն ու սարերը, բարձունք՝ որ ամպերու կը կցուին, անդունդներ՝ որ դժսխոց կը մօտին. մէկ օրուան դառ ի վեր. մէկ օրուան դառ ի վայր : Եւ սակայն կ'անցնի ընդ քար և ընդ փուշ . Արևելքն ունի իր ըզձիցն ու ճամբորդութեան կողմնացոյց : Եւ գէթ երկինք նախատաւոր ըլլար : Օդը ցրտին է . դետինը աշմօտ, ձիւնն ու անձրև անընդհատ կը տեղան երբեմն . անպատասպար կը քալէ նա՝ ախղճերէ ու անձրևէն թաթխուած, ինչպէս կը տեսնենք սովորաբար մեր պանդուխտները հոս անձրևոտ օրեր : Ծերեր ալ կան անոնց մէջ . մեր Պօլոս աղբարն 65 տարեկան էր երբ վերջին անգամ, դաւաղանին վրայ կրթնած, Տէրսխմի լեռներն անցաւ քալելով . Հրէից Մովսէսէն աւելի հաւատք ունէր, և հասաւ իր պապերու երկիրն ու պապենական առն : Գիշերներն ստիպեալ է ծաւերու քուայ տակ կծկուիլ, դու բռէ պատասպարուիլ, և դուն ուրեք դոմերու մէջ, որոց կոշտ ու կուպիտ տէրը, իր եզան կամ դոմչուն քով, յանձն չ'առնուր շատ անգամ անկիւն մը տալ մեր դարիպին՝ հոն դիշերօթելու համար : Առտու քալէ, իրիկուն քալէ, քալէ ու քալէ՝ . և ահա օր մըն ալ տաժանելի ճամբան կ'ապառի . վերջին քայլն, և ահա դարիպին կարաւանը կը դանուի երկու լեռանց մէջ բարձունքներու վրայ, ուրկէ վար է ամէն բան : Օրուան վերջին վայրկեանները կը մեռնին ժամացոյցին սուր սլաքին տակ . դիւզն է՝ կ'երևի, ծուխն է՝ կը բարձրանայ : Երկա՛ր շնչառութիւն մը մաշած թոքերէ « Օրհնեա՛լ է Աստուած » : Այդ իններն ու ծառաստանը կ'երևին, և կեղեցւոյ կամարն և կամ վանքի կաթուղիկէն, որ մեր գիւղերը կը պահպանեն : Հոս ընկուղենին իր մերկ ոստերը օդին մէջ կ'երկարէ, հոն կազամախին կ'երևայ հիւսրսին առջև . անդին սպիտակ ձեան վրայ իր սև թևերը կը պարզէ խաչը գերեզմաննոցին մէջ, ասդին Սուրբ Կի-

րակոսի, Վառվառ տիկնոջ, Ս. Յակոբայ և Ս. Սարգսի քարաշէն մատուռները գիւղը կը շրջապատեն :

Եւ սակայն նոր դող մը կ'սկսի : Գիտե՞ս թէ ի՞նչ է այն . — մին կը խորհի ակամայ թէ պիտի դանէ՞ ողջ այն ամէն անուռներն՝ զորս իրեն դրկուած թղթերուն մէջ կը կարգար, և որք շատ անգամ կը նշանակուին զարիպին սիրտը խաբելու . պիտի դանէ՞ իր սրտին հատորիկը մեծցած զարգացած, զոր, իր մեկնած ատեն, թողած էր որրանի մէջ . պիտի դանէ՞ իր մանկամարդ կինը՝ ընդ որում հազիւ շորս ամիս կենակից եղած էր . պիտի գրտնէ՞ . . . : — «Մի՛ վախնաք, տղե՛րք, Աստուծով ամէնքն ալ ողջ են» : Խեղճ մարդիկ, Աստուծով ի՞նչ են . Աստուծով աղքատ են, Աստուծով զարի՛պ են, Աստուծով վի՛շտ ունին և տառապա՛նք ունին : Հազիւ թէ այս խօսքերը կը մարին օդին մէջ, հրացաններու պայթիւնը կ'որոտայ խորերուն մէջ . նոր բոց մը արեւմուտքէն գէպի արեւելք՝ գիւղին հորիզոնը կը պատուէ : Սաղաղ գիւղն է՝ կը խռովի, կը խայտայ . «Ահա տղերք եկան» : Ալ վազող վազողի ծերուկն ու պառուն ալ կ'ողևորին . խուռն բաղմուժիւնը ընդ առաջ կը վազէ . մէկուն քոյրը, միւսին՝ եղբայրը, ասոր մանկիկը ու անոր մայրը, բայց ո՛չ մէկուն կինը՝ որում գիւղական պատշաճութիւնը թոյլատուութիւն չընէր, կարելի՞ է բացատրել այն դրկախառնութեանց խորութիւնը ու քաղցրութիւնը երբ իրար կը խառնուին ճամբորդներն ու գիւղացիք :

Մասիս

ՄԵԼՔՈՆ ԿԻԻՐՃԵԱՆ

Մելքոն Կիւրճեան (Հրանդ) . Ուսուցիչ հայերէն լեզուի ու Մատենադրութեան, գրագէտ և հրատարակագիր : Արեւելք օրագրին ամէնէն կարող աշխատակիցներէն մին, որ զգայուն շեշտերով, գիտցած է ներկայացնել Հայաստանի պանդուխտին կեանքի տխուր պատկերները : Մանաւոր հաճոյքով կը կարդացուին նաև հայրենատենչ գրագէտին բնաշխարհիկ նկարագրականները, որ այնքան գունագեղ ու նկարուն ոճ մ'ունին :

ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐ

Դարդու աշուն սարէն իջաւ,
Վազեց քամին հեալով .
Չըկան ծաղիկ, վարդը թօշնաւ,
Ծառը խշշաց սգալով :

Պարզ երկինքը մշուշ հագեր—
Մտորում է տարագիր,
Կռուկներին շարան-շարքեր
Ճանապայ ընկան տաք երկիր :

Այ կռուկներ, խաբար չունի՞ք
Իմ սիրունիկ աշխարհէն,
Ղարիբ սրտիս բարե չունի՞ք
Իմ շարշարուած քոյրերէն . . .

Ես էլ մի օր ճանապայ ընկայ
Անցայ դաշտեր, սար ու ծով .
Ղարիբ-դուրբաթ երկիր եկայ—
Սիրտս վ՛քը յոյսերով . . .

Բայց իմ երկրի տապ-կարօտից
Չորցան բողբոջ յոյսերս,
Ա՛խ, կռո՛ւկներ, էն սե օրից,
Հայկան դառան աչերս . . .

Էրնէ՛կ ձեզի .— մի օր կրկին
Ես կը դառնաք շարքերով,
Մենա՛կ-ղարիբ ես կը մնամ
Հայրենիքիս կարօտով . . .

Ծ Ո Վ

Ծո՛վ, ե՛կ բացուինք մենք իրար •
Ու կը կարծեմ ես ու դուն
Պիտի սիրենք անպատճառ
Իրար յոյզն ու տրամութիւն :

Քեզի ես շուտ հասկըցայ •
Վեհ, ամեհի բնութեան
Կապոյտ սիրտն ես դուն հսկայ •
Սի՛րտ, իմ սրտիս յար-նման :
Դուն ալ ունիս, ինձի պէս,
Դժգոհութեան վայրկեաններ,
Երբ կընճրուտ կը ճողբես
Սիզոտ, խիճոտ ափն իվեր :

Մերթ ալ դուարթ կը քրճնիս
Ժիր աստղերուն, լուսնին հետ •
Ու յուզումէդ կ'առկայծիս
Կը դողդըղաս բերկրանքէդ •
Դո՞ւն ալ վստահ այդ պահուն
Դէմ կը նետուիս յոյսերուդ,
Որո՞նք ժրպտով հրմայուն
Կ'իջնեն ծոցըդ քու ծրփուտ :

Այլ և անչարժ, անժրպտուն
Ամէն բանի անտարբեր
Մեռելութիւն մ'ունիս դուն,
Որ իմ կրճքէս ես խըլեր :
Չե՛ս խլըրտիր, չե՛ս խորհիր
Ու ոչինչ ալ չե՛ս զգար •
Անխորհուրդ է ամէն իր
Այդ վայրկեանիդ ցաւազար :

Մերթ ալ յանկարծ վրիժուէն ,
 Ճասուամով մը մոլեգին ,
 Կը դալարիս ժայռերուն
 Ու կը թքնես երկրնքին :
 Ըսէ՛ , ինչո՞ւ այդ դայրոյթ .
 Միթէ դո՞ւն ալ կապուած ես
 Միթէ և քո՞ւ ուժերուդ
 Ազատ գործել չես տար քեզ :

Ծո՛ւվ , ե՛կ բացուինք մենք իրար .
 Ու կը կարծեմ ես ու դուն
 Պիտի սիրենք անպատճառ
 Իրար յոյզն ու տրամութիւն :

Երգեր

Լ. ՍԵՂԲՈՍԵԱՆ

Ք Ե Ա Ք Ի Պ Ի Ն Ե Ր Ա Ջ Ը

(Ա Ր Ե Ի Ե Լ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ)

Ճշմարտապէս ժողովրդական մարդ մըն էր Սիտ Օսման Պէն Օմար Քեաթիպը : Գերազանցօրէն համեստ ժողովրդականութիւն մը , անփառունակ որչափ որ անտաղտուկ , առանց շողոկանքի ինչպէս առանց վտանգի , — ամենապարզ և ընտանի ժողովրդականութիւնը խոնարհ մարդու մը որ ժողովուրդին օգտակար արհեստ մը ի գործ կը դնէ և իր ծառայութիւնները անոր կը ծախէ անօթութեանէ շատ չի մտնելով ապրելու չափ վաստակի մը փոխարէն :

Քեաթիպը ծեր էր , խիստ ծեր . . . : Իր ասպարէզը սկսած էր շա՛տ երիտասարդ , կանուխէն ժառանգած ըլլալով հօրմէն՝ իբր ամբողջ անշարժ ու շարժական հա-

քատութիւն, ընկուղափայտէ ամուր պզտիկ գրասեղանը որ ծառայած էր ծնողին, հասարակաց դպիր իրեն պէս :

Ծեր էր, այնքան ծեր որ շիտկէ շիտակ չէր գիտեր իր տարիքը և ոչ ալ որքան ատենէ ի վեր տատիլը, այնքա՛ն անկանոն կերպով բռնած էր իր կեանքին տոմարակալութիւնը :

Բոլոր այն կենցաղներուն պէս որոնք ոչ երջանիկ եղած են ոչ դժբաղդ, և որոնց՝ սովորութիւնը եղած է ամենօրեայ դէպքը անփոփոխ, քեթիպին կեանքը պատմութիւն չունէր, այլ հիանալի պարզութիւն մը, միութիւն մը ճերմակ էջի, հաղիւ իր կենսագրութիւնը համաօտակի պատմող տողով մը — «Գրած էր, գրած, գրած . . .» :

Իր դպիրի տաղանդը կը ճառագայթէր շուրջանակի տասը մղոն, միահեծան քեթիպին էր իր գեղին և մերձակայ ու հեռաւոր գիւղերուն, իր հայրը վանած կամ ջնջած ըլլալով բոլոր մրցակցութիւնները : Գիտնական նախախնամութիւնն էր, և ո՛րքան բարեմիտ, ո՛րքան մատչելի՝ տղէտ ու նախնական ամբողջ մարդկութեան մը որ զինքը գիտէր ու կը դաւանէր տէր՝ գրուած Խօսքին, խնամեալ, գրքենի Բանին մոզական զօրութեան ու գաղտնեաց, ակահ գեղեցիկ ձևերու ու բազմամանուած շրջասացութեանց, նուիրագործեալ սալամալիքներուն և աւանդական տարաղներուն, այլարանական ու Քուրանաշունչ բարբառին սակեղենիկ, լի կանխիկներով, նմանատառութիւններով և նոյնաձայնութեամբք :

Բարի էր, համբերատար էր, խղճամիտ էր : Իր յոգնութեանց և խնամոց համար իրեն վճարուած վարձքը համեստ էր իր բոլոր անձին պէս, ձրի կը դրէր իրեն դիմող աղքատներուն նամակները, առանց ատոր համար փոխելու բառ մը, յապաւելու նոքրա մը կամ եսեմ մը իր գրելիքէն :

Մեծահասակ տի մը երկայնամտութեամբը մտիկ կ'ընէր իր յաճախորդներուն տրտուենջներն և անվերջանալի բացատրութիւնները, առանց ու է սրանեղութիւն յայտնելու. առանց փորձելու վերջ մը դնել այն անհատուժ երկարարանութեանց և կրկնութեանց որոնք յատուկ են իրենց վշտին, յոյսին կամ կրքին նիւթը բացատրելու ճարտարուող ազէտ մարդոց, զորս՝ յատակ և ամբողջ չըլլալու վախը դիտու պտոյտ տուող շողակրատութեան մը մէջ կը նետէ :

Եւ սքանչացումէ ապուշ կը կտրէին, բերաննին մեծարաց՝ կայծեւ հիացական համբ բացազանչութեան մը համար՝ երբ Ֆեաթիպը, իր մանրակրկիտ աշխատութիւնը տւարտած՝ կը կարդար իրենց՝ ծանր ու կշռաւոր օրօրուն ձայնով մը, ուղուած նամակը կամ աղերսագիրը ուր իրենց զգացումները կը զարմանային կ'զմայլէին՝ ինքզինքնին տեսնալով թարգմանուած հնչական ու վայելուչ բարբառի մը, այնքան օտարոտիօրէն գեղեցիկ որ օտար կը թուէր իրենց, որմէ շատ քիչ բան կը հասկնային, իրա՛ւ է, բայց որ կ'զգային թէ կատարեալ արտայայտութիւնն էր իրենց մտածումին :

Եւ տեսնալու բան էր թէ ինչպէս կը ճգնէր լազրելու, խնամելով և յղկելով ոչ միայն նիւթը, այլ նաև ձեւը, բուն իսկ դիրքը, — որովհետև հոյակապ վարպետ մըն էր արարական գեղագրութեան, գեղագրութեանց ամէնէն դժուարինն ու արուեստագիտականը, որ աւելի կը դժագրուի, կը զարգանկարուի ու կը քանդակուի քան թէ կը գրուի, և առանց որուն լիակատար տիրացումին՝ չիկայ ճշմարիտ քերթիպ :

Իր շարադրողի և գեղագրի համբաւը այնքան տարածուած էր. — քիչ շատ ամենուրեք թափանցած ըլլալով ճարտար գրիչէն ելած գրութիւններուն հետ, — որ մէկէ

աւելի անգամներ շատ հալատաւոր առաջարկութիւններ ընդունած էր . հաստատ և անխախտական սրաշտոնատարի տեղեր ընծայած էին իրեն հանրային վարչութիւններու մէջ . իմաստութեամբ՝ մերժած էր, հաւատարիմ յիշատակին իր հօրը՝ որուն զեղեցիկ և օգտակար փորձը այնքան հարազատօրէն կը շարունակէր, հաւատարիմ իր սիւնելի համշիրակներուն և իր ընկուզափայտէ բարի սղտիկ գրասեղանին որ անյուշ ժամանակներէ ի վեր կը տեսնուէր միշտ միւնսոյն տեղը, գիւղին կեդրոնը, մզկիթին մօտ, ծննդեան մինարէին մտերիմ շուքին տակ, շրջապատուած տանեակ մը գեղացիներով սրտնք կը մտմտան ու կը ծխեն ծանր ծանր՝ և կ'սպասեն իրենց կարգին, Արեւելքցիներուն հասուկ համբերութեամբը :

*
* *

Ծերացած էր, շատ ծերացած, ու անհունօրէն յագնած կ'զգար ինքզինքը : Տարիներուն բնոր անտանելիօրէն ծանրացեր էր իր դպիրի կամարացած ուսերուն վրայ, և կ'զգար մերձենալը ժամուն ուր պիտի երթար զայն գետին դնել բարի և մայրական Հօլին գիրկը :

Որչա՞նի լաւ պիտի բլլար հանգչիլ քիչիկ մը, ապրիլ առանց տշխատելու, առանց գրելու : Ատենէ մը ի վեր . իր խեղճ պառուած ձեռքը, խորշոմներով և ամօք ծանրաբեւան, կը դողար և անկարողութեան աագնասպներ կ'ունենար յաճախակի . գիրը կորանցուցած էր իր երբեմնի պայծառութիւնը, գիծերու այն հրաշալի համարձակութիւնը, միացայտ այն վայելչութիւնն ու միաձուլ կանոնաւորութիւնը որ ճշմարիտ գեղոր մը կ'ընէին զայն : Ու խորապէս կը տառապէր առաջուան պէս լաւ չի կրնալ գրելուն համար :

Արդ, գիշեր մը որ ինքզինքը սովորականէն աւելի

յոգնած զգացած էր ու կանուխ պառկած . տարօրինակ երազ մը տեսաւ , որ ահաւասի'կ .

Ելեր էր , չէր գիտեր ինչպէս , գմբէթին վրայ մզկիթի մը որ իր գիւղին մզկիթը բլլալու երեւոյթն ունէր լողորովին , (յաճախ երազի մէջ այնքան տարօրինակ բաներ կը պատահին որքան կեանքին) : Ու զբաղած էր հսկայական ձեռնարկի մը , աներեւակայելի , հազիւ երազելի բանի մը : Աղերսագիր մը կը գրէր Ալլահին , այո' , նոյն ինքն Ալլահին , — տէր բացարձակ և գթառատ՝ ցամաքներուն , ծովերուն , երկինքներուն և հողիններուն . . . :

Այո' , կ'ընէր այդ տարօրինակ բանը աղերսագիր մը գրելու Աստուծոյ , և միջոցը զոր կը դործածէր ոչ նուազ տարօրինակ էր : Երեւակայեցէ՛ք որ պարզապէս տուած էր մզկիթին մինարէն , իր մատուրներուն մէջ թեթեւ ու օգային ինչպէս սագի փետուր մը , և անով կը գրէր . կը գրէր իր աղերսագիրը , իր աղերսագիրն առ Ալլահ . . . : Այս անհեթեթ գրիչը կը թաթխէր մզկիթին գմբէթին մէջ , որուն գաղաթը , լայնարաց , կը թուէր բլլալ հսկայական կլոր կաղամարի մը մութ բերանը : Ու թուղթը որուն վրայ կը գրէր՝ անսահման կասկածան էր երկինքին , մէկ հորիզոնէն միւսը կոչս էջի մը պէս ծաւալացած :

Կը գրէր , կը գրէր ներշնչումի անսովոր առատութեամբ մը , դիւրութեամբ մը . կ'ըսէր . . . Ալլահին՝ որ առաջին , բոլորովին անդրանիկ անդամն էր որ գրիչը ձեռք կ'առնէր մէկէ մը ինքզինքին համար բան մը խընդրելու նպատակաւ . թէ՛ գիտնալով որ աշխարհի մեծերէն ոչ մին կրնար իր ուզածը տալ իրեն , կը դիմէր ուզգակի Ալլահին , ամենազօր և ամենակալ Տէր՝ Ցամաքներուն , Ծովերուն , Երկինքներուն և Հողիններուն , առանց որոյ շունչին ոչ մէկ տերեւ կը շարժի յաստիս . . . :

Կը զբուցէր իր կեանքը , այնքան պարզ , այնքան

միօրինակ, այնքան անանձնական, իր կեանքը զոր անցուցած էր համակ' ուրիշներուն կեանքը արտայայտելով, արտագրելով, . . . : Թուղթի լեռներ սեցուցեր էր, մելանի ովկիանոսներ հատուցած և գրիչի անտառներ սպառած էր յատակ և իմանալի լեզուով մը թարգմանելու համար նախնական մարդկութեան մը կիրքերուն, յոյսերուն և վիշտերուն թոթով ու խառնաշփոթ բարբառը : Օտար գոյութիւնները զինքը գրաւած և իւրացուցած էին ամբողջութեամբ, ա՛յն աստիճան որ ատեն ունեցած չէր և ոչ ալ փափաք — կ'ըսէր — յղանալու իրեն յատուկ բաղձանք մը կամ զգացում մը, ունենալու իր մարդկային սեպհական պատահարը կեանքին մէջ . . . : Ոչինչ զգացած, ոչինչ ըզձայցած, ոչի՛նչ խնդրած էր իր հաշուոյն :

Արդ, ահաւասի՛կ իր կեանքի երեկոյին՝ յանկարծ այնպէս եղեր էր որ բանի մը կը ցանկար, բանի մը որ ուրիշներուն համար չէր, այս անգամ . . . : Մ'ինչ որ կը խնդրէր, ոչ հարստութիւն էր, ո՛չ ալ մեծութիւն . կը ցանկար միմիայն հանգստութեան, քիչ մը հանգստութեան, իր նմաններուն կարեաց և երջանկութեան նուիրուած իր երկարատե դատանքէն ետքը :

Իր կեանքն ու հոգին այսպէս մե՛րկ իրեն ցոյց տուած ըլլալով, Քեաթիպը պաղատադին կը հայցէր Ալլահէն որ գթար իր ալեւոր տարիքին և անհուն խոնջէնքին, ու պարգևէր իրեն՝ իր յաւիտենական ամենազօրութեան ու ողորմութեան խորէն, այն հանգիսար որուն իրաւունք ունէր և պէտք, — ու ասիկա պիտի ըլլար արդարութիւն, ասիկա պիտի ըլլար շնորհ . . . :

*
* *

Պէտք է հաւատալ որ Ալլահ սքաղաւ Քեաթիպին ազերսագիրը, — միակը զոր գրած ըլլար երբեք ինքզին-

քին համար, — ու կատարեց անոր խոնարհ ու սրտառուչ
աղաչանքը . որովհետև մէկ քանի օր վերջը այս տարօ-
րինակ երազէն զոր պատմած էր իր մտերիմներուն, հան-
դարտութեամբ կեանքէն անցաւ ի մահ և մտաւ այսպէս
մեծ անդորրին մէջ որուն էովին կը ցանկար, և զոր այն-
քան սրտաշարժ սողերով հայցած էր աստուածային
դժութենէն :

Շիրակ

ՄԻՔԱՅԷԼ ԿԻՒՐՃԵԱՆ

Մ Ա Ն Ի Շ Ա Կ Ն Ե Ր Ը

Յորդ, ոսկեղօծ տարախին տակ արևին
Գարնանաւէտ շողերուն
Որոնց կ'ըմպէ համբոյրները հողէին՝
Սա՛ ծաղկազարդ պերճ ածուն,
Հողին մօտիկ, տերեւներու զմրուխտին
Մէջ կորսըւած՝ լըռելեայն,
Ըզմայլադին տեսիլքի մը կը ժպտին
Մանիշակները բուրեան :
Ցոյցի, փառքի, երևալու սի՛ն տենչին
Անհաղորդ ու անգիտակ,
— Ա՛յնքան անոնք համեստօրէն կը թաքչին
Տերեւներու շուքին տակ, —
Նուրբ ու փափուկ հոգիներու դիւրազգած
Հաւատարիմ նըշանակ,
Դրոշմն ունին անմեղութեան անկասկած
Ու հըմայքը ցնորունակ . . .
Իրենց մաքուր պաշտամունքին նըւիրուած
Խորհրդապահ, անկեղծ քուրմ՝

Ես կը պշնուամ այդ միշտ կապոյտ-առեղծուած
Գոյութեանց դէմ ցողաթուրմ . . .

Վերացումի, յափշտակման բոպէներ
Երբ կը հնչեն հողուոյս մէջ,
Ու շուշանի ցոյքերով ջինջ, աներեր
Ժպտի երազս ինձ անովերջ,

Մտքիս ծաղիկը կը հակի այդ փափուկ
Մարմիններուն հեշտագին,
Անոնց անմահ բոյրերովը խուսափուկ
Արբշուտակու իր հողին . . .

Եւ դիւթական անուրջիս լայն ու ազուոր
Ոլորտին մէջ անաղօտ
Կարծես կապոյտ, վառ աչքեր են բիւրաւոր
Զիս դիտելով դարմայկոտ .

Այդ պատրանքի պահերուս մէջ մըտերիմ
Ինքնամուաց ու միաթիք .

Թոյլ կուտամ որ խոնրս անովերջ թախառին
Յիշելով Կինն ու Երկինք . . . :

Հողին մօտիկ, տերեւներու դմբուխտին
Մէջ կորսըւած՝ լրուելեայն,

Ըզմայլագին տեսիլքի մ'երբ կը ժպտին
Մանիշակներն հոտեան,

Ես կ'ըղձամ որ իրենց քրնքոյշ բաժակին
Բոյրերուն հետ խուսափուկ,

Իր Երազին հրմայքին մէջ հրձուագին
Ցընդի հողիս ինչպէս խուռնկ . . . :

Մասիս

ՄԻՆԵՆ ՈՒՆՈՒՐԼԵԱՆ

Միեւան Աւղուրիեան. Երիտասարդ բանաստեղծը յարգի անուն
մ'է նոր գրողներուն մէջ իր ներշնչուած բերթուածներովը :

ԱՅՆՏԵՂ ԳՆԱՅԷՔ

Այնտեղ, ուր որ խեղճ գեղջուկը անհաց,
 Տգէտ, խաւարի մէջ է խարխափում,
 Երաշտից, ցրտից, անսերմ մնացած,
 Կծղած արտերը արցունքով թրջում.
 Այնտե՛ղ, հանքերի մռայլ խորքերում,
 Գործարաններում, ծովի ափերին,
 Ուր որ բանւորն է բռնի տակ տնջում,
 Գէ՛թ կուշտ ապրելու տենչանքը դէմքին.
 Այնտե՛ղ, բանտերում, ուր շղթայակապ
 Հիւանդ օրերի հերոսը անահաւակ,
 Տանջւում է լռիկ, վշտով անսիրտ,
 Օրերը հաշւում անարդուած մինչ մահ.
 Այնտե՛ղ, անառակ, լկտի որջերի
 Թռչնալի գրկում ապականութեան,
 Ուր որ մտացուած խեղճ ընկածների
 Կեանքն է մաշւում առանց գթութեան.
 Այնտե՛ղ, ուր չըկա՛յ ո՛չ յոյս, ո՛չ հաւատ,
 Ո՛չ սէր, միութիւն, ո՛չ մի սիրտիանք,
 Ուր որ կեղծիքը, սուտը յուսահատ
 Իշխում է բարուն ու չըկա՛յ փրկանք՝
 Այնտե՛ղ գնացէք...

Handwritten note:
 Գրքի վերջում

Handwritten note:
 Այնտեղ

Handwritten note:
 Գրքի վերջում

Handwritten note:
 Այնտեղ

Հայ Դուռներ

ՏԻԿԻՆ Շ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

ՊԵՅՔՕՁԻ ԱՂԲԻԻՐԻՆ

Մեծ շուքերուն տակ քու հին սիւներուդ,
Դեռ կը հոսիս դուն, ո՛վ աղբիւր շքեղ .
Եւ դեռ թրքուհին շիկնոտ վարդագեղ
Կ'երկարէ սափորն հոսանքիդ եռուտ :

Կը մաշին տառեր ճակտիդ վե՛ն ու մութ .
Մարմարն է վաղքիդ տակ հիւժուած բիւրեղ .
Չկա՛ն կոյսերն որ կուգային այդտեղ .
Եւ դուն կը հոսիս դեռ անխոնջ ու գուտ :

Ետիդ թողած փառքն անտառայ հզօր,
Անոնց խաւարէն ի՛նչ կը բերես դուն,
Ի՛նչ փափկակեաց այլ անգութ նենդ մարդուն :

Պէյքօղ ունի լոկ մէ՛կ տօն, մէկ ժխոր .
Այն դո՛ւն ես աղբիւր որ կը մնջես յար .
«Խմեցէք Օրէնքն և դարձէ՛ք անտառ :»

Արեւելի Բոցեր

ԵՒ. ԳՕԼԱՆՃԵԱՆ



Ք Ա Ր Ի Չ Ե Ի Լ Ո Ն Տ Ո Ն

Ոչ ևս Բարիզի եղելութիւն մը, այլ գրեթէ անձնական եղելութիւն մը պիտի պատմեմ. և այս իսկ է որ Մանչն անցայ Լոնտոն գնացի, Մանչն անցնիլը վտանգ մ'անցնել է և Լոնտոն երթալը ուրիշ աշխարհ երթալ է: Ինձ մանաւանդ ո'րչափ անախորժ է Ովկիան. ոչ իր գորչագոյն թլփայորդ ալիքները կը սիրեմ, ոչ իր կատաղութիւնը: Ժամանակէ մ'ի վեր մանաւանդ ոչ ևս կը հասկընամ Վ. Իւկոն երբ կ'ըսէ՝

Ըզգառնութիւն մտնամ սրտիս երբ մեծութիւն կը տեսնեմ

Անոր համար ահա և հաս ծովուն դրացի եկել եմ:

Եւ ոչ ուրիշ քերթողի մը նետ դառն ալիքներէն քաղցրութիւն կ'ակնկալեմ իմ աւուրց համար: Չէ՛. Վիրգիլիոսի նետ ա՛լ միմիայն ըզխոխոջ ջուրց կը սիրեմ և Միլտոնի ըզխափուկ ջուրս անձրեւաց. և չեմ Պայրըն որ ըսեմ Ովկիանոսի ալիքներուն. քող որոսայ Ովկիան այլ պե՛տք է սանի լիս, Ովկիանոսն՝ որուն այս ջրանցքը նեղուածք կուգայ իրեն և որ ստամբակեալ երկու եզերաց դէմ ձայն կուտայ իւր անդրնդոց որ իրենց բոլոր եղեռն ու ալիք դուրս հանեն: Այլ Ովկիանոսին ալիքներէն ալ կազատի մարդ և ահա դնացի ի Լոնտոն ու դարձայ. Լոնտոն որ ինք միայն տէրութեան մը չափ մեծ է և բազմամարդ: Բարիզ երկու միլիոն բնակիչ ունի, Լոնտոն չորս միլիոն: Եւ ո'րչափ տարբեր են երկու քաղաքները, Բարիզ աշխարհի քաղաքն է, Լոնտոն աշխարհի ոստանն է, Բարիզ սիրելի, Լոնտոն պատկառելի. Բարիզի յատկանիշն է վայելչութիւն, Լոնտոն մեծվայելչութիւնն է. Բարիզ ցնծուն և արթուն, Լոնտոն գործոն և խոհուն. Բարիզ ամէն բանի ծաղրածու, Լոնտոն ամէն բանի ակ-

նածու . Բարիզ բազում այն է որ թեթև ու անդդաստ ,
Հոնտոն միշտ ծանր ու զգաստ - Բարիզ այսօր ձեռներէց
վաղը ձեռնթափ , Հոնտոն անյողդո՛ղդ ձեռնարկու Բարիզ
հաւասարութեան քաղաք , Հոնտոն աղատութեան քա-
ղաք , Բարիզ միշտ կը խլրտի , Հոնտոն երբեմն կը շարժի :
Բարիզի մէջ փողոցները կ'ապրին մարդիկ , Հոնտոնի
մէջ տուները կ'ապրին . Բարիզ եկեղեցի երթալն ամօթ
կը համարուի , Հոնտոն եկեղեցի չերթալն ամօթ կը հա-
մարուի : Ընտանիք և կրօնք , ահա՛ երկու մեծ բան՝ ու-
մոնցմով անկարելի է որ մարդ մը առաքինի չ'ըլլայ , ու-
մոնցմով անկարելի է որ ազգ մը մեծ չ'ըլլայ : Աշխարհի
մէջ կէտ մըն է այս կղզին . այլ է՛ երբեմն որ այդ կէտը
աշխարհի կը հրամայէ , ինչպէս Փօքս բաւ օր մը Նաբո-
լէօն Մեծին : Եթէ Թիէռի պատմութիւնը քուլս ունենայի՝
բառ առ բառ կ'օրինակէի հոս այս հետաքրքրական խօ-
սակցութիւնը Գաղղիոյ աշխարհակալ կայսեր և Բիթի
ախոյեան այն մեծ անզղիացւոյն մէջ , ուր յանկարծ Ալ-
պիօնի զաւկին ամբարտաւանութիւնը կ'արթննայ : Ամ-
բարտաւանութիւն . ի՞նչ շուտ կը հանէ մարդ գրչէն
այսպիսի բառեր հետեւելով ընդհանուր կարծեաց հոսան-
քին : Անզղիացին կը զգա՛յ ինքզինքը , բայց ամբարտա-
ւան չէ . ինչ որ ամբարտաւանութիւն կը թուի իր վրայ ,
չատ անգամ ամչկոտութիւն է : Կարծես թէ դեռ խապան
բան մը ունին այս մարդիկ որ կը խալնին : Բարեկամիս
մէկը կրտէր թէ քաղաքակրթեալ վայրենիներ են և այս
ալ թերևս իրենց մեծութեան պաղտնիքներէն մէկն է :
Այլ ի բայ առեալ այս մասնաւորութիւնը , իրենց ընդ-
հանուր բնաւորութիւնը մէջ կ'ըսեն թէ ոչ ոք անզղիացի
յորտի մը չափ գիտէ մեծարել դիմացինը , քաղցր ու քա-
ղաքավար ըլլալ : Որչափ ալ մարդ ընկերհաշտական գա-
ղափարներով տոգորուած ըլլայ անկարելի է որ հիացմամբ

կանգ չառնէ անգղիացի ազնուականի մ'առջև : Եւ ի՛նչպէս մեծ չ'զգայ մարդ զինքը և մեծութեան կնիքը չկրէ վրան եբք որդի ի հօրէ վեց կամ ութ հարիւր տարուան նախահայրերու զաւակն է, ամէնն ալ տանուտեարք, ամենուն ալ քաղաքը՝ Լոնտոն : Այս իմաստով պիտի ըլլայ որ մեր նախնիք որ Ոստանիկ բառը կը գործածէին ընդհանրապէս, Հօրորդի կրտսն եղեր ազնուական մարդու, ինչպէս կարդացած եմ կարծեմ Խորենացւոյն մէջ :

Մարդ մը երբ այս երկիրը կը տեսնայ ու իր բնակիչները կը ճանչնայ, մէկէն կ'ըսէ ինքնիրեն, Ո՛ւր էր թէ մնային միշտ սասանկ) : Առաջին անգամ Լոնտոն գալուս այս եղաւ իմ տպաւորութիւնս, անկէ ի վեր տասն անգամ նորէն եկայ, միշտ տպաւորութիւնս նոյն մնաց :

Բայց եթէ անգղիացիքն ու իրենց բարոյականը կը սիրեմ, այլ չե՛մ սիրեր իրենց ճայրտտ երկինքն ու բալուտ ու թօնուտ մթնոլորտը : Հազիւ հող այս մէկ քանի ամսուան մէջ երբեմն կը ցրուին մառախուղք և թոյլ կուտան նշուլիցն արեգական փայլիլ Լոնտոնի մշտականաչ մարմանդներուն վրայ որք այն հազուադէպ ժամերուն կարծես թէ կը խայտան խարտիչազեղ սպիտակափայլ ակլուհեաց խոշոր քայլերուն ներքե : Այս մէկ քանի ամիսը դղեակները կը պարսպուին և Լոնտոն կը լեցուին : Հետուէն ու մօտէն ուլ որ կրնայ Լոնտոն կուգայ ուր ընկերական ընթացքը կը սկսի արտաքոյ կարգի փայլով մը փայլիլ : Հացկերոյթք ու երեկոյթք իրարու կը յաջորդեն, ու ցորեկներն ալ պարտէզներու մէջ կը շարունակեն տօնք և հանդէսք :—Բայ է ազգային Խորհրդարանը . բայ են բոլոր թատրոնները, Այլ Խորհրդարանին սեմին վրայ կանգ առնենք, չրլայ գահավէժ դատողութիւնք, երբ ունկնդիր ըլլանք մանաւանդ Իրլանտայի վիճարանութեանց, գան աւրեն մեր այնքան գեղեցիկ

տպաւորութիւնները կամ ուրիշ վիճաբանութիւնները մեզ հրապուրեն քաղաքական կարգի խնդրոց:— Թատրոն մտնենք ուր ահա պիտի երգէ Բաթթին, քաջուար եռգիչը, «Քօլլընդ Կառտըն»ի սոխակը:

Ո՞վ աղղ մեծ, շռայլ ի ծափահարութիւն, շռայլ է վարձատրութիւն. երբ տալ ուզէ՝ քիչ տալ չ'զիտէ, լիարուսն կուտայ ու կարծես թէ չը յագենար տալով: Հո՛ն պէտք էր ըլլալ և լսել ու տեսնել: Քառորդ մը անընդհատ տեղացին՝ փուռը, տրցակը, կողովներ, պրսակներ, դափնիներ, տաւիղք և քնար, թաղ և ապարօշ, և փողոշուկք, և քայռ և մանուակ և ուրիշ չը գիտեմ քանի տեսակ բան, դրասանդ, ծաղիկ և պտուղ — և արկղեր ու գզրոցներ, ո՞ գիտէ ի՞նչ — և դարձեալ ծաղիկ, դարձեալ դափնիք — ու նոր փուռներ, նոր պրսակներ, վերջը չեկաւ: Կարծես այս մարդիկը և այն լասիք (տիկնայք) որ սիրտերնին ի ձեռին ունին և ձեռքերնին քսակնին, կ'ըսէին աներման երգողին:

«Երկու ամիսէ ի վեր զմայլեցուցիր մեզ, վերացուցիր, յախշտակեցիր, հողւոյդ բոլոր յուզմունքն և սրբախիդ վայնասունը թափեցիր, մրմուռնջ կամ աղաղակ, ի հոսանս երկնանուագ դաշնակութեանց, թրթռացրնելով մեր սիրտերն և մեր զգայնութիւններն ողողելով յայլա վէտ ի վէտ հիանալի ձայնիդ որուն փոխ տուած էին թռչուններն՝ իրենց դայլայլիկը, առաւօտն իւր պայծառութիւնը, իրիկունն իւր նուաղուններն, և է՛ դի Ով կիանոսն՝ իւր մունչիւնը, երկինք՝ իր սահանայ ձայնը և ամպրոպք իրենց շանթը — առ՛ փոխարէն որքան որ կըրնաս»

Ու եթէ չամչնային աւելի պիտի տային:

Անտիպ Գործեր

ԳՐ. ՕՏԵԱՆ

Գրիգոր Օտեան (վահրամ), (1834—1887). Տասնեկնեքորդ դարուն ամենէն ուշագրտու հայը՝ քաղաքական, ազգային ու գրական երբեակ կեանքովը անմահացած:

Քաղաքական կեանքը անուանի եղած է պետական այն բառը:

Մ Ե Ր Պ Ո Ս Յ Ո Ր Ը

Երկնակամարին վրայ, երկինքի անսահման տարածութեան մէջ, երկու արեգակներ երբեք այնքան կապուտագեղ ու ձևագեղ անջրպետով մը բաժնուած չեն իրարմէ որքան արեգակնափառ այն երկու աշխարհները Եւրոպան և Ասիան, զորս կը բաժնէ Պոսֆոր: «Հո՛ն, սիրելի՛ս, հո՛ն կ'ուզեմ որ տանին զիս» կը հառաչէի հեռու Պոսֆորի ափերէն:

Երկու անգամ հեռացայ դրախտային իմ ծննդավայրէս: Երեսս Արեւելք կը դարձնէի՝ հեղո՛ւկ ակնարկովը զոր դիւթական իր ծննդավայր երկրին կը ձգէր Միննեօն: Կը հարցնէի կ'ոգէի Միննեօնին երգը. «Կը ճանչնա՞ք դուք այն երկիրը . . . » Իմ երգս, առարկային հարստութեամբը, աւելի հարուստ էր. աւելի՛ հարուստ արտասուքն ալ որ աչուրներէս վար կը հոսէր: «Հո՛ն, սիրելիս հոն կ'ուզեմ որ տանիք զիս:»

Ամէն անգամ որ հեռանամ մեր եղական ծննդավայրէն, ամէն անգամ աւելի սխրայի զայն կը գտնեմ: Բահաստեղծութեան գոյնը, կապոյտը. լուսաւորներու աստուածամերձ յատակին գոյնը, կապոյտը. խունկին վե-

պաշտօններով զոր վարեց արժանաւորապէս երկար ատեն, մանաւանդ այն դիրքով զոր զրաւեց Օսմանեան Աւագանիին մօտ, Միտհամ փաշայի օրով: Ժամանակակից Օսմանեան պատմութիւնը մատնանիչ կ'ընէ Օտեանի անունը իբր զլիաւոր հեղինակներէն մին Օսմանեան Սահմանադրութեան:

Ազգային կեանքը քառորդ դարու շրջան մը բոլորած է իբր խոհական վարիչ ազգային զանազան պաշտօնական մարմնոց, ժամանակակից հայ պատմութիւնն ալ իր՝ կարգին երախտապարտ կը մնայ յաւետ այս մեծ հայրենասէրին որ Հայոց Սահմանադրութեան հեղինակներէն մին եղած է:

Իսկ զրական կեանքը Թէև ոչ բեղմնաւոր, վասն զի և ոչ իսկ մէկ

րածխութիւնը, կապոյտը • լեռնային հարսերու արծաթ պսակի թելերուն գոյնը, կապոյտը • Ֆեռկիս մայն Գիհդ ծաղկին գոյնը, կապոյտը : Այդ կապոյտը ո՞ւր աւելի կապոյտ է քան հոն • ո՞վ, ի՞նչ աւելի կապոյտ է քան Պոսֆորը : Ու կ'երգեի • «Հո՛ն, սիրելի՛ս, հոն կ'ուզեմ որ տանիս զիս :»

Երբ առաջին անգամ հեռացայ Բիւզանդիոնէն, սիրտս փլաւ • աչուրներէս հեղեղներ իջան • նուազեցայ, երբ Քամայօնը Մօտան անցաւ : Մեր քաղաքին բոլոր գեղեցկութիւններէն Մօտա-Պուլունին կը գնահատէի, ու ա՛ն ալ որովհետեւ հոյակապ վերջալոյսի տեսարաններ կը պարզէր աչքիս առջև իրիկունը, ու գիշերը՝ փարօսին վրայ՝ լոյսի զմայլիկ նուազումներ : Սակայն ի՞նչ անդիմադրելի էր կապոյտին ձգողականութիւնը, երբ այն կապոյտէն, կապոյտ Պոսֆորէն հեռացայ : Պոսֆորէն հեռու, Պոսֆորի համար լացի : «Հո՛ն, սիրելի՛ս, հոն կ'ուզեմ որ տանին զիս :»

Կ'ըսէին, կը դրէին, կ'երգէին աշխարհի մէկ ծայրէն միւսը • «Քեղեցիկ է Պոսֆոր :» Երբեմն ես ալ՝ զդայուն այնքա՛ն գեղոյ, յաճախ ես ալ կ'ըսէի ինքնին • «Քեղեցիկ է Պոսֆոր :» Կը կարծէի սակայն որ աշխարհ ունի դեռ շատ ու շատ Պոսֆորներ • թէ Կոստանդնուպօլսէն

երկարաշունչ երկ թողած է • սակայն առօրեայ թերթերուն մէջ երեւցած ոսկեղէն գրութիւնները ցոյց կուտան թէ մին է մեր այն հազուագիւտ տաղանդաւոր գրագէտներէն որոնք երեւցած են տասնևիններորդ դարուն վերջին կիսուն, արդի հայ գրականութեան զարգացման շրջանին մէջ •

Չերազ շատ լաւ կը գնահատէ Օտեանի գրական արժանիքը, երբ կ'ըսէ •

«Հայ գրականութեան այս անկեալ վիճակին մէջ լաւ է որ մերթ ընդ մերթ ի տես գան այսպիսի գրութիւններ իբր մոլորեալ ճաճանչ մի բարձրագոյն գրականութեան :»

քանի մարդս հեռանայ՝ աշխարհ ա՛յնքան ըստ ամենայնի
կը գեղեցկանայ : Երբ Կոստանդնուպօլսէն հեռացայ , երբ
ուրիշ կապոյտ ջուրեր , երբ ուրիշ ճերմակ կայքեր . ուրիշ
երկիր և ուրիշ երկինք տեսայ , հառաչածայն յայնժամ
բացագանչեցի . « Հո՛ն , սիրելի՛ս , հոն կ'ուզէի որ տանին
զիս : »

Միջերկրականէն կուգաս : — Վերադարձն է . նաւը
Իշխանաց կղզիներուն մօտէն անցած է . կանանչ անշարժ
նաւեր այդ կղզիներն ալ՝ յարածածան ու յարաբոյր .
նաւը Ա.յ-Սթէֆանոյին առջև հասած է : Ռհ , հիանալի՛
գիշերային կերպարանքը Բիւզանդիոնին . աջդ ասիական
եղերքն է , ձախդ Եւրոպականը : Փարոս մը իւրաքանչիւր
եզերքին վրայ . աչք մը Սաիան ունի , աչք մը Եւրոպան :
Երկու աչքերը մէկ դէմք , մէկ կերպարանք կը կազմեն .
երկու աշխարհները մէկ հոգի մէկ մարմին կ'ըլլան : Ու
երկինք և երկիր իրարու կը միանան : Սև ծովէն աղջա-
մուղջը կը հոսի , կը խառնուի գիշերուան խաւարին .
ծիր կաթինէն լոյսը կը հոսի կը խառնուի փարոսներու
փողփողմանց : Ո՛չ լոյսէն , ոչ խաւարէն կը յաղթուի կա-
պոյտը Պոսֆորին . ընդհակառակը , անբաղդատելի ներ-
դաշնակութիւն մը յառաջ կուգայ գոյնի : Ու կը հարցնէ
մարդ ինքնին . « Գիշերը աւելի թէ ցորեկը գեղեցիկ է
այս աննման քաղաքը : » Սարայ-Պուռնիի և Ոսկեքաղա-
քին մէջտեղի մարմարէ յուշկապարիկը այդ ամէն գե-
ղեցկութեանց ու համադրութեանց իբրև անըջային հա-
մադրութիւն կը գերէ քեզ : Եւրոպայի մէջ գեղազիտա-
կան ա՛յսքան ներուժ հաճոյք առթող վայր մը գտի՛ր :

Ա՛հ , հաճոյք , անտարակոյս մեծ հաճոյք է նաւար-
կելը Միջերկրականին վրայ : Բնութեան գեղը հոն ալ
պատմութեան գեղով է կրկնաւորուած : Սթէնքը կ'ող-
ջունես , ուր այնքան հին հրաշակերտներ արուեստներու :

Բայց քաղաքակրթութիւնը որ Աթէնքէն գացած է Հռոմ , հարաւէ՛ն , երկայնութեանց օրէնքին հետեւելով՝ եկած է Աթէնք : Արդ , աւելի մեծ երկիւղածութեամբ կը համակուիս , երբ շոգենաւը Պիրէոնէն կ'ուղղուի դէպի հարաւ : Հոն է Նեղոսը 'սուիրական' անժանօթ իր ակունքով և անասնման իր բերնով , որուն ափունքին վրայ կանգնուած են առաջին յիշատակարանները ճարտարապետութեան . քանդակագիտութիւնը , հիմը գիտութեանց դասակարգութեան , հոն գտնուած է , և կիներ հոն ամէնէն առաջ ուսուցիչ հանդիսացած և աւագ գիտութիւնը ուսուցած է , դերահռչակն Հիւպատիա : Նաւը հրուանդանը կը դառնայ , դէպ արեւմուտք կը յառաջանայ : Ու հո՛ն , այդ ափերուն վրայ է «յաւխտենական քաղաք»ը , ա՛յն որ Աթէնքի քաղաքակրթութեան ժառանգորդը եղաւ , ինչպէս որ իրմէն ալ ժառանգեցին քաղաքներ այնքանի՛ , բովանդակ Եւրոպան : Յո՛յժ գեղեցիկ է արդարեւ մեծ այդ մայրաքաղաքն ալ , ըլներներու վրայ կառուցուած , Հռոմը , Բիւզանդիոնի նման : Այլ երկու աշխարհներ բաժնող , երկու քաղաքակրթութեանց միջակէտը մե՛ր քաղաքն է . բովանդակ երկրագունտին վրայ Պոսֆոր միակ է : Իր ափերէն ո՛րքան հեռանաս , ա՛յնքան ի խորոց կը հառաչես ու կ'աղաչես . «Հո՛ն , սիրելի՛ս , հոն կ'ուզեմ որ տանին զիս :»

Մասիս

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԵՒ ԱՐԱԳԱԾԻ ԱՌՁԵԻ

Մասիսը կը բարձրանայ էջմիածնի դէպի արևելքը, մեր առջև, երևա երեսի: Նստած է հրաշալի փառաւորութեամբ: լայնածաւալ տրամագիծով մը, հաստատ խարխիսի վրայ և ձիւնապատ: Մէկ օրուայ ձամբայ ունինք մէջէրնիս, և սակայն այնքան մօտիկ կ'երևի որ քով քովի դրացի ենք կարծես: Ամէն քայլափոխի աչքի առջև ունինք զինքը, մեծախա՛ռ և վսեմաշուք: Սաղաղ բազմած է, յաւխտենապէս խաղաղ: Բայց չորայ որ խարուիք, իր լանձքին սակ զինուկրտու ամբ մը ունի: Ատ է որ կը ցուցնէ թէ այդ յանկրճական փառանք ինչպէս երբևէն զայրոյթով ցնցուած՝ դուրս մայթքեր է իր կրակէ, փրփուրներն ալ խնդդած է հէք Ակոսին:

Իր կաշքին վրայ փոքր Մասիսը, նորատի աղջիկ մը մօրը կրթնած քնքչօրէն: Արևի մէջ պայծառազեղ են երկուքն ալ: Ու երևակայեցէ՛ք զփրկնք, քարտէսի վրայ նշանակուած սև կէտեր չեն ալ, հողէ, քարէ, հանքային չգիտեմ ի՞նչ նիւթերէ զօնուումներ, կրակէ ալիքներով, որ բնութեան սքանչելիարծ ձեռքը, իր քմահաճոյքի մէկ բապէին մէջ հարթ յատակին վրայ դրած է ատոնք իբրև յաւխտենական կոթողներ՝ վկայ ըլլալու տարիներու անցքին, մարդկային յաջորդական սերունդներու, աւերքներու, քանդումներու, ծնունդներու և կանդումներու: Իրենց քղանցքին տակ, իրենց ոտքերուն ստորտար փրշրուած են դարերը: Ոչնչութիւններ պարզուած, և սակայն հսկայ Մասիսը իր գեղանի աղջկանը հետ միշտ նորատի, միշտ ժիւնոյն տարիքին մէջ կը կանդնի իր հիմքերուն վրայ հպարտ և յոխորտ: Նկարագրելն անկարելի է, նկարելն ալ անկարելի, մարդկային արուեստէ և ուժերէ գեր ի վեր: Ո՞վ կրնայ ըսել թէ, բնութեան այլևայլ երևոյթ-

ներուն տակ, ինչպէս կը նայի ան, գոռոզ ու վէս • ինչպէս կը սիրէ քղանցքները իր ոտքերուն վրայ երբ հիւսիսը կը փչէ ձիւնախառն • ինչպէս կը տարածուի շքեղապանծ երբ ամպերը կը կտրատուին իր գլխուն վերեւ ու շանթը կը թռչի հրեղէն սլացքով : Միայն հոգեկան պայման մը կայ որ կրնայ արդարանալ իր առջևը • ու աս է .— կը դիտես զինքը վերէն վար, ոտքէն մինչև գլուխը, և անհուն խռովքէ մը մէջ կը դողդղաս իր առջևը աննշան կէտի մը պէս, համը ու անշշունչ :

Էջմիածնի հիւսիս — արեւմտեան կեղմն է Արագածը աւելի լայն նստուածքով մը • իր լանջքին վրայ կը կանդնին գլուխներ, մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, — ստինքներ սպիտակ կուրծքի վրայ : Դրացի է մեզի, ու աղուորիկ դրացի : Մասիսի դէմ առ դէմ կեցած, տարբեր, բոլորովին տարբեր տպաւորութիւն կը թողու վրադ, ան՝ պատկառանքն ու երկիւղածութիւնը, աս՝ գեղեցկութեան յուզմունքը, ան՝ խոժոռ ծերունիի մը դաժանութիւնը • աս՝ արեւելեան հուրիի մը պչրանքը • անոր կը նայիս դողդղանքով, ասոր կը պչնուս խայտանքով, խնձղանքով :

Արագածէն քիչ մը ասդին է, իր գծին ու քղանցքներուն կից, Արայի լեւը, գեղեցիկ իր համահուն իշխանին պէս, ծաղիկներու ու բուրումի աշխարհ մայիսի արեգակին տակ : Երկուքին մէջտեղէն կ'անցնի Քառաղը : Ատկէ շատ անդին են, հորիզոնին մշուշին տակ, Գեղամի սարերն ու գեղամի ծովակը : Արարչութեան յատուկ շնորհք մը, առանձին աշխատանք մը դրուած է Արարատի այդ հրաշալիքներուն վրայ, որոնք իրենց մէկ սեփական դրոշմը կը հանդիսացնեն բնութեան այդ տեսարաններուն մէջ :

Արեւելք, օրաքերք

ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԵԶԵՐՈՎԻ ԱՆՑՔԸ. — ՓԻՒԹԿԻ Ս. ԳԷՈՐԳ ԿԱՍ Ս. ԲԵՐՆԱՐԴՈՍ ՆԱՅՈՑ

Եզերովն ամենաբարձրագոյն գազաթն է Արտու լեռներուն : Արտու լեռները կցուած են Մոկաց լեռներուն . Մոկաց լեռները Շատախու լեռներուն . Շատախու լեռները Նորաուզի լեռներուն . Նորաուզի լեռները Կորդուաց մեծ լեռնաշղթային , որ կը կանգնի Թուրքիոյ և Պարսկաստանի սահմաններուն վրայ , և անթիւ ճիւղեր կ'արձակէ երկու երկիրներուն մէջ միանգամայն : Տիգրիս գետի բոլոր ակերն ատոնցմէ կը բղխին : Բայց այդ ամէնն Եզերովի արեւելեան կողմն են . իսկ արեւմուտքէն Եզերովի շարքը կը կազմեն Կարճկանու լեռները . Կարճկանու լեռները շարունակութիւն են Պիթլիսի լեռներուն . Պիթլիսի լեռները Մշոյ լեռներուն . Մշոյ լեռները Տաւրոսի լեռներուն որ Կորդուաց չափ մեծ լեռնադօտի մէ և կը տարածուի այլ և այլ ուղղութիւններով բոլոր Փոքր Ասիա : Ճորոխ և Երասխն ալ ատոնցմէ ծագում կ'առնուն , թո՛ղ անթիւ անհամար վտրք գետեր ու գետակներ : Եզերովի ճիւղ առջեւն է Նիւսիսի կողմէն Վանայ ծովն , որոյ ոլորտքը շարունակ լեռներուն մէջէն միայն Սիւխան է որ ղինքը կը գերազանցէ բարձրութեամբ և վեհութեամբ , միայն թէ Սիւխան ինքն առանձինն լեռ մ'է որ ծայրը կոտրած սրանկիւն կոթողի մը պէս վեր կը զցուի առանց թեւի և բաղուկի . մինչ Եզերովն աջէն ու ձախէն երկայնաշար տարածուող մեծ գօտիի բարձրագոյն մէկ գազաթն է որ վսեմօրէն կը նայի իրմէ վար մնացած միւս կոներուն վրայ որք զանազան բարձրութիւններով կը տընկուին իր երկու կողմը :

Բայց Եզերովը՝ հակառակ իր տաան հազար ոտք բարձրութեանն , ինչ որ ղինքը կը հաւասարցնէ Վարազայ և

ոչինչ հուշագ ստոր կը թողու քան զՍիփան, թերեւս տյն-
քան կարեւորութիւն մը չունենար, եթէ չգտնուէր Վա-
հայ և Մսկայ միջու և միակ անոյքն չլինէր այդ անազին
լեռնուղւոյն : Իսկ թէ ինչ կը նշանակէ այդ անոյքը, պէտք
է փութանք ըսելու թէ Փիւթկի Ս. Գէորգ մեծահոգակ
վանքն այս լեռան վրայ է, Փութկի Ս. Գէորգ՝ որ ունի
այն դիրքն այն կարեւորութիւնն և ազդեցութիւնն ինչ
որ Ս. Բերնարդոս վանքն Մոն-Պլանի վրայ որ Ալպեանց
բարձրագոյն գագաթն է, ինչպէս մեր Եզերովը Մսկայ,
Շատախու, Նորտուզի, Կարձկանի ևւայլն լեռներուն : Ա-
ւելորդ է ըսել ուրեմն թէ յաւիտենապէս իր գլուխը ճեր-
մակ է : Յունիսի, յաւիտի տաքերն իսկ չեն կարող ըս-
պառել անոր վրայի ձիւները, թէպէտ բաւական կը պակ-
սեցնեն : Յունիսի Տին երբ վրայէն պիտի անցնէինք, միա-
պաղաղ զանգուածի պէս ձիւնով ծածկուած էր : Բայց
զի վերջապէս ամառն էր գագաթը միայն այդ վիճակն
ունէր, մինչ երկու կողերն ի վար ձիւնահային գոյացած
սառնորակ ջրոյ հոսանքներ կը սահէին թաւալզլոր, մերթ
ժխորալից մերթ մեղմաձայն խոխոջներով :

Սակայն Յունիսի Տ կամ ամառուան պորան իսկ ա-
պահովութիւն չէ Եզերովի գագաթան փոթորիկնորուն դէժ
որ կայծակի արագութեամբ կը պայթին յանկարծ, մինչ
ամէն կողմ պարզ ու արև է, և անուկի վտանգներու
կ'ենթարկեն ճանապարհորդներն եթէ դժբախտութիւն ու-
նենան այդ ատեն լեռան վրայ գտնուելու : Ուստի եթէ
ոչ ճիշդ ձմրան չափ բայց վերջապէս դարձեալ բաւական
մեծ կարեւորութիւն ունի Փիւթկի Ս. Գէորգ նաև ա-
մառուան մէջ, այնպէս որ անոր օգագուշակ աքաղաղը
միշտ իր զօրութիւնը կակ հրաշալի ազդեցութիւնը կը
պահէ թէ՛ ձմեռն և թէ ամառը : Որուն համար ճամբորդ-
ները չեն համարձակիր Եզերովի անցքը փորձել առանց
Ս. Գէորգի աքաղաղէն պատգամ առնելու :

Անգիտակից իր գուշակիչ զօրութեան խեղճ աքաղաղն որ մասնաւոր խնամքով և մեծ յարգանքով կը պահուի այդ Հայկական Ս. Բեռնարդոս վանքին մէջ, ուրիշ կերպով չի տար պատգամը, բայց եթէ խօսելով որոշեալ ատենին կամ չխօսելով: Եթէ լուռ մնայ, նշան է թէ փոթորիկ մը անխուափելի է և այդ ատեն օրերով հարիւրաւոր ճամբորդներ վանքը կը սպասեն, մինչև որ աքաղաղի պատգամն ընդունին: Իսկ վանքը ձրի կը կերակրէ զամենքն, ի՞նչ ազդէ որ ըլլան: Զմեռուան ամենազօրեակ օրերուն մէջ անգամ եթէ խօսած է, ճամբորդներն աներկիւղ ճամբայ կ'ելնեն, թէպէտ նոյն իսկ վանքէն մեկնած ատեննին ձիւն տեղայ կամ բուք ընէ: Ս. յնքան մեծ է բոլոր այդ կողմերու ընակչայ հաւատքն աքաղաղին այս գուշակիչ կարողութեան վրայ, զոր պարզապէս գերբնական հրաշք կը համարին, որ ոչ ոք, Հայ կամ այլ ազգ, չի համարձակիր երբեք արհամարհել զայն: Բիւրաւոր օրինակներ կը պատմուին այդպիսի յանդգնութեան մը պատիժը քաջազներու: Եթէ ծիծեռնակներու, հաւերու, կատուներու ևլն. ընաղդը կը ճանչնայ դիտութիւնն իբր կարող յաջորդ օրուան օդը գուշակելու, ինչպէս կը յիշուին նոյն իսկ ընական աշխարհադրութեան դասագրքերու մէջն անգամ, ինչո՞ւ մերժել աքաղաղի օգագուշակ կարողութիւնը, զոր նախապատմական ժամանակներէ ի վեր կը ճանչնայ այդ կողմերու անուս ժողովուրդը դարաւոր փորձառութեամբ:

Բիւզակցիոն, օրաթերթ

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Մարկոս Նարանեան. Ռուսցիչ Ընդհ. Պատմութեան և հրապարակագիր. զանազան օրաթերթերու՝ մասնաւորապէս Արեւելք օրագրին, ամէնէն գործունեայ աշխատակիցներէն մին, որոյ հայրենի երկրին նկարագրական յօդուածները տեղագրական ճշդութիւն և մասնաւոր շահեկանութիւն ունին:

Ս Ր Ճ Ա Ր Ա Ն Ը

(Ա Ր Ե Ի Ե Լ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ)

Իսկապէս արևելեան ստեղծագործութիւն, զոր Արևմուտք, ընտրողական և հետաքրքիր, փոխ առաւ Արևելքէն բայց եղծանեց՝ — Սրճարանը մէկն է այն սկզբնատիպ «հաստատութիւն»ներէն որոնք նկարչագեղ և կենդանի եղանակով մը կը բնորոշեն ցեղի մը ոգին և քաղաքակրթութիւնը :

Ով որ ապրած է Արևելքի մէջ, — թուրք Արևելքին մէջ մանաւանդ, — և անմոռանալի ժամեր անցուցած պըղտիկ սրճարաններու մթնոլորտին մէջ, որոնք կ'երազեն բարձր ու տերեւախիտ ծառերու խողաղահան ստուերին տակ կամ կ'զմայլին յարափոփոխ և մշանջկնական տեսարանին առջև ծովուն, — որ աստուածային Վասիտըն է յաճախ կամ Մարմարան հրաշագեղ, — այդ մարդը գիտէ, կ'զգայ խորապէս թէ այս «հաստատութիւն»ը անհասի մը և վայրկեանի մը գործը չէ, թէ ան յղացուած և իրագործուած է ամբողջ մարդկային ցեղի մը հաւաքակրէն հողիէն, որ ստուեր է անոր իսկատիպ ոճը, վաւերական դրոշմը իր դարաւոր հողերանութեանն ու բնազդներուն խորունկ ճարտարապետութեան :

Հաւատարմօրէն և մտերմօրէն, Սրճարանը կը պատմէ նեքեաթունակ Արևելքը բոլոր, — իր վարքն ու բարքը, իր բանաստեղծութիւնն ու կեանքի իմաստասիրութիւնը :

Ու երկու բառեր կ'ըսեն կարծեմ բոլոր այս բաները, — իմաստներու կծիկի մը պէս խիտ ու խորունկ, պատկերներու պէս թելադրական բառեր, որոնք ոչ մէկ լեզուի մէջ ունին իրենց համապատասխանները, այնքան ցեղայատուկ են, այնքան հողածին, այնքան բնաշխարհիկ . . . :

Քե՛ջՖ և թիբեաֆի բառե՛րը : Նայեցէ՛ք սա ապրող , սա ապրած բառերուն . մտմտացէ՛ք վրանին ձեր Արևելքցիի հոգիովը , զոր անոնք կը զրուցեն , կը բացատրեն ամէնէն գիտնական մատեաններէն աւելի . . . :

Փախչիլ մաայլ ու խրթին փիլիսոփայութիւններէ՛ ապաւինելու համար փիլիսոփայութեանց ամէնէն պարզին , ամէնէն խնաստուհին ծոցը , այն որ կ'ըսէ մեզ վայելել ներկայ կենդանի վայրկեանը , — հասած պտուղի մը պէս զեղեցիկ , — զայն ճաշակել մինչև կուտը , զայն ծծել քամել . մինչև յետին կաթիլը հիւթին . չի հաւաչել անդարմանելի ու բաղձական Յնդեային ետեէն և բնաւ չի խորհիլ վաղուան վրայ , անձանօթ և ճակատադրական վաղուան վրայ . ապրիլ որը օրին , միօրինակ օրերու մեզմօրօր հոսանքն ի վար կրթալ , տարուիլ աւելի . անքոյթ և ընտանի ախաւնքներու երկայնքէն , վաճառքաւոր յորձանքներէ , փոթորիկներէ հեռու , մինչև որ հասնիս մահուան մեծ զաւահանգիտար . սիրոյ և կերուխումի վայելքներ մարտոզ , մեզկ երազանքի և լայնահիստ հանգիստի կէս-մրտիտ ժամե՛ր , զգլխիչ ծուխի կապոյտ ամպերով ամբարձիկ . — Է՛ՖՖ բառը միթէ չրսե՛ր բոլոր այս բաները , և շատ մը ուրիշներ ևս , նոյնքան արեւելեան :

Արևելքցիին յատուկ սովորամոլութիւնը , բանի մը կամաց կամաց վարժուելու , չարեչաւ և անկէ ա՛լ չի կարենալ զատուելու ցեղային ունակութիւնը , նորութենէ ու շարժումէ իր բնազդական խորշանքը , պարզ ու բնական , գծուած ու սահմանուած կեանքի իր վաղնջական սէրը , իր հոգեպինդ վարումը հայրենի հողին , ծննդավայրի անձերուն և իրերուն , — թիբեաֆի խորհրդաւոր բառը միթէ չրսե՛ր բոլոր ասոնք , եթէ ընդարձակենք անոր խնաստը սրճարանի նեղ շրջանակէն դուրս , եթէ իր նշանակած հոգեկան մասնաւոր վիճակը նկատենք իբր

բազմադիմի արտայայտութիւններէն մէկը ազգային խորունկ բնազդի մը, մի՛ իր իսկութեանն և սկզբին, այլազան՝ իր ձևերուն մէջ :

Սրճարան, ֆեճ, քիրեաֆի, — արևելեան հարազատ երրորդութիւն, անբաժանելի միութիւն միջավայրի, հոգեկան վիճակի, տիպարի : Սրճարանը ստեղծուեցաւ ազգային ֆեյճին համար, և ծնունդ տուաւ մարդկային նոր ու շահեկան տեսակի մը, քիրեաֆին :

Ուրիշ ո՞ր երկրի մէջ կրնար ծնիլ և անմահօրէն ապրիլ Սրճարանին պէս հասարակաց վայր մը, եթէ ոչ Արևելքի մէջ ուր կեանքը նախնական է, նահապետական, վերածուած իր պարզագոյն ձևին, աստիճանափակուած տարրական անհրաժեշտ շարժումներուն, ուր պարզ ու կոշտ աշխատութիւնը դանդաղօրէն կը վարէ կը տանի կեանքը — եղերու լծուած դեղջուկ սայլակի մը պէս, — աւանդութեան և վարժութեան հարթ ու ակօսուած ճամբաներէն, անցունց և անարկած, — ուր ի մի բան, չեն թափանցած քաղաքակրթութեան գիւտերն ու կատարելագործութիւնները և չեն տկարացուցած բնութեան և բնական կեանքի սէրը, որ այնքան հզօր է և խորարմատ, արևելքցիին հոգւոյն մէջ :

Կարելի՞ է երևակայել մարդկային հաւաքման ուրիշ վայր մը որ կարենար, սրճարանին չափ, դո՛հացում տալ՝ մէկ կողմանէ՝ արևելեան հողիին մարդկայնօրէն ընդհանուր, և միւս կողմանէ՝ ցեղայնօրէն աւանձնայատուկ, ինքներկրեայ պէտքերուն :

Իբրև մարդ, Արևելքցին ունի ընկերականութեան սէրը, մարդկային հաւաքումներու տիեզերական պէտքը, բայց նուազ աշխոյժ ու անհանդարտ քան իր Արևմուտքի եղբայրը, որ աղմուկի և շարժման մոլի, մշտայոյզ ամբոխներու մէջ իր տարրին մէջն է՝ ինչպէս ձուկը յարա-

ծուփ ծովուն, — անկէ նուազ հաղորդական ու լեզուանի, սիրահար ինքնամիտման և լուսաւէտ խաղաղութեան՝ արեւելքցին պէտք ունէր սրճարանի նման տեղի մը, ուր մարդկային համախմբումը անձուկ սահմաններու մէջ կը մնայ փակուած, ուր անգամուկը թերաստուերի մը պէս խորհրդապահ է և աւելի իրերէն ու առարկաներէն կ'ելլայ, — կլկլակ, ափսէ, տապալի — ուր մենաւոր անկիւններ կան մօքայի և ծխախոտի տարերքով երկար երազանքներու, մտերմական խաղաղ խօսակցութեանց, թուղթի կամ նարտի անվերջանալի սակերու, այնքան հաճ ու նպաստաւոր, — ուր խումբերը իրարու չեն խառնուիր և ուր, վերջապէս, մարդ կ'ունենայ մենութեան և բազմութեան ներդաշնակօրէն հաշտ, սերտօրէն զօղուած ու միաւորուած զգայութիւններ :

Տունէն դուրս, Արեւելքցին ընկերական կեանքը կ'անցնի սրճարանին մէջ : Ինքզինքը անգիտացող այս խմաստունը, որ կը գործէ ու կը շարժի այնչափ որչափ պէտք է ճշգրտիւ՝ իր առօրեայ աշխատանքին և կեանքի անհրաժեշտ պարտաւորութեանց կատարման համար, այս տարրական գործունէութենէն դուրս ուրիշ բան չի փրնտուեր բայց եթէ հանդիստ, միմիայն հանդիստ, ուրիշ բանի չի ցանկար բայց եթէ նստուկ կամ ընկողմանած ժամերուն երանաւէտ խաղաղութեանը, — ճիշտ հակառակը Արեւմուտքի մարդուն, որ կարծես շարժումի դէէն ըմբռնեալ, կ'երերայ կը յուզի անդադար, յաճախ քաղաքակիրթ կենցաղին բազմազան պահանջներուն համար, և շատ անգամ ալ լո՛կ շարժելու հաճոյքին համար :

Արեւելքի սրճարաններն իրենք : Կը փորձուիմ զանոնք դասելու բարենպատակ, մարդասիրական հաստատութեանց կարգը : Միթէ չե՞ն այն ասպնջական վայրերը, այն բարի ծուլաբանները ուր երկարօրէն կը խնամուի,

կը փայփայուի ու կ'օրօրուի անբուժելի, քաղցր ու հեշտաւէտ հիւանդութիւնը Արեւելքցիին — խոր ծուլութիւնը . . . :

Աշխարհի մէջ կա՞յ մի՞թէ երջանկութիւն մը բաղդատելի երջանկութեանը Արեւելքցիին որ առտուն զործի գացած կամ իրիկուան յոգնութեամբ բեռնաւոր՝ անկէ վերադարձած ատեն, կը մտնայ անշշուկ՝ պզտիկ մտերիմ սրճարանը, զոր նախախնամութիւնը դրած է իր ամենօրեայ ճամբուն վրայ, խմելու համար քեօարար սուրճի աւանդական զաւաթը, ծխելու համար դաշնակաւոր և ցնդական հոգիով նարգիլակը, և մանաւանդ, և մանաւանդ հանգչելու համար . . . : Հանգչի՛լ, մի՞թէ այս չէ՞ Արեւելքցիին գլխաւոր մտահոգութիւնը, ի՛նչ կ'ըսեմ, մեծագոյն, սիրելագոյն սքաղումը :

Երբ մարդ կը դիտէ սրճարանի մը անդորրաւէտ և խոկուն կեանքը, ու կը տեսնայ ֆիզիքական և հոգեկան անճնդիւր գոհունակութեամբ յուլացած թմրած այդ մարդերը, իրենց դէմքերուն արտայայտութիւնը քնէած խաղաղութեան և սրտաչոզ խորին երանութեան, — երազով, պիտի ըսէի՝ ծուխով քողարկուած այդ աչքերը, այդ դանդաղ ու կշռուած շարժումները, կարծես բեռնաւոր հանդարտ ու լուրջ երջանկութեան մը ներքին ծանրութեամբը — մարդ կ'զգայ որ ատենք լիակատարօրէն և ամբողջովին երջանիկ արարածներ են, որոնք կը շնչեն իրենց բովանդակ էութեանը ամէնէն աւելի նպաստաւոր ու յարմար միջնորդատին մէջ :

Եիբակ

ՄԻՔԱՅԵԼ ԿԻՒՐՃԵԱՆ

Միքայէլ Ս. Կիւրճեան. Գրադէտ ու բանաստեղծ. ունի բազմաթիւ արձակ քերթուածներ որ իսկատիպ դրոշմ կը կրեն. ամենամեծ հրապոյր մ'ունին այն պատկերաւից տեսարանները՝ որով զիտէ ներկայացնել, այնքան նկարուն ոճով, Արեւելքի մարդիկը ու իրերը :

Յ Բ Ա Ն Ս Ա Յ Ի Ո Յ Ա Ջ Գ. Հ Ա Ն Դ Է Ս Ը

Ազգային հանդէսներն ազգօգուտ հանդէսներ են :
 Նախ՝ մեծ ու պզտիկ ամէնուն համար զուարճութիւն
 մըն են . ընդհանրապէս շատ տխուր է կեանքը և մաս-
 հաւորապէս սոսկական մարդոց կեանքը շատ միաձև է .
 աօներն ու հանդէսներն փոփոխութիւն կը բերեն կենաց
 մէջ ու սրտին տխրութիւնը կը փարատեն . Պերիկղէս՝
 հայրենեաց բարիքներէն մէկը կը համարէր որ Աթէնքի
 մէջ ազգային հանդէսներ էին հաստատուած «քաղցրա-
 ցնելու համար , կ'ըսէ , մեր սիրտերուն մէջ կենաց մեղա-
 մաղձութիւնը» : Երկրորդ՝ այս հանդէսներուն մէջ անբողջ
 ազգի մը հոգին կը թրթռայ , քաղաքակրթեաց ազգաց
 մէջ հաստատուած են անոնք մեծ օրուան մը յիշատակը
 յաւերժացնելու համար և բազում այն է որ այն մեծ օրը
 մեծ սկզբունքի մը արտայայտութիւնն է : Գաղղիացւոց
 ընտրած ազգային հանդիսի օրը Պասթիլի անկման տա-
 բեղարձի օրն է , Պասթիլ՝ երկու անիծեաց այն բանար ,
 ինչպէս կ'ըսէ Միշլէ . որ շատ անմեղներու ալ տանջա-
 նարանն եղած էր : Թերևս մենք Հայերս ալ մասնաւոր
 իրաւունք ունենանք սոսկումով յիշելու զայն . մանաւանդ
 եթէ իրաւ է որ Երկաթէ Դիմակին անիծախանց գաղտ-
 նիքը կարենայ լուծուիլ մեր Աւետիք Պատրիարքին պատ-
 մութեամբ : Այլ ինչ ալ ըլլայ Պասթիլի ամման կամ անկման
 խեղճան օգուտն ու ազդեցութիւնը . Գաղղիաց մեծ յեղա-
 փոխութեան պատմութեանը մէջ աւելի զեղեցիկ օր մըն էր
 անտարակոյս այն օրը ուր մէկ գիշերուան մէջ , կղերն ու
 ազնուականութիւնը , դաւառներն ու քաղաքները , իրա-
 րու նախանձընդէմ հայրենասիրութեամբ , կը մերկանային
 իրենց աւանդական ու արիական իրաւունքները որոնք
 դարեր անցնելով անիրաւութիւններ եղած էին , և ազ-

գային երեսփոխանութիւնն ալ թագաւորին աչքին տակ
կը նուիրագործէր ու կը կատարելագործէր ընկերական
արդարութեան ու ազգային հաւասարութեան այն մեծ
գործը : Այս օրը Գաղղիոյ թագաւորը կոչուեցաւ «Գաղ-
ղիական ազատութեան վերանորոգող» : Չը գիտեմ, եթէ
Գաղղիացի ըլլայի, օգոստոսի 4րդ օրը՝ ազգային հան-
դէսի օր ընել տալու կ'աշխատէի՞ արդեօք, իրեւ օր մը՝
արեան բիծէ ազատ և միայն մեծ սկզբունք մը իւ-
րացնելու նուիրուած : Այլ յուլիսի 14րդ օրը Պասթիլի
անկումէն զատ ուրիշ գեղեցիկ թուականի մըն ալ կը
պատասխանէ :

1790 յուլիսի 14րդ օրը արդարեւ մեծ օր մը եղաւ
Ֆրանսայի համար : Փողովրդեան զանազան դասերն և
երկրին զանազան գաւառներն ու քաղաքներն որ մինչև
յեղափոխութեան տարին բարքով, օրէնքներով, իրա-
ւունքներով, շահերով տարբերեալ ու բաժանեալ էին
իրարմէ, այն օրը միացան ի համըոյր եղբայրութեան .
ա՛լ չը մնաց դաս ու գաւառ, այլ ազգ մը ու հայրենիք :
Ազատութեան հզօր փշմամբ հողեւորած ամէնքն ալ,
իւրաքանչիւր ոք ընդհանուրին մէջ խառնուած ու այն-
քան մեծցած կը զգար ինքզինքը սրչափ մեծ ու հզօր է
հայրենիքը : Սիրոյ և խաղաղութեան ձայնն հնչեր էր
Ֆրանսայի մէկ ծայրէն միւս ծայրը : Ամէն կողմէ թափե-
ցան ի Փարիզ . երկաթուղի չը կար այն ատեն, ով որ
կրնար կառքով ու ձիով եկաւ, ուրիշներ ոտքով եկան,
ժպիտն ի շրթունք ու երգն ի բերան, ութսունամեայ
ծերունիներ կը տեսնուէին արքունի պողոտաներուն վը-
րայ, կրսէ պատմագիր մը, որ օրը 12 ժամ ճամբայ կ'ը-
նէին ոտքով : Եկան լեցուեցան ի Փարիզ : Չորս հարիւր
հազար հոգի էին Արէսեան դաշտին մէջ : Ներկայ էր
թագաւորը, թագուհին, արքայազուն մանուկը, զօրքը,

կղերը, ազնուականութիւնը, ժողովուրդը, գաւառներն
ու քաղաքները. ամէնքն ալ երգուեցան ազգին համար,
թագաւորին համար, ամէնուն ալ սիրտը միմիայն բանի
մը համար կը բարախէր, ազգային միութիւն. աւանդ,
և այն օր մըն է եղեր միայն. սիրտերն հեռուէն իրարու
մօտենալ կը փափաքէին, երբ մօտեցան՝ միացան ու ապա
հորէն բաժնուեցան, աշխարհի էն աղէկ բաները այսպէս
կը վերջանան: Այլ այս անտարակուսելի է որ այն օրը
Գաղղիոյ յեղափոխութեան ամէնէն պայծառ օրն եղաւ:

Այսպէս ահա երէկուան հանդէսին երկու յիշատակը
ի մի խառնուած էին: Հիմա այն կրկին յիշատակը տօ-
նելու համար ոչ թէ չորս հարիւր հազար այլ մէկ քանի
միլիոն մարդ է որ կը մասնակցի հանդէսին: Ով որ Բարիդ
չէ տեսած հասարակ օր, չը կրնար երևակայել թէ ի՛նչ
կ'ըլլայ հանդէսի օր. ով որ տեսած է, նա ալ չը կրնար
երևակայել: Երբ նկարագրել պէտք ըլլայ՝ մարդուն դրիչը
կիցնայ ձեռքէն:

Անիպ Գործեր

ԳՐ. ՕՏԵԱՆ



Ա Ս Պ Ա Ս Ի Ա

Մըտքիս առջև կուգայ պատկերըդ երբեմն,
 Ապասի'ա : Մերթ բնակաւէտ վայրերո'ւ
 Մէջ կը շողայ փայլակնօրէն ինձ՝ ուրիշ
 Դէմքերու վրայ, մերթ ամայի դաշտաց մէջ
 Պայծառ օրով, կամ լուռումունջ աստղերով,
 Կարծես անուշ նըլազներէ արթնցած՝
 Սանճուկելու դարձեալ յօժար հոգւոյս մէջ
 Կը ցաթէ՞ այն սիրուն տեսիլն հրաշագեղ :
 Մըքան ես զայն պաշտեցի, ո՞վ աստուածներ :
 Եւ ի՞նչպէս օր մ'էր բերկրութիւնս ու տանջանքս :
 Եւ երբեք չեմ ըզգար որ բլո'ւրը ծաղկած
 Սըփռէ իր բոյրն, ու ծաղիկները խնկե'ն
 Քաղքին գուհներն, եւ ես ըզքեզ չըտեսնե'մ
 Դարձեալ այնպէս ինչպէս էիր դուն այն օրն,
 Երբ քաշուած ներս յարկերուդ մէջ շտրհաշուք
 Գարնային նոր ծաղիկներու բուրումով
 Բոլորովին պատարուն, մութ մանիշա'կ
 Գոյնով ըզգեստ հագած, ինձի երևցաւ
 Հրեշտակային դէմքըդ • կշտովրդ ծըռած
 Ձինջ մորթերու վրայ, և զանխո'ւլ հեշտանքով
 Երջապատուած, երբ դուն, վարպե'տ հրապուրիչ,

Հայր Արտէն վրդ. Ղազիկեան. Վենետիկի Մխիթարեանց
 Ուխտէն, որոյ գրադէտ ու կարող միաբաններէն մին է իր մատենագրա-
 կամ ու բանասիրական երկասիրութիւններովը :

Երիտասարդ վարդապետը բաւական յաջողութեամբ Թարգմանած է
 չափական աշխարհաբարով Ֆրանսուա Գորէի, Լէորարտիի, Գարսէն
 Սիլվայի հատընտիր քերթուածներէն զանազան կտորներ, և վերջերս
 ալ Լատին մեծ քերթող Վիրգիլիոսի Ենէականը սկսաւ Թարգ-
 մանել չափական անյանգ աշխարհաբարով, ինչ որ նորութիւն
 մը եղաւ հայ գրականութեան մէջ. վասն զի մինչև ցարդ իր նա-

Կը դրոշմէիր տաքուկ հնչուն համբոյրներ
Մանկիկներուդ շրթներուն վրայ կըլորիկ,
Կարկառելով քու ձիւնափայլ պարանոցդ,
Ու դուն զանոնք՝ անտեղեակ քու հնարքներուդ՝
Կը սեղմէիր շնորհագեղ գոգարը ձեռքով
Քու ցանկալի ու ծըլարուն ծոցիդ վրայ :
Իմ մտածմանըս նոր երկինք, նոր երկիր
Ու աստուածային գրեթէ ճաճանչ մ'երեցաւ :
Ս.յապէս բազուկդ՝ իմ ոչ անգէն կողիս մէջ
Փըքինն ու թգի՞ն մըխեց, զոր ես մըրնչելով
Հոն հարրատուած կրեցի ապա՝ մինչև որ
Նոյն օրն երկու անգամ արևը դարձաւ :

Գեղեցկութիւնդ, ո՞վ կին, մտքիս երեցաւ
Աստուածայի՛ն ճաճանչ : Արդիւնք նրմանակ
Կ'ունենան գեղն ու քաղցրաճայն նըւագներն,
Որոնք յաճախ ի վեր հանել կը թըլին
Սորախորհուրդ գաղանխքն անխուլ Նլիսեանց :
Ոոց մահացուն կը դիտէ պիշ կաթոգին
Իր մըտքին դուստրը՝ սիրատարի գաղափարն,
Որ Ոլիմբեայ մեծ մասն իր մէջ կ'ընդգոգէ,
Բոլորովին դէմքով, կերպով ու խօսքով
Նրման կընոջ՝ զոր ըզգլխած տարիածուն
Կը համարի պիշ կաթոգնիլ ու սիրել :
Արդ մարմնական ամուլութեանց մէջ անգամ
Ան և ոչ աս կ'երկրպագէ, կը խնդրէ :

խընթացը շունէր . թէև հնուժեանց ամէնէն մեծ քերթողներէն ոմանց
հոյակապ գլուխ-գործոցներէն Թարգմանութիւններ եղած են գրաբար, ոս-
կեղինիկ լեզուաւ, բայց ոչ ոք մեր Թարգմանիչներէն, փորձ մը ըրած էր
ցարդ անոնցմէ գոնէ մաս մը աշխարհարար Թարգմանելու :

Հայր Արսէն վարդապետին այս ձեռնարկը, թէև նախափորձ, բայց
իր շահեկանութիւնը ունի, վասնզի եկաւ գործնականապէս հաստատել

Կը զայրանայ փոխանակուած իրերուն
Հուսկ ճանչնալով վրէպն . ու ստէպ կինն
Յանիրաւի կը մեղադրէ : Բի՛չ անգամ
Կը հասնի կին հանձարն այն վե՛ր բարձունքին .
Եւ կինը չի՛ մտածեր , չի՛ հասկընար
Ինչ որ վեհանձըն տարփածուաց կը շնչէ
Նոյն իսկ իր գեղը . դաղափար այդպիսի
Ձի մըտներ այն ճակատներուն մէջ անձուկ :
Ու խարուած այն աչքերուն վառ փայլակէն ,
Յանիրաւի մարդ կը յուսայ , կը խնդրէ
Ըզգացումներ խոր , անծանօթ , և նոյն իսկ
Շատ աւելի քան այրական՝ էակէ՛
Մ՛որ ըստ բնութեան ամէն բանով է քան մարդն
Ըստորնագոյն : Ձի եթէ իր անդամներն
Են աւելի՛ քնքուշ և դիրգ , բայց սակայն
Միտքն է նըւա՛ղ լայն և նըւաղ կորովի :
Իուն սո մինչև նիմա քնաւ չըկրցար
Երուակայել , Ասպասիա , ինչ որ դո՛ւ
Ինքըդ ատեն մը շնչեցիր մտածումիս :
Ձեռ գիտեր ի՛նչ անսահման սէր , ի՛նչ սաստիկ
Տագնապներ , ի՛նչ անպատմելի յուզումներ ,
Ի՛նչ ցնորումներ յարուցիր իմ մէջս . երբե՛ք

Թէ աշխարհաբարը այլևս ի վիճակի է իւրացնելու և բացատրելու , իր իսկ ուժերով , ամէն դարու մտքի արտադրութիւնները :

Ներհուն վարդապետը , իբրև բանասէր-մատենագիր , Վենետիկի վանքին մեծ աշխատաւորներուն մին կը համարուի այն ընդարձակ աշխատասիրութիւնովը որուն ձեռնարկած է , տարիներէ ի վեր պատրաստելով , Հայկական Նոր Մատենագիտութիւն եւ Հանրագիտարան Հայկեանքի անունով հսկայ գործը , որուն առաջին պրակը երեցաւ վերջերս , արդարև մեծածաւալ ու տածանելի աշխատութիւն մը որ հին ու նոր Հայ մատենագրութեան համար մեծ շահեկանութիւն ունի :

Գուն չըմբռնես պիտի : Նրման օրինակ
Կ'անգիտանայ դաշնակութեանց նուագածուն
Ինչ որ լսողին վրայ կը դործէ ձեռքն ու ձայնն :
Արդ մնաւ այն Ասպասիան , այն զոր ես
Այնչափ անչափ սիրեցի . արդ կը ննջէ
Առ յաւէտ՝ օ՛ր մը իմ կեանքիս առարկան .
Միայն թէ իբր սիրելի ուրուական
Երբեմն երբեմն ինձի կուգայ ու կ'երթայ :
Կ'ապրիս դուն ո՛չ թէ միայն դեռ գեղեցիկ ,
Այլ գեղանի ա՛յնչափ՝ որ իմ կարծիքով՝
Ուրիշ ամէնքը կ'անցնիս . բո՛ցն այն սակայն
Որ քննէ իմ մէջըս ծնաւ՝ մարած է .
Զի չսիրեցի ես քեզ , այլ ա՛յն Գիցուհին ,
Որ սրտիս մէջ օր մ'ունէր կեանք , արդ՝ շիրիմ :
Զա՛յն պաշտեցի երկայն ատեն , և ա՛յնչափ
Իր երկնային գեղն հաճելի եղաւ ինձ ,
Որ ես սկիզբէ՛ն ի վեր ստոյգ գիտնալով
Քու կութիւնդ , քու դրժումներդ ու դաւերդ ,
Բայց և այնպէս անոր աչուին գեղեցիկ
Քուկիներուդ մէջ դիտելով , խանդակաթ .
Հետեւեցայ քեզ ցորչափ ան ապրեցաւ
Սարուած բընաւ երբեք , բայց այն անուշակ
Նրմանութեան հեշտութենէն մտրակուած՝
Համբերեցի դառն ու երկար գերութեան :
Արդ դուն պարծէ՛ , կըրնաս . պատմէ՛ որ միա՛յն
Քու սեռէդ քե՛զ ծըռեցի գլո՛ւխըս գոռոզ ,
Ու մտադիւր քե՛զ ձօնեցի սիրտս աննրւած :
Պատմէ որ դուն , դո՛ւն առաջին և յուսամ
Վերջին՝ տեսար աղերսարկու իմ բիբերս .
Պատմէ որ ես առջևդ երկչոտ , դողդոջուն
(Բարկութենէս , ամօթէս բո՛րք կ'ըսեմ զայս)

Ինքիրմէս դուրս, քու ամէն կամքդ, ամէն խօսքդ,
Ամէն շարժումդ դիտեցի սարրկաբար.
Պատմէ խրրոխա ձանձրոյթներէդ տըժգունիլս,
Դէմքիս փայլիլը սիրուն մէկ նըշանիդ,
Ու կերպ ու գոյն փոխելս ամէն ակնարկիդ:
Ինկաւ բժժանքն, ու փշրելով անոր հետ
Լուծըս գետին սըփռեցաւ. ե՛ս բերկրեցայ.
Եւ հուսկ ուրեմն՝ թէպէտ և տաղակալի՝
Յետ գերութեան և յետ երկայն յնորքներու,
Գո՛հ կ'ընդ գրկեմ ազատութիւն և դզօն միաք:
Զի թէ թափուր տարփանքներէ և ազնիւ
Պատրանքներէ՝ կեանքն է դիշն'ը աստղազուրկ
Զըմբան միջև, — ինձ բաւական սփոփանք,
Վրէժխնդրութի'ւն է մարդկային բազդէն՝ ի՛մ
Հոս խոտին վրայ փրռուած անհող ու անշարժ
Դիտելըս ծովն, երկիրն, երկինքն, ու ժրպտիլս:

Լեօքարոթի

(Թարգմ.)

ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԱՆՁԻԿԵԱՆ

Երիտասարդ փարգապետին, իրր նախափորձ, ներկայացուցած սոյն-
Թարգմանութիւնը իր գրական արժէքը ունի. անշուշտ այ սակի պիտի
շեշտուի իր կարեւորութիւնը երբ հետեւողներ ունենայ որոնք աշխատին.
արդի գրականութիւնը օժտելու օտարազգի հին ու նոր մատենագրաց-
հրաշակերտներուն աշխարհաբար Թարգմանութեամբ:

Բայց ապահովապէս գրական մեծ փայտք մը պիտի ըլլայ աշխար-
հաբարեաններուն, եթէ ապագայ Թարգմանիչք չի բաւականաման միայն-
չստիական Թարգմանութիւններով, փասն գի քերթուածի մը անյանգ.
Թարգմանութիւնը շատ բան կը կորսնցնէ իր գեղեցկագիտական հրա-
պոյրներէն:

ՆՈՒՐԱԿԱՆ ՍՕՍԻՆ

Այս

Սոյ դէպի արևելահիւսիս երկարող լեռնաշարքերուն մէջ՝ է՛ն բարձր ու բրդաձև երևցող լեռն է Ճէպէլը Նուր, որ Մարաշի և մերձակայ լեռան մը սահմանագիծին վրայ կանգնած՝ հպարտօրէն իր ժևռուտ կողերը ցոյց կուտայ անցորդին, ու կարծես փորձելու ճիգ մըն ալ կընէ իր լերկ ու մերկ գլուխն աւելի վեր ցցել քան ձիւնապատ սառ սարերը Տաւրոսին :

Ճէպէլի Նուր՝ արդարև բարձր է բաղդատմամբ իր շուրջը գտնուած լեռներուն որոնք թղուկ գաճաճներ կերևան անոր քով, բայց չկրնար հաւասարիլ Տաւրոսի բարձրութեան :

Ելլալիստանի գեղազուարթ հովիտներէն բղխող Ջիհան գետը՝ երբ կը հասնի Ախար լեռանց մանուածանապատ կիրճերէն Ճէպէլը հուրի ստորտար, կարծես անցք մը խնդրելու բուռն ճիգերով աղաչանքի սուր ճիւղեր կ'արձակէ, ու ապա խոնարհելով անդընդախոր դարևանդներն ի վար՝ համբոյցներ կուտայ անոր ստուշներուն, ու կանցնի կ'երթայ օղակ օղակ դէպի դաշտօրայքը Մամլատիոյ և անկից կը թափի Միջերկրականի ծոցը :

Հոս՝ այս գետին անցքին և Ճէպէլը Նուրի ստորտար, գիւղակի մը ցննցառ տուները կ'երևան, ուր երբեմն կար ու կ'ապրէր հուրիական սօսի մըն ալ : Այս ծառին բարձրութիւնը երկնուղէշ, տարածութիւնը լայնանիստ, անպատճառ ճամբորդներու ուշադրութիւնը պիտի գրաւէր : Հաստարուն էր ան ու հաստատուն, թիկնեղ ու կաշնբունն բաղուկներ ունէր, հազար ու մէկ ճիւղերով հաստապիրկ կողեր ու իր ընդհանուր տեսքն ալ ահագին վրանի մը ձևն ունէր :

Այդ սօսին՝ հակառակ գետափին մօտ բուսած ըլլա-

լուն, որ ամէն գարնան և աշնան կատաղի յորդումներ կունենար, պեղելով ու բզբտելով անոր արմատներուն մէկ երկրորդ մասը, միշտ կանգուն կը մնար առանց ցընցում մ'իսկ կրելու: Թէև երկնքի կայծն ու կայծակներ անոր կողերուն վրայ լայն լայն ճեղքեր բացած էին, թէև ձէպէլը նուրի սառ բարձունքէն փշոզ ձմրան ցրտին պախրցիներն ալ շարունակ կը ցնցէին զինքը, ան սակայն դեռ կեցած էր կանգուն, կուրծք տալով ժամանակին և եղանակներուն ազդեցութեանց ու աւերումներուն:

Ու ամէն գարնան դարձեալ աս ծառը կը հագնէր իր երիտասարդութեան կանանչ վերարկուն՝ հակառակ իր տարիքին, որ հուժկու, ջղակազմ ծերունի նահապետներուն նմանութիւնը կը բերէր: Քսան տարի առաջ կը յիշեմ աս նուիրական սօսին, որուն շուքին տակ գիշեր մըն ալ հանգչելու բաղդը ունեցած եմ:

Ոչ թէ ժամանակը միայն անզօր գտնուած էր զինքը զգեստնելու, այլ գիւղացիք ալ երկիւղած ու պատկառուն զգացումով մը խնայած էին իրեն. ոչ մէկը իր կացինը փորձել յանդգնած էր անոր կողերուն, աւանդելով սերունդէ սերունդ թէ՛ այդ ծառը նուիրական է, թէ անոր մէջ ոգիներ կը բնակին, թէ ով որ անոր կացին կը զարնէ օճախը կը մարի, վերջապէս շատ մը առասպելաբանութիւններ հիւսուած էին անոր նկատմամբ:

Կրօնական երկիւղածութիւն մըն ալ ունէին տեղացի շինականք այդ սօսի մասին. վասն զի գիւղին ծերուկ Տէր Պապան պատմած էր թէ՛ Թադէոս Առաքեալ անոր հովանիին տակն էր նստեր Եղեսիա քարոզելու գացած ատենը:

Շատ աշուղներ ներշնչուած անոր պատկառելի երեւոյթէն, գեղօններ երգած էին:

Աս ծառին կողերուն ու փեռեկտուած կուրծքին

վրայ՝ կ'երևային թուանշաններ, ամիսներու ու տարիներու, և անուաններու սկզբնատառեր. զորս հետաքրքիր անցորդներ փորեր փորագրեր էին անոր գիրք—մագաղաթ կողքին վրայ, անմոռաց պահել ուղեւոր իրենց անցքի յիշատակն ու յուշքերը. անոր սաղարթախիտ սատերուն վրայ շինուած էին նաև հաղարաւոր բոյներ գաղթական թռչուններու: Իսկ ամառուան տապերուն իր զով ու հով շուքին տակ, գեղջուկ հովիւն ու հովուուհին իրենց ուլիկներն ու գառնուկները քնայնել: Գեղացի գեղանի աղջնակներն ալ՝ կախորրաններ շինելով՝ կ'օրօրուէին անոր ճիւղերէն. աւազներ աւջելով, ու դիտելով միանգամայն իրենց նազելի ճօճանքն ու մարդ—հրեշտակ պատկերները Ջիհանի վճիտ ալեւիկներուն մէջ:

Նուիրական այս սօսին՝ պաշտելիութեան առարկայ էր դարձեր մասնաւորապէս ծեր մամիկներու, որոնք կուգային իրենց հիւանդներուն համար աղօթքներ մրրմնջել, կապելով անոր ճիւղերուն գոյնզգոյն դերձաններ ու լաթի կտորիկներ չ:

Է՛ն, ինչո՞ւ մեղադրել գիւղացին, որ իր սրտին մէջ դէպի հսկայ ծառը, դէպի մամռապատ խաչքարը, դէպի հողը, դէպի ջուրը բան մը կը պահէ, միթէ նախապատմական վիճակն ալ աս չէ՞ր մարդուն:

Ո՞վ ըսաւ թէ մարդուն սիրտը չէ կապուած անխօս հիւթին ու իրին հետ, ինչ ձևերով և ինչ արտայայտութիւններով ալ կըլած ըլլայ ան:

Մարդկային սիրտն ու սէրը, զգացումներն ու յոյզերը՝ անտես բան մը չե՛ն դներ անոնց մէջ, ու շատ անգամ մարդ զգայումներով հողի չի՞ տար անհողի իրերու, շունչ՝ անշունչ ու անխօս առարկաներու:

*
* *

Ան տարին ձմեռը բուռն էր ու սաստիկ, այնպէս որ, դար ու դաշտ, սարն ու ձորեր ծածկուեր էին ձիւ-

նով : Տիրող ցուրտին սաստկութենէն , երկնքի թռչունները երամով ու կաքաւներն ալ ջուկ ջուկ գիւղին վրայ կը թափէին , իրենց համար սեղ ու դադար չգտնելով :

Օդերը նոյնը չմնացին սակայն , ոչ ալ ձմրան խստութիւնները . վաղուց դադրած էին փքաշունչ քամիները ու ցրտագին պախարցին ալ ձէպէլը Նուրի : Թխպոտ ամպերը ցրուած էին վերէն ու կ'երևար ծիծղուն ջինջ կապոյտը երկինքին : Գիւղացիք ուրախ զուարթ սկսեր էին կամաց կամաց դուրս գալ իրենց ձիւնածածկ երդիքներու տակէն . բայց յետոյ որքան դժբաղդ զգացեր էին ինքզինքնին՝ տեսնելով նուիրական սօսին դիտապաստ գետին խնայը , զոր ձիւնը նախորդ օրերուն՝ պատանքած էր ու անոր վիթխարի մարմինը հսկայ մեռելի մը ցուրտ ու տխուր սպաւորութիւնը կը թողուր միամիտ գիւղացիներուն վրայ , մանաւանդ կիները լալու չափ յուզուած էին սուրբ ծառին կործանումը տեսնելով : Կարծես թէ իրենց սրտին խորքը ու հոգիներուն մէջ բանի մըն ալ կործանումը զգացած էին որ իրենց ամբողջ կեանքը կապած կապկպած էր այդ նինաւուրց նուիրական ծառին հետ , որուն քովիկն էին մեծցեր ու մեծցուցեր իրենց պղատիկները :

Ան գիտէր ոչ միայն անոնց պապը , այլ կը ճանչնար պապուն էլ պապը , հաւուն էլ հաւը :

Ջիւնհալէն յետոյ սակայն , գիւղացիք մեծ ուրախութիւն զգացեր էին տեսնելով գարնան առաջին օրերուն ինկած նուիրական սօսին լայնատարած արմատներէն նոր ու գեղարուչող՝ զոյգ մը սօսիներու վերրնձիւղիլը : Ամբողջ քսան տարի է այն թուականէն ի վեր , որ ես տեսած էի նուիրական սօսին , ուր Ջիւնն գետը իր գոռ ու որոտ աչիքներով կուգար խոնարհիլ ու համբուրել ռսուրները ձէպէլը Նուրիի , և ուր այժմ նորածիլ սօսիներ մին քան զմիւսն գեղեցիկ՝ քսան գարուններ բուրած , կերեան ճիւղան հասակով որպէս թէ երկւորեակ թռուիկները եղած բլլային այն նուիրական դարաւոր սօսին որ իր անմեռ արմատներէն կեանք էր տուեր անոնց :

Ք Ա Ռ Ե Ա Կ Ի Ղ Ջ Ե Ր

Եթէ քերթող մ'ես ըլլայի
Սքանչացող Գեղեցկութեան
Չայն՝ միայն զայն, նուագէի
Ի տաճարի բրնութեան :
Վարդն և թիթեռ
Մանկութիւն և սէր,
Տիւ և գիշեր,
Ամպրոպք և շանթեր
Են գունակ գունակ
Քեզ պրսակ
Ցանկալիդ գեղեցկութիւն :

*
* *

Քերթող մ'եթէ ես ըլլայի,
Միշտ առ սէր Մարդկութեան
Անձս ու քնարըս նուիրէի
Ես մի միայն Բարութեան :
Աշխատութիւն՝
Քեզմով փառք մարդուն,
Ի՛ խնամատութիւն
Պատուէ զմահացուն,
Անմահին միակ
Պերճ պրսակ,
Երկնայինըդ լարութիւն :

*
* *

Իսկ թէ քերթող մ'ես ըլլայի՝
Միշտ ի պատիւ մարդկութեան
Ոգիս, սիրտըս նուիրէի
Մի միայն ճրչմարտութեան,
Թըշուառութեան

Դու յոյս, յենարան .
Եղբայրութեան
Յաւէտ պահապան .
Բանին մեր միակ
Սուրբ պրսակ
Աննրկուն ճրջմարտութիւն :

*
* *

Ո՛հ, թէ քերթող մ'ես ըլլայի՝
Եւ գեղեցիկն ու բարին
Ճրջմարտին հետ սերտ յօդէի
Նուէր Հայ Օրիորդին .
Փունջ մ'որ պահէր
Մինչև Տէր կամէր
Որ նուիրէր
Զայն իւր որդեկին ,
Իրբև գերունակ
Սուրբ պրսակ
Փառք ընտանեացն և տոհմին :

Անտիպ Գործեր

ՅԱԿՈՒ ՈՍԿԱՆ

Յակոբ Ոսկան (1825—'907). Նախկին աշակերտ Մուրատեան վարժարանի, բազմարդիւն ուսուցիչ Պետրոս Հայ վարժարանաց, ուր կէս դարէն աւելի հայերէն և ֆրանսերէն լեզուներ դաստաւանդեց արդիւնաւորապէս, յաջորդաբար քանի մը սերունդներու :

Շատ սիրուն քերթուածներ ու երգեր գրած է դասական մաքուր աշխարհաբարով :

Վ. ՀԻԼԿՈՅԻ ՏԱՐԵԴԱՐՉԸ

Իր վերջին տարեդարձի օրը գուժեր էր Վ. Հիւկօ թէ ա՛լ բան պիտի չը գրէ և թէ այնպէս կ'զգայ թէ այս տարի իր կենաց վերջին տարին է : Այս խօսքերը տրամութեամբ լեցուցին այն անհամար անձանց սիրտերն որ իրաւամբ կը հիանան մեծ բանաստեղծին հանճարին վրայ զի միշտ այդպիսի տխուր հախազդացմունք, մանաւանդ երբ բնութեան ընթացքին ալ կը համեմատին, կ'անաբեկեն զմարդ : Այլ բանաստեղծք մանաւոր հակամիտութիւն ունին միշտ մօտալուտ տեսնելու իրենց վախճանը և իրենց կենաց ընթացքին մէջ քանի մը անգամ կը մեռնին ու հորէն յարութիւն կ'առնեն : Եւ ո՞ գիտէ երբ կը հնչէ առաջին անգամ մահը զգայուն մարդուն սրտին մէջ : Վ. Հիւկօյին համար շատանց հնչած էր այն, երբ կորոյս իր կենաց ընկերն որ իր լաւ օրերուն հազորդ եղած էր և որ ապա իրեն հետ երկար տարիներ աքսորանաց հացն էր կերեր որ թէպէտ միշտ թշուառութեան չոր հայր չէ, այլ դու գիտես, Տանթէ, թէ քանի՛ դառն է անի . այն ժրագլուխ կինը որ և Մայր որդեգորով իր զաւակացն էր ջամբած խորիսի մեղու՝ կերակրելով ինքն լեզեաւ, որոյ սիրովը հերձնչեալ դրեր էր Հիւկօ իր հողելից բանաստեղծութիւններն որք իր գեղեցկազոյն բանաստեղծութիւններն են : Ու մէյ մ'ալ վերջին անգամ կարծէիք թէ հնչեց մահը իր սրտին մէջ, երբ մին միւսին զինի խլեցան ձեռքէն իր որդիքն որոնց մին արի քաղաքացի և միւսն ալ հերհուն մատենագիր, ու երբ տեսաւ տունն որ պարանալ էր մնացեր . . . Եւ անա՛ այսպէս իր

ամայութեանն ու վշտացը մէջ ձայնէր ու ոգէր սիրածայն
ոգին ,

Անոքիկ եմ ես և այրի
Եւ իմ օրս է տարածամեալ .
Ի գերեզման գրլի հակի
Հոգիս թաւալ :

Այլ նա պիտի ապրի եղեր դեռ ևս բաւական երկար
ժամանակ որ հանդիսատես ըլլար իր սեպհական փառքին
որուն խնայեց սակայն նախանձը , այս միանդամ ևեթ
դրժեւոյ իր պայմանին և սուտ հանելոյլ բանաստեղծին
ալ խօսքը որ ըսեր էր . «փլանի փառքն հաղ ընդ հաղ—
նախանձն այդ արձանին խնայէ ոչ , այլ թէ բազմեալ
տեսնէ զայն ի վերայ գերեզմանին սեմոյ» : Ու հինգ հա-
րիւր հազար հոգի անցեալ տարի իր պատուհաններուն
առջև , իր ութսուներորդ տարեդարձը տօնեցին , այնպիսի
հանդէս մը կատարելով յանուն ազգին որուն նմանը չէր
տեսնուած . Եւ այդ հինգ հարիւր հազար Գաղղիացւոց
մէջ երկու Հայ ալ կային որ հեռուէն հանդիսատես և
սրտով մասնակից եղան սիրայի հանդէսին ու իրրև թէ
իրենցն ու իրենց ազգինն ըլլար կը գուրգուրային ու կը
հիանային տեսնելով և դիտելով երկու խարտեալ գլուխ-
ներու , Երուանդամման թողնեկացը ժանին ու ժօրժին
մէր դուրս ցցուած մեծ ու լուսափայլ գլուխը բանաս-
տեղծին :

Հանդէսը կարծես թէ այն երկու մանկանց համար
էր . բազմութեան մէջ ամէնքը կ'ըսէին «անա՛ ժանն ու
ժօրժ» . մանկութիւնը այնպիսի հրապոյր մ'ունի որ փա-
ռաց հրապոյրին ալ կը յաղթէ . խորհրդաւոր բան մը կայ
մանկան վրայ որ կը յանկուցանէ , առաջին ճառագայթի մը
գեղն ունի նա , որուն առջև հիանալով կը հարցնէ մարդ
«ուստի՞ կուզայ արդեօք» : Իսկ ժօրժ . ու ժանին վրայ

այն օրը բանաստեղծին ճաճանչն ալ ծագեր էր և ամէնքը
գիտէին թէ ո՛րպիսի սիրով կը սիրէ զանոնք Վ. Իւկօ .
իրը չէին այն զաւակունք . ի՞նչ փոյթ , ի՛րն էին հոգւով
և խանդակաթ անհուն սիրովն որ ունէր անոնց վրայ :

Երջանիկ իրմէ աւելի անո՛նք էին այն պահուն և
ինք շատոնց ըսած էր թէ ոչ Ոլիմպեան վէմ ոչ Տրայի-
անու կոթող , այլ թէ միայն թողուն իրեն ժպիտն իր
ժանին :

Անտիպ Գործեր

ԳՐ. ՕՏԵԱՆ

ՅԱՄՔԱԾ ԱՂԲԻԻՐ

Գաշտն եղերող ճամբուն վրայ ծիծաղկոտ ,
Քիչ մը հեռու գիւղին հանդարտ շրշուկէն ,
Փոքր աղբիւր մը կար ատենօք , որուն մօտ
Հանգիստ կ'աւնէր ճամբորդն օրուան խոնջէնքէն :

Հեղամբումնջ ցայտումներով հերդաշնակ ,
Այդ աղբիւրէն վրճիտ ջուր մը կը հոսէր ,
Ու ջուրն անյայտ կ'ըլլար հեռուն , մարգին տակ ,
Ուռղելով ճամբուն դալարն ու բոյսեր :

Տղայութեանս օրերուն մէջ թարմաւէտ .
Երբ սիրտն անվիշտ է դեռ , կեանքն ալ յուսատու ,
Հո՛ն կ'երթայի , գիւղին մատղաշ սղոց հետ ,
Ճակտիս կրրակն իր ջուրին մէջ մարելու :

Տարիներ վերջ , երբոր սրտով դալկահար՝
Կրկին անցայ այդ երբեմնի շէն ճամբէն ,
Աղբիւրն անջուր գտայ , գետինն անդալար ,
Թռչնոց ձայնն ալ վաղուց դադրած էր արդէն :


Եւ երեոյթն այդ քայքայման, անշրշուկ՝
Դիտեցի եւ հողիս խոցուած կարեւէր,
Աղբիւրին մօտ, ծառն ալ չիտար անոր շուք,
Դալարաղուերկ ծառն է տըխուեր, անըստուեր:

Արեուն դէմ, ցամքած աղբիւրն է լըռին
Փոշեպարար, ծարաւահիւժ, տխրամած .
Շուրջը դադրած է շունչն անուշ զեփիւռին,
Հո՛ն, անհունին հսկայ ճանձրոյթն է տիրած:

Ճանապարհին վրայ անշէն, ամայի,
Աղբիւրն հիմայ կը նիրհէ խո՛ր՝ անվրդով .
Տրտում աչքով ճամբորդն անոր կը նայի,
Ումպ մը ջուրի սին կարօտը քաշելով . . . :

Մասիս

ԳԱՅՐԻԷԼ ԽԱՆՃԵԱՆ



Գաբրիէլ Խանճեան (վարդգէս) . Երիտասարդ բանաստեղծը
գրած է գողտրիկ քերթուածներ ճոխ յանգերով, որոնք հրատարակուած
են զանազան պարբերականներուն մէջ :

Չ Ի Ք Ե Ն Ե Ա Յ Լ Ե Ա Ը

Կ . Պոլիսէն ճամբայ ելած օրս՝ ուխտած էի անդամ մը ելնել Նաբաւ լեռը, և անոր իբր անկոխ սրբութեամբը կնքել ուխտս քաղաքամուտ : Նաբա՛ւն, ուրկէ միայն հնար է մահացուի մը տեսնել մեծ-վսեմը . Աւետեաց բովանդակը :

Նաբա՛ւն, այո՛, պիտի ելնէի, ուր դեռ շատ ոտք կոխած չէ, ինչպէս կը լսեմ :

Աւետեաց երկիրին ամէնէն կարևոր մասերը տեսնելէ ետքն յապուրակի՝ Նաբա՛ւն, այո՛, ուր մեծ օրէնադիրը ձգեց իր վերջին հետքը, և խնդրեց իր վերջին լոյսն՝ ի փակել դիտնալոյս աչացը :

Այլ դեռ արժանի չեղայ անոր . Ս. Յակոբեանք կարի՛ խարրսխեցին զիս հոս՝ Սիոնի անբա՛ւ բաւիղներուն մէջ . դեռ քաղաքի մէջ եմ ու քաղաքի կրկուսները կը ժողվեմ՝ ծանրացեա՛լ պանդխտութեան մը կարօտներով :

Եթէ չելայ Նաբաւն ամպածրար՝ սակայն այս երեք անգամ է որ սրտակաթ հերշնչութիւններով կելնեմ այն փոքր լեռը, որ մեծ Փրկիչին, Յիսուսի, Նաբաւն ու հանգրուանն եղաւ՝ անդո՛րր ընդարձակ և խոնարհ իր մեծվայելչութեամբը : Մարդարէից ատենն ալ ունեցած էր ան իր սուրբ փառքը . անո՛ր համար է որ Եզեկիէլ կ'ըսէ «Եւ ամբարձան փառք Տեառն ի միջոյ քաղաքին և կացին ի վերայ լերինն, որ էր յանդիման քաղաքին :»

Երեք անգամ համբարձայ Համբարձման այդ սանդուղքէն, ու եթէ երեք հարիւր անգամ ալ ելնեմ՝ չը պիտի յագնեամ, զի կրօնապէ՛ս աշխարհադրապէ՛ս ու բանաստեղծօրէ՛ն՝ սքանչելի է այդ կախաղնաւոր ամբարտակը, նիւթացո՛ւմ մը աւետարանական սուրբ բանաստեղծութեան : Առաքեալներէն մինչև Հերոնիմոս,

Յուսատիւոս, ասոնցմէ մինչև Տանկրէտ, քանի մը հայ
Հայրապետներ, Իգնատիոս Լոյոլա, միջին դարու սուր-
բերն և անտի ցայսօր բոլոր մեծ վկաները, սուր-
բերը, նուիրական կարաւաններ, հայրապետներ ու վա-
նապետներ հո՛ն ելած, պաղատած, համբուրած և աստ-
ուածարած են՝ առնելով «Սուրբ խանդն՝ արիւնոյն կա-
թումն, երկնից համբոյրն յողջոյն գեղոյ» • առնելով նո-
վին՝ հոգի կրօնից և հոգեկեցոյց հաստատութեանց համար
սուրբ և խաղաղ թելադրութիւններ :

Ինք՝ սիրոյ կրօնքին անմահ Հայրը՝ ստէպ այդ լե-
րան վրայ կը մեկուսանար, կ'աղօթէր, կը մարգարէանար
և կը քարոզէր վսեմ բանը :

Յանդի, սիրոյ, գեղոյ և խաղաղութեան այդ քնա-
րերգական լոյս օթեանը՝ կը բարձրանայ Երուսաղէմի
արևելակողմն՝ իբրև կէս մղոն հեռաւորութեամբ և ան-
բացատրելի խոնարհ գեղեցկութեամբ մը, զոր միա՛յն
նկարչական վրձինով հնա՛ր է պատկերացունել : Գեթսե-
մանի նուիրական պարտէզէն և կեդրոնեան վաղեմի
ձորէն մինչև ի կատարն Ջիթենեաց՝ իբրև քսան վայր-
կեանի զառ ի վեր ճանապարհ մըն է՝ անկիւնաւոր պար-
տէզի մը երկու կողմէն, որ կը գրաւէ իբր ամբողջ սիրտը
լերան առաջին կատարին : Այդ անկիւնակալ ճանապարհ-
ներուն շուրջը կը զարդարեն ռուսական, լատինական,
յունական պարտէզներ ու եկեղեցիներ, որոնց իւրաքան-
չիւրը կը ցուցադրէ իրենց ցեղական յատուկ ճարտարա-
պետութեան ցոլքերը՝ շրջապատեալ ցանցառ ձիթենիներէ
ու երրայական ընդարձակ գերեզմանատունէ մը : Լերան
առաջակողմի կատարը՝ նկարչօրէն բունած են արաբական
գիւղ մը, ռուսական եկեղեցի մը և մզկիթ մը, ու ահագին
զանգակատուն մը, որ ամբողջ շուրջ շէնքերն ու պար-
տէզներն՝ հանդերձ լերան այդ կատարովն՝ երկինքէն
կախուածի նման կը ցուցնէ :

Այդ կախածոյ կատարը՝ հին ու նոր դարերու աչքերով՝ ուղղակի կը նայի արևելքէն Մովսէսի լեռներուն հովիտներուն և վաղափուլ աստուածաշնչական վայրերուն, որ երեսուն և աւելի դարերու աղի ու ծծմբոտ խոնաւութեամբ շաղուած մշուշով մը սքողած կ'ըլլան յաճախ։ Ռուսական մեծ եկեղեցիին մօտ համբարձեալ ահագին զանգակատունէն վեր կ'ելնենք՝ 272 նեղ երկաթի ոտքերով սանդուղքէ մը, որ զետեղուած է ինը քառակուսի մէթր լայնութեամբ և 60է աւելի մէթր բարձրութեամբ այդ աշտարակին մէջ։ Կը յաջողինք մէկ շունչով վերելակել՝ մեր 72էն երկու վարդապետներոն հետ՝ այդ 272էն, և ահա կը գտնենք ինքզինքնիս ճշմարտապէս համբարձման մը բարձրութեան մէջ՝ ճօճուն երերուն և մոլորուն, ուր գլուխը կը դառնայ. իրանը կը դեղևի և աչքն՝ անսովոր պարզուած լայն ու ահեղ վայրին՝ կը կարօտի նորագոյն և մարդկայինէ վե՛ր զօրութեան, վայրին Տէրը զօրութեանց կ'օգնէ մեզի հո՛ն ալ, և քանի մը վայրկեանի ոստուցիկ շփոթներէ ետք՝ կրնանք չափել միտքով և աչքով՝ Պաղեստինի ամէնէն սուրբ և յարգի այս բարձանց վրայէն՝ երկօրեայ անհարթ ընդարձակութիւն մը և զայն ընդգոգող ընդարձակագոյն հորիզոն մը. արևելեան կողմն՝ Համբարձման լեռնէն մինչև ի ծովն Մեռեալ՝ խիտ խիտ լերկ ու ամայի բլուրներ, խանձեալ ձորեր, անհրապոյր ելեւէջներ՝ կը պարզեն տեղոյն անհարթութիւն մը, ուր աչքը զուր կը հետազօտէ վայր մը կանաչ կամ գեղջուկ հովանի մը դիւրիչ, ո՛չ երթեւեկ մը նշանակելի, ո՛չ երամակք այծերու կամ ուղտերու, ո՛չ իսկ շարժում մը կենդանական, կրնա՛նք ըսել։ Ասիոյ այս եզերական ցամաքներուն վրայ փրփկեան դրացի տապն և շնչմունք անապատական՝ իրենց պարբերական հոսանքով՝ դրոշմած բնակացուցած են սահարայական գոյն և բնութիւն մը

անժպիտ : Այդ խոսքան բլուրներուն անջրպետներէն է՝ որ ուրեք ուրեք կը ցոլան Մեռեալ ծովուն աղափայլ պատառիկները , և կը խուսափին հուպ ընդ հուպ՝ անիր կրկներեւոյթներու մը պէս՝ տեղի տալով մովաբեան հրակայաշար լեռներու երեւոյթին , որ կը բռնէ բովանդակ հորիզոնն արեւելեան՝ անտեղիտալի սահմանազլուխի մը պարփակումով : Անո՛նց անո՛նց մէջն է ցանկալին Նարաւ , զոր և կը հշմարենք միօրեայ այս հեռաւորութենէն իսկ՝ զատուցեալ գագաթի մը շրջանակեալ սրբութեամբ , Մովաբեանց հիւսիսային ստորոտն են Երիքովի ցածուն դաշտագետինն ու երազավազ Յորդանանը , որ կ'ընթանայ ջրբեր սուրհանդակի մը փութկոտ անձնանուիրութեամբ՝ երկուստեք ջերին և անջրդի ափանց բաշխելով փակագծեալ խոնաւութիւն մը բուսարեր :

Այսչափ մը կը ցուցնէ մեզի առ այժմ Չիթենեաց նուիրական կատարն՝ արեւելակողմէն , ուր երբեմն գունդ գունդ հին ցեղեր կը բնակէին՝ դալթեալ հախապատմական ժամանակներէ հետէ , Եւ ատոնց համար էր թերեւ՝ որ , սողումնեան քաղաքականութեամբ մը , իր հրաշակերտ տաճարը Մորիա լեռան վրայ կառուցանելէն ետե՛լինք խմաստուն և խաղաղագործ որդին Գաւիթի՝ Չիթենեաց լեռան վրա՛յ ալ շինել տուաւ սեղաններ Գամովսի և Ամոնացւոց աստուածոց իբրև «դբարձունս սիրողաց» ըստ սովորութեան հեթանոսաց և «անտառ ու բարձունք» պաշտող հեթանոսացեալ Իսրայէլացւոց : Ըստ այդմ նաև այդ լեռն ի հնունն ամբողջակի ծածկուած ըլլալու էր անտառներով , շա՛տ հաւանաբար ճիթենեաց անտառներով , որոնց ջոջ յիշատակարաններէն քանի մը հատ կը կենան դեռ ստորոտները՝ մինչև 1000 տարուան մօտ հնութեամբ ճիթենիներ :

Ալէլուիա յԵրուսաղէմ

Յ. ՄՐՄԸՐԵԱՆ

Յարուբիւն Մւմբեան (Ակումիս. Խաչնար) . Մատենագիր , գրագէտ ու հրապարակագիր :

Գրաբարեան հին սերունդին փայլուն ներկայացուցիչներէն մին , որ աշխարհարարի հաւասար գրաբար ալ կը գրէ ու կը թարգմանէ . Հուզոնի

Տ Ի Գ Ր Ի Ս Ի Ա Կ Ը

Որչափ որ մարդիկ յաջողին իրենց իմացական ճիւղերով և արուեստական կատարելագործութիւններով գեղեցիկ տեսարաններ ստեղծել, չպիտի կրնան Բնութեան իսկական հրաշակերտներէն աւելի կամ նոյն իսկ անոնց հաւասար գործեր արտադրել: Հնութեան «եօթն հրաշալիք»ները, Վերածնութեան դարու գեղարուեստական արտադրութիւններն և նոր դարու մտքի և գիւտերու արդիւնք այնքան հիասքանչ գործերը գեղեցիկ ու զմայլելի են արդարեւ, բայց բոլոր ստոնք միահալով, օրինակի համար, Նիակարայի ջրվէժին պարզած վեհաշուք վսեմութեան ու փառանեղ շքեղութեան չեն կրնար հաւասար գալ:

Այդ մասին տարակոյս չկայ անշուշտ, և ո՛չ ոք հակառակը կրնայ պնդել: Այլ ինչ որ խնդրոյ նիւթ կրնայ ըլլալ, այս է թէ մինչդեռ աշխարհի զանազան մասերու բնական բոլոր գեղեցկութիւններ այլ և այլ առիթներով և մանրակրկիտ նկարագրութիւններով ծանօթացած են ընդհանրապէս, և նոյն իսկ անոնց նկար-

Փոսկոյեայ Տաղ Գերեզմանական հրաշալի բերթուածին, տաղաչափեալ ու յանգաւոր, իր ըրած Թարգմանութիւնը ցոյց կուտայ հմտութեան պաշար մը ոսկեղէն լեզուին նրբութիւններուն (իրմէ առաջ Հայր Արսէն Բագրատունի հայկական չափով Թարգմանած էր գայն):

Արդի գրականութեան մէջ ալ ծանօթ գրիչ մ'է, գրական ու բանասիրական երկասիրութիւններովը ու Թարգմանութիւններովը, որոնցմէ կարեւորներն են՝

Սփէնսէր՝ Կենցաղ կամ Դաստիարակութիւնին աշխարհարար Թարգմանութիւնը:

Պուէս Խաչատուր Միսաբեան, Հայ Մեծասունք, Տերոյեցց

ները գծուած ու պատկերներն աւնուած են, մեր գաւառներէն շատերուն մէջ գտնուած բնական ա՛յնքան գեղատեսիլ դիրքեր ու շքեղափայլ վսեմ տեսարաններ գրեթէ արծառօթ մնացած են :

Ապահով եմ թէ շատերուն աւելի ծանօթ են Նեղոս, Ամազոն, Եանկոյէ Քեանկ, Օրանժ ևն. գետերը քան մեր գտնուած գաւառներուն բազմաթիւ գետերը, ո՛ւր կ'մնան անոնց ակերը : Անտարակոյս, Տիգրիս ալ այդ վերջիններուն կարգէն է, և սակայն, ըստ Ս. Գրոց դրախտարուխ գետերուն մին կողով Տիգրիս ո՛չ արհամարհելի, ոչ անկարեւոր գետ մ'է, զի նախապատմական դարերէ ի վեր ունեցած է նշանակելի յիշատակութիւն մը, կազմելուն համար Միջագետաց զոյգին երկրորդ թեւը : Բայց մեք Տիգրիսի ջրագրական ու աշխարհագրական դիրքն և նշանակութիւնը փաստաբանելու համար չէ որ պիտի խօսէինք, այլ ներկայացնելու համար մասնաւորապէս անոր ակը : Եւ փութանք ըսել նախ և առաջ թէ Տիգրիս միայն մէկ ակ չունի, այլ գլխաւորապէս երկու, չի յիշելու համար բազմաթիւ ջրոյ հոսանքները, որք անոր սկզբնական մասերը կը կազմեն, քանի որ ամէնքն ի մի հաւաքուելով է որ այն ահարկու Տիգրիսը

Պատուելի, Պատմութիւն քրեանայ վանառականութեան, Ստուերֆ շին Գէմֆերու կենսագրական հմուտ գործերը :

Իսկատիպ, արձակ բանաստեղծութիւն մ'է Ալէլուիա յերուսաղէմ ուղեւորական նկարագրութիւնը, որուն մէջ, ուժեղ գրչով մը, պատկերացուցած է հեղինակը իր հոգեկան ներշնչմանց տպաւորութիւնները և ուր դժբաղդաբար, շատ զգայուն էջերու քով կը տեսնուին, նիւթէն դուրս այնպիսի տողեր, որ գրքին գեղարուեստական հմայքը կը նսեմացնեն :

Իսկ Տասնեակ Իմաստասիրականը բոլորովին վերացական գրուածք մ'է, ուր տեսակ մը խորհրդաւոր ու միտիք ոճով իր մտածումները կը շարայարէ խրճին բացատրութիւններով :

կը կազմեն, և ասանք ամէնքն ալ Կորդուայ մեծ լեռ-
նաշղթայէն ծագում կ'առնեն ընդարձակածաւալ տարա-
ծութեան մը վրայ :

Բայց բաւին իսկական նշանակութեամբ, ակն կոչ-
ուելու արժանի ճիշդ այն ակն է որուն վրայ պիտի խօ-
սինք, և որ կ'ըլի Մոկայ լեռներէն : Բխիլ բառով չնա-
կնաք սովորական բացարութեամբ լեռներու ջրա-
ռատ ոտորոտներէն ջուրերու մզումն և հոսումն, ինչ-
պէս շատ գետեր ընդհանրապէս այդ կերպով ծնունդ
կ'առնեն, այլ տեսէք թէ ինչպէս կ'ըլլայ այդ բխումն,
որուն համար կրնանք ըսել թէ Բնութեան գեղեցկագոյն
տեսարաններէն մին կը կազմէ :

Մոկայ լեռները Կորդուայ դօտինն շարունակու-
թիւնն են, իրենց բարձրագոյն գագաթներէն մին է
հաշակաւոր Եզերով լեռը, որուն սարահարթին մօտերն է
Փութկի Ս . Գէորգ վանքը, Ալպեանց Ս . Պէրճառ վան-
քին պէս նախախնամական դեր մը կը կատարէ ձմեռ-
նային ճամբորդներուն համար, այս վանքին մէջ է օդա-
գուշակ աքաղաղը որուն որոշեալ ատենին խօսելէն
կամ չխօսելէն կը գուշակուի օդին վիճակն և ըստ այնմ
կ'որոշուի ճամբորդներուն ճամբայ ելնելու կամ չելնելու
հարկը :

Արդ, այս լեռնէն անցնելով, երբ դէպի Մոկա գա-
ւառն երթաք, ահագին զառիվայր մը պիտի իջնաք, որ
երթալով կը նեղնայ, հետզհետէ լերանցամէջ ձոր մը կը
կազմէ, և կ'ուղղուի խոտորնակի դէպի գաւառին կեդ-
րոն որ նոյնպէս Մոկա կ'ըսուի, ու Գայմազամանիստ աւան
մ'է Վանայ Վիլայէթին տակ, ուսկից կը բաժնուի վերո-
յիշեալ Եզերով լերան շղթայով : Զորամէջէն իջնելով
քարակարկառներ, դերբուկներ, ժայտեր, ապառաժներ,
գժուարակոխ առապարներ, մերկ ու լերկ քարեր միայն

կը տեսնէք, և քանի առաջ երթաք, միւսնայն տեսարաններէ զատ բան չէք տեսներ: Ըսել է մինչև ցարդ ուշադրութեան արժանի բան մը չկայ տակաւին. բայց երբ Մոկա աւանին երկու ժամու չափ հազիւ հեռի էք, մէկ ահագնադղորդ ձայն մը կը լսէք առանց դեռ բան մը տեսնելու: Քանի առաջ երթաք, ձայնը կը սաստկանայ. իսկ շրջակայից լերկութիւնն ու մերկութիւնը նոյնը կը մնան: Եւ մէյ մ'ալ յանկարծ այն ինչ կը դառնաք ձորին մէկ հակեալ կողմն և կը մտնէք նոր կիրճի մը մէջ, կը բայուի ձեր առջեւ աւելի չոր, աւելի մերկ ու բոլորովին անզարդ քարաժայռի ահագին զանգուած մը, խոչոր լերան մը ահաւոր մեծութեամբ, որուն վրայ չէք գտներ ոչ խոտ մը, ոչ բոյս մը, և ոչ իսկ մատ մը հող: Եւ սակայն երբ կը մօտենաք անոր ստորտար, ի՛նչ տեսնէք աղէկ: Լեռնաժայռին կողմն վրայ յատակէն քանի մը մէղր բարձր լայնաբերան պատուածքէ մը ուժղին սաստկութեամբ դուրս կը ժայթքէ արցունքի նման ջինջ ու վճիտ ջուրի ահագին սիւն մը, որ բիւրեղափայլ բեկբեկումներով վար կը թափի ստակալի շառաչմամբ, արձակելով ձիւնափայլ պղպջակներ և ջրացայտ փրփուրներ, որոց վրայ ցորեկուան արևուն ճառագայթներ ինկած ատեն՝ կը կազմեն լուսեղէն երփներանոց ցնցուղներ՝ ծիածանի բոլոր գոյներու հիատեսիլ վէտվէտումներով: Ի տեսայդ հրաշալի երևոյթին, հախ անակնկալին սպաւորութիւնն է որ կը յափշտակէ մարդը, երկրորդ տեսարանին վսեմութիւնը: Զուրի այդքան ահագին քանակութիւն այդքան լերկ ու մերկ քարաժայռէ մը ի՛նչպէս կրնայ դուրս պոսթկալ այնպէս զարհուրելի ուժգնութեամբ, ուսկի՛ց ի՛նչ ստորերկրեայ ճամբաներէ և ի՛նչ ճնշող ուժով: Տեսարանին վեհութեամբ համակուած՝ մարդ կը կորանցնէ սակայն նոյն պահուն խորհրդածելու կարողութիւնը, և

գեղեցիկին, վսեմին ու սքանչելիին արբեցութեամբ կը գի-
նտովնայ: Իսկ ջուրին պաղութիւնը անուշութիւնն և անա-
պակ յատակութիւնը յիշելն անգամ աւելորդ է: Ընթացքն
ալ ա՛յնչափ արագ է վար իջնալէն ետքն ալ որ կարծեա-
թէ զսպուած արգելարանէն բռնութեամբ դուրս խուժած
ըլլալով, կը փախչի շնչասպառ:

Ահա այս է Տիգրիսի ակը, որ տեսնելու արժանի է:

Բիւզանդիոն

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Լ Ա Մ Ա Ռ Ք Ի Ն

Համառթին, ամէնէն աւելի նա է բանաստեղծ, գի-
նողուց բանաստեղծն է նա: Երբ իր քնարին առաջին
ձայնը լսելի ըրաւ, այնպէս եղաւ իբրև թէ առաջին ան-
գամ կը հնչէր բանաստեղծական քնարին ձայնը Թրանսա-
յի մէջ, երբ հազիւ թէ զրուած էին քաղաքաւեր և աշ-
խարհաւեր պատերազմաց ծուխերը, երբ սանձարձակ ա-
ղատութիւնն ու սպա երկաթէ դանդանաւանդն հեղձա-
մղձուկ ըրեր էին այն մեծ աղդին հանձարը, երբ մարեր
էր աւիւնն և ընդարմայեր էին հողիններն ամէնուն, երբ
երկիւզն՝ երկիւզածութեան տեղն էր բռնել, երբ երկրա-
քարչ մատենադրութիւն մ'ամբարտաւան հանձարի մը
խոժոռ նայուած քներէն ալ չ'ակնածելով՝ բոլորովին նը-
ռատաացուցեր էր բանաւորութիւններն ու սիրտերն և
ապականութեան հոսանքը տղմուտ գետի մը պէս կը հո-
սէր կ'անցնէր այն մեծ հանձարին ոտքերուն առջև: Իհնչ
որ Շաթոպոխան չը կրցաւ ընել, Համառթին ըրաւ զայն:
Անհունին մեծ հորիզոնը բացաւ ընդլայնեց այն վայրահակ

հոգիներուն առջև՝ որք իրենց այլակերպութեանը վրայ իրենք ալ դարձացան : Իր բոլոր տաղերուն մէջ որք երաժշտութեան մը պէս կը հնչէին . երկնից կարօտովն անձկայրեաց հոգին՝ վեր կը պանսար միշտ երկրէ : Սէրն որ կ'երգէր աստուածային պաշտամամբ խառնուած էր . սէրն ու ամէն բան կ'առնէր իրեն հետ յեթեր կը բարձրացնէր : Մշտամուռնչ աղօթք մըն էր նա , և ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ բնութենէ ներշնչեալ այն բանաստեղծը . ո՛չ ապաքէն ամենայն ինչ կ'աղօթէ յաստիս , ո՛չ ապաքէն ժամեր կան , այնպիսի խորհրդաւոր ժամեր ուր ամենայն ինչ արարչութեան մէջ կը տեսնես որ աղօթքի դողով բըռնուած է , թռչունը , ծաղիկը , տունկը , աւազի հատիկը , ո՛չ ապաքէն ամենայն ինչ կը սարսուայ , կ'արտասուէ ու կը պաղտտի : Եւ միայն մարդս պիտի չ'աղօթէ՛ , մարդս որոյ վրայ կը խուժեն աղէտք , որ բոլոր բնութեան մէջ անժառանգեալ՝ ի՞նքն է միայն որոյ մխիթարութիւնը , յոյսն ու մեծութիւնն է խօսի՛լ ընդ Աստուծոյ : Բոլոր ներշնչմունք էր կամաթին , և ներշնչմունք ըսելով պէտք չէ՛ իմանալ յախուան և յանդուգն երեակայութեան մը արշաւանքը բանին և իմաստութեան սահմանին մէջ , այլ հոգւոյն ցոլացմունքը իմացակամութեան վրայ : Բանաստեղծը անտեսանելին կը նշմարէ և ինչ որ ուրիշները կը նշմարեն նա կը տեսնէ . բարոյական մարդը կը նախազգայ , բանաստեղծը կը մարգարէանայ , իրաւունք աւնին կատինք որ մարդարէ ու բանաստեղծ միւսոյն բառով կը բացատրէին :

«Բանաստեղծին օրհնեալ է անունը , անիծեալ է կեանքը» : Այն մարդը որուն անունը բոլոր աշխարհ յուշի կը կապէր , իր քաղաքական ճախորդութեանց մէջ տեսաւ զինքը լքեալ ամէնէն , լքեալ իր բարեկամներէն իսկ , բան մը որուն համար ժիւլ-Ֆալսը մեծ հոգիներու ամե-

համեմծ տառապանքն է կ'ըսէ : Մեկուսի ապրեցաւ աշխարհէ , պարտքերու և մոռացութեան տակ ճնշեալ , և աս որ զէլվիրն էր երգեր և ժօսլէնն էր գրեր , Դաւենակներու և Խորհրդածութեանց գրքին հեղինակը , տեսաւ իր վերջին օրերուն , ի հախնեաց մնացած իր կալուածները , տունն ու այգիները որոնց իր հոգին էր խառներ , տեսաւ որ մէկիկ մէկիկ ուրիշներուն ձեռքն անցան ամէնքն ալ . և ինք որ արդէն չէ'ր սիրեր զաշխարհ , զգուեցաւ աշխարհէ և մեկնեցաւ անտրտունջ . ինչպէս անտրտունջ կը մեկնի ով որ ալ բաժակին մրուրը քամած է և որ արմատ չէ ձգած յաշխարհի , ինչպէս կ'ըսէր ինք ալ հետեւեալ ատղերուն մէջ .

«Ա՛հ , լայ թո՛ղ , լայ այն մարդն որոյ ձեռք մոլեխանձ Յարեալ իրր ըզբաղեղ ամացն իւր բեկորաց
Վաղուան հետ կը տեսնէ իր յոյսն ալ 'որ կ'անցնի .
Իսկ ես որ՝ արմատ ոչ ձրգեցի յաշխարհի
Ես կ'երթամ անաշխատ պէս թեթև տերեխն
Վերջերեալ շքնչոյն երեկին» :

Օր մը հորէն պիտի կրկնէ աշխարհ իր անունը . մարդս երկրաքարչ իրականութեամբ դո՛հ չը կրնար ըլլալ և ոչ ապականութեան և խենէշ զեղխութեանց մէջ ապրիլ երկար ժամանակ . պէտք է մաքուր օդ ծծէ : Ու երբ գիտութեանց ամէն զիւտերէն կտքը՝ մարդիկ հորէն սկսին վնասուել մեր հորիզոններէն անդին ու մեր բոլոր մթնոլորտներէն վեր՝ անապական ճշմարիտ լոյսն որ անմատչելի հեռաւորութիւններէն կ'անդրաձգի ի մեզ մեր աշխարհին ստուերներուն միջևէն , հրբ զգան պէտքը իրենք իրենցմէ վեր բարձրանալու , հորէն պիտի կարգան ըզկամաութին որ գիրենք փոխադրէ միշտ մաքուր ըսփիւռնութեան մէջ , սքանչացնելով իրենց ականջներն ու սիրտը երկնային զաշնակութիւններով որոնց արձագանգը դեռ չէ մարած ու չը պիտի մարի :

ԱՇՈՒՂԸ

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԳԵՐ)

Հոգիս Երթունհներուս վրայ եկած, քեզ
անգամ մըն ալ տեսնել կ'ուզէ. ելլայ եր-
թա՞յ թէ վերադառնայ իմ մէջս. ասոր
համար եռ հրամանդ ի՞նչ է, Սիրելիս...:

ՏԻՎԱՆԸ ՀԱՅԸՉ

Աւելի անուշ քան լուսաւոր յասմիկները առաւօտին
մէջ, աւելի խռովիչ քան անոնց սուր և թափանցող բուր-
մունքը որ կը խնկաւէտէ միջոցը, աւելի փափուկ քան
արշալուսային երանգները որ հորիզոնին վրայ կը նուա-
ղէին, աշուղին երգը սրտագին կը բարձրանար առաւօ-
տուն:

Ու թաղին տուներուն մէջ նոր դարթնած աղջիկնե-
րու ստուերները կը դողդոջէին վանդակներու ետեւէն:

Մտի՛կ ըրէք երգը...: Ինչպէս բուրվառի մը մէջէն
թանկագին և նուիրական բուրմունքը, անոր երգը կը
բարձրանար հոգիէն. և անոր շնչակերէն ու ելեւէջներէն
արբշիռ՝ թռչունները կը լռէին ստերուն վրայ, ու հո-
ճիներուն միջին գաղաթները կը հակէին մեղմիւ ջինջ և
կապոյտ միջնուորտին մէջ:

Յասմիկին թուփը սարսուալով իր ծաղիկները կը թա-
փէր դետին և իր հոտաւէտ շունչը կը խառնէր աշուղին
երգին:

Որովհետև առաւօտին մէջ՝ երբ աղջիկները իրենց
երազկոտ աչքերը հազիւ կը բանային և մինարէները կը
վարդագունէին արշալոյսէն, երբ կանանչ և ճերմակ մօ-
զօյկները իրենց ճակատը կը ցըցէին ոսկեզօծ յիշատակա-

գրերով խորշումած՝ անիկա սիրոյ երգն էր հոգեին և խո-
յացող զարթնումի առաջին ժամուն մէջ :

* *

Ո՞ր հեռաւոր երկիրներէն՝ ուր իր թախիծը և սիրոյ
ծարաւը պտտոցուցած էր, ո՞ր երկիրներէն թափառական,
որոնք դեռ թրթռուն իր ձայնէն կը տրոփեն, և իր ու-
կեղէն խօսքերուն թանկագին արձագանգը կը պահեն իրենց
լեռնակողերուն մէջ՝ անիկա եկած էր հոս իր հոգիին պեր-
ճանքովը բոցավառելու երազները :

Տժգոյն աղջիկները՝ իրենց քօղերէն աւելի ճերմակ,
պատշգամներու վրայ՝ սաղարթներէն սքօղուած, հա-
սակնին կը ձկեն դգրդուած անոր երգին հրապուրանքէն
ու վարանոտ հայուածքներ, տխրութիւնով վարագուր-
ուած՝ կը գուշակեն միջոցներէն անդին՝ հոյն հրապու-
րանքին ներքե բարախող սիրտերը :

Ո՞ր հեռաւոր երկիրներէն՝ ուր դեռ եփենոսէ մար-
միններ ծաղապատիկ հատած և ճակատնին արևուն՝ կը
սպասեն անոր երգին յիշատակովը, ո՞ր հուիրական դե-
տեղերքներէն որոնք իրենց սատափէ յատակին մէջ անոր
քայլերուն հետքերը կը կրեն, ո՞ր ճամբաներէն ուր կա-
խարդուած օձերը իրենց բոյնին մէջ անդամայոյծ և կոյր
կը սպասեն անոր, ո՞ր երկիրներէն թափառական անիկա
եկաւ մեզի :

Աւելի անուշ քան խնկող յասմիկներուն յետին և
գերագոյն բուրմունքը, աւելի դեղեցիկ քան աշուղին
երգը, ճերմակ և երկայն ձեռք մը կ'երկըննար թուփին
մէջէն, բարձրացած վանդակին ներքեէն :

* *

Յամբաքայլ և հանդիսաւոր գնացքով՝ ամէն առաւօտ
աշուղը կը յառաջանայ թաղին մէջէն. հազիւ թէ աղօ-

Թողին ձայնը մարած է օդին մէջ և մինարէներուն զագաթները, վարդագունած արշալոյսէն, հորիզոնին երանգներուն մէջ կը հալին :

Նոր բացուող ծաղիկներ՝ արևուն առաջին փայտալանքէն դողդոջուն՝ իրենց թարմ բուրմունքով ապրելու հեշտանքը կ'երգեն և նորածին թիթեռնիկներ՝ օդին մէջ սաւառուն՝ զարմանքով կը նային երկնքին և իրենց թաւշեայ թևերը կը թօթուեն հրճուանքէ :

Իրարու ետեւէ բարձրացած տուները՝ պատասուկ բոյսերով հագուած՝ որոնք ամէն օր քիչ մը աւելի կը մագլցին փեղկերն ի վեր և դուրս երկնցած շահնիշիւհներուն ծաղկազարդ կողովներու երևոյթը կուտան՝ իրենց թարմ կանանչներուն մէջէն կարկառելով ճենտղկուզակներու ողկոյզներ, ճերմակ վարդեր կամ տժգոյն յասմիկներ, ու կզմինտրները բուսականութեամբ բեռնաւորուած հետզհետէ կը տժգունին արևին լողանքին մէջ :

Աշուղը կը յառաջանայ երգելով . իր աչքերը՝ որոնք ադամանդի կարծր շողիւնը ունին՝ սեւեռուն պարապին մէջ՝ չեն նայիր բնաւ :

Տուներու մէջտեղ պղտիկ գերեզմաննոցներու ցից նոճիները իրենց սև հասակովը կը դալարուին և դամբանաքարերը կը դղրդուին կարծես հողին վրայ . ճամբուն վրայ՝ հեռուէն, քողարկուած կիներ մետաքսեայ գունագեղ և ճկուն վերարկունիւրու մէջ փաթթուած, կը կենան պահ մը և կարծես կը դեղեւին յուզմունքէ :

Աշուղը իր երգէն գինովցած չտեսնար անոնք . անոր պղնձագոյն մորթին վրայ ուր բոլոր կլիմաները իրենց հետքերը թողած են, անհիւրընկալ երկիրներու սպիներ իրարու կը հանդիպին . սև մօրուքը դէմքը կը շրջանակէ և գրեթէ կը ծածկէ անգոյն շրթունքները որ այս միջոցին աւելի կը տժգունին :

Մուշտակէ գալբաքին վրայ ճիշդ ճակտին վերեւն զմրուխտ մը՝ վայրենի և կանանչ նայուածքի մը պէս կը քթթէ և երկու արծաթէ օղակները ականջէն կախուած՝ իրենց տմոյն ցոլքը կը դնեն այտերուն վրայ :

Իսլիամանները և ժժմակները, թանկագին քարերու հետ, — խորհրդանշանական յիշատակներ — կը ծանրանան վզէն վար և կուրծքին վրայ կը խառնուին իրարու : Չախ ձեռքին մատները ոսկիէ օղակներով հետացած իրարմէ՝ կը հանդչին սրտին վրայ, և արմուկն ի վար սև փեփուլը կը կախուի, որուն վրայ անհամար դիծեր սրբազան բառեր և առեղծուածային պատկերներ կը քանդակեն, և ենթարիին ծալքերը մէջքին վրայ կը սեղմուին լայն մետաղեայ գօտիով մը, որուն վրայ սուտակներ արիւնի կաթիլներու պէս կը հոսեն իրենց շողշողուն կարմրութիւնը :

Անիկա կը յառաջանայ իր բոլոր անձին պատկառելի խաղաղութիւնովը, և իր շրթունքներէն երգը կը հոսի աւելի անուշ, աւելի ճկուն, մինչ սև յօնքերը հեշտագին ցաւի մը արտայայտութեանը մէջ իրարու կը միանան պղնձագոյն ճակտին վրայ :

Հեռաւոր և տարաշխարհիկ գզուանքի մը յիշատակներ որ ձայնը կը դողդղայնէր յասմիկի թուփին ներքեւ, և անոր նուազկոտ ելեւէջները, բեկբեկ հեծկտուքներու պէս կը ստուերէին անուշ աչքերը երազկոտ աղջիկներուն, պատշգամներուն վրայ :

Աւելի շնորհալի քան անոնց մանկական հասակը, աւելի փափուկ քան իրենց մէջ խայտացող անորոշ զգայնութիւնները, հոգի մը կը հսկէ վանդակին ներքեւ, և ամէն առաւօտ ճերմակ ձեռքը կ'երկնայ սովորական ողորմութիւնը տալու նուիրական աշուղին :

«Ի՞նչ փոյթ թէ քու դէմքդ, միշտ ծածկուած վանդակէն, չպիտի տեսնեմ բնաւ. գիտեմ որ հոն ևս ու քու սիրելի ներկայութիւնդ բաւական է ինծի երգելու համար քու անծանօթ էութեանդ հրապոյրը :

«Չէ՞ մի որ ամէն առաւօտ քու վարդազոյն մատներդ իրենց աստուածային ջերմութիւնը կը փոխանցեն ինծի. և անոնց հպումը այրուցքի մը պէս զօրաւոր՝ այ միշտ պիտի գայարէ զիս դառէ և հեշտանքէ :

«Այ բոլորովին իմ մօրթս յողնած է փայփայանքէ, և ամէնէն խոստացող աչքերը այ բնաւ չպիտի ծարաւցնես հողես. ի՞նչ փոյթ թէ քու տենդազին նայուածքդ որուն ջերմութիւնը կը զգամ ճակտիս վրայ ամէն առաւօտ, չպիտի խառնուի իմ նայուածքիս ու քու հնարհալի հասակդ որուն ստուերը հազիւ թէ կը դուշակեմ անծանօթ պիտի մնայ ինծի :

«Գիտեմ որ, սիրելիս. քու ձեռքդ պիտի երկնուայ ամէն առաւօտ, յամփիկի թուփին մէջէն, և իմ երգս աւելի թեթեւ և դեղեցիկ պիտի ըլլայ քու շունչովդ. խընկուած մթնօդորտին մէջ :

«Թող վանդակդ բնաւ չբացուի և թող ստուերդ աւելի թեթեւ. անտեսանելի ըլլայ ինծի համար. ի՞նչ փոյթ հոյն իսկ եթէ իմ երգս քու հողիդ կը վրդովէ և քեզի մտածել կուտայ ուրիշի մը վրայ... որովհետեւ ա՛հ, քու տենդոտ մասներդ ինծի կը պատմեն երազներէ խռովուած գիշերները, և անկարելի երջանկութեան մը տենջանքը... »

*
* *

Մինչև որ տանիքներու վրայ մագլցող տերևները դեղնուցան, մինչև որ բոյն դրած թռչունները հեռացան մեր երկիրներէն և սև հոծիները միայն հովէն մտրակուած իրենց մշանջնական դառնութիւնը լացին, աշուղը եկաւ երգելու :

Եւ իր երգը ալ աւելի գեղեցիկ էր ամէն առաւօտ
ու ձեռքը կ'երկննար յասմիկի թուփին ներքեւէն աւելի
տոգոյն ու վտիտ հետզհետէ :

Առաւօտ մը այլեւս վանդակը չբարձրացաւ և ան-
քնակ տունը փեղկերով գոց կոյր մնաց աշուղին յուսա-
հատական երգին :

Ճերմակ աղջիկներ, աշնան հովերէն դալկահար յամ-
բարար կը քալեն ինկած տերևներուն վրայէն և մերկա-
ցած պատշգամներուն վրայ անոնց քողարկուած գլուխ-
ները կը հսկեն տխրութեամբ :

Մտիկ ըրէք աշուղին երգը, որովհետև յասմիկի թու-
փին ներքեւ՝ որ այլ ևս կմախքի մը պէս կը գալարուի
լուռ տունին վրայ իր կապկպուած և վտիտ ճիւղերով
անիկա կ'երգէ իր վերջին երգը :

*
* *

«Անտառին մէջ՝ մայրիներու շուքին տակ մենաւոր
և դողդոջուն ծաղիկ մը իր բաժակը կը բանար . . . երե-
րուն ստուերները յղկած էին անոր թերթիկները և արևի
խուսափուկ ճառագայթներ միայն իրենց ամէնէն նուրբ
երանգները շնորհած էին անոր :

«Պզտիկ ծաղիկ, բուրումնաւէտ և շնորհով առլի, ի
զուր տատանեցար քու լարակ և դիւրաթեք ցօղունիդ
վրայ . երբ թիթեռնիկները արևէն զինով՝ կը պարէին
օդին մէջ և իրենց դարձգարձիկ սլացումին մէջ հազիւ
կը կենային արեւագոյն ծաղիկներուն վրայ, քու քովդ
չմօտեցան երբեք :

«Եւ գիշերաշրջիկ թռչուններ իրենց ճերմակ և փակ
արտեանունքներուն ներքեւ քու փափուկ սիլուէթը չէ
որ ունէին թանկագին զգայութեան մը պէս որ իրենց
կոկորդը կը թրթռացնէ :

«Ի դուր քու թերթիկներդ սարսուացին և նուազեցան ու զեփիւռը չանցաւ քու վրայէդ... ու առաւօտուն երբ ծառերը ցօղերով բեռնաւորուած առաջին ճառագայթներուն ներքե կ'արտասուէին, ի դուր քու բուրմունքովդ հրաւիրեցիր այն ձեռքը որ պէտք էր քեզ քաղէր և որուն համար ծաղկած էիր մենաւորիկ և տխուր մայրիներու ստուերներուն ներքե :

«Իմ երգս այլ ևս մենաւորիկ ծաղիկն է ամուլ և արեւին կարօտովը դալկահար : Որովհետև այլ ևս բնաւ քու ձեռքդ չպիտի երկննայ իր հեշտաւէտ ջերմութիւնով սիրտս տաքցնելու :

«Այլ ևս որո՞ւ այդ մատները, վարդագոյն եղունգներով, որոնց հպումը այնքան ցանկալի էր ինձի համար, այլ ևս որո՞ւ կը բաշխեն իրենց կախարդող հրապոյրը :

«Եւ երբ դիմացս երկնցող ճամբուն մէջէն հեռանամ, քեզ կորսնցուցած ըլլալու յիշատակովը բեռնաւորուած, որո՞ւ պիտի երգեմ իմ սրտիս դառնութիւնը :

«Պիտի հանգստիմ ձեռքի մը որ նորէն կեցնէ զիս ճամբուս վրայ և որուն համար կարենամ երգել մշտնջենական տենջանքները հողիիս :

«Ու երբ միամիտ և երազուն հողիներ աչքերնին գոցեն հեշտանքէ, և երբ զարմացած և յափշտակուած իրարու հարցնեն— «Մեզմէ որո՞ւ համար», իմ երգս քու կդպիտի ըլլայ որովհետև հողւոյս մէջ պիտի հծծէ միշտ դառն տարակոյսը :

«Այլ ևս որո՞ւ այդ մատները, վարդագոյն եղունգներով, որոնց գգուանքը այնքան ցանկալի էր ինձի, կը բաշխեն իրենց կախարդիչ հրապոյրը, այլ ևս որո՞ւ... :»

Ծաղիկ, շաբաթաթերթ

ՏԻԿԻՆ Զ. ԵՍԼՅԵԱՆ

Տիկին Զապէլ Եսայեան. Երիտասարդ տաղանդաւոր գրագիտուհին մեր այն հազուագիւտ գրողներէն է, որ օրուան գրական կեանքը կ'ոգեւորեն իրենց պիւժիչ գրուածքներովը :

Յարգելի հեղինակուհին ժամանակակից հայ գրականութեան մէջ այն

Ս Ա Մ Ո Ր Ր Ա Կ Է

Սամոթրակէն կղզի մ'է Արշիպեղազոսի հիւսիսային կողմը, Եւր. Թուրքիոյ ծովեզրէն քառասուն քիլոմէթր դէպի հարաւ, Թասոս կղզին ունենալով իր արեւմտեան կողմն՝ ու արեւելեան կողմը Թրակեան Թերակղզին: Իրմէն դէպի արեւել. հարաւ՝ աաննութ քիլոմէթր հեռու կը գտնուի իրեն մերձաւորագոյն ցամաքը որ Իմպրոս կղզին է: Բացի Նեկրոբոնտէէն որ գրեթէ կից է Յունաստանի և կրետէէն որ Արշիպեղազոսը հարաւէն եզերող ցամաք մը կրնայ սեպուիլ՝ Եգեան Ծովուն բոլոր կղզիներէն բարձր է Սամոթրակէ: Հազար վեց հարիւր մէթր ամբարձում մը, — իր մակադուլթիւնն այս է, — մեծ արժէք չունի ցամաքային լերան մը համար, զի արդէն լեռը կրող ցամաքն ալ իր բաժինն ունի կատարին մակադուլթեան մէջ. բայց հոս՝ Սամոթրակէ՝ ծովուն մակերեսէն յանկարծաբերձ կը կանգնի մինչև աւելի քան մէկուկէս քիլոմէթր օդին մէջ, և այս անօթանդակ ու զուտ բարձրութիւնն ահարկու է: Ծովուն մէջ մինակ է այն կատարը, իր Բրոֆէդ-Իլիա, Ֆէնկարի և Այ-Յորկի գագաթներով, և հարիւր քիլոմէթր դէպի հար. արեւմուտք կանգնող Աթոսը և հարիւր քսան քիլոմէթր դէպի հար. արեւելք բարձրացող Իդան կը դիտէ: Իր զիղական ժայռերը, որպիսի է

պիսի փայլուն դիրք մը ունի, որուն ոչ ոք ցարդ կրցած է հասնիլ:

Վէպերը ու վիպակները, զոր յաջորդաբար լոյս ընծայեց, մէյ մէկ հոգեբանական վերլուծումներ են, որոց մէջ հիանալի ճշդութեամբ կը պատկերանան սպրուած ու լաւ ուսումնասիրուած կեանքի դրուագներ:

Ունի բազմաթիւ զուտ գրական յօդուածներ լոյս տեսած զանազան պարբերական հանդէսներու մէջ, որոց աշխատակցութեան լայն բաժին մը նուիրած է: Իր ամէնէն ընտրելագոյն երկերը առանձինն ևս հրատարակուած են՝ Շնորհիւ Մարդիկ մակագրով:

իր կատարը կազմող շողուն տրաքարը, իր գագաթնե-
րուն միջև մնայուն խորադրոշմ ուրուագիծն անդրապատ-
մական խառնարանի մը, իր ջերմուկները, թերևս նաև
Բրոֆէթ-Իլիա անունը որ կ'ալիսարկէ անշուշտ կարմե-
ղոսի վրայ զոհն այրելու համար Եահլէէն կրակ խնդրող
ու ստացող Եղիայի հրացայտ կարողութեան, ցոյց կուտան
թէ Սամոթրակէ հրաբուխ մ'էր որ կը վառէր Անցելոյն
մէջ, որ տեսած էր թերևս Հելլեսպոնոսի ճղքուիլը, և
որ հիմա շիջած ու խցուած հրաբուխներու սպառնադին
հանդարտութիւնն ունի: Թէպէտ իր սեպ կողերը դիւրա-
սէր առուտուրի մեծ ուղեգիծերէն դուրս թողուած են,
և ոչ մէկ շողենաւ կը հանդիպի իր Սէմէնտրէք աւանին
փոքրիկ նաւահանդիսար որ հիւստարևմտեան կողմն է և
Քամարիոդիչա կը կոչուի, թէպէտ և ոչ մէկ այցելու
կ'երթայ հոն, վայրենական, հիւրամերժ երևոյթով կըզ-
գին. բայց Ենոսի և Տէտէաղաճի կողմերուն ու թրակ-
եան կղզեաց՝ և Քամարիոդիչայի միջև առազաստաւոր
նաւակներ կ'երթևեկեն, և արուեստի արտադրութիւն-
ներ կը տանին ի Սամոթրակէ, ու բնութեան բերքեր ալ՝
հոնկէ այլուր, վասն զի այս հրաբխային կղզին բոլոր
նոյնպիսի երկիրներու պէս արգաւանդ է: Իր հոծ կնճիռն
ինչպէս ամենի անշահադործելի կատարներու՝ նոյնպէս և
խոր ու բեզուն զառիվարներու խումբ մ'է, ուր հողին
խափ ու խարտեաց ու ծիրանի գանձերը կը փթթին: Հոն
ուր Հատէս կը զայրանայ՝ Բեմետր կը ժպտի: Ամէն գե-
ղեցիկ պտուղները կը հասնին հոն, ոսկեմեղոյշ վտառնե-
րով. դեղձերը, նուռը, թուզերը, խաղողները, կեռասը,
սալորները, մանուսանդ տանձ: Գոնէ կղզւոյն տանձերն
հանրածանօթ են ի թուրքիա: Եւ տանձենին՝ ամենագեղ
փայտով ու քաղցրայեղց պտուղներով այս ծառը, որ կա-
տարեալ հողն ու թափանցական ենթադեպիները կը սիրէ՝

բարգաւած է Կղզւոյն այն մասերուն մէջ անշուշտ՝ որ
անոր տրաքեան կատարներէն բխած հեղեղատներուն հը-
նաւուրց կաւովն ու աւազովը կազմուած են : Յետոյ նաև
պասդանի պտուղներ, ընդեղէններ, ձիթապտուղ ու ձէթ,
սուսամ ու շիրիկ, և յամբակ ու երազի կ'արտադրէ Կղզ-
զին : Հոնտեղի այծերը որ կուտան նաև իրենց կաթն ու
պանիրը՝ երջանիկ են հոն, իրենց կծղակներուն արժանի
սեպութեանց վրայ . ա՛լ աւելի երջանիկ են թերևս Կղզ-
ւոյն լեռնային դժուարներուն վրայ աղատօրէն ելեւէջող
քաղերն ու հոյեղջիւր քօշվայրիները : Կենդանական, բու-
սական ու հանքային ի՛նչ տեսակներով դեռ ճոխ են արդ-
եօք իր լեռները . և ո՛վ դիտէ զոր օրինակ թէ Կղզւոյն
գուարդները չեն պարունակեր Թասոսի ոսկին, և իր
անսպառ տրաքարին մէջ պահուած չեն արեւակներ :
Բայց Սամոթրակէի ստոյգ արտադրութեանց գեղեցկա-
գոյնն է իր աւանին հարիւրաւոր փեթակներուն ոսկեղէն
զմայլեկի մեղրը . հոն մեղուներն անտարակոյս կը ներշնչ-
ուին Կղզւոյն լարձրաթոփչ կողերէն զոր գարնանային
տիւերը լեռնական միջերկրականեայ փլորով կը պծնեն :
Իսկ ափուհները ոչ միայն կ'ընծային ծովու սովորական
որակին այլ նաև սպառնդ կը պարունակեն . և ամառը
սպառնդ քաղող մակոյկներ կը դեգերին հոն : Արդարև
ծովային ճամբաներէն դուրս հորիզոնին վրայ ցցուող այս
Կղզին Բսութեան ամբարտաւան ու անօգուտ մէկ պեր-
ճանքը չէ . իր անմատոյց ու դժնէ մեկուսութիւնը բա-
րեղութ է ու հիւրընկալ : Եւրջմիջերկրականեայ ազ-
գերը որ հետզհետէ տիրած են անոր՝ Պելասգեանք, Փիւ-
նիկեցիք, Սամոսէն այս Թրակեան կղզին երթալով զայն
Սամոթրակէ անուանող Յոնիացիք, Պարսիկք (Իարեհ),
Յոյնք (Միլդիաաւ), Մակեդոնացիք (Փիլիպպոս Բ.?),
Հռոմ (Վեսպասիանոս), Բիւզանդիոն, Վենետիկ և այլն և

հուսկ ուրեմն Օսմանեանք (Սուլթ . Մէհմէմէտ էլ Ֆաթիհ) .
գիտէին թէ ի՛նչ կ'արժէր «մնռելներն յարուցանելու կա-
րող արգասաւորութեամբ» այս կղզին որ մանիչակագոյն
Եգէականին վիճերէն կը սլանայ իբրև Յամաքին մէկ յաղ-
թանակը Ծովուն վրայ , պտղաբերութեան գահակալու-
թիւնը՝ ամուլ անդունդներուն վրայ . իբրև բզզիւններուն ,
մայիւններուն ու սրինգին , ճռուողիւններուն ու սօսա-
ւիւններուն ու բարբառին գերիշխանութիւնն՝ ալեաց
որոտուն պետութեան վերև :

Լոյս, հանդէս

ՏԻՐԱՆ ՉՐԱՔԵԱՆ

Թ Ր Թ Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

Լոյսի բիծեր ծիրանի
կ'ասղնտեն քօղքը մութին .
Լուսնի ցոլքեր կ'անհետին
Խորքը ծովուն հոլանի :

Հրմայքներով փողփողուն ,
Հեշտութիւն մը կապոյտի ,
Հանդարտօրէն կը ժպտի
Հոգւոյս մըռայլ տենչերուն :

Սիրոյ յուշեր լուսաւէտ ,
Դողդոջուն ու ցնձագին ,
Արագօրէն կը ծագին
Հրպարտ կ'անցնիմ երբ քովէդ :

Ըզգացում մը բիւրեղէ ,
Ծիածանի երանգով ,
Ցաւոտ հոգւոյս մութին քով
Լոյս ահօսներ կը պեղէ :

Ծիածան

Մ. ՄԵԾԱՐԵՆՑ

Կ Ի Ր Ա Կ Մ Ո Ւ Տ Ք

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըւարթ . . .
 Ոսկի թելեր՝ պլլըւած խուռնկի թաւիչ մըշուշին .
 Կապոյտ ծոպեր , ծիածան , ծըփուռն ձայներ , մրստի՛ք վարդ
 Լոյսէ արցունք մոմերու՝ որոնք հանդարտ կը մաշին :

Խուռնկի ծարաւ իմ հոգիս կը ծըծէ պահն այս հանդարտ ,
 Ոսկեկըրակ աչքերով բուրվառներ երբ կը ձօճին .
 Պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու զիս անթարթ ,
 Կը զգամ համբոյրն իմ հոգիս պարուրող բիւ մարմաշին :


Մեղեսիկի երանգներ կ'օժեն պարոյրը խուռնկին ,
 Խորհուրդին եւմ ծնրադիր բաղուկներըս խաչանիչ՝
 Ու կը սպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ Կիրակին . . .

Ջահերն հիմակ կ'երազե՛ն համակ զիւմրիւթ ու թարշիչ . . .
 Կամարներէն , խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ .
 Հոգիս քիչ քիչ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ :

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըւարթ . . . :

Ծիածան

Մ. ՄԵԾԱՐԵՆՑ



Միսսիս Մեծարեց (1886—1908) . Վաղամեռիկ բանաստեղծ ,
 որ հազիւ բոլորած դեռափթիթ կեանքին քսաներկու գարունները , Հայ
 գրականութեան հորիզոնէն ասուպի մը պէս սլացաւ գնաց անհունութեան
 ծոցը՝ հարելու . անոր պէս կեանքին փոքրիկ շրջանը կատարեց տառա-
 վարչիէն , պահիկ մը , կայծեր արձակելով , որոնք այնքան գեղանշոյլ
 պէս վիճին իր քերթուածներուն մէջ :

ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ

Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան
Հոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,
Իհնչ հեշտին է մըթնշաղն այս սատափէ :

Աքասիաներ, գինով լոյսէ ու տապէ,
Օրօրուելով մաքուր շունչ մը կը հեւան •
Մինչ կը ձիւնէ ծաղիկն իրենց հոտեան՝
Զոր խօլարար հովը գրկել կը շապէ :


Ու լոյսն անոնց, անխօս հուրի՛ դիւթական,
Հրմայագեղ սւ վարսքերով արծաթէ,
Շատրըւանին կ'իջնէ գուռին մէջ կաթէ,

Զուրը ցայտքէն ծաղիկ ծաղիկ կը կաթէ •
Վըճիտ, ինչպէս լոյսէ արցունքը մանկան
Նըւազն անոր կը հեծեծէ հեշտական :

Ծաղիկներէն հովը թերթեր կը թափէ . . . :

Ծիածան

Մ. ՄԵԾԱՐԵՆՑ



Տարարաղդ երիտասարդը այս սաղարթախիտ ծառերուն շուքին տակ
(Թօփ-Գարուի դալարագեղ մարգագետնին մօտ), կուգար հանգչիլ շատ
անգամ, հոնկէ դիտելու համար բնութիւնը որ ալ չէր ժպտեր իրեն, և
կարծես յետին ողջոյնները կը փոխանակէր իր կեանքին մարդնոյ
արևուն..... :

ԻՒՍԿԻՏԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Մեռելոցի օր մըն է և բարեկամիս հետ կանուխէն կը պատրաստուինք Պաղլար Պաշիի Հայոց գերեզմանատունը երթալու . Պոլիս գալէս ի վեր ամէն օր փափաքած եմ այդ այցելութիւնը ընել . գերեզմանատունները իմ վրաս հանդարտեցնող ազդեցութիւն մը կ'ընեն , հոգիս մէջ խաղաղութիւն կ'իջնէ և կարծես թէ կը հաշտուիմ մահուան գաղափարին հետ . իրաւ է թէ մեր երկրին բոլոր գերեզմաննոցները , ըլլան սե և հոծ հոծիներու շուքին տակ տարածուած , ըլլան թմբիներու և կրնձհիներու շայնածաւալ հովանիին ներքե , հրապուրիչ անդորրութիւն մը ունին , գերազոյն հանգիստի և մշտնջենաւոր խաղաղութեան հրապոյրը : Բարիովի մէջ գերեզմաննոցները , չափազանց դարդարուած և պզտիկ քառակուսի շէնքերէ խճողուած , անհրապոյր և քմբոսանցնող բան մը ունին և միշտ զարմանալի անձկութիւն մը կը պատճառէին ինծի : Տիեզերական և անխուսափելի մահուան օրէնքը կը սաւառնի հոս մի՞մնողորսին մէջ . և հողակոյտերու ամէնէն համեատն ալ խորին տխրութիւն մը կը ներշնչէ , այնքա՛ն ասպրողներուն համար հորիզոնը գեղեցիկ է , տիրական և փարթամ գեղեցկութիւնովը Սկիւտարի առաւօտներուն . նորածաղ արեւին ճառագայթներուն ներքե . Մարմարան կը փալիլի անհամար սակի ցոլքերով , ու կզզիները վարդազոյն , աննիւթական , կը ծփան կարծես այիքներուն վրայ . իրենց շրջագիծը անորոշ կը խառնուի մի՞մնողորսին մէջ տատանող մշուշին հետ :

Թմբիներուն բուրումնաւէտ շուքին ներքե բարեկամիս հետ կը քալեմ զգուշութեամբ և ամէն քայլս հոգիս կը խռովէ . ինծի կը թուի թէ հողը կը սարսուայ իր մէջ պարունակուող անհամար մարդկային փոշիներով . տարի-

ներ, դարեր ետքը ո՞վ պիտի քալէ իմ չորս հովին բաժնուած էութեանս վրայէն: Իմ գոյութեանս ամէն մասնիկները կը ցաւին ու կուլան կարծես անխուսափելի քայքայումին դաղափարովը որ հետզհետէ արբեցութիւն մը կ'ըլլայ և զիս կ'օրօրէ տարտամօրէն, մելամաղձոտ երգի մը պէս: Թարմ հողակոյտներ ասդին անդին իրենց վրայ կը կրեն թառամած ծաղկեփունջեր, ճերմակ ժապաւէններու բեկորներ որոնց վրայէն անձրևը կամ գիշերուան խոնաւութիւնը աւրած է հեռացող սիրելիին անունին ոսկեզօծ գիրերը. անդին զինքը լացող հողին մէջ չէ՞ մի որ իր յիշատակն ալ պիտի աւրուի հետզհետէ. տեղ տեղ լքուած ու մոռցուած կոյտեր, որոնց ներկայութիւնը կարելի է դուշակել միայն խոտերուն բարձրացող մակարդակէն, ու մարմարեայ յիշատակարաններուն մէջէն պղզտիկ կոյտեր՝ տղու գերեզմաններ: Քառանկիւն մարմարեայ տախտակ մը ուշադրութիւնս կը գրաւէ և կը կսգրամ աղջկան մը անունը ծննդեան և մահուան թուականներով. ա՛յնքան մօտ այդ թուականները. ու թը տարի միայն իր պզտիկ աչքերը արևին խնդացեր են, ու թը ոչինչ տարիներ միայն, փափաքներ, տենչանքներ իր մանկական սիրտը յուզեր են ուրախութիւնով կամ տխրութիւնով. ու անկարելիը ցաւը առեր զինքը տարեր է հողին. ու այդ պզտիկ գերեզմանը, կորսուած մեծ տապանաքարերու մէջտեղ, յանկարծ անսահմանելի տառապանքով մը կը գալարէ հողիս, ծունկերս կը կթոտին և սրտիս տազնապը կ'ուզեմ աղաղակել ամէնուն իրր թէ սպառնալիք մը ըլլար հող. բոլոր մայրերը որոնք պզտիկ վարդագոյն էակ մը կը սեղմեն իրենց կուրծքին վրայ, որոնք խարտեաչ կամ թուխ խոպոպիկներու բուրմունքովը կ'արբենան և կամ կապոյտ ու սև մանկական աչքերու մէջ անձկութեամբ կը փնտռեն ուրախութիւնը կամ ցաւը, պիտի հասկնան ասիկա:

Մանիչակներու, միօգօթիաներու և շահապրակներու փուռնջեր կը ծաղկին պղտիկ գերեզմաննոցին շուրջը և կը խորհիմ անմխիթարելի մօրը վրայ որ իր սիրելի տղեկը ծածկող հողը ուզած է բուրումնաւետել և գեղեցկացնել, ինչպէս ժապաւէններով և ժանեակներով զարդարած էր անոր օրօրոցը : Խեղճ և դժբաղդ մայր, մտքէդ կ'անցնի՞ որ քեզի բոլորովին անծանօթ կին մը քու սրտիդ ցաւովը կը տանջուի քու տղեկիդ համար :

Բարեկամս զիս գրեթէ ստիպմամբ կը հեռացնէ պրզտիկ գերեզմանէն, արդարեւ հեռոջնօտէ տխարութիւն մը կը զգամ. տղօթքներու մրմուռնջներ սր ասդիէն անդիէն կը հասնին ինձի, երբեմն հեծկտանքներ և ողբեր բոլորովին կը խանդարեն ջիղերս. պէտք է շուտ մեկնիլ, որովհետեւ գերեզմաննոցը հեռոջնօտէ կը լեցուի այցելողներով. կրնան զիս ճանչնալ, կրնան տեսնել թէ որքան յուզուած եմ և ասիկա կ'երևի ծիծաղելի բան է. այլ սակայն դեռ ուխտ մը ունիմ կատարելիք, պէտք է Բուրեանի գերեզմանին մօտենամ :

Ջերմեռանդութեամբ և զգուշաւոր կը յառաջանամ վախնալով որ մէկը մեզի կը տեսնայ. ծիծաղելիին խորտուիլակը հողույս մէջն է այլ ևս և անխնայ կը խնդայ կարծես իմ ամէնէն նուիրական զգայումներուս վրայ. ինչո՞ւ չեմ գիտեր, կ'ամչնամ ուրիշներուն աչքին առաջ և քաջաբար մօտենալու Սկիւտարի սքանչելի և անզուգական բանաստեղծին գերեզմանին :

Այլ սակայն այնքան սիրած, այնքան լացած եմ իրեն համար. իմ երիտասարդութեանս առաջին տարիներուն իր ցաւովը ցաւած և իր տատապանքովը տառապած եմ երկարօրէն. իր տենդերը, իր տաղնատները, իր հիւանդ կուրծքին հեւքը և մրմուռնջները տարիներու, տարիներու մէջէն եկած հասած են ինձի և կարծես մտտներովս դպած եմ անոնց և ականջովս լսած. ինչպէ՛ս պիտի ուզէի իր ժամանակին հասած ըլլալ ու գտնալ իր նուիրական հիւ-

դակին ճամբան, ու ըսել իրեն թէ ինչպէ՛ս իր ցաւերը կ'երկարաձգուին և կը թրթռան իմ հոգւոյս մէջ. թերևս կարենայի իր տառապագին և սքանչելի սրտին մէջ, իր տենդագին ճակատին վրայ մխիթարութեան զովութիւնը և խաղաղութիւնը իջեցնել :

Սաղարթներու հովանիին ներքեւէն իր տապանաքարը կը բարձրանայ վէս և ճերմակ. մէկը չկայ մօտը. պիտի ուզէի որ քահանայ մը գար և աղօթէր իր վրայ. ինծի կը թուի որ խուճկին հոտը և աղօթքին մրմուռնը աղէկ պիտի գայ իր աշխարհի կարօտով տանջուած հոգիին. բայց դարձեալ չեմ համարձակիր քահանայ մը կանչել. հեռուէն խուճի մը պատանիներ կուգան շիտակ իր գերեզմանին, Պէրպէրեան վարժարանի աշակերտներ են, տապանին շուրջը բոլորուած կը սպասեն, քահանան կը մօտենայ, խուճկի ծուէնները կ'ոլորուին գերեզմանաքարին շուրջը, պատանիներ ջերմուանող և յուզուած մտիկ կ'ընեն. պէտք է շնորհաւորել իրենց մեծերը որ ուզեր են այդ յարգանքը և սէրը դնել իրենց դեռ տղու սրբտերուն մէջ, Ակիւտարի բանաստեղծին համար :

Քիչ մը հեռուն մենք ալ կեցած մտիկ կ'ընենք, ու կը խորհիմ ինքնիրենս :

Եթէ իրաւ է որ բան մը մնացած է քեզմէ, թէ քու աճիւնէդ անկորնչելի մաս մը ազատած է հոյին բռնաւոր քայքայումէն, եթէ քեզմէ շունչ մը, զգացում մը կը դեզերի հող, թող գայ իմ էութեանս հետ խառնուի, ու իմ աչքովս տեսնայ, իմ ականջովս լսէ դողդոջուն սաղարթներուն զմրուխտը և թռչուններուն երգերը ու բոլոր այն բաները որոնցմէ առանց յազենալու և կարօտով հեռացար. դուն օտար չպիտի ըլլաս իմ մէջս, քու յիշատակովդ օծուած գտնաս իմ հոգիս :

Ի՞նչ փոյթ նոյն իսկ եթէ քեզի հետ, քու ցաւդ ու տառապանքդ ալ տեղաւորուէր իմ մէջս :

Արեւելեան Մամուլ

ՏԻԿԻՆ Զ. ԵՍԱՅԵԱՆ

Հ Ո Ս Ա Ն Ք Ի Ն Ա Ռ Ջ Ե Ի

Եւ ջուրերը անօրինակ խուճապով մը կ'արտորան ,
 Անուշադիր՝ ծովեզերքի անցորդներուն խուռներամ ,
 Ջերթ վաղեմի տարիանքներու յիշատակներն անխարթամ
 Արծաթ ջուրերն յորձանաւոր վէտվէտումով կ'արտորան :

Հուանի լոյսով պերճ ըստուերներն թափառայած
 կիւսերուն ,
 Հոսանքն ի վար կ'ըլլան անհետ՝ ալիքներէն բռնավար .
 Եւ պատկառոտ հիւսարներէն դեերը միշտ կը հային վար
 Սփինքսի պէս սեւաարիւ , խուղարկելով ջուրն հոսուն :

Հեղուկ գունտեր կաշկանդումի կապանքէն զերժ
 խոլարձակ՝
 Կը թաւալին , համբուրելով վճիտ արիունքն Հիսարին ,
 Նաւարեկման հէք խլեակներն հոս հոն պահ մը կ'օրօրին ,
 Մինչև սուզիլն լուռ , անմրմունջ , հոսանքին տակ ան-
 յատակ :

.. Եւ ջուրերը յորձանաւոր վէտվէտումով կ'արտորան ,
 Ափին վրայ զիս լըքելով տառապանքին հետ զիրկընդ-
 խառն .
 Փախչո՞ղ ջուրեր , առէք տարէք հիւժիչ հողերս ալ այս
 դառն ,
 Խլեակներուն հետ անոնք ալ թո՞ղ անհետին անպայման :

Դրախտի Երգեր

Լ. ՔԻՐԻՇՃԵԱՆ

Լ Ե Լ Ո Ն Ք Ի Ր Ի Շ Ե Ն Ա Ն : Երիտասարդ գրագէտ ու քննադատ, ունի բազմաթիւ գրական մանաւանդ քննադատական լուրջ յօդուածներ Յաղիկ հանդիսին և ուրիշ պարբերականներուն մէջ հրատարակուած :

ՆՈՒՐԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ե Ղ Ր Դ ՈՒ Տ Ի Վ Ա Ն Ք Ը)

Քարկէի — Իննականերու սարաւանդներուն վրայ՝ ամառուան գիշեր մըն էր սիրակ և անուշակ . ո՛չ հովեր կը ժաժային, ո՛չ ալ հողմեր կը մաղմղուէին ու գիշերուան սև կծիկը կը քակուէր խորին լռութեան մը մէջ : Խաղաղ էին աւագ ակներ, լուս-աղբերեկը, ու հանտըտուկ Ս . Կարապետի նորաշէն դամբարանը, հողևորականաց խուցերը ու բովանդակ մենանոցն վերանորոգ : Վեհաշուք այդ լռութիւնը՝ մերթ ընդ մերթ կ'ընդմիջուէր հոգենուագ Սաղմոսերգութեամբ մը, որ հոգեյոյզ ու դաշն ձայներով կը հնչուէր բլրակի ճգնարան — անտառին վերև, ուր շատ քիչ յառաջ Քուրմերը իրենց զոհաբերութիւնը կ'ընէին պղնձի արձաններուն :

Քրձազգեաց, խստամբեր ու տաժանելի ճգնութեամբ իրենց կեանքը մաշող, մարմինը տրորող երկու կրօնաւորներուն մէջտեղը՝ ծունդի եկած, թեկը տարածուն՝ աղօթք — աղերսի պաղատանքը կը մատուցանէր ուրիշ պատկառելի հողևորական մը, որուն պարթև ու բարեձև իրանը, փառահեղ դէմքը և սրտին վրայ անխնամ ինկած ալեխառն մօրուսը, արծուբիբ, գթալիր աչերը կը մատնանշէին արդէն այդ հոյակապ անձնաւորութեան մեծութիւնը :

Նոյն ինքն էր Ս . Գրիգոր Լուսաւորիչ, Եկեղեցւոյ՝ Քրիստոսանուէր վարդապետը, ու բարի հովիւը :

Հոգենուագ երգերն ու մրմունջները կը շարունակուէին ու կէս գիշերը կը մօտիկնար : Նոյն հանդարտութիւնը և նոյն մթութիւնը :

Սուրբ Կարապետի հանդիպակաց կողմը՝ վիթխարի ու լայնանիստ պարսպի մը հման իր ուշապ շուքը կը տա-

բաժէ դաշտին վրայ Սիմի երկարաբազուկ մէկ շղթան , որ գիշերուան մէջ աւելի պատկառելի ու խորհրդաւոր կը դառնայ : Նոյն օր՝ կէս գիշերէն վերջը՝ այս սարը կարծես արեւ-հոտեցաւ ու նըշկըվայ՝ լուսեղէն սիւն մը կախուեցաւ երկնքէն անոր վրայ , որ կը վառէր , կը փէլփրլշար ու կը լուսաւորէր սարն ու պուրակը թաւախիտ :

Յանկարծ , դէպի հոն սեւեռեցաւ հայեացքը պատկառելի հողերականին , ու անմիջապէս ոտքի ելաւ : Իրեն հետեւեցան երկու կրօնաւորներն ալ :

Լուսեղէն-երկնաալայիկ այդ ճառագայթը երթալով կը հաստատուէր ու կը պայծառանար . Լուսաւորիչը տենդոտ հետաքրքրութենէ մը բռնուած կ'ուզէր իմանալ թէ ի՞նչ է այս դերբնական դիպուածը , երկնային ի՞նչ տեսակ նշան մը կամ ցուցք մը . . . Արդեօք ի՞նչ անձանօթ սրբութիւններ ծածկուած կրնան ըլլալ այն կողմերը . . .

— Պէտք է հետազօտել , պէտք է ծանօթանալ այս լուսացոյք սարին , հիպատեյ Նորին Սրբութիւնը , և հրաման ըրաւ իր հետեորդներէն մէկին և անմիջապէս երկու բանդէտ ճգնաւորներ ճամբայ հանուեցան դէպ լուսարծարծ սարը : Հեռեկալ ցորեկին ճգնաւորները վերադարձան , անստոյգ և անորոշ պատասխան մը բերելով , զի կը յայտարարէին թէ՛ երբ լերան բազուկներու վրայ ոտք դնել սկսած էին , լոյսը հեռացեր ու համբարձեր էր . . .

Լուսաւորիչը մնաց արտայուզութեան մէջ :

Երկրորդ գիշեր՝ լոյսը կրկին փողփողեց ստաղին տեղին վրայ , կրկին ճգնաւորներ դրկուեցան և ապարդիւն վերադարձան : Լուսաւորիչը ստիպուեցաւ իր հրեշտակին գիմել և ի տեսչեան տեղեկացաւ , որ սրբութիւններ կան հոն պահուած եկեղեցւոյ անդրանիկ Առաքելոյն Ս . Թաղէոսի ձեռամբ , և Աստուած պիտի հաճէր՝ իր անուամբ տաճար մը հաստատել հոն . . .

Անկէ վերջ, Ս. Գրիգոր անմիջապէս ճամբայ հանած էր խումբ մը ճգնաւորներ, պատուիրելով որ անտառին խորերը պահուըտին և աչալուրջ դանուին ճշդելու այն վայրը, ուր լոյսը կամար կը կապէ: Երկրորդ օրը աւելի կանուխկէկ՝ լոյսը կը փայլատակէ պայծառ ու մեծածաւալ: Երկիւղած հետազօտիչները մօտէն կը աւանդն որ լուսեղէն սիւնը իջեր էր թաւուտ պուրակի եզրդուտի ծառին վրայ, խարսխելով մինչև արմատը . . . : Իէպի հոն կը վազէր նաև Ս. Գրիգոր՝ Անտոնի ու Կրօնիտէսի հետ՝ առանց սպասելու ճգնաւորաց վերադարձին, հոն խրուհուեր էին նաև շրջակայքէն բարեպաշտ ու միամիտ ժողովրդեան բազմութիւնը: Երեք ժամէն լուսափայլ սարին վրայ էր Սուրբն Գրիգոր իր հետեորդներով: Տրուած հրամանին վրայ՝ ճգնաւորները կը սկսին քրքրել լեզրի դուտին արմատը, դուրս բերելով կաշեմբար տուփ մը, զոր Լուսաւորիչը կը քակէ հօգեղուարճ մրմունջով ու կը գտնէ հետեւեալ սրբութիւնները՝ — Մատուք մը Գրիտատի Խաչափայտէն, — Շիշ իւղոյն օրհնութեան և Մարիամ Մողթաղեհնացիի ճկոյթը:

Երբոր Սուրբն Թաղէս կը հասնի թաւուտ անտառին խորը ու կը ծածկուի գինքը փնտռող աչքերէ, վախնալով թէ՛ դուցէ օր մը իր մօտ գտնուած սրբութիւնները վտանգուին՝ Աստուծոյ հրամանով հոն կը թաղէ և ինքը կը հեռանայ, մինչև որ մօտ 300 տարի վերջ այս հրաշալի յայտնութեամբ երևան կուգան: Յայտնութիւն մը՝ զոր ջերմեռանդօրէն կը պատմէր՝ Սալվար մամիկա ալ: Լուսաւորիչը՝ որ արդէն արժանաւոր հանգստանոց մը կը փնտռէր այդ կողմերում, Ս. Կարապետի նշխարներուն մնացեալ մասը զետեղելու, իր հրեշտակին հաւանութեամբ՝ նուիրական եզրդուտ ծառին մօտերը վկայարան մը կը հիմնարկէ յանուն Ս. Յովհաննու Մկրտչի, ու կ'ամփո-

փէ սրբոյն ձախ ուսին ու կողերուն մասունքները : Կը հրամայէ վկայարանին մէջ՝ մասնաւոր պահարաններում՝ զգուշութեամբ պահել Ս. Առաքելոյն աւանդ թողած սրբութիւնը՝ «իրրև զարդ հոգևոր և գանձ երկնաւոր նորաշէն հաստատութեանն» ևլն :

Փոքրիկ վկայարանը մենաստանի կը վերածուի, ու մենաստանը՝ տարուէ տարի զարգանալով ու բարգաւաճելով կը կազմակերպէ բազմախոռոն միաբանութիւն մը՝ խստամբեր հոգևորականաց եւ ճգնող միանձանց . . .

Անոր համար վանքը կոչուեցաւ եղրդուտի վանք, եղրդուտ ըսուած այն նուիրական ծառին անունով : Եղրդուտը՝ մշտադալար ծառ մըն է, միջակ մեծութեամբ՝ փոքրասարա ծառերու տեսակէն : Մինչև հիմայ կ'ապրի այս ծառուկը՝ վանքին արևելքը՝ տաճարին քովիկ՝ մըշտահոս աղբիւրի մը շալակ, իր խնկենի շուքով : Գրեթէ միակն է իր տեսակին մէջ՝ Սիմի այդ շղթային վրայ ու մասնաւոր խնամքով կը պահպանուի : Բոլորտիքը ցանկով ու պատով պատսպարուած է, արմատին քովեր ցան ու ցիր թափուած կը մնան խաչքարերու նշխարներ և դերքուկները վաղաշէն մատուռի մը : Նուիրական է եղրդուտը՝ մանաւանդ հայ կնիկներու և աղջիկներու, ցաւազար հիւանդներու, որոնք՝ ամէն ատեն երբ այցելեն լաթերով պիտի պատատեն անոր ոստն ու տերեւը — ցաւն ու շուք հոն թողլու համար և կը տանին ջերմութեամբ թեամբ անոր դալարի տերեւները ու թուփերը՝ իբր բուժիչ ախտերու և հիւանդութեանց : Կանանչութիւնը այս ծառի խորհրդաւոր մէկ հմայքը կը կազմէ ուխտաւոր երկիւղած ժողովրդին, որ դարերէ ի վեր դիւթուեր է ծառերու սօսափիւնէն, ջերմուկներու խոխոջէն, և բարձանց ու խորոց սրբութիւններէն :

Մասիս

ԳԵՂԱՄ Տ. - ԿԱՐԱՊԵՏԻԱՆ

Գեղամ Տ. Կարապետեան. (Գեղամ). Մեր գաւառացի գրագէտներուն մէջ յարգի դէմք մ'է որ շատ կենդանի գոյներով կը ներկայացնէ տեղական կեանքի պատկերներ :

Հ Ո Ւ Ս Կ Ե Ր Գ Ն Ա Ղ Ձ Կ Ա Ն

Ես պիտի մեռնիմ, երջանիկ եղիր,
Դու հիւժուած կեանքիս կուռքն անկարեկիր,
Դու մատաղ հոգւոյս երազանքն անբաւ,
Պիտի մեռնիմ ես, մի՛ տրտմիր բընաւ:

Բաժինն իմ սրտիս սև հոգեր բոլոր,
Ժպիտներ !՛ ուղղեն քեզ աղջկունք աղւոր •
Ես կը տառապիմ, դու դարպաս կ'ընես,
Դու ծաղկի կոկոն, կոտորած ճիւղ՝ ես:

Քու ճամբուդ վըրայ խնդութիւն ծիծաղ,
Իսկ իմ չորս կողմըս դառն կոծեր, աւանդ,
Վառ սրտիդ սընունդ ճառագայթ, արև,
Մըռայլ ստուերներ իմ գլխուս վերև:

Հոյս տաճարին մէջ քեզ քիչ ատենէն
Ոսկերանդ նարօտ մը պիտի դընեն,
Շողչողուն ջահեր, երգեր ու բուրվառ,
Ջերմ ուխտը սիրոյդ պիտի օրհնեն յար:

Իսկ զիս կոչտ մարդիկ մութ գիշերին մէջ
Պիտի տանին հոն՝ ուր ալ կիրք ու տենչ,
Սէր ու տառապանք, արցունք ու հառաչ
Կ'անհետին ու լոկ կը մնայ սև խաչ:

Ամէնու Տարեցոյցը

ՏԻԿ. ԵԻՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ



Խ Ա Ղ Ա Ղ Ո Ի Ք Ե Ա Ն Ս Ա Ղ Մ Ո Ս Ը

Սաղաղութիւն թող ըլլայ՝ նորանըշան ս'վ Սիոն ,
Տաճարներուդ , հունձքերուդ , հընձաններուդ գինիին .

Զի Մարդկութիւն մը ահա՛ Յիսուսիդ պէս գեղեցիկ
Նախապատգամ այգերուդ սարսուռներէն կը յառնէ ,

Մուշկերուդ բոյրն ունի ան և գըմբէթիդ ճառագայթն ,
Ու իր հասակն է չըքնաղ՝ Մայրիիդ պէս գեղաղէշ :

Նորոգ սէրեր կը բերէ Իսրայէլիդ զոհերուն ,
Եւ իր ծընծղան պարիսպէդ մինչև Սինա կը հընչէ :

Կը խօսի խօսքն անսահման՝ դարերուդ վրայ անսըլաղ ,
Եւ հոն հեռուն կը դողայ հորիզոնիդ ձիթենին :

Կը խօսի պերճ Մարգարէն՝ սէգ սարերուդ , հովերուդ ,
Եւ ցանկապատդ ու դաշտերդ աղջիկներով կը ցընծան .

Նախկին արծիւը տանող ջինջ ամպերուդ ծայրերէն
Զատկակարմիր կը շողան վաղորդայններն երազիդ .

Վարդ անձրևներ կը տեղան Անապատիդ վերևէն՝
Ուր անէծքով մարեցաւ զաւակներուդ հեւքն յետին :

Եւ այն ատեն դու կ'ըլլաս ս'վ նոր Սիոն , ս'վ Աշխարհ
Յաւերժական տարիուհին բաղձանքներու ճամբային ,

Զի Մարդկութիւնն է հիմա ըսպասումի Մեսիայն
Ըստեղծումովն առ յաւէտ դըժբախտ Սէրին հինաւուրց :

Ափուռն քներէն երջանի՛կ՝ ժողովուրդներն անծանօթ
Պիտի լրսեն ալ այսօր ծովերու երգն ըսպասուած :

Եւ մեր վերջին հողմավար կարուաններն հեռաւոր
Պիտի տեսնեն երկինքներն հրաշապատում ջուրերուն :

Խաղաղութիւն թող ըլլայ խրճիթներուն, գիւղերուն,
Սընարներուն մահամերձ և հոն նայող լուսինին :

Խաղաղութիւն թող ըլլայ Սիսէն մինչև Արարատ
Արևելքի հէքեաթին լուսապայծառ ազգերուն :

Խաղաղութիւն թող ըլլայ Տիեզերքի խոնջէնքին,
Տաճարներուն, հունձքերուն, հրնձաններու գինիին :

Բազմավէպ

ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Ահարոն Տատուրեան. Մուրատ-Ռափայէլեան վարժարանի աշակերտներէն՝ երիտասարդ բանաստեղծ որ դասական մաքուր աշխարհաբարով բազմաթիւ գողտրիկ քերթուածներ ունի, Բազմավէպ հանդիսի մէջ հրատարակուած :

Ժ Ա Ն Ե Ա Կ Ն Ե Ր Ը

— Շատ նիհար է, շատ ալ տրժգոյն . — կ'ըսէին,
Երբ փողոցէն կ'անցնէր իր սև մակնոցով,
Մէջքը սեղմած լարերուն մէջ բռնսէին,
Աչքն ալ հովէն պատրաստարած ակնոցով :

Հայն գլխարկին թուխ ու թաւուտ փետրոց տակ՝
Կ'աննետանար իր կիսադէմքը փափուկ,
Եւ թաւիչէ ըզգեստն ալ մութ կապուտակ
Կ'ստուերէր ցոլքն իր այտերուն խուսափուկ :

Իր քաղաքի արդուզարդովն ապերախտ,
Գեղանի շէր բընաւ այդ կինն աննըման,
Ջոր դիտելով իսկ կ'ըլլայինք բարեբախտ,
Երբոր պարի սըրանին մէջ կուգար ման :

Ի՛նչ աղուոր է օթեակին մէջ երբ ճերմակ
Ժանեակով մը լոկ կը սքօղէր իր թևեր,
Եւ ուսերուն, լանջքին վըրայ անդիմակ՝
Բենեզի մը թեթև ծալքը կը թևէր :

Մարած, հայած երանգներու մէջ պէսպէս,
Իր սեփհական փայլը կ'առնէր դէմքն անոր,
Եթերային, անծիր աննիւթ ամպի պէս,
Միշտ անմատոյց, անըրջային և միշտ հոր :

Ժանեակներու այդ փրփուրներ թափանցիկ,
Մակտիքն անոնց, ցանցը բարակ օղային,
Եւ մետաքսէ ծրփանքն ալ թոյլ ցոլացիկ
Բոլոր անձին դիւթիչ բան մը կուտային :

Ճառագայթ մը , լոյս մը , աւիւն մը կեանքի՝
Մուտ նայուածքին մէջ հրապոյր մը կ'արծածէր •
Խորին անդունդ առանց ելքի ու յանգի ,
Որուն գաղտնիքն ունին շանթերն ու կայծեր :

Եւ ժրպիտ մ'ալ , չըքնաղ փթթում մը վարդի ,
Կուգար բանալ գողտրիկ շրթանցը թերթեր ,
Ինչպէս արևն իր ըզգեստովը դարդի ,
Որուն առջև կը բացուին այգն ու եթեր :

Եւ կը բացուէր սիրտն երազի մը հեշտին ,
Այդ ժանեակէ մթնուղորտին մէջ տարտամ ,
Ջերմ , հրմայող դարկ մը տալով իր շեշտին
Ձոր կը սլաշտէր քերթող , իշխանն ալ փարթամ :

Այլ ամէնուն համար էր ինք անտարբեր •
Լոկ կը սիրէր իր ժանեակներն ըսպիտակ ,
Ոյց շնորհիւ միշտ կը գտնէր տարուբեր
Այնքան սրտեր , այնքան խուճուկեր ոտքին տակ :

Կը փայտայէր զանոնք տենչով մը անճառ ,
Կեանքը դրած անոնց վրայ հոլանի
Կրքոտ սէր մը , ուր կար հոգին ու հանճար ,
Ինչպէս գիտեն սիրել կանայք գեղանի :

Սեւ առտու մը սակայն հաղով մ'արթընցաւ ,
Իր ժանեակէ բարձերուն մէջ կըրթընած ,
Մէջքին վրայ , կողին վրայ կ'զգար ցաւ ,
Ու կը հեւար յոգնած , դեղնած , քրտորնած :

Թատրոնին մէջ ցուրտ էր առեր , կը յիշէր •
Երբ օթեակին դուռը բացուեր էր ետին •

Դեկտեմբերի հով մը սաստիկ այն դիշեր
Կը դըղըրդէր անդուլ երկինքն ու գետին :

Ու չէր ուզեր առնել մեկնոցն ուսերուն ,
Իր ժանեակներն անհետելու երկիւղով .
Նըշուլագեղ ոստայն ճերմակ ու սիրուն ,
Խնչպէս աստղով լեցուն ճիւնէ մի կողով :

Եւ մեռա՛ւ , այն ժանեակներուն փաթթըւած ,
Վերջին շունչին հետ եղաւ հուսկ իր կրտակ .
Ժանեակներով պըճնել իր մահ , սե՛ւ քերթուած .
Եւ անոնցմով թաղել մարմինն հողին տակ :

— Խնչ աղուոր է , կ'ըսէին , ինչ մանկամարդ—
Երբ փողոցէն կ'անցնէր դադաղն ողբական ,
Եւ երգերու , բուրվառներու մէջէն ցարդ
Կը ժրպտէր իր ժանեակներուն սիրական :

Անտիպ Գործեր

ՏԻԿԻՆ Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ



ՓՈՔՐԻԿ ԵՐԱԶԱՏԵՍԸ

Ու տեսայ երազիս մէջ որ թւեր ունիմ արծիւի փետուրներով, թւեր նախշուն ու լայն բայուած, որ զիս ամպերուն հաւասար բարձրութեան մէջ կը բռնէին: Մա՛յր, ըսի, ի՛նչ պիտի ըլլայ երազիս խորհրդաւորութիւնը որ աս նոր տարիին գիշերը անուշիկ քուն մը բերաւ աչքերունս: Բարձիս տակ վարդեր շօշափեցի ձեռքովս ու շրթունքներս ալ նոյն պահուն մեզրի համով զգացի օծուած:

Ամայն ու բարձրութիւնը մեծութիւն կը նշանակեն, տղա՛ս, ըսաւ մայրս, նոր Տարին շնորհաբեր տարի մը պիտի ըլլայ քեզի համար. երբ դուն ինքզայն շնորհքը քեզի պահելու արթուն նախահողութիւնով, մաքուր ու ոսկիի պէս մաքուր աման մը ըլլաս:

Ես անդամ մըն ալ հարցուցի, մեծութիւնն ինչ կը նշանակէ, մա՛յր, քանի որ ես մանուկ պատանի մը տակաւին, դուն ամէն օր քու թիզովդ շափեցիր հասակս, ի՛նչպէս անմիջապէս կրնայի մեծնալ, երբ դարունին ցանուած բամպակնինն չեմ, կամ երբ ուռննին կուշտէն բուսած մորձիկը չեմ.— Մեծ լսելով ամէն ատեն հասակի չափ կամ տարիքի հասունութիւն չի հասկցուիր, տղա՛ս, մեծ ուրիշ բաներ ալ կ'ըլլան, մեծութիւն միտքի, մեծութիւն հոգիի, մեծ տակաւին բարոյական նկարագիրն ալ չափահասի մը, ինչպէս քեզի պէս մանուկին մէջ: Մեծ հոգին, մեծ միտքը ի՛նչ հապա, աւելցուցի:— Մեծ հոգին, մեծ միտքը ա՛ն է, պատասխանեց մայրս, որ ճշմարիտը կը սիրէ, բարին կը դաւանի ու գեղեցիկին համար ալ իր պաշտանքը կը բերէ:

Ատ իսկ վայրկեանին ձեռքս վար առի մօրս օձիքէն ու ես իմ մէջս ծրարուելով խորհիլ սկսայ.— Ի՛նչպէս պիտի կրնամ երեք բան նոյն թափով հետապնդել ու երեքը

մէկտեղ ունենալ օր մը .— շա՛տ դիւրին , շատ հեշտ , մի՛ յուսահատիր երբեք , փոքրիկ տղայ , սւրիշ կողմէ ձայն մը ականջիս , առ այժմ հասակիդ գործն ըրէ , շարունակեց այն ձայնը , դպրոց գնա , պարկեշտ եղիր , կամքի ուժով հետապնդէ մտաւոր զարգացումը , ինքզինքդ հեռու պահէ ծոյլերու դրացնութենէն , ան ատեն , օրըստօրէաբար ազուոր հոգի մը պիտի գայ խաղայ մէջդ , ան ատեն աշխարհ իր ստոյգ իսկականութեան մէջ տեսնելու համար , գիշերն ալ ատ աչքերդ գոյգ մը փայլուն արեւներու շողանքներով ապահովուած պիտի գտնես :

Նոր տարի՛ն , ի՛նչ ազուոր երազ , ի՛նչ գեղեցիկ յոյսեր : Այս պատճառով ահա ես ալ բնաւ չպիտի զգամ սիրտ հատցնող արտամութիւնը , երբ շուրջս դժուարութիւններ ունենամ , կամ երբ բերանիս մէջ բոյոր ակուսներս մէկտեղ կոտտան : Առ այժմ , այո՛ , հասակիս գործը պիտի բնեմ , մնացածը ինձի պիտի ըլլայ կը հաւատամ : Մեծ մարդ մը պիտի ըլլամ , ու երեք ազուորութիւններ մէկտեղ պիտի սիրեմ , բարին , ճշմարիտը , գեղեցիկը :

Բարի՛ն՝ որ գիտեմ ինչ պիտի ըլլայ ու գեղեցիկը՝ որ պիտի գիտնամ թէ՛ ո՛ւր կը գտնուի : Պիտի բազմայի որ աս գիշեր անդամ մըն ալ նոյն քունը դար աչքերուս վրայ ու նոյն երազս անգամ մըն ալ կրկնուէր : Նոր տարին ուրիշ ի՛նչ ունէր որ պիտի նուիրէր ինձի պէս ուսանողի մը , որ կ'ընդունի ու կը հաւատայ թէ՛ դօտեպինդ աշխատողն է ուրեմն որ պիտի շահի մրցանակը :

Մատիս

ՅՈՎ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Յովհաննէս Յարութիւնեան (Թլկասիցի) . Դրագէտ ու ուսուցիչ . իսկատիպ գրող մ'է գաւառի հմայքով սնած որ կրցած է այնքան կենդանի պատկերներով ներկայացնել տեղական կեանքը ու բարքերը :

Ն Ա Ճ Ի Ն Ե Ր ՈՒ Մ Է Ձ

Չառիվերին բարձունքէն Սկիւտարի գերեզմաննոցին նոճիները կ'երևան մեզի . իրենց միջին խառնութիւնը վէսորէն կանգուն՝ կապոյտ հորիզոնին վրայ կը հեռանայ սարսուռն վէտվէտումներով :

Մահուան դաշտը կը տարածուի մռայլ անտառին շուքին ներքեւ մինչև հեռաւոր եզրերը մեր տեսողութեան . հոս ճամբուն վրայ որուն ծանր և ճերմկորակ փոշին չբարձրանար գետնէն , ցանցառ տապանաքարեր կը ցցուին արդէն , գունազեղ ու գրեթէ զուարթ իրենց սակետառ արձանադրութիւններով . տեղ տեղ հարուստ բուսականութիւն մը խօշարար աճած , կը պարուրէ զիրենք . կը հետևի իրենց հակումներուն ու կը փաթիթուի դարաւոր նոճիներուն՝ որոնց դօսացած և կնճռոտած կոճղերը կը բարձրանան ուղիղ սիւներու պէս :

Արեւը արեւմուտքի կողմէն ծածկուած է անտառին ետեւ , բայց միջնոլորտը մասնաւոր պայծառութիւն մը ունի , որուն ջերմութենէն մերթ րնդ մերթ ծառերը թաւշեայ կանամուշութիւն մը կը ստանան :

Երբեմն հովը կը դադրի ու անաշխարհային լռութիւն մը կը տիրէ ամէն կողմ , կարծես ծառերն իսկ կը խոկան իրենց անշարժութեան մէջ . մերձաւոր թաղէն . ուր մարդիկ մեռելներու դրայնութեան մէջ ապրելով հանդիսաւոր բան մը ունին իրենց շարժումներուն ու քալուածքին մէջ և սովոր են լռու մնալ , այդ անժխոր մերձաւոր թաղէն մեզի հասած կառքի մը խուլ թաւալումը փշոտ ճամբուն վրայ՝ անկարելի և շատ հեռաւոր ու մեր հոգիներուն հետ անհաշտ բանի մը պէս ուշադիր կը դարձնէ մեզի :

Քանի կը յառաջանանք , նոճիները աւելի միջին , և

գարաւոր բարձրութեամբ կը կանգնին երկու կողմէն . երեկոյեան այդ ժամուն թափառուն հեւք մը որ չես գիտեր թէ ծառերու խորութեան մէջէն կը թափանցէ , կը սահի արագօրէն և անանուխի ցից շիւղերը , տժգոյն և գերեզմաններու յատուկ անհասար անանուն բոյսերու հետ թեթեւ մը կը սարսուան :

Մեր գիւմացը հորիզոնին կապոյտ գիծը կը կորսուի այլ ևս : Մարմարային արծաթեայ ցոլքերը հազիւ թէ կը հշուշեն անդին նոճիներու ետեւէն , որոնք կարծես թէ կը բարձրանան մասնաւոր խոյանքով մը իրենց գալարուն և ցից ճիւղերը երկարելով դէպի վեր ու իրենց տնոյն և մշտնջենական կանանչութեան երանգը դնելով ամէն բանի վրայ , տապանաքարերու վրայ , որ հետզհետէ խիտ կը դառնան , ու գետնի վրայ ուր ճերմրկորակ տարածութիւններ հոգի բնական դորշութեան մէջ՝ անդառնալիօրէն անցած և վերջնական անէացումին վերածուած անխնհերու զգայնութիւնը կը ներշնչեն :

Աւելի հոժ , անտատը կը տարածուի , մեր քովերէն կը բարձրանայ , կը մօտենայ կարծես և ետեւէն մեր նայուածքին կը դոյզ վերջնականօրէն , աչրող աշխարհը , հեռուն :

Լսին ջերմեռանդութեամբ համակուած ենք ու չենք կրնար խօսիլ . մեր սովորական լեզուին բոլոր բառերը նշանակութենէ զուրկ և պարտալ կը թուի մեզի : Հիմա մտիկ կ'ընենք նոճիներու որոնք իրենց յատուկ բարբառ մը ունին կարծես . իրենց սօսաւիւնը դաշնակաւոր և խորին բուրու մնաւէտ ալքերով կ'երկարածգուի , կը տարածուի ու երբեմն կը վերանայ ու կը կորսուի . . . անիկա մրմունջներ ունի ու ճարձատու մներ ճիշերու պէս որոնց նուիրական վանկերը երկար ատեն կ'արձագանգուին անտառին մէջ :

Մեր դիմացը ճամբան կը նեղնայ հետզհետէ ու դառնալով կը կորսուի մեռելներու դաշտի մը մէջ . գերեզմանաքարերը աւելի խիտ են և երբեմն կը ծածկեն ընդարձակ և մերկ տարածութիւն մը և իրենց վրայ շուրջանակի կանգնած նոճիներուն երերուն շուքերը սև և դողդղացող ստուեր մը կը տարածեն . հողին խորութիւններէն խուժածի պէս արհաւիրալից բան մը ունին իրենց կէս մը աւրուած և հնամենի արձանագրութիւններով որոնք մեզի կը դառնան կարծես և մեր նայուածքը կը հայցեն : Ռ՞ր բարեպաշտ ձեռքը քանդակել տուած է անունը իր սիրելիին սա երկնագոյն տապանաքարին վրայ որուն գազաթը պճնուած է մարմարեայ վարդերով և որուն ոսկեդրոշմ զարդարանքները մաշած են այլ ևս անցնող ժամանակին շփումին տակ :

*
* *

Նոճիներու սօսաւիւնը միշտ կ'երկարաձգուի , կը խլանայ տխուր երգի մը պէս . երբեմն պղտիկ ճարձատումներ հառաչանքի ճիչերու նման կը խանդարեն անոնց դաշն հեծեծանքը , ու աչքերս կը սևեռեմ տապանաքարերուն որոնք իրարու մօտ կը ցցուին այլ ևս ամէն ուղղութեան հակած , ինչ որ իրենց ամբողջութեան շփոթ փախուստի մը երևոյթը կուտայ : Երբեմն ալ հպարտ և ուղիղ կեցած են անոնք . սա մութ կանանչ գերեզմանաքարը կոթողի պէս կանգուն , իր ոսկետառ արձանագրութիւններով պճնուած , կը կեցնէ զիս . մութին և անգիտակցութեան մէջէն ի՞նչ գերագոյն և ճակատագրական ճշմարտութիւն մեզի կ'աւանդէ անիկա . հետզհետէ հանդիսաւոր և խորատեսիլ կը թուի , անոր գազաթին վրայ ճերմակ մարմարեայ փաթթոցը գերագոյն ճշմարտութեան ապահովութիւնը կը ներշնչէ , նուիրական տառերը կը

դրոյձուին մտքիս մէջ, վանկերը կ'որոշուին ու կը գլտնեմ հետդնեմ մեծ Արևելքի բանաստեղծին խօսքերը . «Մնայ, տառապեցայ և մեռայ» : Կրօնապետին գերեզմանին գրեթէ կից անցած և անորոշ գոյնով ուրիշ տապանաքար մը կը կանգնի . անոր խոնարհած ճակատը դարձած է արևելքին ու շեմ գիտեր ինչ մը կայ իր մարած վարդագոյն երանգին մէջ, նսեմացած ջերմութիւն մը գրեթէ անոր այս գեղեցկազիր արձանադրութեան մէջ որուն գիրերը անզ տեղ դադրած են ոսկեզօծ ըլլալէ և իրենց խորութիւնովը միայն ընթեռնելի կը մնան . «Վշտի քուներէն հողիս դեռ չարթնցած աչքերս փակուեցան արևին» :

Անանուխի հոտը մեր քայլերուն տակ ճզմուելով աւելի բարկ կը դառնայ և նոճիներուն ստուերները կ'երկարին, գրեթէ կը մասնանշեն արձանադրութիւնները, անոնց դառն իմաստը կամ համակերպող տխրութիւնը յաճախ մեզ կը կեցնէ . ըմբոստացումի թեթև հասաչանքներ կան երբեմն երիտասարդ և կեանքի ծարաւ հոյիներու, որոնց մահը շատ կանուխ այցելած է . «Ինչքան դառն եղաւ մահը իմ շրթունքներուս, որովհետև անոնք թառամելէ առաջ տարբեր հեշտանքի մը կ'ակնկալէին» :

Ու տխրազին մրմունջներ, զզջումներ, «Պահեր եղան ինձի համար ուր մեռնիլը ննջելու պէս քաղցր պիտի ըլլար . ինչո՞ւ թողուցի որ անոնք անցնին և բաժանման դառնութիւնը ճաշակեցի» :

Ինչքան անձկազին է մեր վրդովումը, որովհետև մեր դեռ բարախուն կեանքին համար բոլոր այդ երբեմնի յուզումներու, չյաղեցած և ակնկալուած ուրախութիւններու, մարած յոյսերու և ըղձանքներու զարթնումը անհասանելի խորհուրդի մը սարսափը ունի :

«Ալիքներու նման, գէշ բազդի հովերէն հալածուն,

բոլոր ակնկալուած ուրախութիւնները իրենց ափուռնաքին չհասած ճամբանին փոխեցին և հեռացան . միայն մահը անվրէպ հաւատարմութեամբ մօտեցաւ ինծի , երբ գերագոյն ժամը հնչեց» :

Մեր շրթները հետզհետէ անկարող կը դառնան հեզելու իրենց թաղծագին տրտուհիները ու մեր տխրութիւնով պղտորած աչքերէն անոնց խմաստը կը խուսափի կը շփոթուի և բնդհանուր մրմուռնջի մը կը վերածուի որ անգգալարար կը խառնուի նոճիներու սօսաւիւնին հետ :

Վերը երկու գերեզմաններ բարձրաւանդակի մը վրայ երկաթեայ շրջափակով եզերուած ճերմակ և ողորկ կը կանդնին . դէպի անոնց կ'երթանք ուղղակի և իրենց կը հարցնենք , իրենց խաղաղ և դարերէ ի վեր հանդիւած հոգիներու մշտնջարտ բանաձևը որ աղօթքի մը պէս քաղցր և ամօքիչ պիտի ըլլայ մեզի . «Մահը գերագոյն հեշտանքն է , սպասեցէք անոր համբերութեամբ և հաւատքով» :

«Հոս է սահմանը բոլոր ուրախութեանց և տրտմութիւններուն . կեանքի փոթորիկներէն դողդոջուն քայլերով և վատթարացած հասայ խաղաղութեան սեմը . թող Աստուծոյ կամքը օրհնեալ ըլլայ» :

*
* *

Նոճիները , միշտ իրենց մեղմ սօսաւիւնով կ'օրօրեն մեռելները . վերջալուսին դիմաց՝ անոնց հեռաւոր շարքերը կապտորակ մշուշի մը մէջ կը պարուրուին . լոյսը անթափանց բան մը ունի իրենց մէջ ու իրենց սիւղակթիւնները կը շփոթուին , կը միանան և իրենց գագաթները կը կոհակաւորուին մեղմօրէն , համաչափ շարժումով մը . կապտորակ մշուշը կը ծածանի մինչև հեռաւորութեանց մէջ ուր այլ ևս վերջալոյսին ծիրանիին ներքև օդին թրթր-

ուացումները ու ժգին կայծկյալումներու կը վերածուին ,
ու մեր ամէն քայլին բան մը կը մարի ու կը վառի մի-
անգամայն . խուսափուկ կեանքի հեւք մը կայ մեռելնե-
րու դաշտին մէջ ուր դարաւոր փոշիները լոյս կ'առնեն
և կուտան . ոսկեզէն մշուշ մը կը տատանի գետնին վրայ
և կը ծածկէ ծառերուն ու տապանաքարերուն արմատ-
ները որոնք կարծես կը բարձրանան գետնէն :

Վերը երկինքին վրայէն շառագոյն ամպի ծուէններ
կը սաւառնին և իրենց երանգներով կը վարդագունեն
հոճիներու գազաթները :

Գերեզմանէն դուրս Մարմարան կը փալիլայ արևին
վերջին ճառագայթներով ու այդ լուսեզէն փայտիայանքը
կը սարսուայնէ անոր կապոյտ կուրծքը որ կարծես անըզ-
գալաբար կ'ուռի հրճուանքէ . առագաստանաւերն իսկ
վարդագոյն կ'երևան և կը սահին թեթևութեամբ ծովուն
հեռաւորութեան մէջ ուր կոհակներուն գազաթները կը
հշուշին անհամար ցոլքերով :

Քանի մը վայրկեանէն բոլոր ճաճանչները պիտի մա-
րին սակայն ու անտառը պիտի մնայ իր մուայլ տխրու-
թեանը մէջ , ու բոլոր ոսկեզօծուած տապանաքարերը
պիտի տժգունին ու ժամանակին իրենց տուած երանգը
պիտի հագնին ու գետնին վրայ , տեղ տեղ ձերմկած մարդ-
կային աճիւնէն , հոճիներու սև ստուերները պիտի տա-
րածեն իրենց մթին վերարկուն ու պիտի պարփակեն բոլոր
ասոնք իրենց յաւիտենական սուգին մէջ

Մեր ետև հոճիները սև և հոծ կը կանգնին ու կը
թօթափեն հետզհետէ վարանոզ երանգները վերջալուսին :

Իմացը՝ ընդարձակ և մերկ գաշտէ մը անդին քա-
ղաքին տուները կ'երևան հետզհետէ և զուարճացող ամ-
բոխի մը ժխորը կը հասնի դէպի մեզ , մինչ հեռուն Մար-
մարային վրայ , մեկնող շողենաւերը կ'ուրուագծուին և

ծուխի ծուէններ կը պղտորեն ջինջ կապոյտը երկնքին ու մարմրող վարդագոյն ամպերուն :

Ինչքա՛ն պղտիկ և փցուն կ'երևան հիմա աչքիս :
բոլոր նննդաւոր ճարպիկութիւնները սովորական մարդե-
րուն , իրենց գունիկ աճպարարութիւնները , իրենց աղ-
մկալի ջանքերը . ինչքա՛ն հեռաւոր , անշահեկան և սին
բոլոր իրենց շարժումները , իրենց պայքարները և մըշ-
տնջենապէս թերատ մնայած գործունէութիւնը :

Որովհետև այդ ժամուն ինքզինքս օտարացած կը
զգամ մարդկային կեանքին ու ինձի մը թուի որ իմ հո-
գիիս խորն ալ բոլոր ուրախութիւններս , բոլոր հոգերս
և տխրութիւններս կնքուած և իրենց համադրական ար-
ժէքին վերածուած սակեղրոջմ արձանագրութեամբ մը ,
կը քնանան մշտնջենական քունովը մեռելներուն՝ հոճի-
ներուն դարաւոր և բուրումնաւէտ սօսաւիւնովը օրօր-
ուած :

Արեւելեան Մամուլ

ՏԻԿԻՆ Զ. ԵՍԼՅԵԼՆ



Ա Ն Ա Ն Ո Ւ Ն

Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է .
Ըսէ՛, մասուր ու կանանչէ
Ցանկապատին շուքին նստած
Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է :

Ըսպիտակ, կաթ ու մաղտաքէ
Բուրող ծաղիկ, անունդ ի՞նչ է .
Ըսէ՛, քի՛չ մը գէթ չե՞ս դողար,
Հովիկն անոյշ երբոր փրչէ . . . :

Հրպարտ ծաղիկ, անունն ի՞նչ է
Պարիկին, որ անցաւ քովէդ,
Հեզուկ ու սև սաթի վէտվէտ
Ցայտք մը ձրգած իր քամակէն :

Գիտե՞ս, ծաղիկ, անունն ի՞նչ է
Դողին՝ զոր քեզ տըլաւ հովիկ,
Ու ձայնին որ զիս կը կանչէ . . . :

Նոր Ցաղեր

Մ. ՄԵԾԱՐԵՆՑ



Ե Ր Գ Ձ Ի Ն Ն Ձ Ո Վ Ք Ը

Նախնի դարուց մէջ հոյակապ կայր պերճ դղեակ,
Տիրէր փայլէր դաշտաց վերայ ցրկապոյտ ծով.
Եւ հոտաւէտ բուրաստանաց պատէր զայն պսակ,
Ուր ցայտէին քաղցրամրմունջ աղբիւրներ զով:

Սա բազմայաղթ սէգ արքայի էր ապարան,
Բազմէր յիւր գահ մրուայլամած եւ դեղնագոյն,
Զի նայուած քն է մոլեպնութիւն, պատիժ իւր բան,
Ինչ որ գրէ՝ արիւն է այն, խոհն՝ ահ և հոյն:

Օր մ'այդ դղեակ ազնիւ երպչաց երթայր մի զոյգ,
Ունէր խարտեաշ մին խոպոպիք, միւսն՝ ալեհեր,
Տաւիղ ի ձեռն՝ աշտանակած ի սօս նրժոյգ,
Եւ պատանին թեթեւաքայլ դնայր առ ընթեր:

Եւ ձերուսին ըսաւ մանկան. կա՛ղմ լեր, ո՛րդի,
Մեր հոգեյոյզ երգերն յիշէ, երգէ հըզօր,
Ամիտիէ՛ ոյժդ, լե՛ր զգայուն ցաւի խնդի.
Մեզ արքային շարժել քար սիրտն հարկ է այսօր:

Արդի հայ գրականութիւնը իր մէջ ունի երբեակ թարգմանութիւններ Ուլանտ գերման մեծ բանաստեղծին Երզնիս Աճեմբը քերթուածին, երեք տարբեր թարգմանիչներուն գրչէն ելած՝ ուղղակի գերման բնագրէն. ինչպէս կ'երեւի, ասոնցմէ մին թարգմանած է թրքահայ մեծ գրագէտներէն՝ Ռ. Պէրպէրեանի կողմէն, իբր քառորդ դար առաջ, տաղաչափեալ, յանգաւոր և երկոտասանոտեայ, ճոխ ու հարուստ աշխարհարարով. թէև տեղ տեղ գրաբարի հետքեր կ'երևին. երկրորդ թարգմանութիւնը ըրած է քանի մը տարի առաջ ռուսահայ ամէնէն մեծ քնարերգակ բանաստեղծներէն՝ Յով. Յովհաննէսեան, տաղաչափեալ, յանգաւոր բայց հնգետասանոտեայ, դասական աշխարհարարով, գունագեղ ու ներդաշնակ

Ի սխնագարդ կայ դահլըճին երգչայրն զոյդ ,
Ի գահ բազմած են թագաւորն ու թագուհին ,
Նա արիւնոտ դերդ հիւսիսայգ անեղաչուք ,
Սա մեղմանոյշ իբր ըզհեզիկ շող լուսնեկին :

Ահա տաւղին զարկաւ թելե'րըն ծերունին ,
Չարկաւ ճարտա՛ր , և թրթռային մեծարարաւ ,
Եւ պատանւոյն ցայտեց վըճիտ ձայնն երկնային ,
Յոր խառնէր երգ ծերոյն՝ իբրու ոգեաց խուլ պար :

Երգեցին Սէր , Գարուն , Ոսկի դարն երջանիկ ,
ՉԱզատութիւն , ըզփառս արանց և Սուրբ Հաւատ .
Չայն ամենայն զոր փափաքէ մարդոյն սրտիկ ,
Չամէն որ տայ հոգւոյն վրսեմ թըռիչ մ'ազատ :

Լուրջ մտախոհ ազնուականն որեար դարձաւ ,
Սէգ մարտիկներ խոնարհեցան էին աւաջ ,
Եւ թագուհին՝ ի հեշտութիւն լուծուած ու ի ցաւ՝
Երգչացն առջեւ հանեց նետեց վարդն իւր լանջաց :

«Ժողովուրդէս յետոյ կի՞նս այլ մուրեցնէք» ,
Ցասմամբ ի դող մուկեցնաբար գոչեց արքայն ,
Ընկէց իւր սուրն որ դսիրտ ձեզքեց պատանւոյն հէք ,
Ուստ արեան գետ բղխեց ոսկի երգոց փոխան :

լեզուով, ուր գրեմէ հետքը չերևիր ուստահայ լեզուին անհարթ ձեւերէն, այնքան մաքուր աշխարհաբարով մը որ ինքնայատուկ է արեւմտեան գրականութեան, այնպէս որ թրքահայ ամէնէն ճարտար թարգմանիչը ասկէ աւելի յստակ ու խնամուած լեզուաւ մը չի պիտի կրնար մեզի ճաշակել տալ այս հրաշալի քերթուածը .

Իսկ երրորդ թարգմանութիւնը ըրած է վաղամեռիկ Կորիւն Մկրտիչեան, ողբացեալ գրագէտ երիտասարդը, որ այնքան մեծ ապագայ կը խոստանար, դժբաղդարար հակառակ մեր բոլոր ջանքերուն անկարելի եղաւ ձեռք ձգել զայն .

Եւ ցնդեցաւ իբր ի մրրկէ ունկնդրաց պար ,
Ու վարպետին մանուկն ի թեւս փրչեց հողին •
Նա վերարկուովն ըզնա պատեց , դրաւ յերիվար ,
Կապեց պնդով , թողուց զամրո՛յն ի միտսին :

Այլ նա կեցաւ դրանն առջև կամարաշէն ,
Տաւիղն առաւ , քան զամենայն տաւիղս ընտիր ,
Ջաղխեց փշրեց զայն մի սեան դէմ մարմարեղէն ,
Ահեղալուր գոչեց ձայնիւ որոտալիր :

«Վա՛յ քեզ , գոռոզ սէգ ապարան , մի՛ , մի՛ եւս այլ
Ի քեզ , ի սրահադ անոյշ երգոց լսուի հնչիւն •
Ո՛չ , այլ հեծմունք , և հառաչանք , և գերեաց քայլ ,
Մինչև վրիժուց ոգին լըքեզ լուծէ յաճիւն :

«Վա՛յ ձեզ , պարտէզք գարնանազարդ , անուշարոյր ,
Ցո՛յց ձեզ կուտամ մահահամբոյր այս դէմք սառած ,
Որ չորանաք , ցամքի ի ձեզ ամէն աղբիւր ,
Եւ յապաղայս դընիք խոտան , ի ժա՛յռ դարձած :

«Վա՛յ անօրէն քեզ մարդասպան , երգոց նողկա՛նք •
Չուր արիւնոտ փառքի պսակաց պնդիս ըզնեա •
Գիշերոյն մէջ թաղուի անունդ անարձագանդ •
Եւ զերդ հունդիւն վերջին յայերս ցնդի աննեա :»

Չայս ծերունին կարդաց անեղ , լըսեց Երկին •
Անկան որմունք , անկան սրրահք շըքեղափայլ •
Մի միակ սիւն մընայ վըկայ անցեալ փառքին ,
Հերձուած արդէն՝ գուցէ գիշերն անկնի նա այլ :

Եւ հոտաւէտ բուրաստանայ փոխան՝ չորս դին
Կայ անապատ , ո՛չ ծառոց շուք , ո՛չ աղբիւր զով •
Ո՛չ երգ , ո՛չ վէպ յիշէ զանուն թագաւորին ,
Անդնդասո՛յզ , անյո՛ւշ : Ա՛յս է երգչին նըզով :

Ե Ր Գ Ձ Ի Ա Ն Է Ն Ք Ը

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դըղեակ —
 Հոյակապ էր, փառքն հասել էր մինչ ովկիանս կապուտակ .
 Ծուրջը փռուած ծաղկեպսակ անուշաբոյր պարտէղներ ,
 Թարմ, զովաշունչ շադրուաններ ցայտում էին վառ շիթեր :
 Եւ բազմալաղթ այնտեղ նստած գոռող արքան հողաշատ
 Բազմած էր իր գահի վրայ մռայլ գէմքով ու գունատ
 Ամէն խորհուրդն արհաւիրք էր, կատաղութիւն աչքերում,
 Նըրա ամէն խօսքը կորուստ, արիւն էր նա միշտ գրում :
 Այս ամբողջ երկու ազնիւ երգիչ գնացին մի անգամ՝
 Մէկն ալեզարդ, միւսը մանուկ ոսկեգանգուր ու փարթամ.
 Տաւիղն ուսին . մի գեղեցիկ նժոյգ նեծած ծերունին ,
 Նըրա կողքին ընթանում էր ծաղկահասակ պատանին :
 Ծերուկն առայ իր ընկերին . «Պատրա՛ստ եղիր, ի՛մ որդեակ,
 Մեր սրտառուչ տաղերն յիշի՛ր, երգիր աղատ, համարձակ,
 Երգի՛ր և՛ վիշտ, և՛ խնդութիւն մատաղ ձայնով դու հզօր,
 Գոռ արքայի քարէ սիրտը պիտի շարժենք մենք այսօր» :
 Արդէն շքեղ սիւնադարդ նրանք սրահումն են կանգնած ,
 Գահի վրայ թագաւորը և թագուհին են բազմած :
 Նա սիւգապանծ ինչպէս՝ փայլը արիւնավառ հիւսիսի ,
 Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսեակին յուսալի :
 Զարկեց ծերուկն ոգևորուած նուրբ լարերին մատներով ,
 Ճոխ արձագանգ տուին նրանք լիահնչիւն ձայներով
 Եւ գեղեցիկ տաղ երկնարժան չըքնաղատես պատանին ,
 Ինչպէս համերգ ոգիների , և խլածայն ծերունին :

Կ'երեւի թէ համակրելի գրագէտը ուզեր է, Ներկայ Թարգմանու-
 թեամբը, փորձել անգամ մը իր կարողութիւնը Թրքահայ աշխարհարարին
 մէջ. կը շնորհատորենք գինքը, վասն զի կատարելապէս յաջողեր է, բայց
 միևնոյն ժամանակ կը փափ սքիմք որ իր օգտաշատ փորձերը շարունակէ
 և յարատեւէ այս կարեւոր ձեռնարկին մէջ . որպէս զի օր մը պատճառը
 ինքն ըլլայ Թերեւս միութիւն մը առաջ բերելու արդի հայ լեզուին եր-

Նրանց երգն էր գարուն և սէր, ևրանաւէտ ոսկեղար,
Ազատութիւն, խօսք ճշմարիտ, արիութեան գործ արդար.
Եւ հեշտութեան ամէն վայելք, որ յուզում է սիրտ մարդկան,
Եւ այն ամէնն, որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան.
Պալատական ասպետներ ծաղրի խօսքեր մոռացան
Եւ անվեհեր զինուորները հզօր երգիցն յազթուեցան:
Իսկ թագուհին, սիրտը շարժուած, աչքին արդունք բերկ-
րալից.

Ահա հանեց, ձգեց երգչին չքնաղ մի վարդ իր կուրծքից.
«Գայթակղեցիք դուք իմ ազգր, — գոռաց արքան մուկին,
Ձգեց սուսերն, օգում ցոյաց, մատաղ կուրծքը պատռուեց,
Ոսկեհնչիւն երգերի տեղ կուրծքիցն արիւն դուրս ցայտեց:
Ասեա մրրիկն իսկոյն ցրուեց այն ունկնդիր ամբոխին:
Իր վարպետի գրկումն հողին փչեց անդադդ պատանին.
Ծածկեց մարմինն նա թիկնոջով, նատեցրեց երիվար,
Ամուր կապեց և ամբոցից նա հեռացաւ վշտահար:
Եւ դուրս եկաւ, կանգնեց բարձր դարբասի դէմ ծերունին
Եւ ձեռքն առաւ տաւիղն, ամէն տաւիղներից մեծագին.
Չարկեց նրան կճեայ սեանր, փշուր-փշուր խորտակեց,
Դէպի ամբոց ու պարտէլներն ստակալի ձայն արձակեց.
«Վա՛յ քեզ, խրոխտ դու ազարանք, թող ոչ մի ձայն քաղց-
րութեան»

կու մեծ բաժանմանց միջև, ցաւալի բաժանում մը որ միշտ արգելք
եղած է աշխարհիկ (Թրքահայ ու ռուսահայ աշխարհարար) լեզուին գրա-
կան ուժեան զարգացման ու տարածման:

Բայց մինչև որ այս փառարներն իրականութիւն գտնեն, ռուսա-
հայ շատ համակրելի բանաստեղծ՝ Յովհ. Յովհաննէսեանի սոյն չքնաղ
Թարգմանութիւնը եզական պիտի մնայ, ռուսահայ գրական բոլոր ար-
տադրութեանց մէջ, փասն զի առաջին անգամն է որ ռուսահայ մամուլէն
այսպիսի մաքուր աշխարհարար գրուածք մը դուրս կ'ելլայ, որ կարելի
ըլլայ մրցման դնել Թրքահայ գրական ամէնէն առաջնակարգ հատուածի
մը հետ:

Կարի հնչիւն , երգ չըլսուի քո յարկի տակ յաւիտեան ,
 Այլ սարուկների երկչոտ քայլեր և հառաչանք , հեծութիւն ,
 Մինչ չար ոգին վրէժինդրութեան քեզ դարձրնէ սև ածիւն :
 «Վա՛յ ձեզ և դուք անուշաբոյր , դարնանագեղ պարտէզներ ,
 Տեոէք ահա մանուկերդչի դէմքին վառուած տանջանքներ .
 Թո՛ղ սրբա տեղ դուք թառամիք , աղբիւրներդ ցամաքեն ,
 Գալ օրերին թո՛ղ քար կտրած և ամայի ձեզ տեսնեն :
 «Վա՛յ քեզ , նո՛ւ վք երգիչների , վա՛յ քեզ , անա՛րգ մար-
 դասպան :

Արիւնապսակ փառքի համար մարտըդ լինի թո՛ղ ունայն .
 Թո՛ղ մուսոցուի քո անունը մշտագիշեր խաւարում ,
 Ինչպէս մահուան վերջին հառաչք , սին ձայն ցնդի թող
 օղում» :

Մերուկն ասաց . և երկինքը լսեց նորա պաղատանք .
 Պարիսպները փոշի դարձած , կործանուած է ապարանք
 Բարձր մի սիւն դեռ վկայ է հին օրերի փառաւոր ,
 Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սրգաւոր :
 Չը կայ բուրմունքն այգիների , շուրջը միայն անապատ ,
 Չը կայ վտակ , սաղարթախիտ չը կայ մի ծառ ս ուռերա-
 շատ

Եւ չի յիշում մի տարեգիր կամ երգ անուն արքայի .—
 Այսպէս ահա՛ կատարուեցաւ անէծքն անեղ ծեր երգչի :

Լուսփիկ Ուլան (Թարգմ.) ՅՈՎ. ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԵԱՆ



ՔՇՈՒԱՌՈՒՔԵԱՆ ԽՄԲԱՆԴԻՆ

(ԿԱՐՆՈՅ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ)

Չայդարա թաղը Կարնոյ դէպի հարաւային կողմն է, Մայր-Եկեղեցիէն իբր կէս ժամ հեռու հետիտան : Երբեմն կ'երթայի պտոյտի համար, մանաւանդ դարնան ժամանակ կրք դաշտ ու տանիք կը ծածկուին դալարեօք, երբ ակնապարար կանանչութիւնը, — մայիսի մէջ միայն, — կուգայ յաջորդել ձմեռուան համատարած սպիտակութեան, ձիւնհալէն յետոյ՝ զոր քաղաքացիք կը տօնեն հանդիսութեամբ, աւել ու բան ի ձեռին, դարնանային անձրեներու օգնութեամբ ջուրին տալով փողոցներու մէջ կոխատուած քարացած ձեան դէզերը : Գարնան նախատօնակն է, յապաղած ճնշուած դարնան որ այլ ևս կը պոռթկայ կարծես ամէն կողմէ, հազիւ զերծած երկարածիգ ձմրան ծածկոյթէն, մէկ օրէն միւսը կը ծլին ծառ ու թուփ, և դալարութիւնը կ'աճի կարծես ժամէ ի ժամ աչքիդ առջև : Բարձր տանիքի մը վրայէն կը տեսնես ընդարձակ հորիզոնը, բարձրաբերձ ու դու ևս ձիւնապատ լեռներով շրջապատուած դալարադեղ դաշտը, և յայտակ երկը Եփրատի՝ որ յորդած ուռճացած կը սուրայ կ'երթայ հիւսիսէն հարաւ կանանչութեան մէջէն :

Չայդարա առուակ մըն ալ ունի, ցանցառ ծառերով եղերուած, որ Բաղան-Տէօքէն լերան ստորտաներէն բլղխելով կ'երթայ դէպի դաշտ : Այդ առուակին ձախ եղերքին վրայ ամիկ մը ունէր կաթնավաճառս Ալիք, իբր երեսուն տարեկան կարիճ երիտասարդ մը, որ իր կնոջմով և հինգ զաւակներով, երեքէն մինչև տասը տարու, կ'ապրէր հոն ու կ'ապրեցնէր իրենները չարքաշ աշխատութեամբ : Ունէր միայն երեք կով ու վեց մաքի, տանը

յարակից գոմի մը մէջ որ նոյնպէս իր սեպհականութիւններ, պարտկուած ու կոկիկ: Երբեմն կ'երթայի նստիլ, իրիկուան դէմ, արեամուտի ժամուն, Ալիքի դրան առջեւ: Մաքուր գաւաթով թէյ մը կը բերէին ինծի ամէն անգամ. գիտնալով որ օտարական մըն եմ և ընտանիքէ հեռու, կարծես կ'ուզէին մխիթարել զիս. էֆէնտի ջան, հանգիստ արէ, կ'ըսէր Ալիք, թէ և ես հանգիստ նստած կը պարպէի գաւաթս: Միայն երեք պղտիկները տեսնելով օր մը, հարցուցի իրեն. Մըր են միւս երկուքը: — Նախիրը դաշտ տարին արածելու, պատասխանեց իր գեղջուկ ոճով, զոր դժուարաւ կրնայի հասկնալ, Քիչ մը ետքը երեցան երեք կովերն ու վեց խոշոր մաքիները, և անոնց կակէն՝ փոքրիկները, բոկոտն ու կուրծքերնին. բաց, ութ տասը տարեկան երկու սիրուն լաճեր, քըրտինքի ու փոշիի մէջ թաթխուած: Անասունները բառաչելով մայելով մօտեցան դոմին. կինը դուռը բացաւ. ներս մտան, կինն ալ ետեւուն իր վեց տարեկան լաճին հետ: Հիմա կնոջ աշխատութեան ժամն էր. կովերն ու մաքիները պիտի կթէր: Եւ ամուսինը արշալոյսին պիտի ելլէր իր դործին, կաթը վաճառելու մօտակայ ու հեռաւոր թաղերու մէջ: Հայերէ աւելի շատ թուրք յաճախորդունէր. ամէնքն ալ կը սիրէին այս բարի մարդուկը, ոչ միայն իրրեւ անարատ կաթ վաճառող և պատուական մածուն պատրաստող, այլ և անխարդախ ու պարկեշտ մարդ: Վերջին անգամ տեսած էի զինքը, եթէ լաւ կը յիշեմ. 1895ի հոկտեմբերի սկիզբները, երբ երկրորդ անգամ դարձայ Կարին:

*
* *

Ա'լ այնուհետեւ անհետացաւ Ալիք, ձմեռը վրայ հասած ըլլալուն՝ այլևս չէի կրնար երթալ Չայդարա. բան մըն ալ չիմացայ իր մասին: Դրացիներս ալ բան մը չէին.

գիտեր • ուրիշ թուրք կաթնավաճառէ մը առուտուր կ'ընէինք : Այիքը մուցած էի բոլորովին :

1896ի Օհուսուդին խթման իրիկունը սաստիկ ցուրտ կ'ընէր գրեթէ 20⁰ զերոյէն վար , ահաւելի ցուրտ մը՝ զոր կարելի չէ ըմբռնել դիւրաւ : Կարնոյ կլիմային տակ , կ'ըսէին , միրչե 35⁰ ցուրտ տեսնուած է , որուն չհանդիպեցայ ես բարեբախտաբար : Մայր եկեղեցւոյ տօնական մեծ զանգակը հնչած էր արդէն , և բարեպաշտ ժողովուրդը , մահաւանդ կլին ու տղայ , դուստրագունդ կը դիմէին եկեղեցի : Ժամերգութիւնը սկսած էր , երբ եկեղեցւոյ արտաքին դրան առջև հասայ արագ քայլերով , ինչպէս սովորութիւն է քաղաքացւոյ , ցուրտին սաստկութենէն ստիպեալ : Հարիւրաւոր աղքատ , ընդհանրապէս կլին ու մանուկ , պաշարած էին եկեղեցւոյ բակը • ուշադրութիւնս դրաւեց կլին մը ոտքի վրայ և չորս տղաք որ փարած էին անոր , այլեայլ դիրքով խմբանդրի մը կազմած , տաճարին դրան առջև , զանգակատան կամարին տակ , ամէնքն ալ ցնցոտիներու մէջ պատատուած : Առանց իրարմէ բաժնուելու , այնպէս արձանի պէս անշարժ կեցած , աչքերնին յառեցին վրաս հինգր մէկէն , և աչքով հետեւեցան իմ քայլերուս մինչև որ մտայ տաճարէն ներս : Իրենց համար օտարական մը չէի կարծես • թուեցաւ ինձ թէ կը ժպտէին փոքրիկները : Չեմ գիտեր ինչպիսի՛ յուզմամբ ներս մտած էի անտարբեր , բայց չկրցայ կենալ ներսը • ի զո՛ւր միտքս կը չարչարէի , չէի կրնար հասկընալ թէ ի՛նչ էին այն միամիտ ժպիտները , ո՛վ էին այն անմեղուկ պզտիկները • ձեռք չէին կարկառած ինձի • հասարակ մուրացիկները չպիտի ըլլային • ողորմութենէ աւելի կարծես գուրդուրանք կը խնդրէին ինձմէ անոնց պճրկտայով աչքերը : Թշուառութեան խմբանդրին իր տասը աչքերով կը խռովեցնէր սիրտս , և չէի գիտեր ո՛ւր դար-

ճընել նայուածքս • աչքիս դիմացն էր միշտ կենդանի ար-
ձանակոյտը , միայն երկու քայլ ինձմէ հեռու , հո՛ն սա-
ռուցապատ սալայատակին վրայ , գըրգըխակներով շա-
ղապատուած : Չեմ գիտեր ինչո՛ւ , Յիսուս Մանուկը կը
փնտռէին աչքերս փակ խորանին ետեւն , որ չէր բացուեր
ժամերով ու ժամերով • կը թուէր ինձ թէ չպիտի բաց-
ուէր այլևս • անձկութեամբ լեցուն էր հոգիս • ա՛լ չէի
կրնար հանդուրժել փակ վարագուերին , որ կը ճնշէր սիր-
տս : Քայլերս ուղղեցի դէպ ի դուռը , վարանոտ , վերջին
անգամ մըն ալ դառնալով վարագոյրին որ միշտ փակ կը
մնար : Միտքս դրած էի խօսեցնել սա թշուառութեան
արձանակոյտը , հասկնալ թէ ինչո՛ւ համար ինձի նայեցան
այն տասը աչքերը առանց ձեռք կարկառելու : Չեմ գի-
տեր ի՛նչպէս դողդոջուն քայլերովս անցայ դաւիթէն ու
մտայ դանդակատան կամարին տակ • արձանակոյտը հոն
կեցած էր անշարժ , առանց դիրք փոխելու • իրա՞ւ թըշ-
ուառութեան խմբանդրին էր , Յիսուս Մանուկի ծնած
իրիկունը հոն արձանացած • — բայց այն տանեակ աչ-
քե՞րը • հիմայ աւելի վառ , աւելի խօսուն , կը յառէին
վրաս ու աղապատանք կը հայցէին • ձեռքերը անշարժ
էին ռակայն : Ա՛լ կը մօտենամ արձանին • պատրա՞նք մըն
է արդեօք , կ'ուզեմ հասկնալ • խօսքս կ'ուղղեմ մայր
անդրին • Այս պզտիկները քու զուակններդ են :

«—Ալքի որբեր չի՞նն» , կը մրմնջէ սառուցիկ շրը-
թունքը :

—Միւս պզտիկդ ո՞ւր է :

—Է՛ն ալ մեռաւ հիւանդութենէ • Էսուած քէօ լոյս
արեւ պահէ , էֆէնտի ջան :

Զգացի թէ ծունկերս կը կթոտին • ա՛լ չէի կրնար
կենալ : Կինը թեթեւ մթիթարութիւն մը զգալով իր
ձեռքին մէջ , հազար օրհնէնք կը մուտար , բոլորովին շիկ-

նած, երբ ես կը հեռանայի կամարին տակէն, քայլերս ուղղելով դէպի տուն :

Այն օրէն ի վեր, ամէն անգամ որ Մննդի խիժման իրիկունը եկեղեցի կը մտնեմ, կը թուի ինձ տեսնել թըշուառութեան խմբանդրին դիմացս արձանացած իր տասը խօսուն աչքերով :

Ծաղիկ, հանդէս

Յ. ԳՈՒՐԳԷՆ

Տ Ա Ր Ո Ն

Հայ կեանքին՝ պատմական ամէնէն ճոխ ու ամէնէն խիտ մէկ դրուագն է Տարօն, հայ Սպարապետութեան առիւծներուն որրանը, արիւնո՛տ ու խրո՛խտ :

Մուշ պիտի երթայի առաջնորդական պաշտօնով, և Մամիկոնեանց տունը կը պատկերանար մտքիս առջև առաջուրնէ, մա՛նաւանդ Բուզանդարանի շռայլ նկարագրութիւններով : Ինչն՛ր պիտի տեսնէի և ի՛նչպէս . . . : — Վասն զի Սասուն գետ կը սասանէր իր արիւնոաներկ պատմութեանին տակ բզբտուած, և Մշոյ Գաշտին հեծեծանքները արդէն մշուշներով ամպտած էին մեր երեւակայութիւնը հեռուէն և հեռուներէն :

Պաղտեաց սարերը կտրեցինք : Կոփի բարձունքներուն վրայ սկսած էի ծծել հայ երկրին օդը և մօտիլ հայ ժանգառին : Բռնակապանի անցքով՝ ոտք դրած էի Բարձր Հայքի հողերուն վրայ . բայց Կարին իր բոլոր պատմութեամբ կարծես կ'անճրկէր զիս հետաքրքրել . . . ա՛յնքան բուն էր Տարօնի հրապոյրը, դուք ըսէք հրայրքը Մշոյ պանծալի աշխարհին :

1890ի աշնան հիանալի մէկ իրիկնադէմին, Քարքէի

կողերէն կը սահէինք դէպի վար : Ինծի համար բոլորովին նոր, բոլորովին իրական համայնապատկերի մը դէմը կը սաստկանար կուրծքիս արուիը . բոլոր էութեամբս յուզուած էի . ամէն բան նոր էր շորս դիւ : Յուզուած էութիւնս ուշադրութիւն կտրուած էր . դիւցազն լեռներէն, կայտառող բլուրներէն և ոստերէն, զմրուխտ արօտներէն, աղամանդաշող ակերէն, գոյն գոյն և բոյր բոյր ծաղիկներէն, թարմ ոլորտներէն ու կենսաւէտ մթնոլորտէն չէի ուզեր բան մը կորսնցընել :

Իննականեան միաձոյլ ու յորդ աղբիւրին վրայ հասած էի, երբ Ս. Կարապետի կարմիր կարմիր կաթողիկէները յանկարծ աչքիս ցցուեցան և Անդովկայ երկնաբերձ զանգուածները, որ Սասունը իրենց ծոցը կը սեղմեն, պատկառանքով համակեցին զիս դիմացէն : Մշոյ Դաշտը, վիթխարի ձուածե մը, կապուտիկ շամանդաղներու շղարշին տակ փուռած, խորունկ լուծիւն մը կ'երկնէր կարծես, եւ Սրածանին անսխալ արծաթէ լայն հոսանք մը կը հոսեցնէր դէպի Գրդուռ, խեղդելու համար իր հորձքը Ողականի ոտքերուն տակ : Դաշտին մէջ նետուած կլորութիւններ՝ կ'զգայի թէ գիւղերու կեանքը կը մխային : Այս հաճատարած նորութիւնը հրճուանքով կը խենդեցընէր զիս : Փոխուած էի բոլորովին : Առաջ՝ պատմութեան Տարօնը պատկերացած էր մտքիս մէջ . հիմայ՝ իրական Տարօնը կուգար կ'եղծէր երևակայական անիր տեղագրութիւնը և իր ստոյգ վեհութեամբ կը զրաւէր՝ զանկիս կեդրոնը :

Բնաշխարհին հնութիւններն ու նորութիւնները հետզհետէ մօտէն տեսայ : — Տեսայ Ս. Կարապետը : Պատմութիւնն ու աւանդութիւնը զիրար կը խաչատեն ու կը խածատեն անոր անցեալին մէջ : Մուրասատուր Ս. Կարապետի խարխլած շինուածքներու ետին ու խորերը կը

փնտռես հայ հեթանոսական նշմարներ, և զրոյցներու պարապութիւնը պատրանքի ցանցերու մէջ կը պաշարէ հետաքրքրութիւնդ : Եւ շուտով կ'ուզես անդրադառնալ Լուսաւորչի յաղթական հետքերուն, որոնց վրայ հիմնուած է Ս. Կարապետի դոյութիւնը՝ իր աւանդական ու պատմական իրաւունքով : Աւանդօրէն Մամիկոնեանց դամբարանն է Ս. Կարապետ : Եկեղեցւոյն սալարկուած յատակը դերեզմանն է Տարօնի քաջերուն և Տիկիմններուն : Արբապըղծութեան մտածումը խղճատանջ կ'ընէ քեզ՝ երբ անդրադառնաս որ աւանդութիւնը ոտքերուդ տակ դրած է թանկագին նշխարներ : Ուժգին և երագ սարսուռներ քալեցին ջիղերուս մէջէն՝ երբ հանդիսական Հողեհանդիստով մը օրհնեցի Վարդաններու տոհմին յիշատակը խնկաւէտ կամարներու տակ :

Տեսայ Աշտիշատը՝ իր Մատրավանքով : Ոսկեծղի և զգաստն Անահիտի և գեղանոյշ Աստղիկի մեհեաններէն ու Վահագնի սենեակներէն . . . հետքեր մը կ'ուզես ընդ-նշմարել : Ունայնութիւն : Բայց հո՞ն Տարօնի Մայր Եկեղեցւոյն աւեր պատերուն չոր ցցուածքները ըսին, թէ հնութիւն մի՛ փնտռեր հոս . քանզիչ ձեռքեր իրենց գործին վերջ տուած չեն դեռ . . . :

Ա՛հ . Աշտիշատը, իր Մայր Եկեղեցիով, իր կաթողիկոսարանով, իր կալուածներով, իր անապատ հարստութիւններով, որոնք Հայր Մարգարէտը զգարեցուցին, որմերու աննշան բեկոր մըն է հիմայ, որոնց ներսը տորոն կը բուսնի : Կեանքի ու փառքի այդ աւեր ամայութեան վրայ կը հռկէ, քիչ մը անդին, սղտիկ մատրան մը մէջ, Մեծ-Կաթողիկոսը, Սահակ Հայրապետը, Մեծ-Կաթողիկոսէն առաջ՝ մեծ մարդը, հայ մարդը՝ մեծ հայրապետէն առաջ, մեծ նուիրումը ինքնին, որ Ս. Մեսրոպի հետ հայու աղատագրութեան հորիզոնը ոսկեղօծեց՝ գիրով և գրականութեամբ :

Աշտիշատ երթալ և շանդրադառնալ հոն Դ. դարու հայ կեանքի փառաւոր հանգրուանին լոյժ շքեղութիւններուն, որոնցմէ հիմակ լերկ ու մերկ բնավայրը միայն կ'երդնու իր գրեթէ անսփոփոխ գոյութեան վրայ : Որովհետեւ Հացեաց Դրախտի կանաչ գեղեցկութիւնը, ինչպէս նաև Մշոյ աշխարհին բոլոր անտառներն ու շամբերը ամայացած են, ցնդած են : Վրթանէսի, Մեծն Ներսէսի, Մեծն Սահակի քալած վայրերն են ասոնք . հո՛ն է որ Պապեր ու Փառանձեմներ հայ արքունիքի շուայտութիւնները երգեցին, քամեցին . հո՛ն է որ ճերմակաձի Մուշեղներու, Վարդաններու, Մանուէլներու, Վաչէներու, Վահաններու և Վարդերու սպարապետական ու ասպետական ճախրանքը, հզօր ու փառաւոր, շամփրեցին Սասանեանց գոռոզութիւնները, որոնք Տիղբոնի Դուռը կը վարագանային :

Տեսայ Ս. Յովհաննէսը, արծիւի բոյնը, որ բարձրէն կը տիրէ բովանդակ Տարօնի վրայ : Ի՛նչ աւանդներ ու զրոյցներ կը սաւառնին հոն : Հայ հեթանոսութիւնը խրոխտացեր է այդ բարձունքներուն վրայ և խոնարհեր է Լուսաւորչի շունչին տակ : Սասնոյ լեռներու մէկ կողմը ագուցուած գոհար մըն է Արծուի վանքը, իսլամներու Մեծն Ալիին ասպնջական և վանատուր վանքը, որուն հմայիչ դիրքը առիւծներ կ'արթնցնէ ներսդ . կ'ըզգաս Բարձրին ներգործութիւնը : Ս. Յովհաննէսի ոտքերուն առջև, Գրգըլ-Աղաձի վերև, կարմրեցաւ, կ'ըսուի, Կարինէն, պարկեշտ ու անմերձենալի հայուհին կամ Մշուհին, իր ութամեայ դստրիկին հետ, լանկթիմուրեան պրղծահոս արշաւանքներու բժկանքին մէջ չպզտիկնալու համար :

Տեսայ Առաքելոց կամ Թարգմանչաց վանքը . Սասնոյ կողքին վրայ երկրորդ գոհար մը : Ոսկեդարու Մեծ-

Գործի գործիչներուն Դամբարանը, անշուք ու վտանգուած շինուածքով. բայց թանկագին աւանդներով լեցուն և հսկայ խաչքարերով խօսուն և Միջին Դարու Սասնոյ յուշքերով թրթռուն: Առաքելոց Վանքը հայ թանգարանն է, չքնաղ Մուսէոնը հայ երկրին: Եկեղեցին հին ճարտարապետութեան գեղեցիկ մէկ նմոյշն է. և ներքին դուռը, երևնոսացած ընկուզենի մը, իր նորաքանդակ պատկերներով, կը կարծուի, կը համադրէ «Վարդանանոյ Պատերազմ»ին պատմութիւնը: Վանքին մօտիկն է Իշխանաց աղբիւրը և Ճորտուանէլի գերեզմանը. վերջապէս հոն՝ Ծովասարի և Ծիրանկատարի բուրբախքը՝ Սասնոյ քաջեր, Սասնոյ ծուեր, իրենց Սերորներով ու Անդրանիկներով՝ փաթթուած պատուի և վրատահութեան գրահներուն: Սասուն և Աղատութիւն՝ նոյնանիշ եղած՝ կը ծաւալին անկից, Մշոյ թիկունքէն: Ահ, դժբախտ եւ սակայն: Վասն զի բանտը կապկպեց զիս ու արգիլեց համբուրելէ և ծծելէ այդ երկնազերծ արծուերոյնը: Ս. Աղբերիկէն միայն հպեցայ անմատչելի սարին, Ս. Աղբերիկէն՝ որ դեռ նո՛ր արատաւորուած էր քաջ վարդապետի մը սպանումով. սե՛ արատ:

Տեսայ Մշոյ Դաշտը. հայ մշակիին, տունն ու օտանն. ամէնքն ալ աւրուած ու աւարուած ճոխութիւններու անվելիջ պատմութիւններով հեծեծուն: Տեսայ ու վշտազնեցայ: Առաջին տեսածս՝ ծրար մըն էր արիւնջուայ. բուռ մը գարիի համար սպաննուած գեղի պահապանի մը լաթերուն ծրարը, զոր տարարախտ այրին կարծես նուէր կը բերէր ինծի առաջին անգամ՝ Առաջնորդարանի դուռը՝ իր փոքրիկին հետ գրկած:

Տեսայ քաղքըյին (Մշեցին) ու գաւռցին (Սասունցին). այր ու կին, հայ դէմքի գեղեցիկ տիպարներ. մանաւանդ գաւռցին, սե աչք, սե յօնք, թաւամազ կորովի կուրծք, արծուային քիթ, սպիտակ խոշոր ակռայ,

ընդհանրապէս միջին հասակ, կաշմբուռն կազմուածք, թեթեւաչարժ, մտացի, աշխոյժ, քաջ, արիւն մը տաք, բայց անշուշտ բունի խառնակուած :

Տեսայ այդ բոլորը՝ թշուառութեան այդ երկրին մէջ, և թշուառութիւններու մէջ իսկ սրացած ու սրտմտած սւշիմութիւնը նշմարեցի մատղաշ տարօնցիներս և վրայ եւ սա՛ մտածումը շողաց մտքիս մէջ՝ թէ այս երկիրը կրնար հանել իր ծոցէն Սահակ մը, Մեսրոպ մը, թէ այս երկրին, Վարդաններու և Վահաններու այս երկրի՛ն անկէր սնուցանել իր մէջ ազատագրութեան մեծ շարժումին հերոսները . . . մինչև հիմայ :

Ամէնուհետեւ Տարեցոյցը ԲԱԲԳԷՆ Ծ. ՎՐԴ. ԿԻԿԷՍԵՐԵԱՆ

Բարգէն Ծ. Վրդ. Կիւլէտերեան. Արմաշու Դպրեվանքին ամէնէն փայլուն շրջանաւարտներէն մին. գրագէտ, բանասէր ու հրապարակագիր. իր գրական գործունէութեամբը պատուաբեր դիրք մը կը զբաւէ Հայ կղերական դասուն մէջ. Ունի բանասիրական և պատմական լուրջ աշխատասիրութիւններ, որոնցմէ ամէնէն նշանաւորներն են՝

Քննական Ուսումնասիրութիւն Եղիշէի, մանրակրկիտ ընդարձակ հետազոտութիւն մը, որ Վարդանանց պատերազմին պատմութիւնը կը լուսարանէ բոլոր յարակից պարագաներով : Այս խնամեալ երկասիրութիւնը Իզմիրեան առաջին մրցանակով վարձատրուեցաւ :

Յովհաննէս Կոլոս, մեծագործ Պատրիարքին կենսագրութիւնը, որ միանգամայն ժամանակակից Հայ պատմութեան շահեկան էջեր կ'ընծայէ :

Ծովի կաթողիկոսաբանը, տեղագրական-պատմական ուսումնասիրութիւն մ'է Կիլիկեան շրջանի այլևայլ կաթողիկոսական կայքերուն, (Ծովք, Հոռմկլայ ևն.) Ազգ. եկեղեցական պատմութեան համար մասնաւոր շահեկանութիւն մը ունի :

Հրատարակած է նաև՝ զանազան բարոյալից նիւթերու վրայ՝ Քարոզներու հատոր մը :

Իբր հրապարակագիր, շատ ծանօթ է իր Լոյս շաբաթաթերթովը, ինչպէս նաև ուրիշ պարբերականներու մէջ հրատարակած բազմաթիւ գրական ու կրօնական յօդուածներովը :

ՇՆՈՐՀԱԼԻՈՅՆ ԳԵՐԵՁՄԱՆԸ

Տիգրանակերտէն ի Ջերմուկ և ի Չընքուշ վերադարձած էի, ուստի Սարգեղու վրայօք պիտի անցնէի գայի: Չընքուշէն ինն ժամ եկած էինք, կարաւանը իւր օթեանն ըրաւ Քէյտան գեղը. ևս անցայ, և ուղիղ արահետէն խոտորելով բարակ ուղիով մը շատ բարձր լեռ մը ելանք, կ'ուղէի անպատճառ նոյն գիշերը՝ Հայոց Ծովք գեղ կամ ըստ Թրքաց՝ Կէօլճիւկ՝ իջեանիլ: Բոց ու կրակ եղած էր փափաքը սրտիս մէջ, կը տոչորէր հոգիս և մարմինս, այնպէս կ'ղգայի, եթէ նոյն օրը չը հասնիմ, չտեսնեմ, չհամբուրեմ այդ ջուրն ու հողը, կարօտակէզ աչքս բաց մնալով: Արդէն հնար չէր ձի նստիլ, կը քալեմ, կը վազեմ, կը թռիմ, և ահա պաղ հով մը, քայլ մի ևս, և ահա Ծովքն իւր ցանկալի երեսը ցցուց կարկամեցայ: Ո՛վ կարող է նկարագրել այն բուռն և խոր յուզմունքն որ տիրեց իմ հոգեկան և մարմնական բովանդակ մասանց վրայ: Ո՛վ իմ պաշտելի Շնորհալուոյս տուած և առած, օրհնուած և օրհնած, աղօթած և երգած տեղի, տեսարան ու հանդիսարան: Այժմ կ'ղգամ թէ մարդ ո՛ր աստիճան յափշտակութեան մէջ կը գտնուի, երբ իւր ամէնէն աւելի սիրածին հանդիպի, Քարերու գլուխը քարացած մնացեր եմ, ապա գետինը թաւալեցայ երեսացրս վրայ: Կը փարիմ, կը գրկեմ, կը պագեմ, կ'սթափիմ, և այլ աչերս չվերցուցի երկինք: Երկինքէն բարձր փառք մը գտած էի: Աչքս ի ծովն, միշտ ի ծովն, շեշտ ի ծովն:

Ծո՛վ, դու է՞ր չես ծիծաղիր:

Բաներ կորոնեմ իւր մէջ՝ չցուցներ. հարցումներ կ'ընեմ իրեն՝ չպատասխաներ: Իւր ափանց ալիքներ՝ որ կը ծփծփան առանց հողմակոծութեան և առանց փոթոր-

կի, նշան է թէ փոթորիկը զանի այնքան վեր ու վայր յուզած է, որոյ կուրծքը ուռչած է և ծոցոյն խորերը կնծով լի, նման թշուառ դշխոյի մը, որոյ գլուխն և դէմքը փայլուն երևի ադամանդներով, ոսկեհուռ ճեղեհակներով, բազմաթիւ բարձրաշուք փղոսկրէ գահոյից վրայ. արտաքուստ երևոյթ երանելի և նախանձելի, բայց շարունակ արտասուեն իւր աչերը, ցաւն ու կակիծը կրծէ ներսէն անոր սիրտն, լայ ու հեծեծէ. քանզի կորուսած է նա իւր երկու աչաց լոյս երկու դաւակները, թագակիր գլուխներ, մին փառք եկեղեցւոյ, միւսն փառք դիւցազնութեան: Ծովիկն աչքի ձև ունի, կոյսի մը աչքին պիտի ըսէի, բայց ա՛լ ճիշդ մանկամարդ այրւոյ մը կը նմանէր, խորհրդաւոր գեղեցկութեամբ և շնորհքով գեղուն ականողի մը, զոր արտասուքն աւելի հրապուրիչ կը գործեն լերանց շրջանակի մը մէջ ամիտփուած, և ինչպէս սև ոսպ մը, աչքին բիրը՝ այնպէս կը մնայ և կ'երևնայ սև ու քայքայուած շէնք մը ծովուն մէջ, կողեակ դղեակին վրայ Ս. Նշանի տաճարին աւերակն: Ո՛ր աւերակ, որքան գերկինս բարձր ես և մեծավայելուչ իմ սրբտիս վրայ...: Գիշերը անքուն անցուցինք, արշալուսին նաւ նստեցանք կղզին երթալու, աւա՛ղ աչերուս, սև ու սպիտակ քարեր ցիր ու ցան խարխալեալ որմունք եւեթ կան...:

Համբո՛յր քարերուն, համբո՛յր փլատակաց վրայ բուսած խոտերուն: Լուսատիպ մը պէտք էր ճիշդ այս պահուս, սոյն Սատուածաբնակ աւերակին և Սատուածարեալ Ծովիկին տխուր և վսեմ տեսիլն տպէր, պատկեր՝ զոր աւելի կը կենդանացնէր արևուն ծագման քնքուշ ճառագայթն և լերանց ու ծառոց ստուերները կը կախէր երկնափայլ ծովուս բիւրեղեայ ծոցոյն մէջ. այս պահուս՝ երբ ձկունք երամով կը կայտուէին, երբ թռչունք թիւ

Թիւ կը թռչէին : Բայց ինչո՞ւ ամէնքն ալ անձայն էին : Վա՛հ, երբ լուեր էր Ներսէսին քնարը «Զարթիք փառք իմ» երգելէն, զոր կը նուագէր զուարթն հոգւով «Ընդ զուարթունս նոր երգս առեալ Նորոգողին» և կը կրկնէին այս թեւաւոր ալախօսիկ տիրացուք «Ալէլուիա՛» այն օրէն ալ լուած էին թռչնոցս դայլայլիկք :

Ո՛վ կրնայ բաժնուիլ ձեզմէ, ափ ու աւեր Ս. Նըշանայ : Ո՛վ կրնայ թողուլ զձեզ քարինք և ալիք Ծովկ-դղեկիս : Արդեօք որքա՞ն պիտի ապրինք դուք կամ ես, տա՛յր ինձ երկինք այն երջանիկ առիթն կրկնելու անյագ համբոյրս և անհատ արցունքս ի ձեզ :

Լերինք և եթերք Ծովկիս, ձեզ, որ զուարթ խայտանօք ազդած և շարժած էք երկնային Աշուղին զգացմանց քնարին հոգեղէն թելերը :

Աստեղք և արեգ, ձեզ, որ պայծառ և չքեղ ճառագայթներով ոգևորած էք պայծառ հոգին հոգենուագին «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա» գեղգեղողին :

Թորոս Աղբար

ԳԱՐ. ԵՊ. ՍՐՈՒԱՆՁՏԻԱՆՑ



Գ Ի Ի Ղ Ա Կ Ա Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

Գիւղի մը մէջ, կանուխ առտուն,
Մի դռնարաց մատուռ տեսայ •
Կարծես հրաւոր կարդար ժպտուն,
Սիրտըս դրդեց ու ներս մըտայ :

Քիչ աղօթող հոն գտնուէր,
Զի գործի օր էր, ժամ հունձքի,
Մաղթանքն ասէր ծեր մի տէրտէր,
Հաղորդութեան ձեռքն էր սկի :

Կին մը կուգայ մօտ սեղանոյն,
Գիրկը մանուկ մի ստընդիայ,
Մօր մը խնդին, ջերմ հաւատոյն
Կրկնակ շողը դէմքին վըրայ :

Երբ նա կենաց հայն ընկալաւ
Օրհնած աջէն քահանային,
Շրթամբն հազիւ յայն հրպեցաւ,
Ու կը կենար զըւարթագին :

Եւ հեշտանքով մը ծայրագոյն
Բերնին վրայ շոյտ պնդեց որդին,
Անոր ջամբեց սուրբ կերակրոյն
Մասն որ անոր պահէր բաժին :

Ո՛վ քաղցրիկ ոյժ սիրոյ մօրկան,
Յերկրի ծաղիկ երկնանըւէր •
Բաժնէ զամէն, ու անձին միայն
Տիրոջ մարմինն ա՛լ չի պահեր :

Գրնա՛ սփոփուած , դո՛ւ մատաղ կին ,
Բաժինդ ըլլան առատ օրհնիք .

Սիրող հոգւոյդ մաղթանք լըսուի՛ն ,
Ծաղկի՛ մանկանդ կեանք երջանիկ :

Ու մեկնեցայ աշուիս թրջած ,

Մըտածելով շիրմի մ՛հեռուն ,

Ուր խոտին տակ շատոնց հանդիւած

Կայ լաւագո՛յնը մայրերուն :

Հանջքն հաւալուս ձագուցն համար

Ինչպէս ճեղքէ պատառ պատառ ,

Սրտին արիւնն և նա՛ յօժար

Զաւակներո՛ւն պիտի ջամբ տար :

Ֆրայիէր Քօն Զեպից (Թարգմ.)

Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Մ Ա Տ Ո Ի Ռ Ը

Բլրոյն վըրայ կանգնի մատուռ ,

Հովիտն ի վար կը հայի լուռ :

Վարը , մարգին Լ՛առուին եզերք ,

Հովուիկն երգէ զուարթ մի երգ :

Հնչէ պղընձին թինդ սրգաւոր ,

Ու մահերգակ անցնի թափոր .

Լըռէ ուրախ խաղը տրղուն ,

Եւ ուշն ուղղուի լերան գլխուն :

Հո՛ն , վե՛րն , ի հող դընել տանին

Զայնս ոյք հովտին մէջ խնդային .

Հովի՛ւ մանուկ , հովի՛ւ մանուկ ,

Հո՛ն , վերն , օր մ՛ալ քեզ կառնուն սուգ :

Էռսփիկ Ուլանօ (Թարգմ.)

Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Մ Ի Ն Ե Օ Ն

Գիտե՞ս երկիրն ուր կիտրոնին կը ծաղկի ,
Մուժ տերեւոց մէջ կը վառին նարինջք ոսկի ,
Կապոյտ երկնից տակ կը փրչէ հով մը մեղմին ,
Ու կը կանգնին հանդարտիկ մուրտն ու վե՛հ դափնին :
Գիտե՞ս արդեօք :

Այն տե՛ղ , այն տե՛ղ ,

Սէր իմ , երթալ կ'ուզէի ես քեզ հետ մէկտեղ .

Գիտե՞ս այն տուն , սիւներ կըրեն անոր ձեղուն ,
Պայծառ յարկեր ու սրբան է լուսով շողուն ,
Ու մարմարեայ արձաններ կան կանգնած չորս դին
Որ ինձ նային . ա՛հ խեղճ տղայ . քեզ ի՞նչ ըրին :
Գիտե՞ս արդեօք :

Այն տե՛ղ , այն տե՛ղ

Երթալ , պաշտպանո՞ւղ իմ , կ'ուզէի քեզ հետ մէկտեղ :

Գիտե՞ս լեռը ու ամպերով պատած ուզին ,
Մըշուշին մէջ իրեն ճամբան խնդրէ ջորին .
Քարայրները վիշապազանց օթելան են ,
Կը գըլթրի ժայռն ու կոհակն անոր վրայէն :
Գիտե՞ս արդեօք :

Անկէ՛ , Անկէ՛

Կ'անցնի , հա՛յր իմ , մեր ճանապարհ , մեկնինք ասկէ :

Կէօթէ (Թարգմ.)

Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ոգրացեալ Ռ. Պերպերեանի ճարտար զրչին կը պարտինք այս քանի մը շքեղ թարգմանութիւնները , որոնք գերմանական բանաստեղծութեան վրայ գեղեցիկ ճաշակ մը կուտան ընթերցողին :

Տ Ե Ր Ե Խ Ք Ա Փ

Ծածկած էր աշունն երկրիս երեսը
փափուկ թերթերով այն մեր անտառին .
Ա՛լ խորհրդաւոր ոչ էր պուրակը ,
Լրուած էր անոյշ ձայնը սոխակին :
Ծաղիկ հասակով մահի դուռ հասած ,
Տըխուր պատանեակ՝ դանդաղ քայլով մը՝
Վերջին անգամ մ'ալ կը շրջէր յոգնած՝
Ցանկալի անտառն իր մանկութեանը :
«Մընա՛ դու բարո՛ւ . . . անտառդ իմ սիրուն ,
Կ'ընկճիմ ես , սուգըդ գուժկան իմ բախտին ,
Կը տեսնեմ մահիս ես դուշակութիւն
Յամէն այն տերեւ որ գետին կ'ընկնին :»
Ո՛հ էպիտորին ողորմ պատգամը ,
Ըսիր դու ինձի . «Տերեւն անտառին
Կը դեղնի նորէն աչքիդ առջեւը ,
Սակայն քու համար ա՛լ կ'ըլլայ վերջին ,
Կ'առնէ քու չորս դիդ մըշտատեւ նոճին .
Տըժգոյն աշունէն աւելի տըժգոյն ,
Կը հակիս գըլիս դու դէպի շիրիմ :
Պիտի թարշամի քու այն մանկութիւն
Դաւարէն առաջ մարգագետինին
Ու բարունակէ լեռներու կողին :»
Կը մեռնի՛մ . . . : Նըսեմ հովեր հարաւի
Ցուրտ շընչովն իրենց՝ դիս շօշափեցին .
Գեղեցիկ գարունս աչքէ կը փախչի
Որպէս ըստուեր մը չըքոտի ու սին :
Ընկի՛ր դու , ընկի՛ր , վաղանցո՛ւկ թերթիկ .
Սա տըխուր ձամբան քողարկէ՛ աչքէ :
Այն վայրն ուր վաղիւ կը մտնեմ լըռիկ ,
Ծածկէ՛ իմ մօրըս յուսահատ ցաւէ :

Բայց իմ սիրուհիս երբոր հերարձակ
Այն լուռ ամայի ծառատունկին տակ
Արևի մուտին գայ զիս արտօսել,
Թեթև շրջիւնովդ նայէ՛ վերցընել
Հատուերս, որ գտնեմ քիչ մ'ըստփփանք :»
Հսաւ ու գնաց . . . եւ ա՛լ չը դարձաւ :
Վերջին տերեւն որ անտառէն ընկաւ,
Կընքեց ըզվերջին օրն անոր կեանքին .
Կաղնիին ներքև տապանը բացին . . .
Սակայն սիրուհին երբե՛ք հոն չեկաւ .
Մենակայ վէմին չեղաւ այցելու,
Ու խաչնարածը՝ մօտ հովիտներս՝
Միայն վրդովեց ոտքին ձայնովը
Տխուր դամբանին խոր լուսթիւնը :

Միլվուա (Թարգմ.)

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Ի Ն Ա Ռ Ջ Ե Ի

Գրեթէ պուրակ մըն է բարեկամիս պարտէզը : Ան-
պտուղ ծառեր վայրենիօրէն աճած են չորս դին, մէջքեր-
նուն գրկուած անհամար թեւերով, ու գագաթներնին՝
իրար համբուրելու նկարչային դիրքով մը : Արեւն ատոնց
վերև կը թառի միայն, և լոյսի հեղեղն որ ճիգով կը
ծորի, կը սորսորի տերեւներն ի վար՝ կուտայ անոնց այն
մթութիւններն ու բացութիւնները կանանչի զոր երան-
գամու վրձի՛նը կը սիրէ ճանչնալ մանաւանդ :

Վարի ծայրը թաւուտքը կը ցանցառի երթալով :
Քառակուսի բարձրաւանդակի մը վրայ հովանոցակ մը
կոթողուած է . կլոր կլոր փայտեր համաչափ կերպով հո-
ղին մխուած՝ վեցանկիւնի խցիկ մը շինած են զոր կը

Ժածկեն մաղլցիկ բոյսեր, սարբինայի մը տեսքը տալով
անոր : Կանանչներու մէջ խնդդուած այս թագստոցն
խրքիւ միակ շնչառութիւն՝ ունի պատուհանի ձեւով նեղ-
կրճուկ ծակուլիկ մը, որ դէպի դուրս կը նայի և որ
Պօլիան ամբողջ իր մէջը կ'առնէ՝ անոր դիւթական ման-
րանկարին նկատ : Պարտէզին նայուածքն է աս :

Երբեմն, ամառ օդերու մանաւանդ, կ'երթամ դե-
զերելու հոն միս մինակ, և շուքերուն զով անդորրը ձեղ-
քելով մանելու հովանոցակէն ներս, քիչ մը բնթերցում
ընելու համար, որ, սակայն, իր սկսումին մէջ կը կասի
յանկարծ, վասն զի աչքին վայելքը միտքին վայելքէն
սխրալի է հոս :

Անցած առտու նորէն հոն էի : Ակնարկս՝ թաւուտ-
քէն, բազմաւուած ճիւղերէն ու ստուերներէն յոդնած,
կը դարձունեն մ գէպի սարբինային պատուհանն որ գոց
է բոլորովին :

Ի՞նչ կրնար թլլալ, հարցուցէք, դիտարանիս դռնակը
փակող : Աջէն ձախէն ծիլ նկատը գալար բարունակներ :
Կրնայի՞ դանտնք մէկդի մը հրել, կամ, թէ որ ընդվզէին
մառներուս դէմ՝ քիթերնուն կտարել մէյմէկ քիչ, ազատ
անցք տալու համար օդին ու երկինքին. Դիտարանիս
դռնակը խափանող՝ ՍԱՐԳԻ ՈՍՏԱՅՆ մըն էր :

Հմայուած, կը նայիմ ամբողջութեանը : Այսչափ ան-
թերի գործում՝ ժանեակը բանալ էգ թաթիկներով
անդամ որուած չէ արտադրել : Անկիւնաւոր տրամագի-
ծով շրջանակ մըն է, լուսինկայի խոշորութեամբ. նուրբ
ու սուր շառախղներ կեդրոնէն արձակուած են դէպի
եզերք, ու զուգահեռ թելերու բանակ մը լեցուցած
գոցած է ամբողջ միջամասն, անվրէպ, հրաշալի համա-
չափութեամբ մը : Դուրսէն, հատանալներ ինկած են վրան,
ցանցառակի և անջատ թելեր հատանալներուն հետ շք-
ջանակին տրամագիծը խածնելով՝ դացած են կապուելու

սարբինային սիւներուն, իբր ամբասնդող օժանդակներ
ոստայնին փցուն կազմաւորութեանը :

Երկրաչափութեան բոլոր գլուխները կան հոս : Թեւ
մը ասդիէն՝ ինչուն ցօղունի մը կատարը երկնցած,
թեւ մը անդիէն՝ ծղօտի մը ազուցիկ. ու Սարդն իր
օղակաւոյց դղեակը կախակայած է, դալարիքը՝ շրջա-
նակ, գեղակապոյտ երկինքն ալ յատակ ընելով իր
պատկերին :

Երբեմն հով մը կ'ակսի, վախկոտ շունչն ամառ առ-
տուն : Թաւաւաքը կը խշրտայ, բոյսի օժանդակ ծիւերը
կը սարսուան ու ոստայնն ամբողջ կ'երթայ ու կուգայ
միջոցին մէջ, հովին ուղղութենէն ու պարտին սև ծան-
րութենէն փոք տալով հետզհետէ :

Կ'սպասեմ :

Ճարտարապետն անյարիր փակած է կեդրոնին : Ատ
դիրքին մէջ, կարծես խոնջէնքի խոհանք մը ունի անոր
ներս քաշուած գլուխը : Արունքները, շատ քալած մար-
դու մը հանգիստին պէս վեր անկուած են, քայ ձգուած
կարկինի մը ձեւով. գլխամասին ցցունքները՝ նմանապէս,
ամբողջութեամբ կազմելով կրկնուած տարօրինակ X մը՝
որ իր այդ անժանօթի խորհրդանշանով դէպի անժանօթ
պիտի տաճնորդէ ապահովապէս իրեն գիտող միամիտ
ճանճը :

Առջի իրիկուն, հոս գալուս. գոյութիւն չունէր
ասիկա. բսել է առտունն դէմ, լոյսին ձեղքուելուն հետ
իր դործին շտապած էր այս շուտիկ բանւորն ու շէնքը
փութանակի գլուխ հանած :

Եւ յանկարծ տղու չարութիւն մը կը ծնի մէջս՝ աւ-
րըշտկելու, փլցունելու դայն, նախանձէ՞ս թէ գիտարանը
փակուած տեսնելէս. չեմ գիտեր : Գաւաղանա կ'երկըն-
ցունեմ անոր, թեթև հպում մը ոստայնին. և անա թե-

Ներք փոթորիկի բռնուող նաւու մը պարաններուն պէս կ'երերտըկան, կը ծեծկըւին, կ'ուռին ու կը պրկուին: Մամուկն այս տագնապալի պահուն պզտիկ շարժում մը կ'ընէ դէպի շեղ: Բայց ցպիկս արդէն պատուած փրցուցած է հիւսքին մեծ մասը: Մամածուռ զեռօ մը կը բացուի անոր դողը, կեդրոնէն խոյս տուած դիծերը կը կախուին, կը պլորուին, հատանողները գլխիվար կ'իջնան, տրամագիծը ջախջախուած երկանիւրի մը կերպարանքը կ'առնէ, և օժանդակ թելերն ուտայնէն անջատուած՝ բուրդի նօսը ծուէններու պէս կը դողդըղան ծղօտներու վերև: Ջեռքիս անգութ գործիքն իր աւերը կը շարունակէ նորէն, մինչև որ մէկ պահեկէն ուտայնին բովանդակ կազմածքը քայքայի ու սարդն ողբայ իր փլուզո՛ւմը չարալլուկ:

Թելերն իրար փակած են հիմայ, գործածումէ փռթըկուած չուանի կտորի մը պէս: Վերէն, լուսամուտին առիքէն փակած հաստըկեկ թել մը կը յամաւի դեռ կախ պահելու շէնքին աւերումը համակ՝ որ կը ծփայ աղտոտ, գորշ և ողորմելի քուրջի մը թուլութեամբ: Ու մամուկն այս փխրուն ոչնչութեան ստորտաէն վեր կը շուլլուի հապշտապ, ընկղմելու վրայ եզող մակոյկի մը տիրոջը նման՝ որ ջախջախուած տախտակներուն կը փարի, կեանքին հետ արկածուող մակոյկն ալ մէկտեղ խորհելով: Կը քայէ տաժանքով, թեւերը՝ մարմնամարդէ պարտասուն մանչու մը ճիգերով, հեւ ի հեւ, ճորճըրալով, ստեւոտ ստքերը կծկելով. տխրագին վերե՛լք մը՝ իր քայքայուն բնակարանին մէջքէն, որուն նայելով կը կըսկըծայ ներսիդիս: Մագլցումն աւարտելէ յետոյ, աներեւոյթ կ'ըլլայ անիկա՝ հովանոցակին կլոր փայտերուն ետև՝ մինչ ցպիկս վերջին անգամ մըն ալ կ'երկարի կախուող աղտեղութեան, կարծես անգթութենէս հետք մը գիչ ձելու դիտումով:

Շատ չանցած, երբ ընթերցումս կ'ընդհատեմ՝ սի-
կառիս վերջին ումպին հետ, կը դիտեմ որ նոր թել մը
երկուքի ճեղքած է վերստին դիտարանիս պզտիկ քառա-
կուսին: Հիւսնին՝ պատ հիւսելը տեսած էք մօտէն.
առասան մը կը կախէ անիկա՝ շարուած քարերուն վե-
րեւէն, ծայրը կապար մը կայ որ ուղղութիւնը պիտի
ճշդէ: Պատկերը նոյնն է հոս:

Մամուկը, — ցպիկէս արկածուող ի՛մ մամուկս ապա-
հովարար, — իր սև իրանովը ճոթի այդ կապարին երեւոյթն
առած է: Առասանն այն մածուցիկ հիւթն է որ բերնէն
շողիքի սլէս կը ծորի ու կը պաղի միջոցին մէջ: Առաջին
սիւնը—թուքէ՛ սիւնը—նետուած է շրջանակին մէջ, յե-
տոյ երկրորդ մը. ուրի՛շ մըն ալ՝ տարբեր ուղղութեամբ,
ու մեր բանուկ տատուկ միջատն իր ժանեակի դիւթա-
կան հիւսքը սկսած է ալ: Անթարթ կը դիտեմ այս ան-
գամ, մինչև հարիւր համրանք կ'արտորամ շուրթերու
տղայական թութակութեամբ մը, երբ ոստայնը կ'աւարտի
նախորդին չափ բոլորչի, անթերի ու շքեղ:

Արեւն ելած է հիմա ու սաղաւարթներուն պատառ-
ուածքէն եկած՝ իր առաջին ճաճանչներն արձակելու
սարբինային դմբէթն ի վար: Այդ ճաճանչներուն մէջ,
նորդնոր հիւսուած Ոստայնն ապրշումի փայլունութիւններ
կ'առնէ, ցանցակերպ բոլորչին կը վառվռի փարփառ ու
դեղինփառ ցոլքերով, ու նորէն, ոստայնին պորտը՝ սեւ
միջատն իր սպասուամը կ'սկսի:

Օրն իրեն հետ կ'արթնցունէ մանրուկ մունրուկ թե-
ւաւորներու ամբողջ երամակը: Միօրեաներ, օրիորդներ,
չերեփագի և լուսաթիթեւ կը բզզան չորս դին, արեւն,
լոյսերէն ու բոյրերէն գինով: Ատոնցմէ հատ մը, պտըլիկ
ճանճ մը, չի տեսնելու գալով ոստայնին անօսրահիւս փրո-
ուածքն՝ իր խել խօլ արշաւին մէջ կը փակչի թակարդին:
Մէկ քանի շարժում, ծիծաղելի թապլտըկիլ մը, ցանցը
կը խաղտըկայ առաջ ու ետ, մինչ սարդը մահահրաւէր

այց մը կը փութայ իր մինինիկ հիւրին, կեդրոնէն դէպի
չեղ ճամբորդելով: Գլուխը կը հակի վրան, ստեւոտ թա-
թերը կը խխամեն, կ'աքծանեն անոր իրանը չքոտի, և
չատ չի քշեր, ճանճն իր կենսասիւթէն պարպուած՝ կ'ա-
նէանայ դիակնակերպ: Հոն մնալու չի գար, մապոտ տո-
տիկներովը կի'ց մը մէջքին. դիակը գետինն է հիմայ:
Մամուկը կը շուլալէ փութով այն ծակը զոր իր խորտիկ
հիւրին ներկայութիւնը բացած էր. ձգած կարկրտանը
յայտնի չեղածի պէս կ'աւարտէ, ու կուգայ տոտոզուելու
կրկին իր նախկին վայրը: Նախաճաշն է աս, համառօտ
սկիզբն իր հրամենքին:

... Չէ՛, ալ չը՛ պիտի պատուեմ քու հիւսքդ, շինած
տունդ ալ չը՛ պիտի փլցունեմ, ո՛վ գործունեայ, վար-
պե՛տ մամուկ: Պարտէզին այս դեղնցիկ խուցին լուսա-
մուտը քեզի՛ սեփականէ՛, խափանէ՛ դիտարանս, ամէն
օր տո՛ւնդ շինէ հոն, կարկրտէ՛, նորոգէ՛ զայն ու փորիդ
ի սպաս՝ յոգնէ օրն ի բուն:

Անո՛ւշ ըլլայ, կրցածիդ չափ կեր այդ թեւաւոտ ու
ո՛ղջ համադամէն, որչափ ատեն որ տէրն ևս թեւերուդ
ու սրունքներուդ այդ եզական արուեստին, և խռիք-
ներուդ ու թոքերուդ՝ մէջ պահած այն հրաշալի մթեր-
քին՝ որով ակնթարթի մը մէջ քու շէնքդ կը կերտես,
նաև աշխատելու այն բուն ևռանդին զոր Աստուած
տուն՛ր, տուն՛ր է քեզի: Արևը թող պսպղայնէ՛ մե-
աաքսակերպ տորզը քու տունիդ, երկինքն իր կապո՛յտը
թող մաղէ մէջէդ. և այս նկարչային ազւորութիւններուն
մէջ՝ դուն քու աւարի՛դ նայէ՛միայն, ստամոքսիդ պէ՛տքն
արտօրա, ո՛վ ստեւոտ խոշոր մամուկ:

Բենէ քիչ մը վերօք՝ մեղուները ծաղիկներուն խե՛րը
կ'անիծեն, քենէ քիչ մը վարօք՝ մրջունները մէյմէկ հունտ
խածած իրենց ծա՛կը կը փութան, վասն զի ծոյլին ան-
տարբերին ու անճարակին չի կա՛յ ուտելու, ապրելու
բաժին: Ամէ՛ն ինչ վայել՝ բանող-տատողին:

Ն Կ Ա Ր Ը

Իւզանկարը վայրանկար մ'էր : Գրեթէ առաջին կարգին վրայ կանգնած էր մեծ ծառ մը . վարերէն սկսեալ երկճղած ու անօտը սաղարթով մը հազիւ սքօղեալ բարձր ճիւղերով որ պատկերին վերի կողմէն կ'ընդհատուէին : Ներքեւը լեռնական երիտասարդ մը նստած էր , բունին կռթնած , յայնեզր գլխարկով , այրած ու լերկ դէմքով . յորդածայ թուխ վերարկու մը ունէր . անյարդար կերպով հազիւ մէկ ուսը ծածկած . ճերմակ թոյլ շապիկ մը , և կարճ կապոյտ տաբատ մը հագած էր . սրունքները զորս իրարու վրայ երկարեր էր գետինը՝ մերկ էին , և ոտքերը թաղուած էին եմենիներու պէս ոտնամաններու մէջ : Հովիւ մը կը թուէր : Հողը , կարծեմ , թուխ կարմրագոյն էր , սրբուտ . ճամբայ մը ծառին՝ առջեւէն կը սուզուէր պատկերին խորը , և զայն ճախէն կ'եզերէին մէկ քանի ուրիշ ծառեր , գլխաւոր ծառին տեսակէն . ճամբուն վրայ գեղջկուհի մը կ'երեւար , կարծեմ հեռանալու վրայ : Իսկ խորը , բիւ երկինքին տակ , լեզակագոյն լեռներ կը տեսնուէին : Ամբողջ պատկերն արեւոտ կը թուէր , մանաւանդ լեռնային հեռաստանը՝ որ ծառերուն թխաթոյր բուներուն ու խրթներանդ հողին խատու թիւններէն անդին կը պարզուէր , յուսողող : Կամ մանաւանդ՝ պատկերին յիշատակն է որ արեւոտ է մտքիս մէջ , ինչպէս մանկութեանս այն բոյոր յիշատակները՝ գորս արտադրող իրերէն զգացած ուրախութեանս , ներքին ու խորունկ ոգեւորութիւնս , անտարակոյս իր ոսկեգոյնովն ոգողուն կ'անձնականացնէր ու կ'իւրակերտէր զանոնք . և հետզհետէ աւելի կարօտնալ կուտար այն իրերն ինձի : Արդ , հոս , այս պատկերն իր առաջին կարգերուն յարաբերական մթազնութեամբ ու հեռախոյս հորիզոնին արիաւէտութեամբ , իր լեռնայնու-

Թեան բոլոր խռովիչ հմայքով, իր նիւթերուն պարզութեամբն ու հողայնութեամբը տէր էր ինծի զմայլելի ըլլալու ամէն պայմանի. և ես անոր տակ կեցած կը նայէի, ընդերկար տրտմապին սեւեռեալ անոր անձիզ ամբողջին, զայն ներդաշնակօրէն բաղադրող իրերուն. և իւրաքանչիւրը կը վայելէի, իւրաքանչիւրին անսպառ հրապոյրը յամբօրէն կը քամէի, իբր հոգեկան երանաւէտ անունդ մը, ա՛յն անժպիտ լրջութեամբ ու ահաւորապէս խոր գոհունակութեամբ՝ որով երախան կաթ կը ծծէ մօրը ստինքէն: Հովիւին կը նայէի, որ ընկողմաներ էր և լուրջ ու խոհուն կ'երեւար, մեծաբերձ ծառին որ երկինքին մէջ ուռճացեր էր, և միւս ծառերուն որ աւելի անդին էին, նըւազ մատչելի. ճամբուն որ կը հեռանար անհետեւելի, գեղջկուհւոյն, կքուն ու անորոջ՝ որ կ'երթար անշուշտ անճշդելի նպատակով, գետնին կը նայէի, հողին՝ որ իմ գիտցած հողերէս աւելի թուխ էր, ինծի համար անկոխ, և լեռներուն, հեռուն անօտրացած ու երկնաւէտ այն լեռներուն որոց ստորոտները մօտաւոր գետնին հեռուի անորոշութեան ետին ծածկուեր էին, ուստի անոնցմէ ասդին դեռ ամբառ անյայտ տեղեր կային: Յետոյ նորէն կը նայէին իւրաքանչիւր մասին. լեռնազգեստ երիտասարդին որ նըւատած էր ու կը խոկար, անոր թաղեաց զլխարկին հովանւոյն, անոր խարազնէ կամ մաշկէ վերայկուին ծալքերուն, ճերմակ կտաւէ շապիկին՝ որուն բացուած քէն թխորակ վիզը կ'երեւար, իր կապոյտ տաբատին որ իրարու վրայ երկարած ուժեղ ազդրերուն շուրջը սրկուելով, շեղակի կ'աւարտէր մէկ սրունքին վրայ. իր մերկ ու բիրտ ուլներուն, ու մանաւանդ իր կերպարանքին՝ որ թեթեւապէս հակած ու լուրջ էր ու երազուն. հովիւի՛ն, այսպէս, որ հոն նստեր էր իր սեփաւայրին մէջ ըլլալու գոհունակ անտարբերութեամբ, իր շինական զգեստնե-

րուն ու կեանքին անկաշկանդ վայելմանը գերազանցութեամբ, բոլոր շրջակայքին, բոլոր այդ լեռնաբոյր երկրին ծանօթ ըլլալու նախանձելի առաւելութեամբ, հոյարերձ ծառին, շէկ ու լերկ ու մկնեղ բունով՝ որ օդին մէջ լիալիբ կը կանգնէր և աւելի հնաւուրց էր և աւելի մնայուն, աւելի վաղնջուց երիտասարդութեամբ մը բարձրադալար ջովազած՝ հողին ու անջրպետին արձակութեան մէջ, և միւս թաւ ծառերուն՝ որ աւելի հեռու էին, հետաքրքրական ու տենչալի խորհուրդով մը հոծուած, որովհետև անծանօթ տեղեր ունէին իրենց ներքև, իրենցմէ անդին, ճամբուն՝ որ կ'երկարէր, իր շիկութեան ու անորոշութեան սովորական ամայութեամբ, և որ հեռասոյգ կ'անհետանար, ով գիտէ ո՛ւր, որպիսի՝ շինավայրի ու զմայլելի տեղուանք, ու գիւղացի կնկան՝ որուն կերպարանքն անստոյգ էր իր գեղջերանդ հագուստներուն մէջ, և որուն անձն ու անհատութիւնն այսպէս կ'ընկուղուէին իր կեանքին ողորմուկ ու բարեբաստիկ պայմաններուն զօրեղատիպ նկարագրին մէջ. կամ լաւ եւս, (և մանկական ըմբռնման հաւատարմօրէն)՝ որուն անորոշ անձը խեղճօրէն ու նրջանկապէս գեղջկական էր. և կ'երթար, իրեն միայն ծանօթ լուսաւէտ կանաչագեղ նապատակի մը, հողին նաեւ, շիկամոյգ անբնակ հողին, հողի բոլոր ամուր ու տաքուկ չորութեամբը սիրելի, բոլորովին տարբեր անպիտան փոշիէն, մայրօրէն վատահելի՝ անջրպետին անեղ անծայրածիր պարապին մէջ, և որմէ՛ էին անշուշտ հեռապանծ լեռներն ալ ուր այնքան փափկօրէն կրնար հողը կապոյտնալ, ամպօրէն եթերանալ՝ երկնասոյգ երկրագունտին հորիզոններուն մէջ. — և լեռներուն կը նայէի, կոհակած և եթերագեղ լեռներուն, որոնք ցամաքին ծովակերպ ամբարձումն էին անեղրութեան մէջ, բարձրայօն ու բարձախոհ, ցամաքին բոլոր քաղցրութեամբը, ծովուն բոլոր ակնածելու-


Թեամբը բաղձալի . . . : Եւ յետոյ, վերստին կը նայէի, անյագ ու լո՛ւրջ իմ ուշադրութեամբս՝ միեւնոյն տեսարաններուն . հովիւին՝ որ ծառին տակ կը հանգչէր, շարունակ խոհուն, անվերջօրէն երջանիկ, իր շիկահողային խանձահար դէմքը մեղմիւ հակած, իր թոյլ ու բաց օձիքն ի վար անսքօղ արեւակէզ լանջքին, իր դնդերուտ ազդրերուն, իր մէկ կողն ի վար սահած վերարկուն թանձր ու լքուն ծալքերուն, իր բոլոր անձին՝ որ իր դոյութեանէն ու հոն իւղանկարին մէջ ըլլալէն գոհ էր և կը վայելէր իր մարմնոյն ու իր դոյներուն պատշաճութիւնն այն տեսարաններուն, դալար կոճղերուն, հողին ու հորիզոնին լերանց, որ անոնց մէջ իր անվրդով առանձնութեան բարիքէն զմայլած էր ու անդորր, և որ իր անհուն մեթութեամբ տարօրէն կարեւորութիւն մը, տիրական բան մը կ'ունենար, գրեթէ դիւցազնական երեւոյթով մը սփածեալ կ'երեւէր, և դարձեալ ծառին, օդին մէջ թեւակարկառ, իր մանրատերեւ սաղարթին փափկութեան մէջ մշտաուղօրէն հոյամարմին, որ իր բունին կռթնած երկտասարդին բարեկամ ըլլալու մեծ հեղութիւնն ու միանգամայն տեսարանին իշխելու խրոխտ հաճոյքն ունէր, առանց հոն միեւնոյն կէտին վրայ արմատացեալ կայածման ցաւն երբեք ունենալու, ինքը որ անկաշկանդ էր ժամանակին մէջ, յետոյ միւս ծառերուն՝ որոց անթափանցելի ստուերն այնքան սխրալի էր, որոց կանաչ հոծութիւնը կը վնասեցնէր ու կը տխրեցնէր զիս, ցորչափ այն պուրակին խորքն ու յանկոյսն անդիտելի էին ինձի, գետնին ալ, նորէն, սեւաթոյր կպրագոյն հողին՝ քացրօրէն ու աննշմարելի կերպով ամենակալ, անսպառօրէն ամենածին, և աղօտակի բայց աներկբայօրէն իւրադարձուցիչ, և դարձեա՛լ մենաքայլ կնիկին, կորովագեղ տղամարդուն կողմերէն հեռացող իր հիքսանոյշ նկնութեան՝

որ բաւ էր սակայն մենաւոր ուղին անամայացնելու, իր հեռացմանն ու ընդհուպ անհետելի ըլլալուն հրապոյրին, իր մօտալուտ երանելի կորուստին ու թանկագին գոյզընթեան ներդաշնացմանը, ճամբուն որ իր կարմրահողային բաղձալի վայրենութեամբը կը հեռանար, ինծի անտարբեր, ու հոն կը թողուր զիս, ու շեղելով կը խուսափէր անձանօթ անհասանելի վայրերու մէջ զոր ինքը գիտէր, և որք իրենն էին. և վերջապէս դա՛րձեալ լեռնաշղթային՝ որուն ու մօտաւոր հողին միջեւ խոր գետնիստի մը արեւոտ սփիւռները կ'զգայի. լեռներուն՝ որ կը կանգնէին անոնցմէ ալ անդին, պերճօրէն, անճառօրէն անմատոյց, իրենց հառաչելի անմատչելութեան բոլոր վսեմութեամբը . . . :

Ամէնուն Տարեցոյցը

ՏԻՐԱՆ ՉՐԱՔԵԱՆ





ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Աղամեան (Պեճոս)	էջ	
Վարդն ու գերեզման	71	
Ահարոնեան (Աւեսիս)		
Բնութեան ծոցում	124	
Ախուրեան գետը	158	
Միք. Անճէլօի Մովսէսը	195	X
Աքաղաղը	216	
Աղայեան (Ղազարոս)		
Արեգնազան	183	+
Անեմեան (Մկրտիչ)		
Արփինէ	25	
Մեր կատուն	31	
Գառնուկը	33	
Վասիոս	86	
Նորածին	126	
Զամլըճա	246	
Ծովը	282	
Ամրան յուշեր	283	
Այլազովսի (Գաբրիէլ Արք.)		
Աղուէս և խաղող	49	
Ագանն և հաւ	51	
Աստուր (Տիկ. Զապէլ Հր.)		
Զուարթ նաւաստին	11	
Փոքրիկ վարձակալը	11	
Մայրը և երկու զաւակները	12	
Մանկիկին քունը	12	
Կրիան և բաղերը	14	
Պահուած գանձը	16	X

	Էջ
Փշոտ թուփը	48
Ձին և ցուլը	48
Սիրամարգը և սոխակը	53
Աղքատին շունը	55
Տղու հարցում	56
Աղբիւրն ու ծովը	56
Եղէգն ու կաղնին	58
Հուսին	80
Խունկը	111
Մենաստանին կոյսը	127
Կաղանդի նուէրը	129
Ժանեակները	395
Աւետիսեան (Տիկ. Եւփիսէ)	
Աղջնակիս	168
Յիշատակներ	182
Քու ստուերդ	190
Հուսկ երգն աղջկան	392
Բաշինջաղեան (Գեորգ)	
Սեւանայ լիճը	300
Գազաննեան (Յովհաննէս)	
Աղաւնիին	54
Թիթեռնիկի մը պատմութիւնը	263
Գալեմբեարեան (Տիկ. Զարուհի)	
Ծաղկեղաճառ աղջիկը	3
Գուրգէն (Յակոբ)	
Թշուաւութեան խմբանդրին	414
Գօլաննեան (Եղուարդ)	
Ծովափին մօտ	278
Պէյքօղի աղբիւրին	322

Գանիկեան (Ներսես Վրդ.)	էջ
Զիւնը	
Լուսնի ծագումը	156
Ծնունդի տօնը Հաճընի մէջ	284
Նուիրական սօսին	349
Գողոխեանց (Գեորգ)	
Երգ պանդուխտ պատանեկի	* 107
Գուրեան (Եղիշե Արք.)	
Ս. Մեսրոպի գերեզմանը	144*
Ծննդեան առթիւ	289
Գուրեան (Պետրոս)	
Լճակ	* 96
Եազրնեան (Օր. Պերճուհի)	
Երաժշտութիւն	230
Եսայեան (Տիկ. Զապէլ)	
Կոյրը	* 235
Աշուղը	* 370
Իւսկիւտարի գերեզմանը	383
Նոճիներու մէջ	400
Զարդարեան (Ռաւբէն)	
Ծաղիկներ, կարմիր ծաղիկներ	138
Հէքեաթ	* 180
Զարնուած որսորդը	303
Զօհրապ (Գրիգոր)	
Թիթեռնիկներ	257
Թերզեան (Թովմաս)	
Հինաւուրց լորենին	78
Լուսին	102
Զրաղանի ապարանքը	108
Ի ժայռ պցեալ	118
Նոճին	152
Զարթօնք	192

Թումանեան Յովհաննէս	էջ
Այվազովսքիի նկարին առջև	110
Թուրեան (Մկրտիչ)	
Անմահ մանուկը	266
Իսահակեան (Աւետիս)	
Մայրական սէր	136
Յոյս	179
Լապնիցնեան (Թեոդիկ)	
Պատկերին առջև	431
Խաննեան (Գաբրիէլ)	
Ճամբած աղբիւր	357
Խօսեանց (Կարապետ)	
Գիշերուան մը յիշատակը	252
Ծասուրեան (Ալեքսանդր)	
Մի՛ լար, բլբուլ	143
Գարնան անձրև	189
Կիւլիսերեան (Բաբգէն Ծ. Վ.)	
Տարօն	418
Կիւրնեան (Մելիքն)	
Պանդուխտի կեանքէն	308
Մասիսի և Արագածի առջև	331
Կիւրնեան (Միքայէլ)	
Քեաթիպլին երազը	313
Սրճարանը	336
Կուրդիցնեան (Տիկ. Շուշանիկ)	
Բլբուլին	306
Աշնան երգեր	311
Այնտեղ գնացէք	321

Հիւրմիւզեան (Հ. Գեորգ)	Էջ
Ազռաւն ու ազուէս	17
Աղուէսն և այծ	42
Կաղնին ու եղէզն	57
Ճպուռն ու մրջիւն	63
Մրջիւնին դատաստանը	71
Ղազիկեան (Հ. Արսէն Վրդ.)	
Ասպասիա	344
Ճեմիզեան (ԲրոՅ. Յակոբոս)	
Բնութեան մէջ վսեմը	198
Լեռները	203
Մանուկեան (Լեւոն)	
Եղեւին	176
Մեծարեց (Միսաֆ)	
Թրթռումներ	380
Կիրակմուտք	381
Աքասիաներու շուքին տակ	382
Անանուն	407
Մեզպուրեան (Տօֆ. Ներսէս)	
Առ մայրենի լեզու	1
Միսիթարեան (Արեալոյս)	
Մասիսի գագաթը	112
Մրմրեան (Յարուքիւն)	
Ձիթենեաց լեռը	359
Յակոբեան (Յակոբ)	
Իմ աշխարհքը	115
Լռեց սոխակը	178
Յարուքիւնեան (Արսաշէս)	
Յոպոպ թռչունը	46
Մանիշակի փունջ	295

Յարութիւնեան (Յովհաննէս)	էջ	
Փոքրիկ երազատեալ	398	+
Յովհաննէսեան (Միհրան)		
Հովիւն ու պուէտ	45	
Օրօր	49	
Յովհաննէսեան (Յովհաննէս)		
Հուսաւորչի կանթեղը	153	
Քաղցր քուն	224	
Առ ամպ	229	
Երգչի անէծքը	411	
Նազարեան (Հրանս)		
Ամարայնի վերջին վարդ	238	
Նաթանեան (Մարկոս)		
Ուղեւորական յիշատակներ	333	
Տիգրիսի ալը	363	
Նալբանդեանց (Միտայել)		
Վար ընկնող աստղեր	65	
Վաղող ջրի	108	
Աղքատ կին	122	
Գաւառացի պանդուխտը	254	
Նար-Պէյ (Խորեն Արք.)		
Արշալոյս	99	
Նուպարեան (Մեսրոպ)		
Կաղնի ու եղէգն	59	
Սիրամարգը կը դանդաթի Հերայի.	62	✓
Շահագիգեանց (Սմբատ)		
Առ մանուկն	39	
Գիշեր	88	
Շահինեան (Գրիգոր)		
Խթումին իրիկունը	275	

Ոսկան (Յակոբ)	էջ
Փափուկ օրիորդ	52
Քառեակ իղձեր	353
Ոսկեան (Կարապետ)	
Իրիկուն	2
Յիշատակ Լեւոնի	6
Ամպերը ի՞նչ օգուտ ունին	9
Մայրական գիրկ	213
Պատրանք	237
Որբերեան (Ռուբեն)	
Դուրեանին Լճակը	239
Գիւղիս ճամբան	261
Ուղուրլեան (Միհրան)	
Մանիշակները	319
Չերազ (Մինաս)	
Մայիսն ի Սասգիւղ	91
Վերջալոյս	98
Չրափեան (Տիրան)	
Սամոթրակէ	377
Նկարը	437
Չօպանեան (Արեակ)	
Լերան ծաղիկ	169
Երազ	212
Առջի ձիւն	214
Ուէսդմինսդրի եկեղեցին	232
Քնացած ծովը	244
Խեղճ ձկնորսը	292
Պասկանեան (Ռափայել)	
Երկու քոյր	34
Սիրոյ զոհեր	36
Իմ սոխակին	94

Պեճիկքաւելեան (Մկրտիչ)	հջ
Գոհարիկ	6
Գարուն	73
Աշուն	77
Ս. զեփիւռն Ալէմտաղիի	89
Մահ պանդխտին	236
Եղբայր եմք մեք	281
Պեճկօթիւրեան (Գարեգին)	
Սրինգ	250
Պերպերեան (Ռեթեոս)	
Աստուած	69
Գարուն	74
Լուսին	83
Երաժշտութիւն	245
Երգչին հոգովքը	408
Գիւղական եկեղեցին	427
Մատուռը	428
Մինեօն	429
Ռուսիներեան (Նահարպետ)	
Տերեւթափ . . .	430
Սեթեան (Յովհաննէս)	
Արուեստին արջև	146
Սեղբոսեան (Լեւոն)	
Ինչո՞ւ	288
Գնացքը	299
Մակոյկը	307
Ծով	312
Սերոբեան (Մուսեղ Եպս.)	
Խթումին գիշերը	296

Սիրունեան (Հ. Ալիքսան)	հօ
Հէք ձկնորսը	268
Սրուանձսեանց (Գարեգին Եպս.)	
Վանայ մէջ առաւօտ	114
Ս. Գրիգոր Նարեկացի	148
Շնորհալուոյն գերեզմանը	424
Տասուրեան (Ահարոն)	
Խաղաղութեան սաղմոսը	393
Տեմիրնիպաշեան (Եղիա)	
Մեր Պոսֆորը	327
Տեր-Վարապետեան (Գեղամ)	
Նուիրական աւանդութիւններ	388
Տեր-Մինասեան (Վահան Վրդ.)	
Աղուէս և ագռաւ	15
Երկու Հայեր	18
Տեր-Յակոբեան (ԲրոՅ. Աբրահամ)	
Յափուհս Լէմանու	206
Հ. Ղ. Ալիշանի յորելեանին առթիւ	269
Տիւսաբ (Տիկ. Սրբուհի)	
Անաստուղու հիսար	213
Փանոսեան (Աղեքսանդր)	
Շուշանին բոյրը	2
Հողագործն և իր որդիք	5
Սաթենիկ	8
Արմինէ	23
Աստուած	29
Ճնճղուկն ու բազէն	30
Աղբիւրն ու ծով	70
Մանիշակը	72

Փափագեան (Վրթանես)	էջ
Կորսուած Արդարութիւն	161
Քաջբերունի	
Արաքսի ափանց վրայ	154
Քիրիւնեան (Լեւոն)	
Հոսանքին առջև	387
Քուլցներեան (Հ. Քերովբէ Վրդ.)	
Ծաղկունք	21
Էջ խորհրդատու	27
Երկու ճամբորդներ	38
Գեղացի և օձ	41
Հրեշտակ և մանկիկ	67
Օսեան (Գրիգոր)	
Վխապատ	120
Բարիզ և Լոնտոն	323
Ֆրանսացւոց ազգ. հանդէսը	341
Վ. Հիւկոյի տարեդարձը	355
Լամաութին	367

Պուլպրիկին (Ժողովրդ. բանաստեղծ .) 10

ՑԱՆԿ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ

	Էջ
Ահարոնեան Աւետիս	197
Աղայեան Ղաղարոս	188
Աճէմեան Մկրտիչ	34
Այվազովսքի, Գաբրիէլ Արք.	50
Ասատուր, Տիկ. Զապէլ	135
Աւետիսեան, Տիկ. Եւփիմէ	168
Բաշինձաղեան Գէորգ	302
Գալէմքեարեան, Տիկ. Զարուհի	4
Գօլանճեան Եղուարդ	280
Դանիէլեան, Ներսէս Վրդ.	158
Դողոխեանց Գէորգ	107
Դուրեան Պետրոս	97
Եազրճեան, Սր. Պերճուհի	231
Եսայեան Տիկ. Զապէլ	376
Զարդարեան Ռուբէն	181
Զօհրապ, Գրիգոր	260
Թէրզեան Թովմաս	79
Թումանեան Յովհաննէս	111
Թուրեան Մկրտիչ	267
Իսահակեան Աւետիս	179
Խանճեան Գաբրիէլ	358
Պօսքանց Կարապետ	254
Շատուրեան Աղեքսանդր	143
Կիւլէսէրեան, Բարգէն Շ. Վրդ.	423
Կիւրճեան Մելքոն	310
Կիւրճեան Միքայէլ	340
Կուրղիսեան, Տիկ. Շուշանիկ	306


	հջ
Հիւրմիւզեան, Հ. Գէորգ	44
Ղազիկեան, Հ. Արսէն Վրդ.	344
Ճէճիզեան, Բրօֆ. Յակոբոս	205
Մանուէլեան Լեւոն	177
Մեծարենց Միսաք	381
Մէզպուրեան, Տօք. Ներսէս	1
Միսիթարեան Արշալոյս	113
Մրմրեան Յարութիւն	362
Յակոբեան Յակոբ	117
Յարութիւնեան Արտաշէս	295
Յարութիւնեան Յովհաննէս	399
Յովհաննէսեան Միհրան	46
Յովհաննէսեան Յովհաննէս	154
Նազարեան Հրանտ	238
Նաթանեան Մարկոս	335
Նալբանդեանց Միքայէլ	123
Նար-Պէյ, Սորէն Արք.	101
Նուպարեան Մեսրոպ	61
Շահազիզեանց Սմբատ	89
Շահինեան Գրիգոր	277
Ոսկան Յակոբ	354
Ոսկեան Կարապետ	3
Որբերեան Ռուբէն	243
Ուղուրլեան Միհրան	320
Չերազ Մինաս	93
Չօպանեան Արշակ	215
Պէշիկթաշլեան Մկրտիչ	77
Պէշկէօթիւրեան Գարեգին	251
Սեթեան Յովհաննէս	148
Սեղբոսեան Լեւոն	288

	Էջ
Սիրուհեան, Հ. Ալիքսան Վրդ.	269
Սրուանձտեանց, Գարեգին Սպա.	151
Տատուրեան Ահարոն	394
Տէր-Կարապետեան Գեղամ	391
Տէր-Մինասեան, Վահան Վրդ.	20
Տէր-Յակոբեան, Բրոք. Արրահամ	211
Փանոսեան Աղեքսանդր	25
Փափաղեան Վրթանէս	165
Քաջբերունի	156
Քիրիչճեան Լեւոն	387
Քուչնեբեան, Հ. Քերովրէ Վրդ.	22
Օտեան Գրիգոր	326





ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Սիւսլ	Ուղիղ
13	7րդ (վարէն)	քասին	քամին
15	10րդ (վարէն)	Ա. փանոսեան	Տիկ. Զ. Ասատուր
22	2րդ (վարէն)	Հ. Քերովբէ Վրդ. Բուլեներեան	(1841—1891)
32	7րդ	Սլրունքը	Սլրունքը
45	15րդ	ջանգ	ցանգ
59	6րդ (վարէն)	Ասենամանր	ամենամանր
60	12րդ	ասէն	ամէն
78	9րդ	կործանանար	կործանարար
136	14րդ	Սրիւն-ան- ցունքըս	Սրիւն արցունքըս
152	2րդ (վարէն)	Իզմիրլեան	Իզմիրեան
253	13րդ	ասի շոթեալ	ըսի շփոթեալ
300	5րդ	ջնջում է	հնջում է
300	16րդ	չրջապատ- ուած	ջրերով չրջա- պատուած
301	6րդ (վարէն)	քօղով	քօղով
302	6րդ »	Բաւիւզան- եան	Բաւիւզաղեան
307	6րդ (վարէն)	Անցկոտ	Անձկոտ
311	6րդ	տարադիր	տարագիր
329	16րդ	աղջաջա- մուղջը	աղջամուղջը
302	10րդ	կողմն է	կողմն է
413	8րդ	հզո՛վք	հզ՛ովքդ
427	3րդ	հրաւոր	հրաւէր



44 2160





BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE



3 7513 0206119 9